

ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՎՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

- ♦ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՈՒՄԸ
- ♦ ԱՐՄԵՆԻԱ, ՍՈՒԲԱՐՏՈՒ ԵՎ ՍՈՒԽԵՐ.  
ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ  
ԵՎ ՀԻՆ ՄԻՋԱԳԵՏՔԸ
- ♦ ՀՈՂՎԱԾՆԵՐ

ԵՐԵՎԱՆ  
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
2010

ՀՏ 941 (479.25)

գ.Մ. 63.3 (2 Հ)

գ. 328

**Կազմող և հրատարակիչ՝  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԶԻՋԲԵԿՅԱՆ**

գ. 328 ԳԱՎՈՒՔՁԱՆ Մ.

«Ուսումնասիրություններ Հայոց հնագույն պատմոթյան» - Եր.:  
Հեղինակային հրատարակություն, 2010.- 488 էջ:

Սփյուռքահայ հայագետ Մարտիրոս Գավուքճյանի ուսումնասիրությունները վերաբերում են հայոց ծագումնաբանության և հնագույն պատմոթյան հիմնահարցերին: Նրա ուսումնասիրությունները հրատարակված լինելով արտերկրում, հաճախ աննատչելի են մնացել հայրենի ընթերցողներին: Ներկա ժողովածուն ընդգրկում է հեղինակի երկու մենագրություններն ու երկու հոդվածները: Հրատարակությունը կատարվում է հեղինակի ընտանիքի հատուկ արտոնությամբ, որը նրա միակ ժառանգորդն է:

Գիրքը հասցեագրված է հայագետներին և ընթերցող լայն շրջանակներին:

ՀՏ 941 (479.25)

գ.Մ. 63.3 (2 Հ)

ISBN 978 - 9939 - 53 - 620 - 0

© Հ. Ազիզբեկյան, 2010

Մարտիրոս Գավուրճյանը ծնվել է 1908 թ. Թուրքիայի Քոնիայի վիլայեթի Նիզղե քաղաքում: Ուորինյան իշխանական տոհմի շառավիղներից է:


1915 թ. կրթությունը սարսափելու ու տառապանքը և անցնելով Տէր-Զորի դժոխքով, Գավուրճյանների ընտանիքը հասնում է Իրար և բնակություն հաստատում Մուսուլ քաղաքում: Ավարտելով Մուսուլի հայկական եկեղեցուն կից դպրոցը՝ 1926 թ. ընդունվում է Հայեաի Ամերիկյան քոլեջ, որն ավարտելով 1930 թ., ուսումը շարունակում է Բեյրութի Ամերիկյան Համալսարանում՝ ստանալով ճարտարապետի որակավորում: 1934 թվից աշխատել է որպես ճարտարապետ, ապա Մուսուլի քաղաքապետարանի գլխավոր ճարտարապետ, նախագծել բազմաթիվ հասարակական ու բնակելի շենքեր, ամբողջ արվարձաններ:

Մարտիրոս Գավուրճյանը մասնակցել է Նինվեի պեղումներին և կատարել հայագիտական ուսումնասիրություններ: 1947 թվին Մ. Գավուրճյանն ընտանիքով հայրենահարձվում և հաստատվում է Երևանում: Նրա նախագծով Հայաստանում կառուցվում են 35-ից ավելի բնակելի շենքեր, գործարանային համալիրներ, ակումբներ և այլ կառույցներ: Իր անձնվելու ու անքափառ աշխատանքի համար բազմից պարգևատրվել է պատվոգրերով և մեդալներով: 1972 թ. նրան շնորհվում է Հայաստանի վաստակավոր ճարտարապետի կոչում:

1973 թ. Բեյրութում հրատարակվում է Մ. Գավուրճյանի հայրենիքում մերժված «Արմեն և հայ անունների ծագումը և Ուրարտուն» մենագրությունը, որը մեծ համբավ է բերում հեղինակին:

1979 թ. հաստատվում է Կանադայի Մոնթրեալ քաղաքում, որտեղ և ապրած 9 տարիների ընթացքում տպագրում է երեք հայագիտական մենագրություններ և բազմաթիվ հոդվածներ:

Մարտիրոս Գավուրճյանը մահանում է 1988 թվին և հուղարկավորվում իր ծննդյան 80 ամյակի օրը՝ օգոստոսի 8-ին: Նրա աճյունը հանգում է Մոնթրեալի Մոնթ Ռոյալ գերեզմանատանը:



ՄԱՐՏԻՐՈՍ  
ԳԱՎՈՒՐՃՅԱՆ  
(1908-1988)

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Պատմությունն անընդհատ պայքարի մի մեծ շղթա է, որի օղակ-ների ամրությունը կախված է այն կերտող ժողովրդի ինքնության գի-տակցման խորությունից:

Սեփական պատմությունից, արմատներից և ազգային ավան-դություններից կտրված ժողովուրդը նման է մանկուրտի կամ ենիշերիի, որից կարելի է ձևավորել ամեն բան, նրա մեջ ներարկելով այլ աշ-խարհընկալում և այլ մտածելակերպ: Այդպիսով կարող են ինքնությունը կորցնել և դիմագրկվել ամբողջ ժողովուրդներ, որոնք հեշտությամբ կվե-րածվեն օտարի ծառայի և խամաճիլի:

Այս մտքի իրավացիությունը լավագույնս կարող է հիմնավորվել մեր՝ հայերիս հազարամյակների պատմությամբ: Մեր պատմության շղթայի օղակները սկսում են բուլանալ և խամրել այն ժամանակա-շրջանից, երբ մենք սկսում ենք հեռանալ մեր բնիկ ինքնությունից, ազ-գային ավանդույթներից և օրենքներից: Այդ գործընթացը մեծ բափ է ա-ռել թերևս, Տիգրան Մեծի ժամանակներից, երբ Հայաստան ներմուծվե-ցին հրեական գաղութներ, իսկ Տիգրան Մեծի նման տիրակալի տիտղո-սաշարում «արքայից արքա» և «աստված» տիտղոսներից հետո ավե-լացավ «հելլենասեր» բառը ...

Հիմնական հարվածը հասցեց 301 բգականին, երբ պարթև Գրի-գորի միջոցով կարողացան ոչնչացնել հայ ժողովրդի ամբողջ նշակույթը, պատմությունը, ազգային կրոնը, գիրը, ավանդույթները: Մենք աստիճա-նաբար մոռացանք մեր բնիկ աստվածներին, ինչն էլ մեզ ավելի հեռաց-րեց մեր իսկական ինքնությունից և ավելի ու ավելի բուլացրեց:

Սակայն ժամանակ առ ժամանակ զարթնում էր ազգային ոգին, ինչն արտահայտվում էր տարբեր շարժումների տեսքով, որոնք դաժա-նորեն ճնշվում էին: Ազգային գիտակցության, ազգային ոգու և մտքի հզոր զարթոնք ապրեց հայ ժողովուրդը հատկապես խորհրդային տա-րիներին, երբ փակվեցին եկեղեցիները և գրեթե արգելվեց կրոնը: Երկ-րում զարգացավ նաև հնագիտությունը, պեղումների շնորհիվ մեկը մյու-սի հետևից հայտնաբերվեցին հնագույն խոշոր հուշարձաններ, որոնք խոսում էին Հայկական լեռնաշխարհի՝ քաղաքակրթության բնօրրան լի-նելու, լեռնաշխարհում գոյություն ունեցած խոշոր պետական միավո-րումների մասին:

Եվ այս անգամ Կրեմլի հատուկ առաջադրանքով մի շաբթ «գիտնականներ» սկսեցին «հիմնավորել» և «ապացուցել», որ հայտնաբերված հնագույն պետական միավորումներից ոչ մեկը կապ չունի հայ ժողովրդի հետ: Անմիջապես հայտնվեցին նրանց բազմաթիվ հետևողներ, որոնք ծափահարեցին այդ շինծու և պատվիրված տեսակետներին՝ ստանալով բարձր «գիտական կոչումներ»: Նրանք իրենց հոգեւոր հայրերից էլ ավելի ակտիվորեն սկսեցին «ապացուցել», որ հայ ժողովուրդը չի ունեցել քաղաքակրթական մեծ պատմություն և ոչ մի կապ չունի Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված հնագույն հուշարձանների հետ:

Այդ համատարած խավարում սկսեցին ծագել փոքրիկ կանքեներ, որոնցից ամենախոշորը, թերևս, Մարտիրոս Գավուքճյան պատմաբանն էր: Նա այդ ժամանակների համար համարձակ և հազվագյուտ ուսումնասիրություններով ու հայտնագործություններով կարողացավ այդ անթափանց խավարը ճեղքել Արայի լույսով և ապացուցել, որ Հայկական լեռնաշխարհը ամենահնագույն ժամանակներից եղել է **հայկական**, այնտեղ ձևավորված հնագույն պետական միավորումները և այնտեղ հայտնաբերված վաղնջական հուշարձանները հայ ժողովրդյան անբաժանելի մասերն են:

Խորհրդային բռնապետությունն, ինչ խոսք, քույլ չտվեց, որ Մարտիրոս Գավուքճյանի ուսումնասիրությունները տարածում գտնեին Հայաստանում: Նրա արժեքավոր ուսումնասիրությունները գրեթե չտպագրվեցին հայրենիքում (բացառությամբ մեկ-երկու հոդվածի), ինչը, նրա մտերիմների վկայությամբ՝ մնաց գիտնականի չիրականացած երազանքը:

Մարտիրոս Գավուքճյանի բոլոր գրքերը հրատարակվեցին սփյուռքում: Նա վախճանվեց 1988 թվականին և թաղվեց հեռավոր Կանադայում:

Ներկա հրատարակության նպատակն է տպագրել Մարտիրոս Գավուքճյանի ուսումնասիրությունների ընտրանին, ինչը կնպաստի սփյուռքահայ հետազոտողի աշխատանքների ճանաչմանը մայր հայրենիքում: Ներկայացվող հասորում, որը լույս է տեսնում Մարտիրոս Գավուքճյանի ընտանիքի հատուկ արտոնությամբ, ընդգրկվել են հետևյալ աշխատանքները:

1. «Հայ ժողովրդի ծագումը» (Մոնթրէալ, 1982) և «Արմենիա, Սուրաբու և Սումեր: Հնդեւրոպական հայրենիքը և Հին Սիցազետքը» (Պէյրութ, 1988) գրքերն ամբողջությամբ,

2. «Վերին ծովի տեղադրությունը» հոդվածը, որը լույս է տեսել Հայաստանի Գիտությունների ակադեմիայի «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրում (Երևան, 1977, N 2),

3. «Հայ-ուրարտական առնչութիւններ» հոդվածը, որն իբրև զեկուցում ընթերցվել է 1978 թ. Երևանում կայացած Հայ արվեստին նվիրված երկրորդ միջազգային գիտաժողովում, սակայն հրատարակվել է Բեյրութում լույս տեսնող «Զարթոնք» թերթում (սույն հատորում զետեղելու համար այն մեզ տրամադրեց հեղինակի որդի Սարգիս Գավուրճյանը):

Հեղինակի առաջին գիրքը՝ «Արմեն եւ հայ անունների ծագումը եւ Ուրարտուն» (Պեյրութ, 1973) չի ներառված այս հատորում, քանի որ դրանում ներկայացված նյութերն՝ ավելի լրացված ու ճշգրտված՝ տեղ են գտել հեղինակի 1980-ական թթ. լույս տեսած երկու գրքերում, որոնք ընդգրկված են այստեղ: (Մարտիրոս Գավուրճյանը հրատարակել է՝ չորս գիրք. չորրորդը գրքերից մեկի անվերնն բարգմանությունն է՝ «Armenia, Subartu and Sumer. The Indo-European Homeland and Ancient Mesopotamia», Montreal, 1987):

Նշված աշխատանքներում հայտնված որոշ տեսակետներ արդեն հնացել են, որոշների մասին էլ այսօր կան նոր փաստեր ու հայտնագործություններ: Մենք, սակայն, ձեռնպահ մնացինք որևէ մեկնաբանություն կամ լրացում անելուց՝ նշելով միայն աշխատությունների հրատարակության թվականները:

Մարտիրոս Գավուրճյանի աշխատանքները լույս են տեսել տարբեր երկրներում, տարբեր հրատարակչությունների կողմից, ուստի ունեն տարբեր ուղղագրություններ: Մենք պահպանել ենք այս հատորում զետեղված բոլոր աշխատանքների ուղղագրությունը՝ ըստ դրանց սկզբնօրինակների: Բոլոր գործերի անփոփոխ վերահրատարակությունը Գավուրճյանների ընտանիքի պայման-ցանկությունն է:

Ներկա հատորում միանական համարակալումով են ներկայացված բոլոր քարտեզները: Ըփոք չառաջացնելու նպատակով՝ ծանոթագրությունը է ըստ էջերի:

Մարտիրոս Գավուրճյանի ուսումնասիրությունների ընտրանին հրատարակելով Երևանում՝ մենք իրականացնում ենք նրա անկատար մնացած երազանքը՝ իբրև հարգանքի տուրք նրա վառ հիշատակին:

## Հովհաննես Ազիզբեկյան

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՈՒՄԸ

ՄՈՆԹՐԵԱԼ, 1982

## ԳԼՈՒԽ Ա

ՍՈՒՄԵՐԵՐԵՆԻ ՏՈՒԵԱԼՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՄԱՆ  
ՈՒ ԼԵԶՈՒԻ ՀԱՐՑԵՐՈՒՄ

## 1. ԱՐՄԵՆԻԱՆԻ ԳԱՂԹԻ ՎԱՐԿԱԾԻ ՍԱՍԻՆ

Յայտնի է, որ հայերէնը իր իմքով հնդեւրոպական լեզու է: Այս պատճառով՝ հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքի տեղի հարցը մեծ ու վճռորոշ նշանակութիւն ունի հայ ժողովրդի ծագման խնդրում: Այս հարցը երկար ժամանակ եղել է գիտնականների վեճի առարկան:

Մի ժամանակ այդ հայրենիքը տեղադրում էին Սիցին Ասիայում. յետոյ բերեցին տեղադրեցին Սեւ Ծովի հիւսիսում ընկած հարաւային Ուկրաինայում. ապա տարան հիւսիսային Եւրոպայ՝ Բալթիկայի շրջան, ոմանք էլ՝ Դանուրի աւազան ու Բալկաններ:

Եւրոպական այս տեղադրումներից ելնելով՝ Եւրոպայից դուրս գտնուող հնդեւրոպական լեզու ժողովուրդներին զաղքած համարեցին Եւրոպայից՝ Կովկասի վրայով իրանական սարահարք եւ ներուցների վրայով դէպի Փոքր Ասիայ եւ Հայկական լեռնաշխարհ:

Հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքը Եւրոպայում տեղադրելը ի հարկէ առանց պատճառի չէր. հնդեւրոպական լեզու են խօսում եւրոպական ժողովուրդների մեծամասնութիւնը. Երկրորդ՝ եւրոպացիներ էին նախապէս այս հարցերով զբաղուող գիտնականները, որոնցից ոմանք զերծ չէին քաղաքական միտումներից. Երրորդ՝ խոր անցեալում Եւրոպան Ասիայից բաժանող նեղուցների վրայով կատարուած շարժումներին կամ արշաւանքներին, կոնկրետ տուեալների պակասից (եւ ելնելով հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքի եւրոպական տեղադրութիւնից՝ տալիս էին եւ ոմանք դեռ տալիս են «հնդեւրոպական ժողովուրդների՝ Եւրոպայից դէպի Փոքր Ասիայ գաղթ»-ի մեկնարանութիւն, եւ հնդեւրոպական լեզու ժողովուրդների՝ Փոքր Ասիայում, Հայկական լեռնաշխարհում ու նրա արեւելքում գտնուելը համարում էին (շատեր դեռ համարում են) այդ ենթադրեալ ուղղութեամբ կատարուած գաղթերի հետեւանք:

Գաղթի այս վարկածի վրայ յենուելով՝ հայերին համարեցին դրսից եկածներ, որոնք Հայաստան են մտել Ուրարտական հարստութեան անկումից յետոյ: Այս մտքով նախապաշարուած լինելով, ուրարտագիտութեան հենց սկզբից, հայերին համարեցին Ուրարտուի համար եկուր-օտարներ՝ անտեսելով հակառակը ապացուցող տուեալները, այդ թում եւ հնագիտական այն կարեւոր փաստը, որ հնագէտները ուրարտական նիւթական մշակոյթի շերտի վրայ ուրարտականից զանազանուող նիւթական այլ մշակոյթի նստուածք չեն գտնում: Աչքի զարնող այս երեւոյթը զաղթի տեսութեան հետ հաշտեցնելու համար ասում են, թէ հայերը, առանց իրենց կողմից մի այլ բան բերելու, շարունակեցին ուրարտական մշակոյթը անփոփոխ ու անխափան, մի բան, որը բնաւ չի լինում եւ ոչ մի տեղ էլ չի եղել: Միշտ էլ նոր եկուրները բերել ու թողել են եկուրի իրենց օտար եւ հնից տարբերուող հետքերը: Միայն այս փաստը բաւական է ընդունել, որ Ուրարտուից յետոյ օտար եկուրներ չեն եղել:

Արդէն, ինչպէս ցոյց ենք տուել մեր նախորդ աշխատութեան մէջ, երեւան են եկել նոր եւ ուժեղ տուեալներ հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքը տեղադրելու Փոքր Ասիայում ու Հայկական լեռնաշխարհում:

Սերձաւոր Արեւելքում ու Փոքր Ասիայում յայտնաբերուած սեպագիր ու հիերոգլիֆ արձանագրութիւնների միջոցով որոշակիորեն յայտնի է դարձել հնդեւրոպական ժողովուրդների գոյութիւն ունեցած լինելը Փոքր Ասիայում III հազարամեակին մ.թ.ա:

Սեպագիր արձանագրութիւններով պահպանուած՝ աշխարհի ամենահին լեզուներից մին (եթէ ոչ ամենահինը) հանդիսացող սումերերէնի մէջ հայերէնի հետ համընկնող բառերի գոյութիւնը կարեւոր վկայութիւն ենք համարում (արմէնների ենթադրեալ զաղթի բուականից հազարատը տարիներ առաջ) սումերների մերձակայքում հայախոս ցեղերի գոյութիւն ունեցած լինելը հաստատող:

Այստեղ բերում ենք, որոշ ընտրութեամբ ու որոշ դիտումով, սումերական 100 բառեր ու բառակապակցութիւններ կամ բարդ բառեր (կան դեռ չբերուած շատ ուրիշներ), որոնց՝ հայերէնի հետ

ունեցած ուղղակի կապի քննութիւնը առիթ է տալիս լեզուաբանական, որով եւ պատմագիտական որոշ նոր խորհրդածութիւնների:

Ահա սումերական այդ 100 բառերը<sup>1</sup> եւ նրանց հետ համընկնող հայկականները: Սիածամանակ հայ բառի դիմաց Հ. Աճառեանի «Արմատական բառարան»-ից բերում ենք հայ բառի իմաստի կամ ծագման (եւ հնդեւրոպական լինելու կամ չլինելու) մասին հնդեւրոպարանների դիտումներից ամփոփ ու հակիրճ նշումներ:

---

<sup>1</sup> Այս բառերի համար նայել P. Anton Deimel, “Šumerisch-Akkadisches Clossar” Roma I, 1934:  
Stephen Langdon, “A Sumerian Grammar and Christomathy”, Paris, 1911:

2. ՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՏ ՀԱՍԵՄԱՏՈՒՈՂ  
ԿԱՄԿԱՊՈՒՈՂ ՍՈՒՏԵՐ ԲԱՌԵՐ

<i>լր.</i>	<i>սումեր բառ</i>	<i>սումեր բառ</i> <i>իմաստը</i>	<i>հայ բառ</i> <i>բառ</i>	<i>հայ բառի</i> <i>իմաստը</i>	<i>հայերոպական</i> <i>արմատ՝ հայ</i> <i>բառի ձևող՝</i> <i>լմասով կամ ժառանգ-</i> <i>նորից բառեր:</i> <i>կարծիքները.</i>	<i>Աճառեանից՝</i> <i>հնդեւարմատի</i> <i>իմաստը կամ ժառանգ-</i> <i>նորից բառեր:</i> <i>կարծիքները.</i>
2		3	4	5	6	7
1	ab, ab-ab	«գերդաստանի նախաւայր»	իաւ	«պապ», հօրը հայլը»	այօ—	«լոր կողմից պապ»
2	ab, ap	«ծուլ»	ափ	«զորի եզր»		
3	a-de-ar	«ալրտ, դաշտ»	ալրտ	«ցանուած կամ ցանելիք հող»	աց'րօ	▶ ածր ▶ արծ ▶ արտ
4	agar	«ալրտ, դաշտ»	ազար (-ար)			
5	akkil	(աքքար՝ իկկիլս)	աքարալ	«աքլոր»	kլ-◀ kel	(կլինութեամբ) «կանչել, գուել»
6	an-pa	«երկնային բարձրութիւն»	ամպ		դիհօ, միհօ'	սանս. nabhas «ամպ», երկինք, միմարտ»
7	an-su	«էշ»	էշ		եկ'wo	«ձի»
8	an-ub-ta	«աշխարհի կողմերը»	նպատ (-ակ)	«էլան առնելու առել, նետի նշաւակ»		

9	ara	«արալ»	արալ		al, ասիական ձր
10	arabu	«թղի թռչուն»	կարապ		
11	arħuš	«արդանդ»	հարս	«Հարս»	թղկ-prek «ինդղել, հարցնել»
12	a-sur-ra	«չեն»	շեն	«Ճեզ»	
13	a-zid-a	«ազ»	աշ		«Ռողիդ»
14	ba-an-lah	«վիչ թակարդի»	բանակ	«Գուքի խուճի»	
15	bad, bat	«պաստ, պարիսպ»	պաստ	«Ռում»	
16	ba-la	բոյս	բաղի	◀ բաղ-բաղ, բաղ «կից, յար»	
17	bar, babbar (bar-bar)	արեժ աստուած, արեժ.	արի	«Եթեր, օդից այն կողմ մին- չեւ. զրեղէն երկինք»	«Հեղեւ. Վեր «Եփել» իրանականից, որի պարզ ձեւ էկայ, կայ ալրու. հալիս
18	bar	«վառել»	վառ (-ել)		
19	bar-su	«զամանոր, իշխան»	բարձ	«Քարձրաստի- ճան անձի նըս- տիրու. տեղ»	«Հեղեւ. Վեր «Եփել» իրանականից, որի պարզ ձեւ էկայ, կայ ալրու. հալիս
20	bi, ba (karst)	«հօռել, խօսք, լեզու»	բւ	բալ գիօսել»	բհա
21	bir	«սպանել, արեղել»	լել (f)	բան, բառ	բու. feritus «զարնուած»
22	bu	«կրակ կիւել, արծործել, բռնկուել»	բն(g)	«բրց, ալու»	բհա, բհէ, բհօՏ, բհաւէ Հայլ անած է ցողի
23	dah,tah	«առելութել, բոցավառութել»	տապ	«տաքորթիւն»	պիլս. տակ «տաքորթիւն»

նո.	սույեր թառ	սումեր բառի իմաստը	հայ բառի թառ	հայ բառի իմաստը	հայերոպակավայ արմատ՝ հայ թառի ծնող՝ լուս Աճառ- եանի	Աճառեանից՝ Հնդեւ. արմատի իմաստը կամ ժառանգ- ներից բառեր: կաթիքներ.
2			3	4	5	6
24	dag, zag	«ակիզբ՝ սահման» «լուսառը, պայծառ»	ծազ	«ծայլր սկզբի եւ վերլի», «աղեւի գորս գալը»	«նորեւ. կօղի	
25	dam-tab-ba	«սահմէ»	թամր	«Համին»		
26	dah	«փոխարինել, հասուցել»	ծախ	«ծախիք, վաճառք»		
27	darn	«ամուսին (կին կամ ալր)»	ծասլ	«Հիւսած մարդ»		
28	dib, dub	«թափել»	թակի	«թափել»		
29	dir, tir	«բարձր լինել»	թիռ	«թրիլ, թռչւր»	pter-	
30	du	«քայլել, քալուածք»	ոս		pod	
31	dul, tul	«ծածկել, պատել»	թաղ	«Հողի տակ ծածկել»	հողել. stag	
32	egi	«լեծանալ, իշխանուցի»	սի	աց-		
33	ellu, ulii	«ողբալ, կոծել, ճիշ»	լալ		pla	«զարնել, ծեծել, կոծել»
34	eme	«կծողու, խօսիլ»	իմայ	«հասկամալ, իմահաս»		
35	dEn-gur	ջրի-ծռվի աստուած	Անգեղ	(Ծորգ Անգեղ)	լուս իրենացու՝ սա ալիրծում էր ծռվը, նաև կը ընկղմում.	

36	ezini, ašnan <sup>2</sup>	« <i>զացահատիկ»</i>	աշոմ, աշխան	<i>կարի.</i> осene «աշոմ», գոթ. ասան «հուհաք»
37	ga, ga-ga, gag	« <i>կրկել, զարուածել»</i> ՝ « <i>ցրց, փայտէ սեղ»</i> ՝	զահիլ	« <i>զարհել»</i>
38	ga, gal	« <i>ինել, դոյութիւն ունենալ»</i> ՝	զոյ	« <i>գոյութիւն»</i>
39	gab, gaba	« <i>կռործք»</i>	զու (-ակ)	« <i>կրկանիների</i> » <i>հանել կրործք»</i>
40	ga-bi-ri	« <i>եռ, սար»</i>	զունան	կովկասեան կամ իսալ- դական ընտանիքից փրկառութիւն
41	gabri	« <i>դէմ դուրս դառլ, մրցակրց»</i>	գուպար	բարձագայտու- թիւն, կռիւ, պատերազմ»
42	gala, galal	« <i>պաշտօնեան</i> կրաստաթիւթե»	զայտ	«որորք»
43	gamar	« <i>ծանր կշռել, գերակշռել»</i> ՝	զունար	« <i>խոճիր,</i> հաւաքումն»
44	gan	« <i>նեցուկ»</i>	զուն	
45	gasañ	« <i>փայտէ սողնակ»</i>	զազան	« <i>վայրի</i> կենդանի»
46	gillim	« <i>ուժականի»</i>	զեղլ	« <i>կոռուզ»</i>
47	gin	« <i>ապառունի, ստրկունի»</i>	կին	velmn g'en
48	gin	« <i>գնալ</i> »	զմալ	լու. venia, գոթ. giman «զալ», հեղեւ. ga արժանից.

2. Աշան-ը հացահատիկ առևերական դիցունիքներ է. ամեն Ս. Kramer, "The Sumerians", Chicago, 1963, p. 173.

1n.	<i>սումեր</i> <i>բառ</i>	<i>սումեր բառի իմաստը</i>	<i>Հայ բառ</i>	<i>Հայ բառնի իմաստը</i>	<i>Հեղերոպական արմատ, Հայ բառի ծնող՝ ըստ Աճառ- հանի</i>	<i>Աճառեանից՝ Հնդեւ. արմատի իմաստը կամ ժառանգ- ներից բառեր: կարծիքներ.</i>
2		3	4	5	6	7
49	<i>kir-tab, gir-tab</i>	{ } «կարփճ»	կարիթ		<i>սումերի կիր «կարփճ» (karst)</i>	
50	<i>gu, gug</i>	«փօսել»	զող	«ասել»	voght	
51	<i>gu-edin-na</i>	«երիթր, գնորիել» + «զաշշոա- վալլ»	զետիթ	«Հողի երես»		
52	<i>gurun</i>	«զսոռզ, հունձք»	զարոն		ԱԵՏՐ ▶ vēr	-ուն Հաւանաբար
53	<i>guskin</i>	«ոսկի»	ոսկի			մասնիկ է
54	<i>gu-tab-ba</i>	«գործ թելլ» (ԵՐԿԱՆ: «թելլ»)	կտար	«վուշի բոյալը», «վուշով գոր- ծուած կտոր»		
55	<i>hab</i>	«Հիգոն գուղել»	խափ	որոշակի բիկ էջ՝ բռնուկիլ, ինակնում,		Հնդեւ. Տնապ «ծածկել»
56	<i>hus</i>	«լորատել»	խոզ	«պոկել, կտորել»		
57	<i>iddir, ide</i>	«հեծնել»	հհծ	«հեծնել»	sed-	առնա. Տեծն «ծիւաւոր»
58	<i>igi</i>	«աւչք»	աչք(ք), ակ(և)			Հնդեւ. օկ «աւչք»
59	<i>illulu</i>	«աղեղ»	աղեղ			
60	<i>ka-izi</i>	«վառել, կրաք»	կայծ		gaid	
61	<i>ki-mah</i>	«գերեզման»	կմախ			

62	ku, kur	«կրկուր»	կրուր, կրիր	«կրկուր» ժանաւանդ անսասուշէլ»	g'er
63	ku-babbar	«արծաթ»	կասար		
64	kulla	«ծածկոց»	բուլ	«վուչէթել»	
65	liš	«կորոր, փշուանք»	լիս	«վանդել, փշուլ գոռչի դարձել»	qlok-
66	lu	«ովար»	ուլ	«այծի, եղնիկի ձագ»	polo
67	lug, luḥ	«լուացուած, մաքրել»	լոգ, լող	«լուացալ լողանալ»	lov-
68	mah	«գերզման, մահ»	մահ		
69	mahar	«ձիմուի ցանց»	մախար	«տուզուալ, քուզձ»	
70	marun	«մրջիւն»	մրջիւն		moruo-
71	meš	«մեծ քահակութիւն»	մինծ		zumjħi jgħarr ja ħiex, iesu u ħiex
72	mu, mun	«անոն»	անուն		méga-
73	muħur	«կրակ բորբոքել»	մնխիր	«այլուածի գոռչին»	anomn,
74	mul	«վանել-կրցնել, բուրկել»	մուլ	«ալիրող,՝ արկար,՝ ծովալ»	smol
				«ալիրող,՝ արկար,՝ ծովալ»	ծովալ»

<i>ln.</i>	<i>սումեր</i> <i>բառ</i>	<i>սումեր բառի իմաստը</i>	<i>Հայ բառի իմաստը</i>	<i>Հայ բառի իմաստը՝ Հայ բառի ծնող՝ ըստ Աճառ- հանի</i>	<i>Աճառեանից՝ Հնդեւարմական արմաստ՝ Հայ իմաստը կամ ժառանգ- ներից բառեր: Կարծիքներ.</i>
<b>2</b>		<b>3</b>	<b>4</b>	<b>5</b>	<b>6</b>
75	anag, naga	«անազ, կապար»	անազ		
76	pu, bu	«փչել»	փու (f)	phu	
77	šar	«կանաչ, կանաչութիւն»	ծառ		որից ց'ըս «ուրբե», «քիերից բան հիւսու»
78	šen	«կրիւ, պայքար»	շան (ք)	«աշխատանք, ձիգ»	յօ
79	šir	«լոյս»	շող	«ճառագայթ, նշոյլ, ցոլք»	լոյ. ՏՈ! «արեգակ» հնդեւ. կեւ- «գիալիլ»
80	tibira tibir	«միտալագործ» «ձեռնք»	տապար		
81	tu	«Ճնել, սերնդագործել» =(աքքար. կատու=կացին)	ճռւ	«Հաւելիթ»	Հնդեւ. օվյօմ-Հիւ- բշմանը էի ընդունում. ձ-և մնում է ԼՇԱԳԱՄՈՐԵԱԾ
82	tur	«Ճոնել»	դու	«ԴՌՈՒ, պալատ»	dhr
83	u, ud	«արեւ, զր, փոթողիկ»	աւլ, օդ	«օդ»	աւ-«փշել» + -dհ անձ.
84	udu	«ուշաբոր»	աւիլ▶օդի	«ուշաբոր»	
85	ug	«փոթորիկիւրեւ»	ոզի հոզի	peu ▶ paqio	«փշել, չչչել»

86	ugu	«գագաթ գլխի»	ուղել	«գլխի ծռծր»	Հնդեւ. Ըլ- «ճարպ» անդլ . Տօլ «կեղտու»
87	u-gul-ta	«սող»	զեղձ	«սաստիկ փափառ»	Ճ-ն աճած մասնիկ է
88	ul	«աղտ, դաշտ»	հող	«Հող, գետին»	
89	ulu	«լրութիւն, ճոխութիւն, առաստոթիւն»	լի	«լցուած»	pol- plē-
90	umman	«ժողովուրդ, բազմութիւն»	ամին		smmo-
91	umun	«լրաւազան, ձահիճ»	հուն	«զեսի մէջ ծանծաղ տեղ»	pont-
92	ur	«ալրգանդ»	ոն	«յետոյք, տակ»	orsō
93	usər	«ցանկապատ»	հզր	«ծայլ, սահման»	eg'h- լ ժամնիկ է
94	ussu	«ութ»	ուր		olktō
95	utima	«լթութիւն»	մոր		պրու . ԵՄ «Ճութ»
96	utul	«հողիւ»	հօնաղ	«Հողիւ»	pa- pā-►Հօն (ձ' աճ) ► Հօնաղ
97	uz	«էդ այծ»	այժ, էծ		aig'
98	zag	«աջ կողմ»	ձախ		
99	zid	«ուղիղ»	շին(-ակ)	«ուղիղ»	
100	zu-ab	«ծող»	ծով		

Յուցակը շխճողելու համար չենք բերել սումեր բառերի դիմաց նրանց աքքաղականները, որոնք, մի քանի բացառութեամբ, ձայնով չեն կապում սումերականների հետ, որով աքքաղական լեզուն հայերէնի համար միջնօղակի դեր չի խաղացել. հայերի շփումը սումերների հետ եղել է ուղղակի:

Յայտնի է, որ սումերերէնը չի համարում հնդեւրոպական: Իսկ, ինչպէս կարելի է տեսնել բերուած ցուցակում, սումերերէնի հետ համընկնող այս 100 հայ բառերից 42-ը հնդեւրոպական են: Իսկ որից 9 հատն էլ՝ հաւանաբար հնդեւրոպական: Մնացած 49 բառերը հնդեւրոպական չեն՝ մաքուր սումերական են: Հնդեւրոպական են հետեւեալները. *աղալ*, *աճ*, *ամէն*, *ամպ*, *անուն*, *աջ*, *արտ*, *աքքաղ*, *բա* («*խոսել*»), *բոց*, *գարուն*, *գեղճ*, *գեղմ*, *գոզ* («*ասել*»), *գոյ*, *դուռ*, *եզր*, *այծ*, *էշ*, *թիռ*, *լալ*, *լես* («*մանրել*»), *լի*, *լոզանալ* («*զող*»), *ծառ*, *կայծ*, *կեր*, *հարս*, *հաւ* («*պասր*»), *հեծ*, *հող*, *հուն*, *հոսաղ*, *մոլ* («*ծովիս*»), *մրջիւն*, *հոզի* («*ոզի*»), *ոռ*, *ոտ*, *ոլ*, *ջանք*, *փուր*, *օդ* («*աւդ*»): Հաւանաբար հնդեւրոպական են. *աչք* (ակ), *զնալ*, *բաղ*, *խափ*, *ծագ*, *ձու*, *շող*, *ուղեղ*, *վառել*:

Եթէ հաշուի առնենք այս երկու լեզուներին (մեռած սումերերէնը եւ կենդանի հայերէնը) իրարից բաժանող վերջին հազարամեակների մեծ ժամանակահատուածը, ապա այսքան ընդհանրութիւնների գոյատեւումն անգամ պէտք է մտածել տայ երկու լեզուների միջեւ հնում կատարուած փոխազդեցութիւնների մեծութեան մասին:

Այս բառերից ոմանք գտնուում են սումերական ամէնահին արձանագրութիւններից ոմանց վրայ, մի բան, որը մեզ կտանի մ.թ.ա. III հազարամեակ: Ի հարկէ սումերները հնդեւրոպական այս փոխառութիւնները չկատարեցին հենց՝ այդ բառերին կրող արձանագրութիւնների օրերին. հետեւաբար պիտի ընդունել, որ սումերները խոր անցեալում՝ մ.թ.ա. III հազարամեակից առաջ շփման մէջ են գտնուել հայերէն խօսող ցեղերի հետ: Որով դժուար է չընդունել, որ հնդեւրոպական անկախ լեզուածիլ հանդիսացող (հաւանաբար հենց մայր լեզուի ուղղակի սերունդն եղող) նախահայերէնի կրողները մ.թ.ա. 4-րդ հազարամեակից ոչ ուշ ար-

դէն գտնուում էին Հայկական լեռնաշխարհում՝ սումերների մերձակայքում:

Հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքի՝ Եւրոպայում տեղադրութիւնը նախապաշտեց ոչ թէ միայն հնդեւրոպալեզու ժողովուրդների ծագման հարցերով զբաղուած հնագէտներին ու պատմաբաններին, այլ եւ հնդեւրոպական մայր լեզուի վերականգնման գործով զբաղուող համեմատական լեզուարաններին՝ վերականգնման այդ գործում մերթ մեծ կշիռ ու առաջնակարգ տեղ տալով Եւրոպական լեզուներին:

Հնդեւրոպական մայր լեզուի բառարմատները հանուում են՝ առնելով հնդեւրոպական յայտնի բոլոր լեզուների մէջ տուեալ բառի ունեցած ձայները եւ կատարելով դրանց համեմատական քննութիւնը։ Այդ մօտեցումը բնական ու գործնական լինելով հանդերձ՝ լի է սխալուելու հնարաւորութիւններով, յատկապէս երբ հաշուի առնենք նաեւ այդ գործով զբաղուած Եւրոպացի լեզուարանների եւ նրանց հետեւողների նշուած նախապաշտումը։

Օրինակի համար մի պահ պատկերացնենք այսպիսի մի բան. հնդեւրոպական մայր լեզուն տրոհուում է մի քանի ճիւղերի։ Նրանցից մէկը հարազատօրէն պահում է մայր բառարմատ (ասենք) ar-ը: Ժամանակի ընթացքում միւս ճիւղերց մէկը այս ար-ի սկզբում աւելացնում է թ ձայնը, մի ուրիշ ճիւղ ար-ի վերջում կցում է ս ձայնը, իսկ մի ուրիշը ար-ի r-ն փոխում է լ-ի։ Այս երեք ճիւղերը տրոհուում են մի շարք ենթաճիւղերի, որոնք միջճիւղային շփումներով ծառալում ու ամրացնում են այդ արմատում թ, ս եւ լ ձայները։ Ներկայ լեզուարանը հնդեւրոպական այդ բոլոր ճիւղերից վերցնելով այդ արմատի ունեցած ձեւերը, գտնում է, որ ճիւղերց մէկը ունի ար, ոմանք par, ոմանք ars, ոմանք als կամ pal, իսկ շատերը pals։ Համեմատելով այս (մօտաւորապէս համանիշ) բառերի պարունակած ձայները՝ գտնում է, որ միայն մէկը ունի թ բաղաձայնը, իսկ մնացածը՝ թ, լ, եւ ս, եւ հաշուի առնելով, որ թ ունեցողը չի գտնուում Եւրոպայում, իսկ միւսների մեծամասնութիւնը Եւրոպայում՝ հնդեւրոպական մայր լեզուի ենթադրեալ հայրենիքում, եզրակացնում է, որ այդ բառի հնդեւրոպական մայր արմատը պէտք

է ունեցած լինի թև ձայները եւ հետեւցնում է, թէ առ ունեցողը կորցրել է թ եւ ս ձայները եւ լ-ն էլ փոխել է ր-ի:

Սումերերէնը պահել է հայերէնի հետ համընկնող մի շարք հնդեւրոպական բառեր, որոնք, հայերէնի նման, բառասկզբում հնդեւրոպական միւս լեզուների ունեցած v-ի տեղ ունեն g: Սումերերէնը պահել է նաև մի շարք հնդեւրոպական բառեր, որոնք, ինչպէս հայկականները, բառասկզբում չունեն լեզուաբանների կազմած հնդեւրոպական համապատասխան մայր արմատների սկզբի թ եւ ս ձայները:

Սումերերէնը, ինչպէս ասացինք, աշխարհի հնագոյն լեզուներից մէկն է. եւ պիտի ընդունել, որ հնդեւրոպական համարուղ այդ բառերը գոյութիւն ունեցած պիտի լինեն սումերերէնի մէջ՝ նրանց կրող արձանագրութիւններից առաջ:

Բերում ենք այդպիսի բառերից հնգական օրինակ (հնդեւրոպական արմատները եւ նրանց ժառանգները բերում ենք Աճառեանից. ասում է, թէ նշուղ հնդեւ. արմատներից են ծագել նրանց դիմաց բերուղ հայ բառերը).

1. Հնդեւ. Vēsr > հայ *զարում*. ցով է նաև սումեր *gurun* «հունձք, պտուղ»: Նշուած հնդեւ. արմատի ժառանգներից են

լտ. vēr		«զարուն»
հին. vār		
սան. vasantá		
զնդ. vaňhar		
հայր. Vāhara		
պհլ. vahar		«զարուն»
գնչ. varno		
հսլ. vesna		
յն. Ξαρ, կիմք. Guiannuin		
կորն. guaintoin		

2. Հնդեւ. vog<sup>o</sup>h > հայ գոզ «ասել». g-ով է նաեւ սումեր ց, ցոց «խօսել», ցոց «ճիչ»: Հնդեւրոպական այս արմատի ժառանգներից են.

լտ. voseo «խստանալ, ուխտել»  
սանս. vāghát «ուխտալոր, զոհ խստանալ»  
զնդ. aog «ծանուցել, ասել»  
յն. εύχη «ուխտ, աղօքք»

3. Հնդեւ. Ves- > հայ գոյ. g-ով է նաեւ սումեր ց «գոյ». Հնդեւ. այս արմատի ժառանգներից են.

սանս. vasati «քնակիլ, մնալ»  
զնդ. vaňhaiti «քնակում է»  
գոր. wisan «մնալ, քնակիլ»  
հրզ. wist «քնակավայր»  
հիսլ. vist «քնակավայր»  
հինչլ. foss «մնալ»  
գոր. wisan «լինել»  
անգլ. was «էր, կար»:

4. Հնդեւ. Velmn > հայ գեղմ «բուրդ». g-ով է նաեւ սումեր gilim «կենդանի էակ». Հնդեւ. այս արմատի միևնույն ժառանգներից են

լտ. vellus	}	«բուրդ»
գոր. vulla		
գերմ. wolle		
անգլ. wool		
լիթ. vilna		
հալ. vlūna		
բրլու. gloan		
կիմր. gwlan		«բուրդ»
կորն. gluon		

Հայերէնի եւ սումերերէնի նման բրըտ. կիմր. եւ կորն. ճիղերի էլ ց-ով ձեւ ունենալը պիտի չվերագրել պատահականութեան:

5. Հնդեւ. vel > հայ գեղձ «սաստիկ փափաք». ց-ով է նաեւ սումեր ս-gul-ta «սով» (ասում է, թէ հայ բառի ձ-ն աճ է, բայց սումեր բառի -ta- վերջաւորութիւնը ժխտում է այդ): Հնդեւ. արմատի ժառանգներից են

լտ. volo «ուզել»  
սնս. vāranam «ընտրութիւն, փափաք»  
զնդ. var «ընտրել, կամենալ»  
գոթ. wiljan «սուզել»  
հիալ. val «ընտրութիւն»  
լիթ. vēlyju, vēlyti «փափաքիլ, տենչալ»  
հալ. volja, voliti «ուզենալ»:

Վերեւում բերուած հինգ արմատների ամփոփ պատկերը հետեւեալն է.

1. Ասում են հնդեւ. vēsr > *զարում*. ց-ով է նաեւ սումեր *gurun*
2. Ասում են հնդեւ. vog<sup>o</sup>h > զոգ. ց-ով է նաեւ սումեր *gu, gug*
3. Ասում են հնդեւ. Ves- > զոյ. ց-ով է նաեւ սումեր *ga*
4. Ասում են հնդեւ. velmn > գեղմ. ց-ով է նաեւ սումեր *gilim*
5. Ասում են հնդեւ. vel > գեղձ. ց-ով է նաեւ սումեր *ugulta*:

Ըստ համեմատական լեզուաբանների՝ հայերէնը որոշ դէպքերում կորցրել է հնդեւրոպական բառասկզբի թ ձայնը, մինչդեռ համապատասխան մի շարք սումեր բառեր նոյնպէս չունեն թ: Սահա այդպիսի հինգ օրինակները չերկարացնելու համար չենք բերում հնդեւ. արմատների միւս ժառանգները).

1. Հնդեւ. pod > հայ ոտ. կայ նաեւ սումեր ծս «քայլել»
2. Հնդեւ. pla > հայ լալ. կայ նաեւ սումեր ellu, ulili «զալ»
3. Հնդեւ. polo > հայ ոլ. կայ նաեւ սումեր. լս «ոչխար»
4. Հնդեւ. pters > հայ թիո. կայ նաեւ սումեր dir, tir «քարձր լինել»

5. Հնդեւ. *peu* > հայ ոգի. կայ նաեւ սումեր սց «փոթորկի դեւ, զայրոյթ»

Սում են որոշ դէպքերում հայերէնը հնդեւրոպական բառասկզբի թ-ն փոխել է հ-ի. իսկ սումերերէնում պահպանուած համապատասխան առանց թ-ի մի քանի օրինակներ կարող են յուշել, որ հայերէնի այդ հ-ն ոչ թէ թ-ի ձայնափոխութիւն է, այլ կարող է աճած լինել որպէս սաստկացուցիչ: Ահա դրանցից հինգ օրինակ.

1. Հնդեւ. *pol* > հայ հող. կայ նաեւ սումեր սց «դաշտ»

2. Հնդեւ. *Prák* > հայ հարս. կայ նաեւ սումեր արհանդ»

3. Հնդեւ. *ponto* > հայ հուն. կայ նաեւ սումեր սուն «ճահիճ, ջրաւազան»

4. Հնդեւ. *poμio-* (<*peu*) > հայ հոգի. կայ նաեւ սումեր սց «փոթորկի դեւ, զայրոյթ»

5. Հնդեւ. *pa* > հայ հօտաղ «հովիւ». կայ նաեւ սումեր սուլ «հովիվ»

(Ասում է, թէ հօտաղը-ը աճել է d-ով, իսկ դ-ի մասին խօսք չկայ):

Սում են, թէ որոշ դէպքերում հայերէնը կորցրել է հնդեւրոպական բառասկզբի s-ն. սումերերէնում պահպանուած մի շարք համապատասխան օրինակներում նոյնպէս բացակայում է s-ն:

Ահա դրանցից հինգ օրինակ

1. Հնդեւ. *sabhio* > հայ աջ. կայ նաեւ սումեր *azida* (a-zi-da) «աջ»

2. Հնդեւ. *smmo* > հայ ամէն. կայ նաեւ սումեր սոմման «ժողովուրդ, բազմութիւն»

3. Հնդեւ. *smol* > հայ մոլ. «ծովիս, առկայծող», կայ նաեւ սումեր տու «քռնկուել, վառել-կացնել»

4. Հնդեւ. *sruyos, srutis* > հայ առու. կայ նաեւ սումեր արս «ջուր քափել, ածել», սումեր սու «հոսիլ» (Karst), «ալեկոծում» (Deimel)

5. Հնդեւ. *sed* > հայ հեծ (-նել). կայ նաեւ սումեր *ide, iddir* «հեծնել»

Թէեւ որոշել էինք բերել միայն հնգական օրինակ, բայց ուզում ենք այս վերջինների վրայ աւելացնել հետաքրքիր թուրք բառը,

որը առանձին եւ նշանակալի փաստ է պարունակում: Ասում է, թէ հայ թուր բառը եկել է հնդեւրոպական (Ենթադրեալ) տիս արմատից՝ կորցնելով սկզբի ս-ն: Իրականում թուր բառը բնածայն է, արմատը՝ թու: Մարդը թքելիս հանում է թու ձայնը, մինչդեռ այդ գործողութեամբ չի ստացում ս-ով տիս ձայնը: Հետեւաբար պիտի ընդունել, որ նախնականը՝ հենց բուն արմատականը թու էր: Որով դժուար է ընդունել, որ հայ թուր-ի ծնողը տիս ձեւն է: Սիանգամայն պարզ է, որ բնածայնական *tu* կամ *ru* արմատի վրայ մի լեզուածիտ աւելացրել և ձայնը եւ այդ ձեւն էլ դարձել է մայրը ս-ով ձեւ ունեցողների (լտ. spuo, գոր. speiwan, հիալ. sprýja, գերմ. speien, անգլ. spew, հոլլ. sruwen, լիթ. spiauju...): Արդէն մի շարք լեզուածիտեր պահպանել են տա ձեւը (պրս. tuf, օսս. t'us, քրդ. tu, տաւ, հինդուստ. tuf եւ այլն): Մի քանի լեզուներում պահպանուած տու ձեւը (աֆղան. tuk, քրդ. tuk, հինտուս. tahuk, ինչպէս եւ թրք. tukurmak) խօսում է հայ թուր բառի օգտին, ուր բացատրում է թ-ի գոյութիւնը որպէս յոզնակի:

Կարծում ենք նոյնական բնածայնական է գորտ (գորտ-գորտ-գորտ...) բառը, իսկ v-ով verdo ձեւը չի ներկայացնում գորտի հանած ձայնը:

Սահ մի հետաքրքիր օրինակ նաեւ վերեւում նշուած (Ենթադրեալ) *r* > *h* ձայնափոխութեան հարցի համար: Ասում է, թէ հայ *հինգ* բառը եկել է հնդեւրոպական քենք արմատից՝ *r*-ն փոխելով *h*-ի: Մինչդեռ աքքաղական հանշ (տարրերակ՝ համշ) «հինգ» բառը նոյնական ունի *h-h* ձայնը: Չենք կարծում ասուի, թէ աքքաղականն էլ *r*-ն փոխել է *h*-ի: Գուցէ ասուի, թէ աքքաղականը կարող է այդքան հին չինել եւ ժամանակակից չինել հնդեւրոպական մայր լեզուին, այլ կարող է փոխառութիւն լինել տուեալ բառի սկզբում *h* ունեցած հնդեւրոպական մի լեզուածիտից: Միեւնոյն է, այդպիսի դէպրում նախ փոխառու այդ լեզուն կարող էր լինել միայն հայերէնը, քանի որ հնդեւրոպական ընտանիքում միայն հայերէնը ունի հ սկզբնածայնը: Երկրորդ՝ փաստ կլինի հ կրող հայ բառի հնութեանը, երրորդ՝ յաւելեալ ապացոյց կլիներ խոր անցեալում հայերէն խօսողների առկայութեանը աքքաղների մերձակայքում: Նոյն բանը կարելի է ասել, եթէ *հինգ* բառը ծագումով սեմական-աքքա-

դական էր: Այդպիսի դէպքում պիտի ընդունել, որ աքքաղական հանք բառից է գալիս հայ իինգ բառը (որպէս փոխառութիւն), որը եւ դարձել է աղքիր հնդեւրոպական միւս լեզուաճիւղերի համար, մի բան, որը Ենթադրում է խոր անցեալում հայերի՝ հնդեւրոպական միւս լեզուները կրող ցեղերից աւելի մօս լինելը աքքաղմերին:

Թէեւ հայ-աքքաղական հարաբերութիւնները առանձին թեմայ ենք համարում, եւ դրա մասին կը խօսենք առանձին, բայց ի-դենց հետաքրքրութեան համար կը բերենք երկու օրինակ եւս.

Հայ երկ բառը ծագեցնում են հնդեւ. dwi ձեւից (dw > րկ): Կայ սակայն հայ երկ բառի ձայնը յիշեցնող աքքաղական նոյնանիշ r̥iħu «ծնել, սերնդագործել» արմատը: Այս արմատի՝ հայերէնի հետ ունեցած նոյնութեան հարուցելիք հարցերից խուսափելու համար աւելի հեշտ է նմանութիւնը վերագրել պատահականութեան:

Հայ ձի բառը ծագեցնում են հնդեւ. ghēya արմատից (gh > ձ), կայ սակայն աքքաղական sisn «ձի» բառը, գուցէ աքքաղական փոխառութիւն է, քանի որ ձին Աքքադ իջաւ աւելի ուշ ժամանակներին, այնուհանդերձ ոչ շատ ուշ, քանի որ սումերները ճանաչում էին ձիուն եւ նրան կոչում էին «լեռան էշ»:

Հայ արտ «վարելիք հող, դաշտ» արմատը հանում են հնդեւ. aǵro- ձեւից, ասելով, որ ացրո- ձեւը նախ տուել է ածր-, տեղափոխութեամբ՝ արծ եւ յետոյ ծ-տ ձայնների փոխանակութեամբ արտ: Իսկ պատահական նմանութիւն են համարում կամ մի կողմ են թողնում սումեր adar «արտ, դաշտ», արաք. ardħ, պիլ. arta, քրդ. ard, օսս. arduš «արտ» բառերը: Լստ Աճառեանի՝ հնդեւ. aǵro-ձեւի ժառանգներն են յն. αγρος լտ. ager, սանս. ājra, զոր. akrs, հբգ. ackar, achar, գերմ. Acker, հիսլ. akr «ազարակ, արտ, անդաստան»: Ինչպէս տեսնում ենք, հնդեւրոպական ոչ ացրո- ձեւը, ոչ էլ նրա նշուած ժառանգներից որեւէ մէկը ունի տ կամ d ձայնը: Հետեւաբար գտնում ենք, որ հնդեւ. aǵro ձեւը եւ նրա նշուած ժառանգները պիտի կապել սումեր agar «արտ, դաշտ» բառի հետ, որի հետ պիտի կապել եւ հայ ազար (-ակ) բառը, իսկ հայ արտ բառը՝ սումեր adar (a-da-ar) բառին, որի հետ պիտի կապել նաև վերեւում բերուած արաք ardħ, պիլ. arta, քրդ. Ard, օսս. arduš, ինչպէս եւ

անգլ. earth «երկիր, գետին», hupu. ard «ցանուած հող, արտ», ашар. atra «երկիր» եւ այլն:

Հնչինային համապատասխանութիւնների տեսակէտով ի հարկէ յատկանշական երեւոյթներից է այն, որ սումեր ց ձայնը լնդիանրապէս համընկնում է հայ գ-ի հետ (օրինակ՝ agar-ագար [-ակ], gaba-գաբ [-ակ], gabiri-գաբիր, galal-գալար, gašan-գաշան, anag (naggga)-անագ, gilim-գեղմ, gug-զոզ, guedina-գետին, ugulta-գեղճ, Enguar-Անգեղ եւ այլն), իսկ սումեր կ-ն համընկնում է հայ կ-ի հետ (օրինակ՝ kimaħ-կմախ, kaizi-կայծ, kur-կուր (կեր), kubabbar-կապար, kirtab-կարիճ, guskin-ոսկի եւ այլն): Եթէ սումերէնում պահպանուած այս համընկնումներից հնդեւրոպական եղողները գտնուում էին սումերէրէնի մէջ նրանց կրող արձանագրութիւնների ամէնահին քուականներից շատ առաջ (III հազար-ամեակ), ապա դա կարող է մեզ տանել հնդեւրոպական մայր լեզուի տրոհման նախորդող ժամանակներին, մի քան, որը ցոյց կտար, որ հայերէնը աւելի լաւ է պահպանել հնդեւրոպական մայր լեզուի հնչինները եւ աւելի մօտ է կանգնած մայր լեզուին, քան միւս ճիւղերը, քանի որ սումերէրէնում, համապատասխան տեղերում, այլ ձայն ենք գտնում:

Հայերէնի հետ համընկնող սումեր բառերի մեր բերած ցուցակում կան այնպիսիներ, որոնք ոչ թէ պարզ արմատներ կամ բառեր են, այլ բարդ բառեր կամ բառակապակցութիւններ, որոնք անկասկած պատկանում են սումերական լեզուին: Դրանք այնպիսի բնոյք ու կազմութիւն ունեն, որ դրանց՝ հայերէնում գտնուելը պէտք է համարել անհերքելի եւ ցայտուն վկայութիւններ խոր անցեալում երկու ժողովուրդների ունեցած *ուղղակի* շփումների համար:

Այդպիսիներից են հետեւեալները.

1. an-ub-ta (երկինք + կողմեր) «աշխարհի կողմերը» > *մպատ* (-ակ)
2. an-pa (երկինք + թեւ, վերակացու) «երկնային բարձրութիւն» > *ամայ*
3. a-sur-ra (ջուր + ձայն անել) «մեզ» > *շեռ*
4. a-zi-da (ձեռք + դէալի աջ + տանել, պահել) «աջ» > *աջ*

5. bar-su (նստելու տեղ + նստել) «դատաւոր, իշխան» > *բարձ* «մեծաւորի նստելու բարձ»
6. dam-tab-ba (ամուսին + կապել-միացնել) «սանձ» > *բամբ* «համետ»
7. ga-bi-ra (հաստատութիւն + խօսիլ, ձայն հանել) «լեռ» > *զաւառ*
8. kir-tab, gir-tab (դաշոյն + կրել, բռնել) «կարիճ» > *կարիճ*
9. gu-edin-na «արտ, երկիր + դաշտավայր, հարթավայր» > *գետիհն*
10. gu-tab-ba «քել + գործ՝ կապել-միացնել» (gu=ku «քել») > *կտուա*
11. ka-izi (քերան + կրակ) «կրակ վառել, կրակ» > *կայժ*
12. ki-mah (վայր + մահ) «զերեզման» > *կմախ*
13. ku-babbar (փայլուն + արեւափայլ, սպիտակ) «արծաթ» > *կապար*
14. u-gul-ta (սուն-ուտելիք + կողոպտել) «սով» > *գեղճ* «սաստիկ փափաք, կարիք»
15. zu-ab (յայտնի + ովկիանոս) «ծով» > *ծով*

Սումերական այս բառակապակցութիւնների կամ բարդերի գոյութիւնը հայերէնում՝ չի կարող պատահականութիւնների արդիւնք լինել: Անգամ չի կարելի մտածել, որ դրանք մի այլ լեզուի միջնորդութեամբ կատարուած փոխառութիւններ են: Դրանք կարող են իրացնել միայն սումերերէն լեզուն հասկանալով-խօսելով: Հասկանալ-խօսելու համար էլ պէտք էր սովորել, եւ այդ կանուխ ժամանակներում սովորելու համար էլ պէտք էր լինել սումերների ոչ-հեռու հարեւանները:

Օրինակ՝ եթէ որ եւ է օտար լեզում տեսնէինք հայերէն *ձրիակեր, լայնախոհ, աստղաբաշխութիւն* եւ նման բարդ բառեր կամ, ասենք, ծայրէ ծայր, թիչ թէ շատ, հազի հազ եւ նման բառակապակցութիւններ, դժուար թէ այդ օտար լեզում դրանց գոյութիւնը վերագրէինք պատահականութիւնների, եւ չենք կարծում գտնուէր նաև մի լեզուաբան, որ ասէր, թէ հայերէնն է փոխառուն: Կասկած չկայ, որ հայերէնում սումերական վերոյիշեալ բառակապակցու-

թիւնների գոյութիւնը խոր անցեալում սումերների հետ ուղղակի շփման արդիւնք է: Ծիշդ է, որ դրանք հայերէնում քարացել են, դրանց բաղադրիչ անդամների առանձին իմաստները չեն զգացում, այնպէս ինչպէս հիմայ քարացել են գրաբարեան *ի հարկէ, ցունսութիւնն, գուցէ* եւ նման արտայայտութիւնները եւ դրանց նախկին կազմը չի զգացում:

Ուշադրութիւն է գրաւում եւ այն, որ բերուած սումեր բառակապակցութիւնների հետ համընկնող հայ բառերից ոմանք համարում են հնդեւրոպական: Դրանցից են.

an-pa = ամպ = հնդեւ. nbhō, mbhō

a-zi-da = աջ = հնդեւ. sādhyo

ka-izi =կայծ = հնդեւ. gaid

u-gul-ta = գեղճ = հնդեւ. vel

Եթէ հաստատ է այս բառերի հնդեւրոպական լինելը, ապա չի կարելի չընդունել, որ դրանք սումերերէնից անցել են հնդեւրոպական մայր լեզուին:

Վերեւում մեր բերած 100 բառերն ու բառակապակցութիւնները սումերերէնի ու հայերէնի միջեւ եղած նմանութիւնների եւ ընդհանրութիւնների մի մասն են միայն: Եթէ հաշուի առնենք այս երկու լեզուները կրողներին հետազայում իրարից բաժանող հազարամեակների մեծ ժամանակահատուածը ու նրանց այլրած տարբեր միջավայրերի բնակլիմայական տարբեր պայմանները, ապա այսքան ընդհանրութիւնների գոյատեւումն անգամ մտածել է տալիս երկու լեզուների միջեւ հնում կատարուած առեւտրի փոխագդեցութիւնների մեծութեան մասին:

Ի հարկէ կարեւոր հարց է նաև թէ ե՛րք եւ ո՛ր է կատարուել երկու լեզուների շփումը: Այս հարցի համար անում ենք հետեւեալ ելակետային խորհրդածութիւնը:

ա. Այս բառերից ոմանք գտնուում են նաև սումերական հնագոյն արձանագրութիւնների վրայ, իսկ այդ արձանագրութիւնների ժամանակները մեզ տանում են մինչեւ III հազարամեակի առաջին կէսը (մ.թ.ա):

բ. Պիտի ընդունել, որ հենց արձանագրութիւնների առաջին օրերին չէ, որ սումերները կատարեցին այդ փոխառութիւնները, այլ բաւական առաջ եւ երկարատես շփման ընթացքում:

գ. Պիտի աչքի առաջ ունենալ այն հանգամանքը, որ այդ կանուխ ժամանակներում մարդիկ գորկ էին հաղորդակցութեան ու հեռաւոր տեղերի հետ կապի էֆեկտիվ միջոցներից, չկար զիր, չկար հեռաւոր վայրերի հետ գործուն առեւտոր, չկար աշխարհակալ պետականութիւն, իիմնական միակ գործուն շարժումը քոչտրութիւնն էր: Հետեւաբար այդ ժամանակներին մշակութային փոխանակութիւնները կարող էին կատարուել աւելի փոխանակող կողմերի հարեւանութեամբ եւ ուղղակի շփումներով:

դ. Ի հարկէ մենք չենք անտեսում փոխանցման գործուն միջնողակի դերը, սակայն, ինչպէս նշել ենք, սումերահայ լեզուական այս փոխառութիւնների գործուն սեմական աշխարհը փոխանցողի (միջնողակի) դերը չի կատարել:

Ի մի բերելով ասուածները, մեզ մնում է ընդունել, որ լեզուական տարրերի այդ փոխանակումները կատարուել են III հազարամեակից առաջ (մ.թ.ա):

Միս կողմից՝ հնդեւրոպական արմատների համեմատութեամբ հայերէնի ծայնային նշուած տարրերութիւնները՝ սումերերէնի մէջ երեւացող համապատասխան բառերի վրայ էլ գտնուելը մտածել է տալիս, որ հայերէնը նշուած ծայնափոխութիւնները կատարել է սումերների եւ նախահայերէնը կրող ցեղերի միջեւ կատարուած շփումից եւ լեզուական տարրերի փոխանակութիւններից առաջ, այսինքն՝ սումերների՝ հարաւային Սիջագետք իշնելուց շատ առաջ՝ առնուազն 5-րդ հազարամեակին (մ.թ.ա), մի բան, որը հնդեւրոպական մայր լեզուի տրոհումը կտանի աւելի խոր անցեալ: Այլապէս ստիպուած կլինենք ընդունել, որ սումերերէնն ու հայերէնը նշուած բառերուն պահել են հնդեւրոպական մայր լեզուի ձեւերը, մի բան, որը կարող է կասկածի տակ դնել հայերէնի համար կազմուած եւ ընդունուած ծայնափոխութեան օրէնքները եւ կարող է ցուցմունք լինել, որ այդ օրէնքները գործել են հակառակ ուղղութեամբ ցեղակից միս լեզուներում:

Հնագիտութիւնը բաւական ճշդութեամբ պարզել է սումերների՝ Սումեր հջնելոց առաջ ապրած վայրերի հարցը: Սումերի միշտք հնագիտական վայրերի պեղումները եւ դրանց արդիւնքների դասակարգումն ու ուսումնասիրութիւնները յայտնի են դարձրել, որ հարաւային Միջագետքում, նոր քարէ դարի ժամանակներում, Պարսից Ծոցի եզերքների մօտ նախապէս բնակութիւն է հաստատած եղել եղեգներից հիւսուած տնակներում ապրող մի նախնական ժողովուրդ: Այս ժողովորդի հետքերը առաջին անգամ յայտնաբերուել են ներկայումս *Al-Ubaid* կոչուած վայրի պեղումների ամենաստորին շերտում, եւ դրա համար էլ սրանց ժամանակաշրջանը այդ վայրի անունով պայմանականօրէն կոչում են *Ալ-Ուրէյդեան մշակոյթի* (նախադինաստիական առաջին) ժամանակաշրջան:

Այս ժողովորդի ինքնութիւնը դեռ լիի չէ պարզուած: Առաջ կարծում էին, որ նրանք եկել են Իրանի կողմերից: Յետագայ ուսումնասիրութիւնները ցոյց են տուել, որ Սումերում առաջին հաստատողները, որ եկել են 4500 թուերին կամ առաջ (մ.թ.ա), եղել են (գոնէ նրանցից մի մասը III հազարամետակին ծանօթ էին որպէս) *սուրարիներ*, եւ գտնում են, որ սրանցից են մնացել *Siparhu, Եփրատ* եւ սումերական միշտք քաղաքների անունները<sup>1</sup>:

Ալ-Ուրէյդեան մշակոյթին յաջորդել է սումերական կոչուող եւ աւելի բարձր քաղաքակրթութեան հասած մի ժողովորդի հետքերը, որոնք առաջին անգամ յայտնաբերուել են Uruk-ի (Ո. Գրքում՝ Erech, այժմ՝ Warka)` սումերական ամենահին քաղաքի վայրի պե-

---

<sup>1</sup> Samuel N. Kramer, “The Sumerians”, Chicago, 1963, p.40-41: Արդեօ՞ք Սումեր (Շումեր) բառը զայիս է Սուրարի (Շուրարի) բառից: *Սուրարի* անուան սումերական ձեւը *Սուրիր* է, որը կարող է նոր տեղում, III հազարամետակին, քարբառային թ > մ տարբերութեամբ փոխուած լինել Շումիր > Շումեր ձեւի. կան եւ այլ օրինակներ, ուր թ-ից յետոյ եկող ձայնատրից յետոյ թ-ն փոխուել է մ-ի. օրինակ՝ Ներքովք > նեմյուր (թ > մ), Սինախերիր > Սենեքերիմ (թ > մ), սուրարեան Բուրանուն > Բուրատոն > *Սուրատ* (թ > մ) այսպէս էլ գուցէ Սուրիր > Սումիր > Սումեր (թ > մ): Սուրարեան Բուրանուն բառի համար տես Kramer-ի գրի նշուած էջը: Պիտի նշել, որ զրի ստեղծումը եւ Սումեր անունը պիտի վերագրել ոչ թէ միայն Ուրութեաններին, այլ նրանց եւ Ալ ուրէյդեանների ու սեմիտների միաձուլումից առաջցած ժողովորդին:

դումներով. դրա համար նրանց ժամանակաշրջանը կոչուել է *Ուռուքեան մշակոյթի* (նախադիմաստիական երկրորդ) ժամանակաշրջան:

Գիտութեանը յայտնի է դարձել արդէն, որ սումերերէն լեզու խօսող եւ սումերական մշակոյթը կրող այս հնարամիտ ժողովուրդը (նրանց է վերագրում գրի ստեղծումը) նախապէս եղել է լեռնային ժողովուրդ: Ըստ վերջին մի քանի հետազոտողների, այս ժողովոյի եւ նրանց նախորդների մասին դժուար է որոշ բան ասել: Յայտնաբերուած հնագիտական ու մարդաբանական նիւթերը որոշիչ բնոյք չունեն այս հարցում: Առաջին եկողները գրաւոր հետք չեն թողել, սումերական արձանագրութիւններն էլ որեւէ բան չեն ասում նրանց մասին: Հարցին մօտենում են աւելի լեզուաբանական տեսակէտով: Kramer-ը ասում է, թէ սումերերէնը աւելի միավանկ արմատների լեզու է, մինչդեռ Սումերի հնագոյն տեղանուններից շատերը եւ հողագործութեան ու արհեստագործութեան վերաբերող տերմինները երկվանկ ու բազմավանկ բառեր են, որոնք սումերերէնով չեն ստուգաբանում. հետեւաբար չեն պատկանում սումեր լեզուին, այլ նրանց նախորդողների լեզուին<sup>1</sup>: Նա սրանց կոչում է սուրարիներ, իսկ Benno Landsberger-ը՝ proto-Euphrateans<sup>2</sup>: Ի հարկէ եթէ սրանք սուրարիներ էին, ապա պատկանում էին խուրրի ցեղին, իսկ խուրրիները եղել են Հայկական լեռնաշխարհի ժողովուրդ:

Ծիշդ է, որ սումերերէնը առաւելապէս միավանկ արմատների լեզու է, բայց զարգացրել է նաև որոշ տոկոսով երկվանկ ու բազմավանկ բառեր՝ բարդ բառեր կամ բառակապակցութիւններ: Ի հարկէ մեր ունեցած տուեալներով դժուար է խօսել նրանց էթնիկական պատկանելիութեան մասին. դժուար է նաև ասել, թէ ճիշդ ո՛ր էր նրանց ծագման բուն օրրանը: Սակայն գիտութեանը յայտնի է, որ սումերները ծագումով եղել են լեռնային ժողովուրդ<sup>3</sup>:

<sup>1</sup> Kramer, նոյն տեղում, էջ 40:

<sup>2</sup> Նոյն, էջ 41:

<sup>3</sup> Seton Lloyd, “Twin Rivers”, Oxford, 1943, p. 5.

Նրանք, նախքան Սումեր իշնելը բնակուելիս են եղել Միջագետքի եւ Ասորիքի հիւսիսում բարձրացող լեռնաշխարհում ու հարեւան շրջաններում՝ հենց նոյն Սուրբարի կոչուած երկրում: Սումերները հաւատում էին, որ իրենք լեռների ծնունդ են. սումերական արձանագրութեան վրայ կարդրում ենք. a-kurgal e-ri-a «որին հայրը՝ մեծ լեռ ստեղծեց»<sup>1</sup>:

Նրանք լեռնային այս շրջաններից 5-րդ հազարամեակի վերջերին կամ 4-րդ հազարամեակի սկզբներին (մ. թ. ա.) Եփրատ ու Տիգրիս գետերի հոսանքով աստիճանաբար իշել են հարաւի բերդի ու բարեխառն կիմայ ունեցող դաշտավայրերը եւ վերջնական բնակութիւն հաստատել իրենց նախորդողների բնակավայրերի շրջաններում՝ Պարսից Ծոցի ափերի մօտ: Նրանց լեռնային այդ բնակավայրերից դէպի Սումեր տանող ճանապարհների վրայ մի շարք հին կացարանների հնագիտական պեղումները յայտնաբերել են սումերական ուրութեան մշակոյքի նախատիպը հանդիսացող նիւթական մշակոյքի մնացորդները<sup>2</sup>: Այդ կացարաններից կարելի է յիշել հետեւեալները.

Ըստ սումերական մի դիցազներգական գրոյցի՝ սումերական հնագոյն քուրմ-արքանները սերտօրէն կապուած են եղել Aratta անունով մի քաղաք-պետութեան հետ, որը գտնուած է եղել, ըստ Kramer-ի, Ուրմիա լճի շրջանում: Անհաւանական չէ, որ այս Aratta-ն գտնուած լինի Ուրուատրի-Արարադ լեռներում: Զրոյցում սումերական Erech քաղաքի արքան Aratta-ի արքայից խնդրում է իր կառուցելիք տաճարի համար շինաքար եւ քարզործ վարպետներ-որմնադիրներ ուղարկել, փոխարենը ուղարկում է հացահատիկ, խօսում է նավերի պատրաստման մասին շինաքարերը գետով ուղարկելու համար. ի հարկէ դա կարող էր կատարուել Տիգրիս գետի վրայով: Կարեւոր է նաև դիցազներգութեան մէջ յիշուած այն վկայութիւնը, որ Սումերից Aratta տանող ճանապարհի վրայ է գտնուել Hurum լեռը, որին Kramer-ը համարելով խորրիների լեռներկիր՝ Aratta-ին բաւական ճշլութեամբ տեղադրում է Ուրմիայ լճի շրջանում: Տե՛ս Kramer, նշուած գիրքը, էջ 275:

Հեղինակը 1982 թվականին հայտնած ենթադրությունն ավելի զարգացնեց 1987-ին հրատարակած «Արմենիա, Սումեր եւ Սուրբարու» գրքում՝ նվիրելով մեկ գլուխ «Արատտա և Էրեք» վերտառությամբ, որը գետեղված է սույն հասորում – հրատարակիչ/:

<sup>1</sup> S. Langdon, “A Sumerian Grammar and Christomathy”, Paris, 1911, p. 94:

<sup>2</sup> Seton Lloyd, “Twin Rivers”, Oxford, 1943, pp. 9-12: Տե՛ս նաև Woolley, “Ur of the Chaldees” (Pelican Books), 1940, pp. 83-88:

1. Մուսովի հիւսիսում երկու բլուր.
- ա. Արպաշիյա (պեղուած է բրիտանական թանգարանի կողմից 1931 թուին):
- բ. Թէփէ-Գառլիա (պեղուած է Պենսիլվանիայի համալսարանի կողմից 1931 թուին):
2. Սինճար լեռների ստորոտում մի վայր (պեղուած է Իրաքի կառավարութեան կողմից 1939 թուին):
3. Նիսիրինի մօտ Թէլ-Հալաֆ կոչուած վայրը (պեղուած է Baron Von Oppenheim-ի կողմից 1914 թուականից առաջ):  
1935 թուին Թէլ-Հալաֆեան խեցեղենի նմանները գտնուեցին՝ Տիգրիսի վերին աւազանից մինչեւ Սիցերկրական հասնող շրջանների վրայ տարածուած: Գիտութեան կողմից Թէլ-Հալաֆեան ժամանակաշրջանը բուագրուում է մօտ 4500 թ. (մ. թ. ա.):
4. Սաքէ-Գէօզի (պեղուած է անգլիական մի արշաւախմբի կողմից):
5. Անտիոք (պեղուած է ամերիկեան արշաւախմբի կողմից):  
Վերեւում ասացինք, թէ սումերացիները նախ քան Սումեր իջնելը ապրել են Սիցագետքի եւ Ասորիի հիւսիսում տարածուող լեռնաշխարհում: Ուստի պայման էր, որ Սումերի եւ նշուած հնագիտական շրջանների (Թէլ-Հալաֆի, Սաքէ-Գէօզի, Անտիոքի, Սինճարի լեռների եւ միւսների) նոր-քարեդարեան մշակոյթները համընդհանրութիւն ունենային Հայկական լեռնաշխարհի նոյն ժամանակաշրջանի բնակավայրերի մշակութային նատուածքների հետ:

Եւ յիրաւի, Հայկական լեռնաշխարհի մի քանի նոր-քարեդարեան բնակավայրերի (Խուրրերդի, Մալաթիայի, Վանի, Կողեւակ ու Մաշտոցի բլուրների եւ այլն) հնագիտական պեղումները հաստատում են այդ համընդհանրութեան գոյութիւնը:

Խօսելով Հայկական լեռնաշխարհի ու հարեւան երկրների նոր-քարեդարեան բնակավայրերի մշակութային կապերի մասին՝ U. Հ. Սարդարեանը գրում է. «Այդ է ապացուցում Կիլիկիայի, Ասորիի, Փիւնիկիայի եւ Վերին Սիցագետքի (Սերսին, Կալա-ատ-Զարմոյ, Ուսս-Շամրա, Ջերէլ-Բիբլ Ա.) նիւթերի համընդհանրութիւնը Հայկական լեռնաշխարհի նիւթերի հետ, առանձնապէս նոր-

քարեղարեան խեցեղենի հետ, որը բուագրում է մօտաւորապէս 6-րդ հազարամեակի սկզբից մինչեւ 4-րդ հազարամեակի վերջը<sup>1</sup>:

Այստեղ շրեթեցինք անունները բոլոր այն վայրերի, որոնց հնագիտական պեղումները երեւան են հանել սումերական մշակոյթի հետ համմակնող նիւթական նաստածքներ: Սակայն կարծում ենք, որ այսքանն էլ բաւական է ցոյց տալու այն ուղղութիւնը, որով իջել են սումերները դեպի հարաւային Միջազգետք, եւ այն լեռնային շրջանները, որը բնակուելիս են եղել Սումեր իջնելուց առաջ:

Ի՞նչ եզրակացութիւն պիտի հանել այս բոլորից:

Նշուած սումերական 100 բառերն ու բառակապակցութիւնները, նրանց մօտաւորապէս 42-50 տոկոսի հնդեւրոպական լինելը, նրանց՝ աւելի հայերէնի հետ ունեցած կապը, ինչպէս նաև հիւսիսային Միջազգետքի, Հայկական լեռնաշխարհի ու Կիլիկիայի միշարք հնագիտական վայրերում սումերական մշակոյթի նախատիպն հանդիսացող նիւթերի յայտնաբերումը թելադրում են մեզ անել հետեւեալ խորհրդածութիւնները:

1. Նախահայերէնը կրող ժողովուրդը խոր անցեալում գտնուել է Սումերների մերձակայքում՝ եղել է նրանց հարեւանը:
2. Հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքը սումեր-աքքաղների շփման շրջանակում գտնուող Հայկական լեռնաշխարհն է ու Փոքր Ասիայի հարեւան շրջանները:
3. Հայերէնը կրող ժողովուրդը խոր անցեալից ի վեր գտնում է Սումեր-աքքաղների հիւսիսում բարձրացող Հայկական լեռնաշխարհում, աւտոխոտոն է, բնիկն է իր լեռնաշխարհի, չի եկել Եւրոպայից:
4. Հայերէնը հնդեւրոպական անկախ եւ կենդանի ճիւղն է, որ, լինելով ուղղակի սերունդը հնդեւրոպական մայր լեզուի, գտնում է հենց նրա (մայր լեզուի) հայրենիքում, չի հեռացել իր ծագման օրուանից:

<sup>1</sup> Ս. Հ. Սարդարեան, «Նախնադարեան Հասարակութիւնը Հայաստանում», Երեւան, 1967, էջ 151:

## **ԳԼՈՒԽ Բ**

---

**ՆԱԻՐԵԱՆ ՀԱՅ-ԱՐՍԵՆՆԵՐԸ**

Սումերական լեզուի պահած տուեալներից զատ կան նաև հնդեւրոպական, պատմագիտական ու դիցարանական տուեալներ ու փաստեր, որ արմէնները առկայ էին Հայկական լեռնաշխարհում արմէնների ենթադրեալ զարքի թուականից շատ առաջ:

Ժամանակին այս հարցի կապակցութեամբ մանրամասնօրէն քննարկել ենք Նարամ-Սինի արձանագրութիւնները, ուր յիշում է Արմանին<sup>1</sup>: Ներկայ առին ուզում ենք բերել այդ տուեալների մի մասը՝ վերջերս Սիրիայում կատարուած հնագիտական մի կարեւոր յայտնագործութեան լոյսի տակ:

Աքրադների մեծ Արքայ Նարամ-Սինի (2290-2254) դէպի հիւսիսի կատարած արշաւանքների մասին մեզ հասել է մէկից աւելի սեպագիր արձանագրութիւններ, ուր յիշատակում է Արմանի երկիրը:

«Նարամ-Սին եւ իր քշնամիները» անունով յայտնի խեթական արձանագրութեան մէջ, որ գրուծ է մ. թ. ա. II հազարամետակի սկզբներին, Նարամ-Սինի դէմ կռուած 17 քշնամիների մէջ 11-րդ տեղում յիշում են «Արմանի Քաղաքի երկիրը» ու նրա «քազաւոր Սաղակինան»: Ահա Նարամ-Սինի 17 քշնամիների ցուցակը.

1. Անմանահլա՝ Գուշուա քաղաքի երկրի թագաւորը,
2. Բունանա [...]՝ Պակկ[ի...] քաղաքի երկրի թագաւորը,
3. Լապանահլա՝ Ուլիվի քաղաքի երկրի թագաւորը,
4. [...ի]ննիպահլա՝ [...] երկ[րի] թագաւորը,
5. Պամպա՝ Խաքքի քաղաքի երկրի թագաւորը
6. Զիպանի՝ Կանէշ քաղաքի [ե]րկրի թ[ագաւորը],
7. Նուր [...] ,
8. Խուվարուվաշ՝ Ամուրրի քաղաքի երկրի թագաւորը,
9. Տիշ[ե]նկի Պարաշի քաղաքի երկրի թագաւորը,

<sup>1</sup> Մարտիրոս Գավորչեան, «Արմէն եւ Հայ Անունների Ծագումը եւ Ուրարտուն», 1973, էջ 7-36:

10. [.....],
11. Մարտակինա՝ Արմանի քաղաքի երկրի թագաւորը,
12. Իս-Գիպպ[ու]՝ մայրիների լերան թագաւորը,
13. Տիեշ[ի.....],
14. Ուր-լարակ՝ Լարակ քաղաքի երկրի թագաւորը,
15. Ուր-[ք]անդա՝ Նիկկի[...] քաղաքի երկրի թագաւորը,
16. Իլշունահի՝ Տուրկի քաղաքի թագաւորը,
17. Տիշ[ք]ինկի՝ Կուրշառուա քաղաքի երկրի թագաւորը:

Նարամ-Սինի արձանագրութիւնն ուսումնասիրողների մեծամասնութիւնը, նրանց բուում յայտնի եւ մեծահմուտ գիտնականներ B. Hrosny, G. Contenau, S. Smith, J. Garstang, L. King, E. Mayer, N. Adontz, E. Forrer եւ ուրիշներ, այս տեքստը գնահատել են որպէս վստահելի աղքիր եւ այդտեղ բերուած տուեալները՝ որպէս պատմական արժեք ներկայացնող վկայութիւններ: Սակայն կան պատմաբաններ, որոնք տեքստի հաւաստիութեան մասին կասկած էին յայտնել: Այդ կասկածանքների հեղինակները հայագիտական տեսակէտով բաժանում են երկու խմբի. առաջինում նրանք են, որոնք, հիմնուելով խեթական արձանագրութեան՝ Նարամ-Սինից 2-3 դար յետոյ գրուած լինելուն վրայ, այն համարում էին աւանդութիւնից առնուած կիսառասպելական յիշողութիւն, որով պատմականօրէն ոչ վստահելի: Իսկ երկրորդում նրանք են, որոնք տեքստը համարելով հանդերձ պատմական՝ այնտեղ յիշատակուած Արմանի-ն, ոմանց սխալ տեղադրումներից ելնելով, չեն նոյնացնում Արմենիա անուան հետ: Հայագիտական տեսակէտով ուշադրութիւն գրաւողն այն է, որ այս կասկածանքների վրայ ընհանրապէս յենում են նրանք, որոնք հայ ժողովրդի ծագման հարցում տակալին կառչում են նրա՝ Բալկաններից գաղթած լինելու վարկածից:

Այստեղ աւելորդ ենք համարում կրկնել այդ կասկածանքների պատճառաբանութիւնները հերքող մեր փաստարկութիւնները. այդ հարցը լայնօրէն քննարկուած է մեր վերոյիշեալ գրքում: Այստեղ, սակայն, առիթ ենք համարում աւելացնել որոշ նոր փաստեր:

Քանի որ Նարամ-Սինի այս 17 թշնամիների մէջ յիշում են Փոքր Ասիայում գտնուած Խարքի ու Քանէշ երկրները, ապա կարելի է մտածել, որ Նարամ-Սինը այս շրջանները հասնելու ճանապարհին հանդիպած կլինի նաև Հայկական լեռնաշխարհ՝ գոնչ նրա հարաւարեւմտեան շրջանները: Եւ յիրափ, Դիարբեքիրի մօտ, իր տեղում (*in situ*) գտնուած՝ Նարամ-Սինի յաղթանակի կոռողը՝ իր սեպազիր արձանագրութիւններով՝ կասկած չեն թողնում, որ Նարամ-Սինը եղել է Հայկական լեռնաշխարհի հարաւարեւմտեան շրջանում եւ կռուել է նրա ուժերի դէմ:

Մեր վերոյիշեալ աշխատութեան մէջ հայագիտութեան ուշադրութիւնն ենք իրափել նաև Նարամ-Սինի մի իսկական աքքադական արձանագրութեան վրայ, ուր յիշուած է Արմանիի հետ եւ Իրլան: Ահա աքքադական այդ արձանագրութեան տեքստի թարգմանութիւնը:

«Աստուածային Naram-Enzu-ն (Naram-Su-en)<sup>1</sup> հզօր արքան (աշխարհի) չորս կողմերի, նուածողը Armani-ի եւ Ibla-ի »<sup>2</sup>:

Ինչպէս տեսնում ենք՝ Նարամ-Սինը իր այս առանձին արշաւանքով նուածում է Արմանին՝ այս անգամ Իրլայի հետ, որը չի յիշում 17-ի արձանագրութեան մէջ:

Եթէ Նարամ-Սինի 17 թշնամիները զինակցել եւ Նարամ-Սինի դէմ կռուել էին իրենց միատեղուած հաւաքական ուժերով (Հրոզնին եւ ուրիշներ այդպէս են կարծում), ապա ճակատամարտը պէտք է տեղի ունեցած լինէր Դիարբեքիրի մօտ՝ Նարամ-Սինի յաղթանակի կորողի շրջանում: Իսկ եթէ Նարամ-Սինի 17 թշնամիների ցուցակը խեթական արձանագրութեան մէջ բերուած է որպէս մի մօտաւոր գումարը նրա կատարած առանձին-առանձին արշաւանքների, ապա այդ ցուցակում պէտք է, որ Արմանիի հետ մտնէր եւ Իրլան: Այդպիսի դէպքում՝ իւրաքանչիւր առանձին արշաւանքի համար էլ, իրենց վայրերում, այսի բողած լինէր մի առանձին յաղթանակի կորող (ի հարկէ կարելի է մտածել, որ այդպէս էլ արել է, բայց դեռ չեն գտնուել): Այսուհանդերձ անհաւանական չէ, որ Դիարբեքիրի յաղթանակի կորողը վերաբերում է Արմանի եւ Իրլա

<sup>1</sup> G.A. Barton, “The Royal Inscription of Sumer and Akkad”, London, 1929, p 141.

<sup>2</sup> Մեր նշուած գիրքը, էջ 30. Իրլա անունը ունաքը վերջերս կարդում են Էրլա:

կատարած արշաւանքին: Այսպիսի դեպքում յաղթանակի կորողի վայրը պատկանում էր Արմանի երկրին, քանի որ, ինչպէս կտեսնենք մի քիչ յետոյ, Իրլայի տեղը արդէն գտնուած է:

Իրլան յիշում է նաև Գուղէայի մի արձանագրութեան մէջ: Ահա նաև այդ արձանագրութեան մեզ հետարքրող մասի քարգմանութիւնը:

«Երբ տունը Նինգիրսուի նա կառուցեց, Նինգիրսուն, արքային որ նա սիրում է, վերեկի ծովից մինչեւ ներքեկի ծովը բացաւ նրա ծամբան ինչպէս դուռ: Ամանոսից՝ մայրիների լեռից մայրի ծառեր, որոնց երկարութիւնը 60 կուրիտ էր ... Ուրսու քաղաքից՝ (որ գտնում էր) Իրլան լերան վրայ, սապալու ծառեր, մեծ ամալու ծառեր, քուլուրու ծառեր անտառու լերան՝ վերածեց գերանների...»<sup>1</sup>:

Նարամ-Սինի արձանագրութեան մէջ Իրլան յիշում է որպէս մի երկիր, իսկ Գուղէայի արձանագրութեան մէջ յիշում է որպէս մի լեռ, որի անտառու շրջանում գտնում էր Ուրսու քաղաքը: Ուրեմն Իրլան եղել է մի լեռնային երկիր:

Վերջին տարիներին՝ Սիրիայի Հալեպ քաղաքից 60 կիլոմետր հարաւ-արեւմուտք գտնուստ Սարագէա գիտի մօս գտնուող Թէլ-Սարտիխի բլրի վրայ պեղումներ էր կատարում Հռոմի համալսարանի իտալացի հնագէտ Պրոֆ. Պաուլո Մարիէն: Բարեբախտաբար նրա աշխատանքները տուել են անսպասելի մեծ արդիւնք: Նա յայտնաբերել է բարձր քաղաքակրթութիւն ունեցած մի հին քաղաք, որը գոյութիւն է ունեցել III հազարամեակի վերջին քառորդում: Այդ քաղաքը եղել է սեմական եւ ունեցել է մի (մինչեւ այս գիտը) անծանօթ սեմական քարբառ: Պեղումները յայտնաբերել են 16500 կատ սեպագիր տախտակներ, որոնց նախնական քննութիւնը ցոյց է տուել, որ (ըստ Պրոֆ. Մարիէլի) այդ քաղաքը Իրլան է:

Սենք թէեւ մի փոքր կասկած ունեինք յայտնաբերուած այդ քաղաքի ինքնութեան այդ որոշման դէմ, որովհետեւ Իրլան, Գուղէայի արձանագրութեան մէջ, յիշում է որպէս մի անտառու լեռներկիր, որի անտառներում գտնում էր Ուրսու քաղաքը: Սինչդեռ

---

<sup>1</sup>Նոյն, էջ 33:

Թէլ-Մարտիխը մի շնչին անհարթութեան վրայ է: Այս խնդրի մասին Հալք գրած նամակին՝ հայ մշակոյթի երախտաւոր գործից ու պաշտպան Տոքտ. Ռ. Շեղենեանը իր պատասխան նամակում գրում է, թէ այս խնդրով յատուկ եւ առանձին զրոյց է ունեցել Պրոֆ. Մարիեյի հետ, որը ասել է, թէ Թէլ-Մարտիխի մօտերքը բլրային է, որը կարող էր տափաստաններում ապրող Գուլեայի համար լեռ թուալ: Միաժամանակ աւելացրել է, թէ մի քանի արձանագրութիւնների տուեալները կասկած չեն թողնում, որ Թէլ-Մարտիխում գտնուած քաղաքը Իրլան է: Սենք ընդունեցինք, որ Իրլան արդէն յայտնաբերուել է: Սեմական լեզուով գրուած մի շարք սեպագիր տախտակների նախնական ընթերցումները պարզել են, որ Իրլան եղել է սեմական եւ ունեցել է բարձր քաղաքակրթութիւն, ընդգրկել է ընդարձակ երկիր, որը տարածուել է Կիլիկեան Տարոսից այն կողմ՝ դէպի Փոքր Ասիայ: Հետեւաքար պիտի մտածել, որ Գուլեայի ասած Իրլան լեռներկիրը գտնում էր ոչ թէ հենց Իրլան քաղաքի շրջապատում միայն, այլ նաև հիւսիսում տարածուող լեռնային շրջաններում, որ եւ պիտի գտնուած լիներ Ուրսու քաղաքը, քանի որ Թէլ-Մարտիխի վայրում գտնուածը Իրլան է: Ուստի անհաւանական չէ, որ Ուրսուն գտնում էր Հայկական Տարոսի արեւմտեան թերի վրայ, Մալաթիայի շրջանում, «Եփրատի գլխաւոր գետանցի Ուրշա կամ Ուրուսա (Պետինգերեան քարտէսի ad Aras, այժմ՝ Փորուտ գիտից ոչ հեռու) քաղաքի...» տեղում<sup>1</sup>:

Ամենայն դէպս, կարեւորը այն է, որ արդէն Իրլայի տեղը յայտնի է, մի քան, որը աւելի է հեշտացնում Արմանիի տեղադրման գործը:

Նարամ-Մինի արձանագրութիւնը ցոյց է տալիս, որ արդէն Արմանի եւ Իրլա երկրները իրարից շատ հեռու չին կամ սահմանակից էին: Միաժամանակ պարզ երեւում է, որ Արմանին եւ Իրլան իրարից տարբեր եւ առանձին ուժ ներկայացնող թագաւորութիւններ էին, քանի որ 17-ի արձանագրութիւններից գիտենք, որ Արմանին առանձին թագաւորութիւն էր:

---

<sup>1</sup> «Հայ Ժողովրդի Պատմութիւն», Երեւան, 1971, I, էջ 196:

Իրլան յիշում է նաեւ Նարամ-Սինից առաջ՝ նրա մեծ հայր Սարգոնի մի արձանագրութեան մէջ: Ահա այդ արձանագրութեան մեզ հետաքրքրող մասը:

« ... Սարգոն արքան Տուտուլիում Դազանին մասուցեց պաշտամունք. վերին երկիրը ... նա տուեց Մարին, Եարմուտին եւ Իրլան մինչեւ անտառը մայրիների եւ լեռները արծաթի՝ Սարգոնին... »<sup>1</sup>:

Երեւի Սարգոնի գլխաւոր նպատակներից մէկը եղել է շինարարութեան համար ձեռք բերել մայրի ծառի գերաններ եւ արծաթ: Նա իր ճանապարհին նշուած քաղաք-երկրները նուածելու համար շարժուած պիտի լինի Եփրատով դէպի վեր: Նախ նա հասել է Մարի, որ ամորիտների մայրաքաղաքն էր (սա տեղադրում է ներկայ Իրաք-Սիրիա սահմանագծի՝ Եփրատը հատող կէտում): Յետոյ Եփրատով շարժուել է վեր ու հասել Եարմուտի եւ ապա Եփրատի ոլորանի մօս լքել է գետը եւ ուղղուել է դէպի արեւմուտը ու հասել Հյջա: Այստեղից էլ շարժուել է դէպի հիւսիս ու հասել Կիլիկիայի Ամանոս լեռան մայրիների անտառ եւ արծաթի լեռները:

Սարգոնը իր այս երթով չի հանդիպել Արմանիին: Հետեւաբար պիտի ընդունել որ Արմանին չէր գտնուում իր այս երթի ճամբուն վրայ: Որով այն չէր գտնուում Եփրատի՝ Մարիից մինչեւ գետի ոլորանը ընկած հատուածի շրջաններում եւ ոչ էլ այս շրջանների եւ Իրլայի միջեւ ընկած տարածութիւններում. որով չէր գտնուում (ինչպէս նշել են ոմանք) Հալէպի տեղում:

Հետեւաբար ճիշդ կլինի ընդունել, որ Արմանին սուրարիական էր եւ գտնուում էր աւելի Սուրարի կոչուած երկրում՝ ընդգրկելով իր մէջ Խարուրի եւ Եփրատի միջեւ ընկած տարածութիւնները, Հայոց Սիջագետքն ու Աղճիքը: Ուստի կարելի է մտածել, որ յետագայում Արմէ-Շուպրիան ընդգրկում էր Աղճիքի հետ եւ հարաւային այս շրջանների կարեւոր մասը, քանի որ Շուպրիան հենց Սուրարին է, որը խուրրիների երկիր էր: Հետեւաբար մնում է ընդունել, որ Արմանին սուրարիական էր: Յետագայում այս շրջան-

<sup>1</sup> G. A. Barton, “The Royal Inscriptions of Sumer and Akkad”, London, 1929, p. 141 (անգլերենից հայերէն թարգմանութիւնը կատարուել է մեր կողմից):

ներում յայտնի էին խուրրիական Խառան, Ուրհա (Ուրֆա-Եղեսիա) Վաշշուզանի, Կարանիա, Արկանիա եւ այլ քաղաքներ:

Բ. Հրոգնին եւ նրան հետեւած մի քանի ուրիշներ Արմանին ենթադրաբար տեղադրել էին Հալեպի տեղում: Ի հարկէ դա չի համապատասխանում արձանագրութիւնների համադրուած տուեալներին:

Խեթերի Մուրսիլ Ա-ի հայր Խաթթուսիլը (19-րդ դար մ.թ.ա.) Հալեպին յիշում է Խալպա ձեւով<sup>1</sup>: Այդ ժամանակաշրջանին է, որ աշշուրեան Սարգոն Ա-ը (1980-1948) յիշում է Արմանիին: Որով Արմանին չէր կարող նոյն ժամանակներին կոչուել թէ՝ Խալպա եւ թէ՝ Արմանի:

Հալեպը նշանաւոր է իր ջրհորներով: Թէեւ քաղաքի կողքով անցնում է մի աննշան գետակ, բայց այն տարուայ չորս եղանակներին (միշտ) չի հոսում: Վերջերս Եփրատից ջուր բերելուց առաջ բնակիչները խմում էին ջրհորի եւ անձեւի ջրերը ամբարող հորերի ջուր, որոնք նշանաւոր են Հալեպում, միաժամանակ քաղաքում տեղ-տեղ կար մօտակայ աղբիւրներից բերուած ջրի ծորակներ, որոնցից օգտուում էին բնակիչները: Կարելի է մտածել, որ տափաստանային այս շրջանում Հալեպի առաջին բնակիչները հաստատուած էին մի աղբիւրի կամ ջրհորի շուրջ, որից էլ քաղաքը ստացել էր իր անունը: Սումերերէն halba (աքքաղերէն halpu) նշանակում է «աղբիւր» կամ «ջրհոր»<sup>2</sup>: Որով անհաւանական չէ, որ Հալէպ անունը պահում է յիշատակը այս halba անուան, մանաւանդ որ, ինչպէս նշեցինք, Խաթթուսիլը Հալեպին յիշել է հենց Խալպա ձեւով: Ուստի պիտի մտածել, որ այդ քաղաքը հենց իր ծննդի օրերից կոչուում էր Խալպա-Հալեպ, մի բան, որ տեղ չի թողնում նրան Արմանի կոչուած լինելուն:

Ինչպէս նշեցինք, Իրլան եղել է քարձր քաղաքակրթութիւն ունեցող մի հզօր երկրի մայրաքաղաք, որի տիրապետութեան սահ-

<sup>1</sup> Ն. Աղոնց, «Հայաստանի պատմութիւն», Երեւան, 1972, էջ 29:

<sup>2</sup> P. A. Deimel, “Sumerisch-Akkadisches Glossar”, 1934, տե՛ս halba:

Հետաքրքիր է նշել, որ Բէյրութ քաղաքի անունն էլ առաջացել է Փինիկերէն բերոր «ջրհոր» բառից (Կամսար Աւետիսեան, «Աշխարհագրական անունների բացատրական բառարան», Երեւան, 1969, տե՛ս Բէյրութ):

մանները գտնուել են Ամանոսից էլ այն կողմ, որի անտառներին հասնելու համար Սարգոնը ստիպուած է եղել նախ նուաճել նրա կենտրոն Իրլան: Այդպիսի հզօր Իրլան այդ ժամանակներին իր տիրապետութեան տակ պիտի ունեցած լինելը նաեւ իր մօս գտնուող Հալէալը: Երէ Արմանին լինել Հալէալը, ապա խեթական նարամսինեան արձանագրութեան մէջ կը յիշուէր ոչ թէ Արմանին իր թագաւորով, որպէս առանձին թագաւորութիւն, այլ նրա տեղ կը յիշուէր Իրլան ու նրա թագաւորի անունը, քանի որ այդ արձանագրութեան մէջ, ինչպէս տեսանք, ամէն մի երկիր յիշուել է իր գլխաւոր քաղաքի անունով որպէս այդ քաղաքի երկիրը: Մանաւանդ, քարեթախտաբար, ինչպէս տեսանք, մեզ հասել է Նարամ-Սինի մի աքքաղական արձանագրութիւնը, ուր նշում է, թէ նա (հաւանաբար մի առանձին արշաւանքով) նուաճել է Արմանի եւ Իրլա երկրներին: Սա ինքնին ցոյց է տալիս, որ Արմանին ու Իրլան եղել են առանձին ուժ ներկայացնող առանձին երկրների կենտրոններ:

Ինչպէս ասացինք՝ Արմանին պիտի գտնուած լինի խուրրիական Սուրբարի կամ Արմե-Շուալրիա երկրում: Անզամ նրա խուրրիական -*Ահ* կամ -*Ահի* Վերջաւորութիւնը ցոյց է տալիս, որ այն սեմական չէր եւ պատկանում էր, ինչպէս նշեցինք, խուրրիական Խսոան, Վաշշուկանի, Կարանիա, Առանիա, Արկանիա եւ մի շարք այլ -*Ահ* կամ -*Ահիա* Վերջաւորութիւն ունեցող անունների շրջանակին:

Նշեցինք, որ Արմանին յիշուել է նաեւ աշշուրեան Սարգոնի մի արձանագրութեան մէջ: Տեսնենք, այս հարցի կապակցութեամբ, ինչ կարող են մեզ թելադրել այդ արձանագրութեան տուեալները: Սարգոնը Արմանիին յիշում է հետեւեալ 5 երկրներից յետոյ. «*Շուալրի (Չուալրի), Ուապիզում, Արրապիսա, Լուրդի, Լուլուրի, Արմանի*»: Ինչպէս տեսնում ենք Արմանին յիշում է... *Լուրդի* եւ *Լուլուրի* երկրների հետ: Լուրդիի մասին Աղոնցը բերում է հետեւեալ տեղեկութիւնը. «*Լուրդին Ասարիսադրոնի օրով (681-669)* նոյնական կդառնայ Արզամենի մի շրջանի անունը»<sup>1</sup>: Ուրեմն Լուրդին գտնում էր Ծոփքի արեւելքում: Իսկ Լուլուրին, հաւանական

<sup>1</sup> Ն. Աղոնց, նոյն գիրքը, էջ 26:

է, այստեղ ոչ թէ Փոքր Զարի վերին աւազանում տեղադրուտ Լուլու կամ Լուլումու երկիրն է, այլ Կորդուք-Խարխի շրջանում տեղադրուտ Ուլլուրին: Դրա համար կարող է որոշ չափով ցուցմունք լինել հետեւեալը:

Աշշուրցի Սարգոնը իր նոյն արձանագրութեան մէջ մի տեղ Լուլուրիի հետ միասին յիշում է հետեւեալ երկրները ... *Մարիսաշի, Լուլուրի, Տուգրիշ եւ Շուրարուու:*

Շուրարտուն յայտնի է: Տուգրիշի մասին Շամշի Աղադ Ի-ը (1879-1847) գրում է, որ «*Տուգրիշի թագաւորներից եւ վերին երկրի թագաւորներից հարկ է ստացել...*»: Ժամանակին մանրամասնօրէն ցոյց ենք տուել, որ «Վերին ծովը» Վանա լիճն է եւ «Վերին երկիրն» էլ նրա շրջանում գտնուող լեռներկիրը<sup>1</sup>: Որով Տուգրիշն էլ պիտի գտնուէր Նաիրեան երկրների շրջանում: Իսկ Մարիսաշին էլ արդէն Մարաշն է: Ուստի Լուլուրին չէր կարող Շուրարտուի, Նաիրեան երկրների եւ Մարաշի շրջանակից հեռու լինել: Սալմանասար Ա-ը խօսելով Արիմների հետ դաշնակցած խեթական բանակին ջախջախած լինելուն մասին՝ նշում է իր յաղթանակները Ների, Լուլուրի եւ Սուրարի երկրների դէմ: Ներին գտնուում լինի այստեղի եւ Սուրարիի արանքում: Ուստի այս երեւոյթն էլ հաշուի առնելով՝ պիտի ընդունել, որ այս Լուլուրի անունով նշում էր Ուլլուրին: Հետեւարար Լուրդի (Արգաննեն-Աղձնիրի) եւ Լուլուրի-Ուլլուրիի (Կուրմուխի-Խարխիի) շրջաններում էլ, կամ նրանց մօտ, պիտի լինէր Արմանին, մի քան, որը աւելի է հաստատում նրա՝ Արմէ-Շուրարիայում կամ այդ ժամանակուայ Սուրարիում գտնուած լինելը:

Մեր վերոյիշեալ «Արմէն եւ Հայ Անունների Ծագումը եւ Ուրարտուն» գրքի վերջին գլխում երկար եւ մանրամասնօրէն քննարկել ենք Ասորեստանի արքանների արձանագրութիւնների մէջ

<sup>1</sup> Մ. Գավուրչեան, «Վերին ծովի» տեղադրութիւնը», «Լրաբեր» (Հայկ. ՍՍՀ գիտ Ակադեմիայի), Երևան, 1977, 2, էջ 94:

<sup>2</sup> Հարեւոր այս հոդվածը՝ նոյն վերմագրով՝ գետեղել ենք սոյն հաստում – հրատարակիչ:

<sup>2</sup> Ն. Աղոնց, նոյն տեղում, էջ 113:

յիշուած Արիմէ երկրանուան ձեւի ծագումն ու նրա՝ հայերի անուան հետ սերտ կապ ունեցած լինելը: Այստեղ աւելորդ ենք համարում այդ երկար մէջբերումներն ու փաստարկութիւնները կրկնել: Բայց տեղին ենք համարում բերել Աղաղ-Նիրարի Բ-ի (911-891 մ.թ.ա.) *Արիմէ* երկրի դէմ կատարած արշաւանքների մասին խօսող արձանագրութիւնից մեզ հետաքրքրող եւ *Արմանիի* մեր տեղադրումը հաստատող հատուածներ: Ահա այդ հատուածները.

«... : Այդ տարին, Աիրու ամսին, մի ասպատակութեան ժամանակ Արիմէ երկրի վրայ, Պատուա քաղաք(ում), որը գտնուոմ է Կաշիարի լերան ստորոտում, նա մղեց (մի պատերազմ): ... : Այդ տարին եւ Ուլուրու ամսին, մի ասպատակութեան ժամանակ Արիմէ երկրի վրայ Սուրարիի (?) քաղաքում, որը գտնուոմ է Շուպրէ երկրում, նա մղեց մի պատերազմ»<sup>1</sup>: Կարծում ենք՝ այս վկայութիւնների մասին կարիք չկայ աւելորդ մեկնարանութիւններ: Ինքնին ասում է, թէ Արիմէ երկիրը գտնուոմ էր Կաշիարի լեռների շրջանում եւ Շուպրէ երկրում:

Արմանիի եւ Իրլայի նուաճման մասին խօսող՝ Նարամ-Մինի արձանագրութեան մի այլ աքքաղական օրինակում Արմանի երկրի հետ յիշում է նրա այդ օրուայ արքայի *Ուեղ-Թեշուր* անունը<sup>2</sup>: Թիգլաթ-Պալասար Ա-ի (1117-1080) ժամանակներին Կուտմուխիի թագաւորը կոչում էր *Կալի-Թեշուրի* որդի *Կիլի-Թեշուր*<sup>3</sup>: Ասարիադրոնի (680-669 մ.թ.ա.) ժամանակ Շուպրիայի թագաւորը նոյնպէս կոչում էր *Կալի-Թեշուր*<sup>4</sup>:

Մ.թ.ա. III հազարամեակի երկրորդ կեսին Արմանիի (Սուրարի-Շուպրիայի) թագաւորի *Ուեղ-Թեշուր* կոչուելը, II հազարամեակի վերջին քառորդում Կուտմուխիի թագաւորների *Կալի-Թեշուր* եւ

<sup>1</sup> D. Luchenbill, “Ancient Records of Assyria and Babylonia” 1927, p. 119-121:

<sup>2</sup> Նարամ-Մինի այս արձանագրութիւնն առաջին վերծանողը, նկատի առնելով տեքստի աքքաղական լինելը եւ կարծելով որ Արմանին սեմական է, Ուեղ-Թեշուր անուան երկրորդ թագարիչ ԱՄ գաղափարագիրը կարդացել է *Աղաղ*՝ փոխանակ կարդալու *Թեշուր*: Այս մասին երկար խօսուել է մեր վերոյիշեալ աշխատութեան մէջ:

<sup>3</sup> Ն. Աղոնց, նշուած գիրքը, էջ 55:

<sup>4</sup> «Հայ Ժողովրդի Պատմութիւն», I, Երեւան, 1971, էջ 334:

**Կիլի Թեշուր** կոչուելը եւ Ի հազարամեակի (մ.թ.ա.) առաջին կէսում Շուպրիայի թագաւորի նոյնապէս **Կալի-Թեշուր** կոչուելը մեր հարցի տեսակետով ունի կարեւոր եւ թելադրիչ նշանակութիւն: Նախ նշանակում է, որ Արմանին պատկանում էր հենց **Թեշուրին** պաշտող սուրարիական-խուրիական շրջանակին, երկրորդ՝ ցոյց է տալիս, որ III, II եւ I հազարամեակներում (մ.թ.ա.) խուրիական եղող այդ Սուրարի-Շուպրիա-Կուտմուխի շրջանակի ժողովուրդների կրոնա-էքսիկական գոյավիճակում հիմնական փոփոխութիւն չի կատարւել՝ ինչ-որ «Եկտորների հեղեղ» յիշեցնող վերափոխիչ ազդեցութիւն չի եղել:

Մեր ժողովրդի անուան արմանի ձեւը սեմական աշխարհում գոյատեւել է մինչեւ հիմա. աքքաբների ներկայ արար սերունդները մեզ դեռ հիմա էլ կոչում են «արմանի»:

Ասուրաբարելական ժամանակներից յետոյ, մինչեւ արարների քաղաքական ասպարեզ իջնելը, Մերձավոր Արեւելքում տէր ու տիրութիւն էին անում պարսկական եւ յունահռոմէական ռազմաքաղաքական ու մշակութային ուժերը, եւ հակառակ այն բանի, որ այդ ամբողջ երկար ժամանակահատուածում հայերը այդ ուժերի կողմից կոչում էին *արմին* եւ *արմէն*, բայց արաբները չեն մոռացել մեր անուան իրենց գիտցած հին ձեւը, եւ աւանդաբար շարունակում են հայերին՝ իրենց վաղեմի հարեւաններին կոչել *արմանի*:

Անգամ հետաքրքիր է հայերի երկրի՝ արաբների կողմից *Արմանի*, պարսկների կողմից *Արսինա* եւ յոյների կողմից *Արմենի* կոչուած լինելը: Արմանի երկրի շրջանը, յատկապէս Շուպրիան, II հազարամեակի վերջին քառորդում ու I հազարամեակի առաջին կէսում (մ.թ.ա.) Ասորեստանի եւ Ուրարտուի արձանագրութիւններում կոչում էր *Արիմէ*, *Արմէ*, *Ուրումէ* կամ *Ուրմէ* ձեւերով՝ առանց խուրիական -նի վերջաւորութեան: Բոլոր ուսումնասիրողները ընդունում են, որ Արմանի կամ Արմենի անուան -նի վերջաւորութիւնը խուրիական է: Բայց ինչպէ՞ս է պատահել, որ ասորեստանեան եւ ուրարտական երկար ժամանակներում, աշշուրեան Սարգոնից (1980-1948 մ.թ.ա.) մինչեւ Դարեհի Բեհեստունեան արձանագրութիւնը (520 մ.թ.ա.) անցած մօտ 1450 տարիների ընթացքում, ոչ մի անգամ չիշուած՝ խուրիական -նի վերջաւորութիւն ունեցող ձեւը

Ասորեստանի եւ Ուրարտուի անկումից յետոյ (1450 տարի ընդմիջումից յետոյ) յանկարծ սկսեց նորից յիշուել՝ այդ էլ արաքների, պարսիկների եւ յոյների կողմից, եթք արդէն հրապարակում չկային խուրբիները: Սա կասկած չի բռնում, որ թէեւ Ասորեստանի եւ Ուրարտուի պաշտօնական արձանագրութիւններում չէր յիշում - նի վերջաւորութիւն ունեցող ձեւը, սակայն այն դրանց ժամանակներին էլ կեանքում (ժողովրդի մօտ) գործածական էր: Պիտի մտածել, որ Արհմէ, Արմէ, Ուրումէ եւ Ուրմէ ձեւերը գործածական էին միայն Շուպրիայի շրջանում ապրող հայկական ցեղի (կամ ցեղերի) եւ նրա երկրի համար, բայց ժողովուրդը (օտար հարեւանները) կեանքում ընդհանրապէս Հայաստանին կոչում էին Արմանի կամ Արմենի եւ հայ ժողովրդին արմանի, արմին կամ արմեն, իսկ պաշտօնական շրջանակում կամ գրութիւնների մէջ դրանց փոխարէն գործածում էր՝ ցեղերի համար Նահրի, իսկ պետութեան համար Խուրրի-Միտաննի եւ յետոյ Ուրուատրի-Ուրարտու տերմինները (ինչպէս ներկայումս մայր Արաբիայից՝ Սէուղեան Արաբիայից դուրս հազարաւոր տարիներով սեմական եղող՝ ասուրաբարելական եւ յետոյ էլ արար խալիֆաների երկիր հանդիսացող եւ արաբական տեղաբնիկ բնակչութիւն ունեցող Միջազգետքին պաշտօնապէս կոչում են Իրաք եւ նրա արար ժողովրդին էլ՝ իրաքցիներ): Հո - մէջ Վերջաւորութիւն ունեցող խուրրիական ձեւը չստեղծուեց արաքների, պարսիկների եւ յոյների կողմից: Արդէն, ինչպէս ասացինք, արաքները բնաւ չեն մոռացել մեր արմանի ազգանունը:

Արմանի անունը ճշդորէն պահպանուել է մեր հին մատենագրութեան մէջ: Յայտնի է, որ Արմենակ անձնանունը զալիս է արմեն ցեղանունից կամ Արմենի երկրանունից: Արմենի անունը աւելի յոյների յիշած ձեւ էր, ինչպէս Պարսկաստանի Դարեհը մեր ժողովրդի անունը յիշում է արմին եւ մեր երկրինը՝ Արմինա ձեւով: Արմենակ անուան հնագոյն ձեւը, որպէս էպոնիմը հայ ժողովրդի կամ նրա երկրի, պահպանուել է մեր հին ձեռագիր մատենանների մէջ, որոնք ժամանակին պահել են խոր անցեալից եկող աւանդական կամ զրաւոր յիշատակութիւններ ու տեղեկութիւններ: Խորենացու, Սեբէոսի, Սխ. Այրիվաննեցու, Սամուել Անեցու եւ այլ հայ մատենագիրների մօտ այս անունը պահպանուել է Արմենակ,

*Արմանեակ* կամ *Արմանեակ* ձետվ: Հենց այս Արամանեակ կամ (աւելի հինը) Արմանեակ անուանաձեւի մէջ պահպանուած է Արմանի երկրանունը: Արմանեակ անձնանունը, որպէս էպոնիմ, կազմուած է *Արմանի* անուան վրայ աւելացնելով -ակ մասնիկը, ինչպէս Հայկակ, Յոլակ, Փայլակ ու հայկական նման այլ անձնանունները: Հայերէնի լեզուական օրէնքի համաձայն՝ *ակ* մասնիկի աւելացումով՝ *Արմանի* անուան ի վերջաւորութիւնը փոխուել է ե-ի, որով *Արմանի-ակ* անուանաձեւը դարձել է *Արմանեակ*, ինչպէս *պատանի*՝ *պատանեակ*, *աղաւնի*՝ *աղաւնեակ* եւ այլն:

Սա արդէն փաստ է, որ *Արմանի* անուանաձեւը կար ու պատկանում էր հայերին: Այն սեմական չէր. մանաւանդ, ինչպէս ասացինք, իր -ահ վերջաւորութեամբ խորրիշական էր: Որով ճիշդ է նրա՝ խորրիշական Սուրարի-Ծուարիայում տեղադրութիւնը: Այս տեսակէտով պէտք չէ կողքով անցնել այն կոնկրետ փաստի, որ արարները դեռ մինչեւ հիմա էլ հայերին կոչում են *արմանի*:

Յայտնի է, որ հեթանոսական խոր անցեալում կրօնը մեծ դեր է խաղացել ժողովուրդների կեանքում: Թէեւ հեթանոսութիւնը բազմաստուածեան էր, բայց ամէն մի ցեղ ու պետութիւն ունէր իր առանձին ազգային գլխավոր աստուածը: Հետեւաբար պարզ է, որ ցեղերն ու պետութիւնները, շատ դէպքերում, իրարից պիտի զանազանուեին իրենց գերազոյն աստուածների անուններով: Հետազոտութիւններն արդէն ցոյց են տալիս, որ ժողովուրդներից շատերը կոչուել են իրենց ազգային գլխաւոր աստծոյ անունով:

Բեւեռազիր արձանագրութիւնների մէջ յաճախ կարդում ենք, թէ այս կամ այն թագաւորը յաղթել է այսինչ քաղաքի երկրի թագաւորին: Այդ բանը տեսանք Նարամ-Մինի մասին խօսող խեթական արձանագրութեան մէջ: Սա պարզօքն ցոյց է տալիս, որ ցեղի կամ պետութեան ընդհանուր երկիրը կարող էր իր անունը ստացած լինել իր կենտրոնական կամ արքայական քաղաքի անունից, որը շատ դէպքերում կրել է տուեալ ցեղի կամ պետութեան գլխաւոր աստծոյ անունը:

Դոկտ. Հ. Ա. Մատիկեանը ասում է, թէ «ամէն ազգային պատմութիւն դիցարանական աշխարհայացրով մը սկսած է....»:

*Այս կէտք հայ պատմաբանի մը մտադրութենէն երբէք վրիսկելու չէ. մեր պատմոթեան գորդեսան համգոյցը հու է»<sup>1</sup>:*

Dr. G. Contenau-ն էլ գրում է, թէ «խոր անցեալում տարբերութիւն չէին դնում երկրի ու նրա աստծոյ միջեւ» (*“La Haute antiquité ne faisait pas de différence entre un pays et ses dieux”*)<sup>2</sup>:

Աչքի առաջ ունենալով վերեւում թերուածները, կարելի էր սպասել, որ Սուածաւոր Ասիայի հնագոյն ժողովուրդներից ու ցեղային միութիւններից մէկին ներկայացնող Արմանի կամ Արմենի անունը առաջ եկած լինի այս անունը կրող ցեղի կանխագոյն գլխաւոր աստծոյ անունից:

Հետազօտութիւնները արդէն պարզել են, որ հայ ժողովորդի գլխաւոր աստուածութիւնը եղել է արեւ-կրակը եւ նրանք իրենց այս աստուածութիւնը կոչել են Ար կամ Արա: Արայի արեւային քնոյթի մասին խօսել են յայտնի շատ գիտնականներ: Այդ հարցը լայնօրէն լուսաբանուած է նաև մեր վերոյիշեալ աշխատութեան մէջ, որով կարիք չենք տեսնում այստեղ կրկնել:

Մենք գտնում ենք, որ Արմանի կամ Արմենի անուան ծագումը պայմանաւորուած է եղել Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական ու լեզուա-կրօնական միջավայրով: Այդ միջավայրը եղել է Հայկական լեռնաշխարհում այդ հին ժամանակների սումերահայ մշակոյթի եւ սումերական ու հայկական լեզուների միջավայր, ինչպէս եւ Հայկական լեռնաշխարհում (այդ ժամանակներում յաճախակի գործող հրաբուխների պայմաններում) *արեւ-կրակի* Ար կամ Արա աստծոյ պաշտամոնքի միջավայր:

Հետեւաբար գտնում էինք, որ *Ար-մա-նի* անունը բարդ բառ է, որի սկզբի *Ար* բաղադրիչը հենց հայերի ազգային արեւի աստուած *Ար-ն* (*Արա-ն*) է. անուան միջին մա (փոփոխակ՝ մէ) բաղադրիչը նշանակում է «շէն, ծին, սերունդ կամ որդի»: *Մա-ն* իր այս իմաստով յայտնի էր Սուածաւոր Ասիայում գրեթե բոլոր ժողովուրդների

<sup>1</sup> Դոկտ. Հ. Ա. Մատիկեան, «Արա Գեղեցիկ», Վիեննա, 1930, էջ 1-2:

<sup>2</sup> Dr. G. Contenau, “La Civilisation des Hittites et des Hurriettes du Mitanni”, Paris, 1948, p. 75:

մօտ, այն յայտնի էր նաեւ սումերներին<sup>1</sup>: Որով *Ար-մա* (փոփոխակ՝ *Արմէ*) նշանակում էր «Արաշէն կամ Արածին, Ար-ի սերունդ, Ար-որդի, Արայորդի կամ արեւորդի», իսկ Արմա-նի (կամ Արմէ-նի) անուան –նի վերջաւորութիւնը խորրիխական յոգնակերտ մասնիկ է եւ միաժամանակ սովորումիական վերջածանց: Որով *Արմամէ* (կամ *Արմենի*) նշանակում էր «արեւորդիներ» կամ «արեւորդիների երկիր», ինչպէս յոգնակերտ ք վերջաւորութիւն ունեցող Հայք, Վիրք անունները, որոնք նշանակում են թէ «հայեր, վրացիներ» եւ թէ «հայերի երկիր եւ վրացիների երկիր» (հմնտ. Դայանի-Տայք, Ծուպանի-Ծոպք, Ալզինինի-Աղձնիք եւ այլն):

Որով Արմա[-նի] (աւելի ուշ շրջանում այս ցեղանուան աւելի յայտնի Արմէ[-նի] ձեւը) նշանակում էր «Ար-ի սերունդ», եւ քանի որ, ինչպէս ասացինք, Ար-ը կոչում էր նաեւ *Արս*, ապա *Արմէ* անունը կարող էր կոչւել նաեւ *Արսմէ*, որը արդէն, ինչպէս գիտենք, Ուրարտուի պետութեան հիմնադիր արքայի անունն էր՝ ունենալով «Արեւորդի» իմաստը, ու որը Խորենացու մօտ Արամ ձեւով պահպանուել է որպէս հայերի նահապետներից մէկը: Ուստի կարելի է ընդունել, որ Արմէ-Արամէ (Արամ) անունը հենց Արմա-նի կամ Արմէ-նի անուան բաղադրիչ մասն էր, այսինքն ներկայացնում էր հենց հայերի՝ օստարների կողմից ծանօթ ցեղանունը: Ուրեմն հնուց եկող ճիշդ տեղեկութիւն էր պահել Խորենացին, երբ Արամի մասին գրել էր, թէ աշխարհի բոլոր ազգերը Արամի անունով են մեզ կոչում արմէն եւ մեր երկիրը՝ Արմենի՝ («... յորոյ անուն եւ ամենայն ազգը աշխարհիս մեր անուաննեն, որպէս Յոյնք՝ Արմէն, եւ Պարսիկը եւ Սոսրիք՝ Արմենիք») (Ա-ՃԲ):

*Ար-մա* (կամ *Ար-մէ*) անուան մա բաղադրիչի «շէն, ծին, սերունդ, որդի» իմաստի համեմատութեան համար բերում ենք միայն մի քանի անուանաձեւեր:

<sup>1</sup> S. Langdon, “A Sumerian Grammar and Chrestomathy”, Paris, 1911, p.277. այս տեղ տե՛ս սումեր. Ma = Beget, build («սերել, շինել»):

P. A. Deimel, նշուած բառզիրքը, տե՛ս սումեր. ma=աքքադ. BANÛ («շինել, սերել») V Me = աքք. BANÛ (գերմ. «erzeugen», սերել):

Raimond Jestin, “Abrégé de Grammaire Sumerienne”, Paris, 1951, p. 92, տե՛ս սումեր. Ma = ֆրանս. “créer/être créé = «ծնել, ծնիլ»:

*Դուքքամա - Սա Հայասայի քաղաքներից մէկի անունն է.*

*Աստատամա - Խորրի-Միտաննի երկրի արքայի անուն.*

*Տարկումա - Այս տեղանունը յիշուած է խեթերի Մուրսիլի կողմից. այն գտնուում էր Հայկական լեռնաշխարհի հարաւ-արեւ-մըստեան շրջանում: Տարկու-նա նշանակում է «Տարբու (Տորբ) աստծոյ շինածը՝ «Տորբաշէն»:*

*Արտաշամա - Սա անունն է հայոց Արտաշէս արքայի դատեր (տես Խորենացի, Բ-Ժա). Արտաշա-մա նշանակում էր «Արտաշա-ծին կամ Արտաշէսա-ծին»:*

Հին անցեալում շատ անձնանուններ ու տեղանուններ ունեցել են -մա վերջաւորութիւն, բայց կարծում ենք այսքանն էլ բաւական է ցոյց տալու, որ այս -մա վերջաւորութիւնները ունեն «շէն, ծին, սերունդ կամ որդի» իմաստը, ինչպէս արքայազն, հայկազուն եւ նման այլ անուանածեների -ազն եւ -զուն վերջաւորութիւնները ունեն «ծին, սերունդ, որդի» իմաստը: Փոքր Ասիական՝ ծննդարերութեան-պտղաբերութեան դիցուհու *Մա անունը կապուած պիտի լինի այս բառարմատի հետ:*

Պատմագրական վկայութիւններ կան, որ «Արայի որդի» արտայայտութեամբ նշում էր արմէն ցեղին կամ ժողովրդին պատկանած լինելը: Այդպիսի ուղղակի օրինակ կայ Հ. Ա. Մատիկեանի՝ Յովսեպս Փլահոսից բերած հետեւեալ տեղեկութեան մէջ. «...հրեայ մատենազիրս պատմելէն վերջ, թէ ինչպէս Դաւիթ զանազան աշխարհակալութիւններով իր պետութեան սահմանները կ'ընդարձակէր՝ յարձակելով ի մէջ այլոց Մովաքացիներու վրայ ... կ'աւելցնէ հետեւեալ մեզի համար շատ կարեւոր տողերը. «Եւ մինչ անոնց վրայ տարեկան տուրք դրաւ, անմիջապէս Ծովաց Աղրազար թագաւորին՝ Արայի որդույն դէմ քալեց եւ անոր հետ Եփրատայ քով պատերազմելով.....»<sup>1</sup>:

Յայտնի է, որ Ծովիքը հայկական թագաւորութիւն էր եւ նրա Աղրազար թագաւորն էլ հայ էր. այնպէս որ այս թագաւորին արմէն ցեղանունով բնորոշելու տեղ կոչել են «Արայի որդի», որը, ուրեմն, տալիս էր արմէն անուան իմաստը. սա կոնկրետ փաստ է, որ Ար-

<sup>1</sup> Հ. Ա. Մատիկեան, «Արա Գեղեցիկ», Վիեննա, 1930, էջ 305-306: Ընդգծումը մերն է (Մ. Գ.):

մանի կամ Արմենի նշանակում էր «Արայի որդիներ» կամ «Արայի որդիների երկիր»:

Արդէն քրիստոնեութեան մուտքից յետոյ էլ դեռ տեղ-տեղ շարունակում էին գոյութիւն ունենալ «արեւորդիներ» կոչուող հայ աղանդաւորները, որոնց ոէմ որուս եկաւ Ներսէս Շնորհալին: «Արեւորդի» կոչումը պահում էր Հայաստանում դեռ XII դարում (մ.թ. յ.)<sup>1</sup>:

## 2. ԱՐ ԿԱՍՏԱՌ

Թէեւ հայերը եւ նրանց երկիրը ուրիշների կողմից ծանօթ էին Արմանի կամ Արմենի անունով որպէս «արեւորդիներ եւ արեւորդիների երկիր», բայց հայերը, իրենց գերազոյն աստուած Ար կամ Առայի անունով, իրենք իրենց ուղղակի կոչել են ար, որը հնչել է նաև հար, ինչպէս Արմա անունը Խորենացու մօս յիշում է Հարմա ձեւով: Օրինակներ շատ կան, ինչպէս ասել ենք, որ ցեղը կամ ցեղախումբն ու նրա մայրաքաղաքը կամ երկիրը կոչուած են եղել ուղղակի իրենց գերազոյն աստծոյ անունով. ինչպէս ասորեստանցիներն ու նրանց երկիրը կոչուել են իրենց գերազոյն աստուած Աշշուրի անունով: Այսպէս էլ խոր անցեալում հայերը իրենք իրենց կոչել են ար կամ հար եւ իրենց երկիրը՝ Հարը:

Յայտնի է, որ Մար-Արան իր մատեանի կարեւոր մասը ընդօրինակել է Նինուէում<sup>2</sup> գտնուած քաղղէական (յունարէնի թարգ-

<sup>1</sup> Լէօ, Երեւան, 1966, էջ 270:

<sup>2</sup> Քննական պատմաբանները Մար-Արայի աղբիրի մասին Խորենացու պատմած համարում են ոչ-պատմական, նտացածին շարադրանք՝ յենուելով այն իրողութեան վրայ, թէ այդ ժամանակներին Նինուէն վաղոց դադարել էր գոյութիւն ունենալուց: Մինչդեռ հին Արեւելքի պատմութիւնից գիտենք, որ շատ դէպքերում կործանուած քաղաքի մի մասում շարունակել է կեանքը, կամ յետազայտմ նորերն են բնակուել: Մար-Արայի այդ աղբիրի մխտման հարցում Նինուէի կործանման պատմութեան վրայ յենուողները իրենց այս պատճառաքանութիւնները բերում են նստած լինելով իրենց սենեակներում, աչքի առաջ ունենալով Ասորեստանի պատմութիւնը: Մինչդեռ իրական պատկերը այլ է: Նրանք, ո-

մանուած) մի հին մատեանից: Խորենացին էլ Մար-Աքայից քաղելով՝ պահել է մի շատ հին տեղեկութիւն-յիշողութիւն, որ Հայաստանի այդ կենտրոնը նախապէս կոչուած է եղել Հարք:

Խորենացին Հայկի մասին Մար-Աքայից գաղելով գրում է. «....Քնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, եւ անուանէ զանուն լեռնադաշտակին Հարք» (քնակում է մի բարձրաւանդակ դաշտում եւ այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք) (Ա-Ժ):

Խորենացին յաջորդ գիշում գրում է. «Բայց զդիակմ Բեղայ պաճուծեալ իմն դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք, եւ թաղել ի բարձրաւանդակ տեղուց, ի տեսիլ կանանց եւ որդոց իւրոց» (Բայց Բելի դիակը, ասում է [Մար-Աքաս], դեղերով զմրսելով՝ Հայկը հրամայում է տանել Հարք եւ թաղել մի բարձրաւանդակ տեղում ի տես իր կանանց եւ որդիներին):

Ինչպէս տեսնում ենք՝ առաջին յիշատակութեան մէջ ասում է, թէ նշուած լեռնադաշտակը Հայկն է անուանել Հարք, այսինքն հայերի աստուածն է (նահապէտն է) անուանել կամ նրա անունով է անուանուել Հարք: Իսկ երկրորդ յիշատակութեան մէջ վկայու-

---

րոնք եղել են Իրաքի Մուսուլ քաղաքում՝ տեսած կիհնեն, որ Նինուէի աւերակների փոքր բլի վրայ ներկայումս իսկ կայ Նէրի-Յունս անունով մի գիտ, ուր կայ մի շատ հին մզկիթ, որը ժամանակին եղել է քրիստոնէական վանք: Այդ մզկիթում մի խոր եւ մուր սենեակում պահում է (ինչպէս աւանդականօրէն հաւատում են) Յովնան մարգարեին կոլ տուած ձկի ոսկորները: Դրա համար էլ այդ գիտը կոչում է Նէրի-Յունս (Nebi-Yuns) «Յովնան մարգարէ»: Այդ սենեակը համարում է սուրբ եւ այցելուների համար մնում է անձեռնմխելի: Այդ վանքը գալիս է քրիստոնէութեան առաջին դարերից, նախապէս եղել է հեթանոսական տաճար, որը կարուցւած է եղել մի աւելի հնի աւերակների վրայ: Այդ տաճար-վանքում, ի հարկէ, կարող էին ժամանակին պահուած լինել քաղրէական եւ յունական մատեաններ, մագաղաքներ: Նինուէի աւերակների մեծ բլի (Քոյունծորիք) շրջապատում, ոչ շատ հեռու, կամ քրիստոնէական այլ վանքեր, որոնք հաւանաբար նոյնպէս ունեն (հիմքով) հեթանոսական ծագում: Հետեւաբար ճիշդ չէ պնդել, թէ Մար-Աքայի ժամանակ չկար Նինուէ եւ Նինուէական գրադառն կամ մատեանների-մագաղաքների գրապահոցներ: Ի հարկէ այդ շրջանը Ալեքսանդրի ժամանակ եւ նրանից յետոյ էլ՝ քրիստոնէութեան սկզբի օրերին, կարող էր դեռ տեղում կոչուած լինել Նինուէ: Եթ ինչո՞ւ էրեբունի անունը կարող էր դիմանալ 2750 տարի, իսկ Նինուէի նման մի նշանաւոր անուն չէր կարող դիմանալ մի քանի հարիւր տարի ու հասնել Մար-Աքայի ժամանակներին:

թիւն կայ, որ այդտեղ էին ապրում Հայկի որդիներն ու կանայք՝ այսինքն հայերը՝ Արորդիները:

Հարքի մասին կայ նաև սեպագրական վկայութիւն: Մուշի մօս գտնուած է Ուրարտուի Սենուա արքայի մի կոթողը, որի չորս երեսների վրայ կան արձանագրութիւններ. երեսներից մէկի վրայ գրուած է, թէ Սենուան արշաւել է Ուրմէ երկրի վրայ եւ այդտեղ՝ Ar-ի երկրում («Ար-եան՝ Արայեան երկրում») բողել է արձանագրութիւն: Ահա այդ արձանագրութեան հետաքրքրող մասի թարգմանութիւնը. «Քաղաք Ատառնէ. դուրս ելայ (արշաւի) Ուրմէ երկրի դէմ, նուաճեցի ես Ուրմէ երկիրը. կանգնեցրի այս արձանագրութիւնը Արխի երկրում...»<sup>1</sup>:

Ինչպէս տեսնում ենք՝ կոթող-արձանագրութեան վայրը՝ Արխի երկիրը (Երեւի Ուրմէ երկրում) գտնում էր Մուշի մօս (Երեւի նրա անմիջապէս հարաւ-արեւմուտքում), որով Մուշի շրջանը, որը կից էր մեզ ծանօթ Հարքին, կոչում էր Արխի «Արեան». ուրեմն նա պիտի լինի Հարքի մի մասը կամ նրա շարունակութիւնը<sup>2</sup>:

Վանայ լճի վերեւից Հայաստանի ամբողջ կենտրոնով անցնում է Արածանի գետը: Ղափանցեանը իր «Արա Գեղեցիկի պաշտամունքը» աշխատութեան մէջ իրաւացիօրեն ցոյց է տուել, որ Արածանի անունը նշանակում է «Արայի գետ»:

Հայաստանի հարաւ-արեւմտեան շրջանը կոչում էր Արմէ «Արի սերունդ, Արի սերնդի երկիր»:

Թիգլաք-Պալասար Լ-ը Վանայ լճից հարաւ ընկած շրջանը կոչել է Հարիա<sup>3</sup>, որը եղել է Կուտմուխի երկրի հարեւան եւ ուր

<sup>1</sup> Գ. Ա. Մելիքիշվիլի, «Ուրարտական սեպաձեւ արձանագրութիւններ» (ռուսենէ՝ ՏԿՀ), Մոսկով, 1960, էջ 165-166:

<sup>2</sup> Խորենացու պահած «բայց զդիակն Բելայ պաճուճեալ իմն դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք, եւ թաղել ի բարձրաւանդակ տեղուց...» յիշատակութեան տեղ Գ. Արվանձտեանցը գաղել է «Հայոց թագաւորը Աստուծոյ ձեռքով սպաններ է զբէլ եւ հաներ Նեմրութայ գլուխ, այն տեղը բռնիր շիներ, մէջը կախեր վառեր է» (Գրոց ու Բրոց, էջ 31-32): Ինչպէս տեսնում ենք Արվանձտեանցի նշած «Նեմրութի» տեղ Խորենացին բերում է «Հարքում մի բարձրաւանդակ տեղ»: ուրեմն Հարքը տարածում էր նաև Նեմրութի շրջան, հետեւաբար Մուշի դաշտն էլ մտնում էր Հարքում:(Ընդգծումը իմն է - Ս.Գ.):

<sup>3</sup> D. Luckenbill, նշուած գիրքը, էջ 78-79:

կռուել է նրա ութ լեռների ստորոտներում գտնուած 25 քաղաքների դէմ: Ուրեմն Հարիան եղել է ընդարձակ երկիր: Արդէն Հարիան նշանակում է «Հար երկիր» կամ «հարերի երկիր», այսինքն՝ Հարք: Դա նշանակում է, թէ այս շրջաններում նոյնպէս ապրում էին ար > հար կոչուած ցեղերը:

Արդէն Խորենացին Մար-Աբայից զաղելով պահել է տեղեկութիւններ, որ Վանայ լճից հարաւ գտնուող Արարադը (Ուրուադրին) եւ Կաղմոսի գտնուած տեղը (Կաղմուխին) նոյնպէս եղել են Հայկի որդիների՝ հայերի բնակութեան վայրեր: Նա գրում է. «... Գնայ (Հայկ) յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդուվք իրուվք եւ դստերօք եւ որդուց որդուվք ... եւ բոլոր աղիսիւ: Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի .... շինէ անդ տուն բնակութեան կալուածոց, եւ տայ ի ժառանգութիւն Կաղմեայ որդույ Արամանեկայ» (...զնաց [Հայկ] Արարադի երկիրը, որ գտնում է հիւսիսային կողմերում, իր որդիներով, դուստրերով եւ որդիների որդիներով ... եւ բոլոր տուն ու տեղով: Գնում բնակում է մի լեռան ստորոտում, դաշտավայր տեղում ... այնտեղ կալուածում շինում է բնակութեան տուն եւ տալիս ժառանգութիւն Կաղմոսին, Արամանեակի որդուն (Ա-Ժ):

Ինչպէս տեսնում ենք, այստեղ բերուել է վկայութիւն, որ Արարադը (որպէս ժառանգութիւն տրուած լինելով Կաղմոսին՝ կցուած լինելով Կուղմուխին) բնակութեան վայր է եղել նոյնպէս Հայկի որդիների եւ դստրերի: Ահա այս շրջանն է (Ուրուատրին), որ Թիգլաթ-Պալասարը կոչում է Հարիան, այսինքն արերի կամ հարերի երկիր, որը նոյնպէս նշանակում է Հարք:

Վանայ լճից արեւելք ընկած շրջանի հայկական նախարարութեան Արծրունի անունը գալիս է Ուրարտուի ժամանակներից: Սենուան իր՝ Բերկրիի մօս կանգնեցրած արձանագրութիւն-կորթողի վրայ Արծրունի անունը յիշում է Արծրունի ձեւով, որը եղել է անունը Արճակ լճի հարաւային ծայրի մօս գտնուած մի քաղաքի:

Ուրարտական արձանագրութիւնների լեզուով ծուէ կամ ծուինի բառը նշանակում է «լիճ»: Որով Ար-ծուինի-ունի նշանակում է «Ար-լիճ» կամ «Ար-լճի-շեն»: Ուրեմն այս քաղաքը կոչուած է եղել Արճակ լճի անունով: Հետեւաբար կարելի է ենթադրել, որ

Արճակ (կամ Արճիշակ) տերմինը առաջացել է *Ար-ծուէ* («Ար-լիճ») անուան վրայ -ակ մասնիկի աւելացումով (առաջացնելով *Ար-ծուէ-ակ > Արճակ*):

Վանայ լճից հիւսիս-արեւելք (Վանի հիւսիսում) ընկած շրջանները հնում կոչուել են *Առքեռանի*: Ղափանցեանը մեծ ճշդութեամբ ցոյց տուեց, որ *Առ-քեր-անի* նշանակում է «Առ-ցեղեր». ցոյց տուեց, որ *Առ-քեր-անի* անուան միջին -քեր- բաղադրիչը նշանակում է «ցեղ», իսկ -անի (կամ -նի) վերջաւորութիւնը՝ յոգնակի մասնիկ: Որով *Առ-քեր-անի* տերմինը նշանակել է «առ ցեղեր»: Ղափանցեանը գրում է. «...Տարութերան (Տուրութերան), Առքերանի կամ Առքերան, որոնք տառացի նշանակել են «տալր-ցեղեր» (=Հայկական Տարոս) եւ «առ-ցեղեր»:<sup>1</sup>

Սալմանասար Գ-ը (859-824 մ.թ.ա.) Վանա լճից հիւսիս-արեւելք ընկած տարածութիւնը կոչել է *Արամայի*: Այս տեղանունը հնչուած է նաև Արմարիլի (Արմա-րի-լի) ձեւով՝ Արմա բաղադրիչից յետոյ, -լի յոգնակի մասնիկից առաջ, դնելով -րի ածանցը (հմմտ. Կաշիա-րի, Շուբա-րի, Նամ-րի, Խուր-րի, Մուզու-րի, Կիր-րու-րի, Ուեղու-րի եւ այլն):

*Արա-մա-լի* անուան -լի վերջաւորութիւնը յոգնակերտ մասնիկ է՝ ինչպէս *Ար-մա-նի* կամ *Ար-մէ-նի* անուան -նի վերջաւորութիւնը (հմմտ. Բիախնի-լի, Արգիշտիխնի-լի, Մենուախնի-լի եւ այլն), որով *Արա-մա-լի* տերմինը համընկնում է (նոյնանում է) *Արա-մա-նի* կամ *Ար-մա-նի* (Ար-մէ-նի) ձեւի հետ:

Պիտի միաժամանակ նշել, որ Արամայի եւ Առքերանի անունները գրեթէ նոյն շրջանի կամ իրար կից շրջանների համանիշ ու համազօր անուանաձեւեր էին: Ինչպէս տեսանք, *Արմա* (*Ար-մէ*) կամ Արա-մա (Արա-մէ) տերմինը նշանակում էր «Արի-սերունդ, Ար-որդի», որով ինչպէս *Ար-մա-նի* կամ *Արա-մա-լի* անուանաձեւը նշանակում էր «Ար-որդի-ներ, Արի-սերունդ-ներ», այնպէս էլ Առքեր-անի նշանակում էր «առ-ցեղ-եր»: Հետեւաբար *Արմանի* (*Արմէնի*), *Արամայի* եւ *Առքերանի* անունները համանիշ տերմիններ էին, որոնք գոյութիւն ունեին հենց Ուրարտուի ժամանակ:

<sup>1</sup> Գ. Ղափանցեան, «Ուրարտուի պատմութիւնը», Երեւան, 1940, էջ 78-79:

Արմանի (Արմէնի) կամ Արամանի եւ Արամալի տերմինների նոյնութիւնը թելադրում է ընդունել, որ հենց Ուրարտուի ժամանակ Ուրարտուի այս կենտրոնական մասը արդէն կոչում էր *Արամալի-Արմանի*, մի բան, որին ուժ է տալիս ուրարտական արքաների շարքում *Էրիմենա* անուան գրյութիւնը, իսկ նախրեան Արմէ շրջանը, լինելով Հայկական լեռնաշխարհի հարաւ-արեւմտեան ծայրամաս, չէր մասնակցել (կամ հնարաւոր չի եղել նրան մասնակցել) իր ցեղակից նախրեանների ուրարտական միութեանը, պահպանել էր իր առանձին իշխանութիւնը, որին Բիայնայի հետ կապելու համար որոշ ջանք էին թափում ուրարտական արքաները՝ Ասորեստանի խանզարիչ ազդեցութիւնների պայմաններում:



Քարտես 1:

Ինչպէս տեսնում ենք, Հայաստանի ամբողջ կենտրոնում, Վանայ լճի ամբողջ շրջապատում, ապրել են *ար կոչուած ցեղերը*: Այդ պատճառով Հայաստանի բուն կենտրոնը (Ուրարտուի կենտրոնը) կոչուել է Հարք: Մուշի արեւմուտքում ընկած շրջանը կոչուել է *Արիսի երկիր «Ար-եամ երկիր»*. Վանայ լճի հարաւոմ ընկած տարածութիւնը կոչուել է *Հարիս «արերի-հարերի երկիր»*. Վանայ լճի հիւսիս-արեւելքում ապրող ցեղերը կոչուել են *Առքերանի «առ ցեղեր»*, կոչուել են *Արամայի «Արայի սերունդներ»*, Արձակ լիճը կոչուել է *Ար-լիճ*: Այս լճի հարաւային ծայրի մօտ գտնուած մի քաղաք Ար-լճի անունով կոչուել է Արծուինիունի (Արծրունի). Վանայ լճի հարաւ-արեւմտեան ափին հրաբխային մի լեռնազագար կոչուել է *Արտոս*, Հայաստանի կենտրոնական գետը կոչուել է *Առածանի «Արայի գետ»*: Այս անունները ընդգրկում են Հայաստանի ամբողջ կենտրոնը՝ Վանայ լիճը (Ուրարտուի կենտրոնը) իր շորս կողմերի շրջաններով հանդերձ: Իսկ Հայաստանի հարաւ-արեւմտեան շրջանը կոչուում էր *Արմ «Արի սերունդ, Արի ցեղ» կամ «Արի սերնդի երկիր»*:

Ի հարկէ սա դեռ բոլորը չեն: Հայաստանի ամբողջ տարածքում սփռուած են *Ար* եւ *Արա* (սրա տարբերակ՝ Եր կամ Երի) անուան հետ կապուած տեղանուններ կամ ցեղանուններ: Մի շարք լեռների, գետերի, բերդերի, գիւղերի ու քաղաքների անունները կազմուած են (սկսում են) *Ար* աստծոյ կամ *ար ցեղի* անունով: Օրինակ՝ լեռներ են՝ *Արազած* («Արայի գահ»), *Արայի լեռ, Երիսիա* (յիշում է Սալմանասար Գ-ը), *Արաժին, Արտոս, Եր լեռ* (Վանանդում), *Արուճի* եւ *Ուրուճի* (յիշում է Աշուրնազիրպալ Բ-ը՝ Տումմէ երկրում), գետեր են՝ *Արածանի, Արաքս (Երասխ)*, բնակավայրեր են՝ *Արուրա եւ Արուրէ* (Տումմէ երկրում), *Արշէն, Արահեզ, Արագէջ, Երիշատ, Արած, Արահուծ, Արիս* եւ այլն. ցեղանուններ են՝ *Առքերանի, Արամայի, Էրիախի, Էրիկուախի* եւ այլն. անձնանուններ են՝ *Արս, Արախս, Հարմա, Արամախս* եւ այլն: Կարծում ենք, որ այսքանն էլ բաւական է ընդունելու, որ *Ար* անունով կազմուած են տեղական շատ անուններ երկրի *ար կոչուած ցեղերի կողմից*:

Հայերը իրենց արեւ-կրակի գերազոյն աստուած *Ար-ի* (*Արայի*) անունվ իրենք իրենց կոչած են եղել առ կամ *հար* եւ իրենց երկրի կենարոնը՝ *Հարք*: Հեթանոսութեան աւելի ուշ ժամանակներին է, որ *Հարքի* տեղ երեսում է *Հայք, հար-ի* տեղ *հայ*: Արդէն ոչ մի բերդ կամ քաղաք, ոչ մի գետ կամ լիճ չի կոչուել հայ կամ Հայկ անունով, կամ այս անուններով բաղադրուած որ եւ է անունաձեւով: Չիշում է «Հայոց ձոր» տերմինը, որը արդէն անուն չէ, այլ՝ բառակապակցութիւն եւ որը իր կազմուածքով պարզ երեսուն է որպէս յետագայի արտայայտութիւն կամ կազմուածք:

*Հար > հայ* անցման նման երեւյթներ շատ կան մեր լեզուում. ի > *յանցումը* հայերէնի համար օտար երեւյթ չէ: Անգամ հայերէնի մի քանի բարբառներում թ-ի *յ հնչինի* վերածուելը օրինաչափ եւ ընդհանուր երեւյթ է: Պրոֆ. Արարատ Ղարիբեանը այս մասին գրում է. «*ք բաղաձայնը* արտասանուում է *յ Խոտրջուրի, Զեյթունի, Հաճընի* բարբառներում, *Հաղբութի* բարբառի *Տումմի* գիտի խօսուածքում եւ *Ղափանի* Արաշէն գիտում: Այդ բարբառներով գրուած տեքստերի մէջ կը նկատենք, որ ամէն տեղ ո հնչինը վերածուում է «յ» հնչինի: Այդ կատարուել է այն պատճառով, որ արտասանութեան ժամանակ լեզուի ծայրը դէպի քիմքն է բարձրացել շատ աւելի քիչ քան պէտք է, թ-ն մեղմացել է եւ վերածուել *յ հնչինի*: Փափկացման այդ միջին ճանապարհը կարելի է գտնել Երեւանի արուարձան հանդիսացող Նորքի խօսուածքի մէջ»:

«Մեքաստիայի բարբառում *առ կապակցութիւնը* դարձել է *յ, օրինակ՝ գրյուգ-կտրուկ, Բէյյու-Պետրոս եւ այլն»<sup>1</sup>:*

Ի հարկէ մեծահմուտ լեզուաբան *Ղարիբեանը* *ր > յ* անցման բոլոր երեւյթների մասին տեղ չի տուել իր գրքում. օրինակ՝ *Համշէնի* բարբառով ջուր բառը հնչուում է *ճու՛յ*, Բուրդութի բարբառով *հարիւր* հնչուում է *հայիր*<sup>2</sup>:

Գրաբարում *ա* եւ *ո* ձայնաւորներով վերջացող բոլոր բառերից եւ բառաձեւերից յետոյ (մի քանի բացառութեամբ) գրում է *յ* տառը: Նրանց մէջ կան այնպիսիներ, որոնց -այ վերջաւորութիւնը

<sup>1</sup> Ար. Ղարիբեան, «Հայ բարբառագիտութիւն», Երեւան, 1953, էջ 132:

<sup>2</sup> «Գրական թերթ», Երեւան, 1967, ապրիլ 14, էջ 4:

<sup>3</sup> «Պատմաբանասիրական Հանդէս», Երեւան, 1966, էջ 243:

արմատական է (վրայ, քուրայ, պարագայ եւ այլն), բազմաթիւ են այնպիսիներ, որոնք ստացում են բառերի վերջաւորութիւնների քերականական փոփոխութիւններով, օրինակ՝ անորոշում -ալ վերջացող բայերը սահմանական եղանակ ներկայ 3-րդ դեմքում վերջանում են -այ-ով (օրինակ՝ սուրայ, կարդայ եւ այլն): Որոշ գոյականներ ունեն սեռական -այ կամ -ոյ վերջաւորութիւններ (օրինակ՝ Վանայ, Սեւանայ, աղջկայ, աստծոյ, սիրոյ եւ այլն): Բառավերջի այս յ տառերը մեր ժամանակներում չեն հնչում, բայց նրանք առաջ հնչուել են, այլապէս չեն գրուի: Այստեղ հետաքրքրականը այն է, որ հայ բառը նոյնպէս վերջանում է այ-ով, բայց նրա յ-ն հնչում է: Այս երեսոյքը թելադրում է, որ հայ բառի յ-ն արժեքով նման չէ վերեւում նշուած եւ չհնչուող յ-ով վերջացող բառերի յ-ին. այլ խօսքով՝ հայ բառի յ-ն առաջ չի եղել յ, եւ մեր ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ այն առաջ եղել է ու:

Հաւանաբար այդպէս են եղել նաև մի բանի (նոյնպէս) միավանկ բառերի վերջում գտնուող յ-երը, որոնք նոյնպէս հնչում են, եւ որոնք նոյնպէս պէտք է տարբեր արժեք ունեցած լինեն չհնչուող յ-երի հետ համեմատած: Օրինակ՝

*Ճայ* - ըստ Աճառեանի «Արմատական բառարանի» - «ուրուր», «մի տեսակ ազուա», «մի տեսակ ծովային թռչուն». նման են հնչում տարբեր լեզուների մէջ զանազան հոմանիշ բառեր. վրաց. *Ճարի* «ձկնորս թռչուն», գու.-ից... Մշ. *Ճարեզ* «թռչուն սարեակի ցեղից»:

Ինչպէս տեսնում ենք՝ *Ճայ* անունը վրացիները հնչում են *Ճառի*, Մուշի բարբառում նոյնպէս կայ ճարեզ ձեւը, ուստի կարծում ենք, որ *Ճայ* բառի յ-ն, որը հնչում է, ունի տարբեր արժեք քան այն յ-երը որոնք չեն հնչում, եւ երեւի առաջ եղել է ու:

*Խոյ* - «արու ոչխար». այս բառը շատ հետաքրքրական է. այն ունի նաև դիցարանական արժեք: Մեր կարծիքով խոյը մի ժամանակ եղել է արեւ աստծոյ խորհրդանիշը (տոտեմ), եւ այդ ժամանակներին այն հնչուել է խոյ կամ խոյ: Յիշենք եզիպտական արեւի աստուած Hor-ը, արաք հար «տաք», պարսիկների խոյ «արեւ» բառը: Հայերէնում կայ խար (խար-ել) «այրել, տաղել», որից ունենք խար-ոյկ: Այս կապակցութեամբ շատ հետաքրքրական է

մեր Սասունցի Դափիք էպոսում Փոքր Սիերի (արեւ-կրակի աստուած) մասին պահուած մի վկայութեան յիշատակութիւնը, որ բերում է որպէս խօսք Զենով Յովանի. նա խօսքը ուղղելով Սիերին՝ ասում է. «Որդի, առ հազի, նստի, Սասնայ տան խոյերէն դու ես մնացել, ել ես խնայեմ ո՞ւմ համար<sup>1</sup>: Ի հարկէ առաջուայ Հոյցերն էին Սասնասարը (արեւի աստուած), Մեծ Սիերն (արեւ-կրակի աստուած) ու Դափիքը: Եգիպտոսի արեւի աստուած Րա-ն երբեմն պատկերացւում էր արեւի թեւաւոր տիսկով, որին երբեմն կցուած էր լինում Հոյցի երկու կոտոր<sup>2</sup>: Յիշենք նաև Հայաստանի տարբեր շրջաններում գտնուող Հոյցի քանդակները եւ հենց սիւների վրայ դրուող Հոյց-ակները, որոնք կասկած չեն թողնում խոյի պաշտամունքի մասին: Հետեւաբար գտնում ենք, որ Հոյց բառի յ-ն (որը հնչուում է) սովորական յ չէ (այլապէս չէր հնչուի, ինչպէս գոյ բառում) եւ մեծ հաւանականութեամբ ունի ո-ի ծագում:

Խոյ-ը (որպէս քաղաքանուն) գտնում է Ուրմիոյ լճի հիւսիսում: Սարգոնը նրան յիշում է Ույխու ձեւով, որը մեր հների մօտ հնչուել է ( $l > r$ ) հեր, իսկ յետագայում ( $r > l$ )՝ Հոյց: Այս օրինակը ցոյց է տալիս, որ հար> հայ անցումը կատարուել է Ուրարտուից յետոյ՝ հեթանոսութեան ուշ շրջանին:

### 3. ՆԱԻՐԻ ԵՒ ՈՒՐԱՐՏՈՒ

Ինչպէս ասացինք, խոր անցեալում արեւ-կրակի պաշտամունքը պայմանաւորուած է եղել Հայկական լեռնաշխարհի լեռնագագաթներից շատերի հրաբխային գործունեութիւններով: Ասուրաբելական ժամանակներում յաճախակի գործում էին Ուրուատրի-Արարադի (Կորդուքի) լեռնագագաթը, Սասունի շրջանում հայկական Տարոսի Անդոք կոչուած գագաթը, յատկապէս Վանայ լճի շուրջ գործող Նեմրութը, Արտոսը, Թոնդուրակը եւ ու-

<sup>1</sup> «Սասունցի Դափիք», Երեւան, 1961, էջ 304:

<sup>2</sup> W. M. Flinders Petrie, “The Gods of Ancient Egypt” “Wonders of the Past”, Vol. I. p. 167:

թիշներ: Նեմրութի նշանաւոր խառնարանը դեռ գործում էր մինչեւ 1440 քուերը, իսկ Թոնիդուրակը դեռ չի էլ հանգել ու ծխում է մինչեւ հիմայ: Այս պատճառով է, որ արեւ-կրակի աստուածութիւնը եղել է երկրի բնիկների՝ նաիրեան հայերի ազգային գլխաւոր աստուածութիւնը:

Այս պատճառով է, որ Ասորեստանի արքաները իրենց տափաստանային երկրի հիւսիսում բարձրացող Հայկական լեռնաշխարհին, իրենց խօսքով՝ «Վերին երկիր»-ին կոչել են Նաիրի, որը նշանակում էր «Կրակի երկիր»:

Առաջ գիտնականները կարծում էին, թէ Նաիրի անունը նշանակում է «գետերի երկիր», բայց յետագայում յայտնաբերուած արձանագրութիւնների համադրուած ուսումնասիրութիւնները եւ դիցաբանական ու լեզուաբանական տուեալների հետ դրանց համեմատական քննութիւնները ցոյց տուեցին, որ Նաիրի նշանակում է «կրակի երկիր»: Այս մասին երկար խօսուել է մեր վերոյիշեալ գրքի Ե եւ Զ գլուխներում:

Նաիրի բառը սեմական է եւ գալիս է Հայկական լեռնաշխարհի հարաւային հարեւանն եղող սեմական աշխարհի լեզուներից: Ասորերէն ուրագ կամ ոնց նշանակում է «կրակ», սեմական բոլոր լեզուներով ոնց նշանակում է «լոյս», արաբերէն նար նշանակում է «կրակ», նարիյ նշանակում է «կրակային»: Հայերէնը պահել է մոխիր (ագուլ. բարբառում՝ մախիր, մահիր>նաիր(ի): Որով նաիրի երկիր տերմինը նշանակում էր «կրակի երկիր», Նաիրի երկրներ՝ «կրակի երկրներ» (երկրներ, որովհետեւ ամէն մի նաիրեան ցեղ ուներ իր առանձին երկիրը՝ երկրամասը):

Ասորեստանի արքաները յետագայում նաիրեան երկրներին կոչում էին նաև Ուրարտու: Արդէն Ուրարտուի արքաները իրենք իրենց կոչում էին «Նաիրի երկրների արքայ», որովհետեւ Ուրարտուն նաիրեան ցեղերի ռազմաքաղաքական համագալացութիւն էր եւ միաժամանակ Ուրարտու անունը համանիշ էր Նաիրի անուան եւ նշանակում էր «վայր կրակի-արեւի»:

Ուրարտու անուան նախատիպը Ուրուատրի կամ Ուրատրի էր: Ասորեստանի արքաները այս անունով էին կոչում Ուրարտուից առաջ Վանայ լճից ներքեւ Արարադ լեռների շրջանում

(Կորդուաց աշխարհում) կազմաւրուած նախեան ցեղերի միութիւնը:

*Ուրու-ասորի* կամ *Ուր-ասորի* անուան *Ուրու* կամ *Ուր* բաղադրիչը նշանակում է «վայր, տեղ». հայերէնը պահել է *ուր* բառը «տեղ» նշանակութեամբ. դրանցից ունենք *ամէնուր* «ամէնտեղ», իսկ *ասորի* բաղադրիչը նշանակում է «կրակ», դրանից հայերէնում կայ *ասորաշէկ* «կրակի պէս կարմիր», *ասորագոյն* «կրակի գոյն ունեցող», ասորական «հրեղէն» եւ այլն: Որով *Ուրու-ասորի* կամ *Ուր-ասորի* նշանակում էր «վայր կրակի» կամ «երկիր կրակի». եւ համանիշ էր *Նախրի* «կրակի երկիր» անուան:

*Ուրու-ասորի* կամ *Ուր-արտու* անուան *Ուրու* կամ *Ուր* բաղադրիչի «տեղ, վայր» իմաստի համար կայ մի հետաքրքիր ապացոյց Սուրբ Գրքում. Աստուածաշնչի Հին Կտակարանի հայերէն («Եօթանասնից») թարգմանութեան մէջ բերուած *Արարադ* (ասուրական արձանագրութիւնների մէջ յիշուած *Ուրուասորի*) անուան տեղ ասորական «Պեշիտո» կոչուած հնագոյն թարգմանութեան մէջ բերուել է *Կարդու* տերմինը: Բերում ենք մեզ հետաքրքրող այդ յիշատակութիւնները կրճատումներով:

Հայկական «Եօթանասնից» թարգմանութեան մէջ (Ծննդոց Ը-4) գրուած է. «Եւ նստաւ տապանն... ի լերինս *Արարադայ*», իսկ ասորական հնագոյն «Պեշիտո» թարգմանութեան նոյն տեղում գրուած է. «Եւ նստաւ տապանն... ի լեարն *Կարդու*<sup>1</sup>»:

Հին կտակարանի հայկական թարգմանութեան մի այլ տեղում (Դ թագաւորաց, ԺԹ-37) գրուած է. «Եւ եղեւ մինչդեռ երկիր պազանէր (*Սենեքերիս*) ի տան Նեսրաքայ աստծոյ իւրում՝ *Աղրամելիիր* եւ *Սարասար* որդիր նորա հարին զնա սրով, եւ ինքեանք զերծան յերկիրն *Արարադայ*», իսկ ասորական «Պեշիտո»-ի համապատասխան տեղում Երկիրն *Արարադայ* կապակցութեան տեղ գրուած է Atra-Kardu<sup>2</sup> «Երկիրն *Կարդու*» (=Աշխարհն Կորդուաց):

<sup>1</sup> Հ.Գ.Մելքոննեան, «Հայ-Ասորական յարաքերութիւնների պատմութիւնից», Երևան, 1970, էջ 77: Ընդգծումները մերս են (Մ.Գ.):

<sup>2</sup> Հ.Գ.Մելքոննեան, նոյն տեղում, էջ 81-82:

Ինչպէս պարզ երեւում է, *Ուրու-ատրի* (կամ *Ուր-արտու*) անուան տեղ բերուել է *Կ-արդու*, այսինքն՝ *Ուրու-*կամ *Ուր-* բաղադրիչի տեղ բերուել է *Կ-* բաղադրիչը: Սա կոնկրետ փաստ է, որ Որու- կամ *Ուր-* բաղադրիչը նշանակում է «տեղ, վայր», որովհետեւ *K-ardu* տերմինը գալիս է *Ki-ardu* «վայր արծի» ձեւից. սումերերէնում (եւ ասուրաբարելական սեպագրութեան մէջ) կի նշանակում է «վայր, տեղ, երկիր»: Սրա համար լաւ օրինակ-ապացոյց է հայերէնում պահուած *Կ-մախ* (Կմախ) բառը, որը, ինչպէս բերել ենք սումեր բառերի մեր ցուցակում, գալիս է սումեր *ki-maḥ* «վայր մահացածի, գերեզման» կապակցութիւնից: Ինչպէս կի-*maḥ* դարձել է *Կ-մախ*, այնպէս էլ *Ki-ardu* դարձել է *Կ-արդու*: *Ki-ի* համար համեմատել նաեւ *Ki-engi* («Սումեր»), *Ki-Uri* («Աքքաղ») եւ այլն: Ինչպէս ասացինք, սա կոնկրետ փաստ է, որ *Ուրու-ատրի* կամ *Ուր-արդու* անուան *Ուրու-* կամ *Ուր-* բաղադրիչը նշանակում է «վայր, տեղ, երկիր»:

*Ուր-արտու* անուան *արտու* բաղադրիչը ասուրական (Աշուր-Նազիր-Պալ Բ, Սարգսն) արձանագրութիւնների մէջ երեւում է նաեւ *-արդու* ձեւով, որը նշանակում է «արեւ»: Արդէն ինչպէս նշել ենք, պաշտամունքի տեսակէտով արեւ եւ կրակ աստուածութիւնները միասնանում էին: Որով *Ուր-արտու* կամ *Ուր-արդի* նշանակում էր «երկիր կրակի» կամ «երկիր արեւի», այսինքն՝ «երկիր Արայի»: Սրա համար փաստ է Խորենացու պահած հետեւեալ վկայութիւնը. «*Չամիրամը սակաւ օրեր մնում է այն դաշտում, որ Արայի անունով կոչուեց Այրարատ*» (Խոր. Ա-ժզ), «*փութով (Չամիրամը) գալիս հասնում է Արայի դաշտը, որ ճրա (Արայի) անունով կոչուեց Այրարատ* (Խոր. Ա-ժե)»: Յայտնի է, որ Արարատ կամ Այրարատ տերմինը գալիս է Ուրարտու անունից: Որեմն ըստ Խորենացու պահած տեղեկութեան եւս՝ Այրարատ-Ուրարտու անունը նշանակում է «*Դաշտն Արայի*», այսինքն՝ *Ուր-արտու* անուան *Ուր* բաղադրիչը նշանակում էր «դաշտ, վայր», իսկ *արտու* բաղադրիչը՝ *Արա* «Արեւ-կրակ» (արդէն գիտենք, որ Ուրուատրին կոչուել է նաեւ Հարիա): *Պատմագրական* այս վկայութիւնը եւս կասկած չի բողնում, որ *Ուր-արտու* նշանակում էր «վայր արեւ-կրակի» կամ «երկիր արեւ-կրակի»:

Ինչպէս տեսնում ենք, *Արմանի* (կամ *Արմենի*), *Նախի* եւ *Ուրարտու* անունները նոյն երկրին տրուած նոյնանիշ ու համազօր անուններ էին: Տարբերութիւնը այն էր, որ *Արմանի* կամ *Արմենի* նշանակում էր «արեւորդիների երկիր», իսկ *Նախի* եւ *Ուրարտու* նշանակում էին «վայր կրակի», «երկիր արեւ-կրակի»:

#### 4. ԱՐՄԻՆԱ - ՈՒՐԱՐՏՈՒ

Դարեկի՝ Բեհիստունեան ժայռի երեք լեզուներով գրած արձանագրութեան աքքաղական ու էլամական տեքստերը պարսկական թնագրի ուղղակի թարգմանութիւններն են: Պարսկական թնագրում գրած *Արմինա* (Արմիա) անուան տեղ աքքաղական թարգմանութեան մէջ գրած է Ուրաշտու, այսինքն՝ *Ուրարտու* (ը > շտարբերութեամբ):


Սա անհերքելի փաստ է, որ *Ուրարտու* անունը համանիշ էր *Արմինա* երկրանուան: Այս փաստը միաժամանակ ցոյց է տալիս, որ Ուրարտու անունը չունէր էրնիկական արժեք (ցեղանուն չէր), այլ աշխարհագրական տերմին էր. այդ է մտածել տալիս անգամ այն փաստը որ Ուրաշտու անունը պահպանուել է ըռշտու(-նի) կամ Ռշտու(-նի) անուան մէջ, որովհետեւ Ռշտունիները հենց Ուրարտուի կենտրոնի՝ Տուշպա-Վանի ուրարտական թնիկ թնակիշներն էին:

Ըսենեփոնի վկայութեամբ՝ Պարսկաստանի Կիրոս արքան արմէն առեւտրականներից խնդրել է ուղեկցել պարսիկ դեսպանին եւ միջնորդել՝ Հնդկաստանի իրենց ծանօթ արքային ներկայանալու համար: Պատմագրութիւնը շատ թերեւ է անցնում այս տեղեկութեան կողքով:

Այդպիսի կանուխ ժամանակներում, հաղորդակցութիւնների այդպիսի պրիմիտի ու դժուարին պայմաններում, երբ Հնդկաստան հասնելու համար անհրաժեշտ էր անցնել ռազմաշունչ ու աւազակաբարոյ օտար ժողովուրդների երկրների ու ծովերի վրայով, Հնդկաստանի հետ այդպիսի հանրածանօթ առեւտրական կապ,

անգամ Հնդկաստանի արքայի հետ ծանօթութեան այդպիսի համբաւ կարելի չէր ձեռք ձգել մի քանի տասնամեակմերի ընթացքում, այլ հարիւրաւոր տարիների երթեւեկութիւնների եւ աւանդոյթ դարձած կապի ու սերնդից սերունդ փոխանցուող փորձի ժամանակա-ընթացքում:

Կիլոսը (550-529 մ.թ.ա.) ասպարէզ իջաւ Ուրարտական դինաստիայի անկումից (590-585) մօտ 35-40 տարի յետոյ: Սա ցոյց է տալիս, որ արմէնները Հնդկաստանի հետ առեւտրական կապի մէջ էին Ասորեստանի եւ Ուրարտուի անկումից առաջ: Այդ ժամանակներին ո՞ւր էին այդ «անյայտ» արմէնները: Ինչո՞ւ Կիլոսը այդ նոյն քանը չի խնդրել պարսկակներից ու ասորեստանցիներից կամ յատկապէս էլամացիներից ու բարելացիներից, որոնք շատ աւելի մօտ էին Հնդկաստանին:



Քարտէս 2:  
Աշխարհի քարտէսն ըստ Հեկատէոս Սիլեսոսցու (517 մ.թ.ա.):

Այս երեւոյթը թելադրում է ընդունել, որ այս արմէնները պէտք է որ մի հզօր պետութեան քաղաքացիներ լինեին՝ Ուրարտուի պէս մի հզօր պետութեան հեղինակութիւնը վայելող գործիշներ. այլապէս անհասկանալի կլիներ, թէ ինչպէս էին կարողանում Ասորեստանի ու Բարելոնի կամ Էլամի վրայով անցնել ու հասնել Հընդկաստան ու ապահով վերադառնալ: Այդ է ցոյց տալիս Արմինա=Ուրաշտու-Ուրարտու հաւասարութիւնը:

Միաժամանակ անհաւանական չէ, որ սրանք հենց նաիրեան գործիշներն էին, որոնք կապի մեջ էին թէ՝ Ասորեստանի ու Բարելոնի, թէ՝ Միջերկրականի Ուգարիտ եւ այլ ծովափնեայ քաղաքների եւ թէ՝ խեթերի հետ: Կարելի է անզամ մտածել, որ նրանք առեւտրական այդ գործը անում էին հենց Խուրրի-Միտանեան ժամանակներից, երբ Խուրրի-Միտանեան հզօր պետութեան ազդեցութիւնը տարածում էր մինչև Բարելոն ու Միջերկրական:

Այս կլոր քարտէսը պատկանում է նշանաւոր յոյն ճանապարհորդ եւ աշխարհագիր Հեսաւաս-ին: Այն կազմուած է նրա՝ մ.թ.ա. 517 թուերին գրած աշխարհագրութեան տուեալների հիման վրայ<sup>1</sup>: Նրա տուեալները ընդգրկում են իր ժամանակներին յայտնի ամբողջ աշխարհը՝ դա էլ Միջերկրականի շուրջ, ուր կատարել է ճանապարհորդութիւններ: Նա աշխարհը պատկերացրել է կլոր սկաւառակի ձեւով, շրջապատուած՝ համատարած ովկիանոսով: Միջերկրականը ու նրա շուրջ գտնուող երկրներին պատկերացրել է (հաւանաբար ազդուելով իրեն նախորդած Միլետոսի աշխարհագրի կազմուած քարտէսից) իրականութեան քաւական մօս ճշդութեամբ: Նա նշել է յատկապէս այն երկրների անունները, որոնք եղել են նշանաւոր եւ հնուց յայտնի ու տեղով հաստատ: Միջերկրականի աֆրիկեան կողմում նշել է Կարթագենէն, Լիբիան, Երովսիան, Եզիզոտոսն ու Նեղոսը, իսկ ասիական կողմում՝ Արարիան, Սիրիան, Լիդիան, Արմենիան, Հնդկաստանը եւ Եվրատն ու Տիգրիսը: Ի հարկէ նշած կլինի եւ այլ՝ աննշան անուններ, քայց գլխաւորները բերուած են քարտէսում:

<sup>1</sup> J. H. Breasted, “Ancient Times”, second edition, Boston-New York ..., 1935. p 377-379:.

Մեզ համար կարեւորը այն է, որ նրա ժամանակ Հայկական լեռնաշխարհում յայտնի եւ նշելը կարեւոր է եղել լոկ Արմենիամ, որը նշուել է Ասիայում վաղուց յայտնի մեծ անունների շարքում: Այս երեւոյքը շատ կարեւոր ու նշանակալի է այն տեսակէտով, որ այս ժամանակներում Հայկական լեռնաշխարհը գտնուում էր Արեմենեան Պարսկաստանի տիրապետութեան տակ: Այդպիսի պայմաններում՝ եթէ երկիրը, Ուրարտուի անկումից յետոյ, չի կոչուել իր 70 տարուց ի վեր տիրապետողների անունով, ապա պարզ է, որ այն պիտի կոչուած լինէր երկրի բուն բնիկ տերերի անունով: Հետեւարար Hecataeus-ի օրին՝ երկրի որպէս Արմենիա յայտնի լինելը կասկած չի բռնուում, որ այն շատ վաղուց յայտնի էր որպէս արմէնների երկիր: Որով արմէնների երկիր էր նաև 70 տարի առաջ՝ Ուրարտուի ժամանակ: Որով Ուրարտու անունը Ասորեստանի արքաների կողմից արմէնների երկրին տրուած աշխարհագրական-պաշտօնական տերմին էր: Այլապէս անհասկանալի եւ անբնական կը լինէր ընդունել, որ մարերը Ուրարտուին նուաճելուց յետոյ երկիրը օծին Արմենիա անունով եւ յանձնեին արմէններին որպէս սեփականութիւն, եւ սրանք էլ մի քանի տասնամեակուն լցնէին երկիրը եւ Արմենիա անունը տարածէին աշխարհով մէկ՝ մոռանալ տալով բազմամարդ եւ երկար ժամանակ հզօր պետականութիւն ունեցած բնիկների անունը:

Հետաքրքիր է, ի հարկէ, որ Արմենիայից այն կողմ՝ Hecataeus-ը չի նշում մեղացիների-պարսիկների (Սեղական-Արեմենեան) պետութեան գոյութիւնը: Նրա համար այդ ժամանակներում վաղուց եւ ընդհանրապէս յայտնի է եղել, որ Արմենիայից այն կողմ, հեռուն, գտնուել է Հնդկաստանը: Դա ցոյց է տալիս, որ նա երկրները նշում է շատ հնուց յայտնի եւ հաստատուն պատկերացումների անուններով, եւ ոչ թէ վերջին ժամանակներին հրապարակ իջած ուժերի կամ աշխարհակալական եւ ուազմաքաղաքական նոր կացութաձեւերի անուններով:

Հայանարար արմէնների՝ Հնդկաստանի հետ ունեցած առեւտրական նշանաւոր կապի համբաւը, որը կարող էր հեշտութեամբ թափանցել Փոքր Ասիայ ու Յունաստան՝ Հնդկաստանից բերուած

ապրանքների հետ, շատերին թելադրում էր այն, որ Ուրարտու-  
Արմենիայից այն կողմ, հեռուն, գտնուում է Հնդկաստանը:

Արմինա=Ուրաշտու (Ուրարտու) հաւասարութեան համար  
կայ նաեւ հետեւեալ կարեւոր ապացոյցը:

Դարեկը իր Բեհիստունի արձանագրութեան մէջ յայտնում է  
նաեւ, թէ Արախս անունով մի արմին՝ Խալդիտայի որդին թագա-  
տր դարձաւ Բարեկոնում: Նա գրում է. «[այսպէս] է ասում Դարե-  
կը. - Երբ ես Պարսկաստանում ու Մարաստանում էի, բարեկացի-  
ները երկրորդ անգամ ապստամբեցին իմ դէմ. մի մարդ՝ Արախս  
անունով մի արմին, Խալդիտայի որդին, ապստամբեց Բարեկո-  
նում: Դուրակա կոչած մի վայրում նա ստեց ժողովրդին [ասելով].  
«Ես Նարուգործնուուրը եմ՝ Նարոնիտոսի որդին»: Ապա բարեկա-  
կան ժողովուրդը ապստամբեց իմ դէմ եւ Արախսայի կողմը բռնեց:  
Նա գրաւեց Բարեկոնը, նա դարձաւ բազաւոր Բարեկոնում»<sup>1</sup>:

Ինչպէս տեսնում ենք, այստեղ վկայութիւն կայ, թէ Բարեկո-  
նում թագաւոր դարձած այդ հայի հօր անունը Խալդիտա էր:  
Խալդի-տա անունը կազմուած է Ուրարտուի ազգային գերազոյն  
աստուած Խալդիի անունով:

Դարեկը Արախսային յիշում է 520 քուին (մ.թ.ա.)՝ Ուրարտա-  
կան հարստութեան անկումից (590-585 մ.թ.ա.) 65-70 տարի յետոյ:  
Ուրեմն Արախսայի մեծ հայրը ապրում էր Ուրարտուի ժամանակ:  
Ուրարտուի ժամանակ ապրած այդ հայը իր որդուն՝ Արախսայի  
հօրը կոչել է Խալդի-տա. այսինքն այդ հայը իր որդուն անուանել է  
Ուրարտուի ազգային գերազոյն աստուած Խալդիի անունով: Ինչ-  
պէ՞ս բացատրել այս երեւոյթը. եթէ այդ հայը ուրարտացի չինէր  
միթէ՞ իր որդուն կը կոչէր Խալդիտա: Եթէ հայերը դրսից գալով  
մարերի-սկիւթների հետ կործանել էին Ուրարտուն, ուրեմն հայերը  
«եւ» ուրարտացիները թշնամիներ էին: Այդպիսի դէպրում միթէ՞  
այդ հայը իր որդուն կը կոչէր իրենց թշնամիների գերազոյն աս-  
տուած Խալդիի անունով: Այդ հայը իր որդուն կոչել է Խալդիտա.  
սա աղաղակող փաստ է, որ այդ հայը ուրարտացի էր, որ հայերը  
Խալդիին պաշտած ուրարտացիներն էին: Անհաւանական չէ, որ

<sup>1</sup> British Museum, “The Sculptures and Inscriptions of Darius The Great”, on the Rock of Behistun in Persia, 1907, p.56-59:

այդ հայր ուրարտական իշխան էր, այլապէս նրա քոռ Արախսան չէր կարող Բարելոնում թագաւոր դառնալու չափ հեղինակութիւն ունենալ: Անկարելի չէ եւ այն, որ «Խաղղիտայի որդի» խօսքով Դարեկը ուղղակի ու բացայայտօրէն նշել է արմին (հայ) Արախսայի Խաղղեան լինելը: Յայտնի է, որ հեթանոսութեան օրերին ցեղի ամէն մի անհատ համարում էր իր ցեղի որդին կամ իր ցեղի զիսաւոր աստծոյ որդին: Եւ ինչպէս տեսանք՝ երրայեցիների Դաւիթ արքան Ծոփքի հայոց Արտազար թագաւորի ազգութիւնը (արմէն լինելը) նշելու համար նրան կոչել էր «Արայի որդի»: Իսկ մենք արդէն զիտենք, որ արմէ(ն) նշանակում էր «Արորդի»՝ «Արայորդի»: Որով «Արախսա անունով մի արմին՝ Խաղղիտայի որդին» խօսքով կարելի է հասկանալ, որ Արախսան Ուրարտուի ժողովրդին պատկանած մի արմին (հայ) էր, այսինքն՝ արմին ասելով՝ պիտի հասկանալ ուրարտական: Այսուհաներձ, երկու դէպրում էլ, Դարեկը «Խաղղիտայի որդի» խօսքով նշել է Արախսայի ֆիզիկական հօր անունը, քէ Խաղղի աստծոյ ցեղին պատկանած լինելը, միեւնոյն է, դա նշանակում է, որ այդ հայր պատկանում էր ուրարտական ժողովրդին: Ուրարտուն ու Բարելոնը իին բարեկամներ էին արիւնաբրու Սսորեստանի դէմ իրենց մղած դարաւոր պայքարի ժամանակ: Հետեւաբար մի ուրարտական իշխան կարող էր Դարեկի դէմ Բարելոնի ապստամբութիւնը զիսաւորել, եւ բարելացիների կողմից ընդունուել որպէս արքայական-աստուածային ծագում ունեցող հեղինակութիւն ու թագաւոր դառնալ:

Մանաւանդ այդ ժամանակներին Ուրաշտու-Արմինան էլ էր ապստամբել Դարեկի դէմ եւ ազատագրական պայքար էր մղում Դադարշիշ ու Վառմիսա զորավարների կողմից դեկավարուած պարսկական (Դարեկի) բանակների դէմ: Հետեւաբար կարելի է ընդունել, որ Արախսան Բարելոնում Դարեկի դէմ երկրորդ ճակաս բանալու համար ուրարտական հայերի կողմից ուղարկուած մի առաքելութեան պետն էր, որին յաջողուել էր բարեկամ ու բախտակից բարելացիներին ոսքի հանել Դարեկի դէմ:

Միաժամանակ պէտք է մտածել, որ եթէ հայերը Ուրարտական պետութեան զլուխ էին եկել մարերի եւ ապա արեմնեանների օգնութեամբ ու հովանաւորութեամբ՝ էլ ինչո՞ւ պիտի ապստամ-

բէին եւ («թշնամի ուրարտացիների առկայութեամբ») խախտէին «ի նպաստ իրենց» ատեղծուած դրութիւնը: Սա նոյնպէս աղաղակող փաստ է, որ հայերը հենց մարերի կողմից նուաճուած Ուրարտացիներն էին եւ ապստամբել էին վերականգնելու համար իրենց Ուրարտական նախկին անկախութիւնը:

Ուստի կասկած չկայ, որ հայերը հենց կրակի աստուած Խալդիին պաշտող ուրարտացիներն էին:

Արդէն ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ Հայկը կրակի աստուած էր: Նա հենց կրակի աստուած Խալդին էր: Յաջորդ գլխում մանրամասնօրէն ցոյց կտանք, որ Հայկ ու Բեկի զրոյցը Ուրարտուի պատմութիւնն է, ուր պարզ երեւում է, որ Հայկը Խալդին է: Ակաղեմիկոս Մառը ցոյց է տուել, որ Խալդի անուան հիմքը Խալ է, իսկ մեր կարծիքով էլ Խալ-ը Խար-ի փոփոխակ է: Մեզ յայտնի է, որ Կելշինի ուրարտական երկեզունան արձանագրութեան մէջ Խալդի անունը մի քանի անգամ երեւում է Ալդի ձեւով, որը փոփոխակն է Արդի ձեւի, քանի որ Մուսասիր քաղաքը (ուր կար Խալդի նշանաւոր տաճարը եւ որի համար այդ քաղաքը ուրարտացիների կրօնական կենտրոնն էր) Խալդինի կամ Ալդինի կոչուելու տեղ կոչուել է Արդինի՝ եւ դա ի հարկէ Ուրարտուից առաջ՝ Ուրուատրիի ժամանակներին:

Ալդի երկրանուան մէջ էլ է երեւում, որ Ալ-ը Ար-ի տարբերակ է: Հիւրշմանը նշում է, թէ «Աղձնիք անուան տեղ օտարազգիք թ-ով ձեւ մը կը գործածեն. այսպէս յուն. Արզանենէ (Պրոկոպիոս եւ այլն), լտ. Արզանենա, Արզանենա...., ասոր. Արզօն կամ Արզուն....արաք. Արզան»<sup>1</sup>: Արդէն Աղձնիքի գլխաւոր քաղաքը կոչուում էր Արծն կամ Արզն (այժմ՝ Արզան), որը գտնուում է Աղձնիքի Արզն կոչուած զաւառում:

Մենք գտնուում ենք, որ Ալ-զի բառաձեւը ունի խորրիխական կազմութիւն: Խորրիերէնում -զի վերջաւորութիւնը քերականօրէն համանիշ է խորրիխական -խէ ածանցին<sup>2</sup>: Հետեւաբար Ալ-զի նշանակում է «Ալ-եան» եւ պէտք է համանիշ եղած լինի գրեթէ այդ շրջանի համար Մենուայի յիշած Ար-իսի «Ար-եան» անուան: Որով

<sup>1</sup> Հիւրշման, «Հին հայոց տեղոյ անուններ», Վիեննա, 1907:

<sup>2</sup> E. A. Speiser, "Introduction to Hurrian" 1941, New Haven, p. 116, 119:

-զի (ինչպէս -խի) վերջատրութիւնը պէտք է ունենայ նաեւ «ծնունդ, սերունդ» իմաստը, ինչպէս ուրարտական արքաները այդ վերջատրութեամբ են նշում իրենց հօր անունը (Argištini Menuahî «Արգիշտի՝ Սենուայի որդի»): Ուստի կարծում ենք, որ *Ալ-զի* (*Ալ-զինի*) անունը հենց *Ար-սէ* («Արածին») անուան մի այլ տարրերակն էր, մի բան, որը թելադրում է ընդունել, որ *Ալ-զինի* անուան -զինի վերջատրութիւնը պիտի ունենա հայերենում պահուած -ազն կամ -զուն վերջատրութեան իմաստը, ինչպէս Հայկազն, արքայազն, դիւցազուն եւ այլ նման կազմութիւններում:

Ինչպէս ասացինք, արմէն ցեղերից ոմանք իրենց անունների հիմքում ունեցել են *Ար* աստծոյ անունը՝ հնչինային տարրեր Երանգաւորումներով եւ տարրեր ածանցներով, եւ ինչպէս տեսանք, *Ալ-զինի* համանիշ էր *Արմա* կամ *Արսէ* անուան, որը նշանակում էր «Ար-ի սերունդ» կամ «Ար-ի սերնդի երկիր»: Որով այստեղ *Ալ-ը* *Ար-ի* տարրերակ է: Այսպէս էլ *Ալդին* *Արդիի* տարրերակ է, որով *Արդինիի* մէջ *Արդին* *Ալդի-Խալդի* է. հետեւարար *Խալ-ը* *Խալ-ի* տարրերակ էր: Ուստի պիտի ընդունել որ *Խալդի-ի* մէջ նստած է *Խալր-հար* տերմինը:

Ինչպէս ասացինք, Հայկը կրակի աստուած էր: Խորենացին Հայկին կոչում է «Յապետոսթեանն Հայկ», իսկ Յապետոս-Հեփեստոսը յայտնի էր արդէն որպէս կրակի աստուածութիւն: Որով Հայկը հենց կրակի աստուած Խալդին էր: Խալդին Էրեբունիի որմնանկարներում երեւում է արհիծի վրայ, որը խորիրդանիշն է կրակի (եւ արեւի) աստուածութեան: Այս մասին խօսել ենք առաջ եւ դեռ հանգամանօրէն կխօսենք այստեղ յաջորդ գլխում:

## 5. ՀԱՅԱՍՏԱՆ-ԽԱԽԱՎ

Ինչ վերաբերում է *Խայերի* եւ *Խայ* անուան՝ Հայասայից ծագած լինելու հարցի մասին, պիտի ասել, որ վարկածը ունի խոցելի կողմեր: Ներկայումս այդ վարկածի մասին նորանոր կասկածներ

են առաջ քաշում<sup>1</sup>: Հայասա-Ազգին, խեթերի կողմից մօտ երկու դար յիշուելուց յետոյ, խեթերից էլ առաջ կործանուել ու անյայտացել էր. մ.թ.ա. 1230 թուականներից յետոյ էլ բնաւ չի յիշուել: Արդեօք վաղուց անյայտացած մի քաղաք կարող էր օրրանը լինել կամ իր անունը պարտադրած լինել Հայկական լեռնաշխարհի նախրեան-խուրրիական քազմամարդ ու հզօր ցեղերին: Սա դեռ հարց է:

*Հայասա-Ազգին*, երեւի, պարզապես հայկական-նախրեան անթիւ ցեղերի մէջ մի առանձին խմբաւորում էր (ոչ թէ աղքիւրն ու օրրանը հայերի). այն երեւի պարզապես, Հայկական լեռնաշխարհի հարաւ-արեւմտեան շրջանում եղած Ալզիի պետութեան նման, հիւսիս արեւմուտքում (Քարձր Հայքում) կազմաւորուած հայկական նախրեան ցեղերի մի առանձին միութիւն էր, որը շղիմացաւ խեթերի ու այլոց հարուածներին, կազմալուծուեց, կործանուեց ու խեթերից էլ առաջ անյայտացաւ:

Ժամանակին մի շարք յայտնի գիտնականներ չին ընդունում *Խայաշա* ու *Հայաստան* անունների նոյնացումը: Անգամ Հ. Աճառեանը մերժելով այդ նոյնացումը՝ գրել էր. «Դեռ մէկը չի մտածել նմանացնել այս (*Խայ*) անունը Կիլիկիայի Այսա նաւահանգստի հետ, որ այժմ կոչում է Այաշ. ....»<sup>2</sup>: Այսաից աւելի՝ կարելի էր յիշել հնում *Հայաստանի* մէջ գտնուած Այադու կամ *Հայադու* երկիրը, որը, ըստ աշշուրեան Սարգոնի, ուներ 30 բերդաքաղաք Վանա լճի ափի լեռների լանջերին<sup>3</sup>: Իսկ ըստ Ակադ. Ի. Դիակոնովի, *Հայասան* ոչ մի կապ չունի *Հայաստանի* ու հայերի հետ<sup>4</sup>: Ի հարկէ այս վերջինն էլ, իր հերթին, չափազանցութիւն էր հարցի միւս ծայրից:

<sup>1</sup> Մ. Ակրեան, «Հայ ժողովրդի կազմաւորման եւ հայ գրականութեան սկզբնաւորման հարցը», «Քանրեր Երեւանի համալսարանի», 1967, էջ 37-39: Սովուն Խորենացի, Երեւան, 1970, էջ 196:

<sup>2</sup> Հ. Աճառեան, «Լիակատար քերականութիւն հայոց լեզուի», Երեւան, 1971, VI, էջ 769:

<sup>3</sup> Ն. Աղոնց, «Հայաստանի պատմութիւն», Երեւան, 1972, էջ 111:

<sup>4</sup> Գ. Զահորկեան, «Հայաստանի լեզուի հին անատոլիական ծագման վարկածը», «Պատմաբանական հանդէս», 1976, I, էջ 90:

Խնդիրը այն էր, որ հայ անունը բնաւ չի յիշուել Մերձաւոր Արեւելի սեպազիր արձանագրութիւններում։ Հայագէտները զիտէին, որ հայերը իին ժողովուրդ են, բայց զարմանալի էր, որ հայ անունը ոչ մի անգամ չի յիշուել սումերական, ասուրաքարելական, խուրրիական, ուրարտական ու պարսկական սեպազիր արձանագրութիւններում՝ Հայկական լեռնաշխարհի մասին եղած յիշատակութիւնների մէջ։ Եւ ահա յանկարծ տեսան, որ խեթական արձանագրութիւնների մէջ յիշուել է Հայասա (*Խոյաչա*) անունը եւ սրանից էլ կառչեցին՝ յայտարարելով, որ *հայերն* ու *հայ* անունը ծագել են այս Հայասա անունից։ Դա ի հարկէ բնական էր այդ առաջին օրերի տպաւորութիւնների համար։ Բայց երբ «ջրերը հանդարտուեցին»՝ կամաց-կամաց սկսեց յատակը երեւալ։

Հայերի՝ Հայասայից ծագած լինելու վարկածի ընդունման համար հող էր պատրաստել «արմէնների զաղք»-ի թիւր տեսութիւնը։ Գաղթի հենց այս սխալ վարկածով էր, որ հայ ժողովրդին արհեստականօրէն բաժանել էին իրարից տարբեր երկու առանձին ցեղերի՝ *հայ* եւ *արմէն* ցեղերի կամ ցեղախմբերի՝ անտեսելով հակառակը փաստող բազմաթիւ տուեալներ, նրանց թում եւ Խորենացու պահած «Հայկ ծնանի զԱրմենակ» վկայութեան թելադրիչ ու կարեւոր նշանակութիւնը։ Հայերին բաժանելով (ի հարկէ հիմնական) երկու առանձին ցեղերի՝ արմէններին ծագումով տարան Եւրոպա, իսկ հայերին պէտք էր փնտռել մի տեղ, ու երկար դրոնումներից յետոյ յանկարծ «գտան» Հայասայում։

Հիմա որ կամաց-կամաց յստականում է հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքի տեղադրութեան հարցը, երբ արդէն պարզում է, որ այդ հայրենիքը գտնուում է Հայկական լեռնաշխարհում ու Փոքր Ասիայում՝ ջնջում է արմէնների զաղթի վարկածը իր հիմքից, եւ դրա հետ էլ վերանում՝ հայ ժողովրդին էքնիկապէս իրարից տարբեր երկու առանձին (արմէն եւ հայ) ցեղերի բաժանելու թիւրիմացութիւնը, եւ այդպիսով ճշդում է Հայասայի էութեան մեկնարանման հարցը։

Կասկած չկայ, որ հազարաւոր տարիներ առաջ կործանուած ու անյայտացած Հայասա քաղաքը չէր կարող իր անունը Հայկական լեռնաշխարհի բոլոր ժողովուրդներին պարտադրելու չափ յե-

ղափոխիչ ու հզօր դեր խաղացած լինել (մանաւանդ այդ մասին ոչ մի տուեալ էլ չկայ), երբ, հենց իր ժամանակներին իսկ, գոյութիւն ուներ Խորրի-Միտանեան աւելի հզօր ու մարդաշատ պետութիւնը:

Արդէն ուսումնասփրութիւնները ցոյց են տալիս, որ Խաքքուսիլ III-ի ժամանակներին խեթերը սկսել էին խեթական թնակավայրեր կառուցել (խեթական գաղութներ հաստատել) Հայասայում՝ Խոսխա քաղաքի մօտակայքում<sup>1</sup>: Սա փաստական իմք է տալիս ընդունելու, որ Հայասա-Ազզի ցեղային միութիւնը արդէն այս ժամանակներում կործանուած, կազմալուծուած էր ու լիի նուաճուած խեթերի կողմից՝ սրանց իսկ կործանումից առաջ, այլապէս սրանք չէին կարող այդտեղ խեթական գաղութներ հաստատել: Հայասան Խաքքուսիլ III-ի յաջորդ Թուղթսալիա VI-ի (1260-1230) ժամանակներից յետոյ էլ բնաւ չի յիշուել:

Այս ժամանակներից յետոյ Ասորեստանի արքաները բազմիցս մտել են Փոքր Ասիայ, անցել են խեթերի երկրների վրայով եւ հասել են Սեւ Ծովի մատոյցները, բափանցել են Հայկական լեռնաշխարհի խորքերը, բայց զգիտեն ու չեն գրում Հայասայի կամ հայ անունով ցեղի գոյութեան մասին: Ասորեստանի արքաները մէկ առ մէկ յիշում են իրենց դէմ մարտնչած նաիրեան բազմաթիւ ցեղերի ու նրանց երկրների անունները, բայց նրանցից ոչ մէկը չէր կոչում հայ կամ Հայասա:

Ուրարտուի արքաները Հայկական լեռնաշխարհի կարեւորագոյն մասը միացրել են իրենց պետութեանը. խեթերի Խայաշա կոչած երկրի արեւելեան շրջանները ընդգրկել են Ուրարտուի սահմաններում (Երզնկայի շրջանի Ալթրն-Թէփէն, ուր գտնուել է ուրարտական բերդ, գտնուում էր Հայասայում). նրանց բանակները հասել են խեթերի երկիր, բայց չեն հանդիպել եւ չեն յիշում Հայասային: Ուրարտական արձանագրութիւնների մէջ յիշում են բազմաթիւ ցեղեր, երկրներ, քաղաքներ, բայց նրանց մէջ չկայ Հայասա կամ հայ անունով երկիր, քաղաք կամ ցեղ:

<sup>1</sup> Վ. Խաչատրեան, «Խայասացիները» (ռուսերէն), «Լրաբեր», Երեւան, 1972, 8, էջ 34:

Հետեւաբար արդեօք ճիշդ կը լինի՝ մտածել, որ (ինչպէս ասացինք) կազմալուծուած ու կործանուած մի ցեղային միութիւն, ու աւելի ճիշդ՝ աւերուած գոյութիւնից դադարած մի քաղաք, կարողացել է իր անունը պարտադրել Հայկական լեռնաշխարհի բոլոր ժողովուրդներին, յատկապէս խուրրո-ուրարտական-նաիրեան հզօր ու քազմամարդ ցեղախմբերին:

Ի հարկէ կարելի է մտածել, որ Հայասա-Ազգի ցեղային միութեան քայրայումից յետոյ եւ խեթերի էլ որպէս հզօր պետութիւն ասպարեզից քաշուելուց յետոյ կարող էր այս շրջաններում մի այլ քաղաք դառնալ վերապրած հայասական ցեղերի նոր կենտրոն։ Յետազայ երեւյթները ցոյց են տալիս, որ հաւանաբար այդպիսին էր Խախս քաղաքը, որը յիշուել էր Խաքքուսիլ III-ի կողմից։ Այս մտքին ենք հանգում աչքի առաջ ունենալով ուրարտական մի քանի տուեալներից զատ Խորենացու պահած հետեւեալ տեղեկութիւնը։

Խորենացին Մեծն Ներսեսի մահուան մասին գրելիս նշում է. «ԵՇ ՎԻԼԻԵՎ յաշխարհէս երանելին Ներսես ի գաւառին Եկեղեաց, ի գեօղն՝ որ կոչի Խախս...»<sup>1</sup>։ Դժուար է ընթունել, որ Եկեղեաց գաւառի Խախս գիտն ու անունը պահում են Խախս-ի յիշատակը։ Նախ դա ցոյց է տալիս, որ այդ քաղաքը դիմացել ու գոյատեւել է, երկրորդ՝ նրա անունը արդէն բոլորովին այլ քան է թելադրում։

Խախս անունը գուցէ կրկնաւոր բառ է, արմատը՝ Խա։ Կրկնաւոր հին բառերը յոգնակի ձեւի ծագում ունեն։ Խոր անցեալում անունների յոգնակին կազմում էին անուան կրկնութեամբ։ Խախս անունն էլ գուցէ յոգնակին էր Խա հիմքի։ Օրինակ՝ այդպիսիներից ունենք Խորենացու յիշած «Արմանեակի եղբայր խոռի անունից կազմուած» խորխոր (-ունի) նախարարական անուան մէջ<sup>2</sup>։ Յոգնակիի իմաստ ունեն օրինակ՝ գոյնզգոյն, կաթկիւ զանազան եւ այլն։ Հետեւաբար կարելի է մտածել, որ Խախս անուան -խս վերջաւորութիւնը ո՞չ թէ առաջինի կրկնութիւնն էր, այլ «-եան» նշանակող (կամ սոպնիմական) ածանց (ինչպէս Կումմախս, Կաշմիախս, Շամուխս եւ այլն), որը այստեղ համըն-

<sup>1</sup> Խորենացի, Գ-լր։

<sup>2</sup> Խորենացի, Ա-ժր։

կել է արմատ-հիմքի հետ՝ նրա հետ ունեցած նմանութեան պատճառով: Ամենայն դէպս, միեւնոյնն է, կարելի է մտածել, որ այդտեղ ապրում էր *իսա* ցեղը:

Պատմագիտութեան մէջ անբացատրելի էր մնում, թէ ինչո՞ւ ուրարտական արքաները, որ եղել են Եկեղեաց գաւառի շրջանում, չեն յիշում խայասացիներին: Յեղային շատ միութիւններ կործանուել, կազմալուծուել են, բայց ցեղի որոշ հատուածներ գոյատեւել են: Եթէ այդ ցեղի անունը *իսա* էր, ապա դա միանգամից լուծում է առեղծուածը: Արդէն այս տեսակէտով արժէք են ստանում խորխորեան արձանագրութեան մէջ Արգիշտի I-ի յիշած <sup>KUR</sup>Ha-hi-a-ñ-e եւ <sup>KUR</sup>Hu-ša-ni<sup>1</sup>, եւ Սարդուրի Բ-ի յիշած <sup>KUR</sup>Hu-ša-al-hi երկրանունները: Մանաւանդ որ այս անուններով նշուած երկիրը գտնուում էր Եկեղեաց գաւառում<sup>2</sup>: Ուստի կարելի է ընդունել, որ *իսա* ժողովուրդը գոյատեւել էր եւ ճանաչում էր Ուրարտուի արքաների կողմից:

Եթէ այս այսպէս էր, ապա այս երեւոյի լոյսի տակ կարելի է *Խայասա* անուան տալ այլ մեկնութիւն: Գուցէ ածանցուած Ha-ja-sa անուան մէջ բառարմատը ոչ թէ haia կամ hai է, այլ ha. իսկ -ia-միջնավանկը եւ -ša վերջաւորութիւնը ածանցներ են. այլ խօսքով՝ -ia-ša վանկերը բաղադրեալ ածանց են: Այս կարելի է համեմատել -ia վերջածանց կրող հայասական մի բանի տեղանունների եւ անձնանունների հետ: Պրոֆ. Գ. Զահոնկեանը ընդունում է, որ հայասկան Arniја (Arni-ja), Arziја (Arzi-ja), Paraја (Para-ja), Pahhuteја (Pahhute-ja) տեղանունների եւ Mariја (Mari-ja) ու Anniја (Anni-ja) անձնանունների -ja վերջաւորութիւնները ածանց են<sup>3</sup>:

Բացառուած չէ, որ որոշ դէպքերում -ja ածանցին յաջորդի մի երկրորդ ածանց՝ -ia-ն դարձնելով միջնածանց, կամ սրա հետ կազմի բաղադրեալ ածանց. օրինակ՝ Gašmi-ja-ha (Gašmi-ja-ha), որի բառարմատն է Gašmi-ն<sup>4</sup>, իսկ -ja-ha վանկերը՝ բաղադրեալ ածանց: Այսպէս էլ կարող է Ha-ja-ša անուան մէջ արմատը լինել ha,

<sup>1</sup> YKH, 127, I8 եւ 128, BI2:

<sup>2</sup> Ն. Հարութիւնեան, «Թիափնիլի» («ռուսերէն», Երեւան, 1970, էջ 402-408):

<sup>3</sup> Գ. Բ. Զահոնկեան, նշուած յօդուածն ու հանդէսը, էջ 92-101:

<sup>4</sup> Նոյն, էջ 103:

իսկ -յա-շա վանկերը՝ բաղադրեալ ածանց: Այս խա արմատը կը համապատասխանէր Խախա քաղաքանուան արմատին եւ այս շրջանների համար Արզիշտի I-ի յիշած <sup>KUR</sup>Hahiaն եւ <sup>KUR</sup>Hašani եւ Սարդուրի Բ-ի յիշած <sup>KUR</sup>Hušaalի երկրանուան մէջ նստած հա կամ իս արմատին (աս յիշեցնում է պլնտոսեան խոյերին): Դիսի նաեւ նշել, որ Սարդուրի Բ-ի արձանագրութեան մէջ <sup>KUR</sup>Hušaalի երկրի արքան կոչում էր Խախանի (*Խախա-նի*): Հետեւաբար անհաւանական չէ, որ այս բոլորի մէջ նստած էր խա ցեղանունը:

Ամենայն դէպս դժուար է ասել, որ հայերն ու հայ անունը ծագել են խեթերից առաջ կործանուած ու անյայտացած եւ դրանից յետոյ էլ բնավ չյիշուած քաղաքի անունից: Մանաւանդ որ, ինչպէս տեսանք, ճիշդ չէր հիմք չունեցող «զաղթի» տեսութեամբ հայ ժողովրդի՝ նոյն ծագումն ունեցող արմէն եւ հայ անունների մէջ էրնիկապէս իրարից տարրեր երկու ցեղախմբեր տեսնելու վարկածը, որի պատճառով հնագէտներն ու պատմաբանները շեղուեցին հայ ժողովրդի պատմութեան բնական հունից եւ ի զուր ճիզ թափեցին գտնելու, թէ արդեօք ե՞րբ, ո՞ր եւ ինչպէ՞ս են «միացել» հայ եւ արմէն ցեղախմբերը: Տեսանք, որ այդ երկու անուններն էլ ունեն նոյն ծագումը՝ կապուած լինելով հայ ժողովրդի արեւ-կրակի գերագոյն աստուած Ար կամ Արայի անուան հետ:

Ժամանակին ցոյց ենք տուել, որ հայերի *Աստուած-ը* եղել է կրակի աստուածութիւն: Եթէ հայասական Ունագ-աշտաաշ եւ Ունագ-աշտուաշ դիցանունների սեպագրութիւնները ճիշդ են տառադարձուել-ընթերցուել, ապա նրանց երկրորդ քաղաքիչ *Աշտուաշ-*ը ճշգորէն համընկնում է հայկական *Աստուած* դիցանուան հետ:

Ամենայն դէպս՝ կան եւ այլ երեւոյթներ, որոնք թելադրում են ընդունել, որ *Հայասա-Ազզին* եղել է *Հայկական լեռնաշխարհի* հիւսիս-արեւմուտքում կազմաւորուած նաիրեան-հայկական ցեղերի մի առանձին միութիւն-պետութիւն, ինչպիսին էր նոյն ժամանակներում Ալզին հարաւ-արեւմուտքում եւ Խուրրի-Միտաննին *Հայկական լեռնաշխարհի* մեծագոյն մասում ու հարաւում:

Թէ *Հայասա-Ազզին* եւ թէ *Խուրրի-Միտաննին* կազմալուծուեցին II հազարամեակի վերջին քառորդի սկզբներին (մ.թ.ա.) եւ դա-

դարեցին այդ անուններով որպէս ռազմաքաղաքական առանձին միաւոր-ուժ յիշուելուց:

## 6. ՆԱԻՐԵԱՆՆԵՐ

---

Ասուրաբելական ժամանակներին Հայկական լեռնաշխարհում գոյութիւն ունեին բազմաթիւ միատարր նախրեան ցեղեր: Նրանք գոյութիւն են ունեցել անյիշելի ժամանակներից եւ եղել են ծնունդը Հայկական լեռնաշխարհի: Նրանք իրենց լեռնաշխարհի տարրեր շրջաններում եւ տարրեր ժամանակներում կազմում էին ռազմաքաղաքական միութիւններ դիմադրելու համար արտաքին ոստիսի ու ահեղ ուժերի ոտնձգութիւններին: Մեր ունեցած տուեալներով նրանց ընդհանուր թիւը ճշգորէն յայտնի չէ: Սիայն Ասուրեատանի Թիգլաք-Պալասար Ա-ը (մօս 1100 մ.թ.ա.) Նախրի երկրների վրայ կատարած արշաւանքի ժամանակ դիմադրութեանն է հանդիպել 23 նախրեան ցեղերի միացեալ ուժերի: նա յիշում է նաև նախրեան 60 այլ ցեղերի դիմադրութեան մասին Վանայ լճի շրջանում:

Նախրեան ցեղերը տարածուած էին Ծոփք-Կոմագենէից մինչև Ուրմիա լիճը եւ պոնտական լեռնաշղթայից մինչեւ Ասորիքի ու Ասորեատանի սահմանները հասնող ընդարձակ շրջանների վրայ:

Նախրեան ցեղերը Հայկական լեռնաշխարհի նախնադարեան համայնական (մարդաբանականօրէն արմէնոիդ) հասարակութեան տոհմական գոյացութիւնների էքնիկական բիլեղացման արդիւնք են:

Նրանք, ինչպէս ասացինք, իրենց լեռնաշխարհի հրաբխային գործունեութիւնների պայմաններում, պաշտում էին արեւին ու կրակին եւ համարում էին իրենց արեւ-կրակի աստծոյ սերունդները:

Հայ ժողովրդի հիմքում նստած են հենց այս՝ արեւ-կրակ պաշտած եւ «կրակ երկիր» կոչուած լեռներկրի բուն քնիկներն հանդիսացող նախրեան ցեղերը:

Նաիրեաններն էին կազմել *Սուրարի, Արմանի, Արմէ-Շուպրիա, Խուրրի-Միտաննի, Հայասա-Ազգի, Աղի, Ուրուատրի, Ուրուտու* եւ *Ծովիք-Կոմազեննէ* կոչուած ցեղային ռազմա-քաղաքական միութիւնները, որոնց յետազայ ժառանգորդն էր հանդիսացել *Սեծն Տիգրանի* մեծ պետութիւնը, որը ընդգրկում էր նրանց բոլորի հողային տարածութիւնները:

Սեմբ տեսանք, որ Նարամ-Սինի ժամանակներին (III հազարամեակի վերջին քառորդում մ.թ.ա.) *Արմաննի* գտնում էր *Սուրարի* երկրում, որը խուրրիական էր: Այստեղերից չեռացան արմէնները. այդ շրջանները II հազարամեակի վերջերին եւ I հազարամեակի I կեսին (մ.թ.ա.) Ասորեատանի եւ Ուրարտուի արքաների կողմից շարունակեցին կոչուել *Ուրմէ* կամ *Արմէ* եւ *Շուպրիա* ձեւելով: Սակայն ուշադրութիւն գրաւողը այս է, որ Խուրրի-Միտանիի եւ խեթերի հզօրութեան ժամանակներին՝ II հազարամեակի II կեսին (մ.թ.ա.), այդ շրջանները կամ այդ շրջաններում ապրող բնիկ արմէնները խեթերի կողմից *Արմանի, Ուրմէ, Արմէ* կամ նման մի անուանաձեւով յիշուելու տեղ, փոխարենը, յիշուում էին խուրրի անունով, կարծես արմէնները խեթերին ծանօթ էին աւելի խուրրի անունով: Ահա խեթական մի նշում այս մասին.

Խեթերի արքայ Մուվատալիի եւ Կիզուատնայի արքայ Սունաշուրայի միջեւ կնքուած դաշնագրում գրուած է. «Այսպէս է ասում վեհափառ Մուվատալիի մեծ արքայ Խատուու երկրի ... նախապէս՝ իմ պապի (*Սարլել*) ժամանակ Կիզուատնայի երկիրը մի մասն է եղել Խատուու երկրին: Վերջը Կիզուատնայի երկիրը զատուեց Խատուի երկրից եւ դարձաւ Խարրի (*Խուրրի*) երկրին: Այդ այն ժամանակ Արեգի ժառան՝ Իշուվա երկիրը թշնամութեամբ սողորուեց Արեգիս դէմ, այն ժամանակ Արեգս արշաւեցի նրա դէմ... Իշուվայի մարդիկ խոյս սուին Արեգիս առաջից, իջան Խարրի (*Խուրրի*) երկիրը ...»<sup>1</sup>: Այս արձանագրութիւնից պարզ երեւում է, որ այդ ժամանակ Խուրրի քագաւորութեան երկիրը սահմանակից էր Իշուվային, որ իշուվացիք ազատուելու համար անցել են Խուրրիների երկիրը (երեւի ցեղակից էին): Ո՞ւր էր Իշուվան: Սալ-

<sup>1</sup> Պրոֆ. Ա. Խաչատրեան, «Միտանի խարրի ժողովուրդը», ՀԽՍՀ գիտ. եւ առուեստ. ինստ. «Տեղեկագիր», թի 1, Երեւան, 1926 էջ 13:

մանասար Գ (860-825 մ.թ.ա.) ասում է. «Բիտ Զամանոց (Դիարբեքիրի շրջան) ելայ, Նամդանու, Սիրիսիսու երկրները կտրեցի անցայ ... իջայ Իսուա երկրի Ինզիտի երկիրը ...»<sup>1</sup>: Այստեղ էլ պարզ է որ ինզիտ-հանձիթը Իշուվայի մի մասն էր. Վայգճներն էլ ասում է, թէ Իշուվան հասնում էր Բալու<sup>2</sup>: Այսպիսով պարզ է դառնում, որ խեթերի արքայի առաջից փախչող իշուվացիք անցել են Արմե-Շուարիա, որին խեթերի արքան կոչում է խուրրիների երկիր:

Ասարիսադրնի արձանագրութիւններում յիշատակուում են Արմե-Շուարիայի թագաւորի ու նրա որդիների անունները, որոնք խուրրիական կերպար ունեն<sup>3</sup>: Մեր Երուանդ Ա-ի որդու անունը կոչուում էր Սաքարիս (Շաւարշ)<sup>4</sup>, այս անունը շատ է տարածուած հայերի մէջ: Սաքարի(ս) արդէն գալիս է Սուրարի անունից, որի մէջ հասկացուում է խուրրի ժողովուրդը:

Խեթերից յետոյ այս շրջանի համար խուրրի անունը չի յիշուում, այլ յիշուում է Ուրմէ կամ Արմէ անունը: Միաժամանակ նոյն Արմե-Շուարիայի շրջանը Ասորեստանի արքայ Աշուր-Նազիր-Պալ Ա-ի կողմից յիշուում է որպէս Նահիր երկիր. նա գրում է . «... Կաշիարի լեռը անցայ եւ երկրորդ անգամ լինելով իջայ մերքեւ դէսպի Նահիր երկիր...»<sup>5</sup>: Միանգամայն պարզ է, որ Կաշիարի լեռներից իջնելով մտած երկիրը Արմե-Շուարիան էր: Սա փաստ է, որ խուրրի-արմենների Շուարիա երկիրը եղել է նոյնապէս նահրեան ցեղերի երկիր: Արդէն մեզ յայտնի է, որ Եգիպտացիները Խուրրի Սիտանիի արքային կոչել են «իշխան Նահարինահ (Նահրիի)»<sup>6</sup>:

Հետեւաբար պիտի ընդունել, որ Սուրարին, Արմանին, Արմե-Շուարիան, Խուրրի-Սիտանին, Հայաստ-Ազգին, Ալզի-Ալզինինին, Ուրուատրին եւ Ուրարտուն Հայկական լեռնաշխարհի բուն բնիկ-

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 15:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 15:

<sup>3</sup> Ա. Տիրացեան, «Հին հայկական պետութեան առաջացումը», «Պատմաբանակրական հանդէս», 1968, թիւ 4, էջ 92:

<sup>4</sup> Հ. Գ. Ժամկոչեան, «Հայ ժողովորդի պատմութիւն», Երեւան, 1963, էջ 126:

<sup>5</sup> D. Luchenbill, նշուած գիրքը, էջ 179:

<sup>6</sup> Ա. Խաչատրեան, «Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմութիւն», Երեւան, 1933, էջ 8:

ներն հանդիսացող նախրեան ցեղերի կազմած ռազմաքաղաքական միութիւններ էին:

Մենք տեսնում ենք, որ Հայկական լեռնաշխարհի գլխաւոր մասի հայկական մեծ պետութեան կողքին հիւսիս-արեւմուտքում եւ հարաւ-արեւմուտքում երկու առանձին եւ աւելի փոքր ու ցեղակից պետութիւնների գոյութեան դրուածքը հաստատուն է մնում կամ կրկնուած է երեւում նախրեան ցեղերի միութեան ռազմաքաղական վերելքի ու հզօրութեան մեզ յայտնի երեք տարբեր ժամանակաշրջաններում: Դրանք են՝

1. Մ.թ.ա. II հազարամեակի երկրորդ կեսին, ինչպէս նշեցինք, Հայկական լեռնաշխարհում եւ նրա հարաւում նախրեան ցեղերի կազմակերպուած *Խորրի-Սիտանեան* մեծ եւ հզօր պետութեան կողքին կային Հայկական լեռնաշխարհի հիւսիս-արեւմտեան շրջանում *Հայսաս-Ազզին*, իսկ հարաւ-արեւմտեան շրջանում՝ *Ալզին*:

2. Նոյն երեւոյթը տեսնում ենք երկրորդ անգամ մ.թ.ա. I հազարամեակի առաջին կեսին, երբ նախրեան ցեղերի կազմակերպած *Ուրարտական* հզօր պետութեան կողքին Հայկական լեռնաշխարհի հիւսիս-արեւմուտքում (Հայսաս-Ազզիի տեղում) գոյութիւն ունէին *Խասիխան ու Խալիդուն* (խա-լի «խա-եր», խա-լի-դու «խա-երի-երկիր»), իսկ հարաւ-արեւմուտքում՝ *Ալզի-Աղձնիքի շրջանում՝ Արմէ-Շապրիան*:

3. Նոյն երեւոյթը վերականգնուում է երրորդ անգամ հեթանոսութեան վերջին դարերում, երբ Հայկական լեռնաշխարհի մեծագոյն մասում վերականգնուած Մեծ Հայքի հայկական (Արտաշէսեան) մեծ պետութեան կողքին, նորից հիւսիս-արեւմուտքում, նախկին Հայսասայի կողմերում, տեսնում ենք *Փոքր Հայքի հայկական պետութիւնը* եւ հարաւ-արեւմուտքում՝ *Ալզիի շրջաններում՝ Ծոփիքի հայկական թագաւորութիւնը*:

Այս երեւոյթը ինքնին, անկախ այլ փաստերից, խօսում է այն մասին, որ մ.թ.ա. II եւ I հազարամեակներին տեղի չեն ունեցել էական փոփոխութիւններ Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերի էքսո-քաղաքական ընդհանուր դրուածքում եւ տարածական ու քաղաքական փոխհարաբերութիւններում, մի բան, որը հերքում

է էթնիկական նոր-եկտոր, տարրափոխիչ ու յեղափոխիչ հեղեղի վարկածը:

Երկրի հիմնական հին տեղանուններն էլ մեծամասնութեամբ պահպանուել են, չեն մոռացուել. նրանց տեղը ուրիշները չեն բռնել, կամ նրանց տեղում նրանց անունները մոռացնել տուող նորերը չեն առաջացել: Մ.թ.ա. III հազարամեակի Արմանին, II հազարամեակի Արիմէն, I հազարամեակի Արմէ-Ուրմէն գոյատեւել են Արմինա-Արմենի անուան մէջ: Նոյն են մնացել Ալզի-Ալզինի-նի-Աղձնիքը, Էնզիտ-Հանձիքը, Ծուպանի-Ծոփքը, Խանիգալքատ (Խանիորատ)-Խարբերդ (Խարբուտը) (?), Սելիդու-Մալաքիան, Ուրիհա-Ուրփան, Ուրարտու-Արարատը, Ուրաշտու-Ըոշտունին, Արծունիունի-Արծրունին, Բիահնա-Վանը, Էրեբունի-Երեւանը, Դայաէնի-Տայրը, Տարիունի-Դարոյնքը, Կումմախա-Կամախը, Ալզինի-Երիքա-Էրզինջանը, Իդիզլա<sup>1</sup>-Տիզրիսը, Բուրանուն<sup>1</sup>-Պուրատտու-Եփրատը, Արզանիա-Արածանին, Ախուրիանի-Ախուրեանը, Ծոխնիա-Սեւանը եւ այլն, եւ այլն:

Հայկական լեռնաշխարհը եղել է նաիրեան ցեղերի ծագման, աճի ու ճիշտաւրման օրրանը: Այս «կրակի երկրի» նաիրեան-խուրրիական-հայկական ցեղերը անյիշելի ժամանակներից, բազմահազար տարիներով, եղել են ու մնացել են երկրի բուն ու հիմնական բնիկ տարրը: Նրանց տեղը բռնող չի եղել, նրանց մօտ եկողները ծովուել են: Նաիրեան ցեղերը մերք միութիւններ կազմելով ու հզօրանալով, մերք կազմալուծուելով ու տկարանալով՝ շարունակել են գոյատեւել մինչեւ հեթանոսութեան վերջին դարերը, իսկ յետոյ էլ նրանց գիսաւորների շուրջ խմբաւորուելով՝ շարունակել են ապրել հայ Արտաշէսեանների ու Արշակունինների ժամանակներին որպէս առանձին նախարարութիւններ իրենց ինքնուրոյն երկրներով ու բարբառներով հանդերձ՝ շատեր պահպանելով իրենց անունների խուրրի-ուրարտական -նի կամ -ունի վերջաւորութիւնները՝ ինչպէս Ռշտունի, Արծրունի, Ապահունի եւ այլն:

Պիտի նշել, որ նաիրեան ցեղերի կրօնա-մշակութային միասնութիւնն ու արտաքին վտանգի դէմ միաւորուելու ատակ լեռնցիի

<sup>1</sup> S. N. Kramer, “The Sumerians”, Chicago, 1963, p. 40:

ոազմական կենսունակութիւնն էր, որ հազարամեակների ընթացքում պահպանեց երկրի ծնունդ եղող մարդաբանական արմենիոն կերպարանքը եւ էթնիկական նախրեան տարրի հարազատութիւնը:

Այդ տարրի լեռնականի կենսունակութեան հզօրութիւնն էր, որ պատուար հանդիսացաւ՝ ինչպէս հարաւի տափաստանների սեմական աշխարհի՝ ասուրաբարելական-արամէական անզուսպ հեղեղի դէմ, այնպէս էլ արեւմուտքի խեթական ու Փոքր Ասիական հզօր ուժերի եւ հիւսիսի կովկասեան հորդանների դէմ: Արգիլեց ու խանգարեց նրանց՝ չքողնելով, որ զանգուածօրէն տարածուեն ու հաստատուեն Հայկական լեռնաշխարհում ու այս իրացնեն ու սեփականացնեն: Արեւելքի սկիթական ու իրանական ճնշումներին էլ կասեցրին Ուրմիա լճի շրջանում: Այդ օտար տարրերի այն հատուածները, որոնք կարողացան թափանցել ու տեղաւորուել Հայկական լեռնաշխարհում՝ հալուեցին ու ձուլուեցին «կրակի երկրի» նախրեան քուրայում:

Ներկայ հայ ժողովուրդը իր ծագումով, իր մարդաբանական կերպարանքով, իր հոգեւոր մշակոյրի առանձնայատկութիւններով բնիկ ու հարազատ սերունդն է նախրեան այդ «կրակի երկրի» ցեղերի:

Հայ ժողովուրդը Առաջաւոր Ասիայում դեռ վերապրոյ ամենահին ժողովուրդներից մէկն է, որի անցեալի պատմութիւնը, կապուած իր մայր երկրի հետ, թափանցում է 7 հազար տարիների խորութեան: Հայերէնը կրող ժողովուրդը իր ծագման օրերից ի վեր գտնուում է հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքում, որի կենտրոնը, մեծ հաւանականութեամբ, եղել են Վանայ լճի շուրջ գտնուող Ար կոչուած երկրները՝ տարածուելով մինչեւ Արգենու (Երմիաս) լերան շրջանները եւ Ալիս գետի աւազանը:

**ԳԼՈՒԽ Գ.**

---

**ՀԱՅԿ ԵՒ ԲԵԼ**  
ԱՌԱՍՏԵԼԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻԱԶԸ

Հայկի եւ Բելի պատմոթիւնը պատմական հիմք ունեցող ժողովրդական այն զրոյցներից է, որոնք կազմնում են ժողովուրդների ինքնազիտակցութեան բիւրեղացման հետ մէկտեղ: Դրանք, մեծ մասամբ, իրենց ժամանակի պատմագրութեան ոճով կազմուած, դիցարանական ձեւ ստացած, գրաւոր կամ աւանդական յիշողութիւններ են տեղաբնիկ ցեղերի կողմից արտաքին ահեղ թշնամիների ոտնձգութիւնների դէմ, իրենց որպէս ժողովուրդ կազմատրման ժամանակաշրջանում, կատարած հերոսական դիմադրութիւնների:

Հայկի եւ Բելի զրոյցի հիմքում ընկած դէպքերը տեղի են ունեցել ասուլաքարելական ժամանակաշրջանում, երբ աքքաղական պետութիւնը սկսել էր իր ազդեցիկ դիրքերը զիջել հզորացող Ասորեստանին: Դա այն ժամանակներին էր, երբ նոր էր անկում կրել Խուրրի-Սիտաննին, եւ այն կազմած ու յետոյ կազմալուծուած նախրեան ցեղերի բազայի վրայ սաղմնաւորուում էր ուրարտական պետութիւնը:

Հայկական լեռնաշխարհի նախրեան-խուրրիական ցեղերը III եւ II հազարամեակներին (մ.թ.ա.) տարածուել էին հարաւ՝ ընդգրկելով Ասորեստանը, Ասորիքն ու Քանաանը: «Լազաշի Էաննադում արքայի ժամանակներից, III հազարամեակի I դարում, Սիշագետքի հիւսիսը ճանաչում էր Սուրարի անուան տակ: Այս շրջանն ընդգրկում էր Սիտաննիի տերիսորիաները, այսինքն՝ այն երկիրը, որ գտնում էր Զագրոսի եւ Եփրատի միջեւ ... Նարամ-Սինը տիտղոսագրուում էր «Յաղողը Սուրարուի մինչեւ անտառը մայրիների»<sup>1</sup>: Գիտութիւնը արդէն պարզել է, որ աշխարհագրականօքն Սուրարտու կոչուած երկրի ժողովուրդը եղել են խուրրիները:

Որոշ գիտնականներ գտնում են, որ Տուշրատտայի ժամանակ Խուրրի-Սիտաննեան պետութիւնը տարածուում էր արեւելքից արեւմուտք՝ Նինուէից, Զագրոսից եւ Ուրմիայի լճից մինչեւ Կա-

<sup>1</sup> Dr. G. Contenau, “La Civilisation des Hittites et des Hurrites du Mitanni”, Paris, 1948, p. 58-59:

պաղովկիայ, իսկ հիւսիս-հարաւ՝ Պոնտոսից մինչեւ Պաղեստին ու Բարելոն<sup>1</sup>:

*Խորրի-Սիտաննին* II հազարամեակի կէսերին (մ.թ.ա.) Սոածաւոր Ասիայում փայլեց որպէս հզօր պետութիւն եւ խնամիական կապերի մէջ մտաւ Եգիպտոսի փարաւոնների հետ: Ապա, Արտատաճա I-ից յետոյ (մօտ 1435-1410 մ.թ.ա.), մրցակից խեթերի դաւադիր սաղրանքներով առաջացած դինաստիական ներքին երկպարակութիւնների պատճառով՝ բաժանուեց երկուսի՝ արեւելեան ու արեւմտեան մասերի, թէեւ երկուսի էլ ժողովուրդը խորրիներ էին: Բաժանուած ու տկարացած Խորրի-Սիտաննին սկսեց քայքայուել եւ 13-րդ դարի Բ կէսին (մ. թ. ա.) կործանուեց խեթերի ու հզօրացած Ասորեստանի հարուածների տակ եւ հանդիպելով XIII դարի սկզբներից Զանաանն ու Սիրիան ողողած սեմիտական (յետոյ արամէական կոչուած) գաղքալիքի աւերիչ հեղին:

Այս ժամանակներին էր, որ քայքայուած ու կործանուած Խորրի-Սիտաննեան պետութեան իշխող ժողովորդի մնացորդները, խորրիների հարաւային հասուածները, սկսել էին ետ քաշուել իրենց հարաւային դիրքերից՝ Ասորեստանի, Զանաանի եւ մինչեւ Բարելոնի մատոյցները հասնող շրջանների տափաստանային տարածութիւններից դէպի հիւսիս: Արեւելեան թեւը *Առայիսայի* (Քերքուր), *Նուզիի* ու *Աշշուրի* կողմերից շարժուել է Տիգրիս ուղղութեամբ դէպի վեր, իսկ արեւմտեան թեւը *Ուզարիսի*, *Համայի* ու *Մարիի* կողմերից Օրոնտեսի, Եփրատի ու Խարուրի ուղղութեամբ դէպի հիւսիս: Նրանք տեղաւորուել են սեմիտական հարաւը հիւսիսից եզերող լեռնագոտիում՝ իրենց ցեղակիցների մօտ՝ Խորրի-հայական հարազատ երկրի հարաւային շրջանները հանդիսացող *Մուսասիրի* (*Մատիենէի*), *Ուրուատրիի* (Կորդուրի), *Կաղմուխիի*, *Ալզիի* (*Աղձնիրի*), *Կոմազենէի* ու հարեւան լեռներկրի շրջաններում: Արեւելեան թեւի ետ քաշուած մնացորդները կենտրոն հաստատեցին *Ուրուատրիի* լեռներում (Խորենացու յիշած *Արարադուս*), իսկ արեւմտեան թեւը բաւական երկար գոյատեւեց՝

<sup>1</sup> Պրոֆ. Ա. Խաչատրեան, «Սիտաննի-Խարրի ժողովուրդը», ՀԽՍՀ Գիտ. եւ Արուեստ. ինստ. «Տեղեկագիր», Երեւան, 1926, նո. 1, էջ 8 եւ 23:

կազմելով տոկուն միութիւն հայկական Սիօագետքի արեւմտեան շրջաններում՝ Խաճի-Գալրասոռում<sup>1</sup>, յետոյ Արմէ-Շուպրիայում ու Ծուպաճի-Ծոփքում՝ մերթ մտնելով խեթական դաշնակցութեան մէջ:

Նաիրեան-Խուլրիական արեւելեան թելի ցեղերը կարողացան Ուրուատրիի շուրջ կազմել Ասորեստանին դիմադրող մի յիշատակելի միութիւն՝ որպէս սաղմնաւորումը յետազայ ուրարտական հզօր պետութեան: Այսուհանդերձ ուրուատրիական այս միութեան մէջ մտնող նաիրեան ցեղերը, գտնուելով հարավի սեմիտական ոսոխ ուժերի ոտնձգութիւնների շառաւիղի մէջ, մերք միանալով, մերք կազմալուծուելով, չկարողացան ստեղծել օրեցօր հզօրացող Ասորեստանի հետ հաւասարակշռուող ուժ: Թէեւ նրանք կարողանում էին բաւական ուժ հաւաքել ու գոյութեան համար պայքարել, բայց չկարողացան ստեղծել կազմակերպուած ու կենտրոնացուած ուժեղ միապետութիւն, պատմութեան մէջ չզրաւեցին ինքնուրոյն տեղ (զրանցուած հետք չթողեցին) եւ խուսափելու համար Ասորեստանի տեսական ոտնձգութիւններից եւ թշնամական տեսական շփումներից ու ճնշումներից, ստիպուեցին դիմադրութեան իրենց կորիզը (միութեան կենտրոնը) հեռացնել նրանց անմիջական սպառնալիքի տակ գտնուող այս շրջաններից՝ մի անգամ էլ շարժուելով վեր, դէպի էլ աւելի հիւսիս, կենտրոն հաստատելով Վանայ ծովի շրջանում ու Հարքում:

Այստեղ է, որ նաիրեան ցեղերը IX դարի Ա քառորդում (մ.թ.ա.) արդէն կազմել էին կենտրոնացուած մեծ ու հզօր միութիւն: Եւ ասորեստանեան սեպազիր յիշատակարաններից իմանում ենք, որ Արամէի ժամանակ Ուրարտուն դարձել էր Ասորեստանին անհանգստացնող ուժ:

Թէեւ Ասորեստանի բանակները տարբեր ժամանակներում կարողացան երկու-երեք անգամ բափանցել մինչեւ Ուրարտուի կենտրոնը եւ աւերածութիւններ գործել, բայց չկարողացան իրենց ենթարկել ու ընկճել Ուրարտուին: Ուրարտուն շարունակեց աճել եւ Մենուայի ժամանակ դարձաւ Ասորեստանին հաւասարուող

<sup>1</sup> Ա. Խաչատրեան, «Հայաստանի սեպազրական շրջանի քննական պատմութիւն», էջ 7:

ուժ՝ տարածուելով արեւելք մինչեւ Արարատի (Մասիսների) մատոյցները: Իսկ Արգիշտի Ա-ի ժամանակ Ուրարտուն գերազանցեց Ասորեստանին՝ նրա բանակների դէմ տանելով կարեւոր յաղթանակներ: Արգիշտի Ա-ը իր իշխանութեան տակ առաւ Արարատեան դաշտը, կառուցեց Արգիշտիխինիլին (Արմալիրը) եւ Ուրարտուին միացրեց Սեւանայ լճի շրջանն (Գեղարքունիքը) ու Սիւնիքը:

Սհա հենց այս շարժումների, դէպքերի ու ծաւալումների գրաւոր ու ժողովրդական յիշողութիւններն է հանդիսանում՝ քաղդէական մի հին մատեանում պահպանուելով եւ միաժամանակ սերնդից-սերունդ անաղարտ աւանդուելով Մար-Աքային եւ սրանից էլ Խորենացուն ու Անանունին հասած՝ Հայկի ու Բելի գրոյցը<sup>1</sup>:

Պետք չէ անիմն ու անիրական առասպեկ համարել երեւոյթը, որ հակառակորդ երկու կողմերի գործողութիւնները գրոյցով կատարում են նրանց աստուածների՝ Հայկի ու Բելի անուան տակ՝ մի կողմից հայերի աստուած Հայկի ու միևնույն կողմից սեմական աշխարհի (Բարելոնի) աստուած Բելի անունով: Սեպագիր արձանագրութիւններից տեղեկանում ենք, որ հին ժամանակներում պատերազմները մղում էին կռուող կողմերի աստուածների համար եւ աստուածների կողմից: Օրինակ՝ Թիգլաք-Պալասար Ա-ը գրում է. «....Որ ես պէտք է քայլեմ հոչակուած հզօրութեամք Աշուրի՝ իմ տիրոջ, Հարիա երկրի եւ Բարիսի լայնասփիւոց զօրքերի դէմ բարձր բլուրների (վրայով), որտեղ ոչ մի թագաւոր չէր մտել, Աշուրը՝ իմ տէրը հրամայեց»: Սհա եւ Խշոնինի ու Սենուայի (Խարակոնիսեան) արձանագրութիւնից մի հատուած. «Խալդին դուրս եկաւ (արշալի) իր զէնքով: Նա յաղթեց Սեհշտայ քաղաքը, յաղթեց Բարշուայ երկիրը. Խալդին հզօր է, զէնքը Խալդիի՝ հզօր....»:

<sup>1</sup> Հայագիտութիւնը, առանց կոնկրետացնելու, ակնարկում է, որ Հայկի ու Արամի առասպեկլ ժողովրդական յիշողութիւններ են ուրարտական ժամանակների դէպքերի: Տես օրինակ՝ «Հայ ժող. պատմութիւն», Երեւան, 1975, էջ 67: Ա. Աբեղեան. «Հայոց հին գրականութեան պատմութիւն», Երեւան, 1944, էջ 23: Ա. Սկրեան, «Հայ հին գրականութեան պատմութիւն», Երեւան, 1976, էջ 49-60:

Ինչպէս պարզ երեւում է՝ Ուրարտուի կողմից պատերազմ մղողը Խալդին է: Արդէն զրոյցը ինքը բացայացում է այս իրողութիւնը: Գ. Սրուանձտեանցի գրանցած՝ Բելի զրոյցում ասում է. «...հայոց թագաւորը Աստուծոյ ձեռքով սպաններ է զբել.....»<sup>1</sup>: Ուստի բնական է, որ զրոյցում պատերազմի դեկավարը ախտի լիներ՝ սեմիտների կողմից Բելը, իսկ հայերի կողմից՝ (անձնաւորուած) Հայկ աստուածը, որը ի հարկէ այստեղ Խալդին էր:

Խուրրի-Միտաննիի կործանումից յետոյ՝ հարաւում վերապրած խուրրիների որոշ հատուածների դէպի հիւսիս շարժուելու եւ Ուրուատրիի (Արարադ Երկրի), Կաղմուխիի (Կաղմոսի տան) ու մօտակայ լեռնային շրջաններում իրենց ցեղակիցների հետ ամրանալու մասին աւանդութիւնը պահել է հետեւեալը.

«Զանզի անդ մոլեզմեալ այր իրաքանչիր սուր ի կողմ ընկերի իւրոյ ծգելով, ջանային տիրել ի վերայ միմսեանց, ուր պատահմունք ի դէպ եղանէին Բելայ՝ բռնանալ ունել զամենայն Երկիր: Ուստի ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրմենակ ի Բարելոնի, չու արարեալ զնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդուվը իւրով եւ դստեռօք եւ որդուց որդուվը, արամքք զօրաւորօք՝ բռուվ իրրեւ երեքհառեւր, եւ այլովք ընդունօք եւ եկօր յարեցելովք ի նա, եւ բոլոր աղիւի: Երթեալ ընակէ ի լեռնուտին միում ի դաշտավայրի, յորում սակաւը ի մարդկանէ յառաջազոյն ցրուելոցն դադարեալ ընակէին, զորս հնազանդ իւր արարեալ Հայկ, շինէ անդ սուն ընակութեան կալուածոց, եւ տայ ի ժառանգութիւն Կաղմեայ որդույ Արամանեկայ: Այս արդարացուցանէ զանզիր հին ասացեալ զրոյցս»<sup>2</sup>:

Սսուրական սեպագիր արձանագրութիւններից տեղեկանում ենք, որ ուրուատրիական (Արարադ Երկրի) այս միութեան դէմ ասպատակել են հզօրացած Ասորեստանի Սալմանասար Ա-ը (XIII դարի Ա կէս մ.թ.ա.), Թիգլաք-Պալասար Ա-ը (1100 մ.թ.ա), Աշուր-Բել-Կալան (1077-1060 մ.թ.ա), Աղադ-Նիրարի Բ-ը (911-890 մ.թ.ա) եւ այլ արքաներ: Այս ժամանակներին, կամ քիչ յետոյ (Ասորես-

<sup>1</sup> Գ. Սրուանձտեանց, «Գրոց ու բրոց», Պոլիս, 1919, էջ 31-32:

<sup>2</sup> Մովսէսի Խորենացույ, «Պատմութիւն հայոց», ի Վենետիկ, 1881, Ա-Ժ: Այս եւ յաջորդ ընդգծումները մերն են:

տանի այս ոտնձգութիւններից մղուած), Հայկը իր մի խոսք մարդկանցով Ուրուատրից (Արարադի երկրից) եւ շրջակայ երկրներից դէպի հիւսիս հեռանալու՝ դէպի Հարք շարժուելու եւ այդ շրջանում կենտրոն (ցեղերի միութեան կենտրոն) հաստատելու մասին պահած է հետեւեալը.

«Եւ ինքն իսաղայ, ասէ (*Մար Աբաս*), այլով աղխիմ ընդ արեւմուս հիւսիսոյ, զայ քնակէ ի բարձրավաճրակ դաշտի միում, եւ անուանէ զանուն լեռնադաշտակին Հարք ...: Ծիմէ եւ զիւղ մի եւ անուանէ յիւր անուն Հայկաշէն: Յիշի եւ աստածօր պատմոթիւնն. ի հարասոյ կողմանէ դաշտիս այսորիկ առ երկայնանստի միով լեռամբ բնակեալ յառաջագոյն առք սակաւք՝ ինքնակամ հնազանդել դիցազինն: Արդարացուցանէ եւ այս զասեցեալ զրոյցս անզիրս»<sup>1</sup>:

Ուզում ենք ուշադրութիւն հրամբել զրոյցի արտայայտման հեթանոսական-դիցարանական իրայատուկ ձեւին պատկանող հետեւեալ կարեւոր կէտի շուրջ. այնտեղ ուր Հայկն է (երկրի աստուածն է) տեղատրուում կամ տուն շինում, (նշանակում է) այնտեղ էլ պետութեան (ցեղային միութեան) կենտրոնն է հաստատուում: Երբ Հայկը իր աղխով հեռանում է մի տեղից եւ այլ տեղ է հաստատուում կամ իր համար զիւղ կամ տուն շինում, նշանակում է պետութեան կենտրոնն է շարժուում ու հաստատուում նոր տեղում: Իսկ երբ նրա որդիներից մէկն է զնում կամ շարժում իր մարդկանցով՝ դա արդէն պիտի համարել արշաւ կամ ծաւալում: Մենք տեսանք, որ Հայկը, իր մարդկանցով, հարաւից զալով Արարադ երկիր (Ուրուատրի)<sup>2</sup> բնակութիւն է հաստատուում լեռան ստորոտում: Սա Խուրրի-Միտանիի կործանումից յետոյ կազմաւրուած Ուրուատրիական միութիւնն էր, որը տեսեց մինչեւ Հայկի (ոչ թէ տեղի ամբողջ բնակիչների) այստեղից շարժուելը դէպի Հարք, ուր հաստատուում, զիւղ շինում եւ իր անունով Հայկաշէն է կոչում. իսկ այս վերջինը արդէն Ուրարտական պետութեան նոր կենտրոնի հիմնադրումն էր Վանայ լճի շուրջ ու Հարքում: Եւ մեզ յայտնի է, որ Արամէի մայրաքաղաք Արգասկուն գտնուում էր հենց Հարքում:

---

<sup>1</sup> Խորենացի, Ա-Ժ

Մեր ուշադրութիւնն է գրաւում նաև հետեւեալը. Հայկը դէպի Հարք շարժուելու առիթով Կաղմոսին տալիս է Արարարում իր շինած տան ժառանգութիւնը: Սա կարող է նշանակել, որ Ուրարտուի կենտրոնը հաստատելով Վանայ լճի շուրջ՝ Ուրուատրիական դիմադրութեան կենտրոնի դերն անցնում է Կաղմուխիին: Եւ յիրահ, Ասորեստանի արքաները, այս ժամանակաշրջանում, ընդհարուում են աւելի Կաղմուխիի հետ, եւ Ուրուատրի անունը էլ չի յիշում:

Ուրարտական պետութեան կազմաւրման սկզբնական շրջանում Ասորեստանի արքաները յաճախ շարունակում էին ասպատակել Հայկական լեռնաշխարհի հարաւային շրջանները (Մուսասիր, Խարբի, Կաղմուխի, Ալզի եւ այլն): Ի հարկէ այսպիսի դէպրում, բնականաբար, այս շրջանների դեկավարները տեղեկանալով ասսուրական արինարքու ու կողոպտիչ արքայի մօտենալու մասին՝ պիտի շտապէին ուրարտական արքայի օգնութիւնն ու պաշտպանութիւնը խնդրել: Ուրարտուն էլ մերք կարողանում էր հասնել օգնութեան, բայց ոչ միշտ, որովհետեւ ինքն էլ տակաւին ենթակայ էր Ասորեստանի ուազմասէր եւ ընչաքաղ արքաների ներքափանցմանը:

Սակայն երբ Ուրարտուն հզօրացաւ՝ կարողացաւ իր ակտի պաշտպանութեան տակ առնել այդ հարազատ շրջանների ցեղակից ժողովուրդներին: Մանաւանդ որ Ուրարտական իշխող հարստութիւնը կրօնապէս կապուած էր Մուսասիրի Խալդեան տաճարի հետ, որը գոյութիւն ունեցած պիտի լինի դեռ այն ժամանակներից, երբ նրանց նախնիները գտնուում էին Ուրուատրիական միութեան մէջ, ուր Հայկը տուն շինեց իր համար: Այս մասին զրոյցն ասում է.

«.....Ապա զօրաժողով լինի ի վերայ նորա տիտանեանն Բել՝ ամրոխի հետեւակ զօրաց, զայ հասանէ ի հիւսիսի յերկիրն Արարադայ մերձ ի տունն Կաղմեայ. փախստական լինի Կաղմու առ Հայկ, քաջընթացիկս առաջի իր առաքէ, զիտեա, ասէ, ով մեծդ դիւցազանց, զի դիմեալ զայ ի վերայ քո Բել յաւէրժիք քաջօք, եւ երկայնադիզօք հասակօք սկայիք մրցողօք: Եւ իմացեալ իմ զմերձ

*լինելն նորա ի տուն իմ, փախենայ, եւ զամ աւասիկ տագմապա: Արդ աճապարես խորհել որ ինչ գործելոց ես»<sup>1</sup>:*

Ուազմասէր Ասորեստանին չէր գոհացնում հիւսիսի լեռնային մերձ (վերոյիշեալ) շրջանների կողոպտումը եւ յաճախ համարձակում էր անգամ քափանցել Ուրարտուի կենտրոն եւ աւերածութիւններ անել: Այդպէս արել են Սալմանասար Գ-ը (859-824 մ.թ.ա.), Թիգլաթ-Պալասար Գ-ը եւ Սարգոն Բ-ը (722-705 մ.թ.ա.): Սակայն Ասորեստանը Ուրարտուի հզորութեան ժամանակ՝ յատկապէս Մենուայի, Արգիշտի Ա-ի եւ անգամ Սարդուրի Բ-ի ժամանակներին չէր համարձակում դիպչել Ուրարտուին եւ անգամ պարտուել էր հզօր Արգիշտի Ա-ից եւ իջել էր Ուրարտուի համեմատութեանը երկրորդական դիրքի:

«Իսկ Բելն յանդուգմ եւ անձոռնի զօրութեամբ ամբոխին՝ որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զար ի վայր հեղեալ, փութայր հասանել ի սահմանս քնակութեան Հայկին, ի սիրտ եւ ի մարմին վստահացեալ արանց զօրաւորաց: Աստ ուշին եւ խոհեմ սկայն, քաջազանգուրն եւ խայտակն, աճապարեալ հասաքէ զորդիս իր եւ զքոռունս, արս քաջս եւ աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս, եւ զայլս եւս որ ընդ իւրով ձեռամբ. հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն, մանունս ունելով ձկունս յինքեան: Եւ կոչեցեալ զգօրս իւր, ասէ ցնոսա. Յելանելն մեր հանդէայ ամբոխին Բելայ, դիպել ջանացուք տեղույն՝ ուր անցեալ կայ ի մէջ խոան քաջացն Բել. զի կամ մեռցուք, եւ աղիս մեր ի ծառայութիւն Բելայ կացցէ. կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ. ցրուեսցի ամրոխն, եւ մեր եղիցուք յաղթութիւն ստացեալք»<sup>2</sup>:

Ինչպէս պարզ երեւում է այս յիշատակութիւնից՝ երբ Հայկը տեղեկանում է Բելի իր դէմ սկսած արշակի մասին՝ քանակ է ժողովում ձուկ պարունակող աղի ծովակի (Վանայ ծովի) ավի մօտ՝ Ուրարտուի կենտրոնում եւ քաջալերում է նրանց ու քացատրում Բելի դէմ նրանց մղելիք պատերազմի կենսական (լինել եւ չլինելու) նշանակութիւնը: Ապա ճիշդ յիշողութիւն եղող այս պատմական վկայութիւնից հասկացում է, որ կողմերի ընդհարումները ոչ մէկին

<sup>1</sup> Խորենացի, Ա-Ժա:

<sup>2</sup> Խորենացի, նոյն տեղում:

որոշիչ (մէկը միսին ջնջող) յաղթութիւն չի տուել եւ ելքը մնացել է անորոշ: Ահա զրոյցի խօսքերը այս մասին.

«Եվ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմեամս, ահագին դղրդին ի վերայ երկրի առնելին շահատակելովն, եւ ահս պակուցանողս տարազոր յարձակմանցն զմիմեամբք արկանելին: Անդ ոչ սակաւք յերկոցունց կողմանց սկայիցն արք յաղթանդամք բերանոյ սրոյ դիակեալք, տապալ յերկիր կործանելին. եւ մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի: Զայսպիսի ամակնունելի դիակուած տարակուսանաց տեսեալ արքայն տիտանեան՝ զարհուրեցաւ, եւ ի նոյն բլուր ուստի էջն՝ վերջունեալ ելանէ»:

Արինարքու Ասորեստանը ձգուում էր իր շուրջ գտնուող երկրներին ենթարկել իրեն կամ կործանել: Բայց Ուրարտուն կարողացաւ հայկական հարուստ լեռնաշխարհի նկատմամբ Ասորեստանի նուաճողական ձգուումները չեզոքացնել: Որով նրա լիակատար անկախութիւն ու հզօրութիւն ձեռք բերելը, իենց Ասորեստանի աշքի առաջ կատարած ռազմական յաղթական արշաւանքներն ու ծաւալումները եւ մերք ասսուրական ուժերին յաղեկը եւ նրան (Արգիշտի Ա-ի ժամանակ ) երկրորդական դիրքի իշեցնելը պիտի ի հարկէ համարուէին Խալդի-Հայկի յաղթանակը Բելի (Ասորեստանի) դէմ: Ահա Բելի (Ասորեստանի) դէմ Խալդի-Հայկի յաղթանակի մասին սեպագրական (ուրարտական) մի ուղղակի կոնկրետ վկայութիւն.

<sup>D</sup>Haldini ստաբի masinie <sup>GIŠ</sup> sūrie karuni <sup>KUR</sup> Aššur <sup>LU</sup> huradie.<sup>1</sup>

«Խալդին դուրս եկաւ (արշայի) իր զէնքով, յաղթեց ասորեստանեան ճակատամարտում»:

Ինչպէս պարզ երեւում է այս վկայութիւնից, Ուրարտուն մի ժամանակ (Արգիշտի I-ի օրերին) Ասորեստանի դէմ հասել է յաղթանակի, ինչպէս Հայկը ճակատամարտում յաղթում է Բելին: Այստեղ կարեւորը նաև այն է (այս արձանագրութեան մէջ էլ պարզ տեսնում ենք), որ Ասորեստանին յաղթողը Խալդի աստուածն է իր զէնքով: Սա միանգամայն հաստատում է, թէ մեր զրոյցի դիցաբանական ոճը (որ յաղթողը Հայկն է) իր ժամանակի՝ հեթանոսական

<sup>1</sup> Ուրարտական արձանագրութեան այս հաստուածը բերում ենք Արգիշտի Ա-ի արձանագրութիւնից. տե՛ս Գ. Մելիքիշվիլի, YKN (ոռուերէն), էջ 218:

հաւատքի հետ կապուած պատմագրութեան ընդունուած ոճն էր, եւ միաժամանակ աներկրայօրէն ապացուցում է, որ Հայկը Խալդի՛ւ:

Այնուհետեւ զրոյցը խօսում է այն մասին, որ Հայկի որդիներ Խոռն ու Մանաւազը մնում են Հարքում: Խոռը (Եւ Հարքի Խորիս-բունիները), որ մեր կարծիքով պահում է Խորքի անուան յիշատակը, բազմանում է հիւսիսում (վերեւի Դայաէնի-Տայրը արդէն խորրիխական էր), իսկ Մանաւազը (Հարքում Մանազկերտի տէրը), որը երեւի Ուրարտուի մեծ արքայ Մենուան է, ժառանգում է Հարքը: Ահա զրոյցի խօսքերը այս մասին.

«*Խսկ նորա (Արամանեակ) թողեալ երկուս յեղքարց իւրոց զիսոս եւ զՄանաւազ՝ ամենայն աղիսին իւրեանց ի կոչեցեալն Հարք, եւ զորդի Մանաւազայ զԲազ. յորոց Մանաւազ ժառանգէ զՀարք»:*

Իսկ Մենուայի ու Արգիշտի Ա-ի ժամանակներին Ուրարտուն արդէն տարածում էր Արաքսի հոսանքով դէախ արեւելք՝ ընդգրկելով Ծիրակի դաշտն ու Արագած լեռը: Ավանդութիւնն այս մասին պահել է հետեւեալը.

«*Խսկ Արմենակայ առեալ զամենայն բազմութիւնն, խաղայ յարեւելս հիւսիսոյ, եւ երթեալ իջանէ ի խորին դաշտավայր մի ի բարձրագագարանց պարսպեալ լերանց, զետոց կարկաչասահից յարեւմտից ընդ մէջ անցանելով.... : Այլ հարաւայինն արեգակնածնմ լեառն՝ սպիտակափառ ունելով զազարն, ուղղորդ ի յերկրէ բուսեալ, երեքօրէի, որպէս ասաց ոմն ի մերոց, քաջազօտնոյ առն շրջապատեալ ճանապարհու.... : Յայսմ խորութեան դաշտի բնակեալ Արամենակայ, շինէ զմասն ինչ ի հիւսիսոյ կողմանէ դաշտին, եւ զոտն լերինն ի նոյն կողմանէ, եւ զլեառնն՝ անուանէ յանզագոյն յիր անունն Արագած, եւ զկալուածսն՝ Ոտն Արագածու»<sup>1</sup>:*

Սեզ յայտնի է, որ այնուհետեւ Արգիշտի Ա-ը գրաւելով Արարատեան դաշտը՝ Արաքսի ափին կառուցում է քաղաք եւ իր անունով կոչում է Արգիշտիխինիլի (Արմալիր): Աւանդութիւնն այս մասին ասում է.

<sup>1</sup> Խորենացի, Ա-ժը:

«Այս Արմենակ կեցեալ ամս, ծնաւ զԱրմայիս. եւ յետոյ կեցեալ ամս շատ, մեռաւ: Իսկ որդի նորա Արմայիս շինէ իր տուն բնակութեան ի վերայ ուստոյ միոյ առ եզերք գետոյն, եւ անուանէ զնա յիւր անունն Արմայիր...»:

Արգիշտիխնիլին (Արմայիրը) կառուցած արքայ Արգիշտի Ա-ը, ինչպէս տեսնում ենք, զրոյցում երեւում է Արմայիս (Արամայիս) անունով, որն իր կառուցած քաղաքը իր անունով կոչում է Արմայիր (Արմայիսի՝ Արգիշտին լինելուն մասին մանրամասնօրէն կը խօսուի յաջորդ գլխում):

Ուրարտական արձանագրութիւններից գիտենք, որ Արգիշտի Ա-ը եւ նրա յաջորդները շարունակեցին իրենց նուաճումները դէպի արեւելք ու հիւսիս-արեւելք եւ Ուրարտուին միացուեցին Ուեղութիւնիի Ֆեղերացիայի երկրները (Կոտայքն ու շրջակայ երկրները), Գեղարքունի լեռներկիրը, ինչպէս եւ Սեւանայ լճի ու Սիւնիքի շրջանները: Այս ծաւալումները նոյնպէս իրենց ճշգրիտ արտայայտութիւնն են զտել զրոյցում, ուր յիշատակութիւններ են պահպանուած, որ Հայկի սերունդները այնուհետեւ ծաւալուեցին դէպի Գեղամայ ծովն ու լեռները, շենացրին Գեղարքունին<sup>1</sup> եւ իրացրին Սիւնիքը: Ահա այս յիշատակութիւնները:

«Իսկ Գեղամ յետ ամաց անցանելոյ ծնաւ զշարմա յԱրմայիր. եւ քողեալ զշարմա յԱրմայիր՝ հանդերձ որդուվը բնակել, եւ ինքն զնաց զմես լերամբն արեւելեան հիւսիսյ, յեզր ծովակի միոյ: Շինէ զեզր ծովակին, եւ քողու անդ բնակիչս. եւ յիւր անուն եւ սա զլեառն անուանէ Գեղ, եւ զշէնսմ՝ Գեղարքունի, որով կոչի եւ ծովն: Ասս ծնաւ զորդի իր զՄիսակ, զայր սէզ եւ անձնեայ, բարեգեղ, կորուլարան ու զեղեցկաղեղն: Մսա զմեծ մասն յրնչից իրոյ տուեալ, եւ ծառայս՝ անձինս բազումս, սահմանս հատունէ նմա ժառանգութեան ի ծովէն ընդ արեւելս մինչեւ ցղաշտ մի, ուր զետն Երասխ հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխմաձիզս եւ նեղս, ահազին դընդընչմամբ իջանէ ի դաշտ: Ասս բնա-

<sup>1</sup>Մ.Գ.Պետրոսեանը Գեղարքունին նոյնացնում է Ուրարտական ժամանակների Uelikuni անուան հետ. տես «Պատմաբանասիրական հանդէս», Երեւան, 1976, նո. 1, էջ 189: Հաւանաբար սերդա ցեղանունն էլ տուել է Գեղարդ - Գեղարդ:

*կեալ Սիսակ, լնու շինութեամք զսահման բնակութեան իւրոյ. եւ զաշխարհն կոչէ իւրով անուամք Սիւնիք...»<sup>1</sup>:*

Այսպիսով պարզ տեսնում ենք, որ Հայկի ու Բելի գրոյցը, սկզբից մինչեւ այստեղ, աւանդական (հաւանարար պատմական գրաւոր ճշգրիտ տուեալներից ազդուած) յիշողութիւններ է պահում հայ ժողովրդի կեանքի վաղ շրջանում (Նինուէի՝ Ասորեստանի մայրաքաղաք լինելուց առաջ, զրոյցի լեզուով՝ «մինչեւ Նինոսի թագաւորելն Ասորեստանի եւ Նինուէի վրայ») տեղի ունեցած ուազմաքաղաքական կարեւոր իրադարձութիւնների մասին՝ նաիրեան ցեղերի մեծ միաւորումների, պետականութեան սաղմնաւորման ու կազմաւորման ընթացքում տեղի ունեցած պատմական մեծ շարժումների ու դէպքերի մասին: Տեսանք, որ Հայկի ու նրա Արմանեակ որդու սերունդները, սեմական հարաւում տեղի ունեցած ուազմական անդիմադրելի դէպքերի պատճառով, այդ շրջաններից (զրոյցում Բարելոնից) շարժուել-նահանջել են դէպի Ուրուատրի-Արարադ երկրի շրջանները: Այստեղ տեղի ցեղակիցների հետ շինարարութիւն կատարելով՝ ամրացել են (Ուրուատրիական միութեան կազմաւորում), ապա նրանցից կարեւոր հատուածներ յետագայում շարժուել են աւելի հիւսիս ու կենտրոնացել Հարքում ու աղի ծովակի՝ Վանայ լճի շրջանում (Ուրարտական կենտրոնի հաստատում): տարածուելով Շիրակի, Արարատեան դաշտի, Սեւանայ լճի շրջանները ու Սիւնիք:

Թէեւ զրոյցում սեմական աշխարհը ներկայանում է Բելի անունով, բայց, բարեկախտաբար, աւանդութիւնը Արայի (Արայեան Արայի) հատուածում պահել է ասորեստանեան կոնկրետ արքայանուն, որը մեզ տալիս է նաև ճշգրիտ թուազրութիւն. դա Զամես անունն է: Խորենացուց թերում ենք այդ հատուածը:

«Այս Անուշատան բաւական ժամանակ արհամարհութիւն կրեալ ի Զամեսեայ, տուայտի ի դրան արքունի. իսկ օգմեալ ի բարեկամաց՝ շահի զմասն ինչ աշխարհիս՝ հարկահանութեամք խնամել զկնի ապա եւ զրոյորս...»<sup>2</sup>:

<sup>1</sup> Խորենացի, Ա-ժք:

<sup>2</sup> Խորենացի, Ա-ի:

Ասորեստանի Զամես արքայի անունը յիշուած է նաև Շամիրամի եւ Արայի կապակցութեամբ: Ահա այդ հասուածը:

«Արդ յետմահուանն Շամիրամայ ի Զամասեսայ որդոյ իւրմէ, որ է Նիմուս, որ եղեւ յետ սպանանելոյն զԱրայն...»<sup>1</sup>:

Այս Զամեսը (կամ Զամասը) Շամիրամի ամուսին (թէեւ զրոյցում համարուել է որդին) Շամս (Շամաշն) է՝ Ասորեստանի արքայ Շամսի-Աղադ V-ը, ժամանակակիցը Իշպուխնի-Անուշաւանի, որոնց մասին դեռ հաճգամանօրէն կը խօսենք յաջորդ գլխում: Այստեղ Զամես անուան յիշատակութիւնը եւս մի կարեւոր ու կոնկրետ վկայութիւն է, որ Հայկ եւ Բել զրոյցը կապուած է Ասորեստանի եւ Ուրարտուի ժամանակուայ դէաքերի հետ:

Այսպիսով տեսնում ենք, որ զրոյցը (Այստեղ պատմագրական հաւաստի ու զրաւոր աղբիւրների՝ ինչպէս Նիմուլի քաղդէական մատեանի կոնկրետ տուեալները խառնուած են աւանդութեան հետ Մար Արայի մօտ) պահել է յայտնի անուններ, որոնք տալիս են որոշակի թուագրութիւն եւ կասկած չեն թողնում, որ մեր զրոյցը Ուրարտուի պատմութիւնն է նրա սաղմնատրման շրջանից սկսած:

Ի հարկէ դեռ այս բոլորը չեն: Արամի, որ Ուրարտուի Արամէն է, նոյնպէս կոնկրետ անձնաւորութիւն է: Զրոյցում խօսուում է Արամի ազգային մեծ արժեքի ու արժանիքների մասին, որպէս առանձին յիշատակութեան արժանի հայ առաջնորդ: Նրա մասին պահուած տեղեկութիւնների մէջ խտացուած ու միացուած են ոչ թէ միայն Ուրարտուի առաջին մեծ արքայ Արամէի՝ որպէս հզօր պետականութեան հիմնադրի նահապետական հանգամանքը, այլ եւ Ուրարտուի հզօր ու աշխարհակալ արքաների նուաճումների արձագանքները: Հետեւաբար Արամի անուան կցուած իրադարձութիւնների կարեւոր մասը վերաբերում է Ուրարտուին ընդհանրապէս: Սա քնական է, քանի որ Արամէն է հիմնադիրը այդ պետութեան հզօրութեան:

Զրոյցում խօսուում է արեւելքում՝ մեղացիների երկրում կատարուած նուաճումների մասին: Մենք արդէն ուրարտական ար-

<sup>1</sup> Խորենացի, Ա-Ժ:

ձանագրութիւններից զիտենք, որ Իշպուհնին, Սենուան, Արգիշտին եւ ուրարտական այլ արքաներ արշաւել են Մարտաստանի կողմերը. գրաւել են Ուրմիա լճի ու Մաննայի շրջանները, Պարսկաստանի թաշա-ի մի շարք քաղաքներն ու բերդերը, եւ դա էլ Խորենացու ասածի պէս Նինուէի՝ Ասորեստանի մայրաքաղաքը լինելուց առաջ: Խորենացին գրում է.

«Այս Արամ, սակաւոք ամօր յառաջ քանի զտիրելն Նինոսի Ասորեստաննեաց եւ Նինուէի, ճեղեալ յազգացն՝ որ շուրջ զիրեան, ժողովէ զրազմութիւն ընդանի արանց քաջաց եւ աղեղնաւրաց....: Պատահէ Սեղացոցն երիտասարդաց, որոց առաջնորդ էր Նինոսի քար ոմն ասացեալ Մաղէս, այր հայրար եւ պատերազմասէր, որ պէս ցուցանէ նոյն ինքն պատմազիրն, յեզերս սահմանացն հայոց....: Որում յանկարծօրէն ի վերայ հասեալ Արամ յառաջ քանի զծագել արեգականն սատակեաց զրազմութիւն ամրոխին. եւ զնոյն ինքն զՆիրարն կոչեցեալ Մաղէս ձերքակալ արարեալ ածէ յԱրմաիր: ...եւ զաշխարհն նորա մինչեւ ցլեառն անուաննեալ Զարասպ ի ծառայութիւն հարկի կալաւ մինչեւ զրազաւրութիւնն Նինոսի ի վերայ Ասորեստանի եւ Նինուէի»<sup>1</sup>:

Հարաւում Ասորեստանի ձեռքից հողեր գրաւելու մասին բերած տեղեկութիւնները նոյնպէս պատմական իրողութիւններ են: Սեզ յայտնի է, որ ուրարտական հզօր արքաներն ազատազրել, գրաւել ու որոշ ժամանակ իրենց ձեռքում են պահել Ուրմիա լճից մինչեւ Եփրատ տարածուող (Մաննա, Մուսասիր, Խորբուշկիա, Ուրուատրի, Կաղմուխի, Ալզի) երկրները, որոնք մերթ ենթակայ ու հարկատու են եղել Ասորեստանին: Նրանք անզամ իջել են Ասորեստանի դաշտավայրերն ու հողեր գրաւել: Արգիշտի Ա-ը գրում է թէ նուաճել է Ասորեստանի երկրներին: Արգիշտի Ա-ի ժամանակ Ասորեստանը ապրել է անկման մի շրջան եւ իջել է Ուրարտուի համեմատութեամբ երկրորդական դիրքի: Խորենացին գրում է.

«Նոյն այս Արամ, յետ վճարելոյ ծակատոյն՝ որ ընդ արեւելեայս, խաղայ նոյն զօրութեամբ զկողմամբ Ասորեստանի. զտանէ եւ անդ զոմն ապականիչ երկրին իւրոյ՝ չորիք բիւրովք վառե-

---

<sup>1</sup> Խորենացի, Ա-ժգ:

*լովք հետեւակօր, եւ իինգ հազար հեծելազօրու, Բարշամ անուն՝ յազգէ սկայիցն. որոյ սաստկագոյն նեղեալ հարկաց խսոութեամբ՝ անապատ զրովանդակ շրջակայն իր առներ: Սմա ճակատու պատերազմի ի դիմի հարեալ Արամ, հալածական ընդ մէջ Կորրուացի դաշտն Ասորեստանի արկանէ, զրազումն ի նոցանէ սատակելով....: Իսկ մեծ մասն դաշտացն Ասորեստանի կալաւ ի ծառայութեան Հարկի Արամ բազում ժամանակս»<sup>1</sup>:*

Սրեւմուտքում մինչեւ Կապարովկիա հասնելու մասին բերուած տեղեկութիւնները նոյնպէս պատմական են. մեզ յայտնի է, որ Սենուան ու Արգիշտի Ա-ը հասել են Սելիդու (Սալաթիա) եւ յաղթական պատերազմներ մղել այդտեղի արքաների դէմ: Սենուան, Արգիշտի Ա-ը եւ Ռուսա Բ-ը յաղթական պատերազմներ են մղել խեթերի դէմ: Արգիշտին զրում է, թէ Ծովանի եւ Խարէ երկրների զինուորներ է բերել ու բնակեցրել իր կառուցած Էրեբունի ամրոց-քաղաքում: Ահա, թէ ինչ է պահում զրոյցն այս մասին:

*«Այլ որ ինչ յարեւմուս կոյս ընդ Տիտանեանցն է սորա զործ քաջութեան՝ ասել կայ մեզ առաջի: Ասսա յարեւմուս շարժեալ ի վերայ առաջնոյն շորիոք բիւրովք հետեւակաւ զօրու, եւ երկու հազար հեծելովք հասանէ ի կողման Կապարովկացոց, ի տեղի մի՝ որ այժմ ասի Կեսարիա: ... պատահէ նմա Պայասիս Քայաղեայ տիտանեան՝ պատերազմաւ, որ բռնացեալ ունէր զմիջոց երկուց ծովոց մեծամեծաց, զՊոնդուն եւ զՈվկիանու: Որում ի դիմի հարեալ վանէ, փախստական արկանելով...»<sup>2</sup>:*

Զրոյցում Արամը (Արամէն) Հայկի (Խալդիի) սերնդից է, այսինքն՝ հայ է, մանաւանդ Հայկի որդի Արամանեակի սերնդից: Խորենացին նրան ուղղակի «Հայկեան Արամ» է կոչում, եւ զրում է, թէ նա այդ երկրի (Կապարովկիայի՝ Կեսարիայի շրջանի) բնակիչներին հրամայել է, որ հայերէն խօսել սովորեն: Սա բանահիւսութեան յատուկ՝ արտայայտման ժողովրդական ձեւ է ասելու, որ այդ շրջանի բնակիչները խօսում էին հայերէն, որով բաղկացած էին արմէններից («քայց հրաման տայ բնակչաց աշխարհին (Կապարովկացոց)՝ ուսանել զիսօս եւ զլեզուս հայկական. վասն որոյ

<sup>1</sup> Խորենացի, Ա-ժդ:

<sup>2</sup> Նոյն տեղում:

մինչեւ ցայս օր ժամանակի անուանեն զկղիմայն զայն Պռոտին  
Արմենիան, որ բարգմանի Առաջին Հայր»<sup>1</sup>:

Փաւստոս Բուզանդը այս շրջանի մասին պահել է հետեւեալ յիշողութիւնը. «Պապ քազատրը... պատգամատրներ էր ուղարկում յունաց քազատրի մօտ, թէ Կեսարիայի հետ ուրիշ տասը քաղաք-ները մերն են եղել, ետ սուր, Ուրիշ (Ուրֆա) քաղաքն էլ մեր նախ-նիքն են շինել...»<sup>2</sup>: Սա ի հարկէ նշանակում էր, թէ այս շրջանների բնակիչները հայեր էին: Միաժամանակ մեզ յայտնի է, թէ Ուրիշն ժամանակին եղել է խուրբիների մայրաքաղաքը, որի կառուցողնե-րին՝ խուրբիներին իրաւացիօրէն համարում է հայերի նախնի-ները:

Մեր ուսումնասիրութիւնը պարզում է, որ Մար Աբայի մա-տեանում Հայկի ու Բելի մասին կար երկու վէայ (նոյն վէայի երկու պատումը): Երեւի առաջինը կարծ էր ու ամփոփ, իսկ երկրորդը՝ աւելի ընդարձակ ու լրի: Թէեւ երկու վէաերն էլ էութեամբ նոյն զրոյցն են եղել, սակայն այստեղ յարմարութեան համար եւ նկա-տի առնելով երկուսի միջև եղած որոշ տարբերութիւնները, պայ-մանականօրէն կոչում ենք երկու վէա:

Բարեբախտաբար թէ՛ Խորենացին եւ թէ Անանունը (Սեբեոսի գորի Ա ու Բ դպրութիւնների անյայտ հեղինակը), իրարից անկախ, քաղուածք են արել երկու վէաերից էլ: Սակայն դժբախտաբար եր-կու մատենագիրներն էլ չեն վերցրել Մար Աբայի մօտ եղածը ամ-բողջութեամբ, այլ միայն այն, ինչ իրենց համար կարեւոր են հա-մարել («քազում ինչ զկնի այսորիկ պատմի ի մատենին, այլ մեք, որ ինչ պիտոյն մերոյ հաւաքման է, շարեսցուք»)<sup>3</sup>:

Թէեւ երկու մատենագիրներն էլ Մար Աբայի պատմութեան որոշ տեղերից վերցրել են միւնանյն հատուածները, բայց իրա-քանչիւրը քաղել է նաեւ մասեր, որ միւսը լքել է, ուստի որոշ հարցե-րում լրացնում են իրար:

<sup>1</sup> Խորենացի, Ա-ժդ:

<sup>2</sup> Փաւստոս Բուզանդ, «Պատմութիւն Հայոց», Երեւան, 1968, էջ 270 (կամ հինգե-րորդ դպրութիւն, գլուխ ԼԲ):

<sup>3</sup> Խորենացի, Ա-ժբ:

Խորենացին, առանց փոխելու վէպերի հիմնական բովանդակութիւնը, ազատ խմբագութեամբ, կապել է իրար հետ որպէս մեկը միւսի շարունակութիւնը: Նրա մօտ առաջին վէպն սկսում է «Ահեղք եւ երեւելիք առաջինք ի դիցն...» խօսքով (Ա-Թ)՝ գրադեցնելով ամբողջ Ժ գլուխը: Իսկ երկրորդ վէպը սկսում է «Յաղազ պատերազմին եւ մահուանն Բելայ» վերնագրով (Ա-Ժա) եւ վերջանում է Հայկի մահով:

Անանունի մօտ առաջին վէպը սկսում է «քայց ես նախ առաջին զվէպս յահեղն արքայի եւ յարի այրն սկսայց ասել...» խօսքով (Ա), իսկ երկրորդը՝ «Յայնմ ժամանակի թագաւորեաց ի Բարելոն որսորդ հսկայ» խօսքով եւ վերջանում է Հայկի մահով:

Երկու վէպ լինելը պարզօրէն յայտնի է Անանունի մօտ, որը չի աշխատել Խորենացու պէս երկուսը իրար հետ զողել. դրանք մնում են գրեթէ անջատ: Առաջին վէպի մէջ Հայկի եւ Բելի մասին երկար խօսելուց յետոյ՝ երկրորդը սկսում է այնպէս կարծես առաջին անգամ է յիշում Հայկին («... Բայց մի ոմն Հայկ անուն...»): Անանունի առաջին վէպում կան հատուածներ, որոնք գրեթէ նման են իր բերած երկրորդ վէպի համապատասխան հատուածներին: Բերում ենք միայն երկու օրինակ. առաջին վէպի «Ապա յայնմ ժամանակի Հայկն Արեթածին ոչ կամեցաւ հնազանդել ի ծառայութիւն Բելայ արքայի. արհամարհեաց զնա Սստուած կոչել» խօսքերը նման են երկրորդ վէպի հետեւեալ խօսքերին. «...քայց մի ոմն Հայկ անուն, նահապետ ազգացն, ոչ հնազանդեցաւ ի ծառայութիւն նորա (Բելի) եւ որ կանգներ ի տաճ իրում զպատկեր նորա, եւ ոչ մեծարէր զնա աստուածարէն շրով»: Առաջին վէպի «Եւ ապա ետ զնա Հայկն կալուած ժառանգութեան Կաղմեայ բողին իրում որդույն Արամենակայ» խօսքերը նման են երկրորդի հետեւեալ խօսքերին. «Եւ ի ժամանակի մահուան իրոյ ետ զնա կալուած ժառանգութեան Կաղմեայ բողին իրում, որդույն Արամենակայ...»:

Ինչպէս է պատահել, որ Մար Արայի մատեանում Հայկի ու Բելի մասին բերուել է իրար հետեւից երկու վէպ (երկու պատում): Խորենացու եւ Անանունի մօտ ոչ մի խօսք չկայ երկու վէպ լինելու մասին: Ո՞րն է հիմնականը: Մենք մանրամասնօրէն քննեցինք երկու վէպերը (Խորենացու ու Անանունի քաղածներով), նրանց բո-

վանդակութիւնների մէջ եղած նմանութիւններն ու տարբերութիւնները, եւ եկանք այս հետեւութեան, որ Երկրորդ վեպն է խևական, հիմնական գրոյցը, որ Հայկի ու Բելի պատմութիւնը տրուում է անեղծ, մասրամասն ու լրի՝ իր բնական տրամաբանական ամբողջութեամբ։ Իսկ առաջին վեպը շարադրուած է Մար Արայի կողմից (Երկրորդ վեպից՝ բուն գրոյցից մասեր վերցնելով) որպէս առաջարան կամ որպէս սկիզբ հայոց պատմութեան, եւ դա արել է հետեւալ պատճառով։

Քրիստոնէութեան սկզբի (մոլեռանդ) օրերին, ջերմեռանդ քրիստոնէուայ պատմագիրների համոզմամբ, իին ազգերի ծագումը պէտք է կապ ունեցած լինէր (Սուրբ Գրքում նշուած) Բարելոնի աշտարակաշինութեան հետ, որի ժամանակ (ըստ Ս. Գրքի) լեզուները եւ որով ազգերը բաժանում էին ստացել։ Հայ ազգն էլ լինելով մի իին ազգ՝ նրա պատմութիւնն էլ պէտք է սկսէր Բարելոնի աշտարակաշինութիւնից։ Ձեռք բերելով Հայկի ու Բելի գրոյցը եւ Հայկին ընդունելով որպէս հայերի նահապէտ՝ Մար Արան մտածել է, թէ նա, որ իր հետեւորդներով եկել է հարակից, պէտք է մասնակցած լինի Բարելոնի աշտարակաշինութեան գործին։ Եւ քանի որ Բելը Բարելոնի աստուածն է կամ քագաւորը (Բարելոնի քագաւորներից ոմանք կոչուել են Բել), ապա նրա կողմից ամբողջ Երկրի գրաւուելը, իսկ Հայկի էլ նրան չհնազանդելով դիմադրելը պէտք է կատարուած լինէին աշտարակաշինութեան կործանումից յետոյ առաջացած խառնակութեան ժամանակներին։ Ուստի գտնելով քանալին՝ բուն գրոյցից (Երկրորդ վեպից) վերցնում է անհրաժեշտ տուեալներ (հասուածներ) եւ դրանք կապելով աշտարակաշինութեան հետ, որի մասին ոչ մի խօսք չկայ Երկրորդ վեպում, շարադրում է հայոց պատմութեան սկզբնաւորութիւնը՝ առաջին վեպը։

Բայց ասորի կղերական Մար Արան ի՞նչ շահ ունէր հայերի նահապէտին Բարելոնի աշտարակաշինութեան մասնակցողի պատիւը շնորհելու մէջ։ Միթէ՞ նա հայկական հայրենասիրութիւն էր զգում։ *Մար Արայ* տերմինը ասորերէն նշանակում է «*Սուրբ հայր*»։ Նա ասորի բարձրաստիճան կղերական էր, նա ապրել էր մեր գրերի գիտից առաջ, այն ժամանակներին, երբ հայ եկեղեցին գտնուում էր բարձրաստիճան ասորի կղերականների տնօրինու-

թեան տակ: Սրանք հակամարտութիւնների մէջ էին գտնում հայ կղերականների հետ, որոնցից ոմանք յունական (քիւզանդական) օրիէնտացիա ունէին: Պարսկական կառավարութիւնը քաջալերում էր ասորի կղերի պահպանողական ներկայութիւնը: Հայկական եկեղեցիներում ժամերգութիւնը կատարում էր ասորական լեզուվ: Այդպիսի ժամանակներում ու պայմաններում՝ դժուար թէ ասորի բարձրաստիճան կղերական Մար Արան առանց թելադրիչ ու համոզիչ տուեալներ ունենալու՝ կամայականորէն (հայկական ազգասիրութեամբ) մտածած ու ցանկացած լինի հայերի նահապետին Բարելոնի աշտարակաշինութեան մասնակցողի (Սուրբ Գրքի հետ առնչուած լինելու) սրբազն պատիր շնորհել: Ուստի աւելի քան հաւանական է, որ նա աչքի առաջ ունեցել է գրաւոր կամ աւանդական այլ աղբիւրներ, որոնք փաստացի ու թելադրիչ տուեալներ են պարունակած եղել հայ առաջնորդին Բարելոնի արքայի դէմ կատարուած մի որեւէ դիմադրութեան հետ առնչող:

Ի հարկէ այդպիսի աղբիր կարող էր լինել (ըստ Դարեհի Բեհիստունեան արձանագրութեան) Բարելոնում օրուայ արքայի իշխանութեան դէմ ապստամբած ու դիմադրած արմին (հայ) Արախայի՝ Խալդիտայի որդու պատմութիւնը: Ահա այդ արձանագրութեան մեջ հետաքրքրող մասի թարգմանութիւնը.

«Այսպէս է ասում Դարեհ արքան. - Երբ ես Պարսկաստանում ու Մարաստանում էի, բարեկացիները երկրորդ անգամ ապստամբեցին իմ դէմ. մի մարդ՝ Արախան անունով մի արմին, Խալդիտայի որդին, ապստամբեց Բարելոնում: Դուրակա կոչուած մի վայրում նա ստեց ժողովրդին (ասելով). «Ես Նարուգողոնոսոր եմ՝ Նարոնիդոսի որդին»: Ապա բարեկան ժողովուրդը ապստամբեց իմ դէմ եւ Արախայի կողմը բռնեց: Նա գրաւեց Բարելոնը. նա դարձաւ բազաւոր Բարելոնում»: Այնուհետեւ Դարեհը գրում է, թէ բանակ է ուղարկել ապստամբ Արախային պատժելու համար: Ուստի Արախան էր հսկաների մէջ այն քաջը, որ Բարելոնում հանդէս էր եկել այն ժամանակներին, երբ Դարեհի տիրապետութեան տակ (օրուայ Բելի բռնութեան տակ) ճնշում էին հսկաների երկրներ հանդիսացած Բարելոնը, Ասորեստանն ու Ուրարտոն:

Այս տեղեկութիւնը երեւի գրաւոր կամ աւանդական ձեւով հասել էր Մար Աքային, որը աւելի մօս էր այդ դեպքերին քան մեզ: Արախան Խալդիտայի որդին էր: Հետեւաբար գրաւոր յիշատակարաններում, յատկապէս դիցարանական բնոյք ստացած աւանդական գրոյցներում, Արախան պիտի համարուէր Խալդի-Հայկի որդին եւ նոյնացուէր Հայկի որդի Արամանեակի հետ: Սրանից ի հարկէ աւանդութիւնը կամ Մար Աքան պիտի եզրակացրած լինի, որ Արախա-Արամանեակի հայր Խալդի-Հայկն էլ եղել է Բարելոնում՝ եւ դա էլ աշտարակաշինութեան ժամանակ՝ ուրիշ հին ազգերի նահապետների հետ: Ուրեմն նա էր ապստամբել ու դիմադրել բոլոր հսկաների վրայ բռնացող Բեկի դէմ եւ չհնազարուելով նրան եկել էր Արարադի կողմերը Արամանեակ որդու հետ: Ահա գրոյցի խօսքերը այս մասին.

«Այս, ասէ (Մար Աքաս), Հայկ՝ գեղապատշաճ եւ անձնեայ, քաջազանգուր, խայտակն եւ հաստարազուկ. սա ի մէջ սկայիցն քաջ եւ երեւելի լեալ, ընդդիմակաց ամենեցուն, որը ամրառնային զձեռն՝ միապետել ի վերայ ամենայն սկայիցն եւ դիցազանց: Սա խրոխտացեալ ամքարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ....: Ուր պատահմունք ի դէպ ելանէին Բելայ՝ բռնանալ ունել զամենայն երկիր: Որում ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնանելոյ զորդի իր զԱրմենակ ի Բարելոնի չու արարեալ զնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսյ, հանդերձ որդուվք իւրովք...»<sup>1</sup>:

Խորենացու պահած վկայութեամբ Հայկը կոչուել է «Յապետութեանն Հայկ»<sup>2</sup>: Յապետոս անունը գալիս է հեթանոսական ժամանակներից՝ քրիստոնէական Ս. Գրքից շատ առաջ. այն կրակի աստուած Հեփեստոսն էր: Խորենացու ասելով՝ Մար Աքայի մատեանի սկզբում նշուած են եղել երեք աստուածութիւններ՝ նրանց սերունդներով միասին. երեքից մէկը եղել է Յապետութեն («Այս մատեան հրամանաւ Աղեքսանդրի ի քաղդէացւոց քարրառոյ փոխեալ ի յոյնն, որ ունի զրուն հնոց եւ զնախնեացն քանս: Որոյ սկիզբն լեալ ասէ զԶրուանն եւ զՅապետութէ,

<sup>1</sup> Խորենացի, Ա-Ժ:

<sup>2</sup> Խորենացի, Ա-Թ:

*յորում եւ զիրաքանչիր որ ի ծննդոց երից նախարարականացս  
այսոցիկ արանց՝ զար ամ և ամիս կարգաւ շարադասեալ...:  
Յայսմ մատենէ Մար Արա Կատինայ զմերոյ ազգիս միայն հա-  
մեալ զպատմոթին հաւաստի...»<sup>1</sup>:*

Խորենացին Մար Արայի այս մատեանից քաղելով՝ Հայկին  
Յապետոսքեան է կոչում: Նա միաժամանակ գիտէ, որ Յապետո-  
սը (Եփեստոսը) առնչուած է կրակի հետ կամ կրակի աստուած է  
(«Զի առաջին ասեն իլրեանց մարդ լեալ զԵփետոս եւ գտակ  
հրոյ») (Ա-է):

Հայաստանում հելլենիզմի (Արտաշեսեանների) ժամանակ  
կարող էին կրակի աստծուն կոչել Հեփետոս: Ուստի պիտի ընդու-  
նել, որ «Յապետոսքեան Հայկ» կապակցութիւնը նշանակում էր  
«Կրակեան Հայկ», «Կրակի որդի կամ կրակի աստուած Հայկ»: Ու  
ի հարկէ նախրի երկրի (Ուրուատրի-Ուրարտուի) «Կրակի Երկրի»  
աստուածը պիտի լինէր կրակի աստուած: Արդէն մեզ յայտնի է, որ  
Խալդին կրակի աստուած էր<sup>2</sup>: Երեբունիի Խալդեան տաճարի  
որմնանկարներում Խալդին երեւում է առհιծի վրայ, որը խոր-  
հրդանիշն է կրակի-արեւի աստուածութեան: Այստեղ էլ Խալդին,  
ինչպէս Հայկը, անձնաւորուած է երեւում:

Յայտնի է, որ կրակի աստուած Հայկի որդին էր Արմենակը  
(Արմանեակը), որը Էպոնիմն էր արմեն (Արմանի) ժողովրդի, եւ որը  
նշանակում էր «արեւ-կրակի որդիներ, արեւորդիներ»:

Ոմանք մոռանալով Հայկի աստուած լինելը, նրա մասին ա-  
ւանդութեան պահած բնութագրմանը տալիս էին կամայական  
մեկնութիւն. Հայկի «քաջազանգուր ու խայտակն» բնութագրումից  
(արմենների գաղթի տեսարանները) հանում էին հայերի գանգուր-  
շիկահեր (երոպական տիպ) լինելը: Մինչդեռ այդ տերմինները  
վերաբերում էին կրակին՝ կրակի աստծուն: Կրակի աստուածը  
գանգրահեր ու խայտակն էր, ինչպէս Վահագնի ծննդի մասին էին  
երգում «Նա հոր հեր ունէր եւ աշկունքն էին արեգակունք»:

---


<sup>1</sup> Մ. Գավուրճեան, նշուած գիրքը, էջ 207-215:



Արեւի թեւաւոր  
սկավառակը  
առհիւծների վրայ.  
Սիստանիի արքայ  
Sausatar-ի կնիքից.  
1450 թ. (մ.թ.ա.).  
տե՛ս G. Contenau,  
„La Civilisation des  
Hittites et des  
Hurrites du  
Mitanni”, p. 62.



Խալբի աստուածը  
առհիւծի վրայ  
Երեբուի բերդ-քաղաքի  
որմնանկարներից  
782թ. (մ.թ.ա.):



Արեւ առհիւծի  
վրայ՝ Երանի  
դրոշակից:  
(Այսուղ երեւում է  
խորրի-  
ուրարտական  
դիցարանութեան  
ազդեցութիւն):

Հայկի կրակի աստուած լինելուն համար կայ նաեւ մի այլ ցուցմունք: Դա գտնուում է Գ. Սրվանձտեանցի՝ Վանայ ծովի արեւմբտեան ափի նավահանգիստ Դատուան գիտի մօտակայ դաշտում Բելի մասին քաղած զրոյցում, որը պիտի լինի սերունդը Հայկի եւ Բելի բուն զրոյցի<sup>1</sup>, որին Մծուրնացի Մար Արան պիտի նոյնպէս լսած լինի Մծուրքի շրջանի (Մշոյ շրջանի)<sup>2</sup> ժողովրդից: Սրվանձտեանցի քաղածի մէջ ասում է. «Կուսպաշտ քազաւոր է եղեր Բելը, եւ մեծ զօրքով եկեր հայոց քազաւորի ու երկրի վրայ կոհի. հայոց քազաւորը Աստուծոյ ձեռքով սպաններ է զԲել եւ համեր Նեմրութայ զլուխ, այն տեղը բոնիր շիներ, մէջը կախեր վառեր

<sup>1</sup> Խորենացին Տարօնացի է՝ Խորեն գիտից: Նա եւս լսած պիտի լինի Հայկի ու Բելի զրոյցը այդ շրջանի ժողովրդից. որս համար գրում է. «Արդարացուցանէ եւ այս զասացեալ զրոյցս անգիրս» (Ա-Ժ):

<sup>2</sup> Մծուրք գիտի՝ Մշոյ շրջանում լինելու մասին տե՛ս Մանանդեան, «Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան», հատոր Բ, մաս Ա. 1957, էջ 17:

*Է»<sup>1</sup>: Խորենացու մօտ Բելին բարձր տեղ թաղելու նկարագրութիւնը ցոյց է տալիս, որ Բելին Նեմրութի քոնրի մէջ վառելու պատկերը կար նաև Մար Աբայի մօտ, բայց Խորենացին շհաւատալով այդ առասպեկական-հեթանոսկան ձեւին, ըստ իր սովորութեան, «մեկ-նել է»՝ նրան տալով աւելի հաւանական բացատրութիւն («քայց զդիակն Բելայ պաճուճեալ իմն դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տա-նել ի Հարք, եւ քաղել ի բարձրաւանդակի տեղուց....»)<sup>2</sup>:*

Այսպիսով տեսնում ենք, որ Մար Աբայի մատեանում Հայկի ու Բելի մասին եղած առաջին վեպը Մար Աբայի կողմից մշակուել է որպէս հայ ժողովրդի պատմութեան սկիզբ՝ նիւթ վերցնելով Հայ-կի ու Բելի հիմնական գրոյցից (Երկրորդ վեպից) ու Հայկին կապե-լով Ս. Գրբում նշուած՝ Բարելոնի աշտարակաշինութեան հետ: Այսուհանդերձ պիտի ընդունել, որ Հայկին Բարելոնի աշտարա-կաշինութեան հետ կապելը, նրան եւ նրա աղիսին ու ընդոժիննե-րին Բարելոնից բերելը չի արուել լոկ քրիստոնէական հաւատքի ազդեցութեամբ, այլ եւ, մեծ հաւանականութեամբ, ինչպէս տե-սանք, գրաւոր կամ աւանդական (պատմականօրէն ճիշդ) այլ աղ-քիւրների թելադրանքով:

Քրիստոնէութիւնից առաջ գրոյցի մէջ մի թերեւ հետք է բողել նաև հելլենիզմի ժամանակաշրջանը: Այդպիսին ենք համարում հետեւեալները.

1. Ինչպէս ասել ենք՝ որոշ անուններ ստացել են -ես կամ -ոս վերջաւորութիւն (Մադես, Զամեսես, Կարդոս եւ այլն), որոնք յու-նական վերջածանց են: Զրոյցում նախապէս չէին կարող գո-յութիւն ունեցած լինել այս վերջաւորութեամբ անուններ: Այդ վերջաւորութիւնները անկասկած կցուած են հելլենիզմի ժամանա-կաշրջանում: Օրինակ՝ Մադես-ը Էպոնիմն է Սեղիայի, իսկ Կար-մոս-ը՝ Կաղմուխի երկրի: Սրանք չէին կարող նախապէս ունեցած լինել -ես եւ -ոս վերջաւորութիւն, արդէն հոլովուած ձեւում (Տունն Կաղմեայ) պահուել է առանց -ոս վերջաւորութեան: Անկարելի չէ, որ այս յունական վերջաւորութիւնները առաջացած լինեն քաղ-դէական մատեանը յունարէնի թարգմանելիս: Հաւանաբար Կադ-

<sup>1</sup> Գարեգին Սրվանձտեանց, «Գրոց ու բրոց», Պոլիս, 1919, էջ 31-32:

<sup>2</sup> Խորենացի, Ա-Ժա:

մոսր նախապէս ունեցած լինի Կադմովս կամ Կադմախա ձեւը (հմնտ. Արախա), որը կտար Կադմախ ձեւը ինչպէս Արմեն-ակ ձեւը Ստրաբոնի մօտ դարձել է Արմեն-ոս: Հայկական -ակ վերջաւուրութեամբ բազմաթի էպոնիմներ ու անձնանուններ են պահպանուել Խորենացու մօտ (Արմենակ, Ցոլակ, Սիսակ, Արքակ, Փառնակ, Հայկակ եւ այլն): Կադմովսի էպոնիմը ստանալով -ոս վերջաւորութիւն՝ դարձել է Կադմոս:

2. Զրոյցում Բելլ ստացել է Տիտանեան հորջորջումը, որը առաջ չի տրուել Բարելոնի ոչ մի արքային կամ աստծուն: Հնում կարող էր Տիտանեան կոչուել մի արեւմուտքի դիցազն կամ բազաւոր, յատկապէս մի յոյն դիցազն: Խորենացին Արամի արեւմուտքում կատարած սիրանքների պատմութիւնն սկսելիս գրում է. «Այլոր ինչ յարեւմուտս կոյս ընդ Տիտանեանցն սորս գործ քաջութեան....»<sup>1</sup>: Հայանաքար Ալեքսանդր Մակեդոնացու՝ Բարելոնի մեջ (իր ժամանակի յայտնի ամբողջ աշխարհի վրայ) իշխած լինելու ազդեցութեան հետքն է զրոյցում Բելի Տիտանեան հորջորջումը: Թովմա Արծրունին այս մասին պահել է պարզորդ վկայութիւն. «Տիտանը բռնացաւ Զրուանի վրայ, գրաւեց Բարելոնը եւ այնտեղ կառուցեց իր բազաւորանիստ քաղաքը»<sup>2</sup>:

3. Բելի սպառազինութեան մասին Խորենացին պահել է հետեւեալ մանրամասնութիւնները. «....Եւ ինքն զիսաւոց ազուցեալ երկարի, նշանաւորօք վերջօք, եւ տախտակս պղնձիս թիկանց եւ լանջաց, եւ պահպանակս բարձիս եւ բազկաց. զոտեւրեալ զմէշսն, եւ յահեկէ զատիմն երկսայրի. եւ նիզակն արի ի ձեռին իսրում աջոյ, եւ յահեկումն վահան...»<sup>3</sup>: Սա լիբի համապատասխանում է մակեդոնական նշանաւոր ֆալանգայի հոպլիտի սպառազինութեանը, որը բաղկացած էր հետեւեալներից. -մետաղեայ սաղաւարտ, գրահ, սրունքակալներ, զոտուց կախուած սուսեր, աջ

<sup>1</sup> Խորենացի, Ա-Ժդ:

<sup>2</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն, «Պատմութիւն Արծրունեաց տան», Երեւան, 1978, էջ 31: Զրուանը իին Իրանի գրադաշտական աստուածն է: Այստեղ Զրուանով նկատի ունի Դարեհին, որի վրայ բռնացաւ Ալեքսանդրը (Տիտանը) եւ գրաւեց Բարելոնը ու այնտեղ բազաւորեց:

<sup>3</sup> Խորենացի, Ա-Ժա:

*ձեռքում հսկայ (3-4 մետր) նիզակ, ձախ ձեռքում վահաճ<sup>1</sup>:*  
Սսուրաբարելական ժամանակներում դեռ գոյութիւն չունեին այսքանը, յատկապէս չկային թիկունքի ու լանջի վրայ պղնձէ տախտակներն ու սրունքակալները:

Սհա սրանը են այն երեւոյթները, որոնց ենթադրաբար համարում ենք հելլենիզմի ժամանակներից մնացած թերեւ նստուածք գրոյցում:

Ամփոփելով մինչեւ այստեղ ասուածները՝ տեսնում ենք, որ Հայկի եւ Բելի գրոյցը իր ժամանակի ոճով բերուած ճշգրիտ պատմութիւնն է Ուրարտուի՝ սկսած նրա սաղմնաւորման շրջանից՝ Խուրրի-Միտանեան պետութեան անկման հետեւող ուրուատրիական (ցեղային) միութեան կազմաւորումից (մ.թ.ա. XIII դարի կեսերից) մինչեւ Վանայ լճի շուրջ ուրարտական պետութեան հաստատման, հզօրացման ու ծաւալման ժամանակները: Թէեւ այս պատմութիւնը դարերի ընթացքում իր վրայից անցած պատմական նշանաւոր ու յեղափոխիչ իրադարձութիւնների հոսանքներից ստացել է որոշ թերեւ ու անվճառ նստուածքներ՝ հատկապէս Հայատանում հելլենիզմի ու քրիստոնեութեան ժամանակաշրջաններում, սակայն, ինչպէս պարզ տեսանք, դրանք մանրութների մէջ են եւ չունեն էական նշանակութիւն: Զրոյցը անաղարտ պահել է իր հիմնական պատմական բովանդակութիւնն ու արժեքը՝ լինելով հայ ժողովրդի պատմութեան հնագոյն շրջանի հայկական վստահելի ու անգնահատելի աղբիւրը:

---

<sup>1</sup> Ի. Ռեշնիկով, «Ալեքսանդր Մակեդոնացի», Երեւան, 1941, էջ 20:

## **ԳԼՈՒԽ Դ**

---

**ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՔԱՅԱՆՈՒՆԵՐ**

Ինչպէս տեսանք, աւանդութիւնը Արամի (Արամէ-ի) անունը պահել է ճշդութեամբ: Տեսանք նաեւ, որ Արամի անուան հետ կապուած դէպքերը եւ Հայկի ու Բեյի պատմական գրոյցը Ուրարտուի մասին արուած ամփոփ յիշատակութիւններ են հեթանոսական ժամանակներին յասով դիցարանական ոճով պատմուած: Այդ յիշատակութիւնների մէջ կարծես աւանդական յիշողութիւնների հետ խառնուած են զրաւոր յիշատակարաններից վերցուած աւելի կոնկրետ տեղեկութիւններ: Այդպիսի զրաւոր յիշատակարան էր, օրինակ՝ Մար-Արայի՝ յունարէնի թարգմանուած քաղդէական աղբիւրը: Ամենայն դէպս՝ թէ աւանդութիւնը եւ թէ զրաւոր յիշատակարանները Արամի ու նրա հիմնած պետութեան սաղմնաւորման, հզօրացման ու կատարած սխրանքների մասին յիշողութիւններ պահելուց յետոյ, ի հարկէ, չէին կարող բոլորովին մոռացութեան տուած լինել ուրարտական միւս նշանաւոր արքաների անունները, յատկապէս Արգիշտիի նման մի հզօր արքայի անունը, որը իր ժամանակներում իր ռազմաքաղաքական սխրանքներով գերազանցել էր Ասորեստանին ու դարձել էր Առաջաւոր Ասիայի հզօրագոյն արքան:

Արգիշտիի նման մի մեծ արքայի մասին ի հարկէ պիտի հիւսուած լինէին զանազան առասպելներ թէ Ուրարտու-Հայատանում եւ թէ Սերձաւոր Արեւելքի երկրներում, որոնք, Ասորեստանի դէմ իր կատարած յաղթանակներով, պիտի ազատագրուած լինէին աշշուրեան արիւնարքու արքաների հիւծիչ ու կործանիչ ճիրաններից: Ուստի դժուար է ընդունել, որ աւանդութիւնն ու զրաւոր յիշատակարանները յետազայում մոռացած լինեն նրան եւ ուրարտական միւս հզօր արքաներին:

Սումերական, ասուրաքարելական, ուրարտական ու իին Արեւելքի այլ երկրների սեպագիր արձանագրութիւնների տուեալներից գիտենք, որ միջցեղային կոյինները եւ միջպետական պատերազմները մղուում էին տուեալ ցեղերի կամ պետութիւնների գլխաւոր աստուածների կողմից կամ անունով:

Հայկն ու Բեյը հեթանոսական ժամանակների ըմբոնումների համաձայն՝ անձնաւորուած դիցարանական դեմքեր են՝ անձնաւորուած աստուածութիւններ: Եւ ինչպէս տեսանք՝ հենց այդ աս-

տուածութիւններն են հանդիսանում «Հայկ եւ Բելի» գրոյցի մէջ (Ուրարտուի եւ Ասորեստանի միջեւ) յիշատակուած պատերազմի գլխաւոր դեմքերը: Հետեւաբար միանգամայն պարզ է, որ այստեղ Բելի (Ասորեստանի) դէմ կռուող ու յաղթող Հայկը հանդիսանում է հենց Ուրարտուի գլխաւոր աստուած Խալրին:

Այս իրողութիւնը պարզ տեսանը Ասորեստանի դէմ իր շահած յաղթանակը նշող Արգիշտի I-ի մի արձանագրութեան հետեւալ հատուածում . “<sup>D</sup>Haldini ստաբի masinie <sup>GIS</sup>surie Karuni <sup>KUR</sup>Aššur <sup>LU</sup>huradie” («Խալրին դուրս եկաւ [Արշաւի] իր գենքով, յաղթեց ասորեստանեան ճակատամարտում»):

Որով պիտի ընդունել, որ «Հայկ եւ Բել» գրոյցի մէջ Խալրի-Հայկի որդիներ կամ թոռներ հանդիսացողների մէջ պիտի լինեն ուրարտական արքաները<sup>1</sup>:

Արդէն զիտենք, որ Արամը Արամէն է, տեսանը, որ նրա անունով պատմուածները վերաբերում են ընդհանրապէս Ուրարտուին: Միաժամանակ մեր վերոյիշեալ աշխատութեան մէջ պատմագիտական ու դիցարանական տուեալների համադրութեամբ եւ լե-

<sup>1</sup> Բ. Բիոտրովսկին իր «Ուրարտո» գրքի յառաջաբանում ասում է, թէ ժամանակը տարբեր ձեւով է վերաբերել անցեալի թագաւորների հետ. ոմանց հոչակը արձագանգել է դարերի խորքերից. աւանդութիւններն ու գրաւոր հին յիշատակարանները պահպանել են հին պետութիւնների թագաւորների յաղթանակների ու գործերի մասին յիշողութիւններ. այդպիսին են եղել օրինակ Եգիպտոսը, Բաբելոնը, Ասորեստանը, յոյները եւ անցեալի շատ ազգերը, (ապա անդամնում է) սակայն Ուրարտուն բոլորովին մոռացուել է, ոչ մի հետք չի թողել, բոլորովին ջնջուել է ժողովրդի յիշողութիւնից, իսկ նրա գործերն եւ վերագրուել են ուրիշներին:

Բայց, ինչպէս տեսնում ենք Հայկի ու Բելի պատմութիւնից եւ Արամի մասին պահուած յիշողութիւններից՝ Բիոտրովսկին սխալ է: Դա ի հարկէ բնական է, որովհետեւ Ուրարտուի հետքը տեսնելու համար նա նախ պէտք է մտնէր ուրարտացիների ներկայ սերնդի հոգեւոր բնագաւառը. նախ պէտք է լրիս իրացրած լինէր հայոց լեզուն, մօտիկից ծանօթ լինէր հայ ժողովրդի աւանդութիւններին, հին մատեաններին, մշակութային ու ազգագրական ժառանգութիւններին: Երկրորդ՝ նա ուրարտագիտութեան հենց սկզբից գործը տարաւ հայամերժ ուղղութեամբ, իր հետ տարաւ եւ ուրիշներին: Որով, ի հարկէ, նա չէր կարող Հայկի որդիների ու թոռների մէջ (Արամի, Արայի, Անուշաւանի, Արամայիսի եւ Միւսների մէջ) տեսնել ուրարտական արքաներին, արաւել եւս, չուզեց Ուրարտուի մէջ տեսնել Արմենիային եւ հայերի մէջ՝ ուրարտացիներին:

զուարանական ստուգաբանութիւններով ցոյց ենք տուել նաեւ, որ «Հայկ եւ Բել» զրոյցի մէջ յիշուած Անուշաւանը Իշպուխնին է, իսկ Արայան Արան (Կարդոսը) հանդիսանում է Իշպուխնիի հայր Սարդուրին, Շարան՝ Արգիշտիի որդի Սարդուրին, իսկ Արմախը (տարբերակ՝ Արամայիս)՝ Արգիշտին:

Այսուհանդերձ ցանկանում ենք այստեղ նորից բերել այդ տուեալների մի մասը՝ դրանք համադրելով յետազայում ի յայտ եկած նոր տուեալների ու փաստերի հետ։ Ուզում ենք այս առքի բերել նաեւ Լուտիարիի անուան մասին մեր կատարած զննումները։

## 1. Արամէ

---


Առաջաւոր Ասիայի հին ժողովուրդների սեպագիր արձանագրութիւնների ուսումնասիրութիւնները պարզել են, որ հին Արեւելքի արքաներից շատերը կրել են իրենց ցեղի կամ պետութեան գլխաւոր աստծոյ անուան հետ կապուած անուններ. ինչպէս օրինակ՝ աքքաղական *Նարամ-Միհ*, ասսուրական *Աղադ-Նիրարի*, *Աշուր-Ուրալլիտ*, եգիպտական *Ամենոփիխ*, *Թուբանիսամոն*, շուպրիական *Կալի-Թեշուազ* եւ այլն։ Հին Արեւելքի հզօր պետութիւններից մէկն հանդիսացող Ուրարտուի արքաների մեծ մասը նոյնպէս կրել են դիցարանական արժեք կամ իմաստ ունեցող անուններ։ Եւ ի հարկէ պիտի բացառութիւն չիներ *Արամ-Արամէն*, որը եղել էր Ուրարտուի հզօր պետականութեան կերտիչը։

Վերեւում տեսանք, որ *Ար-մէ-նի* նշանակում է «Ար-որդի-ներ՝ արեւ-որդի-ներ»։ Այս անուանաձեւի *Ար-մէ* բաղադրիչը նշանակում է «Ար-որդի կամ արեւորդի»։ Եւ քանի որ *Ար-ը* հնչուում էր նաեւ *Արա* ապա *Ար-մէ* անունը հնչուում էր նաեւ *Արա-մէ*, որը անունն էր ուրարտական պետութեան մեզ յայտնի առաջին թագաւորի։ Արդէն, ինչպէս գիտենք, Խորենացին պահել է յիշողութիւն, որ բոլոր ազգերը Արամի (Արամէ-ի) անունով են կոչում մեր աշխարհը՝ ինչպէս յոյները Արմէն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ Արմենի։ Որով հաստատ է, որ Արամէ-ն (Արմէ-ն) բաղադրիչ մասն էր Արմէ-

նի անուան եւ նշանակում էր «Արորդի՝ արեւորդի»: Արդէն, ինչպէս նշեցինք, ուրարտական արքաները գտնում են Հայկ-Խալթիի որդիներ կամ սերունդներ հանդիսացողների մէջ, այլ խօսքով՝ ուրարտական արքաներն ել ունէին աստուածային ծագում:

Այստեղ էլ ուզում ենք միջամկեալ ձեւով նշել, որ Հայաստանում միայն ուրարտական մեծ արքաները չէին, որ ստացել են աստուածային կոչում: Անգամ Ուրարտուից բաւական ժամանակ յետոյ, հերանոսութեան վերջին դարերին, Հայաստանի լիակատար անկախութիւնն ու սուվերենութիւնը վերահաստատած Արտաշեսեան մեծ արքաները վերականգնել են իրենց աստուածային կոչումն ու հանգամանքը:

Մեզ յայտնի է, որ Տիգրան Բ-ը կոչուած էր աստուած. նրա դրամներից մէկի վրայ գրուած է «Արքայի մեծի Տիգրանի աստծու»<sup>1</sup>: Մեզ յայտնի է նաև, որ Արտավազդը նոյնպէս աստուած է կոչուել: Նա նոյնացուել է արեւի աստուած Սիհր-Սիերի հետ<sup>2</sup>:



Արտավազդ Բ-ի դրամներից:

<sup>1</sup> «Հայ ժողովրդի պատմութիւն», Երեւան, 1971, I, էջ 697:

<sup>2</sup>Գ. Խ. Սարգսեան, «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը եւ Ս. Խորենացին», Երեւան, 1966, էջ 57:

Այս դրամի<sup>1</sup> մի երեսի վրայ Արտաւազդի դիմաքանդակն է, իսկ միևս երեսի վրայ յունատառ գրուած է «Արքայից արքայ Արտաւազդի» եւ նկարուած է մի քառաձի երկանի մարտակառք, որին վարող Արտաւազդին պսակ է տալիս յաղթանակի դիցուիին, իսկ մարտակառքի ձիերի առաջ դրոշմուած է «Երկինք» նշանակող խորհրդանիշը: (Այս խորհրդանիշը, մեր կարծիքով, սերած է սումերերէն ամենահայտնի ասուրական  սեպականից): Սա կարող է նշանակել, որ Արտաւազդը քառաձի այդ կառքով, յաղթանակի պսակն ստանալով, արշաւում է դէպի երկինք որպէս երկնային աստուածութիւն, կամ նշանակում է, որ նա ուներ երկնային աստծոյ հանգամանք:

Անգամ Տրդատի մասին Գառնիի յունարէն արձանագրութեան մէջ գրուած է «Հելիոս Տրդատ թագաւոր Մեծ Հայքի»<sup>2</sup>: Դա նշանակում է, որ Տրդատը նոյնացուել է արեւ աստծոյ հետ: Եւ ինչպէս տեսանք՝ Ուրարտուի հզօր պետութեան կերտիչ արքայի Առամէ անունը արդէն նշանակում էր «Արեւորդի»:

## 2. Լուտիարի

Արամէից յետոյ մեզ յայտնի ուրարտական արքան կոչում է *Լուտիարի*: Այս արքայի որդո՞ւ՝ Սարդուրիի մասին մեր կատարած հետազօտութիւնները ցոյց տուեցին, որ նա Արամի թոռն էր, որով նրա հայր Լուտիարին էլ Արամէի որդին էր: Սարդուրիի մասին դեռ հանգամանօրէն կը խօսենք ստորեւ:

Լուտիարի անունը նոյնպէս ունի դիցարանական նշանակութիւն: *Լու-տիարի* (սեպակիրը կարելի է կարդալ նաև *Լու-տիբրի*) անուան *Լու* բաղադրիչը սումերերէն (եւ ընդհանրապէս սեպագրութեան մէջ) նշանակում է «մարդ». հմմտ. *Lu-gal* «մարդ-մեծ» կամ «արքայ», իսկ *տիբրի* բաղադրիչը սումերական *tibira* բառն է,

<sup>1</sup> «Հայ ժող. պատմութիւն», նոյն, էջ 605:

<sup>2</sup> Գ. Խ. Սարգսեան, նոյն, էջ 58:


որ նշանակում է «մետաղագործ», կամ «մետաղագործութեան աստուած»<sup>1</sup>:

Որով Լուտիբրի (Լու-տիրիբր) նշանակում էր «Մետաղագործ աստուածը» կամ «Մետաղագործ մարդ աստուածը», (Լու-տիրիպ)՝ «Տապանակիրը»:

Լս բաղադրիչը, որպէս որոշիչ, սեպագրութեան մէջ դրում է անձ ներկայացնող անունների սկզբին: Lu-ն, որպէս անունների (բառասկզբի) բաղադրիչ, համեմատել Ludingirra (Lu-dingir-ra)<sup>2</sup> անուան հետ, որը նշանակում է «մարդն աստծոյ» կամ «մարդ-աստուած», ուր dingir նշանակում է «աստուած»: Հմմտ. նաեւ Lu-en-na<sup>3</sup>, Lu-barna կամ Lu-barhi<sup>4</sup> եւ այլն: Իսկ tibir կամ tibira բաղադրիչի համար հմմտ. Badtibira (Bad-tibira)<sup>5</sup>, որը նշանակում է «պատ կամ ամրոց tibira-ի»:

B. Landsberger-ը ասել է, թէ tibira բառը ծագումով սումերերէն չէ, այլ պատկանում է նախասումերական “Proto-Euphratean” ժողովոյի լեզուին, որը Սումեր էր իշել Սումերներից առաջ եւ որոնց պատկանում էր նաեւ Եփրատ եւ Տիգրիս ինչպէս եւ սումերական մի շարք բաղադրների անունները<sup>6</sup>: Իսկ S. Kramer-ը ասում է, թէ այդ ժողովուրդը հաւանաբար սուբարիներն էին<sup>7</sup>: Լանդսբերգերի եւ Քրամերի տեսակետները համընկնում են աշխարհագրական

<sup>1</sup> P.A.Deimel, “Sumerisch-Akkadisches Glossar”, Austria, 1962, տե՛ս



Այս կապակցութեամբ հետաքրքիր է հայ տասպար, պրս. tabar , արար. tabar «կացին» բառերը եւ բուրք. կեմիր «երկար» բառը: Տես սումեր բառերի ցուցակում tibir «տապար» բառը:

<sup>2</sup> S.N.Kramer, “The Sumerians” Chicago, 1963, p. 352:

<sup>3</sup> Ն. Յարութինեան, «Բիախնիիլ» (ոռւսերէն), Երևան, 1970, էջ 323:

<sup>4</sup> S.N.Kramer, նոյն տեղում, էջ 328:

<sup>5</sup> Նոյն, էջ 40:

<sup>6</sup> Նոյն, էջ 41:

<sup>7</sup> Նոյն, էջ 40:

այն շրջանով, ուր ապրում էին խորրիները: Հետեւաբար *tibira* բառը պատկանել է խորրիներին, այն նաիրեաններին, որոնց յետագայում կազմած ուրարտական պետութեան ժամանակ դեռ հասկանալի պիտի լինէր *Lu-tibri* անուան մէջ *tibira-tibir* (>*tibri*) տերմինի իմաստը:

Այստեղ հետաքրքիր ենք գտնում Վանայ լճի կղզու Աղթամար անունը: Մինչեւ հիմայ յայտնի չէր *Աղթամար* անուան ծագումը: Ոմանք իր ներկայ արտասանութիւնից ելնելով՝ ժողովրդական ստուգաբանութեամբ այն համարում էին «ախ Ծամար» արտայայտութեան հետեւանք: Մենք հաւանական ենք համարում, որ *Աղթամար* անունը պահում է *Lni-tibrjh* (*Lni-tibrjh*) անուան յիշատակը: Ուրարտուի արքաները ունեն իրենց անունը կրող բնակավայրեր (Արգիշտին՝ Արգիշտիխինիլի, Սենուան՝ Սենուախինիլի, Սարդուրին՝ Սարդուրիխուրդա, Ռուսան՝ Ռուսախինիլի եւ այլն): Անհաւանական չենք համարում, որ *Lni-tibrjh* (*Lni-tibrjh*) անունից առաջացած լինի *Աղ-թամար* անունը: Յայտնի է, որ հայերենում, շատ դէպքերում հին ժամանակների լ-ն փոխուել է դ-ի. օրինակ՝ *Ալեքսանդր* > *Աղեքսանդր*, *Լազար* > *Ղազար* եւ այլն: Հայերէնը դ-ով սկսող բառեր ընդիհանրապէս չի զարգացրել՝ չի սիրում, եղածների մեծ մասն էլ օտար փոխառութիւններ են: Այդ պատճառով՝ *Lni-tibrjh* (*Lni-tibrjh*) անուան նախահունչ լ-ն փոխուելով դ-ի՝ առջեւում աւելացուել է *ա ձայնը՝ լու-ն դարձնելով աղ-* (հմմտ. կովկասեան լազ. *Lebi* եւ հայ աղր.), իսկ *տիբրjh* (*տիբրjh*) բաղադրիչի բ-ն փոխուել է *մ-ի*. հմմտ. *Նեբրովք* > *Նեմրութ*, Սինեխարիք > *Սենեքերիմ*, Բուրազու (*Ֆուրազ*) > *Սուրազ*: Ուղղակի տիբրjh > տիմիք փոխանցման համար հետաքրքիր է թրք. *տէմիր «Երկար»* բառը, իսկ *տիբրjh* տերմինի *ի-երի ա-ի* փոխուելուն համար հմմտ. հայ *տապար* բառը: Որով *Լուտիբրին* (*Lni-tibrjh*) դարձել է *Աղ-տիբրjh* > *Աղ-թարար* > *Աղ-թամար*:

Անհաւանական չենք համարում, որ *Լուտիբրին* Աղթամարում կատարած լինի շինարարութիւն, կամ իր անունով շինած լինի բնակավայր-ամրոց: Յետագայ պեղումները կարող են որոշ հետքեր երեւան հանել: Գուցէ Աղթամարի տաճարը յետագայում

կառուցուած է հենց Լուտիբրիի կառուցած մեհեանի հիմքի վրայ կամ տեղում:

Աղթամար անունը յիշում է Խորենացու մօտ: Նա ասում է, թէ Ուշունիները Աղթամարում ունեին ամրոց: Աղթամարում մեծ շինարարութիւն է կատարել Գագիկ Արծրունին: Ըստ Թովմա Արծրունու՝ թագաւորի հրամանով Աղթամարի հարաւային ծովափում դեպի ծով երկարող մեծ ամբարտակ է կառուցուել 5 կանգուն բարձրութեամբ՝ մեծ ու ծանր քարերով-ժայռաբեկորներով, եւ ամբարտակի վրայ էլ՝ լայնանիստ բարձր պարիսպ եւ մի շարք օժանդակ շենքեր: Կառուցուել են նաև պալատական շենքեր ու եկեղեցի: Այս շինարարութիւնից զատ կառուցումներ են կատարուել այդտեղ հաստատուած կարողիկոսների կողմից:

Հետեւաբար այս շինարարութիւնների համար կարող են օգտագործած լինել ուրարտական շինութիւնների աւերակների պատրաստի քարերը: Մանաւանդ եթէ հաշուի առնենք այն, որ վերոյիշեալ մեծ պարիսպները այժմ մնացել են ջրի տակ, ապա ուրարտական կառոյցների մեծ մասի մնացորդները (եթէ կառուցուած էին ծովահայեաց դիրքով կամ ծովափի մօտ) նոյնպէս այժմ գտնուում են լճի ջրերի տակ:

### **3. Սարդուրի Ա եւ Իշպուխնի**

Խորենացին Արայի որդի Արայի (Կարդոսի) եւ սրա որդի Անուշաւան Սոսանուերի մասին գրում է հետեւեալը<sup>1</sup>.

«... Արայի մասին այսքանը բաւական է կարծառուտ յիշատակել: Նա տարիներ ապրելով ծնաւ Կարդոսին» (Ա-ԺԵ):

«Խոկ Շամիրամը դեռ իր կենդանութեան ժամանակ Արայի որդուն, որ ծնած էր նրա սիրելի կնոջից՝ Նուարդից եւ տասներկու տարեկան երեխայ էր մնացել Արայի մահուան ժամանակ, դէպի

<sup>1</sup> Խորենացու գրածը բերում ենք Ս.Մալխասեանի կատարած թարգմանութեամբ, Երեւան, 1940:

*Արա Գեղեցիկը տածած գորովի պատճառով՝ նրա անունով կոչում է Արայ եւ նշանակում է մեր աշխարհին վերակացու» (Ա-ի):*

Սա ցոյց է տալիս, որ Արայեան Արան կոչուած է եղել նաև Կարդոս:

Խորենացին շարունակում է.

«Քայց (Մար Արաար) պատմոթիւնը շարունակում է այսպէս. Արայեան Արան պատերազմի մէջ մեռնում է Ծամիրամի հետ, թողմելով արու զաւակ՝ գործով հզօր, խօսքով հանձարեղ Անուշաւան Սոսանուէրին, որովհետեւ նա (կրօնական) պաշտամունքի համաձայն նույրուած էր Արամենակի սօսի ծառերին. . . ., որոնց տերեւների հանդարտ կամ սաստիկ շարժուելուց, նայելով քամու ուժին ու ուղղութեանը՝ մեր հայոց աշխարհում սովոր էին գուշակութիւններ անել երկար ժամանակ:

«Այս Անուշաւանը քաւական ժամանակ արհամարհանք կրելով Զամեսէսից, տառապում է արքունի դրանը, յետոյ բարեկամներից օգնութիւն գտնելով ծեռք է բերում մեր աշխարհի մի մասը՝ խնամելու համար իբրև հարկատու եւ վերջը նաեւ ամբողջ աշխարհը» (Ա-ի):

Խորենացու՝ Մար Արայի մատեանից բերած այս տեղեկութիւններից հասկացում է, որ Արայի (Նուարդից ծնած հարազատ) որդին կոչուում էր Կարդոս, որին կոչել են Արա: Իսկ այս Արայեան Արայի (Կարդոսի) որդի Անուշաւանը կոչուել է Սոսանուէր, որովհետեւ նա նույրուած է եղել հեթանոսական ծիսակատարութիւններով գուշակութիւնների միջոց հանդիսացած սօսի կոչուած սրբազն (աստուածային) ծառերին, այսինքն նա լինելով արքայ՝ միաժամանակ եղել է այդ գուշակութիւնների պատգամախոս («խօսքով հանձարեղ») քուրմը: Այս Անուշաւանը ժամանակակից է եղել Ասորեստանի արքայ Զամեսին, որից մի ժամանակ կրել է վիրատրանք, սակայն եւ այնպէս տիրել է հայոց ամբողջ աշխարհին:

Մեր կատարած պատմագիտական, սեպագրական-լեզուաբանական բազմակողմանի քննութիւնները պարզում են, որ Խորենացու պահած այս յիշատակութիւնները պարունակում են պատմական մեծ արժեք ներկայացնող իրողութիւններ, որ Արայեան Ա-

բան (Կարդոսը) եւ նրա որդի Անուշաւանը պատմական դէմքեր են՝ մեզ յայտնի ուրարտական արքաներ: Պարզում է, որ *Արայեան Արան* (Կարդոսը) *Սարդուրի Ա-ն* է, իսկ նրա որդի *Անուշաւանը՝ Իշպուհնին*: Այս իրողութիւնը փաստում է թէ՛ պատմագիտական եւ թէ՛ լեզուարանական տուեալներով:

Մեր վերոյիշեալ աշխատութեան մէջ *Նուարդ* անուան ստուգաբանութեան առթիւ արդէն մանրամասն փաստարկութիւններով ցոյց ենք տուել, որ ուրարտական *Արդի* աստուածութիւնը համապատասխանում է *Արային*: Այստեղ հարկ չենք տեսնում կրկնել այդ բոլորը, միայն ուզում ենք հակիրճ ձեռով յիշեցնել հետեւեալը: Խորենացու գրանցած տեղեկութիւններից գիտենք, որ *Նուարդը* Արայի հարազատ կինն էր: *Նու-արդ* նշանակում էր «Արդ-ի *Նուն*»: Արդէն հայերէնը *Նու* բառը պահել է «հարս» իմաստով, որով *Նու-արդ* նշանակում էր Արդ-ի հարսը կամ կինը. հետեւարար *Արդը Արան* է: *Նու* տերմինը, ի հարկէ, պահում է մի իգական աստուածութեան անունը, որը համապատասխանում էր մեր *Նամէկամ Անսիհիս* դիցուհուն: Սա էլ լուսնի դիցուիկ էր:

*Արան* լինելով արեւի աստուածութիւն՝ նրա գուգակից *Նուարդը* պիտի լինի լուսնային աստուածութիւն, որի փոփոխակներն էին *Սիէլ-արդի* եւ *Սինու-արդի* անունները, յատկապէս յունական *Արսի-նոյէ* (=Արէս + Ենիո) եւ սումերական լուսնի աստուած *Nann-ar* անունը, որը լրիւ համընկնում է *Նու-արդ* անուան հետ, ուր *Nann-ը* համապատասխանում է մեր *Նու-ին* իսկ *ար-ը* *Արդ-Արային*: Թէեւ *Նամնարը* արական է, բայց պիտի ասել, որ լուսնի եւ արեւի սեռը փոփոխական է՝ նայած տեղի ու ժամանակի: Անգամ մեր լուսինը Հայաստանի մի մասում (Վան եւ շրջաններում) իգական է, իսկ այլ շրջաններում (Խոտոքուր, Համշէն եւ արեւելեան Հայաստանի մի մասում)` արական: Եւ քանի որ արեւլուսին գուգակցութիւնը որպէս այր ու կին կամ քոյր ու եղբայր յայտնի է դիցաբանութեան մէջ, ապա կարելի է ասել (թէեւ ոչ բացարձակօրէն), որ այնտեղ, ուր արեւը արական է, լուսինը իգական է, իսկ այնտեղ ուր արեւը իգական է, լուսինը՝ արական: *Արդի* անուան *Սարդի* ձեւը կարող է լինել իգական, սակայն ներկայ դէպքում այն համապատասխանում է *Արայեան Արա* եղող

**Ասրդ(-ու)-ին:** *Սարդ-ուրի* անուան *Սարդ* բաղադրիչը ուրարտական արձանագրութիւնների մէջ յաճախ արտայայտուած է *Իշտառի* գաղափարագրով: Մենք չենք կարծում, որ դա արուած է ցոյց տալու, որ *Սարդ-ը Իշտարն* է, այլ *Իշտարի* գաղափարագիրը բերուած է արտայայտելու *Սարդ-ի ձայնը՝ Սարդ* անուան հետ *Իշտար* անուան ունեցած հնչինային նմանութեան (մօտիկութեան) պատճառով, թէեւ արուել է ոչ լրի յաջողութեամբ:

Ամենայն դեպքու *Սարդ-ուրի* անուան *Սարդ* բաղադրիչը համապատասխանում է *Կարդոսին*, այսինքն՝ *Արակին* (Արդ=Արա), իսկ -ուրի բաղադրիչը սումերական Ur (կամ Uri, eri) բառարմատն է, որը նշանակում է «ծին, ծնել, սիրել, սերունդ»<sup>1</sup>: Հայերէնում էլ *ուր* նշանակում է «որդի», որից ունենք *ուրծու* «խորթ որդի»: Հետեւաբար *Սարդ-ուրի* նշանակում է «Սարդ-ա-ծին» կամ «Արդ-ա-ծին», *Արայորդինի*: Ուրեմն սա նոյնպէս ցոյց է տալիս, որ *Սարդ-ուրինի Արայի որդի Կարդոսն էր՝ Արայեան Արան*: Սարդուրիի «Արայի որդի» իմաստը չի նշանակում, որ նրա (Փիզիկական) հօր անունը Արա էր, այլ նա համարուել է արեւի աստուած Արայի (Արդի) որդին:

Արայեան Արայի (Կարդոսի) որդին կոչում էր *Անուշաւան*, իսկ մենք գիտենք, որ *Սարդուրիի որդին կոչում էր Բշպուինի*, ուրեմն *Անուշաւանը Իշպուինինի* է: Այս իրողութիւնը հաստատում է նաև մի քանի այլ (թէ պատմագիտական եւ թէ լեզուաբանական ու դիցարանական) փաստերով:

Խորենացու վկայութեամբ Անուշաւանը ժամանակակից էր Ասորեստանի արքայ Զամեսին. նրա հետ գործ է ունեցել: Սա արդէն մեզ տալիս է կոնկրետ ժամանակագրական փաստ: *Զամեսը* (յունական -էս վերջաւորութեամբ Զամեսէս) անունը *Ծամս* է՝ *Իշպուինիի* (825-810 մ.թ.ա.) ժամանակակից *Ծամսի-Աղադ* V-ը

<sup>1</sup> P.A.Deimel, տե՛ս II ur = RIHÛ = erzeugen «ծնել, սերել».

S. Langdon, “A Sumerian Grammar and Christomathy”, Paris, 1911, տե՛ս ur = to create «ստեղծել, ծնել» էջ 253:

Աքքաղացիները իրենց Աքքաղ երկրանուան տեղ մերք բերում էին Ki-Uri ( կամ Uri (-ki) խօսքը, որը նշանակում էր «վայր ծննդի՝ ծննդավայր», այսինքն՝ «հայունիք»):

(823-810 մ.թ.ա.): Գիտենք նաեւ, որ այս երկու արքաների բանակները լնդիարուել են: Ուստի անհերքելիօրէն հաստատում է, որ *Ծամսի-Աղադ* V-ի ժամանակակից եւ նրա հետ լնդիարուած *Իշպուհնին* Զամեսի ժամանակակից *Անուշաւանն* է: Ուստի միանգամայն պարզ է, որ *Անուշաւանը Իշպուհնին* է, իսկ նրա հայր *Արայեան Արան (Կարդոսն)* էլ Իշպուհնիի հայր *Սարդուրին*:

Փաստ է նաեւ այն, որ Խորենացու գրանցած տուեալներով հայոց Արամի թոռն է Արայեան Արան, իսկ ուրարտական պատմութիւնից էլ գիտենք, որ Արամէի թոռն է Սարդուրին: Այս պատմագիտական համընկնումը նոյնպէս կարեւոր փաստ է, որ Անուշաւանը Իշպուհնին է, իսկ Արայեան Արան՝ Սարդուրի-Կարդոսը: Այս փաստը ունի նաեւ ուրարտագիտական կարեւոր նշանակութիւն: հաստատելով, որ Սարդուրի Ա-ը Արամէի թոռն է՝ վերանում են Սարդուրիի հայր Լուտիպրիի Արամէի որդին լինելու մասին եղած կասկածանքները, ապացուցում է, որ Արամէն ու նրա յաջորդները պատկանել են միեւնոյն հարստութեան:

*Իշպուհնիից Անուշաւան* անցումը համեմատում ենք *Երերունի > Երեւան* փոխանցման հետ: Յայտնի է, որ ուրարտական սեպագրութիւնը առնուած է ասորեստանեան սեպագրութիւնից, իսկ այս սեպագրութեան մէջ (ինչպէս ուրարտականում) *Իշպուհնի* անուան պու վաճկի սեպախումբը ունի նաեւ բու վաճկի արժեք: Իսկ ինչպէս նախապէս լնդունուած *Ertuni-Erputni*-ն յետագայում տառադարձուեց *Erbuni* (*Erebuni*), այնպէս էլ Իշրուն անունը պէտք է լինի *Էշեւնի*: Լեզուարանական օրէնք է համարուել, որ հին *b*-ն յետագայում բառամիջում փոխում է վ ձայնի, երբ այն գտնուած լինի երկու ձայնատրների արանքում, մինչդեռ Երեւանի անունը կրող բոլոր արձանագրութիւնների մէջ բերուած էր *Erbuni* ձեւը, որի *b*-ն չէր գտնում երկու ձայնատրների միջեւ: Այդպէս էր անգամ Երեւան քաղաքի ծննդեան վաւերազրի վրայ: Միայն մի վահանի վրայ այն երեւաց *Erebuni* ձեւով (այս երեւոյթը հաւանական է դարձնում այն, որ բ-ից յետոյ կար մի կիսատ ը ձայն, որը այս վահանի վրայ արտայայտուել է և նիշով): Հենց սրա վրայ կիմնուելով՝ Մ. Խորակեանը հիմնաւորեց *Երերունի > Երեւան* ան-

ցումը<sup>1</sup>: Բայց այս վահանը կարող էր չգտնուել եւ կմնար տիրապետող *Erbunti* ձեւը: Այդպէս էլ *Իշրուիհնի* անունը կրող բոլոր արձանագրութիւնների մէջ (ըստ ընդունուած վերծանման) ք-ն չի գտնուում երկու ձայնաւորների միջեւ: Գուցէ յետազայում մի տեղ երեւայ այդպէս: Այսուհանդերձ հաւանական է, որ վերոյիշեալ ք >կ անցման օրէնքի այստեղ առերեւոյք բացառուելու պատճառը ոչ վանկի սեպախսմբի այս դէպում ոչ ճիշդ տառադարձման մէջ է:

Ուզում ենք ուշադրութիւն հրաւիրել այն իրողութեան վրայ, որ ոչ վանկի սեպախսումքը ասորեստանեան սեպագրութեան մէջ ունի թէ ոչ եւ թէ *iši* ձայնի արժէք: Որով պիտի անկարելի չհամարել, որ *Իշրուիհնի* անունը հնչուած լինի *Իշիրուիհնի* (կամ *Իշրուիհնի*. շ-ին յաջորդող ի-ն կարող է հնչուած լինի ը ձեւով), որի ք-ն գտնուում է երկու ձայնաւորների արանքում (եւ յիրաւի, ինչպէս կը տեսնենք ներքեւում, անուան առաջին բաղադրիչը ոչ թէ *Իշրու*, այլ՝ *Իշիրու* կամ *Իշրու* է): Ինչ վերաբերում է *Իշրուիհնի* անուան *Իշ* սկզբնաձայնի փոխարէն՝ *Անուշաւան* ձեւի մէջ *Անուշ-* սկզբնաձայնի երեւալուն, գտնում ենք, որ սա առաջացած պիտի լինի ազդուելով *Իշրուիհնի* անունը կրող՝ *Իշրուիհնի* բոռան (Մենուայի որդու) *Ինուշ-պուա* կամ *Ինուշ-բուա* անուան *Ինուշ-* սկզբնաձայնից:

Անուշաւանը կոչուել է *Սոսանուէր*, որովհետեւ նա նուիրուած է եղել հեթանոսական ծիսակատարութիւններով գուշակութիւնների միջոց հանդիսացած սրբազն սօսի ծառերին: Այլ խօսքով՝ նա եղել է նաև սօսի ծառերի սօսափիւնի միջոցով կատարուած դիրքութեան ու պատգամախօսութեան գլխաւոր քուրմը:

Լեզուարանական-սեպագրական մեր քննութիւնները պարզել են (ինչպէս ցոյց ենք տուել առաջ), որ *Isibu-ini* նշանակում է «պատգամախօս քուրմ. քովչութեան մոգ»:

Սումերերէն *išib* նշանակում է (=աքքաղ. *šiptu*, անգլ. *incantation*, գերմ. *Beschwörung*) «քովչութիւն, կախարդութիւն, (=աքքաղ. *tertu*, անգլ. *oracle*) «պատգամ, պատգամախօսութիւն, (=աքքաղ. *ašibu*, *išibb*, անգլ. *priest of incantation*, գերմ. *Beschwörer*) «քովչութեան մոգ, դիրքութեամբ գուշակութիւններ ա-

<sup>1</sup> Մ. Խարակեան, «Երեբունի», Երեւան, 1971, էջ 10-11:

նող պատգամախօս քուրմ»<sup>1</sup>: Հմտ. արար. *աճիր* «զարմանալի», հայ *աճա-* (-արար), անզլ. *bishop* «Եպիսկոպոս (քուրմ)»: Հետեւաբար միանգամայն պարզ է, որ *Išibu-ini* (*ini*-ն գոյականների ուրարտական յայտնի վերջաւորութիւն է) նշանակում է՝ «Քովչութեամբ կատարուած գուշակութիւնների (պատգամախօս) քուրմ», որը համապատասխանում է Անուշաւանին ու նրա սոսանուէր կոչմանը: Այս փաստն էլ կասկած չի թողնում, որ *Իշրուիհնին Անուշաւասնն* է:

Հետաքրքիր է, թէ արդեօք գուշակութիւնների միջոց հանդիսացած այդ սօսի ծառերը ո՞ր աստծոյ պատգամատեղիին էին պատկանում: Solomon Reinach-ը յայտնում է, թէ «Դոդոնայի՝ Զեւսի պատգամատեղիում աստուածն իր կամքն էր յայտնում կաղնիների սօսափիւնով...»<sup>2</sup>: Սա ճիշդ նման է Արմափի սօսի ծառերին, որոնց սօսափիւնով գուշակութիւններ էին անում: Ելնելով Դոդոնայի օրինակից՝ այդ աստուածը պիտի լինի Օլիմպոսեան Զեւսին համազօր մի գերագոյն աստուած, որը Արմափ-Արգիշտիխիսինիլիի Խալդին էր:

Մեզ յայտնի է, որ Խալդին են վերագրուում *Susi* կոչուած տաճարները, որոնցից մեկը յայտնաբերուել էր նաև Էրեբունիում եւ որոնց բնոյթը (Փունկցիան) դեռ չէ պարզուած: Եւ ահա Խորենացին

<sup>1</sup> P.A.Deimel, նշուած բառփիրը, տե՛ս *išib*, *S. Langdon*, նշուած գիրքը, էջ 222, տե՛ս *išib*: *Išibu* կամ *išbi* յորդորցումը մեր Իշրուիհնից շատ առաջ գործածուել է սումերների կողմից. սումերական *Ur* քաղաքի քրմապետ արքաներից մեկը կոչում էր *Išbi-Sin* (Kramer, էջ 71): Սա ժամանակակից էր *Isin* քաղաքի քրմապետ արքային, որը կոչում էր *Išbi-Urra* (*S. Langdon*, p. 16): *Išbi-Urra* մօտ 2100 մ.թ.ա. (*S. Lloyd*, “Twin Rivers”, p. 15). այս անոնք գտնուել է մի սումերական կրօնական երգի մեջ: Կրօնական երգեցողութեան մեջ երկրի զիսաւոր քուրմի անոնք յիշելու սովորութիւնը հեթանոսութիւնից անցել է քրիստոնեութեան, եւ մեր եկեղեցական «գոհութիւն» երգի մեջ յիշում է կաթողիկոսի անոնք: Ինչպէս ասել ենք վերեւում, սեմիտները Աքքադ-ի տեղ թերում էին *Ur* քաղաքը: *Urra* նշանակում էր «Աքքադի» (հմնա. *Lugal Kingi Urra* «աքքայ Սումերի եւ Աքքադի» (*S. Langdon*, p. 66): Որով *Išpi-Urra* նշանակում էր «քրմապետ Աքքադի»: Շատ հետաքրքիր է անզլ. *bishop* «Եպիսկոպոս» բառը, որը համընկնում է *Išib* բարի հետ: Մեզանից պարսիկներին է անցել Անուշաւան <Անուշիրուան անոնք՝ յարմարելով պարսկերէնին:

<sup>2</sup> Solomon Reinach, “ORPHEUS, A History of Religion”, New-York, 1942, p. 98:

յայտնում է, թէ Արմափիք (Արգիշտիխինիլիք) սօսի ծառերի սօսավիւնով գուշակութիւններ էին անում: Անհաւանական չէ, որ գուշակութիւնների այդ սօսի (susī) ծառերն իրենց անունը ստացած լինեն susī տաճարի անունից, մի բան, որը երեւան կը հանէր, որ այդ սոսի տաճարները Խալդիի պատգամատեղիներ էին:

Բայց հետաքրքիր է, թէ այդ սօսի ծառերը ինչո՞ւ՝ են կոչուել «Արամանեակի սօսի ծառեր» (Խորենացի, Ա-ի): Susī տաճարը պատկանում էր Խալդին, իսկ Արգիշտիխինիլիք-Արմափիքը, ուր գտնում էր Susī տաճարն ու սօսի ծառերը, պատկանում էր Արգիշտի-Արմայիսին<sup>1</sup> (մենք զիտենք եւ դեռ մանրամասնօրէն ցոյց կը տանք, որ Արգիշ(-տի) – Արմա(-իս) նշանակում էր «Արորդի», այսինքն՝ «աստուածորդի» (Արդի-Ալդի-Խալդիի որդի): Որով սօսի ծառերը վերագրուել են, ըստ Հայկ եւ Բել զրոյցի, Խալդին եղող Հայկի որդուն՝ Արամանեակին:

Մեր վերոյիշեալ գրքում Խալդիի բնոյթի մասին խօսելիս՝ ցոյց ենք տուել, որ Խալդին կոչում էր նաև Բարդի (Խալդի) անուան առաջին եւ հիմնական Խալ բաղադրիչի սեպագիրը սումերերէնում նշանակում է նաև բար. Երեւի խալ ու բար համանիշ էին (Deimel, տե՛ս hal), որով Խալդի անունը կոչում էր նաև Բարդի: Բարդի ձեւը գտնում է նաև Խալդիի կնոջ Բագ-բարսու անուան մէջ, ինչպէս Արա-Արդին գտնում է Արայի կնոջ Նու-արդ անուան մէջ: Այս իրողութիւնը հաստատում է նաև Մուսասիր-Արդինիի Խալդեան տաճարի Սարգսնեան քանդակի ճակատում բարդի ծառի գոյութեամբ: Սա ի հարկէ կարեւոր փաստ է, որ սրբազն սօսի ծառերը, որ բարդիի մի տեսակն են, ներկայացնում էին Խալդին, ինչպէս Դոդոնայի Զեւսի պատգամատեղիում Զեւսի կամքը կաղնին էր պատգամում: Որով կասկած չկայ, որ Արմափիք-Արգիշտիխինիլիք սօսի ծառերը (susī պատգամատեղիի բարդիները) ներկայացնում էին Խալդին, եւ դրանցով կատարուած գուշակութիւններն ել Խալդիի կամքն արտայայտող պատ-

<sup>1</sup> Մեր «Արմէն եւ Հայ Անունների Ծագումը եւ Ուրարտուն» գրքում մանրամասնօրէն ցոյց ենք տուել, որ Արմափը Արգիշտին է: Այս զիսի վերջում, Արգիշտիի մասին խօսելիս՝ դեռ մանրամասնօրէն եւ նոր փաստերով կը խօսենք այդ մասին:

գամախօսութիւններ էին, իսկ այդպիսի պատգամախօսութիւնների (գուշակութիւնների) պերճախօս քուրմ-արքան էլ Իշրուինի-Անուշաւանն էր, որը, ըստ Խորենացու պահած տեղեկութեան եղել է «խօսքով շատ հանճարեղ»:

Այս բոլոր երեսութիւններն ու փաստերը ուժեղացնում են մեր այն ենթադրութիւնը, որ գուշակութիւնների միջոց հանդիսացած այդ բարդիի *սօսի* անուան մեջ կարող է պահուած լինել *susi* տաճարի անուան յիշատակը եւ *susi* տաճարներն էլ կարող են Խալդիի պատգամախօսութեան վայրեր եղած լինել: (Այստեղ հետաքրքիր է նշել, որ անգլերէն *sooth say* նշանակում է «գուշակութիւն անել»): Այսպիսով՝ սրբազն սօսի-բարձի ծառերի եւ *susi* տաճարների մասին մեր կատարած այս քննութիւնը ցոյց է տալիս, որ Իշրուինի-Անուշաւանը եղել է Խալդեան տաճարի նշանաւոր եւ խօսքով հանճարեղ մտաւրական քուրմը: Արդէն տեսանք, որ *iš(i)buini* նշանակում է «գուշակութիւններ անող պատգամախօս քուրմ», մի բան, որը համապատասխանում է Անուշաւանի Սուանուէր կոչմանը:

Արայ Գեղեցիկ-Ծամիրամ առասպելը ինքնին պայմանաւոր-ուած է Ասորեստանի ժամանակ հայկական թագաւորութեան գոյութեամբ եւ Ծամիրամի ժամանակ նրա թագաւորի Արա կամ Արայեան Արայ կոչուած լինելով: Առասպելները չեն ծագում առանց պատմական հիմքի, այս առասպելն էլ, ի հարկէ, չի ծագել առանց պատմական հիմքի: Արդէն պատմական այդ հիմքից որոշ երեսութիւններ նշմարում են այստեղ: Ինչպէս տեսանք՝ Զամեար՝ Ծամսի-Աղադ V-ը (823-810 մ.թ.ա.) ժամանակակից էր Անուշաւան-Իշրուինիին (825-810 մ.թ.ա.): Ծամսի-Աղադ V-ը իր զահակալութիւնից առաջ դեռ իր հօր կենդանութեան ժամանակ, ամուսնացել էր Բարելոնի իշխանուի Ծամիրամի (Ծամմուրամաթի) հետ, որով Ծամիրամը ժամանակակից էր թէ Իշրուինիին եւ թէ նրա հայր Սարդուրի-(Կարդոս) Արայեան Արային:

Մեզ յայտնի է, որ Ծամսի-Աղադ V-ի եւ նրա հօր՝ Սալմանասար III-ի (858-824) ժամանակ Ասորեստանի կողմից արիւնալի արշաւանքներ կատարուեցին Ուրարտուի դէմ: Հետեւաբար անհաւանական չէ, որ այդ արշաւանքներից մէկի ժամանակ Ծամսի-

բամբ ընկերացած լինի իր ամուսնուն եւ դէմ առ դէմ եկած՝ Սարդուրի-Արայան Արայի հետ: Մանաւանդ որ Շամիրամը իր ամուսնու մահից յետոյ իշխել է միայնակ (809-806), որով այրի Շամիրամի մասին կարող էին հիսուել սիրային պատմոթիւններ: Այդ բոլորը, ի հարկէ, կարող էր իհմք լինել (կամ ծնունդ տալ) Արա Գեղեցիկ-Շամիրամ առասպելին, որը միաժամանակ ստացել է դիցաբանական զգեստաւորում՝ դառնալով *արեւ-Արային* սիրահետող Իշտար-Շամիրամ դիցուիու սիրավէպ: Մանաւանդ, ինչպէս ցոյց տուեցինք, Սարդուրի անուան «Արայորդի» իմաստը չի նշանակում, թէ նրա հօր անունը Արայ էր, այլ նա համարուել է արեւի աստուած Արդի-Արայի որդին, որով Արան կրնկրետ անձնաւորութիւն չէր այստեղ, եւ առասպելում էլ արդէն Շամիրամը չի գտնում Արային կենդանի, այլ հանդիպում է կենդանի Արայեան Արային (Կարդոս-Սարդուրիին):

Այստեղ միանգամից բացատրում ու պարզաբանում է այն առեղծուածը, թէ ինչու Տոքրա-Վանի կառուցումը վերագրուել է Շամիրամին, մինչդեռ յայտնի է, որ Վանը կառուցողը եղել է Արայ-Արայ-Սարդուրիին:

Շամիրամը *Շամս-ի* (սեմական «արեւի») կինն էր եւ սիրահետում էր (հայ արեւ) *Արային*. իսկ Վանը կառուցուել էր Ուրարտուի արեւի աստուած *Ըվինիի* կին Տոքրեա-ի անուամբ (որա համար Վանը կոչում էր Տոքրա): Որով դժուար չէ տեսնել, որ առասպելում *Շամիրամը* նոյնացուել է արեւ *Ըվինիի* կնոջ Տոքրեա-ի հետ եւ Տոքրա-Վանի կառուցումը վերագրուել է նրան: Ի հարկէ սա միաժամանակ փաստ է, որ առասպելը հիւսղները գտնում էին ուրարտական դէպքերի ու դիցաբանութեան ոլորտում:

Դիցաբանութեանը յայտնի է, թէ լուսինն էր համարում արեւի զուգակիցը: Ուստի Շամիրամը դարձել էր լուսինի աստուածուիի, որը սիրահետում էր Հայաստանի գեղեցիկ Արային (արեւին) եւ նրանից մերժուելով՝ իր անհամար հետեւորդ զինուորներով (աստղերով) արշաւում է նրա վրայ, բայց երբ յայտնում են Շամիրամն ու զինն ուրները՝ լուսինն ու աստղերը՝ մեռնում է Արան (մայր է մտնում արեւը) ու լուսին Շամիրամին չի յաջողում հանդիպել նրա հետ՝ նրա կենդանութեան (երկնքում գտնուած) ժամանակ, այլ

հանդիպում է կենդանի Սարդուրիին «Արայի որդույն», որը գուցէ ուներ երեկոյեան մի փայլուն ասաղի հաճամանք:

Առասպելը, ի հարկէ, արտացոլել է հզօրացած սեմական Սիցագետքի ազահ ցանկութիւնները հիւսիսի հարուստ լեռնաշխարհի նկատմանը, եւ ուրարտացինների պայքարը Ասորեստանի դէպի հիւսիս (դէպի Հայկական լեռնաշխարհ) կատարած աշխարհակալական ոտնձգութիւնների դէմ:

#### 4. Ուուսա

Արգիշտիի մասին խօսելուց առաջ ուզում ենք բերել մեր զննումները Ուուսա անուան մասին:

Ժամանակին Ս. Պալասաննեանը եւ յետոյ էլ ՀՍՍՀ ակադեմիայի թղթակից անդամ Մորուս Հասրաթեանը մատնանշել են, թէ հայկական աւանդութեան յիշած Հրաչեան Ուրարտուի Ուուսա գ-ն է<sup>1</sup>:

Մեր կատարած քննութիւնները նոյնպէս հաստատում են, որ Հրաչեայ անունը պահում է Ուուսա անուան յիշատակը, եւ թէ Խորենացու յիշած Հրաչեան ներկայացնում է Ուրարտուի վերջին Ուուսային կամ վերջին երկու Ուուսաներին: Դա հաստատում է թէ պատմագիտական տուեալներով եւ թէ անուան ստուգաբանութեամբ:

Նախ բերում ենք պատմագիտական-ժամանակագրական հետեւեալ տուեալները.

1. Մեպագիր նիւթերի ուսումնասիրութիւնը ցոյց է տուել, որ ուրարտական վերջին երկու արքաներն էլ կրել են Ուուսա անունը: Մեպագիր մի արձանագրութեան մէջ կարդացում է. «Ուուսա որդի

<sup>1</sup> Մորուս Հասրաթեանը «Հայրենիքի Զայնի» 1968 թոի Նոյեմբեր 27 համարում լոյս տեսած իր «Երերունի-Երեւան» յօդուածում գրում է «... միանգամայն իրաւացի կերպով երախտաշատ հայ մանկավարժ-պատմաբան Ստեփանոս Պալասաննեանը, դեռևս անցեալ դարի վերջին, զարմանալի սրատեսութեամբ, ուրարտական այս Ուուսա երրորդին, անվերապահ համարել է հայկական աւանդութեան Հրաչեան»:

Ուուսայի»: Սրանից յայտնի է դարձել, որ այս Ուուսան եղել է Ուուսա Գ-ի որդին:

Պարզ չէ, թէ ե՞րբ է գահ բարձրացել Ուուսա Գ-ը: Գիտութեան մէջ ընդհանուր կարծիք է զոյացել, որ Ուուսա Գ-ը եղել է Ուրարտուի վերջին արքան եւ նրա գահակալութիւնը վերջացել է ուրարտական հարստութեան անկման հետ (590թ. մ.թ.ա.): Հետեւաբար կարելի է ընդունել, որ Ուրարտուի վերջին 15-20 տարիները (605-590 կամ 610-590 մ.թ.ա.) մտել են այս երկու Ուուսաների գահակալութիւնների ժամանակաշրջանի մէջ:

Խորենացին Հրաշեայի ժամանակի մասին պահել է հետեւեալ շատ արժեքաւոր տեղեկութիւնը. «Առ սովու ասեան կեցեալ զՆարուզողոնոսոր արքայ Բարելացոց» (Ասում են, թէ սրա [Հրաշեայի] ժամանակ է ապրել բարելացիների Նարուզողոնոսոր արքան)<sup>1</sup>: Մեզ յայտնի է, որ Նարուզողոնոսորը (Nabuchadnezzar) գահակալել է 604-562 թուերին մ.թ.ա.: Հետեւաբար այս արքայի գահակալութեան սկզբի 14 տարիները (604-590 մ.թ.ա.) եղել են Ուրարտուի վերջին 14 տարիները: Սա պատմագիտական շատ կարեւոր եւ անհերքելի փաստ է, որ Հայաստանում այս ժամանակ ապրած Հրաշեան ուրարտական հարստութեան անկումից առաջ ապրած՝ Ուրարտուի վերջին երկու Ուուսաներից մէկն էր, մեծ հաւանականութեամբ վերջին (Դ) Ուուսան, որի գահակալութիւնը վերջացել է, ինչպէս ասուեց, 590 թուականին մ.թ.ա.:

2. Կայ պատմագիտական-ժամանակագրական մի փաստ եւս:

Յայտնի է, որ Խորենացու թերած հայ արքաների ցուցակում Հրաշեան գալիս է Պարոյրից անմիջապէս յետոյ (Պարոյր, Հրաշեայ, Փառնուաս, Պաճոյճ.... Տիգրան): Մեզ յայտնի է, որ Պարոյրը Արմե-Շուապրիայի թագաւորն էր: Նրա գահակալութեան թուերն են 652-612 մ.թ.ա.<sup>2</sup>:

<sup>1</sup> Խորենացի, Ա-իք: Ափսոս որ Խորենացին բառացի եւ լրի չի մէջբերում իր («Ասում են, թէ ...») աղքիւրի կամ աղքիւրների տուեալները:

<sup>2</sup> «Հայ ժողովրդի պատմութիւն», Երեւան, 1971, I, էջ 438:

Խորենացու պահած հայ արքաների ցուցակներն<sup>1</sup> ուսումնասիրողները գտնում են, որ այդ ցուցակներում իրար յաջորդող անուններից շատերը չեն պատկանում նոյն պետութեան ու հարբստութեան. նրանցից շատերը կարող են լինել հայկական տարբեր պետութիւնների կամ ցեղ-իշխանութիւնների ժամանակակից դեկավարներ: Ի հարկէ դա անսպասելի էր, քանի որ Խորենացին աչքի առաջ չուներ հայ ժողովրդի ժամանակագրականորէն կազմուած մի ընդհանուր պատմութիւն, այդպիսին գոյութիւն իսկ չուներ, այդպիսին չուներ եւ ոչ մի ժողովուրդ այդ ժամանակներին: Այդպիսի գործին ինքն էր ճեռնարկում մեր մօտ առաջին անգամ՝ հաւաքելով այստեղից-այնտեղից անկապ նիւթեր. եւ այդպիսի պայմաններում այնքանը, որ նա արել էր՝ արդէն հանճարի արդինք էր ու հրաշը:

Պարոյրից անմիջապէս յետոյ Հրաչեայի գալը չի նշանակում, թէ Հրաչեան Պարոյրի որդին էր, ոչ էլ նոյն պետութեան ու հարստութեան արքան: Այլ նշանակում է, թէ Խորենացին ունեցել է տուեալներ, որով Հրաչեային գտել է որպէս հայ արքայ, որը ժամանակով ապրել է Պարոյրից յետոյ: Նա զիտէր, որ Պարոյրը ապրել է Սարդանապալի (Աշուր-բանի-պալի-668-626 մ.թ.ա.) ժամանակ եւ օգնել է մարացի Վարրակէս-Կիարսարին վերցնելու Ասորեստանի իշխանութիւնը (կործանելու Նինուէն 612 մ.թ.ա.):

Եւ ինչպէս պարզ երեւում է, Պարոյրի գահակալութեան վերջին տարուց (612 մ.թ.ա.) յետոյ է զալիս Հրաչեան, որը ժամանակակից էր Նարուգողնոսորին նրա գահակալութեան առաջին 14 տարիների (604-590 մ.թ.ա.) ժամանակաշրջանում, ինչպէս Ուրարտուի վերջին երկու Ռուսաները, յատկապէս վերջինը:

Այսպիսով պիտի հաստատ համարել, որ Հրաչեան ներկայացնում է Ուրարտուի վերջին երկու Ռուսաներին կամ երկու Ռուսաներից մեկին, յատկապէս վերջին (Դ) Ռուսային:

Այստեղ ի հարկէ ծագում է այն հարցը, թէ ինչպէ՞ս է պատահել, որ Ռուսան կոչուել է Հրաչեայ. այս երկու անունները համանիշ բառե՞ր էին, թէ տարբերութիւնը սեպագրութեան բերութեան

<sup>1</sup> Խորենացի, Ա-ԺԹ, Իք:

արդիւնք էր, կամ ժամանակի հոլովումով կատարուած մէկը միւսի ձայնային փոփոխութիւնը:

Մենք կարծում ենք, որ *Հրաշեայ* անուան սկզբի Հ-ն յետագայում աճած ձայն է. *Ոռուսա* անուան սկզբում Հ ձայնի աճով (հմնտ. Ոռու > Հռում)` ստացուել է Հռուսա: Միաժամանակ, ի հարկէ, Հռուսա ձեւի ու-ն ազդուելով անուան վերջի ա-ից կարող էր հնչուել ա՝ Հռուսա-ն դարձնելով Հռուսա: Բայց դժուար է կոնկրետ բան ասել թէ ինչ պատճառով *Հռասս-ն* հնչուել կամ կոչուել է *Հրաշ* կամ *Հրաշեայ*:

Ի հարկէ պիտի աչքի առաջ ունենալ այն հաւանականութիւնը, որ ասուրաբարելականից փոխ առնուած ուրարտական սեպագրութիւնը չի կարողացել հարազատօրէն արտայայտել ոչ-սեմական ուրարտերէնի հնչինային համակարգի բոլոր նրբութիւնները: Այս սեպագրութեան մէջ, օրինակ՝ չկայ չ ձայնը կամ չա վանկը արտայայտող սեպախումք: Եթէ մեր այս արքայի անուան մէջ կար չ ձայնը (ինչպէս *Հրաշ* անուան մէջ)` ապա պիտի չկարողանային այն հարազատօրէն արտայայտել, այլ պիտի մի կերպ եւ աղաւաղուած ձեւով արտայայտէնի ձեռքի տակ եղած (ասենք za, sa կամ ša) սեպախսմբերով: Ի հարկէ սրանով մենք չենք ուզում պնդել, թէ այս արքայի անունը նախապէս *Հրաշ* էր եւ չ-ին մի կերպ արտայայտելով սա վանկով՝ *Հրաշ-ը* դարձել է *Հռասսա*: Բայց կարծես Ո-ռուսա ձեւով էլ չեն կարողացել արտայայտել այդ արքայի անուան ձայնը ճշղորթեամբ, որի մուսասիրեան ձեւն էր *Ուրցա(նա)*, իսկ ասորեստանեան արձանագրութիւնների մէջ էլ հնչուել է Ursal<sup>1</sup>, որը սումերերէն նշանակում է «որոտ»: Ի հարկէ այս վերջինը թելադրում է մտածել, որ այս արքայի անունը ունէր դիցաբանական իմաստ:

Մեզ յայտնի է արդէն (եւ դեռ ստորեւ *Արգիշտի* անուան տակ մանրամասնօրէն ցոյց կը տրուի), թէ Արամայիսը Արգիշտին է եւ

<sup>1</sup> Երեւի սումեր ursa «որոտ» բառի հետ կապ ունի (որոտի ձայն ունեցող) արջ բառը, ինչպէս եւ լս. Ursus (որից ֆրն. Ours, իտալ. orso), զնդ. arša, օսս. ars եւ այլն, հնմն. Ursia-Minor «Փոքր արջ» համաստեղութիւնները: Այս բառերը հնդեւրոպական են, հնդեւ. արմատն են համարում rktho ձեւը, որը ըստ սումերականի՝ կասկածելի է:

նշանակում է «Արորդի»: Տեսանք նաև, որ Սարդուրի անունը նոյնպէս նշանակում է «Արոի-Արայի որդի, Արայեան Արայ, Արայորդի»: Այս երեսյթը մեզ ներշնչել էր այն միտքը, թէ Սարդուրի («Արայորդի») որդի Ռուսայի եւ Արգիշտի («Արորդի») որդի Ռուսայի կապակցութիւնների Ռուսա անուան մէջ նատած է Ար կամ Արա անունը: Մեր վերոյիշեալ աշխատութեան մէջ հաւանական ենք համարել, որ Ռուսա անուան Ռու բաղադրիչը (ինչպէս եզիաւուական *Ra*-ն, Պամփիլական *Er*-ը եւ յունա-լատինական *Or*-ը)<sup>1</sup> ներկայացնում է արեւ-կրակի Ար կամ Արա աստուածը:

Ի հարկէ անհաւանական չէ, որ ազդուելով Ռուսա-Հրասա անուան ունեցած դիցարանական այս «արեւ-կրակ» իմաստից՝ յետազայում այն հնչել են Հրաչ կամ Հրաչեայ:

Ամենայն դէպս մի բան պարզ է ու հաստատ, որ հայկական աւանդութեան յիշած Հրաչեայ անուամբ պահպանուած է ուրարտական հարստութեան վերջին երկու Ռուսաները, կամ երկուսից մէկը, մեծ հաւանականութեամբ վերջինը՝ Ռուսա Դ-ը:

## 5. Արգիշտի

Ինչպէս նշեցինք վերեւում, այս անուան ստուգարանութիւնը ժամանակին բերել էինք մեր նախորդ աշխատութիւնների մէջ<sup>2</sup>, սակայն այստեղ նորից ենք բերում այն համադրելով յետազայում երեւան եկած նոր փաստերի հետ:

<sup>1</sup> Յայտնի է, որ Եզիպտոսում *Ra*-ն արեւի աստուածութիւն էր: Յայտնի է նաև, որ Պամփիլեան առասպելում *Armenios*-ի որդի *Er*-ը, որ ճակատամարտում մեռնելուց յետոյ յարութիւն է առնում խարոյլի վրայ, մեր Արան է, իսկ յունա-լատինական *Or*-ը նոյնպէս արեւի աստուածութիւն էր, որից կայ orient «արեւելք» բառը:

<sup>2</sup> Սարտիրոս Գավուրչեան, «Արմեն եւ Հայ Անունների Ծագումը եւ Ուրարտուն», Պէյրութ, 1973, էջ 217-231, տե՛ս նաև «Արմեն եւ Հայ անունների ծագումը», «Գարուն» ամսագիր, Երեւան, 1970, թի 7, էջ 51-65:

Հին Արեւելքի արքաների անունների նման՝ դիցաբանական հանգամանք կամ իմաստ ունեցող անուն է եղել նաև ուրարտական հզօրագոյն արքայի *Արգիշտի* անունը:

Արգիշտիի աստուածացման մասին է վկայում Ասորեստանի Սարգոն II-ի մի սեպագիր արձանագրութիւնը: Սարգոնը Սուսասիրի (Արդինի) Խալդեան տաճարից տարած աւարերը բուելիս՝ գրում է. «Ուրարտուի արքայ Արգիշտիի մի արձանը զիսիմ դրած՝ աստուածների աստղագարդ խոյր (քազ.) իր խորշի հետ (ամբողջը) բրոնզից՝ 60 տաղանդ ծանրութեամք»<sup>1</sup>: Այս վկայութիւնից պարզ հասկացում է, որ Արգիշտին ունէր աստուածային բնոյք կամ համարուել է աստծոյ սերունդ:

Այս հարցում մեր կատարած դիցաբանական ու սեպագրական-լեզուարանական ուսումնասիրութիւնները պարզել են, որ Արգիշտի **Արգիշտի** անունը բարդ բառ է եւ կազմուած է երեք բաղադրիչ բառերից: Առաջին *Ար* բաղադրիչը արմէնների արեւի աստուած *Ար-ն* է (Արա-ն): Անուան երկրորդ բաղադրիչ *զիշ* բառը (**Շ**) սումերերէն (եւ սեպագրական արտայայտութեամբ) նշանակում է «ծին, սերունդ, ճիւղ, ծառ»: *Գիշ*-ը որպէս որոշիչ (դետերմինատի) դրուել է նաեւ սումերաքաղական, ասուրաբարելական եւ, նրանց օրինակով, ուրարտական եւ այլ հին ժողովուրդների (ասուրաբարելականից վերցրած) սեպագիր արձանագրութիւնների մէջ ծառատեսակների եւ փայտից շինուած առարկաների անունների սկզբին: Բայց գիշ-ը այստեղ բերուած է որպէս ինաստակիր բառարմատ «ծին, սերունդ, ճիւղ կամ որդի» իմաստով<sup>2</sup>: Որով Ար-գիշ նշանակում էր «Ար-ի սերունդ, Արածին, Արորդի, Արեւորդի»:

Գիշ-ի այս իմաստը համեմատում ենք հետեւեալի հետ. Սիցագետքի սեպագիր արձանագրութիւնների մէջ արեւի Շամաշ աս-

<sup>1</sup> Thureau-Dangin, “Une Relation de La Huitième Campagne de Sargon”, արձանագրութեան տող 402:

<sup>2</sup> P.A.Deimel, տես ցիշ= աքքաղ. ՀԱՇԱԲՈ գերմ.. zweig «ճիւղ», III ցիշ=աքքաղ.. ԲԻՐԿՈ, գերմ. penis «արանդամ», աքքաղ.. ՐԻՒ, գերմ. erzeugen «սեռել»:

տուածութիւնը մերք նշում էր <sup>D</sup>Giš-šir-gal<sup>1</sup> դիցանուն-մակդիրով, որը նշանակում էր «լոյսի մեծ առիթ»: Giš-šir-gal տերմինը բարդ բառ է. առաջին գիշ բաղադրիչը, ինչպէս ասացինք, սումերերէն նշանակում է «ճիւղ կամ սերունդ, ծին, ծնել», իսկ շիր բառը սումերէն նշանակում է «շող, լոյս», որով գիշ-շիր կապակցութիւնը նշանակում է «լուսածին», իսկ gal բաղադրիչը նշանակում է «մեծ». հմտ. Lu-gal «մարդ մեծ=արքայ», որով Giš-šir-gal տերմինը ամբողջութեամբ նշանակում էր «լուսածին մեծ», այսինքն՝ «լոյսի մեծ առիթ», մի կոչում-մակդիր, որով նշում էին արեւի աստուած Շամաշին:

Giš-šir-gal տերմինի մեջ *զիշ* բառի ունեցած «ծին» նշանակութիւնը ապացոյց է, որ *Ար-զիշ* անուան *զիշ* բաղադրիչը նշանակում է «ծին, սերունդ կամ որդի»: Ուստի *Ար-զիշ* նշանակում է «Արածին, Ար-ի սերունդ, արեւի աստուած Ար-ի որդի», իսկ *Ար-զիշ-տի* անուան վերջին **տի**<sup>2</sup> բաղադրիչը նշանակում է «կենդանի, ապրող», որով *Ար-զիշ-տի* նշանակում է «Ար-որդին-կենդանի, Արեւորդին կենդանի»: Անուան այս իմաստից երեւում է, որ *Արզիշ-տի* տերմինի մեջ հիմնականը *Արզիշ* մասն է, իսկ *տի*-ն կցուած է որպէս մակդիր՝ ինչպէս Դաւիթ Անյալը անուան մեջ անյալը մակդիրը:

*Արեւորդի* անուան կցուած «կենդանի» մակդիրը պատահականութիւն չէ: Նկատի առնելով այն, որ արեւին, շանթին փոթոր-

<sup>1</sup> René Labat, “Manuel d’Epigraphie Akkadienne”, Paris, 1953, p. 137: Տե՛ս նաև Deimel:

<sup>2</sup> Այս տի վանկի սեպախումբը սեպագրութեան մեջ օգտագրոծում է մերք որպէս գաղափարագիր, «կենդանի» իմաստով, եւ մերք որպէս վանկ-հնչիւն: Դժուար է ասել, թէ այսուեղ այն բերուել է որպէս գաղափարագիր, թէ ոչ: Ուրարտերէնում այդ գաղափարագիրը ներկայացնում էր Շեհի բառին, բայց Ար-զիշ-տի անուանձեւը ուրարտական չէ: Ինչպէս տեսանք, *զիշը* սումերական է, *տի* բաղադրիչն էլ ունի թէ տի ձայնը եւ թէ «կենդանի, ապրող» իմաստը եւ զայխ է սումերական til «ապրիլ» բառից: Այս իմաստի համար կայ առանձին փաստ, որին կը բերենք ներքեւում *Արզիշտի-քրիստ* անունները համեմատելիս: Ուստի կարելի է մտածել, որ տի սեպախումբը բերուել է արտայայտելու համար «կենդանի» իմաստն ունեցող տի բառարմատի ձայնը, այլապէս պիտի ընդունել, որ այն գաղափարագիր էր «կենդանի» իմաստով եւ միաժամանակ հնչում էր *տի*:

կին եւ գերբնական այլ ուժերին ներկայացնող աստուածութիւնները գերմարդկային էին, եւ երբ հզօր արքային Արեւի ծագում է վերագրուել, երբ նա Արեւորդի է կոչուել, ապա նա համարուել է մարդկանց մեջ ապրող աստուածութիւն: Արգիշտին Ասորեստանի դեմ շահած յաղթանակներով դարձել էր Մերձաւոր Արեւելքի հզօրագոյն արքան: Որով նրան վերագրելով աստուածային (Արեւային) ծագում՝ նա պիտի համարուեր Ար-զիշ-տի «Արեւ աստծոյ որդին կենդանի» որպէս մարդկանց մեջ ապրող կենդանի աստուածորդի: Անհաւանական չէ, որ Արգիշտի I-ը նախապէս ունեցած լինի մի այլ անուն եւ հզօրութեան հասնելով է ստացել Ար-զիշ-տի «Ար-որդին-կենդանի» կոչումը: Այդ կոչումը, որ գալիս է հեթանոսութեան ժամանակներից, գտնում ենք նաև U. Գրքում, որտեղ Սիմոն Պետրոսը տեսնելով Յիսուսի կատարած հրաշքները՝ նրան ասում է. «Նու ես Քրիստոսը՝ կենդանի Աստծոյ-որդին»<sup>1</sup>: Մենք կարծում ենք, որ անուան հիմնական մասը Ար-զիշ էր, որը նշանակում էր «Ար-որդի, Արեւ-որդի»:

Եւ ահա հետաքրքիրը այն է, որ Ար-զիշ ունի ճիշդ Ար-մա անուան իմաստը: Վերեւում Արմա(-նի) անուան ծագումը բացատրելով՝ ցոյց էինք տուել, որ Ար-մա անուան Ար բաղադրիչը հայերի արեւի աստուած Ար-ն (Արա-ն) է, իսկ մա բաղադրիչը (բառարմատը) նշանակում է «ծին, սերել, սերունդ» (օրինակ՝ Արտաշամա<sup>2</sup> անունը նշանակում էր «Արտաշածին»), ցոյց էինք տուել, որ Ար-մա նշանակում է «Արածին, Արորդի», այսինքն՝ հայերի ազգային աստուած «Ար-ից(Արայից) սերուած»՝ «Արեւորդի»: Ուստի միանգամայն պարզ է, որ Ար-զիշ անունը ունի ճիշդ Ար-մա տերմինի նշանակութիւնը, ուր զիշ եւ մա հոմանիշ են «ծին, ճիշդ, սերունդ, որդի» իմաստով<sup>3</sup>:

<sup>1</sup> Այս յիշատակութիւն-վկայութիւնը կարեւոր փաստ ենք համարում Արգիշտիի մեծութեան ու նրա անուանը մեր բերած իմաստի համար:

<sup>2</sup> Խորենացի, Բ-Ժա:

<sup>3</sup> Գիշ եւ մա արմատների «ծին, որդի» իմաստով հոմանիշ լինելու ճշդութիւնը Բաղդադի սումերացիտութեան կենտրոնում ստուգել տալու համար Բաղդադ գրած նամակին 15-9-1971 թուակիր պատասխանում Դորս. Սովուս Տէր-Յակոբեանը գրում է, թէ հարցը՝ դպրոցի մեր ընկեր եւ այժմ Իրաքի հնագիտութեան ընդհանուր քննիչ Պրոֆ. Նուադ Սաֆարի հետ տարել են Բաղդադի սումերացի-

Բարեբախտաբար մեր փաստերը չեն սահմանափակում միայն սեպագրական-լեզուաբանական տուեալներով ու վերլուծութիւններով: Հին մատենագրութիւնը մեզ համար պահել է պատմագրական կոնկրետ եւ ստոյգ վկայութիւններ, որ Արդիշը Արմա-ն է: Այդ վկայութիւն-տուեալները գտնուում են Խորենացու եւ Թովմա Արձրունու մօս:

Ուրարտական արձանագրութիւններից եւ ուրարտագիտութիւնից գիտենք, որ Արդիշախն Արաքսի ափին կառուցել է քաղաք եւ իր անունով կոչել է Արգիշտիխնիլի: Գիտենք նաև, որ այդ քաղաքը Արմաւիրն է: Իսկ Խորենացին այս մասին պահել է պատմագիտական կարեւոր վկայութիւն: Նա գրում է. «...Արմայիս<sup>1</sup> շինէ իր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերը գետոյն, եւ անուանէ զնա յիր անուն Արմայիր» (Արմայիսը իր բնակութեան համար տուն է շինում զետի ափին մի բլուրի վրայ եւ իր անունով կոչում է Արմաւիր):

Այս վկայութեամբ ոչ թէ միայն տրուում է Արմայիրը կառուցած արքայի անուան Արմայիս լինելը, այլ եւ երեւան է հանուում ու քացատրուում, որ Արմայիր անունը կրում է Արմայիսի (Արմա) անունը: Արմայիրը եկած կլինի Արմա-քիր «Արմայի քաղաք» ճեւից: Քիր նշանակում է «տուն» (> «քաղաք, ցեղ»). հմնտ. Նաիրեան Գինզիրից եւ Սու-քիր (> Շուրբիա): Պտղոմէոսը (Բ

---

տութեան կենարոնի վարիչ Դսպոր. Ասպրոլ Հաղիին: Սումերական սկզբնաղթիւնների երկար տեսող պրազումները եւ մի շարք հեղինակաւոր բառարանների (CAD 1965, Vol. H. p. 258, AHW, 1966, Vol. 7, p. 615, Deimel, p. 617 եւ այլն) եւ C. T., Vol.22 սերսադի տուեալները հաստատել են, որ ցը եւ մա համանիշ են «սերունդ, որդի, ծին, ծնել, շինել» իմաստով: Եւ ինձ գրած նամակում շնօրհաւորում են Արգիշտիի Արմայիս լինելը ցոյց տուող իմ ստուգաբանութիւններն ու փաստարկութիւնները՝ յոյս յայտնելով, որ երեւան կզան նաև պատմագիտական տուեալներ ուժեղացնելու լեզուաբանական-սեպագրական այս փաստերը: Իսկ մենք արդէն ունենք այդ փաստերը:

<sup>1</sup> Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Ի Վենետիկ, 1881, Ա.-Ժթ, էջ 60: Սեր ճեռքի տակ եղող այս հրատարակութեան մէջ բերուած է Արմայիս, որը անուան հնագոյն ծեւն է. այլ հրատարակութիւնների մէջ (քարգմանութեան մէջ) այս անունը բերուած է նաև Արամայիս ծեւով: Այս ճեւը թէեւ հնագոյնը չէ, բայց միսալ չէ, որովհետեւ Ար եւ Արա նոյնն են:

դար) յիշում է *Արմառորիա* ձեւով (Արմա-քիր-իա > Արմաքրիա > Արմառորիա):

Ոմանք ասում են, թէ *Արգիշտիխինհյլիմ* յետագայում եկուոր հայերի կողմից անուանուեց *Արմաւիր*: Այս յայտարարութիւնը անում են առանց հիմքի, ինչպէս առանց հիմքի հայերին եկուոր են համարում: Նրանք ուզում են ասել, որ Արմաւիրը կառուցուել է Երուանդունիների կողմից եւ նրանց կողմից էլ անուանուել է Արմաիր: Ծիշծ է, որ Երուանդունիները վերակառուցումներ կատարել են Արմաւիրում, բայց չեն եղել նրա հիմնադիրները: Արդեօք այդպիսի յայտարարութիւն անողները հիմա<sup>9</sup> էլ Խորենացուն յերիւրող են համարում, երբ գրում է, թէ այդ քաղաքը իր անունով կառուցողը եղել է Արմայիսը: Եթէ հաւատում են Խորենացուն, ապա պէտք է Երուանդունիների մէջ ցոյց տան Արմայիս անունով մի արքայ, իսկ եթէ չեն կարող (Եւ ի հարկէ չեն կարող՝ քանի որ ոչ Երուանդունիների մէջ եւ ոչ էլ Արտաշեսեանների մէջ այդ անունով արքայ չի եղել), ապա պէտք է ընդունեն, որ այդ արքան ապրել է Ուրարտուի ժամանակ:

Արգիշտիխինհյլի եւ Ուրարտու անունների միջեւ տարբերութիւնը այն էր, որ *Արգիշտի-խինհ-լի* նշանակում էր «*Արգիշտի-ական-ներ* (*Արմայիս-ական-ներ*)»<sup>1</sup>, իսկ *Արմա-լիր* նշանակում էր «*Արմայի քաղաք*»: Մէկում նշուած էր քաղաքի բնակչութիւնը, իսկ միւսում՝ քաղաքը (կառուցողի անունով հանդերձ):

<sup>1</sup> Ուրարտական իւրաքանչյուր արքայ իր համար կառուցում էր քաղաք, ուր տեղաւորում էր իր քազմանդամ ընտանիքի հետ կապուած ազգականներին, սպասաւորներին, զինեալ պահակներին, ծիերին ու ծիապաններին, ինչպէս եւ այն քազմահազար գերիներին (տղամարդիկ, կանայք, պատանիներ), որոնց քշում տանում էր կատարած արշաւանքների ժամանակ: Այդ պատճառով այդ բնակավայրում ապրում էին արքային պատկանողները (օրինակ՝ եթէ պատկանում էր Արգիշտին), կոչում էր Արգիշտի-խինհ-լի «Արգիշտեկաններ, Արգիշտեանք»: Ի հարկէ մեծ հզորութեան հասած արքան իր կատարած արշաւանքների մեծ ծավալի եւ ձեռք բերած գերիների մեծ քանակի պատճառով, ի հարկէ եւ քազմակնութեամբ ունեցած գերդաստանային տարբեր միաւորումների համար, կառուցում էր եւ այլ բնակավայր-քաղաքներ:

Մեր կարծիքով Խորենացին իր պահած այս տեղեկութիւնը վերցրած այստի լինի Մար-Աբայի կամ քաղդէալան-ասորեստանեան մի պատմագիտական հաւաստի հին աղբիւրից<sup>1</sup>:

Եթէ մեր սեպագրական-լեզուարանական վերոյիշեալ վերլուծութիւններն ու Խորենացու պահած պատմագիտական մեծարժեք վկայութիւնը բաւական չեն համոզուելու, որ Արգիշտիմ Արմայիսն է, ապա այստեղ կրերենք վերջերս մեր ուշադրութիւնը գրաւած պատմագիտական-ժամանակագրական կոնկրետ տուեալներ պարունակող մի անհերքելի վկայութիւն, որը, կարծում ենք, կասկած չի բողնելու, որ Արմայիսը (Արամայիսը) Արգիշտի է: Այդ վկայութիւնը գտնուում է Թովմա Արծրունու մօտ, որը 1100 տարի առաջ պիտի քաղած լինի իր ժամանակներին դեռ գոյութիւն ունեցած պատմագիտական մի ճշգրիտ եւ հաւաստի տեղեկութիւններ պարունակած մատեանից:

Նա գրում է. «Արդ, ինչո՞ւ եմ ասում, թէ քազում ժամանակներ յետոյ Շամիրամի ամուսին Նինոսը, որից սերուեց Նինուասը, կառուցել է Նինուէն: Նրա սերունդները աճելով հասել են մինչեւ Սեմերերիմ քազատրը, Երրայեցիների քազատր Եզեկիայի եւ մեր Հարամայիսի ժամանակները»<sup>2</sup>:

Ինչպէս տեսնում ենք, այստեղ վկայութիւն կայ այն մասին, թէ Ասորեստանի Սեմերերիմ, Երրայեցիների Եզեկիա եւ մեր Հարամայիս (Արամայիս) արքաները ժամանակակից են եղել: Եւ յիրաի, պատմագիտական ճշգրիտ տուեալներով Սեմերերիմ (Սիմեխարիր) եւ Եզեկիա արքաները ժամանակակից են: Նրանց գահակալութեան տարեթուերը բերուած են արդէն Թովմա Արծրունու գրի նշուած քարզմանութեան ծանօթագրութիւնների մէջ՝ էջ 330: Սիա դրանք.

**Սեմերերիմ՝ մ.թ.ա. 705-680**

**Եզեկիա՝ մ.թ.ա. 723-694**

<sup>1</sup> Խորենացին գրում է. «...թէ ո՞րտեղից մենք այսպէս գիտենք մեր նախնիների անունները, այլև շատերի գործերը՝ կը պատասխանեմ-քաղդէացիների, ասորեստանցիների եւ Պարսից հին դիւաններից» (Ա-Բա):

<sup>2</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն, «Պատմութիւն Արծրունեաց Տան», Երեւան, 1978, էջ 30 (քարզմանութիւն Վրէժ Վարդանեանի):

Հետաքրքիր էր, թէ մ.թ.ա. 8-րդ և 7-րդ դարերի սահմանագծին մերոնցից ով էր զահակալում, որը կոչուել է Հարամայիս: Պարզ է, որ այս ժամանակները Ուրարտուի ժամանակներ էին:

Նայելով ուրարտական արքաների ցուցակին ու նրանց զահակալութեան բուերին՝ տեսնում ենք, որ այս ժամանակներին զահակալել է

*Արգիշտի Բ՝ մ.թ.ա. 713-685*

Սա արդէն շոշափելի ու աղաղակող փաստ է: Պատմագիտական այս կոնկրետ եւ ժամանակագրականօրէն ճշգրիտ վկայութիւնը պարզօրէն ցոյց է տալիս, որ ուրարտական այս արքան, որի անուան սեպախմբերը կարդում են Արգիշտի, կեանքում (ժողովրդի կողմից) ծանօթ էր Արմայիս (Արամայիս-Հարամայիս) անունով: Այս ծանրակշիռ ու գիտականօրէն ճշգրիտ ու անհերքելի փաստի էլ կողքով անցնելը կիհներ գիտակցական մեղանչում ուրարտագիտութեան զարգացման դէմ:

Եթէ Արամայիսը (Հարամայիսը) ժամանակագրականօրէն համեմատուած լիներ օտար մէկ բազաւրի հետ, գուցէ ասուէր, թէ դա պատահական համընկնում է, բայց համեմատուել է երկու եւ տարբեր երկրների ժամանակակից արքաների հետ: Այսինքն՝ համեմատուել են ժամանակակից երեք երկրների երեք ժամանակակից արքաներ: Սա արդէն աներկայելիօրէն գիտական է: Սա ցոյց է տալիս, որ Թովմա Արծրունին այս տեղեկութիւնները քաղել է պատմագիտական արժէք ունեցած եւ ճշգրիտ տեղեկութիւններ գրանցած մի հին մատեանից, կամ պատմագիտական մի շատ աւելի հին աղբիւրից օգտուած մի հին մատեանից: Կարծես մեզ հետաքրքրող տեղեկութեան համար Արծրունու աղբիւրը եղել է Եւսեբիոս Կեսարացին կամ Յուլիանոս Հալիկառնացին, որոնցից օգտուել է նա<sup>1</sup>:

<sup>1</sup> Երեւի, Արծրունին իր բերած այս տեղեկութեան համար ունեցել է իրարից տարբերուող երկու աղբիւրներ: Մէկից վերցրել է «Արդ, ինչո՞ւ են ասում, թէ բազում ժամանակներ յետոյ Շամիրամի ամուսին Նիմուր, որից սերուեց Նիմուրը, կառուցել է Նիմուէն», իսկ միասից («մինչդեռ» նրա սերունդներն ածելով հասել են մինչեւ Սեմերերիմ բազաւրը, երրայեցինների բազաւրը Եզեկիայի եւ մեր Հարամայիսի ժամանակները»: Այս երկրորդ եւ ըստ իրեն աւելի ճիշդ տեղեկու-

Կարծում ենք Խորենացու եւ Թ. Արծրունու պահած այս տեղեկութիւն-փաստերը բաւական են ընդունելու, որ Արգիշտին Արմայիսն է: Սակայն իր հետաքրքրութեան համար այստեղ կը բերենք նաև Խորենացու գրանցած ու պահած մի թարուն տուեալ որ Սարդուրիի հայր Արգիշտին եղել է Արմայիսը: Դա Արգիշտիի որդու Սարդուրիի Էրիախուում (Ծիրակում) կատարած ռազմական կողոպտիչ գործողութիւններից մէկի աւանդական արձագանգն է, որ գրի է առնուած՝ իր օրին դրանց գիտական արժեքը առաջինը գնահատող Խորենացու կողմից:

Բերում ենք նախ Սարդուրիի՝ իր այդ կողոպտիչ արշաւանքի մասին թողած արձանագրութեան մեզ հետաքրքրող մասը. «...Մեծութեամբ Խալդի աստծոյ արշաւեց Սարդուրին՝ Արգիշտիի որդին: Սարդուրին ասում է. արշաւեցի Էրիախուի վրայ, նուածեցի ես Էրիախու երկիրը. մէկ օրում ես (այն) գրաւեցի, թաքցրած պահեստներ (?)» հայրերից եւ պապերից մնացած, որտեղ հարստութիւններ էին պահուում որպէսզի արքաները ուրարտական ոչ մի անգամ չկարողանան գրաւել, տերունական կարգադրութեամբը Խալդիի ես 150 թարուն պահեստատներ (?) գրաւեցի»:

---

Թիւնը քաղած պիտի լինի մի քանի տող յետոյ գրածների համար որպէս հեղինակ նշած Ե. Կեսարացու եւ Յ. Հայիկառնացու մատեաններից. նա գրում է. «Որովհետեւ, ինչպէս զրում են, Ասուրը, որ սերում է Սեմից, կառուցել է Նինուն, իսկ Սենեքերիմը ժառանգարար թագաւորել է Նինուէում եւ անուանուել Ասորեստանի թագաւորը: Այս մասին մեզ հաստատապէս պատմում են Եստերիոս Կեսարացին, Յուլիանոս Հայիկառնացին...»: Այս հեղինակների գործերի պատմագիտական արժեքը երևում է անգամ նրանցից բերուած այս վերջին տեղեկութիւնից: Այդտեղ ասում է թէ Աշուրը կառուցել է Նինուն, իսկ Սենեքերիմը ժառանգարար թագաւորել է Նինուէում: Սա ունի պատմագիտական ճշգրտիւն: Ասուրը Ասորեստանի աստուածն է, որի անունով են գործում, կառուցում Ասորեստանի թագաւորները: Ուրեմն, ըստ այս տեղեկութեան, Նինուն առաջ գոյութիւն ունեցել է, բայց Սենեքերիմը այն ժառանգելով դարձրել է իր մայրագարը: Եւ յիրաւի, սեպագրական պատմութիւնից գիտենք, որ Նինուէին առաջին անգամ Ասորեստանի մայրաքաղաք դարձնողն ու այդտեղ փոխադրողը եղել է հենց Սենեքերիմ-Սինախերիքը: Սա ինքնին ցոյց է տալիս, որ այս աղքիւրը լաւատեղեակ էր Ասորեստանի եւ նրա հարեւան երկրների (այդ թում Ուրարտուի ու Երրայեցիների) պատմութեանը:

Էրիախի (Ծիրակի) այս նշանաւոր պահեստները (ամբարները) որպէս երկրի հարստութեան արդիւնք ու բարեկեցութեան նշան՝ Ծիրակի համար պատմականօրէն եղել են բնորոշ, եւ Սարդուրիի կողմից (Սարդուրին յիշողութեան մէջ մնացել է Ծարա ձեռվլ) կողոպսուելը այնավիսի մի մեծ աղէտ, որ նրանց յիշատակը մեծ տեղ է գրաւել ժողովրդի յիշողութեան մէջ եւ սերնդէ սերունդ աւանդուելով հասել է Խորենացու ժամանակներին՝ առածի կամ ասացուածքի ձեռվլ։ Խորենացին շարունակելով Արմայիսի մասին բերածները աւելացնում է. «Իսկ իր որդուն, բազմազաւակ եւ շատակեր Ծարային ամրող աղխով ուղարկում է մի մերժակայ արգաւանդ ու բերդի դաշտ (Ծիրակ=Էրիախի)...։ Ուստի, թում է, թէ արդարանում է զիտացիների մէջ զործածուող առածը «Դու, ասում են, Ծարայի որկորն ունես, բայց մենք Ծիրակի ամրարները չունենք»<sup>1</sup>։

Այս թանկագին վկայութիւն-յիշատակութիւններից նախ հասկացնում է, որ Արմայիսի որդի Սարդուրի (Սարդ-ուրի) անունից ժողովրդի յիշողութեան մէջ պահուել է միայն անուան սկզբի Սարվանկը Ծարա ձեռվլ։ Մելազրութեան մէջ էլ մերք այս վանկը արտայայտում էր Իշտար-ի գաղափարագրով։

Սարդուրին Էրիախի-Ծիրակի վրայ կողոպտիչ արշաւանքներ շատ է կատարել։ Այդ բոլորի հետ նրա կողմից Ծիրակի՝ այդ պապերից մնացած 150 թաքուն եւ նշանաւոր ամբարների կողոպտուելը ժողովրդի յիշողութեան մէջ դարձել է ասացուածք։ Ծարան (Սարդուրին) որակուել է «շատակեր» նակդիրով, նրա անկուշո որկորի մեծութիւնը առածի կարգ է անցել, դարձել է նշանաւոր, որ այդպիսի որկորի համար Ծիրակի (Էրիախի) ամբարներն են պէտք։

Այս վկայութիւն-յիշատակութիւններից երեսում է, որ Ծարան Սարդուրի Բ-ն է, որ Սարդուրիի հայր Արգիշտին Ծարայի հայր Արմայիսն է։

<sup>1</sup> Խորենացի, Ա-Ժ (թարգմանութիւնը Մալխասեանից՝ «Մովսէս Խորենացի», Երևան, 1940):

Սումերական *Ումմա* քաղաքը ունէր կանաչութեան աստուած *Չարա* անունով<sup>1</sup>: Դժուար է մեր Շարային ծագումով կապել այս աստուածութեան հետ, եթէ կար որեւէ կապ, ապա կարելի է ընդունել, որ Սարդուրին առնչուել է այդ աստուածութեան քնոյթի հետ:

Այստեղ արդէն առաջանում է այն հարցը, թէ արդեօր ինչ-պէ՞ս է առաջացել Արգիշտիի անուան երկութիւնը: Արդեօր կեանքում (ժողովրդի կողմից) ո՞ր մէկով էր կոչում այս արքան իր օրում: Գիտեմք, որ *Արգիշ*(-տի) եւ *Արմախ* համանիշ են: Արդեօ՞ք սրանք մէկը միւսի (մի օտար լեզուից միւսին կատարուած) բարգմանութիւնն են, թէ՞ պարզապէս նոյն լեզուին պատկանող հոմանիշ բառաձեւեր: Կամ արդեօ՞ք *Արգիշը Արմայիս* անուան սեպագրական տեխնիքական արտայայտութիւնն էր:

Ուրարտական արձանագրութիւններում *Ar-giš-ti* անուան ՀԱ գiš մասը շատ յաճախ արտայայտուել է ՚ՊԱ ՀԱ gi-iš սեպախմբերով, եւ այս ձեւը աւելի է օգտագործուել քան զիշ ձեւը: Սրանք ի հարկէ առանց պատճառի պատահականութիւններ չեն: Առաջին հայացքով այն տպաւրութիւնն է ստեղծում, որ *gi-iš* սեպախմբերը բերել են պարզորոշելու *giš* բաղադրիչի զիշ հնչումը (*giš*-ը արձանագրութիւնների մէջ մերք օգտագործում է որպէս որոշիչ ու մերք որպէս զաղափարազիք): Բայց հարցի մէջ խորանալիս՝ երեւում է, որ կար եւ ուրիշ պատճառ: *Արգիշ* եւ *Արմախ* ձեւերի համեմատութիւնը ցոյց է տալիս, որ *giš*-ը կարծես բերուել է *gi-iš* սեպախմբերի տեղ, որովհետեւ *giš*-ը մէկ եւ աւելի փոքր սեպախմբով էր գրում եւ աւելի քիչ տեղ էր գրաւում. գրելը աւելի հեշտ էր: Ուրարտական այս արքայի անունը, *Արգիշ* ձեւից աւելի, բերուել է *Ար-զի-հշ* ձեւով եւ հենց այս ձեւն էլ կարող է արտայայտած լինել *Ար-մա-իս* (Արմայիս) անունը:

Միանգամայն ակնյայտ է, որ *Ար-զի-հշ* վանկերի առաջին՝ *Ար* եւ վերջին՝ *հշ* վանկերը լրի համապատասխանում են *Ար-մա-իս* անուան առաջին՝ *Ար* եւ վերջին՝ *իս* վանկերին (իշ-ը լինում է նաև is): Մնում է բացատրել միայն միջին զիշին մա վանկի մա լինելը:

<sup>1</sup> Dr. G. Contenau, “La Civilisation Des Hittites et Des Hurrites Du Mitanni”, Paris, 1948, p. 77:

Մենք գտնում ենք, որ ուրարտական արքայի գրիշը *Ար-մա-իս* անուան *իս* (կամ *իշ*) վերջաւորութիւնը՝ **Ա** սեպախմբով արտայայտելուց առաջ՝ պիտի պահէր-արտայայտէր մաս բաղադրիչի «ծին», սերունդը նշանակութիւնը: Այդ բանը կարելի չէր անել հասարակ **Է** մաս վաճկով: Մեծ կարևորութիւն ուներ այս հզօր արքայի անուան իմաստը: Գրիշը չէր կարող անտեսել պաշտօնական գրութեան մէջ այդ անուան ունեցած «Ար աստծոյ որդի» իմաստը պահելունշելու անհրաժեշտութիւնը, անգամ՝ պարտադրելիութիւնը: Այդ պատճառով՝ այդ բաղադրիչի «ծին» իմաստը արտայայտելու համար բերուել է gi սեպախումբը, որը սումերերէն նշանակում էր «եղեգ» եւ նախապէս ներկայացնում էր gin<sup>1</sup> բառը. այդ բանը երեւում է անգամ նրա աքքաղական կան ձեւից, որը որդեգրուած է սումերերէնից. հմնտ. նաեւ անզերէն cane «եղեգ, գաւազան» եւ հայ գան (ածեծ), գան(ահարել) բառերը, որ երեխի գան նշանակում էր «եղեգ» կամ «եղեգից գաւազան»: Արդէն սումերերէն gin նշանակում է «ծին»: Ուստի gi (<gin>) «եղեգ» սեպախումբը շատ յարմար էր արտայայտելու *Ար-մա-իս* («Արածին») անուան մաս բաղադրիչի «ծին» իմաստը:

Դիցաբանութեանը յայտնի է, որ ըստ հեթանոսական հաւատալիքների, արեւն ու կրակը ծնուում են բոյսից, յատկապէս եղեգից: Յիշել *Վահազնի*<sup>2</sup> ծնունդը պատկերող (արեւի-կրակի ծնունդը պատկերող) մեր հեթանոսական «Երկներ երկին, երկներ երկիր...» բանաստեղծութեան հետեւեալ տողերը

*Երկն ի ծովուն ունէր եւ զկարմրիկն եղեզնիկ.*

*Ընդ եղեգան փող ծոխս ելանէր,*

*Ընդ եղեգան փող բոց ելանէր.*

<sup>1</sup> S. Langdon, նշուած գիրը, տես էջ 27 («ԱՐԱ gin, a reed, became gi»):

<sup>2</sup> Սեր «Արմէն եւ Հայ Անունների Ծագումը եւ Ուրարտուն» գրքի 198-205 էջերում մանրանանօրէն ցոյց ենք սուել, որ *Վահազն*-ը հրարուիսի աստուածութիւն էր, ծագել էր սումերերէն Bil-gin (Gi-bil) «կրակի աստուածութեան նշող տերմինից, որը բառացի նշանակում էր «քոցավառուող եղեգ»: Նոյն ծագումն ուներ նաև հոռմէական հրարուիսի աստուած vulcan “orbit” եւ սուրան «հրարուխ» բառերը:

Ինչպէս պարզ երեւում է՝ կրակը ծնուում էր եւ դուրս էր գալիս եղեգի միջից, իսկ արեւը դուրս էր գալիս եկող կրակի-բոցի միջից.

*Եւ ի բոցյան վագեր խարտեաշ պատաճեկիկ.*

*Նա հուր հեր ուներ,*

*(Ապա թէ) բոց ուներ մօրոս,*

*Եւ աշկունքն էին արեգակունք:*

Քանի որ *Ար-մա-իս* նշանակում էր «Արածին» (-իս-ը վերջածանց է), ապա արեւ աստծուն ներկայացնող *Ար* բաղադրիչից յետոյ «եղեգ» նշանակող *gi(gin)* սեպախումբը կարող էր տալ մասքաղադիչի «ծին» իմաստը, արդէն, ինչպէս ասացինք, *gin* արմատը սումերերէն նշանակում էր «ծին»:

Այսպիսով տեսնում ենք, որ *Ar-gi-iš* սեպախումբերով արտայայտում էր նաև *Ար-մա-իս* անունը:

Ի մի բերելով Արգիշտի-Արմայիս արքայանուան մասին վերեւում բերուածները՝ գտնում ենք, որ այս անունով յայտնի ուրարտական երկու (I և II) արքաները ժողովրդի կողմից կոչում էին *Արմաիս*: Այսուհանդերձ *Ար-գիշ-տի* անուանածնեն էլ (արտասանութիւնը), որի երկրորդ եւ երրորդ բաղադրիչները սումերական ծագում ունեն, աւելի սեպագրական-պաշտօնական էր եւ դրանով էր այս արքան ծանօթ օտարներին:

Դիտի ընդունել, որ *Ար-գիշ-տի* ձեւը իր գիշ եւ *տի* բաղադրիչներով ուրարտական չէ: Աներկրայօրէն հաստատ է, որ *Ար-գիշ-տի* նշանակում է «Ար-որդին-կենդանի», իսկ գիշ ու *տի* (կամ *gi* < *gin* եւ *ti* < *til*) բառերը ծագումով լինելով սումերական՝ դարձել էին Սոացաւոր Ասիայում տարածուած սեպագրութեան մէջ օգտագործուող տերմիններ:

*Արգիշտի* անուանածնի պետական-պաշտօնական հանգամանքին պիտի վերագրել նաև *Արծեշ* բաղաքանուան մէջ *Արգիշ* արքայանուան պահպանուած լինելը, եթէ այդ նոյնացումը ճիշդ է: «Եթե» ենք ասում, որովետեւ այդ մասին ունենք որոշ կասկած՝ աշքի առաջ ունենալով նախ այն, որ դրա համար արձանագրական վկայութիւն չկայ, իսկ ոմանց համար այդպիսի կարծիք ներշնչող՝ *Արգիշտի* II-ի երկու արձանագրութիւնները, որոնց մէջ ծովերեայ բաղաքի կառուցման մասին խօսք չկայ, գտնուել են ոչ թէ *Արծեշ*ում, այլ նրանից բաւական հեռու վայրում, իսկ *Արգիշտիունան* *Արծեշ*ում տեղադրելը նոյնպէս կլինի անհիմն ենթադրութիւն.

արդէն Արգիշտիոնան ոմանք տեղադրում են Վանայ լճից հարաւ (Հայ ժող. պատմութ. 1971, էջ 339): Մանաւանդ ծովափը սովորական տեղ չէր, եւ քաղաքի ծովափնեայ լինելը կը նշուէր արձանագրութեան մէջ: Երկրորդ՝ հաւանական ենք համարում, որ *Ար-Ճեշ* անուան մէջ *Ար-ից* յետոյ նստած է ուրարտական ծուէ «լիճ» (ջրեր, գետ) բառը, որովհետեւ *ԱրՃշից* զատ նոյն անունով կան նաև՝ Վանայ լճի արեւելքում Արճիշակ (Արճակ) լիճը, սրա շուրջ Արճիշակովիտ զաւառը, եւ մէջը քափուող Արճիշակ գետը (Մահմետիկ), մի գետի ափին Արճիշ (Արճիս) գիտը ՀՍՍՀ Հոկտեմբերեանի շրջանում (աւանդութիւնը սրան կապում է Ղարաբաղի *Արճիս* գիտի հետ): Ինչպէս տեսնում ենք, այս բոլորն էլ կապուած են լիճ, գետ (կամ լճի ափի, գետի ափի մօս գտնուելու) գաղափարի հետ: Որով անհաւանական չէ, որ *Ար-Ճեշ* անուան -Ճեշ բաղադրիչի մէջ նստած է ուրարտական ծուէ «լիճ» բառարմատը: Արծուէ-ակ > Ար-ծակ > Արճակ-Արճիշակ:

Ուրարտական արքայի անուան այս (Արգիշտի, Արմայիս) երկուութեան համար կարող է լինել հաւանական մէկից աւելի բացատրութիւն. կամ այն է, որ դրանք նոյն լեզուի հոմանիշներ էին, կամ Ուրարտուում կենդանի երկլեզուանիութեան հետեւանք, կամ էլ իշխող ժողովրդի խօսակցական կենդանի լեզուի հետ՝ խօսակցական լինելուց վաղուց դադրած, բայց սեպագրականացուած ու պաշտօնական գրութիւնների համար օգտագործուած տաճարային մի հին լեզուի գոյութեան հետեւանք՝ կապուած աւելի սեպագրական արտայայտման ձեւերի հետ:

Ուրարտական միւս արքաների անունների հետ կապուած երեւոյթներ եւ այլ տուեալներ թելադրում են աւելի վերջին հաւանականութիւնը:

Մենք տեսանք, որ *Արամէ*, *Լուտիրրի* եւ *Իշրուինի* անունները նոյնպէս ունեցել են դիցաբանական իմաստ, բայց չեն ունեցել տարահնչուն հոմանիշներ: Այդ անունների երկուութիւն չի եղել, թէեւ ժամանակի հոլովումով վերջին երկուսը ենթարկուել են աղաւաղումների: Այս երեւոյթը նուազեցնում է երկլեզուանիութեան հաւանականութիւնը (խօսքը, ի հարկէ, վերաբերում է իշխող ժողովրդին, ոչ թէ ոչ-նախրեան ենթակայ ցեղերի հաւանական տարբեր լեզուներին):

*Արգիշտի* ձեւը երեսի սեպագրական պաշտօնական արտայայտութիւն էր, իսկ *Արմայիսը*՝ ժողովրդի խօսակցական լեզուի արտասանութիւն: *Արմայիս* արտասանող լեզուն Ուրարտուի իշ-

խող ժողովրդի լեզուն էր՝ օտար չէր, որովհետեւ *Արմայիս* (*Արամայիս*), *Արամէ*, *Էրիմենա* անունները նոյն ժողովրդին ու լեզուին են պատկանում՝ *Արմանի* կամ *Արմէ(-նի)* կոչուած ժողովրդին։ Արմախ, Արամէ եւ *Էրիմենա* անունները եղել են հենց սկզբնականը, պատկանել են իշխող լեզուին եւ պահպանուել են ներկայ արմենների մօտ Արամայիս, Արամ եւ *Արամանեակ* անուններով, չեն փոխուել։

Մենք աւելի հաւանական ենք համարում, որ ուրարտական արձանագրութիւնների լեզուն գործածութիւնից վաղուց դադրած մեհենական մի հին լեզու էր, որը գործածում էր լոկ մեհենանների երգեցողութիւնների եւ արարողութիւնների ժամանակ՝ ինչպէս ներկայ գրաբարը մեր եկեղեցիներում<sup>1</sup>։

Ինչպէս յայտնի է, Սարդուրի I-ն է, որ սկսել էր սեպագիր արձանագրութիւնները Ուրարտուում եւ դա էլ ասուրական լեզուով։ Երեւի նա հրաւիրել էր սեպագրագէտ, կարդալու համար Ասորեստանից եւ այլ երկրներից ստացուող տիպլոմատիկական սեպագիր գրութիւնները, որը գիտեր գրել ասուրերէն։ Իշբուինին է, որ փոխել է այն ուրարտական արձանագրութիւնների լեզուին։ Իշբուինին (Անուշաւանը), ինչպէս տեսանք, եղել է նշանաւոր մտաւրիական քուրմ-արքայ, եղել է գուշակութիւնների «խօսքով հանճարեղ» պատգամախոս քուրմը։ Նա էր, որ քողել է Միերի դրան մեծ արձանագրութիւնը, որի մէջ գրանցել է իր կազմած՝ ուրարտական քուրոր աստուածների ցուցակը՝ նրանց նատուցուելիք զոհերի տեսակներով ու քանակներով։ այլ խօսքով՝ նա կազմել էր Ուրարտուի կրօնական օրացոյցը։ Նա եղել է գիտնական այն քուրմը, որը կարող էր սեպագրականացնել մի նոր լեզու։ Ուստի քնական է, որ նա իր արձանագրութիւնների համար պիտի ընտրեր իր տաճարի լեզուն, ոչ թէ ժողովրդի խօսակցականը, որը հաւանաբար միաբարբառ չէր եւ ունէր (ըստ աշխարհագրականօրէն իրարից առանձնացած նախրեան մեծ ու կարեւոր ցեղերի) տարբեր բարբառներ։

<sup>1</sup> Այսպիսի երեւոյթ յայտնի է նաև խեթերի մօտ, որ «կրօնական արարողութիւնը կատարուում էր տարբեր լեզուներով» (տես «Հայ ժողովրդի պատմութիւն», Երեւան, 1971, I, էջ 181)։

Պէտք չէ անտեսել եւ այն երեւյթը, որ ուրարտական առաջին եւ վերջին արձանագրութիւնների միջեւ անցած մօս երկու հարիւրամեակների ընթացքում լեզուական զգալի փոփոխութիւն չի եղել, մինչդեռ ժողովրդի խօսակցականը երկու հարիւր տարիների ընթացքում ենթարկուած այսահ լինի զգալի փոփոխութեան։ Անգամ մեր ներկայ աշխարհաբարը, թէ արեւելեանը եւ թէ արեւմտեանը (լեզուն հարաբերաբար կայունացնող գրագիտութեան առկայութեան պայմաններում) շատ է փոփոխել երկու հարիւր տարի առաջուայ աշխարհաբարի համեմատութեամբ, մինչդեռ Իշրուինի եւ Ռուսա II-ի, III-ի արձանագրութիւնների միջեւ այդպիսի զգալի տարբերութիւն չի նկատում։ Այս երեւյթը խօսում է այն մասին, որ արձանագրութիւնների լեզուն օրուայ խօսակցական լեզուն չէր, այլ տաճարային, հարաբերաբար կայունացած լեզու էր, որը քումերի մի սերնդից միտսին էր փոխանցում տաճարային երգեցողութիւնների եւ արարողութիւնների համար եւ որը դառնալով սեպագրական լեզու՝ էլ աւելի է կայունացել՝ իր սեպագրական տեխնիկական արտայայտութիւնների շաբլոնացած ձեւերի միջոցով։

Միս կողմից դժուար է ընդունել, որ ասսուրական լեզուից փոխ առնուած այդ սեպագրութիւնը կարողացած լինի լրիւ արտայայտել ուրարտական այդ լեզուն։ Թէեւ տակալին դժուար է վերջնական ճիշդ քան ասել այդ լեզուի մասին, քայց մի քան պարզ է, որ այն սեմական չէ։ Հետեւաբար դժուար է ընդունել, որ այդ լեզուն ու ասսուրերէնը ունեցած լինեն հնչիւնային միեւնոյն համակարգը։ Անգամ, շատ դէպքերում, միեւնոյն լեզուախմբին պատկանող երկու լեզուներ (օրինակ՝ հայերէնն ու անգլերէնը) չեն ունենում հնչիւնային նոյն համակարգը։ Հետեւաբար աւելի քան հաւանական է, որ այդ լեզուն ունէր հնչիւններ, որ չունէր ասսուրերէնը, իսկ ուրարտական սեպագրական սիստեմում ասսուրականից առնուածներից դուրս ուշադրութիւն գրաւող նոր ու տարբեր ձայնանիշեր կամ վանկանիշեր չենք գտնում։ Ուստի դժուար է ընդունել, որ դրանցով կարողացած լինեն լրիւ ու հարազատօրէն արտայայտել-պահպանել այդ լեզուի բոլոր նրբութիւնները։

Այժմ արդէն միանգամայն հաստատ է, որ հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքը եղել է Հայկական լեռնաշխարհն ու նրա արեւմտեան հարեւան շրջանները՝ հաւանաբար կենտրոն ունենալով Վանայ լճի շրջապատը, որը եղել է նախրեան առ կոչուած (Արապաշտ) ցեղերի օրրանի կենտրոնը: Հետեւաբար նախրեան հայ-արմէնները եղել են, ինչպէս ցոյց տրուեց, բուն տեղաբնիկները Հայկական լեռնաշխարհի՝ եղել են աւտոխոտոն եւ իրենք էլ կազմել են ուրարտական պետութիւնը, որի կենտրոնը գտնում էր նոյնպէս այս արերի կենտրոնում, որով ուրարտական արձանագրութիւնների լեզուի կենտրոնն էլ գտնում էր հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքի այս կենտրոնում: Արդեօք այսպիսի պայմաններում կարո՞ղ էին այս երկու լեզուները լինել ծագումով իրարից տարբեր: Եթէ տարբեր էին, ապա ինչքա՞ն եւ ինչո՞վ: Այս հարերին կը պատասխանեն ապագայ հետազօտութիւնները:

Մոնթրէալ, 30 – XII - 1980

# ԱՐՄԵՆԻԱ, ՍՈՒԲԱՐՏՈՒ ԵՒ ՍՈՒՄԵՐ

ՀՆԴԵՒՐՈՊԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ  
ԵՒ ՀԻՆ ՄԻՋԱԳԵՏՔԸ

ՊԵՅՉՈՒԹՅՈՒՆ, 1988

**ԳԼՈՒԽ 1**

**ԱՐՄԱՆԻ**

151

## 1. ԱՐՄԱՆԻ ԱՆՈՒՆԸ ՅԻՇՈՂ ՍԵՊԱԳԻՐ ԱՂԲԻՄՆԵՐ

Արմանին կամ համանուն քաղաք ու երկիր յիշող սեպագիր աղբիրներից մեզ յայտնի են հետեւալները.-

1. Նարամ-Սինի նշանաւոր աքքաղերէն արձանագրութիւնը, ուր նշուած է, թէ նա նուաճել է Armanum-ը եւ Ebla-ն, եւ ուր մի քանի անգամ կրկնուած է, թէ նա յաղթել է Armanum-ի Riš-Adad (Tešub) թագաւորին<sup>1</sup>:

2. Նարամ-Սինի նոյն արշաւանքի մասին, մարմարի մի կսորի վրայ առանձին, աքքաղերէն մի հակիրճ արձանագրութիւն, ուր գրուած է, թէ նա նուաճել է Արմանիմ-ը եւ Էբլան («nâr Armanim<sup>ki</sup> և Ibla<sup>ki</sup>»)<sup>2</sup>:

3. Նարամ-Սինի նոյն հակիրճ արձանագրութիւնը մի ծակոտկէն սկաւառակի վրայ առանձին, ուր Ibla<sup>ki</sup> խօսքը կրող մասը կոտրուած է («nar Armanim<sup>ki</sup> և ...»)<sup>3</sup>:

4. «Նարամ-Սին եւ իր թշնամիները» անունով յայտնի խեթական արձանագրութիւնը, ուր նշուած են Նարամ-Սինի 17 թշնամի երկրների ու նրանց թագաւորների անունները, եւ ուր 11-րդ տեղում յիշուած է «Մադակինա՝ թագաւոր Արմանի քաղաքի երկրի» (Madakina LUGAL KUR<sup>URU</sup> Armani)<sup>4</sup>:

5. Աքքաղական Սարգոնի կայսրութեան աշխարհագրական նկարագրութիւնն եղող հին-քարելական մի արձանագրութեան նեղ-ասորեստանեան մի ընդօրինակութեան մէջ նշուած է «ištu Eb-lá adi Bit-Na-ni-ib<sup>7</sup> KUR Ar-ma-ni<sup>ki</sup>», որը ցոյց է տալիս, թէ Էբլան գտնուում է Արմանի երկրում<sup>5</sup>:

<sup>1</sup> URI, 275 I 7ff., 17ff.; II 4ff.

<sup>2</sup> G. A. Barton, RISA, 138-139: Վերջին ժամանակներում Ibla-ի սեպանիշերը կարդում են Ebla: Տե՛ս նաև Մ. Գավորճեան, ԱՀԾՈւ, 29-30:

<sup>3</sup> RISA, 40: ԱՀԾՈւ, 18:

<sup>4</sup> ԱՀԾՈւ, 9-12: Madakina անունը կարդում են նաև Madatina. այս մասին կը խօսնուում ներքեւում:

<sup>5</sup> KAV, 92:1.13. Տե՛ս M. C. Astour-ի յօդուածը, NH, 15:

6. Ur III ժամանակաշրջանի մի արձանագրութեան մէջ նշուել է Ar-ma-an<sup>ki1</sup>: Թէեւ այս ժամանակաշրջանում եւ յետոյ այս քաղաքը յաճախ կոչուել է Arman, բայց առաջ (նախապէս) կոչուելիս է եղել Alman եւ Halwan<sup>2</sup>:

7. Աշշուրեան Սարգոն Ա-ը (1980-1948 մ.թ.ա.) իր արձանագրութիւններից մէկում նշում է, թէ ինքը նուածել է այն երկրները, որոնք տարածուած են «Ստորին ծովից (Պարսից ծոցից) մինչեւ արեւմուտի ծովը (Միջերկրականը)»: Այս արձանագրութեան մէջ նա ... Առապիսա, Լուրդի, Լուլուրիից յետոյ յիշում է «*Միմեսիեան*» *Արմանի-ն*, որը *Հալման* անուան աւելի ուշ ձեւն է<sup>3</sup>:

8. Աղադ-Նիրարի Ա-ի ժամանակ նոյնակա յիշուել է Arman քաղաքը Ugār Sallim երկրում՝ Ազէհմի եւ Դիյալայի միջեւ մի տեղ<sup>4</sup>:

9. Նոյն Arman-ը յիշուել է Թիգլաթ-Պալասար Ա-ի ժամանակներին<sup>5</sup>:

10. Սալմանասար Գ-ի արձանագրութեան մէջ յիշուում է Halman քաղաքանունը<sup>6</sup>:

11. Ալալիս IV-ի (Անտիոքի մօտ) արձանագրութիւնների մէջ Armani-ն յիշուում է A-ar-ma ձեւով՝ առանց տոպոնիմական (եւ յոգնակի) -ու վերջածանցի<sup>7</sup>:

12. Ուգարիտի արձանագրութիւններում յիշուում է Ha-ar-ma-na/Ha-ar-ma-ni<sup>8</sup>:

13. Աղադ-Նիրարի Բ եւ ասորեստանեան այլ արքաներ յիշում են *Արիսէ* երկիրը Արեւմտեան Տիգրիսի ակունքների եւ Կաշիարիի շրջաններում<sup>1</sup>:

<sup>1</sup> TrD, 50:4. Տե՛ս I. Gelb, HS, 103:

<sup>2</sup> M. C. Astour-ի յօդուածը, NH, 15 (Ժանօթորին No 28): Այստեղ խօսուում է նաև Halwan (Holwān) անունով մի այլ քաղաքի գոյութեան մասին Վերին Զագրոսում: Տե՛ս L. D. Levine, «Geographical Studies in the New-Assyrian Zagros», Iran 11 (1973), 24-27:

<sup>3</sup> N. Adontz, HA, 19 (ՀՊ, 26):

<sup>4</sup> Synchronistic History, i 30. Տե՛ս HS, 103:

<sup>5</sup> KAH, II, 66:11. Տե՛ս HS, 103:

<sup>6</sup> NH, 16:

<sup>7</sup> Նոյն:

<sup>8</sup> Նոյն, 17:

14. Ասորեստանեան եւ ուրարտական արձանագրութիւններ յիշում են *Ուրումէ*, *Ուրմէ*<sup>2</sup> կամ *Արմէ*<sup>3</sup> երկիրը՝ Արեւմտեան Տիգրիսի ակունքների, Շուրբիա-Աղձնիքի շրջաններում:

15. Դարեհ Սեծը Բեհիստունի ժայռի արձանագրութեան մէջ յիշում է Armina երկիրը: Նոյնը յիշում է նաև Armnii-յա ձեւով<sup>4</sup>:

Նախապէս ասենք, թէ գիտական հրապարակի վրայ *Արմանի-Արմենի* (Արմանի-արմէններ) կապը դեռ չի գտնում ընդհանուր ընդունելուրին: Սրա համար կան մի քանի պատճառներ: Առաջինը այս է, թէ դեռ մտքերի վրայ յիշում է արմէնների գաղթի վարկածը, որը խանգարում է Նարամ-Սինի յիշած Արմանիի, Դարեհի յիշած Արմինայի եւ յոյնների յիշած *Արմենիի* միջեւ կապի մասին մտածումը: Երկրորդը՝ *Արմանիի* տեղի ճշգրիտ որոշման դժուարութիւնն է՝ տուեալների անբարարութեան ու անորոշութեան պատճառով: Երրորդը՝ Նարամ-Սինի յիշած Արմանին շփոթում են Տիգրիսից արեւելք՝ Նուզիի եւ Դիյալայի միջեւ մի տեղ տեղադրուող *Halman>Arman*-ի հետ: Չորրորդը՝ Նարամ-Սինի յիշած *Արմանի* անունը՝ տարբեր գիտնականներ տարբեր ձեւով են բերում, եւ դեռ չկայ բոլորի կողմից ընդունուած մի հաստատուն ձեւ (ոմանք բերում են Armani, ոմանք Armanu կամ Armanum, ոմանք Էլ՝ Armanim կամ կծկուած Arman ձեւը):

Սեր քննութիւնները ցոյց են տալիս (եւ ցոյց կտանք ներքեւում), թէ Նարամ-Սինի յիշած հզօր Արմանի քաղաք-երկրից զատ գոյութիւն են ունեցել անուան հնչինային մօտաւոր նմանութեամբ երկու այլ քաղաքներ: Մէկը, ինչպէս ասացինք, Տիգրիսից արեւելք՝ Նուզիի եւ Դիյալայի միջեւ մի տեղ, որին տարբեր արձանագրութիւններ յիշում են *Halmaniwa*, *Halmanie*, *Halman*, *Halwan*, եւ Ur III-ի ժամանակներից յետոյ աւելի Arman, «*Սիսեսիեան» Արմանի, Ուգար-Սալլիմ-ի *Արման* եւ այլ ձեւերով: Խօսք է լինում նաև *Hal-**

<sup>1</sup> ARAB, 119-121:

<sup>2</sup> YKH, 446:

<sup>3</sup> Նոյն, 420:

<sup>4</sup> SIDG, 27-33:

wan (Holwān) անունով մի այլ քաղաքի գոյութիւն ունեցած լինելու մասին, վերին Զագրոսում<sup>1</sup>:

Տիգրիսից արեւելք տեղադրուող այս Halman/Arman-ի հետ շփոթելով է որ զիտնականներից շատերը Նարամ-Սինի յիշած Արմանին մերք բերում են տարրեր ձեւերով:

Դժբախտաբար, յամեմատութեան եւ ստուգման համար աչքի առաջ չունենք (բացի մի քանիսից) բուն Արմանին յիշատակող բոլոր արձանագրութիւնների սեպագիր բնագրերի լուսանկարները կամ ընդօրինակութիւնները: Աչքի առաջ ունենք նրանց լատինական տառադարձութիւնները:

Նարամ-Սինի 17 թշնամիների մասին խօսող խեթական յայտնի սեպագիր արձանագրութեան վրայ կարդացուում է Արման-Ահ, որի Ահ վանկանիշը բերուել է սեպագրութեամբ՝ որպէս խեթերի օգտագործած տարրերակ: Խեթական տեքստի այս Ահ վանկի տառադարձումն ստուգելու համար նայել ենք այդ նոյն արձանագրութեան մէջ Ահ վանկ-հնչիւնն ունեցող երեք այլ անունների սեպագրութիւններին ([x-i]n-ni-pa-i-la, zi-pa-ni, Ni-ik-ki[...]), որոնց բոլորի էլ ու վանկը բերուել է նոյն սեպագրութեամբ, մի բան, որը վերացնում է վրիպման հաւանականութիւնը եւ հաստատում է Armani-ի վերջին վանկի ու ձեւով տառադարձման ճշդութիւնը:

Նարամ-Սինի աքքաղական արձանագրութիւններից Արմանի անունը բերուում է նաև Armanu, Armanum, Armanim կամ Arman ձեւով: Այսուհանդերձ, այս տարրերակները (-ni վերջաւորութեամբ ձեւի տեղ աքքաղական ածանցուած -nu, -num, nîm կամ կծկուած -n վերջաւորութեամբ ձեւերը) Armani-ի -ni վերջաւորութիւն ունեցած լինելը ժխտող հանգամանք չունեն: Անունների -i վերջաւորութիւնները ասուրաբեկական գրութիւններում յաճախ հանուում են կամ սղուում են, երբ աքքաղական բերականական -u, -um կամ -im վերջածանցն է աւելացուում: Այսպէս էլ, Armani-ի դէպքում, ածանցուած -ni-u վերջաւորութեան տեղ գրում են -nu, -ni-um ձեւի տեղ՝ -num, -ni-im ձեւի տեղ՝ -nim, եւ մերք էլ, պարզ -ni

<sup>1</sup> Տե՛ս մեր էջատակի ծանօթութիւն համար 2 եւ 4 (էջ 153):

Վերջաւորութեան -ի ձայնի կորուստով, գրում են -ո: Համեմատութեան համար թերում ենք հետեւեալները:

Mitanni / Mitannu<sup>1</sup>, Mardamani / Mardaman<sup>2</sup>, Mardabanum / Mardaban<sup>3</sup>, Qattunanim / Qattunan<sup>4</sup>, Halukkani / Halukkan<sup>5</sup>, Harmana / Harmani<sup>6</sup>, Harrāni / Harrānum / Harrānim / Harrān (passim)<sup>7</sup>:

Այս օրինակները նոյնպէս փաստում են, թէ Արմանի անուան ճիշդ եւ ուղիղ ձեւն էր Armani, որը պատկանում է սուրարի-խուրդի-նախրեան -ու վերջաւորութիւն ունեցող անունների խմբին:

Ի հարկէ այստեղ շատ կարեւոր է Նարամ-Սինի յիշած Արմանիի ճզգիտ տեղադրումը: Ոմանք, ինչպէս նշեցինք, այս Արմանին տեղադրում են Տիգրիսից արեւելք՝ Ազէիմ գետի շրջանում՝ այն շփոթելով ու նոյնացնելով այդ տեղերում տեղադրուող Խալման / Արման քաղաքի հետ՝ անունների ձայնային նմանութեան պատճառով:

Ոմանք էլ Արմանին տեղադրում էին Զագրոսի շրջանում: Յետագայում, S. Smith-ի առաջարկով, Hrozní-ն, Speiser-ը եւ ուրիշներ Արմանին տեղադրում էին Հալէպի տեղում, մի բան, որ մերժուեց Guterbock-ի եւ ուրիշների կողմից:

Մենք նոյնապէս մեր «Հայ Ժողովրդի Ծագումը» գրքում ցոյց ենք տուել, թէ սիսակ է Արմանին նոյնացնել Հալէպի հետ: Սիածամանակ՝ Արմանիի տեղադրման համար կարեւոր էինք համարում Նարամ-Սինի արձանագրութեան մէջ Արմանիի հետ յիշուած Էրլայի տեղի յայտնութիւնը:

---

<sup>1</sup> Ignace Gelb, HS, 71:

<sup>2</sup> Նոյն, 113:

<sup>3</sup> Նոյն, 103:

<sup>4</sup> Նոյն:

<sup>5</sup> Նոյն, 64:

<sup>6</sup> Տե՛ս մեր էջատակի ծանօթութիւն համար 8 (էջ 153):

<sup>7</sup> HS, տե՛ս Harrāni, էջ 81, Harrān(um), Harrānim, էջ 103 եւ 120:

Ինչպէս յայտնի է, իտալացի հնագէտ Պրոֆեսոր Paolo Matthiae-ն, Սիրիայի Սարաքէր գիտի մօտ գտնուող Մարդիկս բլրի վրայ, 1974-1976 թուերին, յայտնաբերել է Էբլայի պետական դիւնը (արխիվը) իր 16000-ից աւելի սեպագիր սալիկներով: Այս մեծ յայտնագործութիւնների հիման վրայ՝ նա հրատարակել է իր «EBLA an Empire Rediscovered» գիրքը, որը ամփոփել է մինչեւ 1977 թիւ իր կատարած պեղումների արդիւնքները եւ նրանց վերաբերեալ իր դիտումները, գնահատանքներն ու տպաւրութիւնները:

Նկատի առնելով Էբլայի տեղի յայտնաբերման ու նրա դիւնի տուեալների կարեւրութիւնը Արմանիի հարցի համար՝ ուզում ենք այստեղ բերել որոշ կետեր հեղինակի հաղորդած տեղեկութիւններից ու տեսակէտներից՝ կցելով նրանց մասին մեր դիտարկումները:

Ժամանակին, աչքի առաջ ունենալով Լազաշի Գուղէայի արձանագրութեան մէջ Էբլայի տեղի (եւ «Էբլա լեռան Ուրսու քաղաքի») մասին նշուած տուեալները, որոշ կասկած էինք յայտնում Մարդիխում յայտնաբերուած քաղաքը Նարամ-Սինի եւ Գուղէայի յիշած Էբլայի հետ նոյնացման մասին: Էբլայի Մարդիխ անուանումն էլ չէր բացատրուում: Այս արաբական անուն չի թուում: Եթէ դա այդ քաղաքի աւելի ուշ շրջանի անուանում լինէր, ապա նրա մասին մի յիշատակութիւն պիտի լինէր յետագայ պատմագիրների մօտ, բայց, դժբախտաբար, այդ մասին ոչինչ յայտնի չէ: Մեր կարծիքով՝ այս հարցն էլ կը լուծուէր, եթէ Մարդիխում գտնուէր մի տաճար՝ Բարելունում յայտնի Մարդուկ աստծուն նուիրուած (ինչպէս Վաղարշապատը կոչուում է Էջմիածին), սակայն դրա մասին որոշ խօսք չկայ Մարդիխի գրութիւններում: Գուցէ այդպիսի կարեւոր տաճար եղել է դիւնի ժամանակաշրջանից յետոյ, բայց դա դժուար է փաստել, որովհետեւ յետագայ ժամանակաշրջաններին վերաբերող դիւնի կամ գրութիւններ չեն յայտնաբերուել տակալին Էբլայում:

Այսուհանդերձ, Երլայի ու նրա արքայի անունով գրուած բազմաթիւ գրութիւնների, նամակների, դաշնագրութիւնների մեծ կշիռը կասկած չի թողել, թէ Մարդիխը իսկապէս Երլան է:

Ի հարկէ, ընդունելով հանդերձ, թէ Մարդիխը կոչուում էր Երլա, մնում էր այն հարցը, թէ արդեօր Նարամ-Սինի եւ ուրիշների եւ յիշած Երլան ա՞յս Երլան է, թէ մի ուրիշը՝ ուրիշ տեղ. քանի որ Երլա անունը՝ Սերձաւոր Արեւելքի գրութիւններում յիշուել է մերք տարրեր հանգամանքներով: Սրանից ենքաղուում են, թէ գոյութիւն են ունեցել Երլա անունով երկու կամ երեք քաղաքներ: Հետեւաբար, այս հարցի ճշդրութումը կարեւոր ենք համարում Արմանիի խնդրի համար: Ուստի, նախ քան այս հարցի քննարկումը, յարմար ենք համարում այստեղ որոշ քան բերել Մարդիխի մասին Մատքիաէի հաղորդած տեղեկութիւններից:

Պրոֆ. Մատթիաէն իր հրատարակած գրքում Մարդիխ-Երլայի կեանքը բաժանում է ժամանակագրական մի քանի փուլերի՝ հետեւեալ մօտաւոր թուականներով.

3500-2900 (մ.թ.ա.) - Մարդկային ներկայութեան հետքեր (նախապատմական շրջան):

2900-2400 (մ.թ.ա.) - Որպէս բնակավայր՝ կազմատրման շրջան:

2400-2250 (մ.թ.ա.) - Երլայի առաջին շրջանը որպէս քաղաքային-մշակութային կենտրոն: Այս ժամանակաշրջանին է վերագրուում 16000-ից աւելի կատ սեպագիր սալիկների դիւանը, որ գտնուել է միջնաբերդի պալատի աւերակների տակ, որը, ըստ հեղինակի, այրուել ու կործանուել է Նարամ-Սինի կողմից մ.թ.ա. 2250 թուին՝ 150 տարի փայլելուց յետոյ:

2250-2000 (մ.թ.ա.) - Քաղաքի (բացի դիւանը ընդգրկած պալատից) վերակառուցում ու յետոյ նորից կործանում:

2000-1600 (մ.թ.ա.) - Քաղաքի ծաղկման նոր շրջան ու, որպէս մեծ քաղաքային կենտրոն, վերջնական կործանում, ըստ ենթադրութեան, խեթերի կողմից<sup>1</sup>:

<sup>1</sup> Paolo Matthiae, EER, 51-67:

Տրուած տեղեկութիւնների համաձայն, դիանի ժամանակաշրջանը եղել է Էրլայի տնտեսական բարգաւաճման ու քաղաքական հզօրութեան ոսկեդարը: 16000-ից աւելի սեպագիր սալիկների բովանդակութեան բնոյթի մասին տրուած տեղեկութիւնները ցոյց են տալիս, թէ դրանք եղել են ընդհանրապէս առեւտրա-տնտեսական ու հաշուապահական գրութիւններ, որոնց մէջ շատ քիչ ու աննշան են ուազմա-քաղաքական ու պատմագրական փաստաթղթերը: Արանք էլ, իրենց անորոշութիւններով, գրեթէ պատմագիտական ակնկալուած արժեքը չեն ներկայացնում:

Դիանի գրութիւնների բնոյթը չի թողնում այն տպաւրութիւնը, թէ Էրլան եղել է ուազմաքաղաքական մի հզօր կայսրութիւն՝ ինչպիսին էին աքքաղական, ասորեստանեան, խեթական եւ այլ ուազմականօրէն հզօր երկրների կայսրութիւնները, որոնց գրութիւններում մեծառնասամք խօսուում է իրենց կատարած արշաւանքների ու նուաճումների մասին, որիշ երկրներում կատարած ջարդերի ու աւերների եւ տարած աւարի ու գերինների մասին: Անգամ շինարարական գործերի մասին՝ այստեղ աչքի զարնող տեղեկութիւնների չենք հանդիպում: Գուցէ դիանի ժամանակները ընդհանրապէս դեռ կանուխ էին արքաների միապետական-ինքնիշխանական յանդգնութիւնների ու ուազմաքաղաքական ծառալումների համար. մի բան, որ կարծես սկսել է Սերձաւոր Արեւելքում աւելի աքքաղական հզօր հարստութեան մեծ արքաների խիզախումներով ու զարգացել է III հազարամեակի վերջերին մ.թ.ա.: Ի հարկէ Էրլան ունեցել է սաղմնային այդպիսի կարճ փայլատակումներ՝ ինչպիսին են Մարիի դէմ մղած յաղթական պատերազմները<sup>1</sup>:

Էրլան իր փայլուն օրերին եղել է հիւսուածեղէնի ու կահոյթի արդիւնաբերութեան եւ զիւղատնտեսական ապրանքների արտադրութեան մի նշանաւոր ու զարգացած մեծ կենտրոն, եւ նշաններ կան ցոյց տուող, թէ ունեցել է նաև մօս ու հեռաւոր երկրներում առեւտրական (ոչ ուազմակայսերական) յենակէտեր եւ գաղութներ, որոնցից երեւի ստացել է շահոյթ (տուրք), եւ որոնց պահպան

---

<sup>1</sup> Giovanni Pettinato, AE, 99-102:

ման եւ (գուցէ կարաւանների) ուղիների ապահովութեան համար օգտագործել է վարձկան զինուորներ եւ ոչ թէ սեփական կանգուն բանակ: Իր տուած ապրանքների դիմաց՝ վարձկան զինուորներ պահանջելու երեւոյք է նկատուում Էրլայի պալատական կառավարչի նամակում, որ տրուել է Hamazi-ի արքայի պատգամաւորին<sup>1</sup>: Հետեւարար, եթէ Էրլան եղել է «կայսրութիւն», ապա դա եղել է առեւտրական, որ ունեցել է միջազգային, խաղաղ ու իր ժամանակների համեմատութեամբ մեծ ու ծաւալուն կապեր:

«Նուզիի (Գասուր կոչուած ժամանակ) հին-աքքադական շերտից եկող մի սալիկի վրայ, որ ներկայացնում է «այդ շրջանի» քարտէսը, քաղաքները ներկայացուած են փոքրիկ շրջանակներով, որոնցից մէկի (միակը՝ լրիւ պահպանուած) անունը կարդացուում է «maš-gán BĀD-Eb-la», այսինքն՝ «մաշկան (գաղութ-քնակավայր) Dūr-Ebla-ի»<sup>2</sup>: Եթէ իսկապէս սա մի այլ Էրլա է, ապա անհաւանական չենք համարում, որ այն եղած լինի բուն Մարդիխ-Էրլայի առեւտրական գաղութներից մին, որը կոչուել է իր անունով, մի քան, որ անսովոր չէ իին ժամանակների համար իրենց մայր քաղաքի կամ երկրի անունով կոչել հեռաւոր գաղթավայրերը:

Էրլայի մասին այս բոլորը (որպէս նախարան) բերել ենք այն պատճառով, որ, ինչպէս ասացինք, նրա տեղի յայտնաբերումը եւ դիւանի տուեալները մեծ կարեւորութիւն ունեն Արմանիի հարցի համար: Այսուհանդերձ, նրա գրութիւններում, որոշ խնդիրների պարզաբանումների հետ, գտնում ենք մի անսպասելի նոր առեղծուած, որ այդտեղ (ընթերցուած գրութիւններում) բացակայում է Արմանի:

Էրլայի արձանագրութիւններում յաճախակի յիշուում է Արմի<sup>ki</sup> տերմինը: Պրոֆ. Մատթիաէն, երեւի ընթերցումների նախնա-

<sup>1</sup>EER, 171: Խումազի տեղանունը համեմատելով -qī վերջաւորութիւն ունեցող Ալզի, Պիկուրզի, Պուրուկոզզի (Պուրուզումզի), Ազզի, Տիտիմզի, Նուզի եւ նման վերջաւորութիւն ունեցող անունների հետ՝ կարելի է ենթադրել, թէ այս քաղաքներից խորիս-սուրբարիական էր: Սրան տեղադրում են Նուզիից (Քերպութից) արեւելք՝ Սուլեյմանիի շրջանի մօտակայքում. տե՛ս EER, 176:

<sup>2</sup> NH, 14:

կան շտապ փուլում, սրան համարելով մի յատուկ քաղաքանուն, Ենթադրաբար նոյնացրել էր Արմանիի հետ<sup>1</sup>, եւ ընկնելով S. Smith-ի եւ այլոց սխալ վարկածի ազդեցութեան տակ՝ Արմանին էլ (Արմիի նման) նոյնացրել է Հալէպի հետ: Յետագայում, Պրոֆ. G. Pettinato-ն (Էրլայի պեղումների արշաւախմբի սեպագրագէտը), երեւի աւելի խորանալով տուեալ արձանագրութիւնների վերծանման ու հետազօտութեան գործում, իր գրքում Ar-mi<sup>ki</sup> եզրը վերծանել-թարգմանել է ոչ թէ որպէս յատուկ անուն, այլ որպէս հասարակ անուն «քաղաք-ներ» իմաստով<sup>2</sup>: Այսպիսով՝ դուրս է գալիս, թէ Էրլայի դիւանի գրութիւններում բոլորովին բացակայում է Արմանին, հակառակ այն իրողութեան, թէ Էրլան, ունենալով միջագգային առեւտրական շատ լայն կապեր, իր գրութիւններում յիշում է հարիւրաւոր հեռու ու մօտ քաղաքների անուններ:

Այս առեղծուածի համար մենք առայժմ տեսնում ենք հնարաւոր երկու բացատրութիւն:

Առաջինը այն է, թէ դիւանի ժամանակաշրջանի Էրլայի կործանումը չի կատարուել Նարամ-Սինի ժամանակ (որը յիշում է Արմանին ու Էրլան միասին), այլ նրանցից շատ առաջ: Ըստ Մատթիաէի, դիւանի գրութիւնները ընդգրկում են 150 (ըստ Պետտինաստոյի՝ 70) տարուայ ժամանակաշրջան: Այս ժամանակաշրջանում, Էրլայի գահի վրայ եղել են հինգ թագաւոր: Վերջինը եղել է Ibbi-Sipiš-ը, որի ժամանակ էլ այրուել ու կործանուել է Էրլան իր միջնարերդի գլխաւոր պալատի հետ, որի վիատակների տակ գտնուել է դիւանը: Հետեւաբար, եթէ Էրլայի կործանումը կատարուած լինէր Նարամ-Սինի կողմից, ապա նրա արձանագրութեան մէջ Արմանիի Riš-Tesub (Red-Adad) արքայի հետ կը յիշուէր եւ այս Ibbi-Sipiš-ի անունը (կամ, գոնէ, դիւանում նշուած արքաներից մէկի անունը): Սինչեռ, այդտեղ բացակայում է Էրլայի արքան: Այն տպաւրութիւնն է ստացուում, թէ Էրլան Նարամ-Սինի ժամանակ էլ գտնուում էր Արմանիի արքայի իշխանութեան տակ: Հետեւաբար, Էրլայի դիւանում Արմանիի բացակայութիւնը եւ Նարամ-Սինի էլ Էրլայի արքային շյիշելը թելադրում են ընդունել,

<sup>1</sup> EER, 177:

<sup>2</sup> AE, 78, 151, 248 եւ 258:

թէ այդ կործանումը չի կատարուել Նարամ-Սինի ժամանակ, այլ նրանից բաւական առաջ: Ուստի մեզ աւելի ճիշդ է թուում Պրոֆ. Պետտինաստոյի եզրակացութիւնը, որով նա Երլայի դիւանի ժամանակը համարում է 2500 մ.թ.ա.:

Մեզ հասել են որոշ տուեալներ, թէ աքքաղական Սարգոնի ժամանակ Երլան գտնուում էր Արմանիի ազդեցութեան ոլորտում: Բայց Երլայի դիւանի այս աւելի կանուխ ժամանակներում, գուցէ, Արմանին չուներ այդ հզօրութիւնն ու լնդարձակութիւնը, եւ գուցէ դեռ չեր կազմաւորուել ու չեր հասել կարեւոր քաղաք-պետութեան կենտրոն հանդիսանալու նշանակալի աստիճանի. ճիշդ այնպէս, ինչպէս Akkad-ը, որը նոյնպէս բացակայում է Երլայի դիւանի գրութիւններում:

Երկրորդ՝ եթէ այդ օրերին էլ Արմանին կար որպէս հզօր քաղաք-կենտրոն՝ ունենալով Երլան իր ոլորտում, ապա նրա եւ Երլայի կապերը պիտի ունեցած չինէին այն բնոյթը, որի պայմաններում դիւանում յիշուել կամ գրանցուել են օտար քազմաքի մօտ ու հեռու քաղաքներ: Արդէն Երլայի առեւտրական գործառնութիւնների շրջանակին մէջ չի մտել *Կանեշ-Խոտան-Աշուր-Խոսանզի* գծից այն կողմ՝ Հայկական լեռնաշխարհում գտնուած ոչ մի քաղաք:

Երլայի իշխողները, Արմանիին ենթակայ եղած ժամանակ, կարող էին ունեցած լինել Արմանիի արքայական տան հետ մի տեսակ ազգակցական կամ խնամիական կապ: Մենք ներքեւում դեռ ցոյց կը տանք, թէ Արմանին սուրարիական էր:

Երլայի հետ սերտ կապ ունեցող Ursu քաղաքի առաջին արքայի Sennam անունը գուտ խուրիական (կամ սուրարիական) էր<sup>1</sup>:

Երլայում յայտնաբերուել է մի արձանի իրանը, որը, ըստ Պրոֆ. Մատթիաէի, պատկանում է մ.թ.ա. 2000-1900 թուականներին: Այս իրանի վրայ գտնուած աքքաղական արձանագրութեան համաձայն, Երլայի արքայ Ibbit-Lim-ի հօր անունն էր Igris-Ափա, որը պարզ երեւում է, իրարից էրնիկապէս տարբեր երկու՝ ամորի և խուրիի (կամ սուրարի) անունների կապակցութիւն է: G. Pettina-

---

<sup>1</sup> Նոյն, 27:

ուղաղրութիւն դարձնելով այս երեւյթի վրայ, ասում է. «This would indicate that Ebla stood at the crossroad of two ethnic components - Amorite and Hurrian - living peaceably in Ebla»<sup>1</sup>:

Ալալխու IV-ի մի արձանագրութիւն նշում է Ehli-Tešur անունով մի մարդու գալը Էբլայից<sup>2</sup>: Դժուար չէ նոյնպէս տեսմել, թէ Tešub անունը սուրարիական է: Արդէն Էբլա քաղաքում պաշտօնի վրայ էր, դիւանի ժամանակ, Subur անունով մի կառավարիչ (governor)<sup>3</sup> եւ սուրարիական Guzuzi անունով արտադրական մի դեկավար կամ վարպետ<sup>4</sup>: Ներքեւում կը խօսենք նաև Ar-Ennum եւ Irkab-Ar անունների մասին, 4-րդ հատուածում:

Արդեօք Էբլայի եւ Խամազիի իշխողների ցեղակցական կամ խնամիական կապի մասին չե՞ն խօսում Էբլայի պալատական կառավարիչ Իսեսու-ի կողմից Խամազիի արքայի պատգամաւորին տրուած նամակի հետեւեալ խօսքերը. «You (are my) brother and I (am your) brother; (to you) man-brother, ... Irkab-Damu, king of Ebla (is) brother of Zizi, king of Hamazi; Zizi, king of Hamazi (is) brother of Irkab-Damu, king of Ebla»<sup>5</sup>: Ի հարկէ, աւելի ուշ ժամանակներում, օտար թագաւորներ մերք իրար կոչել են «եղբայր», որպէս աստուածային ծագում ունեցողներ, բայց այս կանուխ ժամանակների գրութիւններում այդպիսի սովորութեան ապացոյց-օրինակ ինձ յայտնի չէ. (Էբլայի արքաները ընտրուում կամ նշանակուում էին. անպայման ժառանգական չէր՝ աստուածային ծագմամբ): Մանաւանդ՝ պալատական կառավարիչն էլ Խամազիի պատգամաւորին «մարդ-եղբայր» է կոչում: Յամենայն դէպս, այս երեւյթը ուղաղրութիւն է գրաւում:

Այս կապակցութեամբ պիտի շմոռանալ եւ այն շատ կարեւոր իրողութիւնը, թէ Էբլայի դիւանի ժամանակաշրջանում՝ Էբլայում պաշտուած աստուածների մէջ կային խուրրիական համարուող

<sup>1</sup> Նոյն:

<sup>2</sup> Նոյն, 17

<sup>3</sup> Նոյն, 128, 133:

<sup>4</sup> Guzuzi անունը Կուզու ձեւով գտնում ենք Gelb-ի կազմած սուրարիական 29 անունների ցուցակում (HS,107):

<sup>5</sup> AE, 97-98:

աստուածներ: Այս երեսյթի մասին G. Pettinato-ն գրում է. «The presence of the Hurrian divinities Aštabi and Adamma together with the Semitic gods Degan, Beli, Hadad, Ištar and Kamiš permits the identification of the two ethnic components of Eblaite society at this period, the Semites and the Hurrians. This is one of the most precious items issuing from the archives»<sup>1</sup>:

Այսուհետեւ, Pettinato-ն, իր գորքի յաջորդ հասուածներում, աւելացնում է. «Thanks to the presence of foreign divinities in the Eblaite pantheon, one can prove the presence already in this period in the Near East of peoples thought to have arrived somewhat later. The most interesting case regards the Hurrians, an Indo-European people attested for the first time toward 2300 B. C. The Eblaites accepted at least four deities of the Hurrian pantheon: <sup>d</sup>Adamma, <sup>d</sup>Aštabi, <sup>d</sup>Hapat and <sup>d</sup>Išhara. The presence above all, of Aštabi, the great war god, leaves little doubt that the Hurrians were active in this period and had strict ties with Ebla»<sup>2</sup>:

Երևայի դիւանում Արմանիի չիշուելու երեսյթը կարելի է բացատրել նաեւ նրանով, որ Հայկական լեռնաշխարհը պէտք չուներ Երևայի արտադրութիւններին: Նա ինքը հարուստ երկիր էր բանկագին մետաղներով, կահոյթի համար անհրաժեշտ անտառանիւթով ու այլ իրերի արտադրութեամբ, եւ Երևայից էլ առաջ ուներ զարգացած արդիւնաբերութիւն ու կապեր հարաւային Միջազգետքի հետ. այս մասին կը խուենք ներքեւում՝ Սեծամօրի կապակցութեամբ մեր բերած «Արատտա եւ Երեք» գլխում: Հետեւարար, Հայկական լեռնաշխարհում տեղ չկար Երևայի առեւտրական ծաւալումների համար:

Ինչ վերաբերում է Արմանին Հալէպի հետ նոյնացնող սխալ վարկածին, պիտի ասել, թէ այդ միտքը վաղուց մերժուել էր, ինչպէս նշեցինք, Güterbock-ի եւ այլոց կողմից: Մեր նախորդ աշխատութեան մէջ էլ արդէն ցոյց ենք տուել, թէ սխալ է այդ վարկածը: Հալէպը չի յիշուում ոչ թէ միայն Երևայի դիւանում, այլ չի յիշուում նաեւ աքքաղների Սարգսի, Նարամ-Սինի եւ Գուրեայի կողմից,

<sup>1</sup> Նոյն, 152:

<sup>2</sup> Նոյն, 251:

որոնք անցել են նրա վրայով կամ կողքով՝ իրենց՝ Եբլա-Ամանոս երթի ճանապարհին: Ուստի, շատ է հաւանական, որ Հալէպը, որպէս յիշատակելի քաղաք-կենտրոն, գոյութիւն չուներ III հազարամեակին: Տուեալները թելադրում են ընդունել, թէ այն, որպէս կարեւոր կենտրոն, կազմադրուել է II հազարամեակի սկզբին մ.թ.ա.:


Հետեւաբար Հալէպը չէր կարող լինել Արմանին, մանաւանդ որ սա յիշուել է խեթերի արքաների կողմից՝ Հալէաի յիշուելուց թէ՝ առաջ եւ թէ յետոյ: Իսկ Ալալախի արձանագրութիւններում յիշուել է (Halab-ի յայտնի օրերին) Arma (=Armani)<sup>1</sup>:

Միաժամանակ մենք հաւանական ենք համարում որ Halab անունը ունեցած լինի կապ արար halaba («կթել») բառի հետ, մի բան, որը թելադրում է ենթադրել (տեղական աւանդութիւնն էլ նշում է), թէ նախապէս Հալէպի վայրը եղել է մի ցեղի (կամ ցեղերի) ոչխարների կրման մի հաւաքատեղի: Միաժամանակ սումեր halba (աքքաղ halpû) նշանակում է «աղբիւր-ջրհոր», որ, իր հերթին, թելադրում է ենթադրել, թէ այդտեղ եղել է մի աղբիւր կամ ջրհոր, որի շուրջ հաստատուած են եղել այդ քաղաքի առաջին բնակիչները՝ իրենց կաթնատու անասուններով. Հալէպը նշանաւոր է իր ջրհորներով: (Անգամ անհաւանական չէ, որ արար halaba («կթել») եւ սումեր-աքքաղական halaba-halpû («աղբիւր») բառերը ունեցած լինեն նոյն ծագումը): Այս բոլորը կարող են լինել ցուցմունք, թէ այդ քաղաքը, իր ծննդի օրից ի վեր, կոչուում էր Halap-Halba, մի բան, որը տեղ չի բողնում նրա նախապէս Արմանի կոչուած լինելուն:

Անգամ դժուար է Արմանին կապել Խալմանի անուան հետ, որով մի անգամ Սալմանասար Գ-ի գրագիրը, թիրիմացութեամբ, նշել է Հալէպը եւ դրանով էլ S. Smith-ը տարուելով՝ Արմանին նոյնացրել է Հալէաի հետ<sup>2</sup>:

<sup>1</sup> NH, 16:

<sup>2</sup> M. Astour-ը իր յօդվածում (NH,16) գրում է. «There is no proof that Aleppo was actually known as Halman to any body except Shalmaneser III's scribe. In all other sources it appears as Halab (Mari, Alalah VII, Alalah IV, Egypt, Ugarit, Middle-Babylonian, Neo-Assyrian, OArام) or Halba/Halpa (Hittite). It would seem that the



Հարսնակ 3: Արմանիի դիրքը:

---

Assyrian scribe, who was much better acquainted with the Transtigris than with Syria, replaced the actual name of the city with a consonant and more familiar one. Similarly, the North Syrian mountain which appears in some editions of the same king's annals under its correct name Atallur, is given in other versions the name Lallar which belonged to a peak in the Zagros range»:

Մենք վերեւում հարց էինք տալիս, թէ արդեօք Մարդիխից զատ չկա՞ր Էրլա անունվ մի քաղաք: Յիրահ Մ. Աստորը իր նշուած յօդուածում մի շարք աղբիւրներ է նշում ցոյց տալով, որ կա՞ր Էրլա անունվ մի ուրիշ քաղաք Տիգրիսից արեւելք՝ Նուզիի եւ Դիյալայի միջեւ մի տեղ. ինչպէս նշեցինք՝ այն կոչում էր «maškan» (գաղորդ-քնակավայր) Dûr-Ebla-ի:

Այսուհանդերձ՝ քննութիւնները ցոյց են տալիս, որ աքքաղական Սարգոնի, Գուլքայի եւ Ալալախի արձանագրութիւնների մէջ յիշուած Էրլայով նշուել է Մարդիխ-Էրլան: Սրանցից այստեղ կը բերեմ, միայն (մեր հարցի համար կարեւոր եղող) Սարգոնի արձանագրութեան մեզ հետաքրքրող մասը. նա գրում է. «... Սարգոն արքան *Tutuli*-ում Դազանին մատուցեց պաշտամունք, վերին երկիրը... նա սուեց *Mari*-ն, *Yarmuti*-ն ու *Ebla*-ն միմչեւ անտառը մայրիների եւ լեռները արծարի՝ Սարգոնին... »<sup>1</sup>:

Սարգոնը, իր յիշած այս վայրերը հասնելու համար, շարժուած պիտի լինի (Աքքաղից) Եփրատով դէպի վեր: Վերին երկրներից՝ նա առաջ հասել է Մարի (Իրաք-Սիրիա սահմանագծի՝ Եփրատը հասող վայրում), յետոյ հասել է Եարմութի (նա եղել է Թուտուուլ [Թուտուլի] քաղաքում՝ Դազանի տաճարում), ապա ուղղուել է դէպի Էրլա եւ այստեղից էլ դէպի մայրիների անտառը եւ արծարի լեռները Կիլիկիայի շրջանում: Ինչպէս պարզ երեւում է, Մարդիխը ընկնում է՝ Մարիից դէպի Կիլիկիա տանող այս ուղու վրայ (տե՛ս քարտէս 3): Հետեւարար պիտի հաստատ համարել, թէ Սարգոնի յիշած Էրլան Մարդիխն է:

Այստեղ անհրաժեշտ է ճշդորոշել, թէ արդեօք Նարամ-Սինի յիշած Էրլան էլ Մարդիխն է, թէ ենթադրաբար Տիգրիսից արեւելք տեղադրուող Էրլան: Բերում եմ մեր նիւթի համար շատ կարեւոր ու վճռորոշ նշանակութիւն ունեցող՝ Նարամ-Սինի աքքաղական նշանաւոր արձանագրութեան երեք սինակների (եւ չորրորդի կարեւոր մասի) ընդօրինակութիւնն ու քարգմանութիւնը<sup>2</sup>:

<sup>1</sup> RISA, 109:

<sup>2</sup> URI, 275: Թարգմանութեան համար օգտուել ենք Մատքիաէի նշուած գրքի 177-րդ էջում բերուածից (որը արդիւնք է URI-ի համեմատութեամբ յետագայ

	<i>Obverse</i>		<i>Reverse</i>	
	Col. I.	Col. II.	Col. III.	Col. IV.
5	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔
10	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔
15	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔
20	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔
25	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔
30	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔	𠂔 𠂔 𠂔 𠂔 𠂔
			(I) sic. Read s/.	

Նարամ-Սինի աքքաղական արձանագրութիւնը:

ճշդումների՝ այն համեմատելով URI-ի մէջ բերուած տառաղարձումների ու թարգմանութեան հետ:

**ՍԻՒՆ. I.** *Մարդկութեան ստեղծումից ի վեր բազաւորմերից ոչ մի բազաւոր բնաւ չի նուածել Արման(ում)-ը եւ Էրլան, (...) Ներգալը բացաւ ճանապարհը հզօր Նարամ-Սինի համար եւ սուեց նրան Արման(ում)-ը եւ Էրլան, եւ նա (Ներգալը) շնորհեց նրան նաեւ Ամանուր՝ Մայրենի լեռը եւ վերին ծովը: Ծնորհին Դազանի հզօրութեան, որ բարձրացնում է*

**ՍԻՒՆ. II.** *նորին վեհափառին, հզօր Նարամ-Սինը նուածեց Արման(ում)-ը եւ Էրլան եւ, Եփրասի ափից մինչեւ Ուլիսու(մ), գետին զարկեց ժողովուրդներին, որոնց Դազանը յանձնեց իր ձեռքը, եւ նրանք կրեցին կողովները (մտան ծառայութեան մէջ) *Aba-ի*՝ իր աստծու, եւ նա ունեցաւ իր հզօրութեան (իշխանութեան) տակ Ամանուր՝ Մայրիների լեռը: Երբ Դազանը վճռեց դատը յօգուտ*

**ՍԻՒՆ. III.** *հզօր Նարամ-Սինի, եւ յանձնեց Ուիդ-Ադաղին (Ուիդ-Թեշուրին)՝ Արման(ում)-ի արքային իր ձեռքը, նա (Նարամ-Սինը) գերեց նրան ... Նա իր արձանը շինեց (*diorite*) քարից եւ ձօնեց Սին աստծուն՝ (ասելով) «այսպէս՝ հզօր Նարամ-Սինը, արքան (աշխարհի) չորս կողմերի. Երբ Դազանը ինձ սուեց Արման(ում)-ը եւ Էրլան՝ ես գերեցի Ուիդ-Թեշուրին՝ Արման(ում)-ի արքային. այդ ժամանակ ես շինեցի ին*

**ՍԻՒՆ. IV.** *Ամանուրինը. եւ նա (!) ձօնեց Սինին. Ո՞վ որ վնաս հասցնի իմ անուանը՝ ջարդելով իմ արձանը (որ դրուած է) Սինի առաջ, եւ ով որ ... »:*

Այստեղ էլ պարզ երեւում է, թէ Նարամ-Սինը իր այս արշաւանքի համար շարժուել է (Աքքաղից) Եփրատով դէպի վեր ու հասել է Սիցերկրական եւ Ամանու: Հետեւաբար պարզ է, թէ իր այս երթի ճանապարհի վրայ էր Մարդիխ-Էրլան, եւ ոչ թէ «Տիգրիսից արեւելք տեղադրուող» Էրլան:

Մի երկրորդ եւ ուղղակի ու պարզ ցուցմունք ենք տեսնում (յատկապէս) Նարամ-Սինի այն խօսքերում, որով նա յայտնում է, թէ նա «Եփրասի ափից մինչեւ Ուլիսու(մ)՝ գետին զարկեց ժողովուրդներին, որոնց՝ Դազանը յանձնեց իր ձեռքը»: *Gadd-ի* եւ *Legrain-ի* նշուած աշխատութեան մէջ (էջ 80) Ուլիսու(մ)-ը տեղադրուում է Սիցերկրականի ափին: Ուրեմն Նարամ-Սինի բուն ար-

շար եղել է Եփրատի ավից (Երեսի, Աքքաղից գալով, Մարիի եւ յատկապէս Դագանի նշանաւոր սրբավայր Տուտուլ-ի մերձ գետափից) մինչեւ Ուլիսու (Սիջերկրականի ափ) եւ Ամանոս: Հետեւաբար, պիտի ընդունել, թէ Նարամ-Սինի յիշած Էրլան չէր կարող գտնուած լինել Տիգրիսից արեւելք: Այն համապատասխանում էր Մարդիս-Էրլային:

### 3. ԱՐՄԱՆԻԻ ՏԵՂԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Ու՞ր էր գտնուում Նարամ-Սինի յիշած Արմանին:

Նախապէս մի քան պարզ է, թէ Նարամ-Սինի՝ Եփրատից մինչեւ Ուլիսու (Սիջերկրականի ափ) եւ Ամանոս ու Կիլիկիա տանող ուղուց շատ հեռու եւ դուրս էր Տիգրիսից արեւելք՝ Դիյալայի շրջանում տեղադրուող Halwan/Halman > Arman քաղաքը: Հետեւաբար նախ պիտի ընդունել, որ Նարամ-Սինի յիշած Արմանին Տիգրիսից արեւելք տեղադրուող այդ Խալմանը չէր:

Մնում է իմանալ, թէ ճիշդ ո՞ր (Եփրատի ո՞ր կողմում) էր գտնուում Արմանին:

Մեր քննութիւնները ցոյց են տալիս, թէ Արմանի քաղաք-երկրի կենտրոնական շրջանները գտնուում էին Թուտտուլից<sup>1</sup> վեր եւ Եփրատից ոչ թէ արեւմուտք, այլ նրա անմիջապէս արեւելքում:

Ինչպէս տեսանք, *Սարգոնն Էրլայի վրայ արշաւելուց առաջ «Դագան աստծուն մատուցել է պաշտամունք Թուտտուլ քաղաքում»,* որը գտնուում է Եփրատի վրայ՝ Ռաքքայից մօտ 70կմ վար: Տուեալները ցոյց են տալիս, թէ Թուտտուլի Դագանը (Թուտտուլում սրա տաճարը) եղել է այնքան նշանաւոր ու յարգուած, որ անգամ Էրլան, որի դիցարանի գլխաւոր աստուածն էր հենց Դագանը<sup>2</sup>, մեծարժեք նույներ էր ուղարկում Թուտտուլի Դագանին<sup>3</sup>:

<sup>1</sup> EER, տես քարտէսը էջ 181: Տես նաև մեր քարտէսը համար 3:

<sup>2</sup> EER, 187, եւ AE, 246:

<sup>3</sup> Պ. Սատրիակն նոյն տեղում (էջ 189) բերում է. «Nine minas and thirty-six shekels of silver for a chariot with two wheels for Dagan of Tuttul» or «an unspecified

Նարամ-Սինը նոյնպէս գրում է, թէ «Ծնորհիւ Դազանին», կամ, «Երբ Դազանը վճռեց դատը յօգուտ Նարամ-Սինի», նա նուածեց Արմանին ու (յետոյ իր ձեռքը անցան) միւսները: Այստեղ, Արմանիի տեղադրման համար իր ունեցած մեծ կարեւորութեան (եւ աշքի առաջ ունենալու) համար, նորից եմ բերում Նարամ-Սինի այդ խօսքերը. «Ծնորհիւ Դազանին ... հզօր Նարամ-Սինը նուածեց Արման(ում)-ը եւ Էրլան եւ, Եփրատի ափից մինչեւ Ուլիս(ում), գետին զարկեց ժողովորդին, որոնց Դազանը յանձնեց իր ձեռքը ... եւ նա ունեցաւ իր իշխանութեան տակ Ամանոսը եւ մայրիների լեռը: Երբ Դազանը վճռեց դատը յօգուտ հզօր Նարամ-Սինին եւ յանձնեց Ոփ-Աղասին (Ոփ-Թեշորին)` Արման(ում)-ի աղքային իր ձեռքը, նա...»:

Այս վկայութիւնը պարզ ցոյց է տալիս, թէ Նարամ-Սինը Արմանին նուածել է շնորհիւ այն բանի, որ «Դազանը դատը վճռել է յօգուտ իրեն»: Այս խօսքերից հասկացուում է, թէ նա (Նարամ-Սինը) իր մեծ հայր Սարգոնի նման եղել է Թուտսուլ քաղաքում ու պաշտամունք է մատուցել Դազանի նշանաւոր տաճարում. այլ խօսքով՝ Դազանի օգնութիւնն է խնդրել հզօր Արմանիի վրայ արշաւելուց առաջ, եւ այդտեղի պատգամախօս քուրմերի միջոցով Դազանը դատը վճռել է յօգուտ իրեն, եւ որով նա արշաւել է մօտակայ Արմանիի վրայ՝ նախքան Եփրատից մինչեւ Ուլիսու(մ)` մինչեւ Միջերկրականի ափ եղածները (Էրլան, Ամանոս ու Մայրիների լեռը) ձեռք բերելու:

Միանգամայն պարզ է, թէ Արմանին պիտի գտնուած լինի Թուտսուլից վեր (Եփրատի ներքեւներից եկողի համար՝ Թուտսուլից յետոյ), Եփրատի արեւելքում, որը Թուտսուլի մօտերքում շեղում է դէափի արեւմուտք:

Մենք տեսանք, թէ Սարգոնը, իր արշաւն սկսելով Եփրատով դէափի վեր, Մարի, Եարմութի, Էրլան եւ Ամանոս երթի իր ճանապարհի վրայ չի հանդիպել (չի յիշում) Արմանին: Ուրեմն Արմանին, որ Նարամ-Սինից առաջ «Մարդկութեան ստեղծումից ի վեր բազաւորներից ոչ մի բազաւոր չի առել», այդ օրերին յայտնի քաղաք-

---

quantity of gold for the decoration of a table and for a gold vase, gifts of Ibrium for Dagan of Tuttul».

Երկիր էր, որին Սարգոնը չէր կարող անտեսել ու չյիշել, եթէ գտնուած լինէր Եփրատի արեւմուտքում՝ իր (Մարիից մինչեւ Ամանոս) ճանապարհի վրայ: Բայց Արմանին շատ հեռու էլ չէր. ինչպէս նշուեց, մի արձանազրութեան<sup>1</sup> վկայութիւնից էլ գիտենք, թէ Էբլան իր (Սարգոնի) ժամանակ գտնուում էր Արմանիի շրջանակի մէջ:

Ուստի պարզ է, թէ Արմանի քաղաք-կենտրոնը գտնուում էր Եփրատից արեւելք: Այստեղ էլ Նարամ-Սինը, Արմանիի արքային յաղթելուց յետոյ, ձեռք է ձգել Եփրատից մինչեւ Սիցերկրական գտնուած Էբլան, Ամանոսն ու Սայրիների լեռը:

Մենք գտնուում ենք, թէ Նարամ-Սինը, Թուտուուլից վեր, Եփրատից անմիջապէս արեւելքում գտնուած հզօր Արմանի Երկրի արքային յաղթելուց յետոյ է որ իրեն ապահով է զգացել արշաւելու Եփրատից արեւմուտք՝ դէպի Էբլա եւ Ամանոս: Անզամ նշաններ կան ընդունելու, թէ Էբլան այդ օրերին էլ գտնուում էր Արմանիի արքայի իշխանութեան տակ<sup>2</sup>, քանի որ Նարամ-Սինը հպարտութեամբ՝ մի քանի անզամ կրկնելով է նշում Արմանիի արքայ Ռիշթեշուրին յաղթած լինելը, իսկ Էբլայի քագաւորի մասին ոչ մի յիշատակութիւն չի անում. կարծես Արմանիի արքային յաղթելով՝ Էբլան էլ (ինչպէս եւ Ամանոսը) հեշտութեամբ ընկել է իր ձեռքը: Հետեւարար պիտի հաստատ համարել, թէ Արմանին հեռու չէր Եփրատից: Ուստի, մենք հաւանական ենք համարում, թէ այն գտնուում էր Խարուրի ակնաղրիւների եւ Հայկական Սիցագետքի ու Աղձնիքի շրջանակներում: Ն. Աղոնցը արդէն ժամանակին գտնուում էր, թէ Տիգրիսից արեւելք, Դիյալայի շրջանակում, Խանակինից հիւսիս տեղաղրուող Խալմանից տարբեր է Նարամ-Սինի յիշած Արմանին, որի տեղի համար մատնանշում էր Սիրիայի

<sup>1</sup> Այս արձանազրութիւնը նշել ենք «Արմանի անունը յիշող սեպագիր աղբիւրներ»-ի մէջ (համար 5): Այն կը յիշենք նաև վարը:

<sup>2</sup> Նոյն այս կարծիքը կայ Gadd-ի եւ Legrain-ի նշուած գործում (URI, 78), ուր գրուած է. «Note that the wording of the present text, especially of 11.23-28, suggests that Rid-Adad was not only king of Arman but also ruled Ebla»:

հիւսիսը<sup>1</sup>: Այստեղ հետաքրքրական է նշել նաև, թէ Աղադ-Նիրարի Բ-ը Խարուրի ակնաղբիւրների շրջանը կոչում է Հարք (Harki)<sup>2</sup>:

Ի հարկէ, այստեղ ծագում է այն հարցը, թէ ինչու Սարգոնը անհրաժեշտ չի համարել, նոյնպէս Էրլայից առաջ, արշաւել նախ Արմանիի վրայ, քանի որ, ինչպէս նշուեց, ունենք սուլեալներ, թէ իր ժամանակում էլ Էրլան գտնուում էր Արմանիի երկրում կամ ոլորտում: Մրա համար կարող են լինել տարբեր պատճառներ. նախ հնարաւոր է, որ Արմանին այդ օրերին գտնուում էր մի նեղ դրութեան մէջ: Կամ գուցէ Սարգոնը բարեկամական կապի մէջ էր Արմանիի հետ, եւ իր Էրլա-Ամանու արշաի բուն նպատակը ոչ թէ Էրլան նուածելն էր, այլ Ամանոսի Մայրիների անտառից շինարարութեան համար գերաններ ստանալը:

Արմանիի հետ նրա բարեկամական (կամ աւանդական) կապի համար կարելի է պատճառ (Եւ ցուցմունք) համարել իր ծննդավայրն ու հայրենիքն եղող Ազուրիրանի քաղաքի՝ Արմանի-Սուրարի երկրում գտնուած լինելու հաւանականութիւնը (սրա մասին տե՛ս Էջատակի ծանօթութիւն, էջ 195 համար 7):

Մենք գտնում ենք, թէ Արմանին հանդիսանում էր այդ ժամանակուայ ընդարձակ Սուրարի երկրի (Եթէ ոչ մայրաքաղաքը) կենտրոնական քաղաքներից մէկը: Այդ ժամանակներին այս երկրի սահմանները պիտի տարածուած լինեին հարաւից՝ մինչեւ Թուտուլի մատոյցները, արեւելքից՝ մինչեւ Նուզի-Լուլուրի, արեւմուտքից՝ մինչեւ Էրլա-Ուզարիտ-Ալալախ շրջանները: Արմանի=Սուրարի համազօրութիւնը ցոյց կը տրուի 2-րդ գլխի 3-րդ բաժնում, երբ խօսենք Արմարիլի եւ Շուրիլի անունների մասին:

Նարամ-Ախնին վերաբերող մի արձանագրութեան՝ Ուր-ի ուշ շրջանի մի ընդօրինակութեան մէջ Նարամ-Ախնը իրեն կոչում է իշխողը «Էլամից մինչեւ Բարախշում եւ Սուրարտուից մինչեւ Մայրիների անտառը» (Mât Elamtim<sup>KI</sup> ga-lí-sa-ma a-ti-ma Ba-ra-ah<sub>U</sub>-sim<sup>KI</sup>)

<sup>1</sup> HA, 20:

<sup>2</sup> Վարը տե՛ս, Arime-ի կապակցութեամբ, Աղադ-Նիրարիի խօսքերը, որոնք նշուած են ծանօթութեան 2 համարով (էջ 178):

ն մât ŠU-BUR<sup>Su-bar-tim</sup> KI a-ti-ma <sup>is</sup>Kîšti <sup>is</sup>erinim)<sup>1</sup>: Գելքը այս Սուրարտովի մասին գրում է, թէ այն տարածուում էր Բարախշումից (Դիյալայից արեւելք) մինչեւ Մայրիների անտառը Ամանոսի<sup>2</sup>: (Սա ցոյց է տալիս, թէ Էրլան էլ գտնուում էր Սուրարտովի մեջ):

Սուրարտովի այս սահմանները համընկնում են յետսագայ Սիտաննիի սահմանների հետ: Սեզ յայտնի է, թէ Saušsatar-Šutarna ժամանակներին Սիտաննին ընդգրկում էր արեւելքից Նուզին, իսկ արեւմուտքից՝ Ալալախը<sup>3</sup>:

Նարամ-Սինի 17 թշնամիների մասին խօսող խեթական յայտնի արձանագրութեան մեջ Արմանիի տեղը ճշդորէն համընկնում է այս Սուրարտովի տեղի հետ: Այս տեքստում Պարաշի (=Բարախշում) երկիրը գտնուում է Նարամ-Սինի՝ բուարկուած 17 թշնամիների մեջ 9-րդ տեղում: 10-րդ տեղում գտնուող երկրի ու նրա թագաւորի անունը, գտնուելով արձանագրութեան վնասուած մասում, չի կարդացուում (տառադարձութեան մեջ բերուել է փակագծերի մեջ դրուած կէտերով). 11-րդ տեղում նշուել է Արմանին, իսկ 12-րդ տեղում՝ Մայրիների անտառի երկիրը: Այս տուեալը ցոյց է տալիս, թէ Արմանին աշխարհագրականօրէն գտնուում է Պարաշի (Մարխաշի) երկրի եւ Մայրիների անտառի երկրի (Ամանոս-Կիլիկիայի) միջեւ, քայց աւելի մօս՝ Մայրիների անտառի երկրին, քանի թէ Պարաշին, քանի որ Պարաշիի եւ Արմանիի միջեւ եղել է մի ուրիշը: Այս տուեալը նոյնպէս Արմանին դնում է Սուրարիի նոյն շրջանում՝ Խարուրի եւ Արեւմտեան Տիգրիսի ակնադրիւրների աւագանում, Հայկական Միջագետքում ու Աղձնիքի շրջանակներում: Դիարբեքիրի մօս (in situ) գտնուած՝ Նարամ-Սինի յալթանակի կորողը (որ այժմ գտնուում է Պոլսի քանգարանում) պիտի շօշափելի ապացոյց համարել, թէ Նարամ-Սինը եղել

<sup>1</sup> HS, 35: Գելքը գրում է թէ այստեղ Subaritm-ը բերուել է տալու համար SUBUR Logogram-ի արտաանուրիւնը: Տես նաև URI, համար 274:

<sup>2</sup> HS, 35: Նոյնն են ասում C. I. Gadd-ը եւ L. Legrain-ը, տես URI, 73: Գելքը (եւ ուրիշներ) ընդունելով Barahsum=Marhasi=Parasi հաւասարութիւնը՝ այս Barahsum-ը տեղադրում է «մօտաւրապէս» Դիյալայի արեւելքում: Տես նաև Marhasi-ն մեր քարտէսում (համար 3):

<sup>3</sup> AN, 52, 53:

Է Հայկական լեռնաշխարհի այդ (Աղձնիքի) շրջանակում ու պատերազմ մղել նրա ուժերի դէմ:

Էրլայի նկատմամբ Արմանիի գերակայութեան մասին կարող է մի առանձին ցուցմունք լինել հենց Նարամ-Սինի այն պարծենկու խօսքերի մէջ, թէ իրենից առաջ «Մարդկութեան ստեղծումից ի վեր թագաւորներից ոչ մի թագաւոր քնար չի առել Արմանին ու Էրլան»: Սինչետ, մեզ արդէն յայտնի է (Նարամ-Սինին էլ պիտի յայտնի լինէր), թէ Սարգսնը «առել էր» Էրլան: Հետեւաբար, այստեղ խօսքը աւելի եւ գիսաւորաբար վերաբերում էր հզօր Արմանին եւ ոչ այնքան Էրլային:

Այս մեկնութեամբ պիտի աւելի հասկանալի լինի, թէ ինչու Նարամ-Սինը հպարտութեամբ երկու անգամ (կրկնելով) է նշում Արմանիի արքային յաղթած լինելը, իսկ Էրլայի թագաւորին չի յիշում, եւ թէ ինչու խեթական տերսում յիշուել են Արմանին ու նրա թագաւորը, իսկ Էրլան բոլորովին չկայ:

Վերեւում նշեցինք աքքաղացի Սարգսի կայսրութեան շրջանների մասին խօսող մի արձանագրութեան նէռ-ասորեստանեան ընդօրինակութեան հետեւեալ խօսքերը - իշտu Eb-lá adi Bit-Na-ni-ib KUR Ar-ma-ni-i<sup>KI</sup> («Էրլայից մինչեւ Բիտնանիք Արմանի երկրի [մէջ]»)<sup>1</sup>: Եթէ այս խօսքերը հասկանանք այնպէս, ինչպէս բոլորն են ընդունում, թէ Էրլայից մինչեւ Բիտնանիք շրջանը մտնում էր Արմանի երկրի մէջ, ապա սա պիտի համարել կոնկրետ վկայութիւն Էրլայի նկատմամբ Արմանիի գերակայութեան եւ ընդարձակութեան մասին Սարգսի ժամանակներին:

Ոմանք այս Արմանի ու Էրլա զոյզը տեղադրում են Տիգրիսից արեւելք (Քերքութի շրջակայքում): Բայց դժուար է ընդունել, որ Նարամ-Սինի յիշած Արմանի ու Էրլա զոյզից զատ զոյութիւն ունեցած լինի մի երկրորդ Արմանի ու Էրլա: Աքքաղական Սարգսի կայսրութեան աշխարհագրական բացատրութիւնն հանդիսացող այդ ընդօրինակութիւն-արձանագրութեան մէջ յիշուած այս Արմանին ու Էրլան Տիգրիսից արեւելք տեղադրելը չի հիմնուում ուրեմն կոնկրետ եւ ուղղակի վկայութեան վրայ: Այդ տեղադրման

<sup>1</sup> EBLA, 40: M. Astour-ի յօդուածում (NH, 15) երկրորդ անունը բերուել է Bit-Na-ni-ib<sup>1</sup> ձեւով:

համար ելնում են միայն այն բանից, թէ այն յիշուում է Սարգոնի կայրութեան (ըստ իրենց) Տիգրիսից արեւելք գտնուուած Երկրների շարքում, նրանց բուարկման մէջ ենթադրելով աշխարհագրական ճշգրիտ յաջորդականութիւն. հանգամանքներ՝ որոնք միշտ չեն պահպանուում: Միաժամանակ դժուար է Սարգոնի կայրութեան մէջ մտած այդ բոլոր Երկրների ճշգրիտ տեղադրումը եւ ոչ էլ այդ կայրութեան կամ պետութեան ճշգրիտ սահմանագծումը: Ն. Արոնցը այս Արմանին տեղադրում է «ակկարգացի Սարգոնի պետութեան արեւմտեան սահմանների մօտ»<sup>1</sup>. մի տեղադրում, որի շրջանի մէջ կը մտնի աւելի շուտ Մարդիխ-Էբլան<sup>2</sup>: Սարգոնեան այս արձանագրութեան մէջ էլ պարզ գրուած է Armani՝ եւ ոչ թէ Halman կամ Halwan, որ աւելի ուշ շրջանին է որ սկսել է կոչուել Almani>Arman (պատճառ էլ չկայ ընդունելու, որ սարգոնեան բնագրում եղած լինի Halman եւ ընդօրինակելիս՝ փոխած լինեն Armani-ի):

Ի հարկէ, սրանով չենք ուզում միստած լինել Մարդիխ-Էբլայից զատ մի այլ Էբլայի գոյութիւն ունեցած լինելու հաւանականութիւնը (արդէն նշել ենք ոմանց կողմից Տիգրիսից արեւելք տեղադրուող տաշ-kan Dūr-Ebla-ն): Սակայն, այս մեծ Արմանի Երկիրը, որի մէջ մտել է Էբլան, պիտի լինի հենց Նարամ-Սինի յիշած հզօր Արմանին:

Ի հարկէ, ընդունելով հանդերձ, թէ Նարամ-Սինի արձանագրութեան Արմանի եւ Էբլա գոյգի եւ սարգոնեան արձանագրու-

<sup>1</sup> NA, 19-20 (ՀՊ, 26-27):

<sup>2</sup> Սարգոնեան արձանագրութիւնը ուղղակի ցոյց է տալիս, թէ այդ ժամանակներին Էբլան մտնում էր Արմանի Երկրի մէջ: Ըստ Մատթիաթի տուած տեղեկութիւնների՝ Մարդիխ-Էբլայի արձանագրութիւններում էլ Էբլայի իշխողը չի կոչուում Lugal («Թագաւոր»), այլ Էռ («Տէր»): Մենք ընդունում ենք ոո=malikum-ի մասին Մատթիաթի բերած մեկնութիւնների հաւանականութիւնը (թէեւ կայ նաև արար. mālikum-ը, որ նոյնպէս նշանակում է «տէր», ոչ թէ արքայ), բայց պիտի մտքից չհանել նաև սումեր ու եզրի աւելի կրօնական իմաստով «Տէր» (քրմապետ), քան թէ պետական իմաստով որպէս «ինքնիշխան արքայ» օգտագործուած լինելու հաւանականութիւնը: Էբլայի դիւնանի ժամանակ, դեռ կար համայնքի (ծերերի) խորհուրդ, որը ընտրում էր Էռ-ին կամ Lugal-ին, որը միշտ չէ, որ ժառանգական էր:

թեան *Արմանի* եւ *Էրլա* զոյգի մեջ նշուել է նոյն մեծ Արմանին, սակայն անհաւանական չէ, որ Էրլաները լինեն տարրեր. մեկը Մարդիխ-Էրլան, իսկ միւսը՝ տաշ-կան Dür-Ebla-ն, քանի որ Արմանիի երկիրը տարածուում էր նաև Արեւելեան Խարուրի վրայ՝ Սուբարտուի կենտրոնում: Այսուհանդերձ, նկատի առնելով հզօր Արմանիի նկատմամբ Մարդիխ-Էրլայի ստորադասութեան մասին վերեւում նշուած երեւոյթները, մենք աւելի հաւանական ենք համարում, թէ սարգոնեան զոյգը համապատասխանում է նարամսինեան (Արմանի եւ Էրլա) զոյգին:

Ալալիս IV-ի արձանագրութիւններում յիշուած Arma-ն պիտի լինի Նարամ-Սինի նշած այս մօտակայ Arma-ու քաղաք-երկիրը կամ նրա մի շրջանի (կամ բնակավայրի) անունը՝ առանց սուպոնիմական -ու վերջաւորութեան, ինչպէս Arme ձեւը: Ինչպէս որ *Արմենի* տեղանուն-ցեղանունից ունենք, որպէս անուանադիր (*Հպոնիս*), *Արմեն* ցեղանուն-անձնանունը եւ *Արմանի*-ից *Արմանեակ* (<Արմանի+ակ) անձնանունը, այնպէս էլ *Արմա* ձեւից ունենք (Խորենացու պահած) *Հարմա* անձնանունը, որի նախահունչ Հ-ն աճել է որպէս սաստկացուցիչ (հմմտ. ազանել>հազնել եւն.):

Ինչպէս տեսանք, մեզ յայտնի տուեալները ցոյց են տալիս, թէ մեծ *Արմանի* երկրի հարաւային մասը, ուր եղել է Նարամ-Սինի յիշած *Արմանի* քաղաքը, գտնուում էր Խարուրի եւ Արեւմտեան Տիգրիսի ակնաղբիւրների շրջաններում, որոնք հանդիսանում էին սուբարիական բուն երկրի կարեւոր մասը՝ ընդգրկելով Հայկական Սիցագետքն ու Աղձնիքը: Նարամ-Սինից մօտ 12-13 դար յետոյ, II հազարամեակի վերջերին եւ I հազարամեակի սկզբներին (մ.թ.ա.), Ասորեստանի արքաները Armani երկրի այս շրջանը նշում են Arme անուանաձեւով:

#### 4. ԱՐԻՍԵ (ԱՐՄԱՆԻ) ԵՒ ՍՈՒԲԱՐՏՈՒ

Աղադ-Նիրարի Բ-ը (911-891 մ.թ.ա.), *Արիսէ* երկրի դէմ իր կատարած մի քանի արշաւանքների մասին գրած մի մեծ արձա-

նազրութեան մէջ, ուղղակի եւ կոնկրետ բացատրութիւններ է տալիս Արիսէ երկրի մի քանի քաղաքների աշխարհագրական տեղի մասին, որով հնարաւոր է դառնում ճշգրիտ պատկերացում կազմել, թէ աշխարհագրական ինչ շրջաններ էր ընդգրկում այդ երկիրը: Ահա նրա ուղղակի վկայութիւնները (քերում եմ կրծատումներով՝ միայն մեզ հետաքրքրող մասերը):

«... այդ տարին եւ Կիշլինու ամսին, ... Խարուր գետի վերեւներից, Harki (?) երկիրը, մինչեւ Կարքեմիշ, որ գտնուում է Hatte երկրում, նա ասպատակեց»: «... Այդ տարին, Արիու ամսին, մի ասպատակութեան ժամանակ Արիսէ երկրի վրայ, Պատսա քաղաք(ում), որ գտնուում է Կաշխարի լեռան ստորոտում, նա մղեց (մի պատերազմ): Այդ տարին, եւ նոյն ամսին, մի ասպատակութեան ժամանակ Արիսէ երկրի վրայ, մուտքի առաջ (զր.՝ զլուխ) Նարուլա<sup>1</sup> քաղաքի ... նա մղեց (մի պատերազմ): .... Նոյն տարին, նոյն ամսին, մի ասպատակութեան ժամանակ Արիսէ երկրի վրայ, ... Տիրուա (?) քաղաքում, որ գտնուում է Տիգրիսի վրայ, նա մղեց մի պատերազմ: Այդ տարին եւ Ուլուլու ամսին, մի ասպատակութեան ժամանակ Արիսէ երկրի վրայ, Մուրարի (?) քաղաքում, որ գտնուում է Շուպրէ երկրում, նա մղեց մի պատերազմ»<sup>2</sup>:

Ինչպէս պարզ երեւում է, Աղադ-Նիրարին ուղղակի վկայում է, թէ Արիսէ երկրի (իր ասպատակած) մի շրջանը գտնուում էր Կաշխարի լեռան ստորոտում, մի ուրիշ շրջանը Տիգրիսի վրայ եւ մի ուրիշն էլ Շուպրէ (Շուրբրէ) երկրում: Այլ խօսքով՝ Արիսէ երկրի մէջ էին մտնում Տիգրիսի մի մասը (ի հարկէ ակնաղբիրների շրջանը), Կաշխարի լեռը եւ Շուրբրէ: Այսպիսով՝ տեսնում ենք, թէ Աղադ-Նիրարիի կոնկրետ վկայութիւնն էլ Արիսէ երկիրը կապում է ուղղակի Սուլարտու-Շուրբրէ երկրի հետ:

Այստեղ, Arme եւ Arime անունների կապակցութեամբ, տեղին եմ համարում պարզաբանել զիտական մտքերում շփոթութիւն ա-

<sup>1</sup> Ըստ Աղադ-Նիրարի Ա-ի (1304-1273 մ.թ.ա.) մի արձանագրութեան, ուր նա նշել է Հանիգալբատի վրայ կատարած մի արշաւանքի մասին, այս Նարուլա քաղաքը գտնուում է Հանիգալբատում: Տե՛ս I. Gelb, HS, 81: Տե՛ս նաև ՀԺՊ, Ուրարտուի քարտէսը, ուր Նարուլան տեղադրուած է Կաշխարիի ստորոտում:

<sup>2</sup> ARAB, 119-121:

ոաջացնող մի թիր ըմբռնում: Պատմագէտներից ոմանց մօս, անգամ որոշ յայտնի զիտնականների գործերում, խոր արմատ է ձգել անցեալ դարաշրջանի քննական պատմագրութեան նախնական քայլերի ժամանակ առաջարկուած այն միտքը, թէ այս Arma կամ Aram, Arime կամ Arme եզրերը սեմական են եւ պատկանում են սեմիտներին:

Յայտնի արեւելագէտ I. Diakonoff-ը, աչքի առաջ ունենալով այն, թէ հայերը իրենք իրենց չեն կոչում արմեն, ենթադրում է, թէ նոյնիսկ Armina (Armini-Armeni) անունը տրուել է Հայաստանին ու հայերին՝ Հայքի հարաւային շրջանում արամէացիների հետ նրանց ունեցած հարեւանութեան պատճառով: Խօսելով Armeni անուան մասին՝ նա գրում է. «The Aramaeans called the Hayk'-Armīnā which was an Aramaicized form of what can be reconstructed as Urartian Armini, meaning ‘the land or/ and the inhabitants of Arme (Sasoun), the nearest region inhabited by the Hayk’ to the North of the Arameans; ... Even if Armanūm should prove the same country as the later Arme, at the early period of the Akkadian dynasty it can have had noting to do with forefathers of the Armenians; but it is much more probable that the country is to be sought somewhere to the East or North-East of Babylonia»<sup>1</sup>:

Ինչպէս տեսնում ենք՝ Դիակոնովը ենթադրում է, թէ Հայաստանը Armina կամ Armini (Armeni) է կոչուել Դիարքեքիրի շրջանի Arme անունով՝ որպէս արամէացիների ամենամօս շրջանը, որ քնակեցուած է եղել հայերի կողմից: Այստեղ հետաքրքրական է նաև այն, թէ յարգելի զիտնականը, հաւանական համարելով հանդերձ Arme=Armanum հաւասարութիւնը՝ Armanum-ը տանում է նորից Բարեկոնիայից հիւսիս-արեւելք, մի քան, որով դժուար կը

---

<sup>1</sup> Դիակոնովի այս խօսքերը բերում եմ մի հարցի առքի ինձ գրած մի անգլերէն նամակից (20-XII-1967): Նշում եմ նաև իմ շնորհակալութիւնը իր այս նամակից այստեղ նշումներ կատարելու իր բոյլատուութեան համար, որ յայտնել է իր 27-II-84 բուականը կրող նամակով, որի մէջ գրում է, թէ հիմա Arme-ին պիտի տեղադրել Սասունից ներքեւ՝ կենտրոն ունենալով Նեխերիան, որը գտնուում էր Սիվերէք-Մարդին-Դիարքեքիր եռանկիւնի մէջ:

լինի ընդունել, թէ Բարելոնիայից հիւսիս-արեւելք գտնուած մի քաղաքի անունով կարող էր Դիարբերիրի շրջանը կոչուել Arme:

Ինձ յայտնի չէ, թէ արդեօ՞ք Հոմերի Իլիականում յիշուած Arim-ները, ինչպէս եւ ուրարտական արքաների Arame եւ Erimena անուններն էլ արամէացի կոչուած սեմիտների հարեւանութեամբ կամ արամէացի գրագիրների միջոցով ստացուած անուանածեւ են համարուում:

Arma, Aram, Arim, Arime, Arme, Armani, Armina, Armeni եւ նման անուանածեների սեմական լինելու մասին եղած այս եւ նման այլ կարծիքները դարձել են ոմանց մօս նախապաշարմունք, որը խաճագարում է նրանց տեսնել Հայկական լեռնաշխարհի եւ Հիւսիսային Սիջազետքի միջեւ եղած փոխյարաքերութիւնների էուրինը, որով եւ դժուարացնում է այդ փոխյարաքերութիւնների հետ կապուած որոշ մութ հարցերի լուսաբանման գործը՝ ել աւելի կնճռոտելով հարցերը:

Խնդիրը այն է, թէ հենց Aram անունը չի պատկանում (յետագայում արամէացի կոչուած) սեմիտներին: Սերձաւոր Արեւելքի սեպագիր փաստարդերի ուշադիր հետազոտութիւնը ցոյց է տալիս, թէ յետագայում արամէացի կոչուած սեմիտական վաչկատուն ցեղերը նախապէս կոչուած են եղել Sutu եւ Achlame, որոնք գալով Հիւսիսային Սիջազետք եւ քնակութիւն հաստատելով կործանուող կամ կործանուած Սիտաննիի (Նահարինայի) հողամասերի վրայ եւ մօտակայքերում՝ երկրի հին Arma կամ Aram անունով կոչուեցին արամէացիներ, ճիշդ այնպէս, ինչպէս Եզիպտոս անունը չի պատկանում արաբներին, որոնք, հաստատուելով այդ երկրում, այդ երկրի նախկին հին անունով կոչուել ու կոչուում են Եզիպտացիներ:

J. Myers-ը ժամանակին գրել է, թէ «Արամէացիները, երեւի, սկսեցին դուրս գալ հիւսիս-արեւելեան Արարիայից՝ մօս 1350 թուականներին (մ.թ.ա.), երբ վաչկատուն հորդաները, որոնց Բաքելոնի արքաները կոչում էին «Suti եւ Achlame», աւարելով ու աւելով ողողում էին գրեթէ ամրող Եփրատեան սահմանը»<sup>1</sup>:

---

<sup>1</sup> DH, 113:

Սեմիտական այս ցեղերի նոր երեւալու մասին R. O'Callaghan-ն էլ գրում է. «The Sutû and the Aklâmu are first mentioned in Assyrian sources as appearing in the time of Arik-den-ilu (1316-1305) of Assyria. The former name is connected with the Egyptian S̄t̄tyw, meaning «Asiatics». Thus, as a matter of fact they do service as Egyptian mercenaries ...»<sup>1</sup>:

Սեմիտական այս ցեղերի Հիւսիսային Սիջազեսք նոր գալուստի մասին նշում ենք տեսնում Աղադ-Նիրարի Ա-ի (շուրջ 1310-1280 մ.թ.ա.) հետեւեալ վկայութեան մէջ. «... Յաղթողը *Sutipatîkî* եւ Նիզիմիսի երկրմերի ամբողջութեամբ, նրանց բոլոր բազաւորնեռով, լեռներով, լեռնադաշտերով, եւ տերիտորիաները լայնասիխու Կուտիի (մի փոփոխակում աւելացուած է՝ յաղթողը Կուտմուխիի եւ նրա բոլոր դաշնակիցների), *Aḥlamî*, *Suti* եւ *Laurî* հորդաների եւ նրանց երկրների, որոնք ընդարձակել են սահմաններ ...»<sup>2</sup>: Ինչպէս երեւում է, ըստ Աղադ-Նիրարիի վկայութեան, սեմիտական այս ցեղերը իրենց ժամանակներին, 13-րդ դարի սկզբներին, դեռ ընդարձակում էին իրենց սահմանները, այսինքն՝ դեռ շարժման մէջ էին՝ գրաւելով նոր հողեր, որոնք չէին պատկանում նրանց: Եւ Ասորեստանի բազաւորը դեռ նրանց բուն *Suti* եւ *Aḥlamē* անուններով՝ դեռ չեն կոչուում *արիսեցի* կամ *արաս*: Այս ժամանակները համընկնում են հենց Սիստանի անկման օրերին: Սիստանի հզօրութեան ժամանակ, այս ցեղերը չէին կարող մտնել-գրաւել միտաննական եղող այս հողերը Կաշխարի-Կուտմուխի շրջաններում (թէեւ երկրում պիտի զանուած լինէին ասուրաբելական (քիչ) տարրեր, բայց նրանք որոշիչ քանակ ու դեր չեն ունեցել):

Alfred Haldar-ը ճիշդ է գնահատել այս ժամանակների դրութիւնը, երբ գրում է. «It is a fact that there was a general decline of civilization in the Near East about 1200 B. C. and the following centuries»<sup>3</sup>:

Սալմանասար Ա-ի ժամանակ (1266-1243 մ.թ.ա.) սեմիտական այս ցեղերի մարդիկ, որպէս խեթերի դաշնակիցներ, արդէն

<sup>1</sup> AN, 94:

<sup>2</sup> ARAB 28-29:

<sup>3</sup> WA, 44:

մտել էին Հանիզալբատի հողատարածութիւնները, սակայն դեռ նշուում էին իրենց բուն ախլամու անունով ու դեռ չեն համարուում արամէացիներ: Սիա թէ ինչ է գրում Սալմանասարը. «... Երբ մեծ աստուածների հրամանով առաջացայ Հանիզալբատ երկրի դէմ հզօր բանակմերով իմ տիրոջ՝ Աշշուրի, ես ճամբայ բացեցի դժուար ճանապարհների եւ նեղ անցրերի վրայով. Շատուուարային՝ Հանիի (տարբերակում՝ Հանիզալբատի) արքային, խեթերի բանակին եւ նրա հետ եւ *Aḥlamī*-ին ես շրջապատեցի ... եւ ես մղեցի պատերազմ եւ իրազործեցի նրանց պարտութիւնը ... խեթերի բանակին եւ *Aḥlamī*-ին՝ նրա դաշնակիցներին ես ջարդեցի ...»<sup>1</sup>: Ինչպէս տեսնում ենք, այս վաշկառուն ահլամի եկուորները արդէն դարձել են խեթերի դաշնակիցներ, բայց կոչուում են լոկ իրենց բուն ախլամի ցեղանունով (դեռ չեն կոչուում արամէացիներ):

Bit-Zamâni-ն (Դիարբեքիրի շրջան) հանդիսանում է այս սեմիտների ամենավեր թափանցումը դէպի հիւսիս:

Սալմանասար Ա-ից մօտ մէկ ու կէս դար յետոյ, Թիզլաք-Պալասար Ա-ի (1115-1077 մ.թ.ա.) ժամանակ, ախլամի եկուորներից շատերը արդէն դարձել են Arma երկրի բնակիչներ՝ արմացիներ. Թիզլաք-Պալասարը գրում է. «... a-na libbi Aḥ-la-mi-i KUR Ar-ma-a-ia<sup>MES</sup> nak-rût<sup>MEŠ .ut D</sup> A-šur bēli-ia al-lik iš-tu tar-ṣi<sup>KUR</sup> Suhi a-di<sup>URU</sup> Kar-ga-miš Ša<sup>KUR</sup> Ha-at-te i-na ištēn<sup>en</sup> u-me aḥ-bu-ut...»<sup>2</sup>:

(«... Ես (դէպի) սիրտը (մէջը) ախլամի Արմա-ցիների, քշնամիները Աշուրի՝ իմ տիրոջ, քայլեցի. Սուխի երկրից մինչեւ Կարբեմիշ քաղաքը Խաթէ երկրի՝ մէկ օրում ես ասպատակեցի...»):

Այստեղ պարզ երեւում է, թէ Arma-ն (իր <sup>KUR</sup> որոշիչով) երկրի անուն է, ոչ թէ ցեղի, իսկ ցեղի անունն է ախլամի, որոնք դարձել են Arma-ի բնակիչներ:

Նոյն պատկերը տեսնում ենք Աղադ-Նիրարի Բ-ի ժամանակ (911-891 մ.թ.ա.), երբ սեմիտական այս ցեղերը արդէն տեղատրուած լինելով՝ իրենց ահլամի ցեղանուանը կցուած ենք տեսնում ա-

---

<sup>1</sup> ARAB, 111:

<sup>2</sup> AKA, I, 73:

*ռամէացի եզրը*<sup>1</sup>: Իսկ ախլամի արամէացիներ խօսքը ցոյց է տալիս, թէ այդ ժամանակ դեռ կային ոչ-ախլամի արամէացիներ:

Ինչպէս վերեւում տեսանք, Arime երկրի դէմ Աղադ-Նիրարի Բ-ի կատարած մի քանի արշաւանքների մասին խօսող արձանագրութեան տուեալները ցոյց են տալիս, թէ նրա ժամանակներին, Arime անունը հանդիսանում էր լայն տարածութիւններ ընդգրկող մի աշխարհագրական եզր: Այդ անուան տակ մտնում էին հիւսիսի լեռնային շրջանների հետ եւ հարակ տափաստանային տարածութիւնները, որոնք պատկանում էին Սուրարի երկրին եւ Միտանի պետութեանը, մի պետութեան՝ որի բուն կենտրոնական շրջանները գտնուում էին աւելի հիւսիսի լեռնային գօսիում, որ հնուց յայտնի էր Arma (Arma-ni) անուամբ: Արմատական նոյն ծագումն ունեն Arma եւ Aram անուանաձեւերը, որոնց հետ են կապուած յետագայ Arim, Arime, Arme, Urme եւ նման այլ ձեւերը:

R. O'Callaghan-ը, իր հետազօռութիւնների որպէս եզրակացութիւն, գրում է. «Semantically, why any people should be called Aramaeans we are not in a position to say. It is most reasonable to think that the word was first a place name, possibly a mountain city Arma, mentioned by Shalmaneser I.»<sup>2</sup>:

Նշուած այս քաղաքը պիտի գոյութիւն ունեցած լինի անգամ Նարամ-Սինի ժամանակներին՝ Armani-ի շրջանում: Նարամ-Սինի մի արձանագրութեան մէջ գրուած է. «Naram-Sin, king of the four regions, when he warred against Harshamadki, lord of A-ra-am and Am, in Ti-ha-ar, the mountain, he overcame him»<sup>3</sup>: Երեւի Նարամ-Սինի յիշած Ar-am (կամ Ara-am) քաղաքը Արմանիի շրջանի քաղաքներից մէկն էր, հաւանաբար, Հայկական Տաւրոսի շրջանում. Tihar լեռնանունը յիշեցնում է *Sawir(nu)* անունը, իսկ Am քաղաքանունն էլ՝ *Ամեղու* կամ *Ամիղա* (Դիարբեքիր) քաղաքը, որի -դու կամ -դա վերջաւորութիւնը պիտի համարել տոպոնիմական ածանց (հմմտ. Այաղու (երկիր), Արսիղու (լեռ), Տայղա եւ Իռիղս

<sup>1</sup> ARAB, 111:

<sup>2</sup> AN, 95-96:

<sup>3</sup> Նոյն, 96:

(ամրոցներ)<sup>1</sup>, ինչպէս եւ Կրուղա, Բարուատա [≡Բիտ-Բարուա] եւն.): Արդէն մեզ յայտնի է, թէ Ամիդահ մօս գտնուել է Նարամ-Սի-նի յաղթանակի կորողը:

Էրլայի արձանագրութիւններում յիշուում է Arramu (Ar-ra-mu<sup>KI</sup>) քաղաքը Muraru (Mu-ra-ru<sup>Ki</sup>) քաղաքի հետ միասին<sup>2</sup>: Եթէ այս Arramu (կամ Aramu) քաղաքն է, ապա Muraru-ի հետ յիշուելը կարող է լինել փաստ, թէ այն գտնուում էր Արմէ-Շուբրիա երկրում կամ սրա մօտակայքում, քանի որ Աղաս-Նիրարի Բ-ի (Վերեւում նշուած) արձանագրութիւնից գիտենք, թէ Murarir-ը գտնուում էր Շուբրէ երկրում:

Մեր նախորդ աշխատութիւններում, քերելով հայերի Ar-ma-ni/Ar-me-ni ազգանուան ստուգաբանութիւնը, ցոյց ենք տուել, թէ այն կազմուած է հայերի արեւի ազգային աստուած Ար-ի (Արայի) անունով եւ նշանակում է «Ար-որդի-ներ» (ուր ու կամ ու նշանակում է «սերել, սերունդ, որդի»), եւ թէ նրանք իրենց կոչած են եղել ուղղակի ար (այս մասին դեռ կը խօսենք յետոյ, «Արայի Երկիրն ու Ժողովուրդը» գիտում):

Արամ անունը, ինչպէս ասացինք, չի պատկանում սեմիտներին, այլ, ընդհակառակը, պատկանում է Հայկական լեռնաշխարհի ար կամ արմանի/արմէն կոչուած ժողովրդին: Ինչպէս Ar-ma, այնակ էլ Ar-am անուանաձեւի մէջ նատած է ar արմատը: Երեւում է, թէ -ma քաղաքիչը փոխարինուած է -am ձեւով, կամ երկուսը տարրերակներ են: Գելքն անգամ հետաքրքրուել է այս -am վերջադիրով: Խօսելով խուրրիական անձնանունների իր ցուցակում քերած Hupitam, Pušam եւ Šeħlam անունների մասին՝ նա գրում է. «Interesting is the suffix -am (later -a) found in the Old Akkadian name Hapiram, in the Ur III names Hupitam, Šeħlam, and Pušam, and in several later Chagar Bazar names: Apšam, Hupitam, Šeħam, Šennam, and Zipšam»<sup>3</sup>: Համեմատել նաև Վահունի տոհմից Բազամ, Ծոփք-Կոմմազենի արքայ Արշամ ինչպէս եւ Արզամ անուն-

<sup>1</sup> ՀԺՊ, 200:

<sup>2</sup> AE, 84: Պետստինասոնն նշում է, թէ Էրլայում ամորիտներն ու խուրրիները (սուբարիներ) ապրում էին խաղաղութեամբ (տե՛ս AE, 27):

<sup>3</sup> HS, 115:

ները ելն.: Այս օրինակները կասկած չեն թողնում, թէ Ar-am անուան -ամ վերջաւորութիւնը առանձին բաղադրիչ է եւ անուան բուն արմատն է Ar, որը պատկանում է Հայկական լեռնաշխարհի՝ Ar (Ara) հիմքով (սկզբնաձայնով) կազմուած տեղանունների ու ցեղանունների շարքին (Այս մասին տե՛ս մեր քարտեսը համար 4):

Գելքը բերում է նաև (ըստ մեզ, Ար-ի՝ Արայի հետ կապուած) հետեւեալ անձնանունները. «Published tablets from this (Hammurabi) period mention persons with such names as A-ri-a and A-ra-am-mu-su-ni, known to be Hurrian from parallels at Nuzi»<sup>1</sup>: Գելքը այս անունների մեջ տեսնում է ar եւ ուս արմատները<sup>2</sup>: Ի հարկէ՝ Գելքը, իրաւացիօրէն, սրանց չի համարում սեմական: Թէեւ կրչում է խուրրիական, այսուհանդերձ մենք աւելի հակուած ենք նրանց կոչելու սուրարիական: Այս A-ra-am-mu-su-ni անուան մեջ կարելի է տեսնել երկու տարբեր կառուցուածք (քարդութիւն). մէկը՝ Aram-musu-ni, որի երկրորդ բաղադրիչն է ուս կամ ուս, ինչպէս գտնում է Գելքը՝ կամ՝ Aramu-su-ni, որի երկրորդ բաղադրիչն է su (=Supari. այս մասին կը խօսենք յաջորդ հատուածում). համեմատել մի սուրարի մարդու Da-šu-սկ եւ մի նուզեցիի Ha-su-սկ անունները ելն.<sup>3</sup>: Ըստ մեզ, ո՞ր ձեւն (կառուցուածքն) էլ որ ճիշդ լինի՝ ուս, թէ ուս (=սուրարի), միեւնոյն է, երկուսն էլ պատկանում են Հայկական լեռնաշխարհի սուրարիական շրջանակի անուններին, որոնց հետ, ինչպէս երեւում է, կապուած է անուան առաջին Aram բաղադրիչը:

Հայկական լեռնաշխարհի հարաւային շրջանները (յատկապէս հարաւ-արեւմտեան շրջանները), որոնք ուղղակի շփման մեջ են գտնուել Սումեր-Աքքադների հետ, կոչուել են նաև սումերական ու («սերել, սերունդ, որդի, շէն») վերջաւորութեամբ Ar-me (Ara-me), որը նշանակում է «Ար-ի սերունդ» կամ «Արա-շէն»: Միաժամանակ՝ հաւանական ենք համարում, թէ այս արելքը կա-

<sup>1</sup> Նոյն, 64: Տե՛ս նաև նոյն էջի տակ ծանօթութիւն 131:

<sup>2</sup> Նոյն:

<sup>3</sup> HS, 101: Սուրարիական անձնանունների -սկ վերջաւորութիւնը համեմատել հայկական անձնանունների -ուկ կամ -ակ վերջաւորութեան հետ (օր. Տիրուկ, Հաւուկ, Հայկակ, Արմենակ, Ցոլակ եւն.):

բող են սեմական յոգնակի – այս վերջածանցով կոչուած լինեն Ar-im («արեր») եւ նրանց երկիրը՝ Arim-e («արերի երկիր») եւ որը պիտի շփռուած լինէր սումերահայ մա/թ («սերել, սերունդ, որդի, շէն») վերջաւորութիւն ունեցող Arma եւ Arme (Arame) ձեւերի հետ՝ վերջաւորութիւնների ձայնային պատահական նմանութիւնների պատճառով<sup>1</sup>: Հմմտ. եքր. Eloah («աստուած») > Elohim («աստուածներ»), եւ U. Գրքում նշուած խորիմ («խորէացիք») (Ծննդոց ԺԴ, 6. ԼԶ, 20-29. տե՛ս նաև ՀՊ, 267):

Պատմագիտութեան մէջ արմատացել է այն միտքը, թէ Հայկական լեռնաշխարհի միայն հարաւ-արեւմտեան մասն է կոչուել Արմէ (կամ նման մի անուանաձեռով): Այս երեւոյթի պատճառը այն է, թէ ասուրաբարելական աշխարհը աւելի այս մերձ շրջանով է շփման մէջ գտնուել Հայկական լեռնաշխարհի հետ, որի այլ շրջաններն էլ (ներառեալ կենտրոնը) ունիին Ար կամ Արա անունով կազմուած անուններ՝ ինչպէս Արամալի / Արմա [րի] լի (=Արմանի՝ որովհետեւ լի-ն = մի յոգնակիին), Առերանի, Արիսի, Էրիանի, Արազած եւլն., որոնց մասին մանրամասնօրէն դեռ կը խօսենք յաջորդ գլուխում:

Սրանց հետ պիտի կապել նաև մ.թ.ա. III եւ II հազարամեակ-ների արձանագրութիւններում Ար, Արա, եւ նրանց տարրերակ Արի եւ Արու բաղադրիչներով կազմուած անձնանուններն ու տեղանունները, ինչպէս օրինակ՝ անձնանուններ են Ari-a, Ari-Kumme, Ari-Šen, Ari-dupuk, Ari-հսհա<sup>2</sup>, Ara-ha եւլն., եւ տեղանուններ՝ Ari-nu<sup>3</sup>, Aru-ra, Aru-be, Aru-ni, Ara-zu, Ar-na, Ar-bu<sup>4</sup> եւլն.:

<sup>1</sup> Մա-ի «սերել, սերունդ, որդի» իմաստի համար համեմատել Փոքր Ասիայի պտղաբերութեան-ծննդաբերութեան դիցուհու Մա անունը: Ամ-ը, որպէս մա-ի տարրերակ, կարող է սեմիտների մօս ստացած լինել «սերունդ > ժողովուրդ» իմաստը. միւնայն է, երկու դէպքում էլ Aram պիտի նշանակի «Ar-ի սերունդ, որդի» կամ «Ar-ի ժողովուրդ», եւ, որպէս տեղանուանական եզր, «Ar-ի ժողովուրդի երկիր»:

<sup>2</sup> Aria, Arikumme, Arišen, Aridupuk եւ Ariհսհա անունները տե՛ս HS գրքում:

<sup>3</sup> Նոյն տեղում:

<sup>4</sup> Arura, Arube, Aruni, Arazu, Arna եւ Arbu անունները տե՛ս Ն. Աղոնցի ՀՊ գրքում:

Վերեւում արել էի որոշ նշումներ, թէ Երլան Սարգսնի եւ Նահամ-Սինի ժամանակներին գտնուած է եռել Արմանի երկրում կամ նրա ազդեցութեան շրջանակում, եւ բերել էի որոշ տուեալներ, թէ Երլայում ամորիտների հետ ապրել ու գործել են նաեւ (խորքի համարուոր) սուրարիներ: Միաժամանակ նշել էի Արմանիի արքայական տան հետ Երլայի իշխողների ունեցած ազգակցական կամ խնամիական կապի հաւանականութեան մասին, եւ այդ կապակցութեամբ ուշադրութիւն էի հրափրել Երլայի արքաներից մէկի հօր Igris-Hepa, Երլայի կառավարիչներից մէկի Տսբուր, մարդկանցից մէկի Եհլի-Տեշուր եւ Երլայի արտադրական ղեկավարներից մէկի Guzuzi անունների շուրջ, եւ բերել էի Խամազիի պատգամաւորին Երլայում տրուած նամակի այն խօսքերը, թէ «... King of Ebla (is) brother of Zizi, king of Hamazi ....»: Այստեղ Ար-ի եւ աղերի մասին իմ արած դատողութիւնների առքի աւելի հետաքրքրական եւ աւելի հասկանալի կը լինի նաեւ Երլայի արքաներից Ar-Ennum-ի անունը, որը մի ժամանակ (նախապէս) եղել է Երլայի կառավարիչներից մէկը<sup>1</sup>, ինչպէս Տսբուր-ը:

Ես հաւանական եմ համարում, թէ Ar-Ennum արքայանուան առաջին բաղադրիչ Ar-ը նոյնպէս մեզ յայտնի դիցանունն է: Կարծես նոյն դիցանունն է գտնուում Երլայի կառավարիչներից մէկի Irkab-Ar<sup>2</sup> անուան մէջ. համեմատել Երլայի Irkab-Damu արքայանունը, որի երկրորդ բաղադրիչ Damu-ն նոյնպէս դիցանունն է<sup>3</sup>:

Հետաքրքիր է միաժամանակ նշել, թէ Երլայի դիւանի ժամանակներին գոյութիւն է ունեցել Ara անունվ քաղաք, որի Իրրիհիր անունվ մարդուն Երլան մատակարարել է որոշ ապրանքներ<sup>4</sup>:

Հայկական լեռնաշխարհի աղերը յետագայում, արամեացի կոչուած սեմիտների գալուց շատ առաջ, տարածուած են եղել նաեւ հարեւան հարաւում՝ հիւսիսային Սիրիայի եւ հիւսիսային Սիցագետքի դաշտային տարածութիւններում, որոնց որոշ մասը կոչուում էր «Սիցագետք Հայոց»: Դրա համար էլ, ինչպէս տե-

<sup>1</sup> AE, 192:

<sup>2</sup> Նոյն, 191:

<sup>3</sup> Նոյն, 336:

<sup>4</sup> Նոյն, 224:

սանք, Աղադ-Նիրարի Բ-ի ժամանակ, Arime-ն<sup>1</sup> ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի հարաւ-արեւմտեան շրջաններից զատ եւ դաշտային այս տարածութիւնները, որոնք հնում մտնում էին հնդեւրոպական հայրենիքի հարաւային շրջանակում (տե՛ս քարտես համար 8): Այս շրջանակի որոշ մասերում, Սիտաննիի կործանման ու նահանջի ժամանակներում է որ եկան եւ հաստատուեցին Suti եւ Ahlame կոչուած սեմիտական վաշկատուն ցեղերը եւ տեղի Aram (Arma) անունով կոչուեցին արամէացիներ: Ուստի պիտի ընդունել, որ ոչ թէ արմէններն են իրենց անունը ստացել արամէացիներից, այլ, ընդհակառակը, ինոնց այդ վաշկատուններն էին, որ գալով ու բնակիչները դառնալով արմէնների *Ար կամ Արսա* անունով կոչուած *Արմա* կամ *Արսամ երկրի՝ համարուեցին* ու կոչուեցին արամէացիներ:

Հայկական լեռնաշխարհի այդ հարաւային շրջաններն ու Սիրիայի ու Սիցազետքի հիւսիսային շրջանները սումեր-աքքաղներին ծանօթ էին աւելի *Սուրիիր/Սուրարտու* անունով: Աւելի ուշ ժամանակներում է որ ընդարձակ *Սուրարի* երկիրը, Սիտաննեան մեծ պետութեան շիջումից բաւական ժամանակ յետոյ, սկսել է կծկուել-քաշուել ու պահպանուել լոկ *Աղձնիք-Սասունի* շրջանում *Ծուրրիս* անուան տակ, որը *Ասորետանի* եւ Ուրարտուի արքաների արձանագրութիւններում շարունակեց կոչուել նաև *Արմէ, Ուրմէ (Ուրմէուիշի)* անուանաձեւերով:

Քացի սեպագրական վերոյիշեալ տուեալներից՝ հայկական հին մատենագրութեան մէջ էլ պահպանուած են մի շարք տուեալներ ու ցուցմունքներ, թէ *Արմէ-Ծուրրիս* (որի որոշ շրջանները կոչուել են *Շորանi > Ծոփք* եւ որոշ շրջանները՝ *Alzinini > Աղձնիք*), եղել է արմէն ժողովրդի բնօրրանի հնագոյն ու կարեւորագոյն կենտրոններից մէկը:

Արդեօք *Արգիշտի Ա-ը* պատահականօրէ՞ն է, որ Էրեբունիում բնակեցրել է Խաթէից ու Ծուպանից բերուած 6600 մարտիկներ:

---

<sup>1</sup> Հոմերի ժամանակներին, *արիմները* տարածուած են նաև դէպի արեւմուտք՝ Օրոնտեսի գետաբերանից, Անտիոքից ու *Կիլիկիայի* ծովեցերեայ շրջաններից մինչեւ Փոքր Ասիայի կենտրոնական շրջաններն ու *Ալիս* գետի աւազանը՝ ներառնելով *Արգէոս* լեռը:

Սեզ յայտնի է, թէ Աղձնիքի (Ալգիի) և Ծոփքի (Ծուպանիի) բնիկները յաճախ մտել են խեթական կոչուած դաշնակցութեան մէջ եւ նրանք էլ յաճախ կոչուել են խաթէ մարտիկներ, հետեւաբար «մարտիկներ Խաթէից ու Ծուպանիից» խօսքը վերաբերում է Աղձնիքի ու Ծոփքի բնիկներին: Ուստի, չենք կարծում, թէ Արգիշտին պատահականորէն է բերել այս 6600 մարտիկներին ու տեղատրել իր նոր կառուցած Էրեբունիում:

Արգիշտին Էրեբունիի ռազմական հզօր ամրոցը կառուցել է («Բիայնա երկրի փառքի համար եւ թշնամիներին՝ ի սարսափ») իր երկրի արեւելեան շրջանները պաշտպանելու համար թշնամիների ռանձգութիւնների դէմ եւ միաժամանակ որպէս ռազմական յենակէտ իր կատարելիք յետագայ ծաւալումների համար: Հետեւաբար նա այդտեղ, որպէս կայազօր, պիտի տեղաւորել աւելի հարազատ ու աւելի վստահելի տարրերից բերուած մարտիկներ: Եւ տեսնում ենք, թէ նա այդտեղ տեղաւորել է «Խաթէից» ու Ծոփքից բերուած մարդկանց, որոնց կոչում է մարտիկներ, ոչ թէ գերիներ. հետեւաբար նրանք եղել են ցեղակից արմէն-նախրեաններ:

Նմանապէս կարծում ենք, թէ Տիգրան Մեծը պատահականորէն չէ, որ իր նոր մայրաքաղաք Տիգրանակերտի կառուցման համար ընտրել է Աղձնիքը: Նա իր այս ընտրութեան մէջ պէտք է ունեցած լինի ինչ-որ մի մոլիչ պատճառ եւ մեծ հաւանականութեամբ՝ ազգային աւանդոյթներից բխած թելադրանք: Ի հարկէ նա լրեց Արտաշատը՝ նկատի առնելով, թէ այն մնացել էր իր ընդարձակուած եւ առաւելապէս դէպի արեւմուտք ծաւալուող կայսրութեան արեւելեան (գրեթէ) ծայրամասում: Ուստի նա իր կայսրութեան տարրեր շրջանների հետ վարչական կապերը հեշտացնելու համար պէտք ունեէր մայրաքաղաքը փոխադրել աւելի կենտրոնական շրջաններ եւ յատկապէս իր ժամանակների քաղաքակիրք հելլենիստական շրջաններին աւելի մօս տեղեր: Այսուհանդերձ նա կարող էր Տիգրանակերտի տեղից աւելի յարմար վայր ընտրել եւ ռազմագիտականորէն էլ աւելի ամուր դիրք: Կասկած չկայ, թէ նա Աղձնիքը պիտի ընտրած լինի ազգային զգացումների մդումով, ազգային աւանդութիւնների թելադրանքով, որպէս արմենական սուրբ եւ մայր հող, որպէս հարազատ ու վստահելի միջավայր:

Ուզում ենք այստեղ ուշադրութիւն հրատիրել մի կարեւոր կետի վրայ, որը ընդհանրապէս վլիպել է հայ ժողովոյի հին շրջանի պատմութեան մասնագէտների ուշադրութիւնից: Մեծն Տիգրանի մեծ պետութեան դէպի հարաւ ընդարձակուած տարածութիւնների քարտէսի ուշադիր քննութիւնը ցոյց է տալիս, թէ դրանք գրեթէ համընկնում են Սուրաբոտի և Միտաննիի պետական հին տարածութիւնների հետ: Նոյնը պիտի ասել իր արեւմտեան ծաւալումների մասին, որոնք համընկնում են արմէններով բնակեցուած հին շրջանների հետ, որոնք, մ.թ.ա. II եւ I հազարամեակներին, կոչուել են Հայասա, Պախսուա, Սուխմու, Թեզարամա, Խուա, Անզիտենէ, Ալզի, Ծոփք, Կոմազենէ Եւայլն. կամ՝ այլ խօսքով՝ Բարձր Հայք, Փոքր Հայք, կամ էլ, ինչպէս Խորենացին է նշում, Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք, Չորրորդ Հայք: Ուստի, պէտք է ասել, թէ Տիգրանը եղել է ոչ թէ օտար Երկրների բռնազրակչ, այլ՝ Սուրարի-Միտաննի-արմենական հին աւանդական հողերը իր պետութեան մէջ վերամիառող ազգային մեծ գործիչ:

Այս առթի, համեմատութեան համար, այստեղ բերում ենք Միտաննիի արքայ Սաուշատարի կնիքի (մ.թ.ա. 1450թ.) և Մեծն Տիգրանի թագի բնորոշ մասերի լուսանկարները:

Միտաննիի արքայի կնիքի վրայ տեսնում ենք արեւի թեւաւոր սկաւառակը եւ սրա Երկու կողմերում Երկու արծիւներ, որոնք դիցաբանութեան մէջ խորիրդանշում են արեւի ու կրակի աստուածութիւնը: Մի՞թէ դարձեալ պատահականութիւն է, որ Տիգրանի թագի վրայ նոյնպէս արեւի սկաւառակի Երկու կողմերում դրուած են Երկու արծիւներ, իսկ թագն էլ վերեւից ունի արեւը ներկայացնող ճառագայթներ:

Մեզ յայտնի է, թէ *Ուրֆան* (Եղեսիա՝ յոյների յիշած Orrhoë-ն, սիրիացիների Urhōi-ն), որ գտնուում է Արմե-Շուրբիայի հարաւում, Խառանից մի քիչ վեր, ըստ մի շարք յայտնի գիտնականների, մի ժամանակ եղել է խորբիական մի կարեւոր կենտրոն, թերեւս՝ մայրաքաղաք, եւ հենց Orrhoë (Խորենացու յիշած Ուռիա) անունը ծագել է գուցէ Խորբիա անունից<sup>1</sup>:

---

<sup>1</sup> CHHM, 58-59:



Saušsatar-ի կնիքից եւ Տիգրան II-ի դրամը:

Իսկ Փաւստոս Բուզանդը խորրիների Ուտհայի մասին պահել է հետեւեալ (գրաւոր կամ աւանդական՝ միեւնոյնն է) արժեքաւոր յիշողութիւնը. «(Հայոց) Պապ քազատորը .... պատզամատրներ էր ուղարկում յունաց քազատրի մօս, թէ «Կեսարիայի հետ ուրիշ տասը քաղաքները մերն են եղել, ետ տուր. Ուրիշ քաղաքն էլ մեր մախնիքն են շինել, ուստի եթէ չես ուզում, որ խոռվութիւն ծագի, ետ տուր, հակառակ դէպրում, մեծ պատերազմով կը կռուենք»<sup>1</sup>: Պապ քազատրի այս խօսքերը պատմականօրէն գրաւո՞ր են, թէ աւանդական՝ միեւնոյնն է: Դա նշանակում է, թէ Փ. Բուզանդի ժամանակ դեռ մոռացուած չէր, թէ Ուրիան կառուցողները եղել են արմէնների նախնիները:

Մեզ արդէն յայտնի է, թէ Ուրիան գտնուում էր հենց Սուրաբուի այն մասում, որի վրայ էին տարածուում անցեալում, ինչպէս տեսանք, Արմանի երկրի հարաւ-արեւմտեան շրջանները:

Սուրաբուի այս բուն շրջանի մէջ նտած են եղել Տիգրիսի եւ երկու Խարուրների ակնաղբիւրների աւազանները, որոնք իջնում

<sup>1</sup> Փաւստոս Բուզանդ, Ե, լր: Պէտք չէ մոռանալ թէ հայ ժողովրդի քաղաքութեան մէջ կարեւոր տեղ է գրաւում խորրի տարրը: Այդ մասին դեռ կը խօսենք աւելի ետք:

Են հայկական բարձրաւանդակից: Իսկ սումեր-աքքաղական գրութիւններում (յատկապէս վանկարաններում) *Խարոր* եւ *Խարոր* անունները մերթ ներկայացուում են որպէս հոմանիշ եզրեր<sup>1</sup>:

Քանի որ անցեալում, Արմանիի շրջանում, արմէնների կեանըի հետ կապ են ունեցել *Խարոր* գետն ու անունը, ապա սպասելի էր, որ այս անունը մի ձեւով պահպանուած լիներ արմէնների լեզուում: Ուստի, հաւանական ենք համարում, թէ հայերէնի *աղրիր* բառը պահած լինի *Խարոր* անուան ու գետի ակունքների յիշատակ:

Աճառեանը իր «Արմատական Բառարան»-ում, թերելով Հիլցմանից, գրում է, թէ *աղրիր* բառը գալիս է հնդեւրոպական (Ենթադրեալ) brev<sup>g</sup> ձեւից, եւ համեմատութեան համար թերում է հետեւեալը. «Յունարէն օքեաս «օրհոր, ջրամբար», հոմեր. օքեատա = օքիատա, որ գալիս է յն. օքոյսար նախածելից եւ Ենթադրում է հնդեւ. bhrēv<sup>g</sup>, սեռ. bhrēvntos. մեր բառը գալիս է հնդեւ. ուղղական bhrēv<sup>g</sup>, սեռ. bhrevros ձեւից, որ մեր մէջ դարձել է նախ բրեւր, տարանմանութեամբ բրեւր, տեղափոխութեամբ զրեւր եւ ա յաւելուածով աղրեւր. միջին բրեւր ձեւը ցոյց է տալիս կապադովկեան յն. πλευρό (աղբիր)ը, որ ըստ Karolides փոխառեալ է հայերէնից»:

Այսուհետեւ Աճառեանը աւելացնում է. «Հնդեւրոպական նախածեւի ստորին ձայնադարձից յառաջացել են զոք. brunna, հրգ. brunno, անզաք. burna, գերմ. Brunnen «աղբիր»: Բոլորի պարզական արմատն է հնդեւ. bhereu «եռալ, պղպջալ, խմորիլ»: Այնուհետեւ թերում է այս վերջին արմատի նւրոպական «ժառանգները»:

Ինչպէս պարզ տեսնում ենք, հայ բառի համար հնդեւրոպական նախածեւ («Ենթադրական bhrēv<sup>g</sup>») ստեղծելով՝ ստիպուած են լինում *աղրիր* բառին հասնելու համար անցնել լարիրինտոսային, մանուածապատ («տարանմանութեամբ», «տեղափոխութեամբ», «յաւելուածով») եւ արհեստական ճանապարհ՝ շինծու բhrēv<sup>g</sup> ձեւից *աղրեւր-աղրիր* բառը ստանալու համար:

Մենք հաւանական ենք համարում, թէ աղբիր (Տփղիս՝ *աղրուր*, *ախպուր*, *Պոլիս՝ ախրուր*, *Կարին*, *Համշէն*, *Նոր-Չուղա*, *Սե-*

<sup>1</sup> HS, 92, 93, 98:

բաստիա՝ *ախր’որ*, Ախալցխա, Երեւան, Շամախի՝ *ախսպոր*, Ոռտոսո՝ *ախսիոր*, Ալաշկերտ, Մուշ՝ *յախր’որ* եւ այլն) բառը կապ ունեցած լինի *Խարուր* գետի անուան հետ, որը *Խարախոխութեամբ* դարձել է *ախրուր>աղքեւր* (աղքիր): Եւ անհաւանական չէ, որ երկուսն էլ (*Խարուր* ու *աղքիր*) եկած լինեն մի հնդեւրոպական հին ձեւից:

Միաժամանակ՝ հաւանական ենք համարում նաեւ (աչքի առաջ ունենալով հնդեւրոպական նախալեզուի հայրենիքը Հայկական լեռնաշխարհում ու Փոքր Ասիայի հարեւան շրջաններում գտնուած լինելը), թէ գորերէն brunna, իին բարձր գերմաներէն brunno, անգլիաքատներէն burna, գերմաներէն Brunnen («աղքիր») բառերը եւ նրանց նմանները պահում են *Եփրաստ* գետի սուրարիական հնագոյն (սումերերէնում պահուած) Buranun<sup>1</sup> անուան յիշատակը: Սրա հետ երեւի պիտի կապել նաեւ յունարէն գրեած («օրիոր, ջրամբար»), հոմեր գրեած = գրիտա ձեւերը, որոնք ուղղակի յիշեցնում են միջագետքեան-աքքադական-սեպագրական purattu<sup>2</sup> > Ֆուրատ-Եփրաստ ձեւը:

Այս բոլորը, ինչպէս կը տեսնենք վերջին գլխում, կարելի է մի այլ ցուցմունք համարել հնդեւրոպական նախալեզուի հայրենիքի տեղադրման ու սուրարիների էլ հնդեւրոպականների հետ ունեցած կապի համար:

Եթէ մեր այս զննումները ճիշդ են, ապա պիտի ընդունել, թէ նախահայերէնը կրող հայկական ցեղերը (հայ լեզուի մէջ *աղքուր-աղքիր* բառի գոյացման ժամանակներին) տարածուած էին Հայկական լեռնաշխարհից նաեւ հարաւ՝ *Խարուր* գետի ակնաղքիրների շրջանները: Այս շրջաններով է որ նրանք շփման մէջ են գտնուել սումեր-աքքադների հետ: Եւ, ինչպէս նշել եմ, հենց այս շրջանները Աղադ-Նիրարի Բ-ի կողմից կոչուել են նաեւ *Հարք* (Harki), ինչպէս Վանայ լճից վեր գտնուող շրջանն է կոչուել Հարք: Իսկ իրենց լեզուում որպէս «աղքիր» brunna, brunno, Brunnen (=Buranun) եւ գրիտա (=Ֆուրադ-Եփրաստ) անուանաձեւերն ունեցող եւրոպական ժողովուրդները պիտի ապրած լինեն Փոքր Ասի-

<sup>1</sup> Sumerians, 40, HS, 99:

<sup>2</sup> Sumerians, 21:

այի՝ Հայկական լեռնաշխարհին հարեւան շրջաններում (Եփրատով սկսած՝ դէպի արեւմուտք):

Ուստի անսպասելի չէ, որ Նարամ-Սինի օրերին, Արմանին տարածուած լինի նաև Սուրարտուի (նշուած) բուն շրջանները, եւ ուր հիմնուած լինի Արմանի անունով քաղաք-կենտրոն: Արմանի երկրի այս հարաւային շրջանները, ինչպէս տեսանք, աւելի ուշ ժամանակներին Աղադ-Նիրարի II-ը կոչել է Arime «արերի երկիր»: Հետեւարար, կարելի է ընդունել, թէ Արմանի երկրանունը մեզ յայտնի կանխագոյն ձեւն ու յիշատակութիւնն էր արմէն ժողովրդի ու նրա երկրի Արիմէ, Արմէ, Ուրմէ (Ուրմէուխի), Արմինա, Արմենի կամ Արմէն անուան: Վերջերս, մեր նոր որոնումների եւ հետազօտութիւնների ընթացքում, հանդիպել ենք սուրարիների հետ Արմանիի ունեցած կապը հաստատող շօշափելի ու կարեւոր տուեալների, որոնք ուզում ենք ներկայացնել այստեղ: Այդ նոր տուեալներն ու մեր համապատասխան դիտումները ներկայացնելուց առաջ՝ անհրաժեշտ ենք համարում նախապէս թերել Սուրարի անուան մեր ստուգաբանութիւնը:

## 5. ՍՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Սուրարի անուան աքքաղական ձեւերն էին Š/Subari, Š/Subaru, Š/Subartu (նախահունչ շովի կամ ս-ով): Այս անուան սումերական բուն ձեւն էր Subir, որին պիտի ընդունել որպէս անուան իսկական ձեւը:

Ըստ մեր վերջին հետազօտութիւնների, *Սու-քիր* անուան քիր բաղադրիչը նշանակում է «ցեղ, ժողովուրդ», միաժամանակ եւ «տուն, քաղաք, երկիր»: Որովհետեւ, հին անցեալում, ցեղն ու նրա երկիրը ընդհանրապէս նշուում էին նոյն եզրով, ճիշդ այնպէս ինչպէս Հայր եւ Վիրք նշանակում էին թէ «հայեր, վրացիներ» եւ թէ «հայերի երկիր (Հայաստան) եւ վրացիների երկիր (Վրաստան)»:

Համեմատել Կաղմեայ տանէմ<sup>1</sup> («Կաղմոսի տնից» կամ «Կաղմոսի տոհմից») ... ազգի տաճա Թորգումա<sup>2</sup> եւն.: Նոյնպէս, թիր բառի իմաստն ունէր սեմական թիր բառը, որը նշանակում էր թէ «տուն» եւ թէ «տոհմ, ցեղ» (հնմտ. Թիր-Զամանի<sup>3</sup>, Թիր-Ազուսի<sup>4</sup> եւն.), ինչպէս արաք. թէյթ («տուն, տոհմ») բառը:

Արդէն ժամանակին ակադեմիկոս Գ. Ղափանցեանը մեծ խորաթափանցութեամբ ցոյց էր տուել, թէ այս թիր (տարբերակ՝ թէյթ) բառը նշանակում է «ցեղ»: Նա գրել է. «Թիգլաթ-Պալասար Ա-ի արձանագրութիւնները նախրեան երկրների մէջ յիշատակում են Շinibirani, որը մեր կարծիքով նշանակում է «շին ցեղեր», իսկ Շամշի-Աղադ Դ-ի կողմից յիշատակում է նախրեան Ginizibir երկիրը, որը անշուշտ նշանակել է «Գինզի ցեղ»: Համեմատել այդ Etiuni Ibirani, Sinibirani. Ginzibir եւ նման կազմութիւններին հին հայոց նման տեղանունները, ինչպէս՝ Sniրութերան (Sniրութերան), Առբերանի կամ Առբերան, որոնք տառացի նշանակել են «Swip ցեղեր» (=Հայկական Swipnus) եւ «սու-ցեղեր»»<sup>5</sup>:

Ինչպէս պարզ երեւում է, Ղափանցեանը նոյնպէս գտնում էր, թէ Ginzi-bir ու Sini-bir-an անունների bir եւ Sniրութեր-ան ու Առբեր-անի անունների թէր բաղադրիչները նշանակում են «ցեղ»<sup>6</sup>:

Որով՝ Սու-թիր նշանակում էր «սու ցեղ» կամ «սու ցեղի երկիր»:

Նախրեան Գինզի-թիր, Շինի-թիր-նի, Sniրութեր-ան, Առ-թերանի անունները ցոյց են տալիս, թէ այս թիր (>թէր) բառը պատկանում է նախրեան ցեղերին: Միաժամանակ յայտնի է դառնում նաև նախրեան ժողովրդի կապը Սու-թիր («սու ցեղ») անունը կրած սութարիների հետ<sup>7</sup>:

<sup>1</sup> Խորենացի, Ա-ԺԴ:

<sup>2</sup> Նոյն, Ա-Ժ:

<sup>3</sup> ՀԱ, 65 (ՀՊ, 70):

<sup>4</sup> ՀԺՊ, 315:

<sup>5</sup> Գ. Ղափանցեան, ՈՒՊ, 78-79:

<sup>6</sup> Այս անունների -ան (կամ -ni), -ան (<-անի) վերջաւորութիւնները յոգնակի մասնիկ են, եւ մերք՝ տոպոնիմական վերջածանց:

<sup>7</sup> Աքքադների Սարգոնի մի խոստովանութեամբ յայտնի է դարձել, թէ Աքքադը չի եղել իր ծննդավայր-հայրենիքը, որով նա չի եղել աքքադական գահի օրինա-

*Բիր* բառը անցել է ասուրաբարելացիներին եւ ստացել է երեւ «ամրոց» նշանակութիւնը, որ, իր հերքին, փոխանցուել է հայերէնին *բերդ* ձեւով: Սումերերէնում կայ նաեւ bar, որը նշանակում է «քնակարան, ընտանիք»: Արդէն սումերները Subir-ը նշել են նաեւ Subar<sup>1</sup> ձեւով (որից՝ արքաղական Subari, Subaru կամ Subartu): Սանսկրիտ vara նշանակում է «երկիր», քրդերէն var՝ «կացարան», խեթերէն bir՝ «սուն»<sup>2</sup>, պարսկերէն ber՝ «երկիր»: Հայերէնում կայ վայր «տաշտ, տեղ», որից՝ վիր-ագ (վիրագ) «քաց դաշտում ազանող» (հայ քարքաններում՝ Բուլանըխ, Մուշ՝ վերք (յոգնակի ձեւով), Ակն, Ասլանք, Կարին, Նոր-Նախիջենան, Պոլիս, Ոռտոսքո՛ վար, Խարբերդ, Տիգրանակերտ, Զեյքուն՝ վար, Ագուխ, Գորիս, Երեւան, Համշէն, Շամախի, Ջուղա, Տփոլիս՝ վեր<sup>3</sup>:

Հայերէնը պահել է նաեւ վրան («փայտ սիսնով, կոշտ կտակ բնակարան») բառը, որը հաւանաբար զալիս է ուրարտական արձանագրութիւնների յիշած ibirani ձեւից, որ պիտի ունեցած լինի «տներ» կամ «ցեղեր» իմաստը (թէեւ Մ. Ծերեթելին եւ նրան հետեւելով Մելիքիշվիլին այս բառին կասկածանքով [ու սիսալմամք]

որ ժառանգորդը, այլ՝ յափշտակիչը: Նա իր արձանագրութեան մէջ իր մասին ուղղակի գրել է. «Իմ մայրս խեղճ (նուաստ) էր. ես չեմ ճանաչել հօրս. իմ հօրեղբայրս լեռների բնակիչ էր. իմ քաղաքս Azupirani-ն էր, որ գտնուում էր Եփրատ գետի ափին» (այս արձանագրութեան մասին տես Seton Lloyd, TR, 31): Ազուրիր-անի քաղաքանուան -անի վերջավորութիւնը քացայայտօրէն սուրարինահրեան է. իսկ բիր («ցեղ») քաղաղրիչը ցոյց է տալիս, թէ այս քաղաքը պատկանում էր մի նահրեան ազու (զուցէ-սու) կոչուած ցեղին: Նահրիում կար Ազու լեռը, որին յիշում է Թիգլաք-Պալասար Ա-ը, Հարիա-Խարիսի Երկրի դէմ կատարած իր մի արշաւի մասին բողած արձանագրութեան մէջ (տես ARAB, 78-79): Արդէն Ազու-բիր-անի անուան կազմութիւնը ցոյց է տալիս, թէ այս պատկանում էր սուրարիական-նահրեան Շինի-բիր-նի, Առ-բեր-անի, Գինզի-բիր ու Մու-բիր շրջանակին: Են քանի որ լեռների բնակիչ էր իր հօրեղբայրը, որի (Երեւի) խնամքի տակ էր մեծացել ինքը (որովհետեւ չի ճանաչում հօրը), ապա այդ քաղաքը պիտի գտնուած լինի Եփրատի այն շրջանում, որը սա (գետը) անցնում է սուրարիական լեռների (Կաշիարիի եւ Հայկական Տարոսի արեւմտեան թեւերի) միջով: Յամենայն դէսու, մի քան պարզ է, թէ Սարգսնի այս ծննդավայր քաղաքը սուրարիական-նահրեան էր:

<sup>1</sup> HS, 14:

<sup>2</sup> ՊՀ, 1981, I, տես Գարակէօզեանի յօդուածը:

<sup>3</sup> Հ. Աճառեան, ՀԱԲ, տես վայր:

տուել են «ամբողջութեամբ»<sup>1</sup> իմաստը): Յայտնի է, թէ որարտական (Ել որոշ իին լեզուների) բառավագքի ու երկու ձայնատրների միջեւ զոհուած ե-ն մեարոպեան հայերէնում տալիս է վ (հմմտ. Biaina > Վան, Erebuni > Երեւան). իսկ -ani > -ան անցումի համար համեմատել որարտական ևանի > աւա՛՛: Որով հաւանական ենք համարում ibir-ani (ibirani) > վր-ան (վրան) անցումը: Հայերէնում ibir-ani բառաձեւի վիր (< bir) արմատի ի-ն սղուել է՝ -ան (-ani) վերջածանցի կցումով: Այդ բանը պատահել է նաև Su-bir > Su-br-ia (Subria) անցման դէպքում՝ տեղանուանական (տոպոնիմական) -ia վերջածանցի կցումով: Ուստի պիտի ընդունել, թէ Սուրիր նշանակում է «սու ցեղ» կամ «սու ցեղի երկիր»<sup>2</sup>:

Սումեր-աքքադական Ur III եւ այլ արձանագրութիւններում Su-bir (կամ Su-bur) եզրի տեղ յաճախ երեւում է SU.A բառագիրը (logogram-ը): Այս երեւոյքը քննարկող գիտնականները ընդունում են SU.A=SU-BIR (Su-bir) հաւասարութիւնը, բայց նրանց համար պարզ չի եղել, թէ ինչու bir-ի տեղ բերուել է A: Հիմա որ արդէն մեզ յայտնի է, թէ bir նշանակում է «ցեղ», ապա A-ն էլ պէտք է, այս դէպքում, ունեցած լինի համազօր նշանակութիւն: Deimel-ի բառարանում սումեր a = Ա = աքքադ. BANÛ, գերմ. erzeugem, =աքքադ RIHÛTU, գերմ. Erzeugung, = աքքադ APLU, գերմ. Sohn, =աքքադ MÂRU, գերմ. Sohn, Kind: Որով հասկանալի է, թէ ինչու SU.BIR («սու ցեղ» կամ «սու ցեղից») եզրի տեղ բերուել է SU.A («սու-ի սերունդ» կամ «սու-որդի»):

Հետեւարար պիտի հաստատ համարել, թէ սուրարիների բուն ցեղանունը սու էր (հնչինային տարբերակ՝ շու):

Եւ ահա յայտնի արեւելագէտ-սումերագէտ Ignace J. Gelb-ը իր «HURRIANS AND SUBARIANS» գրքում բազմաթիւ օրինակ-ներով ցոյց է տուել, թէ սումեր-աքքադական իին արձանագրութիւններում սուրարիները շատ յաճախ կոչուած են Su եւ նրանց երկիրը՝ յաճախ Su<sup>KI</sup> եւ յաճախ Subir<sup>KI</sup>: Նա գրում է. «Certain com-

<sup>1</sup> YKH, տե՛ս ibirani:

<sup>2</sup> Անցեալում, մեր որոնումների սկզբնական շրջանում, Սուրիր-Սուրարի անուան մեր հասկացութիւնը ներկայ այս մեկնութեամբ ճշդուած-վերանայուած ենք համարում:

mon nouns and divine names are distinguished by a notation SU, SU<sup>KI</sup>, SU.BIR<sup>KI</sup>, or ina Su-ba-ri. In those texts all these expressions can have but one meaning. «in Subartu», or «in the land of Subarians»<sup>1</sup> (Որոշ հասարակ անուններ եւ դիցանուններ զատորշուած են SU, SU<sup>KI</sup>, SU.BIR<sup>KI</sup>, կամ ina Su-ba-ri նշումով: Այդ բոլոր տեքստերում այս արտայայտութիւնները կարող են ունենալ միայն «Սուրատուի մէջ» կամ «սուրարիների երկրում» իմաստը»):

Gelb-ը ուղղակի գրում է. «It is obvious that the notations SU<sup>KI</sup>, SU.BIR<sup>KI</sup> and ina Su-ba-ri are synonymous»<sup>2</sup> (Յայտնի է թէ SU<sup>KI</sup>, SU.BIR<sup>KI</sup> եւ ina Su-ba-ri նմուշները համանիշ են): Սա արդէն կոնկրետ եւ ուղղակի վկայութիւն ու փաստ է, թէ սուրարի ժողովուրդը կոչուում էր սու, մի բան, որ հաստատում է Սու-քիր բառի մեր ստուգարանութեան ճշդութիւնը:

Ոմանք դեռ չիմանալով կամ անտեսելով Սու-քիր անուան «սու ցեղ» կամ «սու ցեղի երկիր» իմաստը՝ կարծել են, թէ Su-ն Su-bir անուան կրճատ ձեւն է: Սու-քիր անուան մէջ սու ցեղանուան նատած լինելը ժխտում է այդ կարծիքը եւ հաստատում, թէ յիրական այդ ժողովուրդը կոչուում էր սու: Մրա համար փաստ է պարունակում նաև բուն սուրարիական մայր հող հանդիսացող Խանիգալքատ երկիր Շու<sup>3</sup> քաղաքի անունը (որի մէջ նոյնպէս նատած է Su կամ Շու ցեղանունը) եւ մի սուրարի մարդու Շու-Շու-սկ<sup>4</sup> անունը (որի մէջ Շու-ն կրկնուած է հանդէս գալիս, ինչպէս Խոռիխոռունի եւ նման անունների մէջ արմատական քաղաքիների կրկնուած լինելը): Շու-րա անուան -րա վերջատրութիւնը համեմատել Bidara, Šabarra, Sirara տեղանունների<sup>5</sup> եւ Sattuara, Artassumara ու Ewari-kira անձնանունների<sup>6</sup> հետ: Շու-սկ անձնանուան հետ էլ համեմատել Ու-

<sup>1</sup> HS, 25:

<sup>2</sup> Նոյն, 16: SU.BIR գրութիւնը սումերերէնում վանկանիշներ են, իսկ աքքաղերէնում՝ բառագիր. տե՛ս HS, 23:

<sup>3</sup> ARAB, 119-121: Այստեղ Ադադ-Նիրարի Բ-ի արձանագրութեան մէջ գրուած է. «...Քնակիշներին Շուրա քաղաքի, որ գտնուում է Խանիգալքատ երկրում, նա տարաւ ...». տե՛ս եւ ԱՀԾՈՒ, 375:

<sup>4</sup> HS, 104:

<sup>5</sup> Նոյն. տե՛ս Bidara էջ 106, Sabarra՝ էջ 21, Sirara՝ էջ 36:

<sup>6</sup> Նոյն. տե՛ս Šattuara եւ Artassumara՝ էջ 76, Ewari-kira՝ էջ 52:

բուատրիի Su-Su-uk<sup>1</sup> քաղաքի, մի սուրարի մարդու Da-šu-uk եւ մի նուզիցիի Ha-šu-uk<sup>2</sup> անունները եւ -uk վերջաւորութիւն ունեցող նուզիական Kaltuk, Kizzuk, Naharuk, Nizuk անձնանունները<sup>3</sup>:

Ոմանք ասում են, թէ Su<sup>KI</sup> (=Subartu) եզրով յետազայում յաճախս նշուել է Ասորեստանը, եւ առ են կոչուել այնպիսի մարդիկ, որոնք կրել են նաև ոչ-սուրարի անուններ: Այս երեւոյթը տարօրինակ չէ: Սուրարիները սեմիտների ի յայտ գալուց առաջ տարածուած են եղել նաև ամբողջ Ասորեստանի վրայ, եւ իրենց Սուրարի երկրի մէջ այդ ժամանակ մտած է եղել ամբողջ Ասորեստանը: Բնականաբար, յետազայում, մ.թ.ա. III հազարամեակի կէսերից յետոյ, Աշշուր քաղաքի հզօրացումով, Ասորեստան կոչուած (դարձած) երկիրը, որպէս աւանդոյթ, կարող էր աւելի ուշ շրջանների գրութիւններում յաճախս նշուել Սուրարուու եզրով:

Ի հարկէ, միաժամանակ պիտի տարօրինակ չհամարել, եթէ սուրարիներից ոմանք կրած լինեն սուրարիական չհամարուող անուններ: Անհնար չէ եւ այն որ առ անուան տակ յիշուած եւ սուրարիական չհամարուող անուններից ոմանք իրականում ծագումով սուրարի եղած լինեն: Հետեւարար, նրանք, որոնք որոշակիորեն կոչուել են «սու մարդիկ», եղել են իսկապէս սուրարիներ: «Ունգնադը տրամաբանել է, թէ քանի որ ասսուրական ուշ շրջանի վանկարաններում SU<sup>(KI)</sup> եզրը (տերմինը) բերուում է SU.BIR<sup>KI</sup>-ի տեղ, ապա այդպէս էլ UR III շրջանի սալիկներում այդպէս կոչուած անձերին պիտի համարել սուրարիներ»<sup>4</sup>:

## 6. ԱՐՄԱՆԻ ԵՒ ՆՐԱ ԹԱԳԱԿՈՐԻ ԱՆՈՒՆԸ

Եւ ահա I. Gelb-ը բերում է մեր նիւթի համար շատ կարեւոր սեպազրական մի հին վկայութիւն. նա իր վերոյիշեալ գրքի

<sup>1</sup> Նոյն. տես Šu-šu-uk՝ էջ 101, Su-su-ku՝ էջ 104:

<sup>2</sup> Նոյն. տես Da-šu-uk եւ Ha-šu-uk՝ էջ 101:

<sup>3</sup> Նոյն. տես Kaltuk, Kizzuk, Naharuk եւ Nizuk՝ էջ 101:

<sup>4</sup> Նոյն, 18:

«SUBARIAN PERSONAL NAMES OF THE UR III PERIOD AND OF THE FIRST DYNASTY OF BABYLON» (Ուր III-ի Բաբելոնի առաջին հարստութեան ժամանակաշրջանի անձնանուններ) գլխի տակ բերում է Ur III (Ուր III հարստութեան) շրջանին վերաբերող սուրարի մարդկանց անուններ, որոնց մեջ յիշուում է նաև Madatina (Madakina) անձնանունը, որով կոչուած էր նաև Արմանիի թագաւորը Նարամ-Սինի ժամանակ: Ահա Գելքի բերած անունները. «... Animals offered by Ki-ma-ni, Si-ni-ni, Ku-zu-zu, the messenger of Ba-ar-ba-ra-gi, Ad-da-bu-ni, the messenger of Še-eb-ba, Še-bi, the messenger of Ra-ši, Ma-da-ti-na, and Bu-ul-ba-at and presumably by another man whose name is omitted, followed by the term lú SU-me. ...lú SU-me means «they are (or ‘who are’) SU» and evidently defines the preceding group as SU people»<sup>1</sup> («... Կենդանիներ նոյիրաբերել են Kimani-ն, Sinini-ն, Kuzuzu-ն՝ պատզամատրը Bardaragi-ի, Adabuni-ն՝ պատզամատրը Šeba-ի, Šebi-ն՝ պատզամատրը Raši-ի, Madatina-ն եւ Bulbat-ը (եւ հաւանարար մի մարդ, որի անունը բաց է բողնուած), որոնց հետեւում է հի SU-me եզրը: ... հի SU-me եզրը նշանակում է «նրանք (կամ՝ որոնք) SU են» եւ որոշակիորեն ցոյց է տալիս նախորդող խմբի սու մարդիկ լինելը»):

Սա բացայացն ու համոզիչ վկայութիւն է, թէ այստեղ յիշուած Մադատինան սու (=սուրարի) էր:

Գելքը, քննարկելով այս արձանագրութեան մեջ նշուած սուրարիական անձնանունները առանձին-առանձին՝ Մադատինայի մասին գրում է հետեւեալը. «... Բողազքեօյում գտնուած մի խեթական պատմուածքում, ուր նկարագրուում է 17 թագաւորների մի զինակցութեան դէմ Նարամ-Սինի մղած մի պատերազմը, յիշուել է ինչ-որ մի Ma-da-di!-na՝ Արմանիի թագաւորը: Բոլոր զիտնականները, որ աշխատել են այս տեքստի վրայ, այս անունը որպէս Ma-da-ki-na են կարդացել, հակառակ այն իրողութեան, թէ H. Figulla-ի ընդօրինակութիւնը բելադրում է փոխարէնը այն կարդալ Ma-da-di-na»<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Նոյն, 100-101:

<sup>2</sup> Նոյն, 103:

Գելքը, իր գրքի նշուած գլխի վերջում բերած RÉSUMÉ-ի տակ, ամփոփում է իր քննարկած սուրարիհական 29 անունները, որոնց շարքում նորից գտնում ենք Madatina (Madadina) անունը:

Մենք, այստեղ, Արմանիի ազգային պատկանելիութեան մասին հետազօսութիւններ անել ցանկացող գիտնականների յատուկ ուշադրութիւնն ենք հրահրում այս շատ կարեւոր տուեալի ու փաստի վրայ, թէ Նարամ-Սինի ժամանակ Արմանիի քազաւորը՝ Մաղատինան (Մաղակինան) կրել է սուրարիհական անուն, թէ նա եղել է «սուրարի մարդ», որով պատկանել է սուրարի (ոչ սեմական) ժողովրդին:

Մաղատինայի սուրարիհական լինելը վկայող արձանագրութիւնից զատ կայ եւ այն, թէ հենց Մաղատինա (Մաղակինա) անունը, իր ռան վերջաւորութեամբ, նոյնպէս սեմական չէ եւ պատկանում է նման վերջաւորութիւն ունեցող սուրարի-միտաննի-նահրեան անունների շարքին. համեմատել հետեւեալ անձնանունները. - *Շուրբարնա* (արքայ Միտաննիի), *Էրիմենա* (արքայ Ուրարտուի), *Ռոզանա* (արքայ Մուսասիրի), *Հովկանա* (արքայ Հայասյի), *Դատանա* (արքայ Խուպուշկիայի)<sup>1</sup>, *Թիլուսինա* (արքայ Անդիայի), *Սունա* (ուրարտական կուսակալ)<sup>2</sup>: Այս (*Սու-նա*) անունը շատ հետաքրքրական է նաև իր *սու* (=սուրարի) արմատով:

Այստեղ կը բերեմ մի շատ կարեւոր ու բացայայտ ցուցմունք, որ Arma(-ni) երկրի ժողովուրդը (արմէնները) եղել են սու (=սուրարի): Մեզ յայտնի է, թէ Սարգոն Բ-ը Վանայ լճից հիւսիս-արեւելք ընկած տարածութիւնը (Արճեշի շրջանը) կոչել է Armarili (Armarili), իսկ Արգիշտի Բ-ը, հենց այս Արճեշի շրջանում քողած իր մի արձանագրութեան մէջ, այս նոյն շրջանը կոչում է Շurili (Շu-rili): Այսինքն՝ օտար Սարգոնի կողմից նշուած Arma-rili եզրը հենց, տեղացի Արգիշտիի նշած, համանիշ Շu-rili անունն է: Այստեղ շատ պարզ երեւում է, թէ այս երկու եզրերի -rili բաղադրիչը ածանց է, երեւի՝ քարդ ածանց (-ri-li). -ri- միջնածանցը յիշեցնում է Կաշիա-րի, Նամ-րի, Խուր-րի, Կիրրու-րի, Մեխ-րի եւն. անունների

<sup>1</sup> ՀԺՊ, 289:

<sup>2</sup> HA, Թիլուսինայի համար տես էջ 97 (ՀՊ, 101), Սունայի համար՝ էջ 217 (ՀՊ, 219):

-րի վերջաւորութիւնը, որ հաւանաբար ունի «-եան» իմաստը, իսկ -լի վերջաւորութիւնը արդէն յայտնի յոգնակի մասնիկ է: Համեմատել՝ Բիայնի-լի, Արգիշտիխնի-լի, Դարանա-դի, Մանանա-դի եւն ձեւերի հետ: Որով, միանգամայն պարզ երեւում է, թէ այդ երկու եզրերի հիմքում եղած Arma (=Արմա-նի) եւ Su (=սուրարի) անունները համազօր ու նոյնական (նոյն ժողովրդին նշող) եզրեր են: Սա կարեւոր ու բացայատ փաստ է, թէ արմէնները կոչուած են նաև սուրարի, կամ՝ Սուրարտուն կոչուել են նաև Արմանի:

Սահա մի կարեւոր ու կոնկրետ վկայութիւն եւս այս իրողութեան համար, վերեւում, 4-րդ բաժնում, «ԱՐԻՍԼ (ԱՐՍԱՆԻ) ԵՒ ՍՈՒՐԱՐՏՈՒ» վերնագրի տակ, նշել էի Թիգլաք-Պալասար Ա-ի հետեւեալ խօսքերը. «Ես (դէպի) սիրտը (մէջը) ախլամի Արմա-ցի-ների քայլեցի՝ Su-ի երկրից մինչեւ Կարքեմիշ քաղաքը Խարէ երկրի՝ մէկ օրում ասպատակեցի»: Ինչպէս պարզ երեւում է, Թիգլաք-Պալասարը Arma երկրի շրջանը կոչում է Su-ի (= «սու-եան»), այսինքն՝ «սուրարիական» երկիր. սա նոյնպէս ուղղակի ու բացայատ վկայութիւն ու փաստ է, թէ Arma երկիրը (Արմանին) եղել է սուրարիական:

Ուրեմն, Նարամ-Սինի յիշած Arman(սմ)-ի (Արմանի-ի) Սուրարտու երկրում գտնուած լինելը պիտի միանգամայն լինի հասկանալի: Ուստի, պատահական չէ, որ յետազայում Շubria-ի շրջանը կոչուում էր նաև Arme:

Այս աշխատութեան սկզբում ցոյց տուեցի, թէ Նարամ-Սինի աքքաղական արձանագրութեան մէջ նշուած Arman(սմ) տեղանունը զալիս է (աքքաղական ածանցուած Armani+սմ ձեւում i-ի կորուստով) Armani ձեւից, որը անփոփի երեւում է Նարամ-Սինի մասին խօսող խեթական յայտնի արձանագրութեան մէջ:

Իսկ Արմանի (Արմա-նի) անունը, հենց իր -նի վերջաւորութեամբ, նոյնպէս սեմական չէ, այլ պատկանում է սուրարի-նախ-թեան (նման վերջաւորութիւն ունեցող) անունների խմբին, ինչպէս օրինակ՝ Միտաննի, Ծուպանի, Դայաէնի, Ամադանի, Ալգինի (Ալգինինի), Նիխանի եւայլն: Այս -նի (եւ -նա) վերջաւորութիւնը յոգնակի մասնիկ է, որ ունի նաև տեղանուանական (տոպոնիմական) վերջածանցի արժեք, ինչպէս ք մասնիկը հայերէնում:

Յետագայում, այս -նի վերջաւորութիւնը, շատ դէպքերում, փոխարինուել է յոգնակի եւ *տոպոնիմական ք'* մասնիկով (հմնտ. Ծուպանի > Ծոփք, Դայաէնի > Տայք եւն):

Հայերէնը ունի այս -նի յոգնակին: Ակադ. Արարատ Ղարիբէանը այս մասին գրում է. «Բաւական տարածուած է (իայ բարբառներում) *ամ* յոգնակին. օրինակ՝ *իշան*, *ձիան* (Բայազէդի ենթաբարբառում), *տեղան* > անկողիններ (Սեբաստիայի բարբառում): ... ունենք *ամի* յոգնակին, օրինակ՝ *ուրիշանի* > ուրիշներ (Զուղայի բարբառում), *էնի* յոգնակին գտնում ենք Շամշադինի եւ Ղարաբաղի շրջանում, օրինակ՝ *կատուէնի* > կատուներ: ... ներ յոգնակին կարելի է գտնել համարեայ բոլոր բառարաններում. դա բաղադրեալ յոգնակի է, կազմուած է և եւ եր յոգնակիացոյց մասնիկներից: Նի վերջաւորութիւնը նշանակում է յոգնակի *Պոլսի* բարբառում (*զոքերնիս* > մեր զոքերը): Նոյն յոգնակին նէ ձեւով գտնում ենք նաև Ղարաբաղի բարբառում, օրինակ՝ *ճրղղցնէ* > զաղացներ»<sup>2</sup>:

Ծուպանի > Ծոփք, *Ազինինի* > *Աղձնիք* եւ նման (*նի* > *ք*) փոխանցումները ցոյց են տալիս, թէ նախապէս դրել ենք *նի*, յետոյ՝ *ք*: Այդ բանը կարելի է տեսնել բաղադրեալ յոգնակիններում, օրինակ՝ *ոն+ք* (մեր-ոնք), *ուն+ք* (զաւակ-ունք, մաս-ունք), *ին+ք* (լեռ-ինք), *ան+ք* (տեղ-անք) եւն, ուր նախ եղել են *ոն*, *ուն*, *ին*, *ան* յոգնակինները, իսկ յետոյ, նրանց յոգնակի արժեքի կորուստով կամ մարումով, աւելացուել է երկրորդ (*ք*) յոգնակին, ինչպէս պատահել է *ք+եր* դէպքում (ձեռ > ձեռք > ձեռքեր, ոտ > ոտք > ոտքեր եւն): Հետեւաբար, *Արմանի* անուան -նի վերջաւորութիւնը նոյնապէս թելադրում է ընդունել, թէ այն պատկանում է սուբարի-նախրեան խմբին:

<sup>1</sup>Ես հաւանական եմ համարում, որ հայերէնի վերջողիր *ք* յոգնակերտ մասնիկը եկած լինի սումեր-աքքադական սեպագրութեան մէջ տեղանունների վերջում դրուող եւ «վայր» նշանակող ԿI որոշիչից. օրինակ՝ եթէ Parsua (Parsuaš, Baršua) կապ ունի Ֆարս (Պարսկաստան) անուան հետ, ապա լաւ օրինակ է Parsua<sup>KI=Պարս</sup> հաւասարութիւնը, ուր *ք*-ն համապատասխանում է ԿI-ի, որը ունենալով տոպոնիմական արժեք, որպէս հաւաքանութեան նշան, ստացել է, *ք*-ի մէջ, նաև յոգնակի իմաստ:

<sup>2</sup> Արարատ Ղարիբեան, ՀԲ, 137:

Մերձաւոր Արեւելքում կար ամպրոպի մի աստուած, որին սեմական ժողովուրդները կոչում էին *Աղադ*, իսկ սուբարի-խուրրինահրեան ժողովուրդները՝ *Թեշուր*: Այս աստուածութիւնը սեպագրութեան մեջ յաճախ ներկայացնուում է ԻՄ զաղափարագրով, որին կարելի է կարդալ Աղադ կամ Թեշուր՝ նայած բնագրի բովանդակութեան: Ինչպէս տեսանք վերեւում, ըստ Նարամ-Սինի յայտնի աքքադական արձանագրութեան, Նարամ-Սինի՝ Արմանիի դեմ կատարած մի այլ արշաւանքի ժամանակ Արմանիի թագաւորն է եղել *Ոհշ-Թեշուր*: Նախապէս այս անուան սեպագրութիւնը վերծանողները, նկատի առնելով տեքստի աքքադական լինելը, եւ Արմանին էլ համարելով սեմական, այս անուան երկրորդ բաղադրիչ ԻՄ զաղափարագիրը կարդացել են սեմական-աքքադական ձեւով *Աղադ*՝ փոխանակ կարդալու *Թեշուր*: Մեր նախորդ աշխատութիւնների մեջ այս աքքայի անունը բերել ենք *Ոեղ-Թեշուր* ձեւով: Ի. Գելքն էլ ցոյց է տալիս, թէ այս թագաւորի անուան առաջին բաղադրիչը պէտք է կարդալ *Riš* (*Rí-iš*) եւ ոչ թէ *Ríd* (*Rí-id*)<sup>1</sup>: Հետեւաբար, այս թագաւորը կոչուում էր *Ոհշ-Թեշուր*<sup>2</sup>:

<sup>1</sup> HS, 103: Սեւանի մօս՝ Ռուսա Գ-ի յիշած *Risua(-ini)* երկրի անունը սեմական չէ: Որով՝ *Riš*-Տեշս աքքայանուան (գրեթէ համահնչին) *Riš* բաղադրիչը դժուար թէ ծագումով լինի սեմական. յամենայնդէպս *Riš*-Տեշս բաղադրեալ անունը չէր կարող մի սեմական մարդու անունն եղած լինի: Հմմտ. Էրլայի *Igris-Heba* աքքայի անունը (Խեթա բաղադրիչով), որին նոյնակ պէտք չէ համարել մի սեմական անուն:

<sup>2</sup> Գիտութեան մեջ ընդհանրացած էր այն տեսակէտը, թէ խուրրիները Սիջագեսոր ու *Հայլկական* լեռնաշխարհ եկան II հազարամեակի սկզբին (մ.թ.ա.): Վերջին տարիներին Էրլայի արձանագրութիւններում յայտնաբերուել են խուրրիական աստուածների անուններ (տես AE, 251, EBLA, 165): Սա ցոյց է տալիս, թէ խուրրիները կամ արդեն գոյութիւն ունեին Սիջակայքում՝ Էրլայի արձանագրութիւնների ժամանակներին (մ.թ.ա III հազարամեակի կէսին) եւ անզան որոշ ժամանակ էլ աւելի առաջ, կամ էլ, գալով յետոյ, որդեգրեցին-խրացրին տեղական որոշ աստուածներ: Օրինակ՝ Էրլայի արձանագրութիւններում կայ Շամազան դիցանունը, որը յիշեցնում է խուրրի համարուող (արեւի աստուած) Շիմիգէ-ին, միաժամանակ յիշեցնում է Շամաշ-ին: (Շամազանի համար տես AE, 254): Այս մասին մանրամասնօրէն կը խօսենք «Ուրարտուի զիսաւոր աստուածները» բաժնում:

Արդէն մեզ յայտնի է, թէ մ.թ.ա. III, II եւ I հազարամեակներին, սուրարի-խոլրի-նախրեան թագաւորներից ու նարդկանցից ոմանք կրած են եղել Թեշուր անունով բաղադրուած անուններ. օրինակ՝ UR III ժամանակաշրջանից յիշուում է Տեշուր-շելահ, Ալալսիս IV-ում (15-րդ դ. մ.թ.ա.) յիշուում է Էրլայից եկած մի մարդ Եհլի-Տեշուր անունով, Թիգլաք-Պալասար Ա-ի (1114-1076 մ.թ.ա.) ժամանակ Կաղմուխիսի թագաւորը կոչուում էր Կիլի-Թեշուր՝ որդին Կայի-Թեշուրի: Նոյն ժամանակներին Արածանիի հիւսիսային ափում գտնուած Ուրախինաշ ամրոցի արքան կոչուում էր Շաղի-Թեշուր: Էսարհաղոնի (680-669 մ.թ.ա.) օրերին Շուրբիայի թագաւորը կոչուում էր Ինիպ-Թեշուր<sup>1</sup> եւայլն:

Այսպիսով՝ տեսնում ենք, թէ Արմանին իր գահի վրայ ունեցել է մի ժամանակ սուրարիական (սու համարուած) Մաղատինա (Մաղակինա) անունով արքայ, եւ մի այլ ժամանակ՝ սուրարի-նախրեան (Թեշուր դիցանունով բաղադրուած) Ոհշ-Թեշուր անունով արքայ: Այս փաստը, ինչպէս եւ հենց Արմանի եւ Մաղատինա անունների սուրարի-նախրեան -նի եւ -նա վերջաւորութիւնները պիտի նոյնպէս կոնկրետ ցուցմունքներ համարել, թէ Արմանի երկիրն ու թագաւորութիւնը պատկանում էին ոչ թէ սեմական, այլ սուրարի-նախրեան շրջանակին: Ուստի, Արմանի երկրանունը պիտի համարել կանխագոյն ձեւը Արմենի անուան:

Արմա (-նի) անուան նախրեան լինելը հաստատուում է նաև Արմայիր անուան (< Արմա-քիր) կազմութեամբ: Սրա մասին մանրամասնօրէն կը խօսենք 4-րդ գլուում:

Արդէն, հայերի երկրանուան հնագոյն Արմանի ձեւը, քաղուելով քաղդեական հին մատեաններից ու հայկական հին աւանդութիւններից, պահուել է հայկական հին մատեանգրութեան մէջ: Յայտնի է, թէ Արմենակ անձնանունը գալիս է հայերի Արմէն ցեղանունից կամ Արմենի երկրանունից: Արմենի անունը աւելի յոյների յիշած ձեւն էր, որին Դարեհը յիշում է Արմինա ձեւով: Արմենակ անձնանուան հնագոյն ձեւը, որպէս անուանադիրը (էպոնիմը) հայ ժողովրդի կամ երկրի, պահպանուել է Խորենացու, Սերէնսի,

---

<sup>1</sup> HS, 47, 83:

Սխ. Այրիվանեցու, Սամուէլ Անեցու եւ այլ հայ մատենագիրների մօս՝ Արմենակ, Արամենակ եւ Արմանեակ ձեւերով։ Հենց այս Արամանեակ<sup>1</sup> կամ (աւելի հին) Արմանեակ անուանաձեւի մէջ պահպանուել է հայերի երկրի Արմանի անունը։

Արմանեակ անձնանունը, որպէս Էպոնիմ, կազմուած է Արմանի անուան կցելով -ակ մասնիկը (համեմատել Հայկակ, Ցոլակ, Փայլակ եւն.): Հայերէնի լեզուական օրէնքի համաձայն՝ -ակ վերջածանցի աելացումով, Արմանի անուան ի վերջավորութիւնը փոխուել է ե-ի, որով Արմանի-ակ անուանաձեւը դարձել է Արմանեակ, այնպէս ինչպէս պատանի՝ պատանեակ, աղաւանի՝ աղաւանեակ եւայլն։ Սա արդէն նոյնպէս փաստ է, թէ հայ երկրի հնագոյն Արմանի անուանաձեւը կար ու յայտնի էր հայերի մօս եւ պատկանում էր հայերին։ Այն սեմական չէր։

Արդէն ասուրաբելացիների ժառանգներն եղող արաքները դեռ մինչեւ հիմա էլ հայերին կոչում են արմանի։ Սա արդէն կենդանի վկայութիւն է վերեւում ասուածների համար։

Ի՞նչ ծագում եւ ի՞նչ իմաստ ուներ Արմանի անունը։

Այս մասին արդէն մանրամասն բացատրութիւններ ենք բերել մեր նախորդ աշխատութիւնների մէջ, բայց, մեր ներկայ նիւթի յետագայ մասի համար ունեցած կարեւորութեան համար, այստեղ անհրաժեշտ ենք համարում բերել որոշ յիշեցումներ։

---

<sup>1</sup> Խորենացի, Ա-ժա, Ի:

## **ԳԼՈՒԽ 2**

---

**ԱՐԱՅԻ ԵՐԿԻՐՆ ՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ**

207

## 1. ԱՐ (ԿԱՄԱՐԱ) ԱՍՏՈՒԱԾԸ

Մի քանի արեւելագէտ-հայագէտների կողմից, ինչպէս եւ մեր նախորդ աշխատութիւնների մէջ, դիցարանական ու պատմագիտական հին տուեալների մէջբերումներով ցոյց է տրուել, թէ Հայկական լեռնաշխարհի ու Փոքր Ասիայի հարեւան շրջանների բնիկների կեանքի հեթանոսական վաղ շրջանում գոյութիւն է ունեցել մի աստուածութիւն, որին կոչել են *Ար կամ Արա*:

Բնիկների կեանքի նախնական-որսորդական ժամանակներին, այս *Արան* ունեցել է կենդանական-բուսական բովանդակութիւն: Յետագայում, հողագործութեան սկզբնաւրմամբ՝ Արան զարգացրել է բուսական-արեւային յատկանիշներ, ապա, հողագործութեան մէջ ոռոգման միջոցառումների զարգացմամբ եւ պետականութեան ամրացմամբ՝ նա դարձել է արեւի ու ռազմի մեծ աստուածութիւն:

Արը (Արան), իր նկարագրի այսպիսի նախնական բնոյքով եւ յետագայ բարդ զարգացմամբ, մի առանձին երեւոյթ չէ ընդհանուր դիցարանութեան պատմութեան մէջ: Նա ունեցել է իր մօտաւոր նմանները. օրինակ՝ Աշշուրը նոյնական, իր նախնական շրջանում, երբ նոր էր հիմնադրուել Աշշուր քաղաքը, ունեցել է բուսական (խաղաղ) նկարագիր<sup>1</sup>, բայց, յետագայում, Ասորեստանի հզօրացումով եւ կայսերական արիւնական նուաճումներով, դարձել է ռազմի ահարկու աստուածութիւն ու նոյնացուել արեւի հետ:

Հետագօտութիւնները ցոյց են տալիս, թէ Արը (Արան) խոր անցեալում եղել է արմէնների ազգային զիշաւոր աստուածութիւնը:

Հ. Ա. Մատիկեանը, Ն. Աղոնցը, Մ. Աբեղեանը, Գ. Ղափանցեանը եւ այլ հայագէտ-գիտնականներ ընդունում են, թէ Արան եղել է հայերի բնիկ աստուածութիւնը:

Յայտնի արեւելագէտ Ա. Հ. Աէյսը գրել է, թէ Արան եղել է հայերի արեւի աստուածը («... It is better to suppose that Er, or Ara, was

<sup>1</sup> AT, 191:

an Armenian name for the Sub-god, which in later times was confounded with the Arios (Nergal) of Ktesias»<sup>1</sup>:

Հ. Մատիկեանը այս մասին գրում է. «Արա Գեղեցիկն ուսումնասիրել կը նշանակէ հայ ազգի ծագման մթին դարերը թեւակոյնել եւ քննել»<sup>2</sup>:

Արայի բնոյթի մասին անհրաժեշտ չենք գտնում աւելին գրել այստեղ, քանի որ այդ հարցը երկար քննարկուել է մեր նախորդ աշխատութիւնների մէջ եւ բազմաթի տուեալներով ցոյց է տրուել, թէ նա եղել է հայերի ազգային բնիկ աստուածութիւնը: Այսուհանդերձ, մեր ներկայ նիւթի համար իր ունեցած մեծ կարեւորութեան պատճառով, այստեղ անհրաժեշտ ենք համարում նորից մի քանի տուեալներ նշել հայերի ազգային արմանի (Արմանի) անուան կազմութեան ու իմաստի մասին, որ կապուած է Արայի հետ:

Հնագիտութեան ու պատմագիտութեան յայտնի է, թէ հին ժողովուրդներից շատերի ազգանունը կապուած է եղել նրանց ազգային գլխաւոր աստուածութեան հետ:

Խոր անցեալում, ամէն մի ցեղ, անզամ ամէն մի տոհմ ունեցել է իր սոստեմը՝ իր պաշտամունքի առարկան, իր աստուածը: Տոհմի եւ ապա ցեղի մեծացումով ու հզօրացումով՝ մեծացել են նաև ցեղի աստծո նշանակութիւնն ու զօրութիւնը: Բեւեռազիր արձանագրութիւններից իմանում ենք, թէ միջցեղային կրիւները, ապա եւ միջպետական պատերազմները մղուել են կռուող կողմերի աստուածների համար եւ աստուածների անունով: Ուստի պարզ է, թէ ցեղերն ու պետութիւնները, շատ դէպքերում, իրարից պիտի զանազանուին իրենց աստուածների անուններով: Այդպէս են ծագել նաև շատ բնակավայրերի ու երկրների անունները:

Միջցեղային կրիւների պատճառով՝ ցեղը, ստիպուած, անրացրել է իր բնակավայրի կենտրոնում մի վայր, որտեղ ապահովութեան մէջ պահել է ցեղի նուիրական սոստեմը, կամ հաստատել է ցեղի աստծու զահը (կամ տաճարը), որից այդ վայրը ստացել է իր անունը: Ապա ցեղի մեծացմամբ ու ծաւալմամբ՝ ամրացուած

<sup>1</sup> A. Sayce, CIV, 415: Տե՛ս նաև ԱՊՊ, 93:

<sup>2</sup> ԱՊ, 4:

այդ բնակավայրը դարձել է վարչական ու տնտեսական շրջկեն-  
տրոն եւ ապա՝ մայրաքաղաք:

Բեւեռագիր արձանագրութիւնների մէջ յաճախ կարդում ենք,  
թէ այս կամ այն թագաւորը յաղթել է այսինչ քաղաքի-երկրի թա-  
գաւորին: Այդ բանը տեսանք Նարամ-Սինի մասին խօսող խեթա-  
կան յայտնի արձանագրութեան մէջ, որ Նարամ-Սինի 17 թշնա-  
միների մէջ յիշուել է. «Մաղատինա՝ Արմանի քաղաքի երկրի թա-  
գաւորը»: Սա պարզօրէն ցոյց է տալիս, թէ ցեղի կամ պետութեան  
ընդհանուր երկիրը կարող էր իր անունը ստացած լինել իր կենտ-  
րոնական կամ արքայական քաղաքի (մայրաքաղաքի) անունից,  
որը շատ դէքքերում կրել է տուեալ ցեղի (կամ ժողովրդի) գլխաւոր  
աստծու անունը:

Այդպէս են ծագել, օրինակ, Ասորեստանի ու Հռոմի մեծ  
կայսրութիւնների անունները, որոնք նախապէս եղել են անուն-  
ները տուեալ ցեղի կենտրոնական քաղաքների՝ Աշուրի ու Հռոմի,  
որտեղ հաստատուած են եղել իրենց պաշտամունքի առարկայ  
Աշուրին ու Հռոմուլոսը: Նոյնը պիտի ասել նաև յոյների մասին, ո-  
րոնք իրենց կոչում են հելլեններ եւ իրենց երկիրը՝ Հելլադա, իրենց  
Հելլենոս աստծու անունով:

Դոկտ. Հ. Մատիկեանը ասում է. «Ամէն ազգային պատմու-  
թիւն դիցարանական աշխարհայեացրով մը սկսած է ....: Այս կէտը  
հայ պատմարանի մը մտադրութենէն երբէք վրիպելու չէ, մեր  
պատմութեան գորդեան հանգոյցը հոս է»<sup>1</sup>:

Dr. G. Contenau-ն էլ գրում է. «Խոր անցեալում տարրերութիւն  
չէին դնում երկրի ու նրա աստծու միջեւ («La haute antiquité ne  
faisait pas de différence entre un pays et ses dieux»)<sup>2</sup>:

Աչքի առաջ ունենալով վերեւում թերուածները, կարելի էր  
սպասել, որ Առաջաւոր Ասիայի հնագոյն ժողովուրդներից ու ցե-  
ղային միութիւններից մէկին ներկայացնող Արմանի կամ Արմենի  
անունը առաջ եկած լինի այս անունը կրող ցեղի (կամ ժողովրդի)  
կանխագոյն գլխաւոր աստծու անունից:

---

<sup>1</sup> Նոյն, 1-2:

<sup>2</sup> CHHM, 75:

Մենք տեսանք, թէ ազգային այդ գլխաւոր աստծու անունը եղել է Ար կամ Արա:

## 2. ԱՐՄԵՆԻ ԱՆՈՒԱՆ ԻՍՊԱՏԸ

Մենք գտնում ենք, թէ Ար-մա-նի անունը բարդ բառ է, որի սկզբի Ար բաղադրիչը հենց արմեների արեւի ազգային աստուած Ար-ն (Արա-ն) է: Անուան միջին մա (տարբերակ՝ մէ) բաղադրիչը նշանակում է «շէն, ծին, սերունդ, որոի»: Մաս-ն իր այս իմաստով յայտնի էր Առաջաւոր Ասիայի շատ ժողովուրդների մօտ, իսոր անցեալում: Այս բառարմատով է կոչուել Փոքր Ասիայում յայտնի ծննդաբերութեան-պտղաբերութեան դիցուհու Մաս անունը<sup>1</sup>: Այս բառարմատը (եւ իր մէ տարբերակը) գտնուում են նաև սումերերէնում, նոյն իմաստով<sup>2</sup>: Որով Ար-մա (տարբերակ՝ Ար-մէ) նշանակում էր «Արաշեն, Արածին» կամ «Ար-ի սերունդ, Ար-որդի, Արայորդի, արեւորդի»: Իսկ Արմա-նի (կամ Արմէ-նի) անուան -նի<sup>3</sup> վերջաւորութիւնը, ինչպէս նշել ենք վերեւում, յոգնակերտ մասնիկ է եւ միաժամանակ՝ տեղանուանական (տոպոնիմիկան) վերջածանց (հնմտ. Սիտաննի, Ծուպանի, Ալզինի (Ալզինինի), Դայանի, Նիխանի եւլն.): Ուրեմն, Արմանի կամ Արմէնի նշանակում էր «Արորդիներ, արեւորդիներ» կամ «Ար-ի՝ Արայի սերնդի երկիր», կամ «արեւորդիների երկիր», այնպէս ինչպէս յոգնակերտ ք վերջաւու-

<sup>1</sup> Կոչուում է նաև կրկնուած Mama (կամ Mami) ձեւով ասուրա-բարելական արձանագրութիւններում (տե՛ս GE, 259):

<sup>2</sup> P. Deimel, SAG, տե՛ս սումեր մա=աքքաղ BANU («շինել, սերել»), Me=աքքաղ BANU (գերմ. «erzeugen», «սերել»): Տես նաև S. Langdon, SGC, 277, ուր սումեր Ma=«Beget, build», Raymond Jestic, AGS, 92, ուր սումեր Ma=ֆրանս. creer/etre cree=«ստեղծել, սերել, սերուել»:

<sup>3</sup>Նի յոգնակերտը կամ տեղանուանական վերջածանցը հանդիպում է սուբարի-խուրրի-նախրեան տեղանուններում և ցեղանուններում: Նի յոգնակերտը կայ նաև հայերէնում: Այս մասին խօսել են վերեւում արդէն մանրամասնօրէն: Անհաւանական չէ, որ մ.թ.ա. III հազարամետակին եղածները ունեցած լինեն սումերական ծագում՝ անձերին յատուկ -ե-ու յոգնակերտից ծագելով:

բութին ունեցող Հայք, Վիրք անունները, որոնք նշանակում են թէ՝ «հայեր, վլացիներ» եւ թէ «հայերի երկիր (Հայատան)», «վլացիների երկիր (Վրաստան)»:

Ինչպէս Ալալխի արձանագրութիւններում *Արմա-Ծի* անունը երեւում է պարզ *Արմա* ծետվ՝ առանց –Ծի վերջածանցի, այնպէս էլ ասորեատանեան եւ ուրարտական արձանագրութիւններում այն երեւում է *Արմէ* ծետվ: Եւ, ինչպէս ցոյց տրուեց, *Ար-մա* կամ *Ար-մէ* նշանակում է «Ար-շէն» (Ար-ի քաղաք կամ երկիր) կամ «Ար-ի սերունդ, Արածին, Ար-որդի», եւ քանի որ *Ար-ը* կոչուում էր նաև *Արա*, ապա *Արմէ* անուանաձեւը կարող էր հնչուել նաև *Արամէ*, որը արդէն, ինչպէս գիտենք, Ուրարտուի պետութեան հիմնադիր արքայի անունն էր եւ ունէր «արեւորդի» իմաստը: Խորենացու մօս նա պահպանուել է *Արամէ* ծետվ, որպէս հայերի նահապետներից մէկը:

Ուստի, պիտի ընդունել, թէ *Արմա* կամ *Արմէ* (Արամէ>Արամ) անունը հենց *Արմա-նի* կամ *Արմէ-նի* անուան հիմնական քաղադիչ մասն է, այսինքն՝ ներկայացնում էր հայերի՝ օտարների կողմից ծանօթ ազգանունը: Ուրեմն, հնուց եկող եւ գրեթէ ճիշդ տեղեկութիւն էր պահել Խորենացին, երբ *Արամի* մասին գրել էր, թէ աշխարհի բոլոր ազգերը *Արամի* անունով են հայերին կոչում *Արմէն* եւ հայերի երկիրը՝ *Արմենի* («... Յորոյ (*Արամայ*) անուն եւ ամենայն ազգը զաշխարհիս մեր անուանեն, որպէս Յոյնը՝ *Արմէն*, եւ Պարսիկը եւ *Սատրիք՝ Արմնիք» (Ա-ժք)): (Սա, ի հարկէ, ճիշդ էր անուան կապակցութեամբ, բայց ոչ թէ անձի):*

*Ար-մա* անուան մա քաղադիչի «շէն, ծին, սերունդ, որդի» իմաստի համեմատութեան համար հին յիշատակարաններից բերում ենք միայն մի քանի անուանաձեւը մա վերջաւորութեամբ.

*Աստատամա* - Միտաննի պետութեան արքաներից մէկի անունը:

*Տարկումա* - Այս տեղանունը յիշուել է խեթերի Մուրսիլ արքայի կողմից. *Տարկումա* նշանակում է «Տարկու (Տորք) աստուծոյ շինածը»՝ «Տորքաշէն»:

*Աւոտմա* - Սա Տիգրան Մեծի դուստրն է, որ ամուսնացել էր Պոնտոսի Միհրդաստ Բ-ի հետ:

*Արտաշամս* - Սա անունն է հայոց Արտաշէս արքայի դստեր. որ ամուսնացել էր, ըստ Խորենացու, «Ոմն Միհրդատի՝ վրաց մեծ բղեշխի» հետ<sup>1</sup>: *Արտաշամա* նշանակում է «Արտաշածին»:

Մերձաւոր Արեւելքում (ներառեալ Հայկական լեռնաշխարհը) ու Փոքր Ասիայում շատ տեղանուններ ու անձնանուններ հնում ունեցել են -մա վերջաւորութիւն, բայց կարծում ենք, թէ այսպահն էլ բաւական է ցոյց տալու, որ այս -մա վերջաւորութիւնը ուներ «շէն, ծին, սերունդ, որդի» իմաստը, ինչպէս արքայազն, հայկազուն եւ նման անուանածերի -ազն եւ -զում վերջաւորութիւնները եւ Հայկաշէն տեղանուան -շէն վերջաւորութիւնը:

Մենք դեռ կը բերենք Հայկական լեռնաշխարհից մի շարք տեղանուններ, որոնք բաղադրուած են Ար կամ Արա անունով: Այստեղ ուզում ենք բերել մի սեպագրական ուղղակի վկայութիւն, թէ Արմէ երկրի շրջանը կոչուում էր Ար-ի երկիր:

Մուշի մօտ գտնուել է Ուրարտուի Մենուա արքայի մի կոթողը, որի չորս երեսների վրայ կան արձանագրութիւններ: Երեսներից մէկի վրայ նա գրել է, թէ արշաւել է Ուրմէ (=Արմէ) երկրի վրայ եւ այդտեղ՝ Ար-իսի («Ար-եան՝ Արայեան») երկրում թողել է արձանագրութիւն: Ահա այդ արձանագրութեան մեզ հետաքրքրող մասի թարգմանութիւնը. «Քաղաք Ատառնէ. դուրս ելայ (արշաւի) Ուրմէ երկրի դէմ, նուաճեցի ես Ուրմէ երկիրը. կանզնեցրի այս արձանագրութիւնը Ar-hi երկրում ...»<sup>2</sup>: Այս Արիսի («Արեան՝ Արայեան») շրջանը գտնուում էր Մուշից հարաւ-արեւելք, եւ ընկնում էր Ուրմէ (Արմէ) երկրի մէջ: Սա յստակ փաստ է, թէ Արմէ երկիրը պատկանում էր Ար-ին (Արային) եւ նշանակում էր «Արածին» կամ «Արաշէն»:

Մեպագիր հին յիշատակարաններում, մերք հանդիպում ենք նշումների, թէ այս կամ այն արքան (կամ մի նշանաւոր անձնաւո-

<sup>1</sup> Կարծում եմ, թէ Խորենացին, աչքի առաջ չունենալով կոնկրետ ու հաւաստի տեղեկութիւններ, Արտաշամային շփոթել է Ատոռայի հետ. Պոնտոսի Միհրդաստ Բ-ին էլ՝ «վրաց մեծ բղեշխ»-ի հետ:

<sup>2</sup> YKH, 165-166:

բութիւն) համարուել է իր ազգային գլխաւոր աստծու (կամ իր ազգի) որդին: Այդպէս էլ Յովսեպոս Փլատոնը պահել է պատմական մի ուղղակի ու կենդանի վկայութիւն, թէ Ծոփքի Աղքազար թագաւորին արմէն ազգանունով բնութագրելու տեղ կոչել են Արայի որդի: Հ. Ա. Մատիկեանը, բերելով Յ. Փլատոնից այդ վկայութիւնը, գրում է. «... Հրեայ մատենագիրս, պատմելէ վերջ թէ Դաւիթ զանազան աշխարհակալութիւններով իր պետութեան սահմանները կ'ընդարձակէր ... կ'աւելցնէ հետեւեալ մեզի համար շատ կարեւոր տողերը. «Եւ մինչ անոնց վրայ տարեկան տուրք դրաւ, անմիջապէս Ծոփաց Աղքազար թագաւորին՝ Արայի որդույն դէմ քալեց եւ անոր հետ Եփրատայ քով պատերազմելով ...»<sup>1</sup>:

Ծոփքը (ասսուր. Isua, խեթ. Isua, ուրարտ. Շորան, լատ. Sophaenae) գտնուում էր Արմ-Ծուբրիայի հիւսիս-արեւմտեան շրջանում: Յայտնի է, թէ Ծոփքը հայկական թագաւորութիւն էր եւ նրա Աղքազար (Զարիադր-էս) թագաւորն էլ հայ էր: Այնպէս որ՝ Դաւիթը այս թագաւորին, արմէն ազգանունով բնութագրելու տեղ, կոչել է «Արայի որդի», որը ցոյց է տալիս այդ արքայի ազգային պատկաննելութիւնը: Սա նոյնպէս մի կոնկրետ ցուցմունք-տուեալ է, որին պիտի մի այլ փաստ համարել Արմանի (Արմենի) անուան «Արայի որդիներ» կամ «Արայի որդիների երկիր» իմաստի համար:

Արդէն քրիստոնեութեան մուտքից յետոյ էլ դեռ տեղ-տեղ շարունակում էին Հայաստանում գոյութիւն ունենալ «արեւորդիներ» կոչուած հայ աղանդաւորները, որոնց դէմ դուրս եկաւ Ներսէս Շնորհալին: «Արեւորդի» կոչումը պահուում էր Հայաստանում դեռ XII դարում (մ.թ.յ.)<sup>2</sup>:

Քանի որ, խոր անցեալում, Հայկական լեռնաշխարհի բնիկների գլխաւոր աստուածութիւնը եղել է Ար-ը (Արան), ու բնիկներն էլ ընդհանրապէս կոչուած են եղել այդ աստծու անունով, ապա սպասելի էր, որ որոշ տեղանուններ նոյնպէս կազմուած լինէին այդ աստծու (կամ նրա անունով ար կոչուած ժողովրդի) անունով:

<sup>1</sup> ԱԳ, 305-306: Ընդգծումը իմն է (Մ. Գ.):

<sup>2</sup> Լեօ, I, Երեւան, 1966, էջ 270:

Եւ, յիրաւի, հնում *Ար* (*Արս*) անունով կազմուած տեղանունները սփռուած են եղել ամբողջ Հայկական լեռնաշխարհում:

Թէեւ յետագայում Հայկական լեռնաշխարհը, որպէս մայր ցամաքների միջեւ մայրուղի, ենթարկուել է ռազմաքաղաքական ու մշակութային օտար ազրեցութիւնների եւ լնդունել այլ աստուածութիւններ, որոնք շատ բան են փոխել եւ նոր տեղանուններ են բաղադրել՝ անգամ մոռացութեան մատնելով Արայի Էռիքինը, սակայն երկրում պահպանուել են շատ տեղանուններ, որոնք դեռ պահում են *Ար*-ի (*Արսյի*) յիշատակը:

### 3. ԱՐ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԿԱԶՄՈՒԱԾ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ՈՒ ՑԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Յայտնի է, թէ ասորի մատենագիր Մար-Արան իր մատեանի կարեւոր մասը լնդորինակել է քաղդէական (յունարէնի թարգմանուած) մի հին մատեանից: Խորենացին էլ, Մար-Արայից քաղելով, պահել է մի շատ հին տեղեկութիւն-յիշողութիւն, թէ Հայաստանի կենտրոնը նախապէս կոչուած է եղել *Հարք*: Խորենացին, Հայկի մասին գրելիս, նշել է. «*Բնակէ ի բարձրաւանդակի դաշտի միում, եւ անուանէ զանուն լեռնադաշտակին Հարք*»<sup>1</sup> (բնակում է մի բարձրաւանդակ դաշտում եւ այս լեռնադաշտի անունը կոչում է *Հարք*): Իսկ յաջորդ գլխում գրում է. «*Բայց զդիակն Բելայ պաճուճեալ իմն դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք, եւ թաղել ի բարձրաւանդակ տեղով, ի տեսիլ կանանց եւ որդոց իւրոց*» (բայց Բէլի դիմակը, ասում է [Մար-Արան] դեղերով զմուելով՝ Հայկը հրամայում է տանել *Հարք* եւ թաղել մի բարձրաւանդակ տեղում, ի տես իր կանանց եւ որդիներին):

Ինչպէս տեսնում ենք, առաջին յիշատակութեան մէջ ասուում է, թէ նշուած լեռնադաշտակը Հայկն է անուանել *Հարք*, այսինքն՝ հայերի աստուածն է (նահապետն է) անուանել (կամ նրա անու-

<sup>1</sup> Խորենացի, Ա-Ժ:

նով է անուանուել) Հարք: Իսկ երկրորդ յիշատակութեան մէջ վկայութիւն կայ, թէ այդտեղ էին ապրում Հայկի որդիները, այսինքն՝ հայերը՝ Արորդիները (արմէնները):

Հարք անուան նախահունչ հ-ն երեւի աճած ձայն է որպէս սաստկացուցիչ. համեմատել Ուռմ > Հռոմ, Արմա > Հարմա<sup>1</sup>, Արմայիս > Հարամայիս<sup>2</sup>, ագանել > հազնել եւն.: Որով՝ Հարք-ը արք է, որ նշանակում է «արեր» (արմէններ) եւ միաժամանակ՝ «արերի երկիր»: Հարք-ի արք լիմելը փաստում է նաև սեպագրական վկայութեամբ: Ինչպէս նշեցինք, Մենուան, Մուշի մօս քողած իր արձանագրութեան մէջ, այդ շրջանը կոչում է Ար-իսի («Ար-եան») երկիր. որով Մուշի շրջանը, որ հարեւան էր մեզ ծանօթ Հարքին, հանդիսանում էր Հարքի շարունակութիւնը<sup>3</sup> որպէս Ար-եան երկիր:

Վանայ լճի վերեւից՝ Հայաստանի ամբողջ կենտրոնով անցնում է Արածանի (ասորեստանցիների հնչմամբ՝ Արսանիա) գետը: Ակադ. Ղափանցեանը, իր «Արա Գեղեցիկի պաշտամունքը» աշխատութեան մէջ, համոզիչ կերպով ցոյց է տուել, թէ Արածանի նշանակում է «Արայի գետ»:

Յայտնի է, թէ Հայաստանի հարաւ-արեւմտեան շրջանը (նայեան երկրների Շուրջիա կոչուած շրջանը) Ասորեստանի եւ Ուրարտուի արքաների կողմից կոչուել է նաև Արմէ (կամ Ուրմէ), որը նշանակում էր «Արի սերնդի երկիր»: Այս շրջանը, աշխարհագրական իր իրայատուկ դիրքի պատճառով, պահպանել էր իր ինքնուրոյնութիւնը եւ չէր մասնակցել (կամ հնարաւոր չի եղել նրան մասնակցել) իր ցեղակից նախրեանների կազմած ուրարտական

<sup>1</sup> Նոյն, Ա-ն:

<sup>2</sup> ՊԱՏ, 30:

<sup>3</sup> Խորենացու պահած «քայց զդիակն Բելայ պաճուճեալ իմ դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք, եւ քաղել ի բարձրաւանդակ տեղուց ...» յիշատակութեան տեղ՝ Գ. Արվանձտեանցը քաղել է «Հայոց քագաւորը Աստուծոյ ձեռքով սպաննել է զքէլ եւ հաներ Նեմրութայ զլոխ, այն տեղը քոնիր շիներ, մէջը կախեր վառեր է» (Գրոց ու Քրոց, էջ 31-32): Ինչպէս տեսնում ենք՝ Արվանձտեանցի նշած «Նեմրութ»-ի տեղ՝ Խորենացին բերում է «Հարքում մի բարձրաւանդակ տեղ» խօսքը: Ուրեմն Հարքը տարածուում էր նաև Նեմրութի շրջանը: Հետեւաբար, Մուշի դաշտն ու շրջանն ել մտնում էին Հարքի մէջ (ընդծումը իմն է՝ Ս. Գ.): Ուստի պարզուում է, թէ Հարքը արք էր կամ՝ «Ար-եան (Ar-hi) երկիր»:

միութեանը. պահպանել էր իր առանձին իշխանութիւնը, որին Բի-  
այնայի հետ կապելու համար որոշ ճիգ էին թափում ուրարտական  
արքաները՝ Ասորեստանի խանգարիչ ազդեցութիւնների պայման-  
ներում:

Նոյն երեսոյթը շարունակուում էր նաեւ Ուրարտական հա-  
րլստութեան անկումից յետոյ, երբ Արտաշէսեան հարստութեան  
արքաները նոյնպէս մեծ ճիգ էին թափում յետազայում Ծովք կո-  
չուած շրջանի հայկական թագաւորութիւնը Մեծ Հայքի հետ միաց-  
նելու համար՝ այս անգամ Հռոմի խանգարիչ ազդեցութիւնների  
պայմաններում:

Թիգլաթ-Պալասար Ա-ը՝ Վանայ լճից հարաւ ընկած շրջանը  
կոչել է «Հարիա<sup>1</sup>», որը եղել է Կուտմուխի երկրի հարեւան, եւ ուր  
կոռուել է նրա ուր լեռների ստորոտներում գտնուած 25 քաղաքների  
դէմ: Ուրեմն Հարիան եղել է ընդարձակ երկիր: Հարիան նշանա-  
կում է «Հար-ի երկիր», այսինքն՝ Հարք: Ուրեմն, այս էլ արերի եր-  
կիր էր:

Վանայ լճից արեւելք ընկած շրջանի հայկական նախարա-  
րութեան Արծրունի անունը գալիս է ուրարտական արձանագրու-  
թիւնների մէջ յիշուած Արծրունի անուանաձեւից, որը եղել է  
Արծակ լճի հարաւային ծայրի մօս գտնուած մի քաղաքի (ու նրա  
շուրջ ապրած մի նախրեան ցեղի) անունը: Ուրարտական արձա-  
նագրութիւնների լեզուով՝ ծուէ (ծունի) նշանակում է «լիճ»: (Հա-  
ւանարար սրա հետ է կապուած հայ ծով բառը), որով Ար-ծունի-  
ունի նշանակում էր «Ար-լճեցի-ներ» եւ կամ «Ար-լճի-երկիր»: Կա-  
րելի է մտածել, թէ այս քաղաքը կոչուած է եղել Արծակ լճի անու-  
նով: Հետեւարար հնարաւոր է ենթադրել, թէ Արծակ եզրը առա-  
ջացել է Ար-ծուէ («Ար-լիճ») անուան վրայ -ակ մասնիկի աւելա-  
ցումով (այսինքն՝ Ար-ծուէ-ակ > Արծակ > Արծակ):

Վանայ լճից հիւսիս-արեւելք (Վանի հիւսիսում) ընկած շրջա-  
նը կոչուել է Առքերանի, ինչպէս նշեցինք վերեւում՝ քիր (տարրե-  
րակ՝ քեր) «ցեղ, տուն» բառի կապակցութեամբ, Ղափանցեանը  
նոյնպէս մեծ ճշդութեամբ ցոյց է տուել, թէ Առ-քեր-անի նշանակում

---

<sup>1</sup> ARAB, 78-79:

Էր «Առ-ցեղ-եր»: Ուրեմն, այս շրջանն էլ պատկանում էր *առ ցեղին*:

Սալմանասար Գ-ը՝ Վաճայ լճից հիւսիս ընկած շրջանը կոչել է *Արամայի*: Ինչպէս տեսանք, այս տեղանունը հնչուել է նաեւ (Սարգս Բ-ի կողմից) *Արմարիլի* (*Արմա-դի-լի*) ձեւով՝ *Արմա* հիմքից յետոյ (յոգնակի -լի մասնիկից առաջ) դնելով *-դի-* ածանցը, ինչպէս *Արձէշի* շրջանում Արգիշտի Բ-ի արձանագրութեան մէջ յիշուած <sup>KU'R</sup>Su-ri-լի եզրը: *Արա-մա-լի* անուան *-լի* վերջաւորութիւնը յոգնակերտ մասնիկ է եւ նման է (համապատասխանում է) *Ար-մա-մի* կամ *Ար-մե-նի* ձեւի *-նի* վերջաւորութեան (հնմտ. Բիահնի-լի, Դարանա-նի, Մանանա-նի եւլն.): Ուստի, *Արա-մա-լի* անունը *համընկնում* է (*նոյնանում* է) *Ար-մա-նի* (*կամ Ար-մե-նի*) անուան *հետո*:

*Արա-մա-լի* անուանաձեւի երեք բաղադրիչներն էլ իմաստով համընկնում են նոյն շրջանի (կամ կից շրջանի) *Առ-քեր-անի* անուանաձեւի համապատասխան երեք բաղադրիչների հետ. այսինքն՝ *Արա* = *Առ* (որպէս դիցանուն), *մա* («սերունդ») = բեր («ցեղ»), *լի* = *անի* (որպէս յոգնակերտ մասնիկ եւ տեղանուանկան վերջածանց): Սա նոյնպէս փաստ է, թէ *Ար-մա-նի* անուան -մա բաղադրիչը նշանակում է «սերունդ, որդի, ծին») եւ *Ար-մա-նի* (կամ *Ար-մե-նի*) նշանակում է «Արա-ծին-ներ, Ար-որդի-ներ» կամ «Արորդիների երկիր»:

Հետեւաբար, բացայատուում է, թէ *Արմանի* (= *Արմենի*) եւ *Արամայի* (= *Առերանի*)<sup>1</sup> անունները պատկանում էին նոյն ժողովրդին, որ գոյութիւն ունէր հենց Սալմանասար Գ-ի (859-824 մ.թ.ա.) եւ Ուրարտուի ժամանակ Հայաստանի այս կենտրոնական մասում: Սա պիտի նոյնպէս փաստ համարել, թէ *Արմանի* անունը կապուած էր Արմենի անուան հետ (սեմական չէր) եւ պատկանում էր *արմէ՛ն* կոչուած ժողովրդին (Արորդիներին):

<sup>1</sup> Առ-քեր-անի շրջանը կոչուել է նաեւ Այա-դու (տես ՀՊ, 122), փոխանակ կոչուելու Արա-դու, ուր «դու»-ն տեղանուանական վերջածանց է: Որով, երեւի առ (կամ ար) ցեղը կոչուել է նաեւ այ կամ (հ սաստկացուցիչ սկզբնաձայնով հայ, ինչպէս արք-ը՝ Հարք, Արմա-ն՝ Հարմա, Rome-լ՝ Հռոմ եւլն.), որով՝ Հարքը կառող էր հնչուել Հայք:

Շիրակի շրջանը, Ուրարտուի ժամանակ, կոչուում էր *Eriahî* (=«Երի-եան»): Այստեղ պիտի միջանկեալ նշել, թէ հին հայերենում *ար-ով* սկսող որոշ բառեր ունեին նաև եր-ով սկսող զուգահեռներ: Լեզուարանութիւնը ընդունում է, թէ դա (*ար-ի* տեղ եր-ը) բարբառային տարբերութիւն է լոկ: Արդեն մեզ յայտնի է Պղասոնի գրած-ներից, թէ Պամփիլիայում *Արան* կոչուում էր *Էր* (Armenos-ի որդին): Սեզ յայտնի է նաև *Արմանի* (Արմենի) ցեղանուն-տեղանունից առաջացած *Արամանեակ* կամ *Արամենակ* անձնանուան ուրարտական *Էրիմենա* ձեւը: Հետեւարար, հաստատ է, թէ *Էրի-ախի* անուան *Էրի* բաղադրիչը *Արա* (*Արայ*) անուան բարբառային մի այլ տարբերակն էր: Ուստի, կարելի է ընդունել, թէ *Էրիախի* («Երի-եան») ցեղանուն-տեղանունը, Մենուայի յիշած *Արիսի* («Արեան») երկրանունը եւ Դարեկի յիշած *Արմիս* (հայ) *Արախս* («Արա-եան») անձնանունը նոյնանիշ եզրեր են՝ կապուած լինելով *Ար* (*Արա*) աստծու կամ նրա *ար* կոչուած (արմէն, արմին) ժողովրդի անուան հետ:


*Էրիախի* («Արայեան») անուան հետ պիտի կապուած լինի *Երասիս* գետանունը, որ հնչուում է նաև *Արաքս*:

Ինչպէս տեսնում ենք, *Արածանի* եւ *Արաքս* գետանուները կապուած են հայերի ազգային աստուած *Արայի* եւ/կամ նրա *ար* (արմէն «Արորդիներ») կոչուած ժողովրդի անուան հետ: Այս երկու գետերը, որոնք միասին կազմում են արեւմուտքից դեպի արեւելք (Եփրատից մինչեւ Կասպից ծով) ձգուած մի ընդհանուր գիծ, ամբողջութեամբ ընդգծում ու ընդգրկում են *Արմենիա* կոչուած աշխարհը, եւ հանդիսանում են բազմահազար տարիներով հայ ժողովրդին ծնած ու սնած ազգային սրբազն գետերը, ճիշդ այնպէս ինչպէս *Ինդոս* ու *Գանգեսը*՝ հնդիկների համար, *Նեղոսը*՝ եգիպտացիների համար եւ *Եփրատն* ու *Տիգրիսը*՝ Սիրակետքի հին ժողովուրդների համար:

Էրիախսից արեւելք գտնուում է *Արագած* լեռը: Ակադ. Ղափանցեանը նոյնպէս ճշդութեամբ ցոյց է տուել, թէ *Արա-զած* նշանակում է «*Արայի զահ*»<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Ագ.Պ, 98:



Քարտէս 4: Արերի երկիրը:

Ուրմիոյ լճից հիւսիս-արեւելք կար Արխու<sup>1</sup> («Արեան» կամ «արերի») երկիրը: Հաւանաբար այս երկրանուան ու ցեղի յիշատակն է պահում հայ մատենագրութեան յիշած Արեւիք գաւառանունը:

Ինչպէս տեսնում ենք, ոչ թէ միայն Հայաստանի կենտրոն Հարքն էր կոչուում Ար-ի կամ ար-երի անունով, այլ Ուրարտուի սիրտն հանդիսացող Վանայ լիճն ամբողջութեամբ շրջապատել են Ար-ի (Արայի) կամ նրա որդիներն հանդիսացող արերի անուան հետ կապուած Արածանի գետը, Արխի, Արմէ, Հարիա երկները,

<sup>1</sup> Յիշուել է Արգիշտի Բ-ի կողմից: Տե՛ս Biainili, 319:

*Արծակ լիճը, Արծունի-ունի ցեղի բնակավայրը եւ Առքերսանի ու Արամայի երկրները<sup>1</sup>:*

Ի հարկէ, ինչպէս տեսանք, միայն Վանայ լճի շրջապատում չէ, որ ապրում էին Արայի որդիները (արերը). տեսանք, որ Վանայ լճից արեւելք եւ հիւսիս-արեւելք կային նաև Երիալսի երկիրը, Երասխ (Արաքս) գետը, Արագած լեռը, Արիա (Ար-իա) երկիրը եւ Արիու (Կամ Արեւիք) երկրամասը (տե՛ս քարտէս համար 4):

Պիտի միաժամանակ նշել, թէ սրանք դեռ բոլորը չեն: Հայաստանի ամբողջ տարածքում սփռուած են Ար կամ Արա (եւ սրա տարրերակ՝ Եր կամ Երի) արմատ-հիմքով կազմուած բազմաթիւ տեղանուններ ու ցեղանուններ, որոնցից շատերը կապուած պիտի լինեն Ար (Արա) աստուծոյ անուան հետ: Դրանց մեջ լեռներ են, օրինակ, Եր-ը (Վանանդում), Երիտիա (Ծաղկանց լեռնաշխարհում). յիշուել է Սալմանասար Գ-ի կողմից), Արայի Լեռը (Արագածից արեւելք), Արաժին (Դարալագեազում), ինչպէս եւ Արուճի (Տումմէ երկրում) եւ Արուա (Հարիայում), որոնք յիշուել են Աշշուրնազիրապալ Բ-ի կողմից: Բնակավայրեր են Արուրա եւ Արուք (քաղաքներ Տումմէ երկրում), Արայի Գիլ (Արայի լեռան ստորոտում), Արահեզ (Տայքում), Արահուծ (Սիւնիքում), Արագեծ<sup>2</sup> (յիշուել է Մարմաշնի եկեղեցու 1029 թուի արձանագրութեան մեջ), Արազու, Արմունա (քերդաքաղաքներ՝ Ուլիսու-Խոյի շրջանում), Արմաւ եւ Արբու (քաղաքներ՝ Արամալիում)<sup>3</sup>, Երիսու (երկրամաս՝ Վանայ լճից հարաւ), Երիզա (Երզինջան), Երիլիա/Այի (քաղաքը յիշուել է Սիերի դրան վրայ) եւայլն:

Պիտի նշել, թէ սրանց մեջ չենք նշել Ար-ով կազմուած այն տեղանունները, որոնք գտնուում էին Եփրատից մինչեւ Արգենու (Երճիաս լեռը) տարածուող շրջաններում, որ նոյնպէս եղել են հայերի բնակութեան վայրեր անցեալում:

<sup>1</sup> Ար-ի (Արայի) հետ կապուած անունները պէտք չեն շփորել իրանական Arya-ի հետ:

<sup>2</sup> Արաժին լեռան եւ Արահեզ, Արահուծ ու Արագեծ գիւղերի մասին տե՛ս ԱԳ.Պ, 105:

<sup>3</sup> Արմաւ եւ Արբու քաղաքները յիշուել են Սարգսն Բ-ի կողմից:

Այս բոլորից յետոյ՝ պիտի աւելի հասկանալի լինի Էրլայի արձանագրութիւններում յիշուած Armi<sup>KI</sup> եզրը: Տեսանք, թէ Armani-ն գտնուում էր Subartu-ում, Arma-rili անունը կոչուում էր նաեւ Շu-rili, այսինքն՝ Arma (= Arma[-ni]) ժողովուրդը յայտնի էր նաեւ Շu (= սուրարի) անունով, ինչպէս Arme երկիրը կոչուում էր նաեւ Շubre: Էրլայի արձանագրութիւններից յայտնի դարձաւ, թէ սուրարիները առկայ էին թէ՝ Էրլայում եւ թէ նրա շրջապատում: Էրլայում գործել են սուրարիական Շubur եւ Guzuzi անուններով կառավարիչ ու վարպետ. Ar անունով՝ մի արքայ կոչուել է Ar-Ennum, մի կառավարիչ՝ Irkab-Ar (հմնտ. Irkab-Damu) եւ մի քննիչ՝ Dada-Ar: Էրլայում պաշտուում էին նաեւ սուրարիական (խուրրի համարուող) <sup>d</sup>Adamma, <sup>d</sup>Habat, <sup>d</sup>Ishara եւ Aštabi (սուրարիների <sup>d</sup>Aštarinu) աստուածները: Այս եւ մի շարք այլ տուեալներ թելադրում են հաւանական համարել, որ Էրլայի արձանագրութիւնների մէջ յիշուած Armi<sup>KI</sup> եզրը ներկայացրած լինի Արմա (կամ Ար) կոչուած սուրարիներին: Արդէն այդտեղ յիշուում է նաեւ Ara<sup>1</sup> անունով քաղաք:

Պրոֆ. P. Mattheiae-ն, Armi<sup>KI</sup> եզրը համարելով յատուկ անուն, այն նոյնացրել է Նարամ-Սինի յիշած Armani քաղաքի հետ: Սակայն, Էրլայի արձանագրութիւններում կայ նաեւ յոգնակի ձեւով Armi<sup>KI</sup> Armi<sup>KI</sup> եզրը, որը չէր կարող լինել յատուկ անուան յոգնակին: Ես գտնում եմ, թէ աւելի իրաւացի էր G. Pettinato-ն, որը այս (Armi<sup>KI</sup>) քաղը համարել է հասարակ անուն: Սակայն, միաժամանակ, կարծում եմ, թէ այս քաղին իր տուած «քաղաքներ» իմաստը յարմար չէ, եթք կայ նաեւ նրա յոգնակի Armi<sup>KI</sup> Armi<sup>KI</sup> ձեւը, որին նոյնական տալիս է «քաղաքներ» իմաստը:

Նկատի առնելով եւ այն երեւոյթը թէ Էրլայի նոյն արձանագրութեան մէջ նշուած են թէ՝ Armi<sup>KI</sup> եւ թէ uru<sup>KI</sup> ու սրա յոգնակի uru<sup>KI</sup> uru<sup>KI</sup> («քաղաքներ») ձեւերը<sup>2</sup>, ապա Armi<sup>KI</sup> եզրը պէտք է ունեցած լինի uru<sup>KI</sup> եզրից տարբեր իմաստ: Որով կարծում եմ, թէ Armi<sup>KI</sup>, որպէս հասարակ անուն, նշանակում էր «Ar-երի վայր», այսինքն՝ «ար ժողովրդի բնակավայր», իսկ Armi<sup>KI</sup> Armi<sup>KI</sup> եզրն էլ՝

---

<sup>1</sup> AE, 224:

<sup>2</sup> Նոյն, 151:

«արերի քնակավայրեր» կամ «ար ժողովրդի քաղաքներ»:  
Սիածամանակ պիտի հաւանական համարել, որ այս եզրերով  
նշուած լինեն սուբարիները, այսինքն՝ *արմանի* ժողովուրդն ու նրա  
քաղաքները:

## **ԳԼՈՒԽ 3**

---

### **ԱՐԱՍՏԱ ԵՒ ԷՐԵՔ<sup>1</sup>**

---

<sup>1</sup> Մեր տեքստում պահել ենք սումերական Uruk քաղաքի անուան՝ U. Գրքում յիշուած (եւ Kramer-ի օգտագործած) Erech (Էրեք) ծեւը:

## 1. ՍՈՒՄԵՐԱԿԱՆ ԴԻՒՅԱԶՆԱՎԵՊԵՐ

Հայկական լեռնաշխարհի *Ար (Արս)* աստծու եւ նրա երկրի ու ժողովրդի մասին բերուած այս տուեալներից ու բացատրութիւններից յետոյ, կարծում ենք, աւելի հասկանալի կը լինի ինքնութիւնը մ.թ.ա. III հազարամետակի սկզբներին վերաբերող սումերական չորս դիցազնավէպէրում (կամ մի դիցազնավէպի չորս տարրերակներում)<sup>1</sup> պատմութեան նիւթ դարձած Aratta քաղաք-պետութեան, որը տեղադրուում է Հայկական լեռնաշխարհի կողմերում:

Մի քանի սեպագիր արձանագրութիւններում՝ պոէմների ձեւով գտնուած դիցազնավէպի այդ չորս տարրերակները (հաւանաբար մի մեծ էպոսի՝ յայտնաբերուած առանձին չորս հատուածները) կոնկրետ տեղեկութիւններ են պահում Հայկական լեռնաշխարհի հետ Սումերի ունեցած իին փոխյարաբերութիւնների մասին: Ինչքան էլ նրանց մէջ պատմուածները մեզ հասել են սումերական գուսանների ու բերբողների դիցազներգական պոէմների ձեւով ու միջոցով, սակայն եւ այնպէս դրանք այդ խոր անցեալի (գրաւոր շրջանի սկզբներին յատուկ) պատմագրութեան ոճաձեւերն էին, որոնք արժեքաւոր արձագանգներն էին հանդիսանում պատմական իրողութիւնների: Այդ պոէմները կարեւոր լոյս են սփռում մարդկային քաղաքակրթութեան զարգացման այդ մքնչադայային կանուխ շրջանի քաղաքական, տնտեսական ու մշակութային կեանքի վրայ: Հետեւարար, մեր ներկայ աշխատութեան նիւթի համար ունեցած իրենց կարեւորութեան պատճառով՝ ուզում ենք այստեղ ամփոփ ձեւով ներկայացնել այդ չորս դիցազնավէպերի մեզ հետաքրքրող դրուագնները:

Դիցազնավէպերից մէկը, որ S. N. Kramer-ը հրատարակել է «Enmerkar եւ Aratta-ի տէրոր» վերնագրով, յայտնաբերուել է վեց հարիւր սողերից բաղկացած սեպագիր քան սալիկների ու բեկորների վրայ<sup>2</sup>, ուր պատմուում է հետեւեալը:

<sup>1</sup> Դիցազնավէպի տարրերակների մասին տես՝ Sumerians, էջ 269-276:

<sup>2</sup> Սրանք գտնուում են Պոլսոյ եւ Ֆիլադելֆիայի թանգարաններում. տես՝ նոյն, էջ 269:

Մի օր, Սումերի Երշ (Uruk) քաղաքի ուն «քուրմարքայ») Էնմերքարը, որդին Ստա-ի (արեւի աստծու), որոշելով Արատտա քաղաք-պետութիւնը Ենթարկել իրեն, աղերսեց իր քոյր Ինանա-ին, սումերական սիրոյ եւ ռազմի հզօր դիցուհուն, այնպէս անել, որ Արատտայի ժողովուրդը իրեն բերի ոսկի, արծաթ, լազուարթ ու քանկազին քարեր եւ իր համար կառուցի զանազան տաճարներ ու մեհեաններ, յատկապէս Էնկի աստծու տաճարը՝ Eridu քաղաքում:

Ինաննա դիցուհին Էնմերքարին խորհուրդ է տալիս գտնել մի յարմար պատգամատր, որ անցնի Անշանի վեհազդեցիկ լեռները՝ Վստահեցնելով, թէ Արատտայի ժողովուրդը պիտի Ենթարկուի իր կամքին ու կառուցի իր ցանկացած շնչերը:

Էնմերքարը իր ընտրած պատգամատրին ուղարկում է Արատտայի ու-ի (քուրմարքայի) մօս մի սպառնալի պատգամով, որ նա եւ իր ժողովուրդը բերեն արծաթ, ոսկի եւ շինեն ու զարդարեն Երեքի տաճարը. հակառակ պարագային՝ կը կործանի նրա քաղաքը:

Պատգամատրը, անցնելով եօթ լեռներ, հասնում է Արատտա ու կրկնում է իր տիրոջ խօսքերը: Սակայն, Արատտայի տէրը մերժում է Ենթարկուել՝ յայտնելով, թէ ինքն է Ինաննայի պաշտպանեալը եւ թէ հենց Ինաննան է բերել ու հաստատել իրեն որպէս իշխող Արատտայում: Սրա վրայ՝ պատգամատրը նրան տեղեկացնում է, թէ Էնմերքարը Ինաննային բերել է Երեք եւ նրան դարձրել է Երեքի Էաննա տաճարի քաղուիին: Դրա համար էլ դիցուհին խոստացել է, որ Արատտան պիտի Ենթարկուի նրան:

Արատտայի տէրը ցնցուում է այս լուրից: Նա մի պատասխան է շարադրում պատգամատրին, որ տանի իր տիրոջը՝ կշտամբելով նրան, որ ուզում է դիմել զենքի եւ ասելով, թէ նա նախընտրում է մի մրցում, մի մարտ երկու ընտրուած ախտյեանների միջեւ, յայտնում է նաեւ, թէ քանի որ Ինաննան դարձել է իր

---

Էնմերքարը ապրել է III հազարամեակի I քառորդում. նա եղել է մեծ հայրը առասպելական Գիլգամեշի, որը, ըստ յայտնաբերուած մի սեպազիր գրութեան, եղել է իրականում ապրած մի մեծագոյն հերոս-արքայ: Այս մասին տե՛ս EBLA, 22-23:

թշնամին, ապա նա պատրաստ է ենթարկուել Էնմերքարին, եթէ նա Արատտա ուղարկի մեծ քանակութեամբ ցորեն:

Պատգամատրը շտապ վերադառնում է Երեք և ժողովասրահի բակում Էնմերքարին յանձնում է պատգամը: Էնմերքարը, մի որեւէ նոր քայլի դիմելուց առաջ, անում է որոշ ծիսակատարութիւններ եւ հայցում է սումերների իմաստութեան դիցուի Նidaba-ի խորհուրդը, որից յետոյ իր անասունների վրայ ցորեն է քարձում եւ ուղարկում է պատգամատրի հետ: Միաժամանակ նրան յանձնարարում է, որ Արատտայում փառարանելով իր գայխոնք՝ հրամայի բերել կարնելիան ու լազուարը (carnelian and Lapis Lazuli):

Պատգամատրը, հասնելով Արատտա, ցորենը դիցում է քակում եւ յայտնում է իր տիրոջ պատգամը: Ժողովուրդը, տեսնելով ցորենը, ուրախութեամբ ցանկութիւն է յայտնում Էնմերքարին ներկայացնել կարնելիան (Երեւի առանց մի խօսքի լազուարթի մասին) եւ «ծերերին» էլ պատուիրել՝ շինել տալու նրա համար «սուրբ տուն»: Բայց Արատտայի «ջղագար (hysteric)» ըն-ը, գովարանելով իր իսկ գայխոնք, մերժում է եւ իմքն է պահանջում, որ Էնմերքարը իրեն բերի կարնելիան ու լազուարը:

Երբ պատգամատրը Երեք է վերադառնում՝ Էնմերքարը երեւի հարցնում է օմեն-ների (համայնքների ժողովի) խորհուրդը, յատկապէս մի ծիսակատարութիւն է անում սուշինա-եղէզի հետ, որին նա տարութերում է «զոյսից ստուեր» եւ «ստուերից լոյս», մինչեւ որ վերջում նա «հինգ տարի անց, տաս տարի անց» կտրում է նրան: Եւ նա նորից է ուղարկում իր պատգամատրին, այս անգամ՝ նրա ձեռքում դնելով իր գայխոնք որպէս բացայայտ սպառնալիք: Գայխոնի տեսքը սարսափ է ազդում Արատտայի ըն-ին: Նա դառնում է իր շատամ-ին եւ կծու խօսքեր է ասում Ինաննայի դժգոհութեան պատճառով իր քաղաքին սպառնացող վտանգի մասին: Ապա բուում է, թէ նա պատրաստ է ենթարկուելու Էնմերքարին, սակայն եւ այնպէս նա նորից ասպարէզ է կարդում Էնմերքարին եւ այս անգամ պահանջում է, որ Էնմերքարը ընտրի իր «ռազմի մարտիկներ»-ից մեկին՝ առանձին կրուելու իր «ռազմի մարտիկներ»-ից մեկի հետ. որպէսզի այդպիսով յայտնի լինի, թէ ով է աւելի ուժեղը:

Էրեք վերադարձած պատգամաւորին՝ Էնմերքարը յանձնարկում է նորից զնալ Արատտա եւ յայտնել երեք մասից բաղկացած իր հետեւեալ պատգամը.

1. Ընդունում է ուղարկել մի ախոյեան՝ մրցելու համար նրա ընտրած մարտիկի հետ:

2. Պահանջում է, որ Արատտայի եռ-ը բերի ու դիզի ոսկի, արծաթ ու բանկազին քարեր Էրեքում՝ Ինաննա դիցուհու համար:

3. Հակառակ դէպրում՝ սպառնում է կործանել Արատտան եւ պահանջում է, որ Արատտայի եռ-ը եւ ժողովուրդը բերեն «զեռան քարեր» եւ շինեն ու զարդարեն իր համար Eridu-ի տաճարը:

Սրան հետեւում է մի նշանակալի հատուած, որը, եթէ ճիշդ է թարգմանուում, յայտնում է թէ՝ Էնմերքարը, ըստ պոէտի կարծիքի, առաջինն էր որ զրել է կատ սալիկի վրայ եւ թէ այդպէս է արել, որովհետեւ իր պատգամաւորը «ծանրաբերան» էր թուում եւ չէր կարող կրկնել պատգամը՝ գուցէ նրա երկարութեան պատճառով: Պատգամաւորը արձանագրուած սալիկը յանձնում է Արատտայի տիրոջը եւ սպասում պատասխանի:

Այդ ժամանակ, թուում է, թէ Արատտայի տիրոջը օգնութեան է հասնում անձրեւի ու փոթորկի սումերական աստուած Իշքուրը, որը Արատտա է բերում Վայրի ցորեն ու լորի եւ դիզում Արատտայի տիրոջ առաջ: Սրանց տեսքից նա նորից է քաջալերուում ու պատուիրում է պատգամաւորին յայտնել իր տիրոջը, որ Ինաննան չի լրել Արատտան ու այդտեղի իր տունը:

Սրանից յետոյ, տեսքը դառնալով բեկորային՝ դժուար է լինում խօսքերը կապակցել ու հետեւել պատմութեան ընթացքին, բայց հասկանալի է լինում այն, թէ Արատտայի ժողովուրդը վերջում Էրեք է բերել ոսկի, արծաթ ու լազուարը ու դիզել Եաննա-ի բակում, Ինաննայի համար<sup>1</sup>:

Գրեքէ երեք հարիր տողից բաղկացած սումերական մի այլ դիցազնավէպում [ուր Erech-ի եռ («տէր») Էնմերքարը խիստ հակառակութեան մէջ է մտնում Արատտայի եռ-ի («սիրոջ») հետ, որը

---

<sup>1</sup> Sumerians, 270-272:

կրում է, այս պարագային, սումերական Ensukushsiranna անունը] պատմում է հետևեալը:

Ennamibaragga-Utu անունով մի արքայի կայսրութեան օրերին (որի մէջ հաւանաբար մտնում էին Սումերն ու հին Իրանի մի մասը) Արատտայի en Էնսուկուշփրաննան ասպարէզ է կանչում Էրեքի ըն-ին՝ պահանջելով, որ նա ճանաչի իր գերակայութիւնը եւ Ինաննան քերուի Արատտա: Էնսերքարը արհամարհում է մարտի կոչը եւ մի երկար ուղերձով, որի մէջ իրեն նկարագրում է որպէս աստուածների համակրելին, յայտարարում է, թէ Ինաննան պիտի մնայ Էրեքում, եւ պահանջում է, որ Էնսուկուշփրաննան ինքը դառնայ իր վասալը: Էնսուկուշփրաննան ժողովի է հրավիրում իր խորհրդի անդամներին, որոնք յորդորում են նրան ենթարկուել Էնսերքարին, բայց նա մերժում է ցասումով: Սրա վրայ՝ Արատտայի մաշմաշքուրմը գալիս է նրան օգնելու եւ յոխորտում, թէ ինք ենթակայ կը դարձնի Էրեքն ու բոլոր երկիրները «ներքեւ ու վերեւ՝ ծովից մինչեւ Մայրիների լեռը» իր մոզական զօրութեամբ: Էնսուկուշփրաննան ուրախանում է եւ տալիս է նրան հինգ մինա ոսկի ու հինգ մինա արծաթ եւ անիրամեշտ պաշար: Մաշմաշը ժամանակին հասնում է Էրեք, բայց նրան (հնարամտութեամբ) գերազանցում են Nidaba դիցուհու երկու հովիներն ու մի խելացի պառաւ Sagburru անունով, որոնք վերջում սպանում են նրան ու նրա մարմինը նետում Եփրատ գետը: Երբ Էնսուկուշփրաննան իմանում է իր մաշմաշի գլխին պատահածը՝ շտապ Էնսերքարին է ուղարկում մի պատգամատր եւ լրի յանձնուում՝ խոնարհաբար ընդունելով նրա գերազանցութիւնը»<sup>1</sup>:

Kramer-ը աւելացնում է. «Սումերական մի այլ դիցազնավէս, որին կարելի է վերնագրել «Lugalbanda եւ Enmerkar», ի յայտ է քերում Էրեքի եւ Արատտայի միջեւ քաղաքական, կրօնական ու մշակութային արտակարգօրէն սերտ կապեր: Այն քաղկացած է մօտարապէս 400 տողերից, ուր գտնում ենք պատմութեան հետեւեալ նշանակալի մանրամասները»:

---

<sup>1</sup> Նոյն, 272-273:

Անցած մի շաբթ տարիներին, սեմական տարւ ժողովուրդը ա-  
ւերիչ յարձակումներ էր գործում Սումերի եւ Uri-ի (յետագայ Աք-  
քաղի) վրայ, իսկ այդ օրերին նրանք պաշարել էին Երեքը: Սրա  
տեր Էնմերքարը գտնում էր, թէ անհրաժեշտ է օգնութիւն խնդրել  
իր քրոջ միջոցով (որը ուրիշ մէկը չէր, այլ հենց *Արատտայի Ինան-*  
*նա դիցուիհի՛*), բայց չէր գտնում յարմար մէկին, որ կարողանար իր  
օգնութեան-կոչ պատզամը տանելու համար յանձն առներ դէպի  
Արատտա տանող վտանգաւոր ճանապարհորդութիւնը: Այդ ժա-  
մանակ, ներկայանում է Lugal-banda-ն, Երեքի հերոսներից մէկը,  
որ պատկանում էր Էնմերքարի շրջանակին, եւ քաջօրեն կամա-  
ւորուում է գործին: Էնմերքարի պահանջի վրայ, որ խնդիրը պէտք  
է պահուի գաղտնի, Լուգալբանդան առնում է իր զենքերը եւ ա-  
ռանձին անցնում է եօրը լեռներ՝ *Անշանի մի ծայրից միասը*<sup>1</sup> եւ ու-  
րախութեամբ հասնում իր նպատակակետին:

Արատտայում Ինաննան ջերմ ընդունելութիւն է ցոյց տալիս  
Լուգալբանդային եւ հարցնում նրա գալուստի պատճառը: Լուգալ-  
բանդան բառացի կրկնում է Էնմերքարի խօսքերը եւ օգնութիւն է  
խնդրում: Ինաննայի պատասխանը մուր է: Երեսում է, թէ այդտեղ  
խօսք կայ մի գետի մասին, եւ այդ գետի մի անտվոր ձկան շուրջ,  
որին Էնմերքարը պէտք է որ որսայ, ինչպէս եւ ճաւերի մասին, որ  
Էնմերքարը պէտք է շինի: Էնմերքարը անում է այն ինչ պահան-  
ջուում է, եւ պոէմը վերջանում է Արատտային նուիրուած մի գո-  
վերգութեամբ, որ թուում է թէ Էնմերքարին ուղարկել է մետաղա-  
գործներ ու քարագործներ<sup>2</sup>:

Արատտայի տեղադրման մասին Kramer-ը անելով քննական  
դատողութիւններ՝ ասում է, թէ քանի որ պոէմը նկարագրում է, թէ  
*Արատտան Երեք քաղաքից բաժանուած է ամքող Անշան երկրով*  
(որ գիտնականների մեծամասնութիւնը տեղադրում է հարաւ-ա-  
րեւմտեան Իրանում), ապա ծագում է այն հարցը, թէ արդեօք պի-

<sup>1</sup> Նոյն, 273:

Եթէ Անշան լեռներկիրը Զագրոսեան լեռնաշղթան է, որ ձգուում է Էլամից (Ուր-  
միոյ լճի արեւմտեան ափով) մինչեւ Արարատ, ապա «նրա մի ծայրից միասը»  
նշանակում է Սումերի մատոյցներից (Էլամից) մինչեւ Արարատեան աշխարհ:

<sup>2</sup> Նոյն, 273-274: Այս եւ այլ ընդգծումները իմն են (Մ.Գ.):

տի Արատտան փնտրել Անշանի հիւսիսում, Ուրմիա լճի՝ ուղղութեամբ, թէ՝ արեւելքում, Բելուջիստանի ու Հնդկաստանի, կամ հարաւում՝ Լարխատանի ու Պարսից ծոցի ուղղութեամբ։ Եւ աւելացնում է հետեւեալը. «Նորից սումերական մի դիցազնավէպ է, որ կարող է մեզ տալ պատասխանը։ Այս պոէմը, որ կարելի է վերևագրել «Լուգալլադա եւ Hurum լեռը», ..... վեց սինականց մի մեծ սալիկ է, ուր պատմուում է հետեւեալը»։

Էրեքի տէր Էնմերքարը որոշում է գնալ Արատտա՝ նրան վասալ պետութիւն դարձնելու համար։ Նրան ընկերանում են էրեքցիների մի մեծ խոսք՝ դեկավարութեամբ անանուն եօթը հերոսների, որոնց (ըստ պոէմի խօսքերի) ութերորդն էր Լուգալլադան։ Նա հասնում է Hurum լեռը։ Այդ ժամանակ, այդտեղ հիւսնդանում է Լուգալլադան։ Իր եղբայրներն ու բարեկամները ի գործ են դնում ամէն հնար՝ վերականգնելու համար նրան, քայց ոչ մի քան չի օգնում։ Դրա վրայ, նրան մեռած համարելով, որոշում են քողնել Հուռում լեռան վրայ ու շարունակել ճանապարհը, վերադարձին՝ նրա մարմինը Էրեք տանելու մտադրութեամբ։ Բայց Լուգալլադան մեռած չի լինում։ Լինելով լքուած՝ նա աղօքում է արեւի, լուսնի աստուածներին ու Արուեակ (Venus) աստղին, որ վերականգնեն իր առողջութիւնը։ Նա քափառում է բարձրաւանդակի դաշտերում։ Այստեղ էլ պիտի քողնենք նրան, քանի որ ձեռքի տակ եղած տերստը կտրուում է այս կէտում»։

Այնուհետեւ, Kramer-ը Արատտայի տեղի մասին անում է հետեւեալ դատողութիւնը։

«Այս պոէմից պարզ է դառնում, թէ Hurum լեռը գտնուում էր Էրեքի ու Արատտայի միջեւ մի տեղ, եւ քանի որ անիրաւացի չի լինի ենթադրել, թէ Hurum լեռը բուն հայրենիքն էր Վանայ լճի շրջապատի խուրրի ժողովրդի, ապա կարող ենք եզրակացնել, թէ Արատտան գտնուում էր Ուրմիա լճի մօսակայքում, կամ թերեւս աւելի արեւելք։ Յիրաւի, Էնմերքարի դէպի Արատտա կատարած արշաւը կարելի է որոշ չափով համեմատել աւելի քան երկու հազար տարի յետոյ Սարգոն Բ-ի (մ.թ.ա. 714 թուին) դէպի Mannai կատարած արշաւանքի հետ, որի մասին պատմուածների մէջ յիշուում է Արատտա անունվ մի գետից կատարուած անցումի

մասին, մի անուն՝ որը գուցէ պահում է Արատտաքաղաքի (ու Երկրի) անուան յիշատակը»<sup>1</sup>:

## 2. ԱՐԱՏՏԱՅԻ ՏԵՂԻ ՄԱՍԻՆ

Արատտայի տեղի ու նրա՝ Սումերի հետ ունեցած կապի մասին մեր դիտումները շարունակելուց առաջ, անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել (ընդհանրապէս Արատտա եւ Երեք քաղաք-պետութիւնների տէրերի փոխյարաքերութիւնների վրայ հիմնուած) սումերական դիցազնավէպերի այս չորս տարբերակներում աչքի գարնող տուեալների հետեւեալ ամփոփումը.

1. Սիրոյ ու պատերազմի *Ինասմա* դիցուիին պատկանում էր նախ Արատտային, ուր ունէր տուն (տաճար): Յետոյ Էնմերքարը Երեք է բերում Ինաննային ու այտեղ նրա համար հիմնում Եառա տաճարը:

2. Ինաննան քոյրն է համարուել (արեւի աստուած Ստու-ի որդի համարուող) Էնմերքարին:

3. Դիցազնավէպերի տարբերակներից մէկում Էնմերքարը պահանջում է, որ Արատտայի տէրը ենթարկուի իրեն, մի ուրիշում Էնմերքարը օգնութիւն է խնդրում Արատտայից՝ Երեքը ազատելու օտար ու թշնամի Martu-ի կողմից արուած պաշարումից, եւ մերք էլ Արատտայի տէրն է պահանջում, որ Էնմերքարը ենթարկուի իրեն: (Սրանից կարելի է հետեւցնել, թէ այս դիցազնավէպերը մի մեծ եւ ընդհանուր էպոսի առանձին դրուազները կամ հատուածներն էին ներկայացնում):

4. Արատտայի եւ Երեքի միջեւ կամ քաղաքական, կրօնական, մշակութային արտակարգօրէն սերտ կապեր:

5. Երեքը Արատտայից ուզում ու ստանում է մետաղներ ու թանկագին քարեր (ոսկի, արծաթ, լազուարք), շինաքարեր («լե-

<sup>1</sup> Նոյն, 275-276:

ոան քարեր»), մետաղագործներ ու քարագործ-որմնադիրներ, իսկ ինքը Արատտա է ուղարկում ցորեն:

6. Ենմերքարը պահանջում է, որ Արատտայի ժողովուրդը գայ ու կառուցի տաճարներ ու մեհեաններ՝ նրանց թուում եւ Eridu քաղաքի տաճարը:

7. Արատտայից Էրեք՝ մետաղ, շինաքարեր ու վարպետներ փոխադրելու առթի խօսք կայ գետի մասին, գետի անսովոր ձկան մասին, ու նաւերի մասին, որ Ենմերքարից պահանջուում է շինել:

8. Ենմերքարի պատգամատրը, Արատտա հասնելու ճանապարհին, անցնում է 7 լեռներ՝ գնալով Անշան լեռնաշղթայի «մի ծայրից միւսը»: Սա նշանակում է, թէ նա չի անցել Անշանի վրայով մի կողմից միւսը, այլ գնացել է նրա ուղղութեամբ «մի ծայրից միւսը»՝ ճանապարհին անցնելով 7 (այլ) լեռներ, որոնցից կարեւորագոյնն էր Hurum-ը: Հետեւարար, հաւանական է, թէ Անշանը հենց Չազրոս լեռնաշղթան էր, որ երկարում է Էլամից մինչեւ Վասպուրական՝ Ուրմիոյ լճից արեւմուտք:

9. Սումերական Էրեքից դեպի Արատտա տանող ճանապարհի վրայ կայ Hurum լեռը, որին Kramer-ը համարում է Վանայ լճի շրջապատի խուրրի ժողովրդի հայրենիքը:

Արատտայի տեղադրման համար՝ դիցագնավեպում գտնում ենք հետեւեալ ցուցմունքները.

ա. Էրեքի ու Արատտայի միջեւ, ինչպէս ասուեց, կայ Վանայ լճի մօսակայրի խուրրի ժողովրդի Hurum լեռը: Սրա մասին Kramer-ը գրում է. «The Hurrians, as is well known, lived originally on Mount Hurum, the region about Lake Van»<sup>1</sup>: Այդ լեռը, ըստ ցուցմունքի, համապատասխանում է Վանայ լճից վար գտնուած Հարիա լեռներկրին, ուր կայ Ուրուատրի (Խորենացու յիշած Արարադ) լեռնաշղթան: Ուրեմն Արատտան գտնուում էր Հարիա-Ուրուատրից վեր: Չանի որ Հուրրում լեռը գտնուում էր Էրեքի ու Արատտայի միջեւ, ապա Արատտան չէր կարող գտնուած լինել Ուրմիոյ լճից արեւելք՝ Կասպից ծովի շրջանում. որովհետեւ այդպիսի դէպքում, նախ՝ Հուրրումը չէր ընկնի Էրեք ու Արատտա քա-

---

<sup>1</sup> Նոյն, 287:

ղաքների միջեւ, երկրորդ՝ Արատտային պատկանած մետաղի ու քարի հանքավայրերն ել լուրս ու հեռու կը մնային դէպի Սումեր տանող ջրատար ուղիներից: Արատտայի մաշմաշը հաւակնօրէն ասում է, թէ ինք կը հնազանդեցնի բոլորին, ներքեւից վեր, ծովից (Պարսից ծոցից) մինչեւ նայրիների (Ամանու) լեռը: Ուրեմն, Արատտան գտնուում էր այս շրջաններից ուղիղ վերեւներում (ոչ թէ հեռու՝ Կասպից ծովի հարաւային կողմերում):

բ. Արատտայի մետաղն ու շինարարերը Երեք տանելու համար՝ դիցազնավեպում խօսք կայ գետի ու նաւերի մասին: Միջագետքում դէպի Սումեր տանող նաւարկելի գետերն են միայն Տիգրիս ու Եփրատը: Հետեւարար, խօսքը վերաբերում է այս գետերից մէկին: Սա մի երկրորդ փաստ է, թէ Արատտան գտնուում էր Եփրատ ու Տիգրիս գետերի ակնաղբիւրների լեռնաշխարհում: Դիցավեպի տուեալները թելադրում են գետի համար նկատի առնել յատկապէս Հարիս-Հորում լեռներկրի շրջանում կամ նրա մօտից (կամ միջից) անցնող Տիգրիսն ու նրա կարեւոր ճիղն հանդիսացող Մեծ Զարը:

գ. Երրորդ փաստը (թէ Արատտան գտնուում էր Միջագետքի նշուած գետերի հոսանքի վերեւներում) գտնում ենք այն տուեալում, թէ ցորենը Երեքից Արատտա տարել են անասունների վրայ բեռնելով եւ ոչ թէ նաւերով, քանի որ փոխաղբութիւնը չին կարող (կամ դժուար էր) կատարել նաւերով՝ գետի հոսանքն ի վեր:

դ. Աչքի առաջ ունենալով Մեծ Զար-Տիգրիս ջրուղին՝ մենք յատուկ նշանակութիւն ու կարեւորութիւն ենք տալիս նաև դիցազնավեպում գետի անսովոր ձկան մասին եղած յիշատակութեանը: Մեր կարծիքով՝ դա առասպելական երեւակայութեան արդիւնք չէ, այլ բխում է իրական իիմքից: Յիրակի, այդ շրջանում գտնուում է գետերի համար անսովոր մեծութեամբ մի վիթխարի ձկնատեսակ: Համաշխարհային երկրորդ պատերազմից առաջ, անձամբ տեսել եմ դրանցից երկու մետրի մօտ երկարութեամբ հսկայ ձկներ, որոնց բերում ու կտրատելով վաճառում էին Մուսուլ քաղաքում: Մարդ չէր հաւատում, թէ կարող էին գետում ապրել ու աճել այդպիսի վիթխարի ձկներ:

Կարծում եմ, թէ այդ արտասովոր մեծութեան հասնող ձկնատեսակի՝ այդ շրջանում գոյութեան պիտի վերագրել նաև հետեւեալ աւանդութիւնը: Մուսուլ քաղաքին կից, Նինուէի աւերակների փոքր բլրի վրայ, *Ների-Եռունը* (Nebi-Yunes) գիւղի մզկիթի (ժամանակին հեթանոսական իման մեհեանի բլրի վրայ շինուած քրիստոնէական հնագոյն վանքերից մէկի վայրում) խոր ու մութ սենեակներից մէկում, պատից կախուած պահուում է, ինչպէս աւանդականօրէն հաւատում են, «Յովնան Մարգարէին կուլ տուած» ձկան մի մեծ ոսկոր: Դրա համար էլ այդ գիւղը կոչուում է Ների Եռունը՝ «Յովնան Մարգարէ» (սա նոյնացուել է բարելական ձկի աստուած Oannes-ի հետ): Հաւանարար Ս. Գրքից բերուած այդ առասպելը միացել է այդ շրջանում խոր անցեալից (գուցէ ասուրաբարելացիներից) ժառանգուած մի աւանդութեան հետ, որ պիտի կապուած լինի մօտակայ գետում ապրող այդ անսովոր ու մեծ ձկնատեսակի հետ:

Մարգոն Բ-ը, դէաի Մանա կատարած իր արշաւի ճանապարհին, անցնում է Արատտա անունով մի գետ: Այդ գետը կարող է լինել հեռու Արատտա քաղաք-երկրից եւ նրա Արատտա անունը՝ մի երկրորդ կիրառութիւն, ինչպէս կան երկու Խուբուրներ (մէկը ճիւղն է Եփրատի, իսկ միւսը՝ Տիգրիսի) եւ երկու Արարատներ (մէկը Կորդուքում, Արեւելեան Տիգրիսի վրայ՝ հարաւում, իսկ միւսը՝ Արաքսի վրայ՝ հիսխուում): Այսուհանդերձ, Արատտա գետը, ըստ Սարգոնի խօսքերի, երեւի Փոքր Զարի ամենավերին, հիսխային ճիւղն է, որ բխում է Կելիշինի մօտերքից (Մուսափրի հարաւում): Վասպուրականի լեռնաշղթայի հարաւային թեւից եւ գուցէ պահում է այս լեռնաշխարհի հին անուան յիշտակը: Նոյն շրջանից է բխում նաև Արասխ կամ Արաստ (< Արատտա?) գետը, որ քափուում է Ուրմիոյ լճի հարաւային ափին: Արատտա գետը Լուվրի աղիւսակում յիշուում է նոյն շրջանում գտնուած մի քանի լեռների հետ, որոնց մէջ է Sinabir<sup>1</sup> լեռը, որը պիտի համապատասխանի նաիրեան յայտնի 23 երկրների մէջ նշուած Sinibir-ու երկրին:

---

<sup>1</sup> HCS, 15-31:

Այս բոլոր տուեալները թոյլ են տալիս մեզ ենթադրել, թէ Արատտա-Երեք դիցազնավեպում գետի (ու նրա արտասովոր ձկան) մասին եղած խօսքերը վերաբերում են Սեծ Զարին ու Տիգրիսին: Սեծ Զարը արդէն վերեւներում զալով Վասպուրականի լեռներից՝ Հաքքիարիի շրջանում ճեղքում է Ուրուատրի-Հարիա (Hurum) լեռնաշղթան ու Մուսուլից ներքեւ միանում է Տիգրիսին: (Ի հարկէ՝ այս հարցում պիտի աչքի առաջ ունենալ նաև Եփրատը, որ իր Արածանիով Սումերը կապում է Այրարատեան աշխարհի հետ):

Հետեւարար պիտի ընդունել, թէ Արատտա քաղաք-պետութեան երկիրը գտնուում էր Վանայ լճի (Հայոց Զորի եւ Առերանիի) շրջանից սկսած դեպի վեր՝ տարածուելով Արմե-Արիս-Արած-Արածի-Արածանի-Հարք շրջանները (այս անունների համար տեսնել մեր քարտէսը, համար 4), մէկ խօսքով՝ Այրարատ կոչուած աշխարհը՝ կենտրոն ունենալով Սալմանասար Գ-ի յիշած Էրիտիա (< Արատտա?) լեռը Արամալիի մօտ ու Արարատը:

Արարատ (կամ Այրարատ) անունը ծագած է համարուում Ուրարտու անունից: Բայց արդէօք ինչո՞ւ այս լեռն է կոչուել Արարատ եւ ոչ թէ Ուրարտուի կենտրոն հանդիսացող Վանին (ու Վանայ լճին) աւելի մօտ մէկը. օրինակ՝ Նեմրութը, Սիփանը կամ Վարազը: Մանաւանդ որ արդէն կար Խորենացու յիշած Արարադը (Ուրուատրին՝ Վանայ լճից հարաւ): Հետեւարար, անհաւանական չէ, որ նախապէս այն կոչուած լինի Արայի անունով կազմուած մի անուանաձեւով, ինչպիսին է Արատտա-ն:

Deimel-ը հաւանական է համարում, որ aratta բառը իրականում ունեցած լինի ar-ar-ta կազմութիւն: Արարտա-ն (երեւի երկրորդ r-ն՝ յաջորդող ու կից տ-ի ազդեցութեամբ հնչուելով նոյնպէս տ) դարձել է Արատտա, այնպէս ինչպէս սումեր barbar կրկնաւորը (որի առաջին r-ն՝ յաջորդող ու կից b-ի ազդեցութեամբ հնչուելով նոյնպէս b) դարձել է babbar («արեւ»): Այսպիսի դէպքում, Արարտա կը նշանակէր «արեւի երկիր»: Արդէն Արարատ անունը կարող է ծագած լինել, Ուրարտու եզրից աւելի, Արարտա ձեւից (տաւատ). ճիշդ այնպէս ինչպէս Խորենացու յիշած Արարադ տեղանունը կարող է ծագած լինել, Ուրուատրի-ից աւելի, Սարգոն

Բ-ի յիշած *Ուրարդի* ձեւից կամ Աշշուրնազիրպալ Բ-ի յիշած (նոյն շրջանի) *Արարդի*<sup>1</sup> լեռնանունից:

Երեսում է, թէ *Արատտա* (կամ *Արարտա*) անուան հիմքում կայ *Ար* (Արա) արմատը: Թուում է, թէ այն ունի Արա(տ)տա կամ *ար-ար-տա* կազմ, *որպէս կրկնաւոր*, որին կարելի է համեմատել մեզ յայտնի Խոռխոռունի, *Su-su-ku*, *Հահա* եւ այլ կրկնաւորների հետ: Այն պիտի նշանակած լինի «Ար-ի վայր» (Արա-տա) կամ «արերի քաղաք-երկիր» (Ար-ար-տա): Համեմատել ուրարտական արձանագրութիւնների մեջ յիշուած *Բարուտտա* երկրանունը, որը ասսուրերէն կոչուել է *Բիտ-Բարրուա*<sup>2</sup> («սոուն Բարրուայի»), որով *Բարուտ-տա* ձեւի տեղանուանական (*սոուպնիմական*) –տա վերջաւորութիւնը համապատասխանում է *Բիտ-Բարրուա* ձեւի *բիտ* («սոուն, քաղաք-երկիր») քաղադրիչին (հմնտ. արաք. *beit* «սոուն»): Ուստի, թուում է, թէ *Արատտա* (Արարտա) նշանակում էր «Ար-ի տուն» կամ «Արայի երկիր», որին իմաստով համապատասխանում են թէ *Այրարատ*<sup>3</sup> («Արայի դաշտ») եւ թէ *Ուրարտու/ Ուրարդի*<sup>4</sup> («վայր Արդի-Արայի») անունները:

Խորենացու պահած տեղեկութիւններից արդէն գիտենք, թէ *Այրարատ* նշանակում է «Արայի դաշտ». նա գրում է. «(*Ծամիրամ* գայ հասանել տագնապաւ ի դաշտն *Արայի*, որ եւ յանուն նորա անուանեալ *Այրարատ*»: Սիամանանակ մեզ յայտնի է, թէ ուրարտական *Արդի* («արեւ») դիցանունը համապատասխանում է Արային: (Այս իրողութիւնը ցոյց կը տրուի նաեւ վարը, *Նուարդի* մասին խօսուած քաժնում): Իսկ մեր նախորդ գործերով ցոյց ենք տուել

<sup>1</sup> ARAB, 143:

<sup>2</sup> Բիայնիլի, 134-216:

<sup>3</sup> Արարատ անուան Այրարատ ձեւը իր յ ձայնով դեռ չէ քացարուած. եւ դժուար է քացարել Ուրարտու եզրով: Այն կարող էր առաջանալ աւելի Արարտա (>Արարատ), քան թէ Ուրարտու ձեւից: Հմնտ. արի-այր:

<sup>4</sup> Երեւի Aratta տեղանուան հետ կապ ունի սումեր aratta («վեհութիւն, մեծութիւն») բառը: Deimel-ը ար կամ ara («փայլ») արմատն է տեսնում սումեր aratta բառում եւ հաւանական է համարում aratta-ի ar+ar-ta կազմութիւնը: Սիամանակ նա կապ է տեսնում aratta բառի եւ նոյն ar («փայլ») արմատն ունեցող ar-du եզրի միջեւ (SAG, տե՛ս aratta եւ ar, սրա տակ էլ` ar-du): Այս արդու քառարմատն է արդէն նատած Ուր-արդու (Ուրարտու) անուան մեջ:

(Եւ դեռ վարն էլ ցոյց կը տանք), թէ Ուրարտու կամ, ըստ Սարգոն Բ-ի գրութեան, Ուրարդի (Ուր-արդի) նշանակում է «վայր Արդիի»՝ «երկիր Արայի»: Սա արդէն համապատասխանում է Այրարատ («Արայի դաշտ») անուանը: Որով՝ զուցէ Ուրարտու (Ուրարդի, Ուրատրու կամ Ուրու-ատրի) անոնք սեպագրական ուշ շրջանի արտայայտութիւնն է Այրարատ (Արարատ) կամ Արատտա (Արարտա) անուան:

Արդէն երեսում է, թէ Արատտա (կամ Արարտա) անունը պատկանում է Հայկական լեռնաշխարհի՝ Ար կամ Արա անունով կազմուած տեղանունների շարքին ու շրջանակին:

Հետեւաբար, պիտի ընդունել, թէ Արատտան հանդիսանում է Հայկական լեռնաշխարհի քաղաք-պետութիւններից մեզ այժմ յայտնի հնագոյնը, որը զոյութիւն է ունեցել մ.թ.ա. III հազարամեակի սկզբներին եւ հաւանաբար նաեւ IV հազարամեակի վերջերում, եւ որի յիշատակը, մեծ հաւանականութեամբ, պահպանուել է Այրարատ (<Արարատ>) անուան մէջ:

Ինչպէս ասացինք, թէեւ Արատտայի ու Էրեքի (որով Սումերի) միջեւ եղած այդ հին կապերի ու յարաբերութիւնների մասին բերուած տեղեկութիւնները մեզ հասել են սումերական մի քանի շարք սեպագիր սալիկների վրայ 1500-ից աւելի տողերով պահուած դիցազներգական պոէմների ձեւով ու միջոցով. սակայն, դրանք, ինչպէս ասել ենք, խոր անցեալի (պատմական՝ գրաւոր շրջանի սկզբների) պատմագրութեան բուն ու միակ ոճաձեւերն էին, եւ որոնք արժէքաւոր արձագանգներն էին հանդիսանում պատմական իրական դէպերի ու ընկերային-տնտեսական իրավիճակի:

Ուստի, զունում ենք, թէ այդ դիցազնավեպի (*Էպոսի*) չորս տարբերակներում պահուած տեղեկութիւնները շատ մեծ ու անգնահատելի արժէք ունեն Եփրատ ու Տիգրիս գետերի ակնաղբիւթների վայր հանդիսացող Հայկական լեռնաշխարհի հնագոյն ժամանակաշրջանի պատմութեան համար:

Դրանք խոր անցեալի խաւարը ճեղքող ճառագայթներ են կարծես, որոնք մի պահ լոյս են սփռում պատմագրութեան համար դեռ մուր եղող այդ կանուխ ժամանակներում (մ.թ.ա. III հազար-

մեակի սկզբներում) Հայկական լեռնաշխարհի ժողովրդի քաղաքական, ընկերային, կրօնական, տնտեսական ու մշակութային գոյավիճակի շուրջ, ինչպէս եւ Սումերի հետ ունեցած հին կապի ու փոխյարաքերութիւնների վրայ, որոնց մասին դեռ առիթ կ'ունենանք խօսելու յաջորդ գլխում:

Արատտայի ու Էրեքի միջեւ նկատուում են նաև պետական կառուցուածքի համանմանութիւններ: Երկու քաղաք-պետութիւնների գլխում եղել են «*en»-ը* (քուրմ-արքա) եւ «*ձեղոեր»-ի* (երեսի համայնքների) խորհուրդը. Երկու երկրներն էլ ունեցել են վարչական-քաղաքական ու պետական գործերի նոյն տիպի բաժանմունքներ՝ նոյն տերմիններով կոչուող պաշտօններ ու պաշտօնեաններ (*ensi, sukkal, shatam, ragaba, ugula*)<sup>1</sup>:

Դիցազնավէպէրում աչքի է զարնում Արատտայի ու Էրեքի (որով Սումերի) միջեւ եղած կրօնական կապը: Սիրոյ ու պատերազմի Inanna դիցուիին, որ սումերական է համարուում (եւ որին սեմականները նոյնացնում են մերք *Իշտարի* հետ), ըստ տրուած տեղեկութիւնների, նախապէս պատկանել է Արատտային, իսկ նրան Էրեք քերել տուողը եղել է հենց ինքը՝ Ենմերքարը<sup>2</sup>: Ինչպէս տեսանք, Ենմերքարը Արատտայի *Ինամնայից* խնդրում է միջամտել, որ Արատտան գայ օգնութեան՝ Էրեքը ազատելու մարտու կոչուած թշնամինների պաշարումից: Եւ ինչպէս տեսանք՝ Ինամնան Արատտայում սիրալիր ընդունելութեան է արժանացնում Ենմերքարի պատգամաւոր Լուգալբանդային:

Դիցազնավէպում Ինամնան հանդիսանում է գերազոյն ուժը: Ենմերքարի պատգամաւորը Արատտայում օգնութիւնը նրանից է խնդրում: Ուրեմն, նրա ձեռքում է գերազոյն իշխանութիւնը. նրա կամքը ունի վճռորոշ նշանակութիւն: Սա արդէն ցոյց է տալիս, թէ այդ ժամանակներում դեռ բոլորովին չեր վերացել մայր-իշխանութեան գաղափարը Արատտայում, եւ ընկերային այդ համակարգը դեռ որոշ չափով պահպանուել եւ ուժի մէջ էր Ինամնա դիցուիու գերիշխանութեան հանգամանքով: Նա հանդիսացել է մայրն ու հովանաւորը իր ժողովրդի ու երկրի: *Ինամնայի* այս

<sup>1</sup> Sumerians, 274:

<sup>2</sup> Նոյն:

հանգամանքը աւանդականօրէն գոյատեւել է հազարամեակներ, ու հեթանոսութեան վերջին դարերում արտայայսուում էր *Անսհիսուով* որպէս հովանաւորող մայրը հայոց աշխարհի:

Moris Jastrow-ն գրում է, թէ Ասորեստանը ունէր միայն մէկ դիցուիի՝ *Իշտարը*, որը սեմական դիցարանում ունէր այն արժեքը ինչ Սումերում ունէին Nana, Nina, Ninni, Inanna եւ Anunit դիցուիիները<sup>1</sup>: Ուստի, պիտի ընդունել, թէ Anunit (Անահիտ) եւ Inanna անուանաձեւերը հանդիսանում էին նոյն դիցուիու նոյն անուան տարբերակները:

Պարզ է ուրեմն, թէ Հայաստանում, հեթանոսութեան աւելի ուշ շրջանին, Ինաննան երեւում է Անահիտ (մերք Նանէ) անունով: Սրանց կրծաստ Նու ձեւը (քարդութեան մէջ) առաջին բաղադրիչն է հայկական դիցուիի *Նուարդ* (*Նու-արդ*) անուան, որ կինն էր արեւի աստուած *Արայի:* *Արան*, Ուրարտուի ժամանակ, մերք երեւում է ածանցուած *Ար-դի* (*Արդի*) անուանաձեւով, որը, ինչպէս երեւում է, երկրորդ բաղադրիչն է *Նու-արդ* անուան: Հայերէնում նու բառը պահպանուել է «հարս» իմաստով: Այնալիս որ Նու-արդ նշանակում էր «*Նու-Արդ-ի*», այսինքն՝ «հարսը՝ կինը *Արայի»:* Արդէն Խորենացու գրանցած տեղեկութիւններից զիտենք, թէ Նուարդը կինն էր *Արայի*<sup>2</sup>:

Սումերում Inanna-ի (Քարելոնում *Իշտարի*) ամուսինը Dumuzi-ն (*Թամմուզ*) էր, որին, իր նկարագրից ելնելով, հայագէտները արդէն նոյնացնում են *Արայի* հետ<sup>3</sup>: Որով՝ հաստատ է, թէ Նուարդը ինը Ինաննան է:

Ուստի պիտի ընդունել, թէ Ինաննա դիցուիին (հակառակ անցած հազարաւոր տարիների վերիվայրումներին ու փորձութիւններին) պահպանուած լինելով *Նուարդ* եւ *Անսհիս* անուններով՝ հանդիսանում էր Հայկական լեռնաշխարհի, այսինքն՝ Արատտայի (կամ Ararta-ի) «Արայի Երկրի» հովանաւոր մայրը եւ պտղաբերութեան ու ուազմի բնիկ աստուածուիին: Մի իրողութիւն, որի մասին, ինչպէս տեսանք, ուղղակի եւ հաստատ յիշատակութիւններ

<sup>1</sup> RBA, 80:

<sup>2</sup> Խորենացի, Ա-ի:

<sup>3</sup> ԱԳ-Պ, 161: Տես նաև ՀԱՀ, Ա. Նազիննանի «Արա Գեղեցիկ» յօդուածը:



Անահիտ:

Են պահպանուել Արատտայի ու Էրեքի (Հայկական լեռնաշխարհի ու Սումերի) հին յարաքերութիւնների ու սերտ կապերի մասին խօսող սումերական դիցագնավէպերում:

Էրեքի արքայ Ենմերքարը համարուել է «արեւի աստուած Ստո-ի որդին»: Ուրեմն, Ինաննային համարելով նա իր քոյրը՝ Էրեքի եւ Էրիդուի տաճարների կառուցման համար Արատտայից պահանջել է քարազործ վարպետներ: Սա յիշեցնում է մեզ յայտնի այն դէպքը, երբ Բիւզանդիայի հսյազզի Վասիլ Կայուրը, 10-րդ դարի վերջերին (մ.թ.յ.), իր նախնիների երկիր եղող Հայաստանի (Բագրատունիների ժամանակ) մեծահամբաւ ճարտարապետ Տրդատին<sup>1</sup> է հրաւիրում կառուցելու համար Պոլսոյ Այա-Սոֆիա տաճարի՝ երկրաշարժից փլած (30 մետրից աւելի տրամագիծ ունեցող) մեծ զմբեթը, որը անելու համար կարող վարպետ չի գտնուել տեղում այդ ժամանակ<sup>1</sup>:

Ենմերքարը Էրեքի եւ Էրիդուի տաճարների կառուցման ու զարդարման համար Արատտայից պահանջել է ոչ թէ միայն քարազործ վարպետներ, քանդակագործներ ու մետաղագործներ, այլ

<sup>1</sup> Թ. Թորամանեան, ՀԱ, 42:

եւ (ցորեն ուղարկելով՝ փոխարէնը) խնդրել է մետաղներ («ոսկի, արծաք»), թանկագին քարեր («կարնելիան, լազուարթ») եւ շինաքարեր («զեռան քարեր»): Սրանից հասկացուում է, թէ Հայկական լեռնաշխարհի ժողովրդի տնտեսութիւնը արդէն մ.թ.ա. III հազարամեակի սկզբներին հարուստ էր գունաւոր ու արժեքաւոր մետաղների, թանկագին քարերի ու շինաքարերի արդինահանմանք, թէ նրանք արդէն հասել էին մետաղամշակման ու քարագործութեան զարգացման նշանակալի եւ (շրջապատի համեմատութեամբ) բարձր աստիճանի, թէ արդէն այդ կանուխ ժամանակներում ունէին տաճարներ ու մեհեաններ կառուցելու ու զարդարելու համար կարող մետաղագործ վարպետներ, քանդակագործներ ու որմնադիր-ճարտարապետներ, որոնց համբաւը տարածուել էր հեռաւոր երկրներ, ու նրանց պահանջն էին զգում անգամ զարգացած Սումերում, որը գուրկ էր նշուած շինանիթերից ու համապատասխան վարպետներից:

### 3. ԱՐԱՍՏԱ ԵՒ ԱՅՐԱՐԱՏ

---

*Արատտայի տեղադրման կապակցութեամբ ուզում ենք այստեղ մատնանշել յատկապէս Հայաստանի Արարատեան դաշտում յայտնաբերուած (մ.թ.ա. IV հազարամեակից մինչեւ ուշ միջնադար գործած) հոգեւոր ու նիրական մշակոյթի (մասնաւորապէս մետաղամշակման) հին ու նշանաւոր կենտրոն Մեծամօրը, որի մասին այստեղ կը բերեմ «Հայկական Սովետական Հանրագիտարան»ում լոյս տեսած՝ յայտնի հնագէտ Է. Խանզադեանի յօդուածի հետեւեալ կարեւոր մասը. -*

*«ՄԵԾԱՍՈՐԸ հնագոյն ամրոց-բնակատեղի է Արարատեան դաշտում, Մեծամօր գետի ակունքների մօտ ...: Բուն անունը յայտնի չէ, ուստի հնավայրը գետի անունով (այժմ պայմանականօրէն) կոչուում է Մեծամօր...: Հնագոյն բնակատեղին գտնուում է միջին անթրոպոգենեզի շրջանի հրաբխային կոներից մէկի վրայ եւ շրջակայ հարթավայրում ունի 30 հա տարածք: Գրեթէ բոլոր կող-*

մերից շրջապատուած է ջրերով, հիւսիս-արեւմուտքից եզերուում է Սեծամօր գետով, իսկ արեւելքից պաշտպանուել է արհեստական խրամատ-ջրապատճեցով: Հնագիտական պեղումներով ապացուցում է, որ Սեծամօրը մ.թ.ա. IV հազարամեակի կէսերից մինչեւ ուշ միջնադար անընդմէջ բնակեցուած է եղել: Պեղուած մշակութային շերտերը վերաբերում են բրոնզի դարաշրջանի (վաղ, միջին եւ ուշ) փուլերին, վաղ եւ զարգացած երկարի ժամանակաշրջանին (նախառարատական, որպատական եւ անտիկ) ու միջնադարին: Սեծամօրը Արարատեան դաշտի վաղ բրոնզի դարաշրջանի (մ.թ.ա. III հազարամեակի) մշակոյթի կենտրոններից մէկն է: Սեծամուրի վրայի ամրոցը պաշտպանուած է եղել աշտարակաւոր կիկլոպեան պարսպով, որից դուրս, լայնադիր դարաւանդներում կառուցուած են եղել կացարաններն ու տնտեսական շինութիւնները: Յայտնաբերուած նիւթերն ապացուցում են, որ Սեծամօրում զարգացած են եղել երկրագործութիւնը, անասնապահութիւնը եւ արհեստները: Պաշտամունքային նշանակութեանը զուգընթաց Սեծամօրի վորք բրաչարքն ունեցել է նաեւ աստղագիտական նշանակութիւն, եւ, ինչպէս ուսումնասիրութիւններն են հաւաստում, մ.թ.ա. 2800-2600-ին այնտեղ դիտուել է Սիրիոսի ծագելը (որի երեւան զալը հաւանաբար կապել են նոր տարուայ սկզբի հետ եւ երկրապագել): Սեծամօրում բաց երկնքի տակ կատարուող ծիսական արարողութիւններին ծառայող զիկկուրատ-աստղադիտարանի եւ Սոխորաբուրի մոնումենտալ աշտարակի ուսումնասիրութիւնների հիման վրայ հաւանական է համարուում այդ տաճարների շուրջը զիւղական համայնքների համախմբման ու քաղաքների առաջացման հնարաւորութիւնը, այսինքն՝ մ.թ.ա. 3-րդ հազարամեակում Հայկական լեռնաշխարհում «քաղաքային յեղափոխութեան» առկայութիւնը, որի հետեւանքով խարիսկուեցին նախնադարեան հասարակարգի հիմքերը....:

«Հօր կիկլոպեան պարիսպներով պաշտպանուած ամրոցում հիմնականում կենտրոնացուել են իշխանաւորների եւ քրմական դասի բնակելի շինութիւնները, տաճարական համալիրն ու գլխաւոր արտադրական միաւորները (ձուլարաններ, արհեստանոցներ, մետաղի հարստացման կառոյցներ): Նախառար-

տական քաղաքը քաղկացած է եղել միջին ու ստորին խաւերի բնակելի թաղամասերից: Քաղաքն ունեցել է առանձին սրբատեղի, որի մի հասուածը պահպանուել է «Կարմիր Քարեր» կոչուղ տեղամասում:

«Պեղածոյ միթերից երեսում է, որ քաղաքի բնակչութիւնը զբաղուել է արհեստներով, առեւտրով, երկրագործութեամբ, այգեցործութեամբ, բանջարաբուտանային մշակոյրով: Գոյութիւն է ունեցել ձուլման գործի հետ կապուած խոշոր արտադրութիւն, որի մասին վկայում են աղիսակերտ եւ գլանաձեւ ձուլարանները, դրանց մօս յայտնաբերուած թափոնների կոյտերն ու ձուլման կաղապարները: *Սեծամօրում խոշոր շափով զարգացած անասնակահութիւնը նպաստել է գոյքային շերտաւորման խորացմանը:* Այդ են վկայում միջնաբերդից շուրջ 0.5 կմ արեւելք եւ հիւսիսարեւմուտք տարածուող դամբարանադաշտում (որն զբաղեցնում է մօս 50 հա մակերես) պեղուած առաջնորդների, աւագանու այլ ներկայացուցիչների քարակերտ հակայածաւալ դամբարաններն՝ օղակուած առիսօնի եւ ձիու քարձրաքանդակներով զարդարուած սալերով: *Դամբարանի կենտրոնում պատզարակի վրայ քաղուել է առաջնորդը՝ ոսկուց, արծաթից, բրոնզից, անազից պատրաստուած զանազան իրերի, սարդինից, ազաթից, սաթից, ապակուց եւ մածուկից պատրաստուած ձեւավոր ուլունքների, քազմագոյն ջնարակով պատած կաւամանների, որսի տեսարաններով զարդանդակուած խեցեղենի, քարէ սկահակների հետ, որոնք խօսուն վկաններն են տեխնոլոգիական նորոյթներով յագեցուած տարատեսակ արհեստների, յատկապէս ակնագործութեան ու մետաղամշակման զարգացման բարձր մակարդակի: *Առաջնորդի հետ քաղուել են նաև ծառաներ, ստրուկներ, նժոյզներ, խոշոր ու մանր եղջերաւոր կենդանիներ (հաւանաբար որսաշներ): Սակայն, յայտնաբերուածների շարքում ամենանշանաւորը օնիքսից պատրաստուած գորտի քանդակն է, որը սեպազիր արձանագրութիւնով քարելական կշռաքար է: Այն թուագրուում է մ.թ.ա. XVI դ»<sup>1</sup>:**

<sup>1</sup>ՀԱՀ, տես Սեծամօր, 439 (ընդգծումները իմն են, Մ.Գ.):

Աչքի առաջ ունենալով (մ.թ.ա. մինչեւ IV հազարամեակի կեսը խորացող) այսպիսի մեծ ու իին անցեալ ունեցող Մեծամօրի ներկայացրած այս նիւթական շօշափելի փաստերը՝ փորձում ենք անհաւանական չհամարել, որ այս քաղաքում պահպանուած լինի սումերական դիցազնավէպերին նիւթ դարձած այդ նշանաւոր Արատտա քաղաքը (կամ նրա երկրի մի կարեւոր քաղաքը): Մեծամօրում կան, այս միտքը թելադրող, մեկից աւելի ու տարբեր բնագաւառի տուեալներ, որոնցից աչքի են զարնում հետեւեալները.

1. Սումերական նշուած դիցազնավէպերին նիւթ դարձած պատմութիւնը վերաբերում է մ.թ.ա. III հազարամեակի I քառորդին: Մեծամօրն էլ գործում էր այս ժամանակ:

2. Մեծամօրը գտնուում է Արարատեան դաշտում, որը մի մասն է Այրարատ կոչուած երկրի, իսկ, ինչպէս տեսանք, Այրարատը իր աշխարհագրական դիրքով (կարծես եւ անուամբ) համապատասխանում է Արատտային:

3. Մեծամօրը իր ձուլարաններով, արհեստանոցներով, մետաղի հարստացման կառոյցներով ու մետաղի բափոնների կոյտերով հանդիսացել է մետաղամշակման մեծ կենտրոն: Սիամանակ՝ այստեղ յայտնաբերուած *ոսկոց, արծաթից, պղոնզից ու անազից* շինուած իրերը եւ *ազաթից, սաթից, ապակոց ու մածուկից* պատրաստուած ուլունքներն ու զարդեղները ցոյց են տալիս ոսկերչութեան ու ակնագործութեան բարձր մշակոյք:

Այս բոլորը լրի արդարացնում են, որ Ենմերքարը *Էրեքի* եւ *Էրիդուի* տաճարների կառուցման ու զարդարման համար Արատտայից (անգամ ցորեն ուղարկելով) պահանջի *ոսկի, արծաթ, քանազին քարեր ու մետաղազործներ*<sup>1</sup>:

<sup>1</sup>Արատտայի հարցի համար հետաքրքրական է Արարատեան դաշտի արեւելքում գտնուած Արցախ գաւառը, որը Ուրարտուի ժամանակ կոչուում էր Արդախ, Ուրդեխս եւ որը ոսկու (Չողում), արծաթի, պղնձի եւ այլ մետաղների հառուստ հանքավայր է: Պիտի աչքի առաջ ունենալ եւ Սալմանասար III-ի յիշած Էրիտիա լեռը, Վանայ լճից վեր, կամ Էրիդիա քաղաքը, որին յիշել է Իշպուհնին: Սա յիշեցնում է Սումերի Էրիս քաղաքի անունը, որի տաճարի կառուցման գործում հիմնական դեր է վերագրուում Արատտայի մարդկանց: Արդեն սումերական նախաչրեղեղեան առաջին արքայատոհմի H.A.A<sup>KI</sup> (=Eridu) քաղաքը արքադական քարգմանութիւններում բերուում է որպէս Subari: Ուստի, այդ քաղա-



Ձարտէս 5: Էրեք, Հուրում և Արատտա:

Մեծամօրում կառուցուած են ոչ թէ միայն կիկլոպեան պարիսպներ ու աշտարակներ, այլ եւ տաճարային ու բնակարանային կառոյցներ: Արարատեան աշխարհը շատ հարուստ է բազալտով, մարմարով ու տարբեր տեսակի շինաքարերով եւ ամենահա-

---

քը կարող էր կառուցուած լինել վերեից (Հայկական լեռնաշխարհից) իջած սուբարիների անունով: (Այս մասին տե՛ս I. Gelb, HS, 31):

րուստը աշխարհում՝ թերեւ ու գեղեցիկ տուֆ քարով. մի բան՝ որը նոյնպէս արդարացնում է տաճարների կառուցման համար Էնմերքարի՝ Արատտայից «զեռան քարեր» ու համապատասխան քանդակործներ ու քարագործ վարպետներ խնդրել-պահանջելը:

4. Ինչպէս տեսանք, հնագիտութիւնը երեւան է հանել, թէ Մեծամօրում, մ.թ.ա. 2800-2600 թուերին, դիտել են Սիրիուսի աստղի ծագելը եւ երկրպագել: Դժուար է նաև անցնել կողքով այս կոնկրետ փաստի: Մենք յասով ուշադրութիւն ենք հրաւիրում նաև այս արժեքաւոր տուեալի վրայ: Նախ պիտի ասել, թէ Էնմերքարը ապրել է հենց այս ժամանակներում: Լինելով մեծ հայրը Գիլգամեշի (մ.թ.ա. մօտ 2680թ.), նա պիտի ապրած լինի մ.թ.ա. 2750 թուերի շուրջ: Երկրորդ՝ դիցազնավեպերի տուեալներից գիտենք, թէ Ինաննա դիցուիին պատկանել է Արատտային: Ուստի, հնարաւոր է, որ Ինաննան հենց Սիրիուս/<sup>1</sup> էր այդ ժամանակ, որի ծագելը իրենց մօտ՝ համարել են նշան, որ նա պատկանում ու հովանաւորում է նրանց: Ահա թէ ինչո՞ւ՝ Արատտայի արքան Էնմերքարին (պատգամաւորի միջոցով) հաղորդում է, թէ Ինաննան չի լրել Արատտային ու իր տունը (աստղադիտական եղած *զիզզուրատտաձարը*) այստեղ:

Ասացինք թէ Ինաննան Անահիտն է, որը հովանաւորող մայրն էր հայոց աշխարհի: Իսկ, ըստ Մելիք-Փաշայեանի, հնում Այդը լիճը եւ Սեւ Չուր գետը, որի վրայ է գտնուում Մեծամօրի հնափայրը, Մեծամօր են կոչուած եղել Անահիտի անունով<sup>2</sup>: Հետաքրքրական է սա, եթէ ճիշդ է<sup>3</sup>:

5. Մեծամօրի (ընդհանրապէս Այրարատի) եւ Սումերի միջեւ կրօնական կապերի եւ համանման հաւատալիքների ու սովորութիւնների համար կարելի է ապացոյց համարել նաև Մեծամօրում, քարակերտ հսկայ դամբարանում, *առաջնորդի կողքին քանկազին իրերի հետ՝ ծառաների, ստրուկների, մժոյզների, խոշոր ու մանր եղջերաւոր կենդանիների քաղուած լինելու երեւոյթը*: Սա յիշեց-

<sup>1</sup> Ինաննային սեմիտները նոյնացրել են Իշտարի հետ, որը մարմնաւորել է Վեներային:

<sup>2</sup> ԱԴՊ, 134:

<sup>3</sup> Անհաւանական չէ, որ Մեծամօր եզրը նշանակած լինի «մեծ ճահիճ»:

նում է Սումերի Ուր քաղաքում անգլո-ամերիկեան հնագիտական արշաւախսմբի՝ C. L. Woolley-ի ղեկավարութեամբ յայտնաբերուած դամբարանը, ուր հանգուցեալի պատկած սենեակի դրան առաջ թաղուել են նաև մարդիկ, կանայք եւ կենդանիներ՝ իրենց սարքերով<sup>1</sup>: Ի հարկէ այս սովորութիւնը ունեցած կը լինեն եւ ժողովուրդներ անցեալում, սակայն Հայաստանում այդ սովորութիւնը այնքան հին ու խոր արմատներ է ունեցել, որ այն յարատեւել է հազարամեակներին: Խորենացին գրանցել ու պահել է տեղեկութիւն, որ հայոց Արտաշէս արքան թաղուել է մեծ շուքով. «Նրան թաղել են ոսկէ դագաղում, բազմարի արդ ու զարդերով, զէմքերով: ... ու շատերը Արտաշէսի սիրելի կանանցից, հարճերից եւ ծառաները մեռան կամ, ինչպէս Խորենացին է մեկնարանում, կոտորուեցին ըստ հեթանոսական սովորութեան ու հետո թաղուեցին»<sup>2</sup>:

6. *Արատտա-Այրարատի* կապն ու հաղորդակցութիւնները հարաւային Միջագետքի (Սումերի ու յետոյ էլ Բարելոնի) հետ, Եփրատ-Տիգրիսի վրայով, շարունակուել են հազարամեակներով: Դրա շօշափելի փաստերից մէկն է նաև Սեծամօրում յայտնաբերուած գորսի քանդակով ու սեպազիր արձանագրութեամբ բարելական կշռաքարը, որը պատկանում է մ. թ. ա. II հազարամեակի կէսին եւ շատ բան է ասում Բարելոնի համար կշռուելիք բանկազին մետաղների ու քարերի եւ որով նրա հետ կատարուած առեւտքի մասին:

Բարելոնի հետ Հայաստանի ունեցած առեւտրական կապերը շարունակուել են այս կշռաքարի ժամանակներից յետոյ էլ, դեռ հազարաւոր տարիներ: Դա եղել է Տիգրիս ու Եփրատ ջրուղիներից թելադրուած բնական ու հաստատուն աւանդոյթ: Այս մասին կոնկրետ տեղեկութիւններ է պահել Հերոդոտը, որը վկայում է, թէ

<sup>1</sup> J. H. Breasted, AT, 151: Նա գրում է. «Very early tombs recently found at Ur have disclosed the dead man's bodyguard, his servants, male and female, his draft oxen still yoked to the chariot, all lying slain at the door of the burial chamber, that they might accompany their master and continue to serve him after death». սեն նոյն, էջ 150:

<sup>2</sup> ՀԺՊ, 897:

մարդիկ, գալով արմէնների կողմերից, Եփրատ գետի վրայով առեւտուր են անում Բաբելոնի հետ<sup>1</sup>:

Արդէօր ինչպէ՞ս բացատրել Արատտայի ու Էրեքի միջեւ (Հարաւային Սիցագետքում սումերների կեանքի այդ վաղ շրջանում) եղած այս արտակարգօրէն սերտ եւ դիցազնավեպերի նիւթ դառնալու չափ կարեւոր կապերը: S. Kramer-ը Արատտայի մասին գրում է. «A far-off city-state ... which owes its fame and name not to its own achievements, though these seem to have been quite a few, but to the bards and poets of Sumer who, for some as yet undiscovered reason, sang of its metals and stones, its craftsmen and artisans, its boldly challenging en... and its beloved goddess, who seems to be none other than Inanna of Sumer»<sup>2</sup>:

Ինչպէս ասացինք, դիցազնավեպերի մէջ պատմուածների հաւաստիութիւնը գնահատելիս՝ պիտի մտքից չհանել, թէ դրանք տուեալ ժամանակաշրջանի պատմագրութեան միակ ոճածեւերն էին. ու թէեւ մենք այդտեղ ներկայացուած դէպքերի առասպելատիավ ընթացքն ու պատումը չենք ընդունում տառացիօրէն, սակայն եւ այնպէս դրանց մէջ կան շատ բաներ, որոնք ունեն իրական հիմք, որոնց պիտի տալ պատմական իրողութիւններին համազօրի արժէք: Օրինակ՝ մենք (ի հարկէ) բառացիօրէն չենք ընդունում երկու կողմերի քազաւորների ամէն մի խօսքը որպէս իրականութիւն, եւ այդ ամէն մի խօսքի պատասխանի համար պատգամաւորի (իրարից այդքան հեռու Էրեքի եւ Արատտայի միջեւ) այդքան (շուտ-շուտ) երթեւեկելը, այսուհանդերձ՝ չենք անտեսում առաքելութեան բուն իմաստը:

Դիցազնավեպերում պահպանուած տեղեկութիւնները Սուլմերի հնագոյն քաղաքներից եղող Էրեքի և Էրիշուի տաճարների կառուցման ու զարդարման գործում կարեւոր մասնակցութիւն են Վերագրում Արատտային: Այլ խօսքով՝ արատտացինները (իրենց քանիկազին մետաղներով, քարերով ու վարպետներով) կարեւոր դեր են խաղացել այդ քաղաքների տաճարների կառուցման ու

<sup>1</sup> Հերոդոտ, I, 194: Տե՛ս Լէօ, I, Երեւան, 1966, էջ 277:

<sup>2</sup> Sumerians, 269:

զարդարման գործում, որի նախաձեռնութիւնը վերագրուում է Ենմերքարին:

Երեքի եւ Արատտայի միջեւ նշմարուող նիւթական ու հոգեւոր մշակոյթի այդ սերտ կապերի պատճառների մասին կարելի է տալ մէկից աւելի (իրարից տարրեր) բացատրութիւններ:

1. Ոմանք ենթադրում են թէ սումերները կարող են եկած լինել հիւսիսից: Ուրեմն, Եփրատ ու Տիգրիս գետերով դէպի հարաւային Սիհագետք իջնելոց առաջ, նրանք որոշ ժամանակ (մ.թ.ա. IV հազարամեակի սկզբներին կամ աւելի առաջ) կարող էին ապրած լինել Հայկական լեռնաշխարհում (Արատտայի կողմերում), մի քան, որը ի հարկէ տեղի կը տար Հայկական լեռնաշխարհի ժողովուրդների հետ սերտ շփումների ու կրօնական, մշակութային եւ անգամ խնամիական կապերի: Տուեալներ կան, թէ սումերները նախապէս եղել են լեռնային ժողովուրդ, եւ հաւատում էին, թէ աստուածները բնակուում էին լեռների կատարին. դրա համար ել Սումերում շինում էին քարձր զիկուրատներ ու կատարին տեղաւորում իրենց աստծու գահը:

Ենմերքարը համարուել է «արեւի աստծու որդին», իսկ նա Արատտայի Ինաննա դիցուիուն համարում է իր քոյրը, որը նախապէս պատկանած է Արատտային, ու ինքն է նրան բերել-հաստատել (նրա համար տաճար է կառուցել) Երեքում:

Մենք, մեր նախորդ աշխատութիւններում, արդէն երկար խօսել ենք սումերահայ կապերի մասին ու բերել ենք հարիւրից աւելի սումերական բառեր, որոնք ունեն զուգահեռներ հայերէնում եւ որոնց մօս կէսը հնդեւրոպական են. իսկ հայերէնի հետ համընկնող մեզ յայտնի սումեր բառերի թիւր երկու հարիւրից աւելի է:

2. Արատտայի ու Սումերի միջեւ այդ սերտ կապերը կարող էին զարգացած լինել Տիգրիս ու Եփրատ ջրուղիների միջոցով, երկու կողմերի միջեւ հնարաւոր, աւելի խոր անցեալից եկող, բնական-աւանդական փոխյարաքերութիւններով: Ինչպէս տեսանք, դիցազնավէպերում խօսք կար Արատտայից դէպի Երեք մետաղ, շինաքարեր ու վարպետներ փոխադրելու համար նաւերի կառուցման մասին. իսկ ցորենք Երեքից Արատտա է փոխադրուում դէպի Վեր անասունների վրայ բենցնելով:

*Քանի գոյութիւն եմ ունեցել Տիգրիս ու Եփրատը, ապա  
դրանց երկու ծայրերում ապրող ժողովորդների կազմը պիտի հա-  
մարել հազարամեակների քնական երեւոյթ: Դրա ապացոյցներից  
մէկն է նաև, ինչպէս նշել ենք, Էնմերքարից երկու հազարամեա-  
կից աւելի յետոյ ապրած Հերոորսի (մ.թ.ա. Վոլար) բացորոշ վկա-  
յութիւնը: Նա գրում է, թէ արմէնների կողմերից եկող մարդիկ Եփ-  
րատի վրայով առեւտրական սերտ կապեր ունեին Բարելոնի հետ,  
եւ մանրամասնօրէն նկարագրում է, թէ ինչպէս նրանք իրենց ապ-  
րանքներն ու էշերը, բեռցնելով Հայաստանի անտառների փայտե-  
րից շինած ու կաշիններով պատած վահանաձեւ նաւակների վրայ,  
գետով իջնում էին Բարելոն եւ ապրանքներն ու նաւակների փայ-  
տերը վաճառելուց յետոյ՝ կաշինները բեռցնում էին էշերի վրայ ու  
վերադառնում արմէնների մօս երբը նորից կրկնելու հանար:*

Արմէնների՝ անգամ Հնդկաստանի հետ ունեցած կապերի  
մասին տեղեկութիւն է տալիս Քսենոֆոնը: Ըստ նրա գրածների,  
Պարսկաստանի Կիրոս արքան արմէններից խնդրել է ուղեկցել  
պարսիկ դեսպանին՝ նրան առաջնորդելու եւ ներկայացնելու հա-  
մար Հնդկաստանի արքային<sup>1</sup>: Բերուած այս օրինակները կարե-  
տոր նշաններ են Տիգրիս ու Եփրատ գետերի միջոցով՝ Հարաւային Սիջագետքի հետ (եւ անգամ աւելի հեռու Հնդկաստանի հետ) ար-  
մէնների ունեցած աւանդական հին կապերի համար: Այլապէս,  
ինչու<sup>2</sup> Կիրոսը այդ ծառայութիւնը չի խնդրել Պարսկաստանի հա-  
րաւում ապրած եւ Հնդկաստանին աւելի մօս եղած ժողովորդնե-  
րից, գոնէ էլամացիններից, բարելացիններից կամ նման ուրիշներից: Պարզ է, թէ դա հետեւանք էր այդ ուղղութեամբ արմէնների ունե-  
ցած հին հոչակի:

3. Սումենները Արատտայի հետ իրենց ծանօթութիւններն ու  
կապերը կարող էին զարգացրած լինել Տիգրիս ու Եփրատ գետերի  
ակնաղբիւրների այդ խորհրդաւոր լեռնաշխարհի նկատմամբ ի-  
րենց ունեցած հետաքրքրութեան մղումով կատարած ներթափան-  
ցումների ընթացքում, կամ դեպի այդ հարուստ լեռնաշխարհը կա-  
տարած աւարառական ու նուաճողական արշաւանքների ժամա-

<sup>1</sup> Քսենոֆոն, «Կիրոսի Խրատը», Երեւան, էջ 169-170: Տե՛ս Լէօ, 1, 277:

նակ: Սումերները իրենց կեանք տուող այդ սրբազն գետերի մասին ունեին հնաւանդ առասպելներ: Այդ գետերի հեռաւոր ակնաղթիւրները եւ նրանց բխեցնող (եւ աստուածների նստավայր համարուող) այդ լեռնաշխարհը իրենց համար ունեին առեղծուածային խորհրդաւորութիւն: Սումերները հաւատում էին, թէ աստուածները բնակում էին լեռների օագարին: Դրա համար էլ կառուցում էին լեռներ խորհրդանշող բարձր զիկուրատներ՝ որպէս նստավայր իրենց աստուածներին: Հետեւաբար, բնական է, որ նրանց մէջ պիտի առաջանար բուռն հետաքրքրութիւն ու մղում՝ այդ լեռնաշխարհը հասնելու, ճանաչելու կամ գրաւելու նպատակով:

Էնմերքարից հազի չորս դար յետոյ, *Ումայի արքայ Լուգալ-Զազգիսին* (մ.թ.ա. 2371-2347), իր իշխանութեան ենթարկելով մի քանի սումերական քաղաքներ, դէպի Հայկական լեռնաշխարհ կատարել է արշաւանք, որի մասին գրում է. «... Երբ Էնլիլ աստուած'... Լուգալ-Զազգիսին էր յանձնել երկրների քազաւորութիւնը ... եւ երբ նրա հզօրութիւնը խոնարհեցրել էր երկրներին, ու երբ նա նրանց յաղթել էր արեւի ծագից մինչեւ նրա մայրամուտը, այդ ժամանակ նա ուղիղ ճամբայ բացեց Վարի Ծովից Եփրատ ու Տիգրիսի վրայով մինչեւ Վերին ծովը...»<sup>1</sup>: Ի հարկէ՝ Եփրատ ու Տիգրիսի վրայով հասած վերին ծովը Վանայ լիճն էր: Անգամ Ասորեստանի Սալմանասար Գ-ի համար կրօնական պարտքի եւ արքայական պատուի ու հեղինակութեան հարց է եղել հասնել, տեսնել ու գրաւել Տիգրիս ու Եփրատ գետերի Վերին երկիրը: Նա իր մի արձանագրութեան մէջ գրում է. «Իմ զահակալութեան տասնինգերորդ տարին, ես առաջացայ դէպի Տիգրիսի ու Եփրատի ակնաղթիւնները. ես քանդակեցի իմ արքայական նկարը նրանց ժայռերի վրայ»<sup>2</sup>:

Հետեւաբար պիտի անհաւանական շհամարել որ սումերները Էնմերքարի ժամանակ (գուցէ առաջ էլ) հասած լիճն Արատտա ու կապ հաստատած նրա հետ:

4. Ի հարկէ՝ սումերները Արատտայի ու նրա հարասութեան, մշակոյթի ու համբաւի մասին եղած աւանդութիւնները կարող են

---

<sup>1</sup> HSA, 194:

<sup>2</sup> ARAB, 205:

ժառանգած լինել Հայկական լեռնաշխարհի բնիկների այն խմբերից, որոնք կարող էին շատ կանուխ ժամանակներում (սումերների գալուց առաջ ու յետոյ) Տիգրիս ու Եփրատ գետերի հոսանքով թափանցած կամ գաղթած լինել դէպի հարաւային Սիցազետը ու այդտեղ բնակութիւն հաստատած, ու յետոյ էլ խառնուած լինել սումերների հետ:

Անհաւանական չենք համարում եւ այն, որ Արատտայի մասին տեղեկութիւնները Սումեր տանողները եղած լինեն սուրարիները, որոնք, ըստ պահպանուած սեպագիր տուեալների, արդէն խոր անցեալում թափանցել էին հարաւային Սիցազետը ու մեծ մասամբ խառնուել սումերների ու յետոյ էլ սեմիտների հետ (այս մասին դեռ կը խօսենք յետոյ):

Մենք արդէն տեսանք, թէ Արմանին գտնուում էր Սուրարտու երկրում, կամ, աւելի ճիշդը, Սուրարտու կոչուած բուն երկրի կենտրոնական շրջանները գտնուում էին Հայկական լեռնաշխարհի հարաւային մասերում:

#### ԳԼՈՒԽ 4

**ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱԾԻՍՄՐՀԻ  
ԺՈՂՈՎՈՒԹՅԱՆԵՐԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ**

Ովքե՞ր էին սուբարիները:

I. Gelb-ը, տալով նոյն այս հարցը, ասում է. «Դեռ այս հարցին ճիշդ պատասխան չի տրուել»: Նա սուբարիներին համարում է էքսիկապէս ու լեզուով՝ խուրրիներից տարբեր ժողովուրդ: Նա իր այս տեսակէտը ապացուցելու համար է գրել իր «HURRIANS AND SUBARIANS» աշխատութիւնը, ուր բերում է բազմաթիւ տուեալներ ու փաստարկութիւններ, թէ սուբարիները խուրրի չեն եղել: Այսուհանդերձ, կարծես շատեր դեռ պահում են նախնական այն տեսակէտն ու կարծիքը, թէ սուբարի անուան տակ պիտի հասկանալ խուրրիներին:

Մի բան պարզ է սակայն, թէ սուբարիները, ըստ պատմական ժամանակաշրջանի գրաւոր տուեալների, եղել են Հայկական լեռնաշխարհի, յատկապէս նրա հարաւային (ու հարաւից հարեւան) շրջանների բնիկները. այն շրջանների՝ որտեղ, մեզ հասած սեպագրական արձանագրութիւններում, առաջին անգամ լինելով են յիշատակուել *Արմանի* (կամ *Արմանում*) եւ յետոյ էլ *Արիսէ*, *Արմէ* եւ *Արմինա* անունները:

*Սուբարտուն հանդիսացել է, նախապէս Հայկական լեռնաշխարհն ամբողջութեամբ ընդգրկած, մի լեզուամշակութային ընդհանրութեան (հնդեւրոպական հայրենիքի) սումեր-աքքադների հետ անմիջական շփման մէջ եղած հարաւային հաստուածը:*

Ընդարձակ Սուբարտուն չի եղել միշտ միաւորուած մի պետութիւն: Անցեալում, շատ անգամ, բաժանուած է եղել նաև պետական մի շարք միաւորների: Դրա համար էլ Սուբարտու անունը, յետագայում, ստացել է աշխարհագրական իմաստ: Մ.թ.ա. II հազարամետկի կէսին, Սուբարտուի մէջ մտնող պետական մի շարք միաւորների անուններ է տալիս Թուկուլքի-Նինուրթա Ա-ը (1243-1221 մ.թ.ա.): Նա գրում է. «...Այդ ժամանակ՝ Բարխին, Կուտոմուխին, Բուշշին, Սումսին, Ազին, Մաղանին, Նիխանին, Ալահան,

*Տերուրզին, Բուրուկուզզին՝ ամբողջ ընդարձակ Շուրարի երկիրը  
այլեցի կրակով...»<sup>1</sup>:*

Սուրարտուի մէջ մտնող այս երկիրները ընդգրկում են Ուրմիոյ լճից մինչեւ Կապաղովկիա տարածուող շրջանները: Մի շարք սուեալներ ցոյց են տալիս, թէ սուրարիների հայրենիքը տարածուած էր նաև Հայկական լեռնաշխարհի խորքերը՝ ընդգրկելով նաիրեան բոլոր երկրներին: Աշշուր-Նազիր-Պալ Ա-ը գրում է. «Կաշխարի լեռը անցայ եւ երկրորդ անգամ լինելով իջայ վար, դէպի Նաիրի երկիր ...»<sup>2</sup>: Պարզ է, թէ Կաշխարի լեռներից իջնելով մտած երկիրը Արմե-Շուրբիան էր, որին կոչում է Նաիրի երկիր: Խսկ Աշշուր-Նազիր-Պալ Բ-ն էլ (883-859 մ.թ.ա.) գրում է, թէ նուաճել է Սուրարի երկրի Նաիրի եւ Կիրխի երկիրները: Ի հարկէ, եթէ նաիրեան ցեղերի մի մասը սուրարիական էին, ապա ցեղակից միւսներն էլ պիտի սուրարիական լինէին:

Վերեւում տեսանք, թէ հենց *Սուր-քիր* (Սուրարդու) անունը իր կազմութեամբ (իր քիր քաղադրիչով) պատկանում է նաիրեան Գինզիրի, Շինի-քիր(-նի), Առա-քեր(-անի), Տուրու-քեր(-ան) եւ նման նաիրեան ցեղանունների խմբին: Սա նոյնպէս փաստ է նաիրեանների հետ սուրարիների ունեցած կապի համար:

Այստեղ նաև պարզուում է, թէ հենց այս կազմութիւնն ունի նաև Արմաւիր (*Արմա-վիր*) անունը, որի վիր քաղադրիչը նաիրեան նոյն քիր «ցեղ, տուն, քաղաք» բառն է: Յայտնի է, թէ երկու ձայնաւորների միջեւ գտնուած նաիրեան-ուրարտական ք-ն, մեսրոպեան հայերէնում, տալիս է զ (հմմտ. Էրեբունի-Երեւան, Էրանի-աւան Եւայլն): Որով Արմարիր-ը դարձել է Արմաւիր, որ նշանակում է «Արմայի տուն, Արմայի քաղաք»<sup>3</sup>: Հետեւաբար, Արմաւիր

<sup>1</sup> ARAB, 50: Բարխիի տեղ բերել է Կուրտի, որ չի ընդունուում ուրիշներից:

<sup>2</sup> Նոյն, 179:

<sup>3</sup> Արմաւիր՝ «Արմայի տուն, Արմայի քաղաք» նշանակութեան համար կոնկրետ վկայութիւն է պահել Խորենացին. նա գրում է. «... Արմայիս շինէ իր տուն քնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերը գետոյն, եւ անուանէ յիր անուն Արմաւիր» (Խոր. Ա-ժք): Այստեղ կայ վկայութիւն, թէ Արմայիսը իր կառուցած այս քաղաքը իր Արմա(-իս) անունվ կոչել է Արմա-վիր: Ոմանք սիսալմամբ դեռ Արմաւիրը վերագրում են Երուանդունիներին, որովհետեւ Արմաւիր անունը կրում է Արմայիսի (Արմա) անունը, որը հիմնական քաղադրիչն է հայ ժողովրդի ու երկ-

անուան նախնական ձեւն էր *Արմարիր* (*Արմա-րիր*), եւ պատկանում էր *Սու-րիր*, *Գինզի-րիր* եւ նման նախրեան անունների խմբին։ Սա նոյնպէս կարեւոր փաստ է *Սուրիր-ի* (*Սուրարիների*)՝ Հայկական լեռնաշխարհի նախրեան ցեղերի հետ (որով եւ *արմա*-[-նի] ցեղի հետ) ունեցած սերտ կապի համար։ Վերեւում արդէն ցոյց են տուել, թէ *Su-rili* եւ *Arma-rili* եղել են նոյն շրջանի հոմանիշ անուանուններ, ուր *Su* (=Supari) եւ *Arma* բաղադրիչները եղել են համագոր եզրեր։

Այժմ արդէն գիտութեան մէջ ընդունուած է, թէ սուրարինները առկայ էին հնում Հայկական լեռնաշխարհում (դեռ ոմանք սուրարիններին նոյնացնում են խուրրինների հետ)։ Խոր անցեալի սուրարինների մշակոյքը համապատասխանում է Հայկական լեռնաշխարհի նոյն ժամանակաշրջանի մշակոյքին։

Խորենացու եւ *Սեբէոսի* պահած հայկական գրաւոր ու աւանդական հին տեղեկութիւնների մէջ էլ կան վկայութիւններ, թէ Հայկական լեռնաշխարհի հարաւային շրջանների ցեղերը ազգակցական ու կրօնական կապ են ունեցել Լեռնաշխարհի կենտրոնական մասի (*Հարքի*) շրջանում եւ աւելի խորքերում ապրածների հետ։

---

Ի Արմա-նի (Արմե-նի > Արմէն) անուան, իսկ արմէնների գաղրի թիւր վարկածը թոյլ չի տալիս նրանց ընդունել՝ Հայաստանում արմէնների գոյութիւնը ուրարտական հարստութեան անկումից առաջ, որով չեն ընդունում Արմայիսի ուրարտական լինելը։ (Մեր աշխատութիւններում արդէն ցոյց ենք տուել, թէ Արմայիսը Արգիշտին է)։ Թէեւ Երուանդունինները որոշ ժամանակ այն պահել են որպէս իրենց մայրաքաղաքը եւ կառուցումներ են աւելացրել այլտեղերում, բայց չեն եղել նրա հիմնադիրը։ Նրանք, որոնք Արմայիրի հիմնադրումը եւ նրա Արմայիր անուանումը վերագրում են Երուանդունիններին, կամ պէտք է ասէին, թէ Խորենացին սուս է խօսում ու յերիւրում է Արմայիս անունը, կամ էլ պէտք է ցոյց տային Երուանդունինների մէջ Արմա (Արմայիս) անունվ գրնէ. մի արքայի գոյութիւն ունեցած լինելը։ Բայց չեն կարող, որովհետեւ Երուանդունինների մէջ այդպիսի անունով արքայ չի եղել։ Ասա թէ ինչպիսի անել որութիւնների մէջ են խճուում եւ ինչպիսի անիմն ու կամայական մեկնութիւններ անելու ստիպողութեան մէջ են ընկնում արմէնների գաղրի տեսարանները եւ ինչպիսի խեղաքիւրումներ են կատարում հայ ժողովրդի հնագոյն շրջանի պատմութեան վերաբերող կարեւոր ու վճռորոշ հարցերում։

Մեղիայի Աստիագէս թագաւորի ժամանակ, հայ Երուանդունի արքայի որդիներից մեկը կոչուում էր Տիգրան, իսկ մի որդի՝ *Սարարիս* (=Շատարշ). այս անունը շատ է տարածուած հայերի մէջ. այն զալիս է *Սուրարի* անունից:

Սուրարիները մ.թ.ա. III հազարամեակին (եւ առաջ) տարածուած են եղել նաև ամբողջ Միջագետքում՝ ներառեալ Ասորեստանն ու Բարելոնիան: Գելքը գրում է, թէ *սուրարիների սկզբնաւորութիւնը կորսուած է Բարելոնիայի նախապատմութեան մթութեան մէջ*<sup>1</sup>: Ընդունուած է, թէ սեմականների ի յայտ գալուց առաջ Ասորեստանը բնակեցուած էր սուրարիներով, եւ այն յաճախ կոչուում էր Սուրարոնո՛ անգամ այդտեղ սեմական հզօր (Ասորեստաննեան) պետութեան կազմաւորումից յետոյ:

Այստեղ ուզում ենք միջանկեալ նշել սա կէտը. - Եթէ իսկապէս Նուզիի եւ Դիյալայի միջեւ մի տեղ տեղադրուող Halwan / Halman > Arman քաղաքի անունը (Եթնիկապէս կապ ունէր Խաքուրի ակնաղբիւրների ու Հայկական Միջագետքի շրջանում գտնուած մեծ Armani / Armanum քաղաք-երկրի անուան ու ժողովրդի հետ, ապա պիտի չզարմանալ, որ այդ ժողովուրդը այդ անունով ունեցած լինի մի այլ քաղաք եւ այդ շրջանում: Մանաւանդ, այս կապակցութեամբ, հետաքրքրական է, որ Դիյալայի շրջանի (այսինքն՝ Էլամի հարեւան) Halwan/Halman այդ քաղաքի անունը յիշեցնում է Բեհիստունի արձանագրութեան մէջ պարսկական բնագրի Armina-ի տեղ էլամական բնագրում բերուած Harmanu ձեւը:

Մեծամօրում յայտնաբերուած բարելական սեպագիր կշռաքարը, որ պատկանում է մ.թ.ա. II հազարամեակի կէսերին, կարեւոր ապացոյց է Հայաստանի ու Բարելոնի միջեւ այդ ժամանակների առեւտրական կապերի համար: Անգամ կարելի է այն ցուցմունք համարել՝ այդ օրերին Բարելոնիայում հայկական մի զադութիւն գոյութեան հաւանականութեան համար: Իսկ մ.թ.ա. 6-րդ դարում, Բարելոնում արսին Արախսայի թագաւոր դառնալը կարելի է փաստ համարել այդ հայ զադութիւն շարունակուածութեան համար:

---

<sup>1</sup> HS, 84:

Սումերական լնթեռնելի ամենահին փաստաբղբերը այն արձանագրութիւններն են, որոնք գտնուել են Ֆարայում (իհն Շուրուպպարում), հարաւային Բարելոնիայում: Սրաց մէջ յիշուել են Շubur անձնանունով մարդիկ: Տարբերակը կոչվում է Տուլու-Շubur, Տուլու-Շubur<sup>1</sup> եւ նման բարդութիւնների մէջ, ուր Տարբերակը բերուել է որպէս էքսիկական բնորոշում: Գելքը գրում է, թէ Տարբերակը Ֆարայում կարծես նախապէս տրուած է եղել միայն իսկական սուրարիներիմ<sup>2</sup>:

Գիտութեան մէջ շատերի կողմից արդէն լնդունուած է, թէ նախապէս, սումերներից առաջ, հարաւային Միջազգետը է եկել ու բնակութիւն է հաստատել մի ժողովուրդ, որին հնագէտներն ու պատմագէտները պայմանականօրէն կոչում են Ալ-ուրէյդեաններ (ներկայումս Ալ-Ուրէյդ կոչուած հնավայրի անունով): Սրանց պատկանած հնագոյն խեցեղէնի եւ մշակութային այլ նիւթերի մնացորդներից դատելով՝ գտնում են, թէ նրանք Սումեր են եկել մ.թ.ա. մօտ 4500 բուերին (կամ աւելի առաջ)<sup>3</sup>:

Այժմ գիտնականներից շատերը հնարաւոր են համարում, թէ սումերի այդ առաջին բնակիչները եղել են Սուրարիները: Այս մասին այստեղ բերում ենք միայն մի քանի հմուտ մասնագէտների կարծիքները:

B. Landsberger-ը եւ սրանից յետոյ S. Kramer-ը, I. Gelb-ը, W. Hallo-ն, W. Simson-ը, T. Jones-ը եւ ուրիշները լնդունում են, թէ սումերական հնագոյն քաղաքների եւ Տիգրիս ու Եփրատ գետերի (Idiglat եւ Buranum) անունները եւ սումերերնեում պահպանուած մի շարք (ոչ-սումերական, ոչ-սեմական եւ ոչ-խուրրիական) քառեր մնացել են նախասումերական (սումերներից առաջ եկած-ապրած) այս առաջին բնակիչներից: Landsberger-ը սրանց կոչում է proto-Euphrateans: Իսկ S. Kramer-ը գրում է. «Սումերներից առաջ Սումերում հաստատուածների անունը ի հարկէ յայտնի չէ: Նրանք ասկել են զրերի գիտից առաջ եւ պատմողական (տեղեկագրական) ոչ մի գրանցում չեն թողել: ... Թէեւ, պարզապէս, հնարաւոր

<sup>1</sup> Նոյն, 32:

<sup>2</sup> Նոյն, 31:

<sup>3</sup> Sumerians, 39, 40:

է, թէ առնուազն նրանցից ոմանք *III հազարամետակին յայտնի էին որպէս սուրարիներ»*<sup>1</sup>:

Իսկ Գելքը գրում է. «*Սուրարիների հետ մեր կանխագոյն հաղորդակցութիւնը (contact-ը) կարող է զնալ ետ դէպի սումերական նախաջրինեղեան առաջին դինաստիան, որը, ասուում է, թէ բնակուում էր Eridu քաղաքում կամ, մի տարբերակ տերսուի համաձայն, HA.A<sup>KI</sup> քաղաքում: Քանի որ այս վերջին քաղաքանունը, որ յաճախ յիշուում էր Eridu-ի կապակցութեամբ, աքքական քարգմանութիւններում տրուում է որպէս Šu-ba-ri (եւ նմանը): Հնարաւոր է, որ սումերական առաջին դինաստիայի HA.A<sup>KI</sup> - Šu-ba-ri քաղաքը կոչուած լինի սուրարիների անունով»<sup>2</sup>:*

Այս իրողութիւնները իրենց որոշակի եւ արժեքաւոր արձագանքներն են ունեցել անգամ սումերական դիցագնավէպերում: Արդէն ինչպէս տեսանք, վերեւում թերուած սումերական դիցագնավէպերը պահպանել են հաւաստի տեղեկութիւններ եւ ուղղակի վկայութիւններ, թէ սումերական ամենահին քաղաքներից եղող *Ուռուկի (Երեքի)* եւ *Էրիդուի* տաճարների կառուցման համար Էնմերքարի պահանջով (կամ խնդրանքով) Արատտայից մետաղագործներ ու քարագործ վարպետներ են եկել Սումեր՝ իրենց հետ թերելով ոսկի, արծաթ, շինաքարեր («լեռան քարեր»):

Այս բոլորը կարելի է որոշ ցուցմունք համարել, թէ հարաւային Սիջագետքի նախասումներական բնակիչները եւ նրանց՝ այդ տեղերում հիմնած կանխագոյն բնակավայրերը եղել են Հայկական լեռնաշխարհի նախարնիկների հնագոյն գաղութները:

W. Hallo-ն եւ W. Simpson-ը իրենց միասին հեղինակած գրքում ասում են, թէ մարդաբանները չեն կարողացել վերակազմել մի պարզ պատկեր Մերձաւոր Արեւելքում (թէ ժամանակի եւ տա-

<sup>1</sup> Նոյնը, 40:

<sup>2</sup> HS, 31: Այստեղ «Նախաջրինեղեան» (antediluvian) խօսքը վերաբերում է Սումերում Տիգրիս ու Եփրատ գետերի մի մեծ յորդումով առաջացած ջրհեղեղին, որից մնացած եւ հնագէտների (գետնի խորքերում) յայտնաբերած տիղմային նստուածքի հաստ շերտի տակ եղած դինաստիական մշակութային շերտերի խորագոյնը համարում են նախաջրինեղեան առաջինը. սա թուագրուում է IV հազարամետակ մ.թ.ա.:

բածութեան մէջ) նախապատմական ուշ եւ հին ժամանակների ցեղային տարրերութիւնների մասին, եւ թէ հնագիտական թուագրելի գտածոները մեծ առ մասամբ փոքր տարրերութիւններ են թելադրում «Սիցերկրականեան» ընդհանրացուած տիպի շրջանակներում (Երկարագաճզի եւ կլորագաճզի խառնուրդով): Ապա, թերելով աքքաղական մի արձանագրութեան մէջ բարելացիների (աքքաղների) տեսանկիւնից դիտուած աշխարհագրական մի ուրուազիծ (հիւսիսում՝ Սուրար, հարաւում՝ Սումեր, արեւելում՝ Էւլամ եւ արեւմուտքում՝ Ամուրու)՝ գրում են. «Հարաւային Սիցագետքում, ամենականուին եկողների շերտը այժմ թուում է թէ հիւսիսայինն է, որին, հետեւելով բնիկ ուրուազօդին, կարող ենք կոչել սուրարիներ ... այս շերտի լեզուն մինչեւ հիմս յայտնի է եղել միայն աշխարհագրական մի քանի անուններից: ... Անզամ կարելի է պատճառարամնութիւնները յանցեցնել սուրարիներին որպէս զրի ստեղծողներ համարելու օգտին: ...Հարաւում՝ սուրարիները, մօս 3100թ. մ.թ.ա. դէմ յանդիման եկան մի նոր շերտի ... որին կարելի է ճանաչել որպէս սումերներ»<sup>1</sup>:

Վերջին տարիներին, գիտական շրջանակներում գնալով նոր-նոր ձայններ են բարձրանում, պաշտպանելով այն տեսակէտը, թէ հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքը գտնուում էր ոչ թէ Եւրոպայում, այլ՝ Հայկական լեռնաշխարհում եւ Փոքր Ասիայի հարեւան շրջաններում<sup>2</sup>: Ըստ տեսութեան՝ հնդեւրոպական մայր լեզուի տրոհումից յետոյ, նրա տարրեր ճիւղերը կրողները, բնակչութեան աճի հետեւանքով, նշուած շրջաններից ճառագայթել-արտագաղթել են չորս կողմ: Նրանցից ոմանք, շարժուելով դէպի արեւմուտք, Փոքր Ասիայի վրայով անցել են Եւրոպա, ոմանք Կովկասի անցումներով գնացել են հիւսիս, իսկ ոմանք էլ դէպի արեւելք-հարաւ՝ դէպի Իրանական սարահարք:

Այս երեք կողմ ճառագայթումների մասին մտորելիս՝ բնական էի համարում, թէ ոմանք էլ պէտք է գնացած լինէին ուղղակի դէպի հարաւ, մի ուղղութիւն, որով աւելի հեշտ էր գնալ Տիգրիս ու

<sup>1</sup> ANE, 21:

<sup>2</sup> Նոյն, 23, 24:

<sup>3</sup> Այս մասին տես ԱՀԾՈՒ, 83, 330, եւ ՀԺԾ, 31, 77, 135:

Եփրատ գետերի հոսանքով: Սակայն լեզուաբանները՝ հնդեւրոպական մայր լեզուի տրոհումն ու ճիւղատրումը դնում էին մ.թ.ա. III հազարամետակի կէսերին: Այս ժամանակներին հարաւում առկայ էին սումեր-աքքաղական հզօր ու դիմադրող ուժեր, որոնք կախող էին խափանած լինել հնդեւրոպականների նշանակալի առկայութիւնը այդ շրջանում: Սակայն սումերահայ յարաբերութիւնների մասին մեր կատարած ուսումնասիրութիւնները<sup>1</sup>, եւ վերջերս ուրիշների ի յայտ բերած եւ լեզուաբանական ու պատմագիտական տուեալներից հանած եզրակացութիւնները՝ հնդեւրոպական մայր լեզուի տրոհումն ու ճիւղատրումը տանում են աւելի խոր անցեալ:

Հենց այդ կանուխ ժամանակներին է, որ հարաւային Միջագետք են եկել ու առաջին անգամ հաստատուել Landsberger-ի ասած proto-Euphratean-ները (Ալ-Ուրբեյեանները), որոնց, ինչպէս տեսանք, շատեր այժմ կոչում են սուրարիներ (ի հարկէ տարբերելով խուրրիներից):

Արդեօք սրանք հենց այդ հնդեւրոպական ժողովուրդներից չէի՞ն, որոնք հնդեւրոպական մայր լեզուի տրոհման ժամանակներին (կամ յետոյ) Տիգրիս ու Եփրատ գետերով աստիճանաբար իջած լինեն հարաւային Միջագետք:

Վերեւում ասացի թէ ՀԱ.Ա<sup>Կ'</sup> եզրը աքքաղական թարգմանութիւններում հաւասարեցուում է Subari (Subir/Subur) անուան հետ: Պիտի նաեւ նշել, թէ սեպագրագէտները ՀԱ.Ա բառագիրը (logogram-ը) կարդում են Ha-bur<sup>2</sup>: Մենք արդէն զիտենք, թէ սումեր-աքքաղական որոշ փաստարդերում Su-bir (կամ Su-bur) եզրի տեղ բերուել է SU.A եզրը, որով ՀԱ.Ա հաւասարուում է SU.A եզրի հետ, այսինքն՝ ՀԱ-ն հաւասարուում է Su-ի հետ: Ուստի կարելի է ընդունել, թէ Su ցեղը կոչուած է եղել նաեւ ՀԱ (կամ Su եւ ՀԱ եզրերը եղել են համազօր անուններ):

Հենց այս ՀԱ անունով էլ կոչուել է նաեւ Հայասայի հայ ժողովուրդը: Իմ «Հայ Ժողովրդի Ծագումը» աշխատութեան մէջ, բերելով Հա-իաշա անուան ստուգաբանութիւնը, արդէն ցոյց եմ տուել, թէ

<sup>1</sup> Նոյն (ԱՀԾՈՒ, ՀԺԾ):

<sup>2</sup> HS, 98:

այս անուան -յա-շա բաղադրիչը բարդ ածանց է (-յա-ն միջնածանց, -շա- ն վերջածանց), իսկ հիմքը՝ Ha, որի կրկնութեանք ունեին Ha-ha անունվ քաղաք: Որով յայտնի է դարձել, թէ Հայասայի ժողովրդի բուն անունը Ha էր, այնպէս ինչպէս սուբարիներն են կոչուած եղել HA.A (= Ha-bur կամ Ha-bir = «Ha ցեղ»): Այս առթի՝ համեմատել սուբարիների Աշտրինս աստուածութիւնը Հայասայի Unag-aštuaš (հայերի Astuaš) դիցանուան հետ, ինչպէս եւ սուբարիական Lašuratil աստուծոյ անունը հայասական Lašurhila քաղաքի անուան հետ: (Սրանց մասին դեռ մանրամասնօրէն կը խօսեմ աւելի ետք): Համեմատել նաև Հայասայի Կումմախա քաղաքի անունը եւ հարաւում՝ Սուբարտոփի շրջանի (Ուրֆայից վեր) Կումմախա քաղաքն ու Երկիրը, ինչպէս եւ Հայասայի Ալզինի քաղաքի անունը եւ շուրբիական Ալզինին:

Բերուած այս տուեալները աւելի են գօրացնում հարաւային Միջագետքի նախասումերական (որոշ գիտնականների կողմից սուբարի համարուող) բնակիչների՝ հիւսիսի Հայկական լեռնաշխարհի (հնդեւրոպական մայր Երկրի) հետ կապ ունեցած լինելու հաւանականութիւնը:

Գիտնականների մէջ դեռ չկայ լրիւ համամտութիւն Սուբարի, Խուրրի, Սիտաննի եւ Խանիզալրատ անունների ներկայացրած էքնիկական, աշխարհագրական ու քաղաքական արժեքների մասին: Թէեւ ոմանք գտնում են, թէ այս եզրերով նշուած են ընդհանրապէս խուրրի ժողովուրդը կամ լեզուն, նրանց Երկիրը կամ պետութիւնը: Շատեր գտնում են, թէ Սիտաննի ու Խանիզալրատ անունները էքնիկական արժեք չունեն: Speiser-ը գրում է. «Սիտաննի անունը ունէր լոկ սահմանափակ քաղաքական կիրառութիւն եւ բնաւ չի ծառայել որպէս ցեղային ու լեզուական պատկանելութեան մի ընդհանուր նշում»<sup>1</sup>: Իսկ Գելը ասում է. «Սիտաննին լոկ անունն էր կենտրոնական Միջագետքում եղած պետութեան.... եւ իր իշխողները եւ հենց ինքը (անունը) հաւանաբար հնդեւրոպական էին, որով այն պէտք չէ օգտագործել որպէս անունը որոշակիորեն ոչ-հնդեւրոպական (խուրրի) լեզուի»<sup>2</sup>: Իսկ Խանիզալրատի

<sup>1</sup> IH, 3:

<sup>2</sup> HS, 12 (ընդգծումը իմն է՝ Մ. Գ.):

մասին գրում է. «Խանիզալբատը բնականօրէն աքքաղական համազօր եզրն էր հենց աշխարհագրական Միտաննի եզրի: Յետագայում, ասորեստանեան աղբիրներում, այն գրաւում է Միտաննիի տեղը որպէս քաղաքական եզր»<sup>1</sup>:

Հետեւարար, որպէս լեզուա-ցեղաբանական արժէք ներկայացնող եզրեր, ուշադրութիւն են գրաւում *սուրարի* և *խորրի* անունները:

Ի. Գելբը, իր «New Light on Hurrians and Subarians» յօդուածում, խորրիների եւ սուրարիների մասին իր յայտնաբերած նոր տուեալների լոյսի տակ, գրում է. «... Հիմակուանից պէտք պիտի լինի կտրուկ զանազանութիւն դնել իրարից բոլորովին տարբեր եւ իրար հետ կապ չունեցող երկու էթնիկ միաորների միջեւ՝ սուրարիների, որոնք, պատմական ամենականուխ ժամանակներից, ոչ թէ միայն գրաւում էին Բարելոնիայի հիւսիսում եղած լեռնային ընդարձակ տարածութիւնները, այլ եւ խաղաղօրէն ապրում էին Բարելոնիայի մէջ սումերների եւ աքքաղների հետ կողք-կողքի, եւ շատ աւելի երիտասարդ խուրրիների, որոնք յարաբերաբ ուշ են երեւացել Սիցազետքեան հրապարակում եւ որոնք կարեւոր դեր են խաղացել Սերճաւոր Արեւելքի պատմութեան մէջ, II հազարամեակի կէսին մ.թ.ա.»<sup>2</sup>:

---

<sup>1</sup> Նոյն, 75:

<sup>2</sup> Gelb, NLHS, V. I, 378-392:

## **2. ԽՈՒՐՔԻՆԵՐԻ ՍԻԱՆԱԼԸ ՀՆԴԵԽՈՊԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԵՒ ԽՈՒՐՔԻԵՐԵՆԻ ՇԽՉՈՒՄԸ**

---

Վերեւում տեսանք թէ սուբարիները եղել են Հայկական լեռնաշխարհի ժողովորդ, եւ Արմամին, յետոյ էլ Արմէ-Ա (Ծուրդիան), Նահիրին մտել են Սուբարտուի մէջ:

Ուրարտուից առաջ, Հայկական լեռնաշխարհի (բացի սումեր-աքքարականների հաստղութեան շրջանակում եղած հարաւային ու հարաւ-արեւմտեան ծայրամասերից) կենտրոնական շրջաններում ու խորքերում ապրած ժողովուրդների եւ նրանց մշակութային ու ռազմա-քաղաքական կեանքի մասին ճշգրիտ ու կոնկրետ տեղեկութիւններ չունենք տակաւին: Հնագիտական թերեւակի ու պատահական պեղումներով ի յայտ եկած կցկոտոր (ոչ գրաւոր) նիւթերն ել համր են այդ խնդրում:

Բացի Արատտայի մասին ակնթարքային այդ մի պահի կայծակնային լուսաւորումից, որ տալիս են սումերական նշուած դիւցազնավէպում պահպանուած (մ.թ.ա. III հազարամեակի սկզբներին վերաբերող) տեղեկութիւնները՝ ընդհանրապէս, մինչեւ Ուրարտու, պատմագիտութեան համար գրեթէ մուր է այդ լեռնաշխարհը:

Սումերական խիզախ արքաները, ինչպէս օրինակ Ումնայի Լուգալ-Զազգիսին, Վանայ լճից այն կողմ չեն քափանցել եւ այդ մասին էլ նրանց գրածները մէկ երկու աննշան խօսքից աւելի չեն լինում (օրինակ՝ Լուգալ-Զազգիսի մասին գրուած է. «... Նա ուղիղ ճանապարհ բացեց ներքեւի ծովից Եփրատի ու Տիգրիսի վրայով մինչեւ վերեւի ծովը»):

Մենք տեսանք, թէ III հազարամեակի կէսին, Էրլայի առեւտրական կայսրութիւնն էլ չի կարողացել տարածուել Հայկական լեռնաշխարհի վրայ: Նրա միջազգային յարաբերութիւնների քարտէսում՝ նրա ուղիները շրջանցել են Հայկական լեռնաշխարհը հարաւից ու արեւմուտքից եւ չեն քափանցել ներս: Եթէ Էրլայի արձանագրութիւնների մէջ նշուած Armi<sup>Ki</sup> Armi<sup>Ki</sup> եզրը ճիշդ եմ հասկանում (որպէս «Ar-երի քաղաքներ»), ապա դրանով նշուած կը լինեն Հայկական լեռնաշխարհի հարաւային շրջանների արմենոսուրարիական քաղաքները:

Նոյն բանը կարելի է ասել, Էրլայից յետոյ, աքքաղական մեծ հարստութեան հզօր արքաների համար: Անգամ Նարամ-Սինի արշաւը (որով նա «յաղթել է Արմանիին, որին մարդկութեան ստեղծումից ի վեր թագաւորներից ոչ մի թագաւոր չի առել») կանգնել է Դիարբեքիրի մօս<sup>1</sup>:

Երեւոյթները ենթադրել են տալիս, թէ Ուրարտուից առաջ ասրեստանեան ու խեթական կայսրութիւնների ուժերը նոյնպէս չեն կարողացել խորանալ Հայկական լեռնաշխարհ: Խեթերը, Հայասայի կողմից, Եկեղեաց գաւառից (Խախա քաղաքի շրջանից) աւելի արեւելք չեն խորացել: Ասորեստանի արքաների մէջ էլ, այդ ժամանակներում, ամենաշատ խորացողը եղել է Վանայ լճի շրջապատում ապրած նախրեան 23 ցեղերի արքաների (ցեղապետների) դէմ կրուած Թիգլաթ-Պալասար Ա-ը (մօս 1100 մ.թ.ա.), որը Արածանից այն կողմ չի անցել<sup>2</sup>:

Իսկ այն գրութիւններն էլ, որ թողել են ասուրաբարելական ու խեթական արքաները՝ Հայկական լեռնաշխարհի իրենց թափանցած ծայրամասային շրջանների ժողովուրդների մասին, եղել են միշտ պոռոտախօսական եւ ինքնափառաբանման արտայայտութիւններ, որոնց մէջ եղած տեղեկութիւնները կցկտուր են, միակողմանի ու միտումնաւոր: Հետեւարար, դրանցով դժուար է վստահելիօրէն պատկերել աւելի խորքերում ապրած ժողովուրդների մշակութային ու ընկերային-քաղաքական կացութաձեւը եւ աւելի դժուար է ճշգրիտ գաղափար կազմել նրանց լեզուի ու ազգային պատկանելութեան մասին:

Հայկական լեռնաշխարհի անթափանցելի մնացած լինելու այս երեւոյթը պիտի բացատրել (այդ ժամանակուայ արտաքին ուժերի համար այդ լեռնաշխարհը բնականօրէն դժուարանց անթափանցելի պատուար հանդիսանալուց աւելի) այն հանգամանքով, որ հարաւի ու արեւմուտքի այդ ուժերը այդտեղ պիտի դէմ-յանդի-

<sup>1</sup>Նարամ-Սինի յաղթանակի կոթողը գտնուել է (in situ) Դիարբեքիրի մօս. այժմ նա գտնուում է Պոլսոյ թանգարանում: Տե՛ս RISA, 141:

<sup>2</sup>Այս մասին տե՛ս Ս. Գավուքճեանի «Վերին Ծովի Տեղադրութիւնը» յօդուածը, «ԼՐԱԲԵՐ Հասարակական Գիտութիւնների», Երեւան, 1977, 2, էջ 94: /Չետեղվածէ և ներկա հասորում – հրատարակիչ/:

ման եկած լինեն մշակութային ու ռազմական կենսունակ ուժերի առաջ, որոնք մնացել են անընկճելի եւ ունեցել են անմրցելի եւ արգելակիշ ուժի համբաւ: Հենց Արատտա-Մեծամօրն ու նմաններն են վկայ, թէ անգամ III հազարամետակի սկզբներին, Հայկական լեռնաշխարհը ունեցել է զարգացած բարձր ճշակոյթ ու հզօր տնտեսութիւն, եւ դա եղել է շատ աւելի բարձր քան կարծուում էր:

Դժբախտաբար, Ուրարտուին նախորդող ժամանակաշրջաններից գրաւոր ժառանգութիւն չի հասել մեզ տակախն: Մենք կարծում ենք, թէ դա ոչ այն պատճառով, որ այդպիսիներ գոյութիւն չեն ունեցել, այլ հաւանաբար, այն պատճառով, որ Հայկական լեռնաշխարհում դեռ չի սկսել հնագիտական պեղումների իսկական լայն արշաւ: Այդ լեռնաշխարհի մեծագոյն մասը եւ կենտրոնական կարեւորագոյն շրջանները (Արեւմտեան Հայաստանը) հնագիտական հետազոտութիւնների համար մնում են գրեթէ փակ վիճակում: Կատարուածներն էլ արուում են պատահական կտերում: Մանաւանդ որ՝ ակնկալուած այդպիսի աշխատանքների տիրութիւնը գտնուում է հայերի խոր անցեալի մասին փաստական տուեալների յայտնաբերմամբ անբարեացակամ իշխանութեան ձեռքում:

Անգամ յայտնաբերուած ուրարտական արձանագրութիւնները, որոնք որոշ չափով լոյս են սփոռում իրենց ժամանակաշրջանի ժողովուրդների ընկերային ու ռազմա-քաղաքական գոյավիճակի շուրջ, չեն պատասխանում մուր մնացած շատ հարցերին: Դա, նախ, այն պատճառով, որ դրանք, թէեւ 400-ից աւելի են, գրուած են հակիրճ ու շարլոնացած (միօրինակ) ձեւով, որոնք շատ քան չեն պարունակում պատասխանելու համար երկրի ազգային (լեզուամշակութային) ինքնութեան վերաբերող հարցերին: Երկրորդ՝ ուրարտական հնավայրերի պեղումները չեն կատարուել զիտահետազոտական բազմակողմանի լայն ու խոր ընդգրկումներով (կամ կատարողները չեն ունեցել լաւ բախտ): Դրա համար փաստ է այն, թէ ուրարտական ոչ մի կենտրոնում (Վան, Թոփրախ-Կալէ, Արմաիր-Արգիշտիխնիլի, Թէյշերախնի եւայլն) դեռ չեն կարողացել յայտնաբերել պետական որեւէ դիւան (արխի): Սի քան, որը դժուար թէ ունեցած չիներ (զոնէ պեղուած կենտրոններից մէկում)

Ուրարտուի պէս գրագիտութեամբ օժտուած մի հզօր եւ վարչական կազմակերպութիւնները ու միջազգային կապեր ունեցած պետութիւն:

Այս բոլորով հանդերձ, ասուրաբելական արքաների արձանագրութիւնները մեզ համար պարզել են, թէ այնքան տարածութիւն, որքան նրանք կարողացել են բափանցել Հայկական լեռնաշխարհում (այդ բուում եւ Վանայ լճի շրջապատում), եղել է նաիրեան ցեղերի հայրենիքը: Ուրարտական արքաների արձանագրութիւններն ել, որով իրենք իրենց կոչում են «Նախրի երկրի արքայ», պարզում են, թէ Ուրարտուն եղել է նաիրեան ցեղերի կազմած մի ռազմա-քաղաքական հզօր համադաշնակցութիւն: Ասուրաբելական արձանագրութիւններից գիտենք արդէն, թէ Սուրարտուի վերին (լեռնային) շրջանները կոչուել են Նախրի: Տեսանք նաեւ, թէ Թուկովքի-Նինուրթա Ա-ը նշում է Բարիսին, Կուտմոլիսին, Բուշշին, Սումմին, Ալզին, Մաղանին, Նիխանին, Ալահան, Տերուրզին, Բուրուկուզին՝ որպէս ընդարձակ Ծուրարտուի երկիրները: Յայտնի է, թէ Ծուրարտուի մէջ մտած այս երկիրները մեծառնասամբ նաիրեան երկիրներ են: Հետեւարար, միանգամայն ճիշդ կը լինի ընդունել, թէ Ուրարտուից առաջ էլ Սուրարտուն ու Սիտաննին նոյնպէս եղել են նաիրեան ցեղերի կազմած ռազմա-քաղաքական միութիւններ:

Ուրեմն ի՞նչ էր դրութիւնը Հայկական լեռնաշխարհում, մ.թ.ա. III հազարամեակին, եւ ի՞նչ էր կատարուել Ուրարտուից առաջ II եւ I հազարամեակներում:

Նախ պիտի ասել, թէ լեզուաբանական, դիցաբանական ու մշակութային շատ տուեալներ թելադրում են ընդունել, թէ Փոքր-Ասիան ու Հայկական լեռնաշխարհը, Կենտրոնական Անատոլիայից մինչեւ Կասպից ծով, եղել են հնդեւրոպականների հայրենիքը: Այստեղերից է, որ հնդեւրոպական մայր լեզուի տրոհումով, հնդեւրոպական տարբեր բարբառների կրողներ բաժանուել ու գաղթել են եւրոպական ու ասիական տարածութիւններ (Այս մասին խօսել եմ առաջ եւ դեռ հանգամանօրէն կը խօսեմ վերջին գլխում):

Կան որոշ նշաններ, թէ խուրբիական որոշ տարբեր առկայ են եղել Միջագետքում ու Սիրիայում մ.թ.ա. III հազարամեակին:

Բայց այս ժամանակներին Հայկական լեռնաշխարհում էլ նրանց գոյութեան մասին որոշիչ տուեալներ չկան: Թէեւ հնագիտական նստուածքներում որոշ (համը) նիւթեր, ենթադրաբար, համարուում են խուրրիական, բայց այդ ճիշդ լինելու դէպքում էլ, դրանք կարող են լինել որոշ (քիչ քուով) խուրրի տարրերի առկայութեան նշան կամ մշակութային փոխազդեցութիւնների ու տարածման հետեւանք:

Մերձաւոր Արեւելքի սեպագրական տուեալները ցոյց են տալիս թէ խուրրիները՝ մ.թ.ա II հազարամեակի II քառորդին է որ մեծ զադրականութիւններով անցել են Զագրոսը Ուրմիոյ լճի հարաւներից դէպի Ասորեստանի տարածութիւնները, եւ մեծ զանգուածներով մտել հիւսիսային Սիջագետք ու հիւսիսային Սիրիա եւ այստեղերից թափանցել նաև Հայկական լեռնաշխարհ ու Կիլիկիա (Kizwatna):

Արդէն յայտնի է, թէ նրանք, Հիւսիսային Սիրիայում ու Հայկական լեռնաշխարհի հարաւային շրջաններում, իրենց զանգուածային առկայութեամբ, դարձել են հնդեւրոպականների հետ կարեւոր մասնակիցներ Սիտաննեան մեծ պետութեան կազմում: Ես գտնում եմ, թէ միտաննեան այդ ժամանակներում՝ Հայկական լեռնաշխարհում առաջացել է (հնդեւրոպականի հետ խուրրիներէնի օգտագործմամբ) երկլեզուանիութեան դրութիւն: Ի հարկէ, Հայկական լեռնաշխարհում, այս ժամանակներին, ապրել են եւ այլ ցեղային տարրեր, բայց հետեւաճնները ցոյց են տալիս, թէ նրանք չեն ներկայացրել մեծ կշիռ, չեն ունեցել որոշիչ դեր կատարելու թիւն ու կենսունակութիւնը:

Խուրրիական մեծ զանգուածների մասին այս ասուածները վերաբերում են Հայկական լեռնաշխարհի աւելի հարաւային շրջաններին, որոնք մտնում էին Սիտաննիի անմիջական շրջանակում: Այս շրջանակում է որ նրանք ներկայացրել են մեծ կշիռ, քան թէ Հայկական լեռնաշխարհի կենտրոնում ու խորքերում: Մանաւանդ որ՝ այդ ներքին շրջանում, Սիտաննիի ժամանակներին վերաբերող խուրրիական գրութիւնների չենք հանդիպում: Այսուհանդերձ, հնդեւրոպական եղող հայերէնի քառային պաշարի նշանակալի մասը հնդեւրոպական չէ, ու երեւոյթները հնարաւոր են

դարձնում դրանց (հնդեւրոպական չեղողների) կարեւոր տոկոսը համարել խուրրիական: Մի բան, որ թելադրում է ընդունել, թէ՝ Սիտաննիի օրերին, խուրրիերէնը այս շրջաններում էլ որոշ տեղեր օգտագործուել է որպէս խոսակցական երկրորդ լեզու՝ հայերէնի հետ միասին:

Այսպիսով՝ բոլոր ուղղակի եւ անուղղակի տուեալները թելադրում են այն, թէ հայ ժողովուրդը բաղկացած է (չհաշուած հայերի մէջ ձուլուած ցեղային այլ մասը տարրերը) հիմնականում հնդեւրոպական բնիկ եւ խուրրիական եկուոր տարրերից, որոնց մէջ խուրրիականը ունեցել է զգալի եւ ոչ շատ պակաս կշիռ:

Եթր խօսում ենք հնդեւրոպական հայրենիքի եւ հնդեւրոպախօսների մասին, պէտք չէ այն հասկանալ էթնիկ-ռասայական իմաստով, այլ լոկ լեզուական առումով: Որովհետեւ, հնդեւրոպական մայր լեզուն կարող էին խօսած լինել միաժամանակ մի ընդհանրական միջավայրում էթնիկ-ռասայական տարրեր ծագում ունեցողներ եւ անգամ (մարդարանականօրէն) թէ երկարագանգ եւ թէ կլորագանգ (արմենիոյ) տիպին պատկանողներ: Պէտք չէ կարծել, թէ տարրեր ռասաների կամ էթնիկական տարրեր խմբերի պատկանող մարդկանց՝ մի խմբից միւսի մէջ ներթափանցումները լոկ պատմական ժամանակաշրջանի երեւոյթ են: Այդպիսի շարժումներ տեղի են ունեցել նաև շատ աւելի հին ժամանակներում, քան հնդեւրոպական մայր լեզուի տրոհման ու անգամ բիւրեղացման ժամանակները:

Օրինակ՝ հայերն ու խեթերը լեզուականօրէն գտնուում են հնդեւրոպական ընտանիքի մէջ, իսկ մարդարանականօրէն պատկանում են կլորագանգ (armenoid) տիպին, որին պատկանում են նաև (նախապէս Հայկական լեռնաշխարհից հարաւ-արեւելք գտնուած (տե՛ս քարտէս 8) ոչ-հնդեւրոպական համարուղ խուրրիները: Մինչդեռ, հնդեւրոպական ընտանիքի մէջ գտնուածներից շատերը պատկանում են Միջերկրականնեանի երկարագանգ (dolichocephal) տիպին, որին պատկանում են ոչ-հնդեւրոպական սեմականները:

Լեզուացեղային այս դրուածքը եւ հնագիտական ու ազգագրական որոշ երեւոյթներ ցոյց են տալիս, թէ *հնդեւրոպական մայր*

լեզուն կազմաւորուել ու բիւրեղացել է այս երկու տիպերի շփման՝ հարեւամութեամ ու միախառնման միջավայրում։ Այդ մայր լեզուի բիւրեղացումը պիտի տեղի ունեցած լինի մ.թ.ա. 4-րդ հազարամեակին նախորդած մի քանի հազար տարիների ընթացքում, երբ երկրի բնակչութիւնը շատ քիչ էր, ու մարդիկ ապրում էին նախնադարեան համայնական հասարակութեան փուլում գտնուող տոհմերով։

Այդ միջավայրի (հնդեւրոպական նշուած հայրենիքի) մեջ մտնում էին *Փոքր Ասիայի կենտրոնական ու արեւելեան մասը, Հայկական լեռնաշխարհը (մինչեւ Կասպից ծով)* եւ *Հիւսիսային Միջագետքն ու Հիւսիսային Սիրիան։* Այդ կանուխ ժամանակներում, այս տարածութիւնների արեւմտեան մասում՝ Փոքր Ասիայում ապրում էին աւելի երկարագանգներ, իսկ արեւելքում՝ Հայկական լեռնաշխարհում, յատկապէս նրա կենտրոնական շրջաններում ու հարաւում ապրում էին աւելի կլորագանգներ։ (Խեթերը եւ Փոքր Ասիայի որոշ հայ հատուածներ պիտի արեւելքից շարժուած լինեն արեւմուտք)<sup>1</sup>։ Ես գտնում եմ, թէ Հայկական լեռնաշխարհի այդ արմենոհիների հարաւային հատուածներն էին, որ սումեր-աքքադներին ծանօթ էին սուբարի անուան տակ։ Այնտեղ գտնուում էր, ինչպէս տեսանք, նաև Նարամ-Սինի յիշած Արմանին։

Հայերի՝ ճնշիչ մեծամասնութեամբ կլոր գանգ տիպին պատկանած լինելու համար է, որ գիտնականները այդ տիպը կոչել են արմենոհի։ Հայերի արմենոհի լինելը երեսի պիտի համարել նաև սուբարիական ժառանգութիւն, որի վրայ գումարուել է նոյն տիպի խուրրիականը, որով գրեթէ անաղարտ պահպանել է իր տիպը։

<sup>1</sup>Ոմանք ասում են, թէ ցեղային հարցերում սխալ կը լինի յենուել գանգի ձեւի ու շափի վրայ, քանի որ, ըստ նրանց, աշխարհագրական-կլիմայական նոր ու այլ պայմանների միջավայրում, գանգը ենթարկուում է փոփոխութեան։ Բայց այդ փոփոխութիւնը տեղի չի ունենում, զգալի չափով, 5-10 հազարամեակների ընթացքում, իսկ մեր շօշափած հարցերը վերաբերում են այս մօս շրջանին։

Յայտնի հնագէտ Ս. Սարդարենանը գրում է, թէ արմենոհիների հայրենիքը պէտք է համարել Հայկական լեռնաշխարհը, եւ թէ նրանք այստեղից է, որ յետագայում տարածուել են հարաւային դէպի Սիրագետք, եւ արեւմուտք՝ դէպի Պալքաններ (ՆՀՀ, 222):

Եթէ հայերի ճնշիչ մեծամասնութեամբ կլոր գանգ ունենալը վերագրուէր նրանց լոկ խուրրիական ժառանգութեան, ապա պէտք կը լինէր ընդունել, թէ նրանք ճնշիչ մեծամասնութեամբ, խուրրի են, եւ հնդեւրոպական հայերէնն էլ ծազումով չի պատկանում նրանց, այլ պիտի համարուի իր կազմի մէջ եղած հնդեւրոպական «փոքրամասնութեան» կողմից պարտադրուած լեզու: Սակայն, փաստեր չունենք հաստատելու այդ: Դա, ի հարկէ, ճիշդ է հայ ժողովրդի կազմում եղած խուրրիական մեծ բաղադրատարդի համար (դա էլ եթէ վերջնականապէս հաստատուի, թէ խուրրիերէնը հնդեւրոպական չէ): Ինչպէս ասացի, երեւոյթները աւելի հաստատում են այն, թէ հնդեւրոպական մայր լեզուն բիլեղացել է Փոքր Ասիայի ու Հայկական լեռնաշխարհի իր օրբանում՝ մարդարանական (ռասայական) երկու՝ արեւմտեան (երկարագանգ) ու արեւելեան (արմենուիդ) տիպերի շիման միջավայրում, գրերի ստեղծումից առաջ, նախապատմական ժամանակներում, երբ, որպէս բնիկներ, առկայ էին արմենուիդ սուրարիները: (Հնդեւրոպականների մէջ մարդարանական այս տարրերութիւնները հնարաւոր էին իրենց այս հայրենիքում, ու Եւրոպան չէր կարող լինել այդ միջավայր-հայրենիքը):

III եւ յատկապէս II հազարամեակին (մ.թ.ա.), Մերձաւոր Արեւելքում խուրրի ցեղերի երեւալը արդէն հետեւանք էր շատ աւելի ուշ՝ պատմական ժամանակաշրջանի գաղթերի, որոնք սեպագիր արձանագրութիւններում յիշուած (սկզբի) օրերին խօսում էին խուրրի լեզուով:

Ինչպէս տեսանք, մի շարք գիտնականներ գտնում են, թէ սուրարիները խուրրի չեն: Ուստ Շամրայում (Լաթարիայի մօտ) գտնուած ուգարիտեան մի սեպագիր արձանագրութեան վրայ միաժամանակ եւ միասին յիշուել են Հրի (խուրրի), Հտի (խաթի) եւ Շեր (շուրարի) եղբերը<sup>1</sup>: Այս երեւոյթը ունանք ընդունում են որպէս փաստ, թէ խուրրիներն ու սուրարիները տարրեր եւ առանձին տարրեր են: Իսկ ոնանք էլ, ելնելով սուրարի-խուրրի համանիշու-

---

<sup>1</sup> HS, 20 (տե՛ս նաև Syria X (1929) Pl. LXII):

թեան մասին եղած նախնական կարծիքներից, Տեր (շուրարի) եզրի մէջ տեսնում են ասորեստանցիներին:

Մենք գտնում ենք, թէ սուրարիների հարցին պիտի նայել, ինչպէս նշեցինք, հնդեւրոպական հայրենիքը Փոքր Ասիայում, Հայկական լեռնաշխարհում եւ Հիւսիսային Սիրիայի ու Հիւսիսային Սիրազգետքի հարեւան շրջաններում գտնուած լինելու ֆոնի վրայ, ուր գտնուում էր Սուրարտուն: Հենց այս շրջաններում էր գտնուում նաև բուն Սիրաննին:

Գիտութեան մէջ յայտնի է թէ Սիրաննիի պետութեան իշխող տարրը կրել է հնդեւրոպական անուններ: Սիրաննիում պաշտուած աստուածների մէջ գտնուում էին Սիրրա, Վարունա, Ինդրա, Նասատեա եւ այլ հնդեւրոպական (հնդիրանական կոչուած) աստուածներ: Ոմանք հարցը այնպէս են դնում՝ կարծես հնդիրանական կոչուած անձնանուններն ու աստուածներն հնդեւրոպական չեն, եւ առհասարակ գործը այնպէս են ձեւակերպում՝ կարծես այն ինչ հնդիրանական է՝ տարրեր է հնդեւրոպականութիւնից: Սիրնչեո, հնդիրանական կոչուած այդ անձնանուններն ու աստուածներն յայտնի էին սուրարիական տարածութիւններում՝ հնդիրանականներին վերագրուող գաղթից դարեր առաջ: Նրանք տարածուած էին ոչ թէ միայն Սիրաննիի տարածութիւններում, այլ եւ Սիրերկրականի արեւելեան ափի շրջաններում ու Փոքր Ասիայում:

R. O'Callaghan-ը այս մասին հաւաքել է հետեւեալ կարեւոր տուեալները. «It is most striking that a number of royal Mitanian names recur in the west; for example, *Sudarna* is dynast of Muši<sup>h</sup>una, *Sutadara* is father of Aitagama..., *Aitagama* was a brother of Biryawāza, himself a chieftain ...*Šunašūra*, king of Kizwatna to the north of Cilicia, we find in northern Syria *Sumida*, possibly a chief of Carchemish, *Abirata*, prince of Barga, *Swatiti*, a man in Alalakh, and *Patuzana*, *Bāyawa* and *Tsitriyara*, all syrian princes. Coming south near the lower Orontes, there are Aitagama, dynast of Kadesh, his father Sutadara...»<sup>1</sup>: O'Callaghan-ը, այս ցուցակը շարունակելով, բերում է,

---

<sup>1</sup> AN, 64-65:

վերեւում նշուած շրջաններից, բազմաթիւ հնդեւրոպական-հնդի-  
րանական անձնանուններ արքաների, իշխանների եւ կարեւոր  
անձնաւորութիւնների: Այնուհետեւ նա եզրակացնում է. «...all the  
names of the princes and patricians in Palestine and Syria referred to  
above, as well as the names from Mitanni and Nuzu, are of Indo-Aryan  
origin»:

Միթէ՝ կարելի է ընդունել թէ այս հնդեւրոպական անձնա-  
նունները եւ վերեւում նշուած աստուածները՝ Իրանի կողմից գա-  
լով են տարածուել Հիսխային Սիջագետքի, Հիսխային Սիրիա-  
յի, Հայկական լեռնաշխարհի, Կիլիկիայի ու Փոքր Ասիայի տա-  
րածութիւններում. այլ խօսքով՝ հնդեւրոպական հայրենիքում: Ո-  
րոշ գիտնականներ անգամ այնքան են հեռու գնում, որ իրենց ձե-  
ւակերպումներով դուրս է գալիս թէ այդ միտաննացիններն էլ եղել  
են խուրրիններ: Իբր թէ նրանք խուրրինների վերջին ալիքն են, եւ ե-  
կել են Մերձաւոր Արեւելքի Ուրմիոյ լճի կողմերից եւ իրենց հետ  
քերել են հնդիրանական որոշ անձնանուններ ու աստուածներ: Ի  
հարկէ այս միտքը յարմարեցուած է կանխակալ այն սխալ վար-  
կածի ու համոզման հետ, թէ հնդեւրոպական նախալեզո՞ի հայրե-  
նիքը (որն նախապէս տեղադրում էին Սիջին Ասիայում) Եվրոպան  
է, ու թէ հնդիրանականները եկել են հիսխիսից՝ մ.թ.ա. մօտ 2000  
թուերին: Որով՝ (իբր թէ) այնպէս է պատահել, որ «արեւելքից ե-  
կած այս խուրրի» միտաննինները, Կասպից ծովի կամ Ուրմիոյ լճի  
շրջանում, հանդիպել են (կամ որոշ ժամանակ գոյակցել են) Սի-  
ջին Ասիայի կամ Կովկասի կողմից գալով դէպի հարաւ շարժուող  
այդ հնդեւրոպականների հետ եւ նրանցից ստացել են որոշ  
«հնդեւրոպական» տարրեր, երբ դէռ նրանք հնդիրանական չէին:

Ի հարկէ, այս կառուցուածքը միանգամից փուլ է գալիս այն  
իրողութեան առջեւ, թէ հնդեւրոպականների հայրենիքը չի եղել Եւ-  
րոպան, եւ թէ հնդեւրոպականները գոյութիւն են ունեցել, ինչպէս  
ներկայ Իրանի հիսխս-արեւելեան ծայրում, այնպէս էլ Հայկական  
լեռնաշխարհում, Հիսխային Սիջագետքում, Հիսխային Սիրիա-  
յում ու Փոքր Ասիայում, մ.թ.ա. II հազարամեակից շատ առաջ (ու  
միշտ): Որով՝ աւելի ճիշդ կը լինի ընդունել, թէ այդ միտաննացի-

ներն էլ հնդեւրոպական այն քնիկներից էին, որոնք կոչուում էին նախրեաններ:

Սրանք, Միտաննիի ժամանակներին, իրենց գրութիւնների համար օգտագործել են այդ օրերին Սերձաւոր Արեւելքում տարածուած խուրրինների լեզուն, որը սկսել էր սումերերէնի ու աքքաղերէնի հետ միասին օգտագործուել խուրրինների տարածման շրջաններում:

Խուրրիերէնը, որպէս երկրորդ լեզու, բաւական տարածուած ու գործօն է եղել Հայկական լեռնաշխարհի հարաւային միտաննիական շրջաններում՝ խուրրինների զանգուածային առկայութեամբ (ի հարկէ շիաշուած Nuzi, Ugarit եւ Սերձաւոր Արեւելքի այլ խուրրիական կենտրոններ): Սակայն, այնպէս է քուում, թէ Միտաննիի օրերին, խուրրինները չեն ունեցել այդպիսի առկայութիւն ու ակտիւութիւն նաեւ լեռնաշխարհի կենտրոնական շրջաններում ու խորքերում (թէեւ այս տեղեր թափանցել են, ինչպէս ասել եմ, խուրրիական որոշ ցեղեր եւ խուրրիերէնն էլ որպէս երկրորդ լեզու ընթացքի մէջ է եղել նրանց շրջանակներում): Ահա այդ պիտի լինի պատճառը, որ Հայկական լեռնաշխարհի կենտրոնում ու խորքերում չենք հանդիպում Միտաննիի ժամանակների խուրրի գրութիւնների:

Իսկ Միտաննիի անկումից յետոյ, խուրրինները արդէն սկսել են ամէն տեղ խառնուել իրենց շրջապատի տեղական ժողովուրդների մէջ, հարաւում՝ սեմականների, իսկ հիւսիսում՝ հնդեւրոպականների հետ, եւ խուրրիերէնն էլ սկսել է կորցնել իր գործօնութիւնն ու ոյժը եւ 3-4 դարերի ընթացքում գրեթէ դադարել է խօսակցական լինելուց:

Պիտի նշել, թէ այդքան էլ պարզ չէ տակաւին Միտաննիի անկումից մինչեւ Ուրարտուի կազմաւորումը անցած ժամանակաշրջանի իրադրութիւնը: Մօտաւորապէս յայտնի է այն, թէ Միտաննիի անկումով՝ նրա կայսրութեան հարաւ-արեւելեան շրջանները բաժին են ընկել Ասորեստանին, որոշ շրջաններ արեւմուտքում՝ խեթերին, իսկ Հայկական լեռնաշխարհի մայր շրջաններում առաջացել են մանր թագաւորութիւններ ու իշխանութիւններ, որոնք գոյութեան տեսական պայքար են մղել՝ մի կողմից խեթերի եւ միւս

կողմից Ասորեստանի դէմ: Սրանք, սակայն, չեն ունեցել ինքնուրոյն գրաւոր հետք թողնելու չափ պետականորէն կազմակերպուած ամուր կառուցուածք, եւ նրանց մասին մի քանի կցկոտորտեղեկութիւններ ենք քաղում լոկ ասորեստանեան ու խեթական արձանագրութիւններից, որոնք լինում են միշտ միակողմանի եւ միտումնաւոր՝ գրանցելով լոկ իրենց յաջողութիւնները:

Այսուհանդերձ, ահա հենց այս դէպքերի ինքնուրոյն ժողովրդաաւանդական արձագանգն է Հայկի ու Բէլի դիցազնավեպը, որը հանդիսանում է իր ժամանակի պատմագրութեան ոճով կազմուած, դիցաբանական ձեւ ստացած, գրաւոր ու աւանդական յիշողութիւններ՝ ասուրաբարեկամ թշնամինների դէպի Հայկական լեռնաշխարհ ձգտող ոտնձգութիւնների դէմ՝ հայ ժողովրդի կատարած հերոսական դիմագրութիւնների<sup>1</sup>:

Հայկական այդ գրոյցը աղօտ յիշողութիւններ է պահում այն իին ժամանակների դէպքերից, երբ քայրայուած ու կործանուած Սիտաննական պետութեան իշխանութեան գլուխ եղողների հարաւային մնացորդները սեմական նոր գաղբալիքների (յետազյում արամեական կոչուած սուսի եւ ախլամէ ցեղերի) եւ հզօրացող Ասորեստանի ճնշումների տակ ստիպուեցին ետ քաշուել իրենց հարաւային դիրքերից դէպի հիւսիս՝ դէպի ուազմագիտականօրէն աւելի ամուր ու պաշտպանելի լեռնաշխարհ:

Արեւելեան թեր Առապիսայի (Քերքութի), Նուզիի ու Աշշուրի կողմերից շարժուել-քաշուել է Տիգրիսի հոսանքով դէպի վեր՝ դէպի Կորդուք: Այս շարժումների արձագանգն է Հայկի, իր Արամանեակ որդու հետ ու աղխով, Ասորեստանի ու Բարելոնիայի կողմերից (Ս. Գրքում նշուած աշտարակաշինութեան առասպելից ազդուելով՝ Բարելոնից կամ, յիրակի, արմենո-սուրաբիններով բնակեցուած բարելոնական շրջաններից) դէպի Արարադի երկիրը (դէպի Ուրուատրի) չուելը: Իսկ արեւմտեան թեր, Ուգարիտի ու Համայի կողմերից Որոնդեսի, Եփրատի ու Խարուրի ուղղութիւններով քաշուել է դէպի հիւսիս:

<sup>1</sup>Հայկ եւ Բէլ դիցազնավեպի պատմական հիմքի (Ուրարտուի պատմութիւն լինելու) մասին տե՛ս ՀԺԾ, 78-100:

Նրանք տեղաւորուել են սեմական դարձած դաշտային հարավ հիւսիսից եզերող լեռնագօստիում՝ իրենց ցեղակից նախրեան-ների մօտ՝ Հայկական լեռնաշխարհի հարաւային մարզերն հանդիսացած Մուսասիրի (Մատիենէի), Ուրուատրի-Արարադի (Կորդուրի), Կարմուխի, Ալզի (Աղճնիքի), Կոմմագենէի ու հարեւան լեռների շրջաններում:

Արեւելեան թեւում նրանք կենտրոն հաստատեցին Ուրուատրիի լեռներում (Խորենացոյ յիշած Արարադում), իսկ արեւմտեան թեւը կազմեց տոկուն միութիւններ Խանիզալբատում<sup>1</sup>, Արմէ-Շուրդիայում ու Ծուպանիում (Ծոպքում)` մերք կռուելով, մերք միանալով խեթական կոչուած դաշնակցութեան հետ:

Արեւելեան թեւի նախրեան (հնդեւրոպական-խուրրիական) ցեղերը կարողացան Ուրուատրիի շուրջ կազմել Ասորեստանին դիմադրող մի յիշատակելի միութիւն՝ որպէս սաղմնաւորումը յետագայ ուրարտական հզօր պետութեան: Այսուհանդերձ ուրուատրիական այս միութեան մէջ մտած ցեղերը, գտնուելով հարաի սեմիտական ոսոխ ուժերի ոտնագութիւնների շառաւիղի մէջ, մերք միանալով, մերք կազմալուծուելով, չկարողացան ստեղծել օրեցօր հզօրացող Ասորեստանի հետ հաւասարակշռուող ոյժ: Թէեւ նրանք կարողանում էին բաւական ուժ հաւաքել ու գոյութեան համար պայքարել, բայց չկարողացան ստեղծել կազմակերպուած ու կենտրոնացած ուժեղ միապետութիւն: Նրանք պատմութեան մէջ չզրաւեցին ինքնուրոյն տեղ (գրանցուած ինքնազիր հետք չքողեցին) եւ խուսափելու համար Ասորեստանի տեւական ոտնագութիւններից ու հիւծիչ ճնշումներից՝ ստիպուեցին դիմադրութեան իրենց կորիզը (միութեան կենտրոնը) հեռացնել դէպի էլ աւելի հիւսիս, կենտրոն հաստատելով Վանայ լճի շրջանում ու Հարքում (ահա հենց այս բոլորի արձագանքն է Հայկի եւ Բէլի դիցազնավեպը):

Այստեղ է, որ նախրեան ցեղերը IX դարի Ա քառորդում (մ.թ.ա.) արդէն կազմել էին կեղրոնացուած մեծ ու հզօր միութիւն: Եւ ասորեստանեան յիշատակարաններից իմանում ենք, որ Ու-

---

<sup>1</sup>ՀԱՅՊ, 7:

բարտուն Արամեի ժամանակ դարձել է Ասորեստանին անհանգըստացնելու չափ ուժեղ պետութիւն:

Մեզ յայտնի է, որ Ուրարտուի արքաները իրենք իրենց կոչել են «արքայ Նաիրի Երկրի»: Հետեւաբար պարզ է, որ Ուրարտուն եղել է նաիրեան ցեղերի համարաշնակցութիւն՝ ուզմաքաղաքական միութիւն:

Իսկ ցեղային ի՞նչ ծագում ու լեզու ունեին Ուրարտուում իշխողները:

Երեւոյթները ցոյց են տալիս, թէ սրանք էլ, ինչպէս Սիտանիի իշխանութեան գլուխ եղողները, եղել են հնդեւրոպական նաիրեաններ:

Թէեւ խուրրիական որոշ ցեղեր, մ.թ.ա. II հազարամեակի կեսին, Սիտաննիի օրերին, թափանցել են Հայկական լեռնաշխարհի կենտրոնական (Հարքի) շրջաններն ու խորքերը՝ դառնալով նաիրեան երկրի բնակիչներ եւ որով՝ նոյնպէս նաիրեաններ, բայց նրանք, ինչպէս ասել եմ, այս շրջաններում չեն ունեցել այն կշիռն ու կենաւուակութիւնը, որ իրենց ցեղակիցները ունեցել են հարաւային շրջաններում: Որով, նրանք էլ, սրանց հետ, Սիտաննիի անկումից 3-4 դար յետոյ, պիտի արդէն ձուլուած լինեն տեղաբնիկ հնդեւրոպական նաիրեանների մէջ եւ գրեթէ դադարած՝ խուրրիախու լինելուց: Այս օրերին է, որ արդէն կազմաւորուել է հայ ժողովուրդը որպէս հնդեւրոպախոս:

Այստեղ կը բերեմ այս իրողութիւնները հաստատող մի շարք տուեալներ.

1. «Հայկ եւ Բէլ» դիցազնավեպը պահել է տեղեկութիւն (վկայութիւն), թէ երբ Հայկը (Խալդին) իր բնակութեան վայրը (Երկրի վարչական կենտրոնը) Արարադից (Ուրուատրիից) փոխադրել է Հարք (Վանայ լճի շրջան), արդէն Խոռը (Խուրրի ցեղը) յիշուում է որպէս եղբայրը՝ Հայկի անդրանիկ ու աւագ որդի Արամանեակի (արմէնների)<sup>1</sup>:

2. Եթէ ուրարտական պետութեան հիմնադիր Արամեի (Խորենացու յիշած Արամի) հայոց նահապետ կոչուած լինելը պիտի չըն-

<sup>1</sup> Խորենացի, Ա-Ժք:

դունոի այս հարցում որպէս կարեւոր ցուցմունք, ապա Արմախս (=Արգիշտի) եւ Արամանեակ (=Էրիմենա) անունները բաւական են ընդունելու ուրարտական հարստութեան արմենական լինելը. մանաւանդ որ՝ ուրարտական միւս թագաւորների անուններն էլ խորդիական չեն:

3. Արմենների գաղքի թիւր վարկածը դեռ ոմանց խանգարում է Ուրարտուի մէջ տեսնել արմեններին: Նրանք, արմեններին համարելով եկուորներ՝ ենթադրում են, թէ սրանք պիտի Ուրարտու մտած լինեն նրա անկման օրերին կամ յետոյ: Մինչդեռ, Ուրարտուն հենց երկիրն էր արմենների: Այս իրողութեան համար կարեւոր տուեալներ կան նաև Դարեհի արձանագրութիւնների մէջ:

Նրա Բեհիստունի եռալեզու արձանագրութեան աքքաղական ու էլամական տեքստերը՝ պարսկական բնագրի ուղղակի թարգմանութիւններն են: Պարսկական բնագրում գրուած Արմինա (Արմենի) անուան տեղ աքքաղական թարգմանութեան մէջ գրուած է *Ուրաշոու*, այսինքն՝ *Ուրարտու* (ր > շ տարբերութեամբ): Սա փաստ է, թէ Ուրաշոու (Ուրարտու) անունը համանիշ կամ համազօր եզր էր Արմինա (Արմենի) երկրանուան:

4. Դարեհը իր նոյն արձանագրութեան մէջ յայտնում է նաև, թէ Արախսա անունով մի արմին (մի արմեն), *Խալդիստայի որդին*, թագաւոր է դարձել Բարելոնում: Նա գրում է. «[այսպէս] է ասում Դարեհը. - Երբ ես Պարսկաստանում ու Մարաստանում էի, քարեւ լացիները երկրորդ անգամ ապստամբեցին իմ դէմ. մի մարդ՝ Արախսա անունով մի արմին, Խալդիստայի որդին, ապստամբեց Բարեւլոնում: Դուրակա կոչուած մի վայրում նա ստեց ժողովրդին [ասելով]. «Ես Նարուգողնոսորն եմ՝ Նարոնիստոսի որդին»: Ապա քարելական ժողովուրդը ապստամբեց իմ դէմ եւ Արախսայի կողմք բռնեց: Նա գրաւեց Բարելոնը: Նա դարձաւ թագաւոր Բարելոնում»<sup>1</sup>:

Ինչպէս տեսնում ենք, այստեղ ուղղակի վկայութիւն կայ, թէ այդ Արմին (հայ) Արախսայի հօր անունը Խալդիստա էր: Խալդի-

<sup>1</sup> British Museum, SIDG, 56-59:

*տուա* անունը կազմուած է Ուրարտուի ազգային գերազոյն աստուած *Խալդիի* անունով:

Դարեհը Արախային յիշում է 520 քուականին (մ.թ.ա.). այսինքն՝ Ուրարտուի պարտութիւնից (590-585 մ.թ.ա.) 60-70 տարի յետոյ: Ուրեմն Արախայի մեծ հայրը ապրում էր Ուրարտուի ժամանակ եւ նրա անկման օրերին: Ուրարտուի ժամանակ ապրած այդ հայր իր որդուն անուանել է Ուրարտուի ազգային գերազոյն աստուած *Խալդիի* անունով: Եթէ այդ հայր հենց Ուրարտուի հարազատ զաւակը չիներ, եւ լիներ Ուրարտուն կործանած մեղացիների հետ եկած թշնամի կամ այլ (օտար) ցեղի մարդ, մի՞թէ իր որդուն (Արախայի հօրը) կ'անուանէր «փրենց թշնամիների» ազգային գերազոյն աստուած *Խալդիի* անունով *Խալդի-տա:* Սա աղաղակող փաստ է թէ այդ հայր ուրարտական էր: Իսկ մտածել թէ Արախայի մեծ հայրը եղել է «ռչ-հայ» ուրարտացի, բայց Ուրարտուի պարտութիւնից անմիջապէս յետոյ նրա որդին, ընդունելով «օտար ու հակառակորդ» հայերի ազգութիւնն ու կրօնը, հայացել է եւ դա էլ մարերի (ոչ թէ հայերի) գերիշխանութեան օրերին՝ կը լիներ առնուազն անտրամարանական:

Արեւի պէս պարզ է, թէ ուրարտացիները եղել են *Խալդիին* պաշտած հայեր: Արդէն մեզ յայտնի է, թէ *Խալդին* Հայկն է՝ հենց Բէլի (ասուրաբելացիների աստուծոյ) դէմ պատերազմած Հայկը: Եւ այդ հայր իր որդուն կոչել է *Խալդի-տա*, այնպէս ինչպէս շատ հայեր իրենց զաւակներին կոչել ու կոչում են Հայկ-ակ կամ ուղղակի Հայկ:

Ի հարկէ անկարելի չէ եւ այն որ «Խալդիտայի որդի» խօսքով՝ Դարեհը ուղղակի ու բացայայտօրէն նշած լինի արմին (հայ) Արախայի *Խալդեան* լինելը, այսինքն՝ *Խալդական* ուրարտացի (կամ ուրարտական *Խալդորդի*) լինելը: Յայտնի է, թէ հեթանոսական անցեալում ցեղի ամէն մի անհատ համարուում էր իր ցեղի որդին կամ իր ցեղի ազգային գլխաւոր աստուծոյ որդին: Ինչպէս արդէն տեսանք՝ երրայեցիների Դաւիթ արքան, Ծովիրի հայ Աղքազար թագաւորի ազգութիւնը (արմէն լինելը) նշելու համար, նրան կոչել է «Արայի որդի»: Իսկ մենք արդէն գիտենք, թէ *արմէն* (Ար-մե[-նի]) նշանակում էր «Արորդի»՝ «Արայորդի»: Որով՝

«Արախաս անունով մի արմին՝ Խաղդիտայի որդին» խօսքով կարելի է հասկանալ այն, թէ արմին Արախասն («Արաեան»-ը) Ուրարտուի ժողովրդին պատկանած մի խալդեան մարդ էր. այսինքն՝ արմին ասելով պիտի հասկանալ խալդական-ուրարտական, ինչպէս Արմինա ասելով՝ Դարեհը հասկանում էր Ուրաշտու (Ուրարտու):

Այսուհենդեռձ, երկու դէպրում էլ, Դարեհը «Խաղդիտայի որդի» խօսքով նշել է Արախայի ֆիզիկակա՞ն հօր անունը, թէ Խալդի աստուծոյ ցեղին պատկանած լինելը, միեւնոյնն է, դա նշանակում է, թէ այդ հայր պատկանում էր ուրարտական ժողովրդին եւ ուրարտական բուն ժողովուրդն էլ արմէններ էին:

Ուրարտուն ու Բարելոնը պիտի հին բարեկամներ լինեին՝ արինարքու Ասորեստանի դէմ իրենց մղած դարաւոր պայքարի ընթացքում: Հետեւաքար, մի ուրարտական իշխան կարող էր Դարեհի դէմ Բարելոնի ապստամբութիւնը գլխաւորել եւ բարելացիների կողմից ընդունուել որպէս արքայական-աստուծային ծագում ունեցող հեղինակութիւն ու դառնալ բազաւոր: Հետեւաքար, կարելի է անզամ հաւանական համարել թէ Արախաս՝ Բարելոնում Դարեհի իշխանութեան դէմ երկրորդ ճակատ բանալու համար ուրարտական հայերի կողմից ուղարկուած մի ուրարտական առաքելութեան պետն էր, որին յաջողուել էր բարեկամ ու բախտակից բարելացիներին ոսքի հանել Դարեհի դէմ:

5. Դարեհի նոյն արձանագրութիւնից յայտնի է թէ այդ ժամանակներին Ուրաշտու-Արմինան էլ էր ապստամբել Դարեհի դէմ եւ ազատազրական պայքար էր մղում Դադարշիշ ու Վառումիսա կոչուած զօրավարների կողմից դեկավարուած պարսկական (Դարեհի) բանակների դէմ: Ուստի, եթէ այդ հայերը (արմինները) լինեին՝ Ուրարտուի իշխանութեան գլուխ (մարերի օգնութեամբ) եկածներ եւ աքեմենեանների հովանաւորութեամբ մնացողներ՝ էլ ինչո՞ւ պիտի ապստամբէին ու («թշնամի ուրարտացիների առկայութեամբ») խախտէին «ի նպաստ իրենց» ստեղծուած դրութիւնը: Սա նոյնպէս կարեւոր փաստ է, թէ հայերը հենց մարերի կողմից նուաճուած ուրարտացիներն էին եւ ապստամբել էին վերականգնելու համար իրենց ուրարտական նախկին անկախութիւնը:

6. Պիտի նշել նաև այն, թէ մի՞թէ մարերը եւ յետոյ էլ աքեմենեանները իրենց նուաճած Ուրարտուին կը մկրտէին Աղմինա անունով (եւ ինչո՞ւ պիտի կոչէին այդպէս ուրիշի անունով), եթէ այն արդէն հնուց չլիներ արմէնների երկիր:

7. Հնագէտները արդէն ուրարտական մշակոյրի շերտի վրայ նոր ու օտար նատուածք չեն տեսնում, եւ գտնում են, թէ ամէն ինչ շարունակելի է նոյնութեամբ, անընդհատ ու սահուն:

Սրդէն, Երուանդրւնիների գալուստով եւ դրանից յետոյ, երկրում կրօնա-մշակութային խզում ու փոփոխութիւններ չեն եղել: Այս մասին հանգամանօրէն կը խօսեմ յետոյ, «Երուանդրւնիները» բաժնում:

8. Պերսեպոլիսում Քսերքսեսի պալատի քանդակներում պատկերուած հայերի տարազները յար եւ նման են Նինուէում Աշուրբանիպահ պալատի մի քանդակի վրայ պատկերուած ուրարտական պատուիրակների տարազներին:

9. Մեզ յայտնի է թէ հայոց բազաւորները թաղուում էին Եկեղեաց գաւառում: Ալբրն-Թէփէի ուրարտական դամբարանի յայտնութիւնը ցոյց է տալիս, թէ արքաներին այդ (Եկեղեաց) շրջանում թաղելու ուրարտական աւանդոյթ-սովորութիւնն անգամ շարունակուել է ուրարտական Արամեան հարստութեան յաջորդների՝ հայ արքաների կողմից: Սա էլ փաստ է նոյնապէս աւանդութիւնների եւ մշակոյրի շարունակականութեան:

10. Ուրարտական ժամանակների տեղանուններն էլ պահպանուել են: Նոյնն են մնացել Ալզինինի-Աղձնիքը, Էնզիտ-Անձիտը, Ծուպանի-Ծոփքը, Խանիգալքատ / Խանիուարատ-Խարբերդ / Խարպուտը (?), Սելիլու-Մալաթիան, Ուրարտու-Արարատը, Արծունիուինի-Արծրունին, Բիահնա-Վանը, Էրեբունի-Երեւանը, Դայաէնի-Տայքը, Տարիունի-Դարոյնքը, Կումմախա-Կամախը, Ալզինի-Երիզա-Երզինջանը, Իղիզլատ-Տիգրիսը, Բուրանուն-Պուրատու-Եփիրատը, Արսանիա-Արածանին, Ախուրիանի-Ախուրեանը, Ծուփիա-Սեւանը եւլն. եւլն.:

11. Ուրարտական հարստութեան անկումից (590-585 մ.թ.ա.) մինչեւ Երուանդ Ա-ի իշխանութեան գլուխ գալը (570 մ.թ.ա.) անցած 1-2 տասնամեակի ընթացքում, Ուրարտուի ժողովուրդը չէր

փոխուել, երկրի լեզուն փոխելու կարողութեամբ օտար եկողների հեռեղ չի եղել: Եթէ կարծ ժամանակում երկրի լեզուն փոխուած լինէր (մի քան որ անհաւանական է), ապա այդ լեզուն պէտք է լինէր նոր գերիշխողների (մեղացիների կամ պարսիկների) լեզուն: Սինչդեռ, հայերէնը ոչ մեղացիների եւ ոչ էլ պարսիկների լեզուն է: Հետեւաբար, պիտի ընդունել, թէ պահպանուել է բնիկների (Ուրարտուի պարտութիւնից առաջ այդտեղ իշխող նախրեանների) լեզուն:

Պարզ է, ուրեմն, թէ II հազարամեակին, Հայկական լեռնաշխարհ թափանցած խուրիները, որ կարեւոր տոկոս են կազմել եւ երկրում առաջացրել են երկլեզուանիութիւն, ինչպէս ասացի, Սիւտաննիի անկումից յետոյ արդէն սկսել են ենթարկուել տեղաբնիկների լեզուամշակութային ազդեցութեան կամաց-կամաց, 3-4 դարերի ընթացքում, զրեթէ դադարել են խուրրիախոս լինելուց: Այսուհանդերձ, որոշ տաճարներում (օրինակ՝ Մուսասիրի տաճարի պէս հին տաճարներում) դեռ պիտի շարունակած լինեն օգտագործել արարողութիւններում խուրրիական մի բարբառ եւ յատկապէս՝ որպէս գրութիւնների լեզու: Սա էլ, ըստ երեւյթին, պատճառ է դարձել, որ Ուրարտուում, Սարդուրի Ա-ի ասուրերէնով սկսած պաշտօնական գրութիւնները, Խապունիի ժամանակ (երեւի Ասորեստանի դէմ թշնամական զգացումների սրումից), փոխարինուեն այդպիսի տաճարներից մէկում պահպանուած մի խուրրիատիպ բարբառով:

12. Եւ ահա, հենց պաշտօնական գրութիւնների համար, այդպիսի մի բարբառի օգտագործումն էլ որոշ գիտնականներին խանգարում է ընդունել Ուրարտուում իշխող նախրեան ժողովրդի հնդեւրոպախոս լինելը: Սինչդեռ, գրութիւնների համար խուրրի լեզուն օգտագործուել էր հիմնականում Սիւտաննիում (նրա օրերին), եւ դա էլ մեծ ծավալով, բայց գիտնականները չեն կասկածում այդտեղ իշխածների հնդեւրոպական լինելուն: Մանաւանդ՝ դա այնպիսի ժամանակներում էր, երբ խուրրիները առկայ էին Սիւտաննիի պետական կառոյցում որպէս առանձին եւ ինքնուրոյն տարրու նրանց խուրրիերէնն էլ ընթացքի մէջ էր երկրում՝ իբրև կարեւոր երկրորդ լեզու: Այդտեղ, պետական գրութիւններից զատ, լինում

Էին նաեւ հասարակ խուրրիախոս ժաղովրդի մարդկանց կողմից գրուած շատ խուրրիական գրութիւններ, մինչդեռ Ուրարտուում չենք հանդիպում, Ուրարտուի օրերին, այդպիսի ժողովրդական գրութիւնների: Սա փաստ է թէ այդ լեզուն արդէն խօսակցական չէր Ուրարտուի ժամանակ: Ժողովուրդը օգտագործել է մեհենական կոչուած (մի տեսակ հիերոգլիֆային) ինքնուրոյն պարզունակ նշանագրեր, որոնցով բաւարարուել են իրենց մանր գործառնութիւնների համար:

13. Եթէ Ուրարտուն կազմած նախրեանները այդ օրերին խուրրիախոս լինեին, ապա նրանք Երուանդունինների եւ Արտաշեսեանների օրերին էլ կը լինեին խուրրիախոս, քանի որ ժողովուրդը չէր փոխուել:

Ուրարտուում, Սարդուրի Ա-ից յետոյ էլ կարող էին շարունակել գրել ասուրերէն, եւ ոչ ոք պիտի չասէր թէ այդ իշխողները ասուրական են: Ուրարտուում, Երուանդունինների եւ Արտաշեսեանների ժամանակ, հայերը օգտագործել են նաեւ արամերէն, պարսկերէն եւ յունարէն, բայց նրանք չեն համարուել արամեացի, պարսկացի կամ յոյն:

Գիտնականներից ոմանց մէջ արմատացել է ենթադրութիւնից ելնող նախնական այն թիւրիմացութիւնը, թէ Վանի շրջանում (իբր թէ) եղել է *ուրարտ*, *քիայ*, կամ *խալլ* անունով մի առանձին ցեղ, որ գտնուել է իշխանութեան գլուխ: Նրանք, կարծելով թէ *Ուրարտուան* յատուկ ցեղի անուն է, սկսել էին Ուրարտուի ու նրա շրջապատի երկիրների մէջ փնտռել «այդ ցեղի» յետագայ հետքերը: Այդպիսով՝ արաք հեղինակների՝ Խութ-Սասունի շրջանում յիշած *Ալ-արտան* կոչուած լեռնցիններին (անուան փոքր նմանութիւնից տարուելով) համարեցին այդ «ուրարտական ցեղի» մնացորդ: Մինչդեռ, *Ալ-արտան* անունը բնաւ չի կապուում *Ուրարտու* անուան հետ, որ արդէն տուել է *Արարատ* անունը: *Ալ-արտան* անուան *Ալ-* մասք արաքերէն նախդիր որոշիչ յօդ է, ինչպէս անգլերէն *the-ն* հնմտ. *Masr* («Եգիպտոս») եւ *Al-Masr*, *արման* եւ *ալ-արման* («հայերը»): Որով *Ալ-արտան* անունաձեւից մնում է լոկ Արտան, որ ունի *թ-ով* մէկ վանկ եւ չի կապուում *թ-ով* երկու վանկ ունեցող *Ուրարտու* (*Արարատ*) անուան հետ, ուր բացակայում է

նաեւ Արտան-ի «Ճ»-ն: *Արտան* անունը, Ուրարտուից աւելի, մօտ է Արդինի, Էրիդիանի եւ նման անուանաձևերին, բայց ոչ ոք չի մտածում կապել նրանց հետ: Նոյնը պիտի ասել նաեւ Անձիտի շրջանի *Օրտայացիների* մասին, որոնց մէջ ոմանք նոյնպէս տեսնում են «ուրարտական ցեղը»: Նախ պիտի ասել թէ Անձիտը չի մտել բուն Ուրարտուի մէջ, ու եթէ *Օրդայացիներ* անուանը հնչականորէն մօտ եզր է փնտռուում, ապա, փոխանակ գնալու Ուրարտու (որ արդէն տուել է Արարատ ), կարելի էր գնալ հնչումով աւելի մօտ եղող *Օլտո* (Էրգրումից հիւսիս-արեւելք) կամ *Օրդու* (Տրարիգոնից արեւելուոք): Ուստի, պիտի ասել, թէ պէտք չէ տարուել անուան պատահական (փաստերով չիմնաւորուող) նմանութիւններով ու դրանցով հանել ծանրակշիռ հետեւութիւններ:

Ժամանակին ցոյց եմ տուել ու վարը՝ «Երուանդունիները» եւ «Քիայնին» բաժիններում նորից ցոյց կը տամ, թէ Ուրարտու եւ Քիայնա անունները աշխարհագրական եզրեր են եւ չունեն ցեղագրական արժեք, իսկ Խալդիմ էլ քնար չի եղել խորրի: Ուստի, միանգամայն պիտի պարզ լինի, թէ Ուրարտուի ժամանակ, նաիրեանները, որոնց պետութիւնն էր Ուրարտուն, արդէն կազմաւրուել էին որպէս հնդեւրոպախօս ժողովուրդ:

14. Մ.թ.ա. II եւ I հազարամետակներին, Ասորեստանի եւ Ուրարտուի արքաների կողմից յիշուած նաիրեան ցեղերը հայ Արշակունիների ժամանակ (ըստ մատենագրական տեղեկութիւնների) հանդէս են գալիս որպէս առանձին նախարարութիւններ, ինչպէս Daiaeni-ն՝ Տայր, Abilian-i-ն՝ Աբեղեան, Arşuniuni-ն՝ Արծրունի, Abuni-ն՝ Հաւունի, Eriahi-ն՝ Շիրակ, Abaeni-ն՝ Ապահունի, Alzini-ni-ն՝ Աղձնիք, Şurpani-ն՝ Ծոփք եւլն: Հետեւարար, պիտի ընդունել, թէ հայ նախարարութիւններից շատերը ժառանգ էին մնացել Հայկական լեռնաշխարհի նաիրեան ցեղերից, որոնցից ոմանք (առանձնապէս փորբերը) պիտի ընդգրկուած լինեն մեծ նախարարութիւնների կազմում:

Սրանց տերիտորիաները տարածուած էին հարաւից՝ Ուրմիոյի լճից մինչեւ Եփրատ, իսկ հիւսիսից՝ Հայասայի, Տայրի եւ Գեղարքունիքի (Uelikuni-ի) վրայով մինչեւ Կուր գետն ու Կասպից ծովի մատոյցները: (*Բաշահովտի* ու *Բաղնատան* նաիրեանների

ցեղակիցները ապրել են նաև Սիւնիքի Հաղպ շրջանում, եւ Մուշի կողմի մեղրագետցիների ցեղակիցները՝ Մեղրիի շրջանում։ Սրանց «արեւորդիներ» լինելու յիշատակը պահուած պիտի լինի Արեւիք գաւառանուան մէջ):

Մեզ լաւ յայտնի է թէ հայկական նախարարութիւններից շատերը ունեին իրենց ինքնուրոյն տերիտորիաներն ու առանձին բարբառները։ Մեզ յայտնի հայ բարբառներից շատերը իրենց հնչինային, ճեւարանական ու բառային պաշարի տեսակէտներով՝ գրաբարի համեմատութեամբ ունեն այնպիսի տարբերութիւններ, որ դժուար է նրանց համարել գրաբարի յետագայ սերունդներ։

Ոմանք ասում են թէ հայ գրերի գիտի ժամանակ չկային հայկական առանձին բարբառներ, եւ թէ հայ բարբառները առաջացան գրաբարից՝ 5-րդ դարից յետոյ։ Ուրեմն, ըստ նրանց, դուրս է գալիս, թէ երբ հայերէնը բաժանուեց հնդեւրոպական մայր լեզուից, մի քանի հազար տարիներ, մինչեւ Սեպոպեան գրերի գիտոր, չկրեց որեւէ փոփոխութիւն, կամ Հայկական լեռնաշխարհի բոլոր (առանձին ու առանձնացած) շրջաններում կրեց զարգացման նոյն փոփոխութիւնները, ամէն կողմ պահպանեց ճեւարանական ու հնչինային հայասարութիւնները, չունեցաւ ոչ մի ճիշտարում, չունեցաւ ոչ մի բարբառ, եւ յանկարծ, գրերի գիտից յետոյ (լեզուն յարաբերաբար կայունացնող գրագիտութեան պայմաններում) սկսեց փոխուել ու ճիշտարուել եւ առաջացնել բարբառներ։ Նման հայանականութեան մասին մտածելն իսկ անընդունելի է բոլորովին։

Հայ բարբառներից ոմանց միջեւ եղած տարբերութիւնները այնքան մեծ են, որքան հնդեւրոպական ընտանիքի ներկայ մեծ լեզուների (ասենք՝ լատինականի, իրանականի կամ սլավոնականի) միջնալային տարբերութիւնները։ Որոշ հայ բարբառներ նոյն պէս անհասկանալի են մէկը միւսին։ Բարբառներում կան հայ բառերի որոշ պաշար ու քերականական տարրեր, որոնք յատուկ չեն գրաբարին։ Ուստի պիտի ընդունել, որ հայ բարբառներից շատերի՝ մի մայր լեզուից բաժանումը պիտի տեղի ունեցած լինի շատ աւելի խոր անցեալում։ Հետեւաբար, ինչպէս իրաւացիօրէն նշում է

Պրոֆ. Ռ. Իշխանեանը, «Հայ բարբառները լիովին հնարաւոր կը լինի անուանել հնդեւրոպական ընտանիքի հայկական լեզուախումք»<sup>1</sup>:

Միաժամանակ պիտի ասել, թէ այդ բարբառները չեն կարող հասած լինել այդպիսի տարբերութիւնների եւ չեն կարող պահպանած լինել իրենց այդ ինքնուրոյնութիւնները, եթէ նրանց կրողները պահպանուած չինեն շատ հնուց որպէս բնակչութեան մի առանձնացած միաւոր՝ մի սեփական, առանձին ու հաստատուն տերիտորիայում:

Ուստի, կասկած չկայ, թէ հայկական նախարարութիւններից շատերը, իրենց լեզուատերիտորիալ ինքնուրոյնութիւններով, ժառանգ էին մնացել Հայկական լեռնաշխարհի նախրեան ցեղերից: Հետեւարար, պիտի ընդունել, թէ նախրեան ցեղերի լեզուն արդէն զիշաւորաբար հնդեւրոպական էր, եւ նրանց լեզուածիւղերը պատկանում էին հնդեւրոպական ընտանիքի հայկական բնիկ լեզուախումքին:

15. Վերեւում արդէն ցոյց եմ տուել, թէ *բիր* (տարբերակ՝ *բեր*) «ցեղ, տուն, քաղաք» բառը նախրեան բնիկ բառ է, որով բաղադրուած են նախրեան *Գինզի-բիր*, *Շինի-բիր-նի*, *Տուրու-բեր-ան*, *Առ-բեր-անի*, *Արմա-բիր* (Արմաւիր) տեղանուն-ցեղանունները: Ցոյց եմ տուել, թէ այս *բիր* (*բեր*) բառը հնդեւրոպական է:

*Բիր* բառը, տեղանուններում, որպէս վերջին բաղադրիչ, կորցնում է իր *ի-ն՝* տեղանուանական -իա վերջածանցի կցումով (*-բիր + իա= -բրիա*), օրինակ՝ *Su-bir* > *Su-bria*: Այս ձևով կան նաեւ սուբարիական Ալլա-բրիա (Ուրմիոյ լճից հարաւ) եւ շուրբիական Իշպիլիբրիա (Իշպիլիբրիա) քաղաքի անունները: Յ. Գարակեօքեանը, իր մի աշխատութեան մէջ, խօսելով Կաշիարիի շրջանում գտնուած *Իշպիլիբրիայի* մասին, նրա *-բրիա* վերջաւորութիւնը համեմատում է նոյն վերջաւորութիւնն ունեցող մի շարք թրակափոխական քաղաքների (*Սեսամբրիա*, *Ակելաբրիա*, *Պոլտիորրիա*, *Սեսեմբրիա*, *Կոմբրիա*, *Սենեբրիա*, *Սելիմբրիա*, *Թիմբ-*

<sup>1</sup> Ռաֆայել Իշխանեան, «Համեմատական Լեզուարանութեան Նոր Յայտնագործութիւնները եւ Հայերի Ծագման Հնագոյն Պատմութեան Հարցերը», ԲԵՀ, 1979, No 2 (38), էջ 100:

*րիա եւ Սալսմրդիս*) անունների հետ եւ գտնում է թէ *րրիա* բառաձեւը հնդեւրոպական է<sup>1</sup>:

Հետեւաբար, պիտի հաստատ համարել, թէ նախրեան *րիր* բառը հնդեւրոպական է: Bria բառաձեւը իր -ia վերջաւորութեամբ ուշ շրջանի երեւոյք է, քան թէ բուն եր արմատը (-ia վերջաւորութիւնը, տեղանուններում, առհասարակ աւելի ուշ ժամանակաշրջանի երեւոյք է), ինչպէս հնագոյն Su-bir անուան Շս-*bria* (> Subir + ia) ձեւը աւելի ուշ շրջանում է երեւում: Հետեւաբար, այս բառի (իր հնագոյն եւ ուղիղ եր ձեւով) սուբարի-նախրեան ցեղանուն-տեղանունների մէջ գտնուելը ցոյց է տալիս նրա հնդեւրոպական հայրենիքի վայրը:

Սա արդէն նոյնպէս կարեւոր փաստ է, թէ նախրեան ցեղերը, որոնցից շատերը ունեին նախրեան *րիր* բառով կազմուած անուններ, խօսում էին հնդեւրոպական լեզուով: Որով՝ հնդեւրոպական էր եւ Ալլարիա ցեղը:

16. Այս անուններից ոմանց հնդեւրոպական *րիր* (կամ *րեր*) բաղադրիչներից յետոյ դրուած -*ահ* եւ -*ահի* վերջաւորութիւնները (Չինիրի-նի, Առքեր-անի, Տուրուբեր-ան[ի] եւլն.) աւելի ուշ նստուածքներ են, որոնք կարող են լինել խուրրիական կամ նախրեան-հայկական վերջաւորութիւններ. թէեւ խուրրիերէնը ունի այդ վերջաւորութիւնները, բայց հայերէնում էլ նրանց գոյութեան մասին արդէն խօսել ենք I գլխի 6-րդ բաժնում:

17. Փաստ է նաեւ այն, թէ միայն պաշտօնական արձանագրութիւնների ոչ-ընթացիկ լեզուին յատուկ *Արգիշտիխինհիլիի*, *Սենուախինհիլիի*, *Ռուսախինհիլիի*, *Սարդուրիխինուրդա*, *Արգիշտիունա* եւ նման տեղանունները, պատկանած չինելով ժողովրդի խօսակցական լեզուին, չեն պահպանուել. օրինակ՝ գիտենք, թէ *Արմալիր* անունը, որը պատկանում էր իր ընթացքի մէջ եղած նախրեան հայերէնին:

18. Կարելի էր նշել եւ այն թէ ուրարտական առաջին ու վերջին արձանագրութիւնների լեզուի մէջ (մօտ 200 տարի անցնելուց յետոյ), նշանակալի փոփոխութիւն չի նկատուում: Սա ցոյց է տա-

<sup>1</sup> Յ. Գարակէօքեան, յօդուած (ոռուերէն), PHA. 1, 1981:

լիս թէ այդ լեզուն չի եղել խօսակցական՝ այդ ժամանակներին, այլապէս նշմարելիօրէն փոխուած կը լինէր:

19. Արդէն գիտենք, թէ *Բէլի* դէմ (ասուրաբարելական թշնամիների դէմ) մղուած ճակատամարտում իր աղեղով յաղթած *Հայկը* (հայերի նախահայր-աստուածը) *Խոսրովի* է: Սհա ուրարտական արձանագրութիւններից մի տուեալ այդ մասին.

«<sup>D</sup>Haldini ստաբի մասնie <sup>GIS</sup> Surie karuni <sup>KUR</sup> աշշու <sup>LU</sup> huradie»<sup>1</sup>

(«Խալին դուրս եկաւ [արշալի] իր գէնքով, յաղթեց ասորեստանեան բանակին»):

Միանգամայն պարզ է, թէ Խալի-Հայկը եղել է նաիրեան հայերի աստուածը: Արանք էլ իշխել են Ուրարտուում եւ ուրարտական արձանագրութիւնների լեզուն էլ չի եղել, այդ օրերին, նրանց խօսակցականը: Եւ ինչպէս տեսանք, նաիրեան ցեղերից շատերը, յատկապէս զլխաւորները, յետազայում երեւում են որպէս նախարարութիւններ հայկական Արտաշէսեան ու Արշակունեան թագաւորութիւնների կազմում:

20. Բարեբախտաբար մեզ հասել է հինգերորդ դարում (Սահակ Կաքողիկոսի օրերին) կազմուած *զահնամակը*՝ հայկական 70 նախարարութիւնների ցուցակը՝ արքունիքի ժողովարահում հայոց արքայի գահի կողքին իրենց արքունների գրաւած աստիճանական դիրքերի հերթականութեամբ<sup>2</sup>: Այս ցուցակից պարզ երեւում է, թէ ուրարտական ժամանակներից եկողնները՝ նաիրեան ցեղերից ժառանգ մնացածները (Խոռիսունինների, Ռշտունինների, Արծրունինների, Տարօնի [Մամիկոննեանների], Ծոփքի, Մոկաց, Ապահունինների, Տայքի, Արեղեանների եւ այլ նախարարութիւնները) գտնուել են հայոց արքայի գահի կողքին՝ նախարարական արքունների առաջաւոր դիրքերում:

Այս բոլորը ցոյց են տալիս թէ Հայկական լեռնաշխարհում Ուրարտական թագաւորութեան յաջորդած թագաւորութիւնները

<sup>1</sup> Ուրարտական արձանագրութեան այս հատուածը բերել եմ Արգիշտի Ա-ի արձանագրութիւնից. տես ՅԿՀ, 218:

<sup>2</sup> Այս ցուցակը տես՝ ԱՀԾՈՒ, 326-327: Կամ տես՝ Խորենացի, թարգմ. Մալխաննի, 1940, ծանօթութիւնների մէջ, էջ 337:

նոյնպէս եղել են նոյն նաիրեան ցեղերի պետութիւններ՝ եղել են Ուրարտուի շարունակութիւնը:

### **3. ԵՐՈՒԱՆԴՈՒՆԵՐԸ**

---

Ուրարտական պետութեան (աւելի ճիշդը՝ հարստութեան) անկման ժամանակաշրջանի պատմութիւնը մութ է տակալին: Խօսուում է այն մասին, թէ մեղացիները յաղթել ու վերջ են տուել Ուրարտուին՝ իրենց հետ դաշնակցած որոշ հայերի (երեսի ուրարտական արքաների վերաբերմունքից դժգոհ որոշ նաիրեան ցեղերի) գործակցութեամբ:

Այս վերջին միտքը, ընդհանուր առումով հաւանական լինելով հանդերձ, անհրաժեշտ լոյսը չի սփռում ուրարտական հարրստութեամբ յաջորդած Երուանդունի հարստութեան ցեղային պատկանելութեան հարցի շուրջ:

Պարզ է թէ Երուանդ (Երուանդունի) անունը տոհմական անուն է: Իսկ այդ տոհմի ցեղային պատկանելութեան հարցը մնում է մութ՝ տուեալների սակաւութեան պատճառով, եւ ենթակայ՝ հակասական կարծիքների: Ոմանք որոշիչ արժէք տալով յետազայում աքեմենեանների հետ նրանց ունեցած խնամիական կապերին, եւ յատկապէս աչքի առաջ ունենալով Երուանդ անուան ծագումը պարսկերենով ստուգարանելու կամ մեկնարանելու սխալ փորձները, միտում են Երուանդունիներին վերագրել պարսկական ծագում, եւ դա այն դէպում, երբ Հայաստանում ուրարտական հարստութեան անկումից (590-585 մ.թ.ա.) յետոյ Ուրարտական պետութեան նոյն հողամասերը ընդգրկած Երուանդունիների պետութիւնը գտնուում էր ոչ թէ պարսիկների, այլ, Աստիագէսի օրերին (584-553 մ.թ.ա.), մեղացիների գերիշխանութեան տակ, որոնք իրենց նուաճած Մեծ Ուրարտուի գահի վրայ չէին նստեցնի իրենց հակառակորդ (կամ մրցակից) պարսիկներից որեւէ մէկին, այն պարսիկներից, որոնք եռամեայ արիւնալի պայքարով է որ Կիւրո-

սի դեկավարութեամբ, շատ շանցած, տապալեցին մեղացիների (Աստիագէսի) իշխանութիւնը, մ.թ.ա. 553 թուականին:

Տուեալների սակաւութեան պատճառով, Երուանդունի տոհմի ցեղային պատկանելութեան անորոշութիւնը եւ Երուանդ անունը պարսկերէնով ստուգարանելու փորձերը պատմագրութեան մէջ հանդիսացել են այն գլխաւոր թիրիմացութիւն-ազդակը, որ աղաւաղել է Ուրարտուի Արամեան<sup>1</sup> հարստութիւնից Երուանդունի հարստութեանը անցման ժամանակաշրջանի իսկական իրադրութիւնը եւ բոլորովին շեղել ու սխալ ուղղութեամբ է տարել թէ Ուրարտուի եւ թէ յետագայ ժամանակաշրջանների պատմութիւնը:

Այստեղ կը բերեմ այս շատ կարենոր հարցի լուսաբանման համար կատարած իմ նոր հետազօսութիւններն ու դիտումները:

Նախապէս ասեմ, թէ մեղացիները, Ուրարտուին յաղթելուց յետոյ, նպատակ ունենալով մինչեւ Փոքր Ասիայի խորքերը հասնող կայսերական մեծ նուաճումների, պիտի չուզենային պետական մեծ աւանդոյթ ունեցող նաիրեան հպարտ ժողովրդի զգացումները վիրատրող ու դժգոհութիւն գրգռող մի օտար անձնաւորութիւն դնել Ուրարտուի գահի վրայ. մի քաջ ու հպարտ ժողովրդի, որի գործակցութեան ու զինակցութեան պէտք պիտի ունենային այդ ծաւալումների ժամանակ: Ուստի, մեղացիները պիտի ընդունած լինեին, որ Ուրարտուի գահի վրայ գար ուրարտական Արամեան հարստութեան ոչ-ուղիղ շառավիղներից (ազգակից) մէկը կամ՝ Ուրուատրին ու յետոյ էլ Ուրարտուն կազմած նաիրեան գլխաւոր ցեղերից մէկի իշխանը:

Ինչ վերաբերում է Երուանդ անուան ծագմանը՝ իմ հետազօտութիւնները ցոյց են տալիս թէ այդ անունը, որպէս արքայանուն, կապուած՝ Երուանդունի տոհմի եւ նրա երկրի հետ, շատ աւելի հին է քան կարծուում է: Ես գտնում եմ թէ Երուանդ (Er-vand) անունը գալիս է սումերական Ur-banda անունից: Այս անձնանունը գտնուում է Նարամ-Սինի 17 թշնամիների մասին խօսող խեթա-

<sup>1</sup> Թէեւ ես գտնում եմ, թէ Ուրարտուի բոլոր արքաները ծագում են Արամէից, բայց ներկայ հարցում կարենոր չէ՝ դա ճիշդ է, թէ ոչ: Այստեղ, Արամէի (Խորենացու յիշած Արամի) անունով բոլորին կոչում եմ Արամեան:

կան յայտնի արձանագրութեան մէջ, արքաների ցուցակի 15-րդ տեղում, ուր գրուած է.

«<sup>m</sup>Ur-[b]a-an-da LUGAL KUR <sup>URU</sup>Ni-ik-ki [...]»<sup>1</sup>.

(«Ur-banda արքան Ni-ik-ki[...] քաղաքի երկրի»):

Ni-ik-ki[...] քաղաքանուան վերջնամասը, գտնուած լինելով արձանագրութեան վնասուած մասում, ջնջուած է: Ես գտնում եմ, թէ այդտեղ պիտի լինի –րա վաճկը կամ –իր-րա վաճկերը, եւ այդ տեղանունը պիտի կարդալ Ni-ik-ki-իր-րա (Nikirpa կամ Nikirra): Այս Նիկիպսա տեղանունը, որպէս լեռնանուն, յիշուել է Սարգոն II-ի կողմից՝ Ասորեստանից դէպի Մանա եւ Ուրարտու կատարած իր արշակի մասին խօսող արձանագրութեան մէջ:

Ur-banda անուան Ur քաղաքիչը համեմատել Աքքաղի արեւելքում Զազրուեան լեռների շրջանի (Gutium-ի) արքայ Gudea-ի որդի Ur-Ningirsu եւ Լազաշի քուրմ-արքայի Ur-Bau անունների հետ, իսկ banda քաղաքիչը համեմատել Երեքի արքայ Էնմերքարի՝ Արատտա ուղարկած պատգամաւորի Lugal-banda («արքայ-կրտսեր» կամ «արքայի նեցուկը՝ օգնականը») անուան հետ:

Յայտնի է, թէ ուրարտական (եւ որոշ հին լեզուների) բառերի սկզբում եղած b-ն՝ յետազայ հայերենում հնչուել է վ. ինչպէս՝ Biaina > Վան: Այդպէս էլ Ur-banda անուան banda քաղաքիչը տուել է վաճիդ, որով Ur-banda քարդ քառը հնչուել է Եր-վաճդ (Երուանդ):

Ur-banda արքայի Nikirra քաղաք-երկրի տեղը գրեթէ յայտնի է Սարգոն II-ի դէպի Մանա եւ Ուրարտու կատարած արշակի մասին բողած արձանագրութիւնների տուեալներով: Բերում եմ այդ արձանագրութիւնների թարգմանութեան մեջ հետաքրքրող մասերը.

«Ես մեկնեցի իմ արքայական Կապախ քաղաքից եւ դժուար անցում կատարեցի Վերին Զարով՝ իր յորդումի ժամանակ: Երորդ օրը հանդիսաւոր խոսում տուեցի Էնիլ եւ Նինյիլ աստուածներին ...., որի վրայ Մարդուկի եւ Շամաշի քանակներին ցատկումներով անցկացրի Ներքեւի (Փոքր) Զարով, որի անցումը դժուար է, կարծես (լինի) մի խրամ: Ես մտայ քարձր Կուլլար լեռ-

---

<sup>1</sup> ԱՀԾՈՒ, 11:

նաշղթայի անցքը՝ *Louppi*սի երկրի, որին կոչում են (նաև) Զամուա: *Sumbi*-ի շրջանում զօրատես կատարեցի...: (Այսուհետեւ) երբի գիծը ուղղեցի դէպի լեռները: Ես Զիկիրտու եւ Անդիս երկրների դէմ ուղղեցի լուծը (կառքը) Աղադ եւ Ներգալ աստուածների, (որոնց) խորիրդանշանները գնում էին իմ առաջից: Ես գնացի *Nikirra* եւ *Ura* լեռների միջով, բարձր լեռներ՝ որոնք ծածկուած էին ամէն տեսակի ծառերով....: Նրանց միջով (հոսող) *Buria* գետը անցայ...»<sup>1</sup>: Սարգսնը, սրանից զատ եւ առանձին, նորից գրում է. «... *Sumbi*-ի շրջանից գնացի *Nikirra* եւ *Ura* սեպ լեռների արանքով: Դէպի Ուրարտու, Զիկիրտու (եւ) Սանայան երկիր, Նայիրի եւ Սուսասիր արշաւեցի յաղբականօրէն...»<sup>2</sup>:

Այս տուեալները ցոյց են տալիս, թէ Նիկիպսա լեռը, որ պահում է Նարամ-Սինի ժամանակուայ՝ Ur-banda արքայի քաղաքի ու նրա երկրի անունը, գտնուել է Մուսասիր-Արդինիի հարաւային մասում, *Louppi*ի եւ Ալլարիայի հիւսիսում, մօտաւորապէս ներկայ Ուեանդուզ քաղաքի ու լեռների շրջաններում: Արդէն Ու-վանդ(ուզ) անունը որոշակիորեն պահում է Ur-banda > Եր-վանդ (Երուանդ) անունը, եւ անհաւանական չէ, որ այն լինի հենց Նիկիպսան՝ Ur-banda-ի գլխաւոր քաղաքը:

Այս փաստերը ցոյց են տալիս, թէ Մուսասիր-Արդինին (ինչպէս եւ Ուրուատրին՝ Խորենացու յիշած Արարադն ու Հայոց Զորը, որ կոչուում էր նաեւ Երուանդունիք), Նարամ-Սինի ժամանակներից մինչեւ Ուրարտուի Արամեան հարստութեանը յաջորդած Երուանդունի հարստութեան օրերը, անցած երկու հազարամեակներից յետոյ էլ, շարունակել են պատկանել Երուանդունի տոհմին:

Այս իրողութիւնը աւելի հասկանալի է դարձնում, թէ ինչու Շահնամէում Շիզրիսը (Երեւի Երուանդունիների այս հայրենիքից սկիզբ առնող Արեւելեան Շիզրիսը) կոչուել է Arwand<sup>3</sup>:

Այդ իրողութիւնը հաստատուում է նաեւ պատմագրական այլ տուեալներով: Ահա թէ ինչ է գրում Ակադ. Ս. Երեմեանը. «Անուղակի մի շարք տուեալներ բերում են այն եզրակացութեան թէ Ե-

<sup>1</sup> ARAB, II, 74:

<sup>2</sup> Նոյն, 99:

<sup>3</sup> Հ. Աճառեան, Հայերէն անձնանունների բառարան, տե՛ս Երուանդ:

բուանդունիների դինաստիան ծագել է Մատիենին-Մանային սահմանակից Արդինի-Մուսասիրի երկրի տերիտորիայից, որի հիւսիս-արեւմտեան բարձր լեռնային մասը մտնում էր Ուրարտուի, իսկ աւելի ուշ՝ Հայաստանի կազմի մեջ: Պլինիոսը այդ երկրամասում յիշատակում է Օրօանդների (Orondes) ցեղը, որ ապրում էր Գաւգամելա քաղաքից արեւելք: Դա համընկնում է ժամանակակից Ռեւանդուզի շրջանին: Յ. Մանանդեանի կարծիքով, այդ Օրօանդների հետ պետք է կապ ունենայ Վասպորականի գաւառներից մեկի՝ Արուանքունիքի (Երուանդունիքի) անունը: Այս գաւառը կոչուում էր նաև Հայոց Զոր և գտնուում էր Վան քաղաքից հարակ՝ Հայոց Զոր (Խոչար) գետի հովտում: Երուանդունիների նախարարական տոհմը, այդ գաւառի ժառանգական իշխանները, գոյութիւն ունեին դեռեւս մ.թ. VII դարում»<sup>1</sup>:

Սորեստաննեան եւ ուրարտական արձանագրութիւններից մեզ լաւ է յայտնի թէ Մուսասիր-Արդինիի Խալդեան տաճարը եղել է Ուրարտուի կրօնական զլսաւոր կենտրոնը, այնպէս ինչպէս Էջմիածինը ներկայ հայերի համար: Նշաններ կան ընդունելու, թէ Խալդեան այդ տաճարը գոյութիւն ունէր Ուրարտուի կազմաւորումից առաջ՝ նախկին Ուրուատրիական, հաւանաբար, եւ Միտաննիական օրերից: Այլապէս՝ Ուրարտուի արքաները իրենց կրօնական զլսաւոր կենտրոնը կը հաստատէին Տուշպա-Վանում կամ գոնէ Արգիշտիխինիլի-Արմափրում:

Այս իրողութիւնը ցոյց է տալիս, թէ Ուրարտուի Արամեան հարլաստութիւնը պիտի ցեղակցական կապ ունեցած լինի Մուսասիր-Արդինիի իշխանական տոհմի ու ժողովրդի հետ (որով՝ Երուանդունիների հետ): Յիշենք Ռուսա Ա-ի ողբը՝ Մուսասիրի Խալդեան տաճարում Սարգոն Բ-ի կատարած կողոպուտի համար: Արդէն բաւական փաստեր կան ընդունելու, որ Ուրարտուի թէ անուանական եւ թէ պետական նախորդը եղել է Ուրուատրին, ուր կազմաւորուած նախեան ռազմա-քաղաքական միութիւն-կենտրոնը, Ասորեստանի ճնշումների տակ, ստիպուած է եղել քաշուել աւելի

---

<sup>1</sup> ՀԺՊ, 439-440:

հիւսիս եւ հաստատուել Վանայ լճի շրջակայքում (ըստ Խորենացու՝ *Հայրում*):

Ահա ելնելով այս բոլորից՝ ես գտնում էի, թէ մեղացիները, յաղթելով Ուրարտուին (Երեւի՝ մղուած այդ ահեղ ճակատամարտերում զրիուել էին Արամեան վերջին արքան ու նրա ուղղակի ժառանգները) չեն կարող Ուրարտուի քաջ, հպարտ ու պետական մեծ աւանդոյթներ ունեցող ժողովրդի իշխանութեան գլուխ (կամ զահի վրայ) դնել մի օտարին: Եւ, ինչպէս ասացի, նրանք, իրենց յետագայ ծաւալումների համար նաիրեան քաջ ցեղերի համագործակցութիւնը ապահովելու դիտումով, պիտի ընդունած լինեն, որ նրանց զահի վրայ զայ Արամեան հարատութեան ոչ-ուղիղ շառաւիղներից մէկը կամ նրանց ազգակից նաիրեան-հայկական ցեղերից մէկի իշխանը: Եւ, ինչպէս պարզ երեւում է, նա եղել է Մուսասիրի շրջանի Երուանդունի տոհմից մի իշխան, որը մօտաւոր հարեւանը գուցէ եւ գործակիցն էր մեղացիների, որոնք ապրում էին Մանայում ու նրա արեւելքում:

Ուստի, պարզ երեւում է, թէ Ուրարտուում, Արամեան հարստութեան տեղ Երուանդունիների գալուստով, իշխանութեան կազմում ցեղային փոփոխութիւն չի եղել: Տուշպա-Վանն էլ շարունակել է լինել մայրաքաղաքը Երևի: Հետեւաբար, պիտի ընդունել, թէ Երուանդունիների Արմինան եղել է շարունակութիւնը ուրարտական պետութեան, որը ասուրաքելական լեզուվ շարունակեց կոչուել Ուրաշտու (=Ուրարտու):

Կատարուած այս (ոչ-ցեղային) փոփոխութիւնը լոկ այն էր, թէ Ուրարտու-Ուրաշտուն դարձել էր հարկատու՝ նախ մեղացիներին ու յետոյ, որոշ ընդմիջումով, Արեւենեաններին: Սակայն (հայոց) Արտաշէս Ա-ի օրերին, ամբողջովին վերականգնել էր ուրարտական նոյն հողամասերի վրայ իր ուրարտական նախկին ամբողջական անկախութիւնն ու պետական մեծութիւնը՝ շարունակելով լինել Երուանդական, եւ Տիգրան Բ-ի օրերին հասել էր Արգիշտի Ա-ի օրերի հզօրութեան: Մեզ արդէն յայտնի է, թէ Արտաշէս Ա-ը, հենց իր ուղղակի ու բացորշ խոստովանութեամբ, եղել է Երուանդունի տոհմից՝ լինելով (Երեւի) ոչ-ուղիղ գծով շառաւիդն ու

շարունակութիւնը Ուրաշտու-Արմինայի Երուանդունի հարստութեան:

Հետեւարար, պիտի լնդունել, թէ Հայկական լեռնաշխարհում, Արամեան հարստութեանը յաջորդած Երուանդունիների (եւ Երուանդական Արտաշեանների) օրերի հայկական (*Արմինա*) պետութիւնը, իր ղեկավարութեան մէջ ցեղային ոչ մի փոփոխութիւն չկրելով, եղել է հենց շարունակութիւնը Ուրարտուի: *Ուրարտու-Ուրաշտուն*, որեմն, գոյատեւել է *Արամէից* (մ.թ.ա. 860-) մինչեւ *Էրաստ* (մ.թ.-1), լեզուա-աշխարհագրական նոյն միջավայրում, հանդիսանալով նոյն նախրեան-հայկական ցեղերի (յետագայում՝ նախարարութիւնների) ռազմա-քաղաքական համադաշնութիւնը:

Ինչպէս ցոյց տուեցի վերեւում, *Երուանդ* արքայանունը (որով Երուանդունի տոհմը) զալիս է Նարամ-Սինի ժամանակներից: Ի հարկէ՝ Ur-banda-ի նախնիները եւ նրանց տոհմը պիտի գոյութիւն ունեցած լինեն Նիկիապա քաղաք-երկրում (Ուեւանդուզի շրջանում, հնդեւրոպական Ալլաբրիայի հիւսիսում) շատ աւելի հնուց, եւ ես կարծում եմ, թէ նրանք եղել են նախրեան սուրարիներ (սրանց տեղը տեսն համար 3 քարտէսում): Եւ ինչպէս տեսանք, Սուրարի երկրում էր գտնուում Արմանին: Արդէն մեզ յայտնի է, թէ Երուանդ Ա-ի որդիներից մէկը (Չահնամէում Arwand կոչուած) *Տիգր*-իս<sup>1</sup> գետի<sup>2</sup> անունով կոչուել է *Տիգր*-ան, իսկ մէկն էլ *Սուրարիի* անունով՝ *Սարարիս* (> Շաւարշ):

Ur-banda-ի (Երուանդունիների) այս հնութիւնը արդէն հասկանալի է դարձնում այն, թէ այդ օրերի Մանայում ու նրա արեւելքում գտնուած հնդեւրոպականների (յետագայ հնդիրանականների) որոշ խմբեր, շարժուելով դէպի Իրանական Սարահարք ու Հնդկաստան, իրենց հետ պիտի տարած լինեն Երուանդունի ձիաւոր (յետագայ Միտաննի մարիաննիները յիշեցնող) ասպետների համբաւը. եւ ահա այդպիսով է, որ arwand քառը գենդերէնում ու սանսկրիտերէնում պիտի պահուած լինի «քաջընթացիկ (ձի)» եւ «քաջ» իմաստով<sup>2</sup>:

<sup>1</sup> Հ. Աճառեան, նոյն: Երուանդ (> Արուանդ) եւ Տիգրան անունները Միտաննի-Ուրարտու օրերին պիտի հայերից անցած լինեն մեղա-պարսիկներին:

<sup>2</sup> Նոյն:

Երուանդունի տոհմի երկրի՝ հնում էլ Նիկիպպա լեռներից մինչեւ Վանայ լճի շրջան՝ մինչեւ Վասպուրականի Արուանդունիք (Երուանդունի) կոչուած «Հայոց Զոր» գաւառը տարածուած լինելը հաստատուում է նաև այն յայտնի տուեալով, թէ այդ տարածութիւնների մէջ ընկած Արեւելեան Տիգրիսը յայտնի է եղել (ինչպէս ասուեց, պահպանուել է Ծահնամէում [ հտ. 1, 70]) Arwand անունով: Հետեւաբար, կարելի է ընդունել թէ Ուրուատրի-Մուսասիր լեռներկիրը հնում էլ գտնուած է եղել Երուանդունի տոհմի երկրի մէջ: Սա արդէն հենց Սուրարտուն է:

Ինչպէս արդէն գիտենք, հենց այս Ուրուատրի-Մուսասիր լեռներկիրն է, որ մ.թ.ա. III հազարամեակի սկզբներին (Արատտա-Էրեք դիցազնավէպում) կոչուել է Hurum: Թէեւ որոշ նշաններ կան, թէ III հազարամեակում (մ.թ.ա.) խորրիխական տարրեր թափանցել են Մերձաւոր Արեւելք (որով՝ Ուրուատրի-Մուսասիր), սակայն նրանք չեն ներկայացրել կարեւոր ոյժ եւ չեն ունեցել այդ երկիրը իրենց անունով Hurum անուանելու շափ զանգուածային առկայութիւն ու կենսունակութիւն: Վարը, «Հնդկորպականներն ու Խորրիմերը» բաժնում, մանրամասնօրեն կը խօսեմ այն մասին, թէ Ուրուատրի լեռներկիրը՝ իր հրաբխային գործունեութեան պատճառով է կոչուել Ուրու-ատրի կամ Կարդու (> Ki-ardu)<sup>1</sup> «վայր կրակի» եւ հենց դրանով էլ կոչուել է Hurum, որը եղել է աշխարհագրական եզր եւ չի ունեցել եթնիկական արժեք:

Յայտնի է, թէ խորրիները՝ մ.թ.ա. II հազարամեակի II քառորդին է որ զաղթականական մեծ զանգուածներով անցան Զագրոսը ու մտան Ասորեստան կոչուած շրջանները եւ այդտեղերից տարածուեցին Հիւսիսային Միջազգետը ու Սիրիա եւ թափանցեցին

<sup>1</sup> Կարդու (< Ki-ardu) «վայր կրակի») եզրի մասին մանրամասնօրէն կը խօսեմ 6-րդ գլխի 2-րդ բաժնում:

Երուանդունիների սումերական Ur-banda եւ Ուրուատրի երկրի Կարդու (< Ki-ardu) անունները պիտի կարեւոր տուեալ համարել իրենց օրերին այս շրջաններում սումերական լեզուի գործածութեան: Որով՝ այստեղ պատեհ եմ համարում նշել թէ այս փաստով պիտի աւելի հասկանալի լինեն (իմ նախորդ ու ներկայ աշխատութիւններով նշուած) սումերահայ լեզուա-մշակութային կապերը, ընդհանրութիւններն ու համընկնումները:

Հայկական լեռնաշխարհ<sup>1</sup> ու Կիլիկիա: Այս ժամանակներին է, որ խուրրիները մեծ տոկոս էին կազմում Ուրուստրի-Մուսափրի շրջաններում: Որով՝ հաւանական է, որ ոչ թէ երկիրը կոչուեց խուրրիների անունվ, այլ, ընդհակառակը, հենց իրենք՝ խուրրիները, այս օրերին, այս երկրի կարեւոր բնակչները դառնալով է որ տեղի Հորու անունով կոչուեցին խուրրիներ եւ այն տարածեցին Սերծաւոր Արեւելքում Միտաննիի օրերին:

Ես գտնում եմ թէ Ur-banda-ի (Երուսանդրունի) տոհմը հանդիսացել է կարեւորներից մէկը նախրեան-սուրարի ցեղերից, որոնք կազմել էին՝ Ասորեստանի հետ միշտ բախման մէջ գտնուած Ուրուստրիի ցեղային միութիւնը, որը, ինչպէս յայտնի է, հանդիսացել է սաղմնաւորումը յետազայ ուրարտական հզօր պետութեան՝ Ասորեստանի ճնշման տակ միութեան վարչական կենտրոնը քաշելով դէպի հիսախ՝ Վանայ լճի շրջանը:

Խորենացին, ասորի մատենագիր Մար-Աքա Կատինայի հին մատեանից քաղելով, պահել է (աւանդական ու պատմագրական) այն տեղեկութիւնը, թէ Հայկը Արարադի երկրից (Ուրուստրիից) դէպի Վանայ լճի կողմը ու Հարք փոխադրուելու առթի՝ իր այդտեղ (Արարադի երկրում) շինած տունը ժառանգ է թողել Արամանեակի որդիի Կաղմուխին (<sup>></sup> Կաղմուխիին): Ասորի պատմագրի հին մատեանում պահուած ու հնուց եկող այս տեղեկութիւնը նոյնպէս ցոյց է տալիս, թէ ինչպէս Կաղմուխին, այնպէս էլ Արարադի այդ երկիրը, որոնք մտնում էին Արամանի-Սուրարտուի մէջ (տե՛ս քարտես 3), պատկանել են Հայկի սերնդին (Արամանեակի որդուն) կամ ժառանգն են եղել հայերի՝ դեռ Ուրարտուի կազմաւորումից առաջ: Արա համար կարող է փաստ լինել եւ այն, թէ այստեղերից է սկիզբ առնում երկրորդ Խարուրը: Այս անունը հայերէնում պահպանուել է, ինչպէս տեսանք, «ախրուր» աղքիւր» իմաստով:

Uru-atri կամ Ur-artu եւ Ki-ardu (>Կորդուր) անունները, ինչպէս ասուեց, աշխարհագրական եզրեր են, որով չունեին ցեղագրական արժեք, թէեւ յետազայում ստացել են այդպիսի իմաստ՝ նրա բնակչների համար: Հայկական լեռնաշխարհի այս հարա-

<sup>1</sup> Այս մասին մանրամասնօրէն կը խօսեմ 5-րդ գլխի 2-րդ բաժնում:

ւային շրջանի արմենո-խորրի (նախրեան) ժողովուրդը, իրենց լեռների դժուարամատչելի դիրքի պատճառով, զարգացրել են կենտրոնախոսյա ձգտումներ: Ըսենոֆոնը (մ.թ.ա. 401) սրանց կոչում է կարդուխներ, որոնք, քաշուելով իրենց լեռների բարձունքները, չին ուզում ենքարկուել Աքեմենեաններին: Այդ ժամանակ, Արմենիայի սատրապութեան սահմանն էլ դարձել էր Արեւելեան Տիգրիսը («Կենտրիտէսը»): Բայց, Արտաշէսեանների ժամանակ, նորից միացուեցին Արմենիային:

Այս բոլորով հանդերձ, նախրեան երկրի այս հարաւային շրջանը եղել է օտար ազդեցութիւններին ամենաշատ ենթարկուած շրջան: Ասորեստանի օրերին, արինալի ճնշումների տակ, նրանցից որոշ խմբեր շարժուել են ոչ թէ միայն դէպի հիւսիս (դէպի Հարք), այլ եւ արեւելք (դէպի Աղրպատական)<sup>1</sup>: Սասանեանների տիրապետութեան ժամանակ (224-642թ.), Կարորու-Կորորուք երկրի արմենո-նախրեան բնակչութեան կարեւոր մասին պարտադրուեց (իրանական բանակայինների ու երկիր բերուած հաստատուած՝ Մատիենի շրջանի մեղական վաշկատուն ցեղերի միջոցով) իրանական զրադաշտական կրօն ու կրմանձի լեզու, արաբական տիրապետութեան տակ էլ՝ իսլամական կրօն: Իսկ սելճուկ-օսմանեան տիրապետութեան օրերին, արինալի հալածանքներից խուսափելու համար, այստեղ քրիստոնեայ մնացած շատ հայեր, դաւանափոխ լինելով, միացան իրենց իսլամութեամբ մեծ արտօնութիւններ ու ազատութիւններ վայելող եւ արդէն Կորորուքուրդ (քիւրդ) կոչուող այդ (մեծ մասամբ արմենիոյ) բնակչութեան:

---

<sup>1</sup> Հաւանական է, որ Աղրպատականի ու Պերսիսի այդ նախրեանները լինեն այդ շրջաններում՝ Polybius-ի (մ.թ.ա. 200-120) եւ յետոյ էլ Ստրաբոնի կողմից Kurtioi կամ Cyrtii կոչուածները, թէեւ անհաւանական չէ նաև այն, որ այս վերջինները լինեն Արգիշտի Բ-ի յիշած Girdu-ni երկրի բնակիչները:

#### **4. ԿԵԼՏԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ՆԱԽԱՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՒ ԿԵԼՏԱ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ՇՓՈՒՄՆԵՐԸ**

---

Մինչեւ այստեղ խօսել ենք Հայկական լեռնաշխարհի աւելի հարաւային շրջանների բնակիչների ու երկրների մասին, որոնք աւելի յայտնի էին պատմագրութեան մէջ՝ շփման մէջ գտնուած լինելով Միջագետքի հին ժողովուրդների հետ։ Իսկ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական ու հիւսիսային շրջանների բնիկների մասին շատ քիչ բան էր յայտնի։

Մանաւանդ հնդեւրոպական հայրենիքի՝ Եւրոպայում տեղադրութիւնը, երկար ժամանակ իշխած լինելով զիտական մտքերի վրայ, անել դրութիւն էր ստեղծել լեզուարանութեան ու պատմագիտութեան վերաբերող մի շարք կարեւոր հարցերում։ Օրինակ՝ աշխարհագրականօրէն անբացատրելի էր մնում այն յայտնի երեւյթը, թէ հայերէնը, հնդեւրոպական ընտանիքում, լեզուականօրէն աւելի մօտ է կանգնած մի կողմից յունական եւ միս կողմից իրանական լեզուածիւղերի հետ։ Առեղծուած էր թէ ո՞րտեղից եկան խեթերը Կենտրոնական Անատոլիա եւ որտեղից անցան հնդիրանականները Իրանական Սարահարք ու Հնդկաստան։ Աշխարհագրականօրէն անհասկանալի էին նաև հնդեւրոպական ու սեմական մայր լեզուների հին ազգակցութեան մասին խօսող երեւյթները, կամ Եւրոպայի հնդեւրոպական լեզուածիւղերի եւ կովկասեան ու սեմական լեզուների միջեւ նշմարուող փոխազդեցութիւնների հետքերը։

Այս բոլորը միանգամից լուսաւորուում են ընդունելով վերջապէս այն իրողութիւնը թէ հնդեւրոպական նախահայրենիքը եղել են Հայկական լեռնաշխարհն ու Փոքր Ասիայի հարեւան շրջանները, մի բան՝ որը առաջադրուել էր մեր կողմից դեռ 1970 եւ 1973 թուերին լոյս տեսած մեր աշխատութիւններում։ Այս տեսակէտով՝ կարեւոր նշանակութիւն ունեցաւ սովետական երկու ակադեմիկոսներ Թ. Վ. Գամկրելիծէի եւ Վ. Վ. Իւանովի «Հնդեւրոպական Լեզուն եւ Հնդեւրոպացինները» երկհատոր աշխատութիւնը, որոնք լեզուագիտական հետազոտութիւնների ճանապարհով եկել են

այն նոյն եզրակացութեան, թէ հնդեւրոպական հայրենիքը եղել է ներկայ Իրաքի, Սուրիայի ու Թուրքիայի շվման շրջանները՝ ներառնելով Վանա լիճը:

Նրանք իրավագիօրէն ցոյց են տուել, թէ հնդեւրոպական լեզուն շվման մէջ է գտնուած եղել մի կողմից սեմական եւ միս կողմից կովկասեան լեզուների հետ: Այսուհանդերձ, նրանք ենթակայական ծայրահեղութեան մէջ են ընկել, երբ հնդեւրոպականների հետ կովկասեանների շփման միջավայրը աշխարհագրականօրէն կովկասեան շրջաններից նշանակալիօրէն իջեցրել են հարաւ՝ հակադրուելով փաստական բացայայտ տուեալների հետ:

Կամ պատմագիտական, հնագիտական ու լեզուաբանական որոշակի տուեալներ, թէ հնդեւրոպականները առկայ են եղել հնում Չըլտըր եւ Սեւանայ լճերի շրջաններում, եւ նրանց բնակութեան սահմանները տարածուել են մինչեւ Կուր գետն ու Կասպից ծովը: Հենց այս (Կուր գետի) շրջաններում էլ տեղի են ունեցել հնդեւրոպական ու կովկասեան լեզուների շփումները:

Գամկրելիծի եւ Խանովի կողմից հնդեւրոպական-կովկասեան շփումների համար որպէս փաստարկութիւն բերուել են հնդեւրոպականներից կովկասեանների կատարած լեզուական որոշ փոխառութիւններ, որոնց մէջ նշուել են նաև *զինի* բառի կովկասեան լեզուներում եղած ձեւերը: Հենց այս զինի բառի մասին էլ ուզում եմ այստեղ բերել իմ դիտարկումները<sup>1</sup>:

Լեզուաբանութեան մէջ ընդունուած է, որ հայերէնի բնիկ *զինի* բառի հնդեւրոպական մայր արմատն է *voinio* / *voino*: Ըստ Աճառեանի՝ սրա ժառանգներից են՝

Հատիներէն -vinum	}	Բառակզրի v-nվ
Իտալերէն -vino		
Սպաներէն -vino		
Ուումիներէն -vinu		
Ֆրանսերէն -vin		

<sup>1</sup> Այս զինի բառի մասին ակնարկութիւն է արել նաև յայտնի լեզուաբան Պրոֆ. J. C. Greerpiնը՝ Գամկրելիծի եւ Խանովի աշխատութեան մասին իր գրախօսականում. տե՛ս BR:

Գերմաներէն -wein	Բառասկզբի v-nվ
Անգլերէն -wine	
Ալբաներէն -vēne	
Հին պատերէն -vino	
Ռուսերէն -vino	Բառասկզբի g-nվ
Կիմրերէն -gwin	
Հայերէն -Գինի	
Խեթերէն -gēnes(š)	

Ինչպէս երեւում է, հնդեւրոպական լեզուածիւղերի մեծ մասը պահել է հնդեւրոպական մայր արմատի բառասկզբի -v-ն, իսկ կելտական լեզուներից կիմրերէնը (Անգլիոյ Wales-ի Welsh լեզուն), հայերէնը եւ խեթերէնը բառասկզբի v-ն փոխել են g-ի:

Ըստ Գամկրելիծէի եւ Իւանովի՝ հնդեւրոպականից կովկասեանների առած փոխառութիւններից են «զինի» իմաստով

Վրացերէն -gvino  
Սւաներէն -gwinel  
Լազերէն -g[w]in

Ինչպէս պարզ երեւում է, կովկասեանների փոխառութիւններն էլ բառասկզբի v-ի տեղ ունեն g, եւ քանի որ հնդեւրոպական ընտանիքի մէջ բառասկզբի v-ի տեղ գ ունեն միայն խեթերէնը (gēns[š]), հայերէնը (զինի) եւ կիմրերէնը (gwin), ապա պիտի ընդունել, թէ կովկասեանները հնդեւրոպականներից առած իրենց այս փոխառութիւնները պիտի կատարած լինեն կամ խեթերէնից, կամ հայերէնից եւ կամ էլ կիմրերէնից (կելտերէնից): Աւելի հաւանական է, որ առած լինեն այս վերջինից, քանի որ կովկասեանները ունեն ոչ թէ ուղղակի g, այլ ճիշդ կիմրերէնի նման gw- նախաձայնը:

Մեզ յայտնի է, թէ հայերէնը հնդեւրոպական բառասկզբի v-ն օրինաչափորէն փոխել է g-ի: Այստեղ պատահական չէ, որ կելտական լեզուներից կիմրերէնն էլ v-ի տեղ ունի gw-: Այս երեւոյթը

Աշմարուում է կելտական լեզուաճիղում կիմրերէնի նման նոյն (քրիտական) խմբին պատկանող կորներէնի եւ բրետոններէնի մէջ եւս: Այս բանը ցոյց տալու համար բերում են (Աճառեանից) տեղի սղութեան համար միայն երեք այլ օրինակներ:

Հայերէն բնիկ գեղծ («սաստիկ փափաք») բառի հնդեւրոպական արմատն է vel, որի ժառանգներից են

Լատիներէն - volo	Բառասկզբի v-ով
Սանսկրիտերէն - varanum	
Զենդերէն - var	
Գորերէն - wiljan	
Գերմաներէն - wollen	
Լիթուաներէն - velyti	
Հին սլավերէն - voliti	

Ուսւերէն - volya

Հին կորներէն - guell	Բառասկզբի g-ով
Բրետոններէն - guell	
Հայերէն - գեղճ	

Հայերէն բնիկ գեղմ բառի հնդեւրոպական մայր արմատն է velmn (< vel/vol), որի ժառանգներից են

Լատիներէն -vel-nos (> vellus)	Բառասկզբի v-ով
Գորերէն -vulla	
Գերմաներէն -vlna (> wolle)	
Անգլոսաքսոններէն -wull	
Անգլերէն –wool	
Հոլանդերէն -wol	
Լիթուաներէն –vilna	
Լեթբերէն -wilna	
Հին պրուսերէն -wilna	
Հին սլավերէն -vlūna	
Զեխերէն -vlna	
Ուսւերէն -volna	

Կիմրերէն -gwlan	Բառասկզբի g-ով
Կորներէն -gluan	
Քրետոներէն -gloan	
Հայերէն -գեղմն	

Հայերէնի բնիկ *գալուուն* բառի հնդեւրոպական մայր արմատն  
է vēsr (> vēr), որի ժառանգներից են

Սանսկրիտերէն -vasanta	Բառասկզբի v-ով
Չենդերէն -vanhar	
Հին պարսկերէն -vāhar	
Պահլաւերէն -vahār	
Գնչուերէն	
(Տաճկաստանում) -varno	
Յունարէն -fέαρ	
Հին սլավերէն -vesna	
Ուուսերէն -vesna	
Լիթուաներէն -vasarà	
Լատիներէն -vēr	
Ուումիներէն -vară	
Հին խալանտերէն -vār	
Հին կիմրերէն -guiannuin	Բառասկզբի g-ով
Կորներէն -guaintoin	
Հայերէն -գարուն	

Այս բացայաց տուեալներից երեսում է, թէ կելտերէնի այս կիմրերէն (welsh), կորներէն եւ քրետոներէն ենթաճիշերը կրող-ների նախնիները իրենց հնդեւրոպական նախահայրենիքում գտնուել են աւելի հայերի մօտ եւ ապրել են մօտաւրապէս այն լեզուաշխարհագրական միջավայրի պայմաններում (կամ միջավայրերի հարեւանութեամբ), ուր հնդեւրոպական բառասկզբի v-ն փոխում էին g-ի:

Միաժամանակ նկատի առնելով այն երեւյթը, թէ հնդեւրոպականներից կատարուած կովկասեան նշուած փոխառութիւնների բառասկզբի *gw*-ն ճշդօրէն համապատասխանում է (հայերէնի ու խեթերէնի *g*-ից աւելի) կելտական նշուած լեզուների բառասկզբի *gw*- ձեւին, ապա պիտի ընդունել թէ կելտական ցեղերի նախահայրենիքը գտնուել է կովկասեաններին աւելի մօտ վայրերում, այսինքն՝ հայերի (Ծիրակի ու Արարատեան դաշտի) եւ կովկասեանների (Միջին Կոր գետի) միջեւ գտնուած մի տարածութեան վրայ:

Այսպիսով՝ զայիս ենք այն հետեւութեան, թէ կելտական ցեղերի նախահայրենիքը պիտի գտնուած լինի հնդեւրոպական հայրենիքի հիւսիս-արեւելեան մասերում, Կոր գետի վերին աւազանի եւ Չըլտըր-Սեւան լճերի շրջանում (եւ ի հարկէ, պիտի չզարմանալ, եթէ կելտական լեզուներում էլ գտնուեն իրերա-կովկասեան լեզուից կատարուած փոխառութիւններ):

Ուրարտուի Ռուսա Ա-ը (735-713 մ.թ.ա.) Սեւանայ լճի մօտ, Ծովինար գիւղի շրջանում, մի ժայռի վրայ փորագրած արձանագրութեան մէջ նշել է Սեւանայ լճի շուրջ իր մէկ տարուայ ընթացքում նուաճած 23 երկրների անունները, որոնցից առանձնացրել է, մէկ արշաւով նուաճուած, հետեւեալ չորս երկրների անունները՝ *Adahuni*, *Velikuhi*, *Lueruhie* եւ *Arquqini*<sup>1</sup>: Իսկ Սարդուրի Բ-ը (764-735 մ.թ.ա.) Վանայ ժայռի վրայ թողած մեծ արձանագրութեան մէջ *Uelikuh* երկրանունը յիշում է *Uelikuni* ձեւով<sup>2</sup>: Ռուսա Ա-ի յիշած այս չորս երկրանունները պահպանուել են աշխարհագրական նոյն կարգով եւ մեզ հասել են հետեւեալ յայտնի անուններով՝ *Adahuni* (=Արցախ), *Uelikuni* (=Գեղարքունիք), *Lueruhie* (=Լոռի) եւ *Arquqini* (=յոյների յիշած Գուգարենէ = Գուգարը):

Արգիշտի Ա-ն էլ (786- 764 մ.թ.ա.) Վանայ Սուրբ Սահակ եկեղեցում գտնուած կորողի վրայ նշել է, իր նուաճած երկրների մէջ, *Luša*, *Katarza*, *Eriahi*, *Gulutahie* երկրանունները<sup>3</sup>: Աղոնցի գործից զիտենք, թէ *Katarza*-ն մեզ յայտնի Կղարջն է, իսկ *Eriahi*-ն էլ ար-

<sup>1</sup> UKN, 329:

<sup>2</sup> Նոյն, 286:

<sup>3</sup> Նոյն, 234:

դէն *Ծիրակմ* է (*Երասիս-ի* վերին աւազանում): Գալով *Gulutah*ի*-ին*՝ նրա տեղադրման համար ելակէտ եմ ընդունել Արգիշտիի արձանագրութեան մէջ բերուած այս տեղանունների նշման հերթականութիւնը, ըստ որի *Eriahi-ն* աշխարհագրականօրէն պիտի գտնուած լինի *Katarza-ի* եւ *Gulutah*ի*-ի* արանքում. եւ քանի որ Կղարջը (*Katarza-ն*) գտնուում է *Ծիրակի* (*Eriahi-ի*) արեւմտեան կողմերում, ապա *Gulutah*ի*-ն* պիտի գտնուած լինի, Կղարջ-Ծիրակ գծով, Ծիրակի արեւելեան կողմերում, որ մեզ տանում է Գեղամայ լեռնաշղթայի արեւմտեան կողերին. նրա միւս (արեւելեան) կողերին գտնուում է արդէն *Uelikuni* Գեղաքունին՝ Սեւանայ լճի հարաւարեւմտեան ափի երկայնքով: Այս հաշուով՝ *Gulutah*ի** պիտի տեղադրել Գեղամայ լեռնաշղթայի արեւմտեան կողի երկայնքով դէպի Ծաղկունեաց լեռնաշղթան: Ես գտնում եմ, թէ Գառնիի եւ Գեղարդի միջեւ գտնուող ներկայ *Գողք*, հնում՝ *Գողոք* (=*Gulut*) գիւղի անունը հարազատօրէն պահում է *Guluta(*ի*)*<sup>1</sup> անուան ու երկրի յիշատակը:


Սա ցոյց է տալիս թէ Գեղամայ լեռնաշղթայի եւ նրա յայտնի *Գեղ* (> *Gel*) կոչուած լեռան երկու (իրար հակադիր) կողմերուն գտնուած *Uelikuni* (*Welikini* > Գեղաքունի) եւ *Gulutah*ի** երկրանունները պիտի պատկանած լինեն նոյն *Wel* (> Գել > Գեղ) կամ *Gul* (*Գող*) ցեղի՝ լեռնաշղթայով բաժանուած երկու հատուածներին:

Լեզուաբանօրէն, կովկասեանների՝ կելտականներից կատարած փոխառութիւնները մեզ բերել էին այն հետեւութեան, թէ կելտական ցեղերի նախահայրենիքը պէտք է աշխարհագրականօրէն լինէր կովկասեանների մօտակայքում, եւ որով պէտք է գտնուած լինէր Կուր գետի ակնադրինների ու Սեւանայ լճի շրջաններում: Եւ ահա տեսնում ենք, թէ այդ շրջաններում են գտնուած եղել *Wel* (> *Գեղ*) կամ *Gul* (*Գող*) ցեղի *Uelikuni* եւ *Gulutah*ի** երկիրները: Որով՝ ես աւելի քան հաւանական եմ համարում, թէ *Գեղ* (Գեղամայ) լեռնաշղթան ընդգրկող այս *Uelikuni-Gulutah*ի** լեռներկիրը եղել է յոյների *Keltoi* եւ լատինների (հռոմէացինների)

<sup>1</sup> Ես անհաւանական չեմ համարում, որ այս երկրանունից ծագած լինի նաև Գեղարդ անունը, որի թ-ն պիտի աճած լինի, ինչպէս Գեղաքունին հնչուել է նաև Գեղաքունի ձեւով:

Celtae կոչած Gel / Gaul/ Galli ցեղի նախահայրենիքը: Արդէն Ալիս գետի արեւմտեան մեծ ոլորանի աւազանում (ներկայ Անկարայի շրջանում) բնակութիւն հաստատած կելտական Guluta(hi) երկրի մարդիկ յետազայում (մ.թ.ա. 3-րդ դարում) հռոմեացիների կողմից կոչուում էին Galatae եւ նրանց շրջանը՝ Galatia (հայերի կողմից՝ *Գալատիա*):

Պիտի միանգամայն պարզ համարել, թէ Uelikuhi / Uelikuni ցեղանուն-երկրանունը իր հիմքով (ի հարկէ սրա հետ եւ Guluta-hi-ն) հնդեւրոպական է: Դրա համար փաստ է եւ այն, թէ հայերէնը միայն հնդեւրոպական բառերի նախահունչ v-ն (ս կամ w) փոխել է q-ի (այդպէս էլ՝ Uelikuni > Գեղաքունի):



Քարտէս 6: Կելտական ցեղերի նախահայրենիքը:

Մեր նիւթի համար իրենց ունեցած կարեւրութեան համար Uelikuni կամ Gulutahi երկրանունները տեղադրել են ներկայացուած քարտէսում:

Նոյն ցեղին պատկանած այս երկու երկրանունները թելադրում են ընդունել, թէ Ուսա Ա-ի ժամանակ (մ.թ.ա. 8-րդ դարում) կելտական այս շրջանում բառասկզբի  $v > g$  անցումը դեռ ընթացքի փուլում էր գտնուում եւ իր միջավայրի բոլոր շրջաններում չէր կատարուում միաժամանակ կամ նոյն արագութեամբ: Այս դէպում երբ այդ ժամանակներին Uelikuni-ն դեռ պահել էր իր բառասկզբի U-ն (= W կամ V) լեռնաշղթայի միւս կողմում Gulutah*i*-ն արդէն  $v$ -ն փոխել էր  $g$ -ի: Երէ իմ այս բացատրութիւնը ճիշդ է, ապա պիտի ընդունել թէ նոյն մեծ ցեղին պատկանած եւ Գեղ (Գեղամայ) լեռնաշղթայով բաժանուած երկու հատուածները զարգացնում էին բարբառային տարրերութիւններ, ճիշդ այնպէս, ինչպէս երբ դեռ Խոտրջուրը պահել էր հայերէնի գրաբարածեւ խօսուածք՝ լեռան միւս կողմում գտնուած Կարինը զարգացնում էր Կը ճիւղի բարբառ: Ի հարկէ տարօրինակ չէ, որ մի մեծ ժողովրդի տարրեր հատուածներ ունեցած լինեն նոյն ցեղանուան հիմքով կազմուած անուանումների ածանցային-հնչինային տարրերութիւններ:

Միաժամանակ պիտի նշել, թէ տեղանունները ընդհանրապէս երկար են պահպանում իրենց անուանածեւերը, աւելի երկար են դիմադրում փոփոխութիւնների, քան թէ տուեալ երկրի լեզուի բառերը: Դրա համար էլ, երբ Uelikuni-Gulurah*i* երկրի լեզուն արդէն սկսել էր բառասկզբի  $v > g$  փոփոխութեան ընթացքը,  $v$ -ն փոխելով gw-ի, երկրի Uelikuni անունը դեռ պահել էր իր  $v$ -ն (ս-ս) Սարդուրի Բ-ի օրերին (մ.թ.ա. 8-րդ դարում): Արգիշտի Ա-ի, Սարդուրի Բ-ի եւ Ուսա Ա-ի ջանքերով՝ հայ ժողովրդի կազմի մէջ մտնելով է որ արագացել էր այդ գործընթացը: Uelikuni-ն, Ուսա Ա-ից որոշ ժամանակ յետոյ, տեղի էր տուել Գեղաքունի ձեւին:

Կելտական նշուած ճիւղերի բառասկզբի gw-ն, ըստ իս, հանդիսանում է հնդեւրոպական բառասկզբի  $v > g$  անցման միջին փուլը: Նոյնը պիտի ասել կովկասեանների փոխ առած զինի բառի ձեւերի (վրացերէն gvine, սամերէն gwinel, լազերէն g[w]in) բառասկզբի gw-ի համար: Սա թելադրում է ընդունել, թէ կովկասեանները իրենց փոխառութիւնը չեն կատարել հնդեւրոպական մայր լեզուից, այլ նրա տրոհումից յետոյ, նրա ճիւղերից մէկի (կելտակա-

նի) զարգացրած բարբառային ձեւից, որը պիտի ազդուած լինի հարեւան կամ կենակից ու ցեղակից նախահայրերից:

Մինչդեռ, հարաւում, սեմական նախալեզուն իր wainu («զինի») բառի փոխառութիւնը (> արաքերէն wein, երայերէն yayin, եռվագերէն wein եւլն., բառասկզբի իր w-nվ) պիտի ստացած լինի կանուխ ժամանակներին՝ հնդեւրոպական մայր լեզուից, եւ ոչ թէ յետագայ հայերէնից, երբ սա բառասկզբի իր v-ն արդէն փոխել էր գ-ի:

Այս երեւոյթը ցոյց է տալիս, թէ կովկասեանները վերեւից ներքեւ դէպի Կուր գետի վերին աւազան իջել-եկել են աւելի ուշ ժամանակներին: Արդէն Կուր գետի անունը կովկասեան չէ, այլ ծագել է՝ Վանայ ժայռի վրայ Սարդուրի Բ-ի բողած արձանագրութեան մէջ յիշուած Quria(ni)<sup>1</sup> երկրանուն-ցեղանունից, որը գտնուում էր Կուր գետի ակնաղրիների շրջանում, Չըլտրը լճից վեր, եւ պատկանում էր հայ ժողովրդի կազմի մէջ մտած հնդեւրոպական (երեւի կիմմերեան ցեղերից մէկին (տե՛ս քարտէսը): Ի հարկէ, դէպի Կուր գետի այս աւազանը՝ կովկասեանների գալուստի ճիշդ ժամանակը յայտնի չէ, բայց կարելի է կոռահել այն, թէ նրանց՝ հնդեւրոպական հայրենիքի այս հիւսիս-արեւելեան ծայրամաս մօտենալը պիտի տեղի ունեցած լինի կելտականների լեզուում v > g անցման այդ միջին (gw-) փուլի ժամանակներին: Հենց այդ միջին փուլի ժամանակներին է, որ կելտական ցեղերից որոշ խմբեր պիտի իրենց նախահայրենիքից շարժուած լինեն դէպի արեւմուտք, քանի որ յետագայում այդպէս էլ պահել են բառասկզբի gw-ն, առանց լրացնելու v > g անցման ընթացքը, պոկուած ու հեռացած լինելով այդ անցումը առաջացնող պայմանների միջավայրից՝ իրենց նախահայրենիքից, մեծ հաւանականութեամբ, մ.թ.ա. II հազարամեակի վերջին քառորդին:

Իսկ այդ կելտական ցեղերի՝ իրենց նախահայրենիքում մնացած հիմնական մասը արդէն Ուրարտուի օրերին մտնելով հայ ժողովրդի կազմի մէջ՝ շարունակել են v > g անցման ընթացքը, որով Uelikuni-ն էլ տեղի է տուել Գեղաքունի ձեւին: Այս Գեղաքունի ձեւ

---

<sup>1</sup> UKN, 285:

որ պահպանուել ու մեզ է հասել հայերէն մեսրոպատառ ամենահին (5-րդ դարի) մատենագրութեան մէջ: Հիմգերորդ դարի մատենագիր Խորենացու մօտ Գեղաքունի է կոչուում ոչ թէ միայն Uelikuni երկիրը, այլ եւ Uelikuni-ի ու Gulutah<sup>ի</sup>-ի միջեւ գտնուած լեռնաշղթան (Գեղ լեռը) եւ անգամ Սեւանայ լիճը: Խորենացին պահել է Գեղամ անունը որպէս այս մեծ ցեղի նախահայրը, ի հարկէ որպէս Էսպնիմը (անուանադիրը) այդ մեծ ցեղի ու նրա երկրանուան: Նս գրում է. «Իսկ Գեղամ.... շիևէ զեզր ծովակին, եւ բողու անդ քնակիչս. եւ յիւր անուն եւ սա լետոնն անուանէ Գեղ, եւ զշէնսն՝ Գեղաբունի, որով կոչի եւ ծովն» (Իսկ Գեղամ.... շէնցնում է ծովակի ափը, բողունում է այնտեղ բնակիչներ եւ իր անունվ լեռը կոչում է Գեղ, իսկ շէները Գեղաքունի, ինչպէս կոչուում է նաեւ ծովը») (Ա - ԺԲ):

Գեղամ (Գեղ-աս) անուան մէջ արմատականը, ցեղի ու երկրի արմատական անունը Գեղ է, իսկ -աս վերջաւորութիւնը անունների (եւ էպոնիմների) յայտնի ածանց է, որ արդէն նշել եմ Ա գլխի 4-րդ հատուածում, խօսելով Արամ անուան մասին (հմնտ. նաեւ Արգամ, Բագամ, Արշամ, եւ Ur III-ի արձանագրութիւնների մէջ յիշուած Ասորի, Շելլամ, Բաշամ եւն.): Հետեւաբար, թէ ցեղն ու նրա երկիրը (Uelikuni-Գեղաքունի ու Gulutah<sup>ի</sup>) թէ նրանց հայրենի լեռնաշղթան ու լիճը (Սեւանը) կոչուում էին Գեղ: Արդէն Խորենացին ուղղակի վկայում է թէ լեռը կոչուում էր Գեղ:

Ըստ ոմանց կարծիքի, Wales երկրանունը եւ նրա հետ welsh (նախապէս՝ welch) լեզուանունը, ծագել են անգլոսաքսոններէն welisc «օտար» (wealas «օտարական») նշանակող բառածելից: այսինքն՝ իբր թէ երկիր ներխուժած անգլոսաքսոնները իրենցից առաջ երկրում (Wales-ում) բնակուած կելտական ժողովրդին կոչել են օտարականներ, մինչդեռ իրենք էին երկրում նախապէս բնակողների համար օտարականներ: Ուրեմն, անհաւանական չէ, որ դա բառերի ձայնային պատահական նմանութեան վրայ հիմնուած մեկնաբանութիւն լինի: Ի հարկէ անհաւանական չէ նաեւ այն, որ այդ ցեղի նախկին welch անունը անգլոսաքսոնների լեզուում մտած լինի «օտարական» իմաստով, այնպէս ինչպէս ցեղանուններից շատերը ուրիշների մօտ ստանում են ինչ որ իմաստ.

օրինակ՝ Ուրարտուի արքաների (Թէյշերախնին որպէս ելակէտ) դէպի Մանս ու Բարսուա կատարած արիւնափ բռնազրակիչ արշաւանքների պատճառով *Թէյշերախնի* քաղաքանունը կամ դիցանունը այդ շրջանի ժողովուրդների մօս ստացել է «ոստխ» իմաստը (օրինակ՝ խըրողգերէն տարան, պահլաւերէն ծաշտան նշանակում է «ոստխ»), որից յետագայում հայերէնին անցել է թշնամի բառը: Իսկ խըրողը կամ խըրխոր ցեղանունը թուրքերի մօս (թուրքերէնում) ստացել է «գող» իմաստը: Աֆրիկայի Negro ցեղի անունը եւրոպացիների մօս ստացել է պարզապէս «սեւամորք» իմաստը: Subari ցեղանունը արաբերէնին ու պարսկերէնին անցել է suwari «ձիաւոր, հեծելազօր» իմաստով: Այսպիսի դէպեր շատ կան: Որով անհաւանական չէ, որ կելտական Welch (Wel > Գեղ) ցեղանունը պահած լինի իրենց ցեղի ու մայր հայրենիքի Welik(uni) անունը:

Յայտնի է, թէ անցեալում մի ընդհանուր անուամբ կոչուած մեծ ժողովուրդները եղել են ցեղային միութիւններ՝ ամբողջովին կամ մեծամասնութեամբ նոյն էթնիկ (ցեղային) տարրին պատկանած ցեղերի խմբաւորումներ: Բնականաբար այդպիսին պիտի լինեն նաև Եւրոպա արշաւած կելտերը, որոնք յոյների յիշած Keltoi, հռոմեացիների յիշած Galatae կամ Galli անուան տակ եղել են կելտական առանձին անուն ունեցած բազմաթիւ ցեղեր: Արդէն Եւրոպայի մայր ցամաքում, Բրիտանական կղզում ու Իռլանդայում եղել են մեծ քուով կելտական ցեղեր, որոնցից շատերը յետագայում յիշուել են պատմական ժամանակաշրջանի ամենահին գրութիւններում: Բայց, դժուար է ասել, թէ այդ անուններից որո՞նք են յետագայ անուանումներ ու որո՞նք են մայր հայրենիքից գալով աւանդականօրէն պահպանուածներ: Այսուհանդերձ, իմ ուշադրութիւնն են գրաւել հետեւեալները. -

Aquitani  
Arverni  
Catuvellauni  
Germani  
Iceni

Fēni  
Pretani  
Sequani

Արդեօք պատահակա՞ն երեւոյթ եմ այս անունների<sup>1</sup> -ան, -ան եւ -ու վերջաւորութիւնները, որոնք յիշեցնում են Հայկական լեռնաշխարհում նոյն վերջաւորութիւններն ունեցող ցեղանուններն ու տեղանունները, ինչպիսին է Աելիկուն-Շ: Ես փորձում եմ ընդունել, թէ սրանց գոնի մի քանի հատք (հաւանաբար կան եւ նման ուրիշներ), ինչպէս եւ -ու վերջաւորութիւն չունեցողներից ոմանք, գալիս են կելտական մայր հայրենիքից: Պարզ է, թէ սրանք հնդեւրոպական ցեղերի անուններ են եւ ոչ թէ խուրրիական: Եթէ սրանցից ոմանց վերջաւորութիւնները կրում են յետագայ յունա-հռոմէական ազդեցութիւն (թէեւ վերջաւորութիւնների յունա-հռոմէական ծեր աւելի -ու ոչ -ու. հմնտ. Alzinini > լատ. Arzanene, Şupani > լատ. Sophene եւլն.) միեւնոյնն է, դա կ'ուժեղացնի Արմանի անուան կապակցութեամբ վերեւում իմ արած այն ակնարկութիւնը, թէ -ու վերջաւորութիւնը յատուկ չէ միայն խուրրիական լեզուին, այլ կայ նաև հնդեւրոպական հայերենում:

Այստեղ արժէ մի քանի խօսք ասել նաև Իռլանդայի կելտերի մասին, որոնք հնում կոչուել են Էրիս (Աերկայումս՝ Eire), յոյների կողմից՝ Iernē: T. Powell-ը ասում է թէ սրանք ծագել են մի շատ հին ձեւից<sup>2</sup>: Յամենայն դեպք, կելտական իոլանդացիների ազգային այս Էրիս (Iernē) անունը յիշեցնում է Սեւանայ լճի ափին, Ծովինար գիւղի արձանագրութեան մէջ Ո-ուաս Ա-ի յիշած ցեղանուն-երկրանունների մէջ, Uelkuni-ի հետ նշած Eria(ini) երկրանունը, որ, ըստ Ո-ուասի բացատրութեան, գտնուում էր Սեւանայ լճի արեւելեան ափամերձ շրջանում: Այսպէս էլ տեղադրել եմ ներկայացուած քարտէսում (երեւի Ո-ուասի յիշած այդ 23 երկրներից շատերը, որոնցից ոմանք պիտի գտնուած լինեն Սեւանի հիւսիսում, եղել են նոյնպէս կելտական):

<sup>1</sup> Այս անունների մասին տես CELTS եւ Celts:

<sup>2</sup> CELTS, 22:

Ես արդէն հայ-իոլանդական առնչութիւնների մասին խօսել եմ իմ նախորդ աշխատութեան մէջ: Այստեղ կը բերեմ միայն Պրոֆ. D. M. Lang-ի հետեւեալ խօսքերը. «*Մի շարք զիտնականների կողմից զուգահեռներ են անցկացուել հայկական ու կելտական քանդակների եւ իրերահիւսուած գործերի միջեւ.... հաւաճական է, որ նշմարուող նմանութիւնները կարող են առաջացած լինել գեղարուեստական ճաշակի երկու ժողովուրդների համար ընդհանուր եղող հիմքից ...»<sup>1</sup>:*

Շատ հետաքրքրական է այն, թէ Welsh (Welch) ժողովուրդը (կելտական այս լեզուն կրողները) իրենք իրենց կոչում են Cymry, այնպէս ինչպէս արմէնները իրենք իրենց կոչում են հայ: Ըստ ընդունուած կարծիքի՝ Cymry եզրը ունի (կամ ստացել է) «հայրենակից» (“compatriot”) իմաստը: Եթէ սա պահում է աւանդականօրէն սպահանուած եւ ուշ ժամանակներում գրանցուած մի հին ցեղի անունը, մի քան, որ աւելի քան հաւաճական է, ապա դա կը լինի հրապուրիչ մի երեւյթ, ու ես փորձում եմ նրա մէջ տեսնել կիմմերներին: Այս միտքը անմիջապէս ստանում է իր իմաստաւորումը, երբ մի ակնարկ ենք նետում թերուած քարտէսի վրայ, ուր կիմմերների երկիրը կից հարեւան է կելտերի նախահայրենիք Uelikuni-Gulutahի երկրին, կամ սրա շարունակութիւնն է դէպի հիւսիս: Պիտի պատահական չհամարել նաեւ այն, թէ ներկայ Լենինականը, որ գտնուում է հենց կելտական ու կիմմերական միջավայրում, հնում կոչուում էր Կումայրի / Գիմիրի, որը յիշեցնում է թէ Cymry եզրը եւ թէ ասորեստանցիներին յայտնի Gamirra / Gimirra ցեղանունը: Մի՞թէ կարելի է պատահական համարել եւ այն, թէ յետագայում, Փոքր Ասիայի կենտրոնում, Կապաղովկիայի կիմմերներին (Գամիրքին) կից հարեւան է եղել դարձեալ կելտական Գալատիան: Այս տուեալները թելադրում են ընդունել այն հաւաճականութիւնը, թէ Հայկական լեռնաշխարհից (հնդեւրոպական նախահայրենիքից) դէպի Եւրոպա գաղբած կամ արշաւած կելտական ցեղերի մէջ գտնուել են նաեւ կիմմերներ, կամ՝ անհաւաճական չէ նոյնիսկ որ կիմմերներն ել եղած լինեն կելտական:

---

<sup>1</sup> ACC, 277:

Դեռ գիտութեանը յայտնի չէ կիմմերների հնդեւրոպական լեզուն, նրանց լեզուով որեւէ գրութիւն դեռ չի յայտնաբերուել: Գուցէ մեզ հասած հին գրութիւններում՝ որպէս կելտական ճանաշուածներից ոմանք կիմմերական են: Պատմագրութեան մէջ տարածուած է այն տեսակէտը, թէ կիմմերները ցեղակից են սկիւթներին: Սա, ի հարկէ, չի ասուել լեզուական տեսակէտով, այլ աւելի աշխարհագրական-քաղաքական կապերի տեսակէտով: Դա ճիշդ էր որպէս հնդեւրոպական ընտանիքի մէջ իրար աւելի մօտ ապրած ու շփուած եւ հաւանաբար նաեւ խնամիական կապեր ունեցած ցեղեր: Դա ճիշդ էր նաեւ անցած պատմագրութեան համար, երբ դեռ յայտնի չէր հնդեւրոպական հայրենիքի՝ Հայկական լեռնաշխարհում գտնուած լինելը եւ ոչ էլ կելտական ցեղերի նախահայրենիքի՝ կիմմերների երկրին հարեւան լինելը: Միւս կողմից՝ կիմմերներին էլ սկիւթների հետ բերում էին հիւսիսից: Մինչդեռ կիմմերները ոչ թէ Ազովի շրջանից են եկել Կուր գետի վերին աւազան, այլ հենց այստեղերից (իրենց մայր հայրենիքից) է, որ աճելով տարածուել են դեպի Սեւ ծովի հիւսիսային շրջանները: Նոյնը պիտի ասել սկիւթների համար:

Կիմմերների դեպի Ազովի շրջան բափանցումը պիտի կատարուած լինի դեպի Փոքր Ասիա արշալից շատ առաջ: Նոյնը պիտի ասել կելտերի համար, որոնք դեպի արեւմուտք շարժած կամ արշաւած պիտի լինեն մէկից աւելի անգամներ եւ տարբեր ժամանակներում: Առաջինը երեսի կիմմերների հետ (հաւանաբար կիմմերների առաջնորդութեամբ) դեպի Սեւ ծովի հիւսիսում ընկած տարածութիւնները՝ մօտաւորապէս մ.թ.ա. II հազարամետակի վերջին քառորդին: (Անհաւանական չէ, թէ Կովկասից իրենց այս անցման վայրերում է, որ առաջին անգամ հանդիպեցին ու շփուեցին կովկասեանների հետ՝ նախ քան սրանց մօտենալը Կուր գետի աւազան), ապա՝ այստեղերից անցած կը լինեն դեպի Դանուրի աւազան ու յետոյ էլ Դանուրով վեր, դեպի Կենտրոնական եւ Արեւմըտեան Երոպայի բարեխառն (temperate) շրջանները:

Այսուհետեւ, կելտականներն էին նորից, որ (հաւանաբար արշաւանքի մի երկրորդ մեծ ալիքով) մ.թ.ա. 8-րդ դարում, գալով որպէս ճիաւորներ Սեւ ծովի հիւսիսում ընկած տարածութիւննե-

թից, իրենց երկարէ հզօր գէնքերով նուաճեցին ամբողջ Կենտրոնական եւ Արևմտեան Ելրոպան<sup>1</sup>: Սրանք էին Ելրոպայում Hallstatt (Աստրիայում մի հնավայրի անունով) մշակոյթի կրողները կամ ստեղծողները: Ուզում եմ ուշադրութիւն հրաւիրել այն բանի վրայ, թէ Hallstatt մշակոյթի աւելի ուշ ու զարգացած օրինակների հնավայրերը գտնուել են հնագոյն ու արխայիկ) օրինակների վայրերից դէպի արեւմուտք<sup>2</sup>: Սա շօշափելի փաստ է, թէ այդ մշակոյթի կրողների շարժումը տեղի է ունեցել արեւելքից արեւմուտք:

Այստեղ պիտի միջանկեալ ասել, թէ կելտերից շատ առաջ, Ելրոպայի Բրոնզէ Դարաշրջանի սկզբին (մ.թ.ա. III հազարամեակին), Փոքր Ասիայի վրայով Բալկաններ ու Ելրոպա են անցել Ելրոպայի հնդեւրոպախոս ցեղերի առաջապահները, մարտական կացինը կրողները, բրոնզը (արոյրը) Ելրոպա բերողները<sup>3</sup>: Յայտնի է, թէ Հայկական լեռնաշխարհում են գտնուել մետաղամշակման հնագոյն հետքերը: Ծանօթ հնագէտ Է. Խանզադեանը գրում է. «Հայկական լեռնաշխարհում մետաղամշակման ամենավաղ տուեալները երեւան են գալիս դեռեւս IV հազարամեակում»<sup>4</sup>: Վերեւում, Արատտայի կապակցութեամբ, խօսել եմ արդէն մետաղամշակման նշանաւոր կենտրոն Մեծամօրի մասին, որը սկիզբ է առել մ.թ.ա. IV հազարամեակի կէսին:

Ելրոպայում կելտերի Hallstatt մշակոյթին բնորոշ է երկարը, որի արդինաբերութեան հայրենիքը եղել է Հայկական լեռնաշխարհը: Ելրոպայում, այս մշակոյթին են պատկանում հողաքային գերեզմաններում յայտնաբերուած երկարէ գէնքերն ու իրերը, ձիասարքերը, բրոնզէ անձնական զարդեղները, եւ նշանաւոր

<sup>1</sup> Եթէ Պիրենեան թերակղզու Իբրիա անունը կապ ունի կովկասեան իբերների անուան հետ, ապա կարելի է ընդունել այն հասանականութիւնը, թէ Սեւ ծովի հիսիսային շրջաններից Ելրոպա արշաւած կելտա-կիմմերական ցեղերի մէջ եղել են եւ մի խումբ կովկասեան իբերներից:

<sup>2</sup> CELTS, 46:

<sup>3</sup> Եթէ ներկայ Ելրոպացիների նախնիները լինէին Զիբրալթարով կամ Միջերկրականի վրայով Ելրոպա անցածներ, ապա նրանք կը լինէին աֆրիկական կամ սեմական հին ցեղերի սերունդներ: Նրանց հնդեւրոպախոս լինելը փաստ է թէ նրանք գնացել են Հայկական լեռնաշխարհից ու Փոքր Ասիայից:

<sup>4</sup> ՀԼՄ, 46:

թաղումներում՝ ննջեցեալը քառանիւ կառքի վրայ դնելը: Այս բոլորը բնորոշ են եւ Հայկական լեռնաշխարհին: Անգամ զինեզործութիւնը, որ յատկանշական է եղել կելտերի մօտ, բնորոշ է Հայկական լեռնաշխարհին, իր հսկայ կարասներով, ինչպիսին են Թէյշերահնիում յայտնաբերուածները:


Կելտերն էին, որ իրենց մայր հայրենիքում՝ Սեւանա լճի ափին (Լճաշենում) դամբարանի մէջ հանգուցեալի հետ յայտնաբերուած քառանիւ սայլերի նման կառքերով, եւ որպէս հեծեալներ, անցան Կովկասը եւ Սեւ ծովի հիւսիսային տարածութիւններով հասան Դանուրի աւազանն ու Կենտրոնական Եւրոպա: Պիտի սրանց ցեղապետների ու առաջնորդների դամբարանները լինեն հողաքմբային այն գերեզմանները, ուր յայտնաբերուել են հանգուցեալը քառանիւ սայլի վրայ, ինչպէս եւ ձիասարքեր ու բրոնզէ անձնական զարդեղնեները: Եւ, ինչպէս վերեւում Cymry անուան կապակցութեամբ ասացի, ես անհաւանական չեմ համարում, որ սրանց հետ (յատկապէս նրանց ազնուականների ու առաջնորդների մէջ) եղած լինեն եւ կիմմերներ:

Կելտերի պատմութեան մասնագէտ T.G.E. Powell-ը գրում է. «The bronze horse-gear of Caucasian connections, already mentioned as appearing at the end of the Urnfield Bronze Age (in Europe), may well have had to do with Cimmerian riders»<sup>1</sup>:

Նոյն կարծիքն է յայտնում կելտագէտ Nora Chadwick-ը գրելով՝ «This horse-gear may be identified in the steppes of Southern Russia particularly in a culture which may convincingly be identified with that of the Cimmerians who, at a slightly earlier date, appear to have been pushed westwards by the Scythians. further support for a derivations from Southern Russia is provided by the adoption by early Hallstatt chieftains of wagon burial, a practice whose origins may be traced in the steppes during the second millennium B.C. It seems probable that

---

<sup>1</sup> CELTS, 49:



Բնակարաններ Շենգավիթում՝ Երևանի հարավառեմտեան մասում (IV հազարամեակի վերջերը մ. թ. ա.): Պլանը ըստ Ե. Բայբուրդեանի:

Շենգավիթի վաղ բրոնզեդարեան երեք շերտերում յայտնաբերուել են կենտրոնական կլոր կացարաններ (6.5-8 մ. տրամագծով), յարակից քառանկիւն շինութիւններով:

Կացարաններն ունեն գետաքարերով կամ կիսամշակ մեծ քարերով շինուած հիմքեր (ոչ աւելի քան 0.9 մ. քարձրութեամբ եւ 1 մ. հաստութեամբ), որոնց վրայ քարձրացել են հում աղիւս պատերը: Կլոր կացարանները, կենտրոնական սինով, ունեցել են կոնաձեւ տանիք (տե՛ս ՀԼՄ, 8-9):



Քարաշեն տներ Citania de Sanfín բլրաբերդում:




Օդային լուսանկար Citania de Sanfín  
բլրաբերդի՝ Պորտուգալիայում:

T. G. E. Powell-ը, քննարկելով Արեմտեան-Ելրոպայի հնագիտական նիւթերը, գրում է, թէ ուղղանկիւն տներից յետոյ սովորական են եղել նաև կլոր տները Սպանիայում, Պորտուգալիայում, Անգլիայում, Իռլանդայում, ինչպէս եւ Ասլանտեանի ավերում: Ապա աւելացնում է. «Strabo does mention dome-shaped houses in Gaul, and these should surely have been of round-house type» (սեւ CELTS, 101-102):

some aristocratic refugees came, either to dominate, or more probably to become absorbed in, certain groups of late Urnfield peoples in Central Europe»<sup>1</sup>:

Ծառ հետաքրքրական եւ իմաստալից է նաև այն, թէ կելտերի մօս շատ նուիրական են եղել լիճերը, որոնց՝ պաշտամունքային ծիսակատարութիւններով նուիրել են (ըստ Ստրաբոնի՝ մէջը թափելով) ոսկի եւ արծաք<sup>2</sup>: Սրանում կարծես աւանդականորէն պահպանուել է իրենց հայրենական Gel (Գեղամայ) լծի յիշատակը: Կելտերը իրենց կարեւորագոյն աստուծուն (որը հռոմէական ժամանակաշրջանում նոյնացուել է Zeus-ի հետ) պատկերացրել են որպէս մի բարձր կաղնի: Մեզ արդեն յայտնի է թէ բարտիի պաշտամունքը այնքան է նշանաւոր եղել Հայկական լեռնաշխարհում, որ այն յարատեւել է անգամ քրիստոնէութիւնից յետոյ, մինչեւ 12-րդ դար:



Ծածկած սայլ. Լճաշէն: 1500 թ. մ. թ. ա.:

Կելտերից որոշ խմբերի՝ իրենից Gulustahի նախահայրենիքից դէպի արեւմուտք կատարած վերջին արշաւը (այս անգամ էլ Փոքր Ասիայի ուղղութեամբ) պիտի կատարուած լինի նորից կիսմերների

---

<sup>1</sup> Celts, 32:

<sup>2</sup> Նոյն, 148:

հետ, Ուրարտուի Ռուսա Ա-ի ժամանակներից յետոյ: Արդէն ասութեստանեան արձանագրութիւններից մեզ յայտնի է, թէ կիմմերները շատ են հզօրացել մ.թ.ա. 8-րդ դարի երկրորդ կեսին: Նրանք մ.թ.ա. 715 թուին պարտութեան մատնեցին Ռուսա Ա-ին: Դրանից յետոյ է, որ նրանք շարժուել են Շորոխս-Կելկիթ-Ալիս (Կրաքալ Ըրմաք) գետերով դէպի Անատոլիա: Սրանց հետ պիտի լինեն եւ Gulutahi-ի կելտերից որոշ ցեղեր, որոնց մի մասը, անցնելով Ելրոպա, հաւանաբար հանդիսացած լինի La Tène մշակոյթին սկիզբ դնողը:

Կիմմերական-կելտական այս արշաւանքի մասնակիցներից շատերը, որոշ ժամանակ յետոյ, որպէս վարձկաններ ծառայել են Անատոլիայում հզօրութեան հասած ուժերին: Նրանցից վերապրողները ինչպէս յայտնի է, հաստատուել են (կիմմերները) Կապանովկիայում՝ Գամիրքում, իսկ Guluta(hi)-ի կելտերը՝ Կապանովկիային կից հարեւան Galatia-ում:

## **ԳԼՈՒԽ 5**

---

**ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ**

## 1. ՍՈՒԲԱՐԻԱԿԱՆ ՍԱՏՈՒԱԾՆԵՐ

Ի. Գելը, աքքաղական վանկարաններում, սուրարիների համար նշանակուած աստուածների մէջ գտնում է Տեշսը, Շաւկա, Աշտրին, Zizanu, Lahuratil, Parsi եւ Nauarsi դիցանունները<sup>1</sup>:

Թէեւ, Տեշսը-ը (հնչուում է նաեւ Տեշօր) եւ Շաւկա-ն համարուում են նաեւ խուրի աստուածներ, սակայն նրանք աքքաղական վանկարաններում վերագրուել են յատկապէս սուրարիներին: Այս երեւոյթը կարող է թելաղրել այն միտքը թէ գուցէ խուրրիները սրանց ժառանգել են սուրարիներից:

Մեզ համար հետաքրքրական է սուրարիական Աշտ-րին (Ašturiṇu) աստուածը: Սրա առաջին Աշտ բաղադրիչը գտնում ենք նաեւ Հայասայի Unag-aštuaš<sup>2</sup> դիցանուան մէջ, որպէս երկրորդ բաղադրիչ: Իսկ Աշտ-աš ձեւը լրի համընկնում է հայերի Աստու-ած<sup>3</sup> (Աստուած) դիցանուան հետ: Այս աստուածութիւնը (որի մասին դեռ կը խօսենք հայերի աստուածների շարքում) շատ յատկանշական է Սուրարի-Հայասա-հայ կապի տեսակէտով:

Zizanu աստուածութեան մասին մժուար է որոշ բան ասել՝ տուեալների պակասութեան պատճառով: Գուցէ հայերէնի ծիսամբ բառը պահում է այս դիցանուան յիշատակը:

Հետաքրքրական է նաեւ սուրարիական Lahuratil դիցանունը: Ոմանք սրան համարում են նաեւ Էլամական: Եթէ այդ ճիշդ է, ապա ստացած պիտի լինեն սուրարիներից: Ես կարծում եմ թէ Lahuratil-ը բուսական աստուածութիւն է: Հմմտ. խեթ. <sup>GIŠ</sup>Lahhura - (արեւաշատ բոյ), հայ. լախուր «մաղտանոս»<sup>4</sup>: Հայասայի մէջ էլ

<sup>1</sup> HS, 16:

<sup>2</sup> HA, 40:

<sup>3</sup> Արմէնների գաղրի տեսաբանները Աստուած-ը նոյնացնում են փոխիգ. Սաւագինս-ի հետ, որի սխալ լինելը ցոյց կը տրուի ներքեւում՝ Աստուած-ի մասին խօսուած բաժնում:

<sup>4</sup>J. A. C. Greppin, բառավերջի -s > -հ > -կ՝ հնչինափոխութիւնը հայերէնում, Պէ, 1985, 1, 170:

կայ *Lahurhila*<sup>1</sup> քաղաքը: Ես հաւանական եմ համարում, որ այս քաղաքանունը ունեցած լինի կապ *Lahuratil* դիցանուան հետ:

Ինչ վերաբերում է *Parsi* եւ *Naúarsi* (կամ *Nawarsi*) դիցանուններին, Գելքը գրում է, թէ «ոչինչ յայտնի չէ այս վերջին երկու աստուածութիւնների մասին»<sup>2</sup>: Այսուհանդեռձ, մենք գտնում ենք, թէ եթէ հնարաւոր լինի (եւ անհաւանական չէ) *Parsi* (ուրարտական Barsia) եւ *Naúarsi* անունների -սի վերջաւորութիւնը կարդալ կամ համարել -ti (կամ -di), ապա *Parsi*-ն (*Barsia*-ն) կը լինի *Բարսի* կամ *Բարդի* եւ *Nauarsi*-ն էլ՝ *Նասուարդի* կամ *Նուարդ*: Սրանք հայերի յայտնի աստուածութիւններ են: *Նուարդի* մասին արդէն խօսել ենք վերեւում եւ դեռ կը խօսենք վարը՝ հայերի աստուածների շարքում: Յայտնի է, թէ *Նուարդ* դիցուիին եղել է արեւի աստուած Արայի կինը, որը, ինչպէս նշեցինք, կոչուած է եղել նաեւ *Inanna*-Անահիտ:

Գալով *բարդի* ծառին (populus pyramidalis), հնում նրա պաշտամունքը կարեւոր տեղ է գրաւել հայերի կեանքում, եւ այնքան խոր արմատներ է ունեցել, որ Հայաստանի որոշ շրջաններում յարատեւել է մինչեւ 12-րդ դարը՝ իր դէմ հանելով հայոց կարողիկոս Ներսէս Շնորհալին: Միաժամանակ պիտի ասել, թէ *Խալդի* անունը ունեցել է իր *Բարդի* տարբերակը, որին գտնում ենք նրա կնոջ Bag-bardu անուան մէջ: Այս եւ *Խալդի* մասին նոյնալիք դեռ կը խօսենք ուրարտական աստուածների շարքում:

## 2. ԽՈՒՐՔԻՆԵՐԻ ԿԱՐԵՒՈՐ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ

Ի. Դիակոնովը, յենուելով Օրդ. Մ. Լ. Խաչիկեանի հետազօտութիւնների վրայ, Սերձաւոր Արեւելքի խուրրիական արձանագրութիւնների տարբեր կենտրոններում (Ուրարտու, Ուրքիշ, Մարի, Փոքր Ասիա, Միտաննի, Ուգարիտ եւ այլ վայրերում) ի յայտ ե-

<sup>1</sup> HA, նոյն:

<sup>2</sup> HS, 16:

կած խորրիխական գրութիւնների մէջ տեսնում է բարբառային տարրերութիւններ, նշում է հիրաքանչիլր շրջանում աւելի յարգուած աստուածութիւններին, եւ գտնում է, թէ բոլորի մէջ էլ առկայ եւ ընդհանրական են Տeššob-ը (ուրարտ. Teišebā-ն). սրա կինը Heba-ն (ուրարտ. Hubā-ն) եւ նրանց որդի-աստուածը՝ Tilla-ն (ուրարտ. Tura-ն)<sup>1</sup>:

Բայց արդեօ՞ք սրանք ծագումով խորրիխական են ու եկել են խորրինների հետ, թէ հիրացուել են խորրինների կողմից՝ Մերձաւոր Արեւելք զալուց յետոյ՝ Սուրարի երկրում:

Քննենք նախ Heba դիցուհու հարցը:

Նախ ասենք, թէ Heba-ն սեմականների մօս հնչուելով Hebatu կամ Habatu՝ կարող է աւելի ուշ շրջանում (նրանց մօս) դարձած լինի Hawwatu, երբ. Hawwā (որից՝ Եւա)<sup>2</sup>: Բայց այս երեւոյթը, պատկանելով աւելի ուշ շրջանին, ոչինչ չի ասում Heba-ի ծագման մասին (թէեւ կան սխալմամբ ասողներ, թէ Hawa-ն եղել է Haba(tu)-ից առաջ):

Սակայն մեզ յայտնի է, թէ Heba կամ Huba դիցուհու նուիրական-սրբազան կենդանին կովն էր: Հետեւարար, գտնում եմ, թէ Huba անուան հետ կապ ունի հայ կով բառը: Մեզ յայտնի է, թէ ուրարտական եւ որոշ այլ հին լեզունների բառերի (երկու ձայնաւորների միջեւ գտնուած) b-ն յաճախ համապատասխանում է հայերենի վ-ին (հմմտ. ուրարտական Erešuni > Երեւան, ևան > աւան, եւլն.): իսկ հ եւ k (կամ k') յաճախ լծորդ են (մարդու բերանում իւ եւ կ կամ ք ձայները հեշտ են փոխանակուում)<sup>3</sup>: Համեմատել սումեր ha = W = kua = «ձուկ»<sup>4</sup>, Hatti կամ Heta անունը V դարի հայ թարգմանիչների մօս (U. Գրքում) երեւում է քես-ացիք ձեւով, ուրարտերէնի -ahī վերջաւորութիւնը հայերէնում համապատասխանում է -ակ ածանցին եւ այլն: Հետեւարար գտնում եմ թէ կով եւ Huba բառերը ծագումով կապ ունեն իրար հետ:

<sup>1</sup> I. Diakonoff, Evidence on the Ethnic Division of the Hurrians, NH, 77-87:

<sup>2</sup>Նոյն, 85:

<sup>3</sup> IH, տե՛ս «variation of k/g/հ», էջ 39:

<sup>4</sup> Հայ ձուկ բառի հնդւրոպական արմատն է շի-, որը կապուում է սումեր kua-ի հետ:

Իսկ լեզուարանութիւնը գտնում է, թէ հայերէնի *կով* (անգլերէն cow) բառը հնդելրոպական հարազատ բառ է (հնդեւ. մայր արմատն է *g<sup>w</sup>ow-*)<sup>1</sup>: Որով՝ այս բառը, որին համապատասխանում է Huba անուանաձեւը իր կենդանական «կով» ներկայացուցչութեամբ եւ իմաստով, գտնուում էր հնդելրոպական մայր լեզուում, մ.թ.ա. III հազարամեակից առաջ, (այսինքն՝ խորրիների գալուց առաջ): Մանաւանդ որ պիտի աչքի առաջ ունենալ եւ այն իրողութիւնը, թէ այն աստուածութիւնները, որոնք կենդանական աշխարհում ունեն ներկայացուցիչներ, գալիս են տոտեմական հին ժամանակաշրջանից, երբ տուեալ կենդանիներով էր սկսել նրանց պաշտամունքը:

*Կով* բառը իր հնդեւ. *g<sup>w</sup>ow* հիմքով կարող է ունենալ աֆրասիական (Afrasian) զուգահեռներ եւ նրանց հետ ծագած լինի մի շատ աւելի հին աղբիրից, խոր անցեալում, բայց խնդրոյ առարկայ ժամանակաշրջանում (խորրիների Մերձաւոր Արեւելքում ի յայտ եկած օրերին), այն արդէն կար հնդելրոպական լեզուում. մանաւանդ որ ան չունի քոյր ձեւեր ո՛չ խորրիական, ո՛չ սեմական եւ ոչ էլ սումերական լեզուում: Իսկ սումեր ցան «ցոլ» բառը հեռու է թէ հնչիւնային (իր դ ձայնի անհամապատասխանութեամբ) եւ թէ *տոտեմական* տեսակետով:

Ուստի, պիտի ընդունել, թէ Huba-ի («կով» իմաստով) իր *տոտեմական* օրից հնդելրոպական մայր լեզուում գտնուած լինելը բոլորովին ժխտում է նրա խորրիական լինելը (ի հարկէ՝ քանի ընդունում են, թէ խորրիերէնը հնդելրոպական չէ) եւ հաստատում է, թէ այն (Huba-կով բառը) պատկանում է հնդելրոպական հայրենիքին՝ Հայկական լեռնաշխարհին ու Փոքր Ասիայի հարեւան շրջաններին:

Այս իրողութեան համար կարող է փաստ լինել եւ այն երեւյթը, թէ խեթերի Սուպայիլուլիումա արքայի եւ խորրի-միտանեան Մատտիուազա թագաւորի միջեւ կնքուած դաշնագրում, *Խեպետը* գտնուում է հնդելրոպական խեթերի աստուածների շարքում, բայց շկայ խորրիների աստուածների մէջ<sup>2</sup>: Այս նոյն աստուածուիին

<sup>1</sup> ՀԱԲ, տես կով:

<sup>2</sup> HS, 107:

կոչուում էր Hi-pa-tu եւ Ha-ba-tu<sup>1</sup> մի հնդեւրոպական խեթական արձանագրութեան մէջ, եւ անզամ Օրֆիկ հիմների եւ Maconia-ի յունական արձանագրութիւնների մէջ յիշուել է Հիսպաս եւ Հիստա ձեւով: Իսկ Նուզիի մի արձանագրութեան մէջ կայ Շաւար-Heba անձնանունը, որի առաջին բաղադրիչը Շաւար-ը, ըստ Գելրի, «մեծագոյն հաւանականութեամբ հնդեւրոպականութեան հետ կապուող այդ Շաւար բառը Շսբար-Շսբար բառի բարբառային մի ձեւն եղած լինի: Մենք արդէն ցոյց ենք տուել, թէ Subarta < Su-bir բառի եր բաղադրիչը հնդեւրոպական է, որին զուգահեռ՝ սումերերէնը ունի bar ձեւը»:

Նկատի առնելով, թէ Huba դիցուիու նուիրական-սրբազան կենդանին եղել է կովը, նշմարեցինք, թէ Huba բառը, իր ծագումով, կապուած է եղել հնդեւրոպական-հայկական կով (անգլ. cow) բառի հետ, եւ որով ընդունեցինք թէ Huba-Heba անունը չի կարող լինել խուրրի (ի հարկէ, նորից եմ կրկնում, այնքան ժամանակ, որքան խուրրիերէնը չի համարուում հնդեւրոպական):

Այսպէս էլ գտնում ենք թէ Tešup-Heba ամուսինների որդի Tilla-ն եւս չի կարող լինել խուրրի, քանի որ մենք տեսնում ենք թէ tilla բառի հետ կապուած է հայերէն տղա(j) բառը: Իսկ լեզուաբանութիւնը գտնում է, թէ հայերէնի տղայ բառը գալիս է ասորերէն ṭalya, tale («տղայ, պատանեակ») բառից, որի համար Աճառեանը գրում է «քնիկ սեմական բառ է» եւ համեմատութեան համար թերում է սեմական միւս ժառանգներից երրայերէն ṭale («մատղաշ գառ», արամերէն taliā («տղայ, գառնուկ»), արաբերէն ṭalā («զառն, ուլ, եղնիկի ձագը») եւ այլն<sup>3</sup>:

<sup>1</sup> Վերեւում ցոյց եմ տուել թէ սեմիտները, ստանալով նաիրեան բիր (թեր) «տուն» բառը՝ -tu ածանցով դարձրել են բիրտու («ամրոց»), որը հայերէնին ետ է դարձել թերդ ձեւով: Այսպէս էլ հաւանական եմ համարում, որ Heba-ի սեմական (կամ զուցէ յունական փաղաքական-իզական) -tu վերջաւորութեամբ Habatu ձեւն էլ հայերէնին անդրադարձ լինի հաւատ ձեւով:

<sup>2</sup> HS, նոյն: Գելրը արդէն այստեղ յայտնում է այն միտքը, թէ Heret-ը բնիկն է Սիջագետքի եւ Անատոլիայի, եւ թէ խուրրիները նրան ստացած պիտի լինեն այս շրջանները գալուց յետոյ:

<sup>3</sup>ՀԱԲ. տես՝ տղայ:

Հետեւաբար, Tešub-Heba ամուսինների որդի Tilla-ի անունը խուրրի չէ:

Նկատի առնելով Heba-ի եւ Tilla-ի մասին վերեւում թերուածները՝ պիտի հաւանական համարել, թէ խուրրինները զալով Սերձաւոր Արեւելք, հնդեւրոպական Heba-Heuba (=կով) եւ սեմական Tilla («ṭalyā-tēlē > տղայ») անունները ստացան Հիսիսային Սիջագետքում՝ Սուրարտու կոչուած երկրում, որը գտնուում էր հիսիսից հնդեւրոպական եւ հարաից սեմական ժողովուրդների արանքում:

Գալով Teššob (Tešub) աստծուն, նրա ծագման մասին, առայժմ, մեր ուսեցած տուեալներով, դժուար է որոշակի բան ասել: Արդեօք կարելի<sup>1</sup> է սրան խուրրի համարել, երբ նրա կնոջ ու որդու անունները խուրրի չեն եղել: Ի հարկէ անհաւանական չէ, որ խուրրինները Թեշորին բերած լինեն Սերձաւոր Արեւելք իրենց հետ, բայց աելի հաւանական է, որ նրան իրացրած լինեն տեղում՝ Սուրարի երկրում: Թեշորի մասին արձանագրական ամենահին տուեալը զալիս է UR III-ի ժամանակուայ Šu-Sin-ի գահակալութեան օրերից<sup>2</sup>:

Բողազ-Ջէօյի մի խուրրիական արձանագրութեան մէջ նշուել է «Չուրրիական Թեշոր» արտայայտութիւնը<sup>2</sup>: Սա կարող է նախ նշանակել, թէ խուրրիականից զատ կար եւ Չուրրիական Թեշոր, այսինքն՝ սուրարինները խուրրի չեն, երկրորդ՝ այն, թէ Թեշորը աւելի սուրարիական է:

---

<sup>1</sup> AN.45:

<sup>2</sup> HS. 30:

### **3. ՈՒՐԱՐՏՈՒԻ ԳԼԽԱԿՈՐ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ**

#### **Ա. ԽԱԼԴԻ**

Հայտնի է թէ Ուրարտուի դիցարանը գլխաւորում են Խալդի, Թէյշերա եւ Շիլինի աստուածները, որոնք կազմում են ուրարտական դիցարանի հզօր երրեակը:

Խալդին բնաւ չի եղել խուրրի (այս հանգամանքը պէտք չէ մոռանայ ամէն մի պատմաբան): Վերեւում էլ, ինչպէս եւ մեր նախորդ աշխատութիւնների մէջ, Ուրարտուի պատմութեանը վերաբերող Հայկ եւ Բէլ դիցազնավէպի մեկնաբանման առթիվ, ցոյց ենք տուել, թէ հայերի ազգային անուանադիր աստուած Հայկը Խալդին:

Խալդին եղել է կրակի-հրաբուխի աստուածութիւն: Նա ներկայացրել է Հայկական լեռնաշխարհի եւ յատկապէս, Ուրարտուի ժամանակներում, Վանայ լճի շրջապատում գործած հրաբուխների բոցարձակումները: Հաւանաբար, աւելի ուշ շրջանում, Ուրարտուի հզօրացումով, Խալդին, որպէս կրակի հզօր աստուածութիւն, ստացած կը լինի նաև երկնի (ամենատէր) աստուածութեան բնոյք:

Խալդիի խորհրդանիշը (որպէս կրակի-հրաբուխի աստուածութիւն) եղել է կենդանական աշխարհում առհիւծը: Էրեբունիի որմնանկարներում մարդակերպ Խալդին երեւում է առհիւծի վրայ: Հայկի համար էլ Խորենացին, քաղելով Մար-Արայի հին մատեանից, արդէն պահել է բնորոշիչ «Յապեսոսպեանն Հայկ»<sup>1</sup> արտայայտութիւնը, որը երեւի Հայկին տրուել է Հայաստանի հելլենիստական (Արտաշէսեանների) ժամանակաշրջանում, երբ դեռ զիտէին Հայկի (Յապեսոսեան-Հեփեսոսեան) հրեղէն բնոյթը: Հետեւաբար, այս եւս մի ցուցմունք է որ Խալդին (ինչպէս Հայկը) եղել է կրակի աստուած:

<sup>1</sup> Խորենացի, Ա-Թ: Յայտնի է, թէ Յապեսոս-Հեփեսոսը կրակի աստուածութիւն է:

Խալդիի կինը կոչուում էր Warubane/Uarubani: Ես կարծում եմ թէ հայերէնի պառա («տարիքով մեծ կին») բառը կապուած է այս Waruba(-ne)<sup>1</sup> անուան հետ եւ պահում է այս դիցուհու յիշատակը:

Ժամանակին, տարբեր առիթներով, ցոյց եմ տուել թէ Խալդի անունը պիտի ունեցած լինի նաև *Բարդի* տարբերակը: Hal-di անուան hal ► բաղադրիչը սումերերէնում ունի նաև *bar<sup>2</sup>* հոմանիշը (որը ունի «վառել, կրակ» իմաստը): Որով՝ *բարդի/բարտի* (populus pyramidalis) ծառի անուան մէջ (որը պաշտամունքի խոր արմատներ ունի հայերի մօս եւ անգամ պաշտուում էր քրիստոնէութեան մուտքից դարեր յետոյ, «Արեւորդիներ» կոչուած հայ աղանդաւրների մօս) կարելի է տեսնել *Խալդի*-ն:

*Խալդի* անուան *Բարդի* (*Բարտի*) ձեւը գտնուում է Խալդիի կնոջ (Սարգոն Բ-ի կողմից Սուսասիրում յիշուած) *Բազ-բարտու* անուան մէջ (եթէ ասսուրական արձանագրութեան մէջ այս անունը ճիշդ են կարդում): Հին ժամանակներում, կանայք մերք կոշուում էին իրենց ամուսինների անունով, որպէս «այսինչի կինը», օրինակ՝ *Արդի* (= Արա) անունը գտնում ենք Արայի կնոջ *Նու-արդ* անուան մէջ<sup>3</sup>:

Խալդի = Բարդի հաւասարութեան համար պիտի փաստ համարել նաև Սուսասիր-Արդինիի Խալդեան տաճարի (Սարգոննեան քանդակի) ճակատում բարդի ծառի գոյութիւնը:

Այս երեւոյթի համար պիտի կարեւոր փաստ համարել յատկապէս Խալդիին վերագրուած Susi տաճարները: Խորենացու պահած տեղեկութիւններից մեզ յայտնի է թէ Արմաւիրում եղել են սրբազն սօսի ծառեր, որոնց սօսափիւնով գուշակութիւններ էին անում (աստուածն իր պատգամն էր յայտնում):<sup>4</sup> Ես գտնում եմ թէ

<sup>1</sup> Հայերէնի պառա բառը կապում են պահլաւերէնի *parav* հոմանիշի հետ, որը հայանարար հայերէնից պահլաւերէնին անցած փոխառութիւն էր:

<sup>2</sup> SAG, տե՛ս hal: Հետաքրքրական է, թէ վանկային-հնչինային դերից զատ, կարծես այստեղ ունի նաև իմաստային արժեք:

<sup>3</sup> Այս մասին տե՛ս 5-րդ գլուխ *Արա* քաժինը: Մորքմանը արդէն ժամանակին *բարդի* բառը կապել է խորսարատի ասսուր. արձանագրութեան յիշած Bag-bartu-ի հետ (ՀԱԲ, տե՛ս բարտի):

<sup>4</sup> Խորենացի, Ա-ի:

բարտիի մի տեսակ եղող այս *սօսի* անուան մէջ պահուած է Խալդիին նուիրուած այդ տաճարի Susi անունը, եւ թէ այդ Susi տաճարները (Երեսի իրենց մօտ տնկուած բարտի ծառերով) հանդիսանում էին Խալդիի պատգամատեղիները. ճիշդ այնպէս ինչպէս «Դոդրնայի Զեւսի պատգամատեղիում աստուածն իր կամքն էր յայտնում կաղնիների սօսափինով»<sup>1</sup>: Որով՝ կասկած չկայ, թէ Արմակիր-Արգիշտիխինիլիի *սօսի* ծառերը (Susi պատգամատեղին իր բարդիներով) ներկայացնում էին Խալդին, եւ դրանցով կատարուած գուշակութիւններն ել Խալդիի կամքն արտայայտող պատգամախօսութիւններ էին:

Հեթանոսական հին ժամանակներում, հաւատում էին, թէ կրակը ծնուում է բոյսից, քանի որ ծառը կամ փայտը վառելիս կրակ է դուրս գալիս: *Բարդի* (*Խալդի*) անուան *բար* բաղադրիչը սումերերէն նշանակում է «լոյս, վառ, կրակ» (սրանով կազմուած է կարծուում սումեր *ba(r)bar* «արեւ» բառը), իսկ դի բաղադրիչը կարող է ունեցած լինել «-եան» կամ «ծին» իմաստը, որով *Բարդի* (կամ *Խալդի*) կը նշանակի «կրակ-եան» կամ «հրա-ծին», մի նշանակութիւն, որը *Բարդի* եզրի դէպրում կը նշանակի «կրակ ծնող», իսկ *Խալդի* եզրի դէպրում՝ «կրակ-հրաբուխ ծնող»: Այսպիսի մեկնաբանութեան դէպրում էլ *Խալդիի Խալդիա* բաղադրիչի մէջ նստած կը լինի *Խայր*-ը՝ կրակ Հայկը:

Նոյն եզրակացութեան է տանում մեզ հետեւեալ վերլուծութիւնը. *Խալդի* անունը ուրարտական արձանագրութիւններում շատ անգամ նշուել է *Ալդի* ձեւով՝ առանց (սաստկացուցիչ) հ կամ խ նախածայնի: Իսկ *Ալդի* եզրը *Արդի* անուան տարբերակ է: Սրա համար փաստ է այն, թէ Մուսասիրը, ուր եղել է *Խալդիի գլխաւոր* տաճարը (ըստ Սարգոնի՝ *Խալդիի* տունը) կոչուել է *Արդի-Ահ*, ոչ թէ *Ալդի-Ահ* կամ *Խալդի-Ահ*: Իսկ մենք արդէն գիտենք, որ *Արդի-Ահ* բուսականութեան (> կրակի) եւ արեսի աստուածը, *արմէն(ի)* ժողովրդի ու երկրի անուանադիրը, որի հետ պիտի

---

<sup>1</sup> OHR, 98:

կապուած լինեն *արշար* (կամ խար, որից՝ խարոյկ) եւ *Հարք* (*>Հայք?*) անունները<sup>1</sup>:

Խալդի անուան *Բարդի* տարբերակը, որպէս կենաց ծառ, ներկայացնում էր նաեւ կրակի աստուածութիւնը:

Բարդին պաշտամունքի առարկայ էր հայերի մօտ երկար ժամանակ: Այդ ծառի պաշտամունքը այնպիսի խոր արմատներ է ունեցել, որ Հայաստանի որոշ շրջաններում յարատեւել է մինչեւ 12-րդ դարը:

Ուրարտուի ժամանակ բարդին պատկերուել է բրոնզեայ գօտիների, արքայական սաղաւարտների եւ պաշտամունքային (սրբազն) քանդակների վրայ:

Խալդին ներկայացնելով իր երկրի կրակային-հրաբխային հզօր բնոյքն ու նկարագիրը՝ հանդիսացել է ուրարտական դիցարանի հզօրագոյն ու (ազգային) գերագոյն ռազմի աստուածութիւնը: *Խալդիի* բնոյքի համար պիտի նկատի առնել նաեւ ներքեւուն Վահագնի մասին մեր գրածները, ուր ցոյց է տրուում, որ Վահագնը եղել է կրակի-հրաբուխի աստուածութիւն եւ դրա համար էլ ինչպէս Հայկ-Խալդին, համարուել է հայոց նախնին<sup>2</sup>:

## Բ. ԹԷՅՉԵՔԱ

*Թէյչեքան* եղել է ամպրոպի ու կայծակի աստուածութիւն եւ հանդիսացել է ուրարտական դիցարանի մեծ եւ հզօրագոյն երբեակի երկրորդ աստուածը:

<sup>1</sup>Պ. Ենսենը, դեռ 1898-ին, առաջարկել էր այն միտքը, թէ հայ անունը կարող է ենած լինել խեթերի *Hate* անունից (երկու ձայնաւորների նիշեւ  $t > j \dots$ ), ինչպէս *mater-hg'* մայր: Բայց այս միտքը չունեցաւ պատմագիտական հիմք եւ չընդունուեց, մանաւանդ որ հայերը արդէն խեթերին (ըստ U. Գրքի բարգմանութեան) կոչել են *քետացիներ*: Իսկ նախախեթը խարերը արդէն վաղոց անհետացել էին՝ ձուլուելով խեթերի հետ: Հայկ անուան ծագման մասին տե՛ս *Հայկ*-ին նուիրուած քաժնում:

<sup>2</sup>ՀՀԳ.Պ, 39:

Թէյշեբայի մասին կարող ենք առայժմ սա չափ ասել, որ նա խուրի-սուրարեան Տեշօբ (Տեշօր) դիցանուան բարբառային մի այլ ձեւն էր, որը երեւի գտնուում էր ուրարտական դիցարանում որպէս ժառանգութիւն սուրարիների ժամանակներից:

Աչքի առաջ ունենալով ուրարտական արքաների դէափ Պարսկաստան (Պարսուա) կատարած արշաւանքները՝ հաւանական ենք համարում, որ Տեշեա-ին անունը, որպէս աստուածութիւն կամ որպէս յայտնի բերդաքաղաքի անուն, Իրանում եւ Արեւելքում պահպանուած լինի (կիրկիզերէն) տւրան եւ (պազենտերէն, պարսկերէն, պահլաւերէն եւլն.) ժամանակում՝ «ոստի» բառերում: Յետագայում պահլաւականը եւս դառնալով՝ հայերէնին տուել է *թշնամի<sup>1</sup>* բառը, երբ արդէն օտար աստուածները շատերի տեղն էին գրաւել հայոց դիցարանում՝ սոտուերի տակ թողնելով կամ մոռացնել տալով հների անունները:

Նմանապէս հասկանալի է Ahriaman-ի՝ Պարսկաստանում շարութիւնը մարմնաւորող հակառակորդ աստուածութիւն դառնալը, որը երեւի իմ կարծիքով գալիս է Թէյշեբա - Աղաղի բնոյթն ունեցող սումերական ամպրոպի աստուած *Rihamun-*<sup>2</sup> անուանաձեւից:

#### Գ. ՇԻՒՆԻ

*Շիհմի*-ն եղել է արեւի աստուածութիւն եւ հանդիսացել է ուրարտական դիցարանի (մեծ երրեակի) երրորդ աստուածը:

Ասուում է, թէ Siwini-ն խուրիական արեւի աստուած Simige-ն (կամ Simiga-ն) է: Ի հարկէ սրանք բնոյթով նոյնն են, որով կարելի է նաև ընդունել, որ այս երկու նման անունները ծագումով կապ ունեցած լինեն իրար հետ:

Siwi-ն անուան մէջ, -ու վերջաւորութիւնը արմատական չէ, այլ՝ ածանց: Հետեւաբար, այստեղ հիմնականը *Šiwi* է, որի -wi (վի) ձայնը կարելի է հեշտութեամբ համեմատել կամ փոխանակել b-ի հետ: Համեմատել Kumarbi (Ո-աս-Շամրայի արձանագրու-

<sup>1</sup>ՀԱԲ, տես թշնամի:

<sup>2</sup> *Rihamun-*ի համար տես ŠAG:

թիւններում) եւ Kumarwi (Բողազ-Ջէօյի եւ Մարիի արձանագրութիւններում)<sup>1</sup>: Հետեւարադ, Siwi(ni)-ի մէջ կարելի է տեսնել Sibi ձեւը: Արդէն Էրլայի գլխաւոր չորս աստուածներից մէկը Sipiš-ն է (Dagan, Baal, Rešeph, Sipiš)<sup>2</sup>: Էրլայի արձանագրութիւններում կայ Šamaš. այլտեղ Sipiš-ն է արեւի աստուածը<sup>3</sup>: Ուզարհսի արձանագրութիւններում Sipiš (Sibiš)ի տեղ կայ Šapaš<sup>4</sup> (կամ Šabaš), որը հաւանաբար սեմական արեւի աստուած Šamaš անուան մի տարրերակն է կամ նախնական ձեւը: Արդէն, ուրարտական դիցարանում կայ Šuba անունով մի աստուածութիւն, որը երեւի լինելով Siwi(ni) կամ Sibi անուան մի այլ տարրերակը՝ պատկանում էր Ուրարտուի կազմի մէջ գտնուած ցեղերից մէկին:

Հետեւարադ, դժուար չէ ծագումնաբանական կապ տեսնել արեւի աստուածութիւն ներկայացնող Šiwini, Sibi(š), Šapa(š) եւ Šama(š) անուանածների մէջ, որոնց ու եւ շ վերջաւորութիւնները պիտի համարել ածանց: Նշուած անունների w, b (>p) եւ m ձայների լծորդութիւնների համար համեմատել Ša-wuška, ISTAR-bušga եւ Ša-muška (դիցուհն) անուանածները<sup>5</sup>:

Էրլայի արձանագրութիւններում (մ.թ.ա. 2500թ.) յիշուել է Šamagan<sup>6</sup> աստուածը, որը, կարծում եմ, Šimiga անուան տարրերակն է: Ուրեմն, նոյն կապակցութիւնն եմ տեսնում նաև Šimi-ga, Šamagan եւ Šama-š անուանածների մէջ, ինչպէս կայ Šawuška, Šawušgan<sup>7</sup> եւ Šauškas<sup>8</sup> ձեւերում:

Հետեւարադ, հաւանական եմ համարում, որ արեւի աստուածութիւն ներկայացնող Šiwini, Sibiš (Sipiš), Šapaš, Šamaš, Šamagan եւ Šimiga դիցանունները ունեցած լինեն նոյն ծագումը: Ուստի, կարծում եմ, թէ Šiwini եւ Šimiga անունները ծագումով խուրրի չեն, ու երեւի գոյութիւն են ունեցել Մերձաւոր Արեւելքում շատ հնուց:

<sup>1</sup> IH, 39:

<sup>2</sup> AE, 44:

<sup>3</sup> Նոյն, 251: Տե՛ս նաև EER, 187:

<sup>4</sup> EER նոյն:

<sup>5</sup> IH, 15:

<sup>6</sup> AE, 254:

<sup>7</sup> IH, նոյն:

<sup>8</sup> Նոյն:

Հետեւաբար, խուրիները Šimiga (Šimige)-ին ժառանգել են Սուրբարի երլյուս:

Արմէնները *Շիհնիմ* նոյնացրել են նաև իրենց արեւի ազգային աստուած Արայի հետ: Սրա համար փաստ եմ տեսնում հետևեալ երեւյթի մէջ. Վաճը կառուցուել է Շիհնիմի կին *Sniշպուէայի* անուամբ եւ կոչուել է *Sniշպա*, բայց հայկական աւանդութեան մէջ Վաճի կառուցումը վերագրուել է *Չամիրասմին*, որի սիրելին է *Արամ*: Ուստի, քանի որ արեւի աստուած Արայի սիրուիի Չամիրամը նոյնացրուել է (նոյնպէս արեւի աստուած Եղող) Շիհնիմի կին *Sniշպուէայի* հետ, ապա պարզ է, թէ Շիհնիմն էլ՝ Արայի հետ:

*Շիհնիմ* անուան հետ կատարուած (վերեւի) համեմատութիւններն ու նրանց վերլուծումները մեզ թէլադրում են աւելի հաւանական համարել, թէ այդ բոլորի աղբիւրը *Šibiš*-ն (*Sipiš*) է, որից *Šiwini* եւ *Šabaš* (*Šapaš*) > *Samas*: Որովհետեւ, լեզուներում ձայնափոխութեան երեւոյթները ցոյց են տալիս, թէ աւելի *b(p)* ձայնը ձայնաւորների մէջ փոխուում է *w-h* (*Šibiš*) > *Šiwi[ni]*), քան թէ հակառակը:

Ի հարկէ պէտք չէ անտեսել թէ հարաւի սեմական աշխարհի եւ թէ հիւսիսի եւ արեւմուտքի հնդեւրոպական շրջանակի նիւթական ու հոգեւոր մշակոյթների զարգացման ու փոխազդեցութիւնների զործում Սուրբարտուի (յետազայում՝ Ուրարտուի) կատարած կարեւոր դերը, մի դեր, որին ճիշդ ու բաւարար արժէք չի տրուում դեռ:

Ինչպէս տեսնում ենք, արեւի այս աստուածութիւնը իր անուան տարբերակներով, մի ընդհանուր հոգեւոր կապակցութեան մէջ է դնում Հայկական լեռնաշխարհն ու Սիհագետքը ամբողջութեամբ՝ երկուսի արանքում ունենալով Սուրբարտուն: Դեռ աւելին, ինչպէս կը տեսնենք մի քիչ վարը, այդ աստուածութիւնն, իր ուրարտական *Šiwini* (*Šibiš*) անուանածեւով, նուածել է նաև Փոքր Ասիան եւ յունական աշխարհը:

#### 4. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՇՆԱՇԽԱՐՀԻ ՄՇԱԿՈՅԹԻ ԾԱԽԱՌՈՒՄԸ ԵՐԿՐԻՑ ԴՈՒՐՍ

---

Չատ մեծ է եղել Ուրարտուի մշակոյթի ազդեցութիւնը հարեւան ու հեռաւոր երկրների վրայ, յատկապէս նրա հզօրութեան ժամանակներում, երբ նա հասել է մշակութային նշանակալի բարձրութեան: Ինչպէս յայտնի է, Իշպուխնիի, Մենուայի, Արգիշտի Ա-ի եւ անգամ Սարդուրի Բ-ի ժամանակներին, Ուրարտուն հասել է ուազմաքաղաքական մեծ հզօրութեան: Արգիշտի Ա-ի ժամանակ Ուրարտուն եղել է Առաջաւոր Ասիայի հզօրագոյն պետութիւնը՝ ստուերի տակ դմելով Ասորեստանը: Ուրարտուն, իր այդ մեծ հզօրութեան ժամանակներին, ուազմական մեծ արշաւանքներ է կատարել թէ դէպի արեւելք՝ Մանա ու Պարսուա (Պարսկաստան), թէ դէպի հարաւա՝ Ասորեստան ու բարելոնական շրջանները եւ թէ դէպի արեւուտք՝ Փոքր Ասիական տարածութիւնները:

Արեւելքում՝ Մանայի ու Պարսուայի շրջաններում, ուրարտական նուաճումները չեն եղել հպանցիկ-անցողիկ, այլ յարաբերաբար աւելի կայուն: Ուրարտուի արքաները այդ շրջաններուն ընդհանրապէս չեն կոտորել բնակիչներին ու չեն աւերել երկիրը (ինչպէս անում էր Ասորեստանը), այլ, շատ դէպերում, անվնաս են քողել գոյութիւն ունեցած թերդերը եւ անգամ կառուցել են նորերը՝ նրանց մէջ կայազօր տեղատրելու համար: Ահա Մենուայի (Տաշրէփէյում թողած) արձանագրութիւնից մի վկայութիւն այդ մասին. «*Մեծութեամբ Խալդի աստծու՝ Մենուան, Իշպուխնիի որդին, այս ամրոցը կառուցեց, նա նուածեց Մելիշտա քաղաքը, նուածեց այնտեղից Մանա երկիրը... քողեց այնտեղ... քողեց հետեւակ մարտիկներ... »:*

Այսպիսի իրավիճակն ու պայմանները, ի հարկէ, պիտի մեծապէս նպաստած լինեն ուրարտական շինուարուեստի եւ հոգեւոր մշակոյթի ազդեցութեան տարածմանը Մանայում ու Պարսկաստանում: Այստեղ մեր նիւթը թելադրում է խօսել աւելի հոգեւոր մշակոյթի ազդեցութեան հարցի մասին:

Յայտնի հնագէտ Գ. Ա. Տիրացեանը գրում է. «Վերջին տասնամեակում յաճախակի նշուում է նաեւ Ուրարտուն՝ որպէս հնարաւոր մասնակիցներից մէկը Աքեմենեան ժամանակաշրջանի իրանական մշակոյթի կազմաւորման գործում: ... Ուրարտական մշակոյթի տեսակարար կշիռը, սակայն, անընդհատ աճում է եւ նրա ճարտարապետութեան, շինարարական տեխնիկայի, կիրառական արուեստի, յատկապէս մետաղագործութեան ու խեցեգործութեան առաջատար նշանակութիւնը դժուար է այլեւս անտեսել»<sup>1</sup>: ...«Ուրարտա-իրանական մերձեցման եզրեր կարելի է յայտնաբերել նաեւ կրօնա-պաշտամունքային թեմաներ արտացոլող կոմպոզիցիաներում եւ պատկերագրական սխեմաներում: Անցեալ դարում Թոփրախ-Կալէի գինու պահեստի կարասներից մէկում գտնուեց ոսկէ մի մեղալիոն՝ զահի վրայ նստած կնոջ եւ նրա դիմաց կանգնած մէկ ուրիշ կնոջ փորագրուած պատկերներով ... ընդունելի է դարձել այն կարծիքը, ըստ որի՝ նստած կինը պատղաբերութեան ուրարտական աստուածուիին է՝ Խալդի աստծու ամուսին Արուբանին, որին երկրագրում է ուրարտական թագուիին: ... Յատկանշական է, որ ուրարտական արուեստի այս թեման, պատկերագրական նոյն առանձնայատկութիւններով, հանդիպում է իրանական՝ արեմենեան ժամանակաշրջանի կնիքի վրայ ... Այստեղ եւս ներկայացուած է նոյն նստած աստուածուիին, դիմացը կանգնած կնոջ պատկերով»<sup>2</sup>:

Այստեղ պիտի նշել նաեւ Իրանի դրօշի «արեւը առիւծի վրայ» համակցական պատկերը, որը համընկնում է Էրեբունիում յայտնաբերուած «Խալդին առիւծի վրայ» պատկերի հետ<sup>3</sup>:

Զգալի չափեր է ունեցել Հայկական լեռնաշխարհի քաղաքակրութիւններ ազդեցութիւնը նաեւ արեւմուտքում՝ Փոքր Ասիայի հնդեւրոպական ժողովուրդների վրայ, մի բան, որը թաղուել ու մոռացուել է պատմութեան խաւարում: Այստեղ իր հետաքրքրութեան համար կը բերեմ միայն որոշ տուեալներ ու երեւոյթներ, ո-

<sup>1</sup> Գ. Ա. Տիրացեան, Ուրարտական քաղաքակրութիւնը և Աքեմենեան Իրանը, ՊՀ, 2, 1964, էջ 149:

<sup>2</sup> Նոյն, 158-159:

<sup>3</sup> ԱՀԾՈՒ, 214 եւ ՀԺՊ, 97:

րոնք խօսում են յունական դիցաբանութեան կազմաւորման գործում Ուրարտոի հոգեւոր մշակոյթի ունեցած կարեւոր ազդեցութեան ու դերի մասին:

Վերեւում տեսանք, թէ սումերական Inanna-Anunit-Nina աստուածութիւնը (կամ աստուածուիհիները) եղել են նաև Հայկական լեռնաշխարհի *Ինաննա-Անահիտ-Նանէ* աստուածութիւնը (կամ աստուածուիհիները): Թէեւ Անահիտը (որի մասին դեռ կը խօսենք ներքեւում), որպէս ազգային մեծ դիցուիի, ամենամեծ յարգանքն ու պաշտամունքը վայելում էր Հայկական լեռնաշխարհի իր կենտրոնում՝ որպէս հովանաւորն ու մեծ մայրը երկրի (հենց մայրիշխանական ժամանակաշրջանից), այսուհանդերձ նա յայտնի էր նաև հնդեւրոպական այլ ժողովուրդների մօտ ու Եւրոպա էր հասել (որպէս սրբազն եւ արտասանելն արգելուած տարու անուն) շրջուած Diana անուանածեւով:

Այսպէս էլ ամպրոպի Տեիշեա կամ Տեշօբ աստծու անունը Յունաստան է անցել նոյնպէս շրջուած Poseid (on) ձեւով, ուր պահել է իր փորբրկային բովանդակութիւնն ու նկարագիրը, բայց Յունաստանի աշխարհագրական բնոյթի պատճառով վերագրուել է ծովային միջավայրին ու փորբրկին:


Poseid-on անուան -ոն վերջաւորութիւնը յունական յայտնի վերջածանց է (հմմտ. Արտէնն, Ապոլոն, Պիգմալիոն, Ագամեմնոն, Ալկմեոն եւլն.), որով՝ հիմնականը մնում է Poseid, որը շրջուած (ըստ մեզ՝ բուն) ձեւով լինում է Diešօր կամ Տեիշօր (խորրի-սուրարիական Տեշօր կամ ուրարտական Տեիշե[ա]): Տեիշօր-ի t-ն շրջուած Poseid(on) ձեւում հնչուել է d, այնպէս ինչպէս Anahit-ի t-ն շրջուած Diana ձեւում փոխուել է d-ի:

Այս Տեիշեա-Տեշօր=Poseid(on) հաւասարութեան համար փաստ է ո՞չ թէ միայն անունների (շրջուած ձեւով) նոյնութիւնը եւ նրանց երկուսի էլ ամպրոպային-կայծակնային բնոյթը, այլ կարեւոր փաստ է նաև նրանց երկուսի էլ մարդակերպ նկարների համանման կոմպոզիցիաները. Թէյշերան բռնած է կայծակի նշան (աշտանակաձեւ) եռաժանին<sup>1</sup> եւ կանգնած է ամպրոպի խորհրդա-

<sup>1</sup> Դա կայծակի նշան եռաժանին է, ոչ թէ ծառ կամ տերեւներ: Համեմատել Աղադի խորհրդանիշը (կայծակի երկժանին՝ ամպրոպի խորհրդանիշ ցուլի վրայ,

նիշ ցույի վրայ՝ աջ ոտքը դրած լինելով ցույի գլխին. Պոսէյդոնն էլ նոյնպէս, բռնած է եռաժամին՝ աջ ոտքը նոյնպէս դրած լինելով մի նոյնանիշ կերպարանքի վրայ:


Այս նկարները փաստ են, թէ Poseidon-ը Տեշօր-ն է: Կան եւ այլ կարեւոր ու հետաքրքրական փաստեր: Ուրարտուի ղիցարանը գլխաւորում են *Խալդի, Թէյշերա* եւ *Շիհնի* աստուածների երդուակը: Իսկ յունական ղիցարանում՝ *Հաղէսր, Պոսէյդոնն* ու Զեւսը եղել են *Եղրայրմեր*: Զեւսը աստուածն է երկնքի, Պոսէյդոնը՝ ծովի փորորկի, իսկ *Հաղէսր*՝ ստորգետնեայ թագաւորութեան: Ես գտնում եմ, թէ այստեղ՝ ինչպէս *Պոսէյդոնը* ամպրոպի-կայծակի աստուած *Թէյշերան* է, այնպէս ել ստորգետնեայ աստուած *Հաղէսր*՝ հրաբուխի աստուած *Խալդին* է, իսկ երկնքի աստուած Զեւսը՝ արեւի աստուած *Շիհնին*:




Թէյշերա:

---

նկ. 14): Այս նկարը բերուած է՝ մ.թ.ա. 1120 թուերին պատկանող՝ Ritti-Marduk-ի սահմանաքարի ղիցական խորհրդանիշերի կոմպոզիցիայից (B. M. N° 90.858): Տե՛ս British Museum, «The Babylonian Legends of the Creation», 1931, p. 28:



Պուէյրոն:



Աղադ:

Դժուար չէ տեսնել Zeu(s), Sibi(š) եւ Siwi(ni) անունների նոյնութիւնը: Վերեւում ցոյց եմ տուել, թէ Šiwini անուան -ni վերջատրութիւնը (որպէս ածանց) համապատասխանում է Sipio կամ (աւելի ճիշդը) Sibiš ձեփի շ վերջատրութեանը: Այսպէս էլ Zeus (Zeus-s)<sup>1</sup> անուան վերջատրութիւնը համապատասխանում է Sibiš (Sibi-š) եւ Siwini (Siwi-ni) անունների վերջատրութիւններին. Երկու ձայնատրների միջեւ ե-ն փոխուել է w(u)-i, որով Sibiš ձեփին համապատասխանում է Zeus<sup>2</sup> (անգամ փոխիգ. Sabaz[ios] կամ Savaz[ios] եւ

<sup>1</sup> Solomon Reinach-ը ասում է, թէ Ziu աստուածը (բարձր զերմաններէն) ստուգաբանականօրէն համապատասխանում է յունական Zeus-ին, տես OHR, 136:

<sup>2</sup> Zeus-ին յիշող յունական հնագոյն առքիւրը Հոմերոսն է: Սրա ժամանակի մասին բերում են տարբեր կարծիքներ՝ մ.թ.ա. XII եւ VII դարերի միջեւ: Ոմանք նրա մօտ պատմուած դէպքերը վերագրում են միկենեան (1100 մ.թ.ա.) ժամանակաշրջանին: Ի հարլէ հաւանական է որ ճիշդը Ուրարտուի ժամանակը լինի: Այսուհանդերձ, յայտնի է, թէ Sibiš-ը՝ Էրլայում (Şabas-ը Ուգարիտում) եւ Թեշո-

Šiwini անունները: Ուստի պիտի ընդունել, թէ Sibiš, Zeus (Եւ Ուգա-  
լիսի Շաբաշ եւ փոխիզ. Sabaz[ios] կամ Savaz[ios] եւ Šiwini անուննե-  
րը նոյն դիցանունն են հանդիսանում եւ ներկայացնում են հենց ա-  
րեւի (որոշ դէպքերում՝ երկնքի) աստուածութիւնը:

Հետեւարար պիտի նաեւ ընդունել, որ ստորգետնեայ աս-  
տուած Հաղէսն (յուն. Haidēs) էլ հենց կրակի-հրաբուխի աստուած  
Խալդին է՝ սրա անուան մեղմացած (Հալլη) ձեւն է: Յայտնի է, որ  
Հաղէսի -ի- վերջաւորութիւնը յունական վերջածանց է: Այնպէս որ  
այդ անուան Հաղ < Հայդ (Haid) հիմքը համապատասխանում է  
Խալդ անուանը, որի լ ձայնը մարել է Հաղ ձեւում: Հաղէս ու Խալդի  
անունների նոյնութիւնը ընդունելու համար աչքի առաջ ունենք ոչ  
թէ միայն այս երկու անունների ձայնային նմանութիւնը, այլ եւ  
նրանց բնոյթը, քանի որ հրաբուխի (Խալդի) աստուածութիւնը  
հենց ստորգետնեայ (Հաղէս) աստուածութիւնն է: Այս փաստի  
վրայ պիտի աւելացնել եւ այն, որ Հաղէսը, Պուէյրոնն ու Զեւսը եղ-  
բայրներ են, այնպէս ինչպէս Խալդին, Թէյշերան ու Շիհմին հան-  
դիսանում են առանձին երրեակ:

Այսպիսով տեսնում ենք թէ յունական դիցարանի կարեւոր  
երեք եղբայրներ՝ Հաղէսը, Պուէյրոնն ու Զեւսը ուրիշ քան չեն,  
եթէ ոչ հենց ուրարտական գլխաւոր ու հզոր երրեակը՝ Խալդին,  
Թէյշերան ու Շիհմին:

Այս իրողութեան համար բերուած լեզուաբանական ու դիցա-  
րանական համեմատութիւններից դուրս ունենք նաեւ պատմական  
եւ աւանդական կարեւոր տուեալներ, որոնց, Խորենացին, Ժամա-  
նակին քաղելով Մար-Արայի (յունարէնի թարգմանուած) մի քաղ-  
էական իին մատեանից՝ գրանցել է իր պատմութեան գրքում՝ Ա-

---

պը՝ Սիտաննիի ու խեթերի մօս յայտնի էին Հոմերոսից առաջ: Ուստի՝ Խալ-  
դին, Թէյշերան ու Շիհմին պիտի լինեին Հայկական լեռնաշխարհում ու Փոքր  
Ասիայում (այսինքն՝ հնդեւրոպական հայրենիքում) Հոմերոսից շատ առաջ: Ո-  
ռով՝ Հաղէս, Պուէյրոնն ու Զեւս եղբայրների՝ Ուրարտուի գլխաւոր երրեակ Խալ-  
դին, Թէյշերան ու Շիհմին լինելը կարող է ցոյց տալ, թէ նրանք ունեին հնդեւրո-  
պական ծագում, մի քան, որը մի փաստ եւս կ'աւելացներ Ուրարտուն կազմած  
նախեանների հնդեւրոպական երթեան համար, որի մասին դեռ կը խօսենք  
այստեղ՝ Վերջին գլխում: (Սիցաննեալ նշեմ, թէ անհաւանական չէ Šiwini >  
անզլ. Sun (անզլ. սաք. Sunne) անցումը):

բամի մասին գրածների մեջ եւ որոնք յիշեցնում են յունական հետեւեալ առասպելը:

Կռոնուր (կրտսեր Տիտանոսը), վախենալով, թէ իր նորածին որդիները յետազայում ապստամբելով իր դէմ՝ կը գրաւեն իր իշխանութիւնը (ինչպէս ինքն է արել իր հայր Ուրանոսին), կուլ է տալիս նրանց: Բայց Կռոնոսի կին Հռէան պահում ու փրկում է իր Զեւս որդուն. յետոյ ստիպում է նաև Կռոնոսին փսխել իր զաւակներին: Զեւսը մեծանալով՝ իր եղբայրների օգնութեամբ յաղրում է Տիտաններին ու Կռոնոսին, որ պարտուելով (ըստ մի այլ գրոյցի) զնում է մի կղզի ու թագաւորում այդտեղ<sup>1</sup>:

Խորենացու մօտ հայերի նախնի Արամք՝ ուրարտական պետութեան հիմնադիր Արամէն է: Այնպէս որ նրա մօտ Արամի մասին պատմուածները վերաբերում են ոչ թէ միայն Արամէին, այլ ընդհանրապէս ուրարտական հզօր արքաների սիրազդութիւններին, իսկ ուրարտական արձանագրութիւններում թագաւորների գործերն ու յաղթանակները վերագրուում են ուրարտական աստուածներին:

Խորենացին, Արամի մասին Մար-Արայից քաղելով, գրում է. «Սա (Արամք) դէպի արեւմուտք շարժուելով ... հասնում է կապալովկացոց կողմները ...: Այստեղ նրան պատերազմով հանդիպում է Տիտաննեան Պայապիս Քաաղեան, որ բռնացել գրաւել էր տարածութիւնը երկու ծովերի միջեւ, այսինքն՝ Պոնտոսի եւ Ովկիանոսի: (Արամք) նրան ընդհարուելով վանում եւ փախցնում է մի կղզի ասիական ծովում»<sup>2</sup>:

Ինչպէս տեսնում ենք, Արամի (այսինքն՝ Ուրարտուի հզօր արքաների, որով մեծ աստուածների)՝ Կապարովկիայի կողմներուն Տիտաննեան Պայապիս Քաաղեային յաղթելն ու դէպի մի կղզի փախցնելը ճշգորէն համընկնում է Տիտաննեան Կռոնոսի, Զեւսից ու նրա եղբայրներից պարտուելուց յետոյ, դէպի մի կղզի գնալու առասպելի հետ:

<sup>1</sup>ՀԱՀ, տես Կռոնոս:

<sup>2</sup>Խորենացի, Ա-ժդ (ընդգծումները իմն են՝ Մ.Գ.): Աշխարհաբար թարգմանութիւնը բերում եմ Մալխասեանից («Սով. Խորենացի Հայոց Պատմութիւն», Երեւան, 1940):

Մենք կարող էինք ասել, թէ գուցէ Խորենացու աղբիր Մար-Աքան կամ սրան աղբիր հանդիսացած մի աւելի հին հեղինակ (կամ հայկական աւանդութիւնը Հայաստանում հելլենիզմի ժամանակ) յունական առասպելի դեպքերը կապել է դեպի արեւմուտք արշաւած Արամի (ուրարտացիների) հետ, սակայն Զեւսի ու նրա եղբայրների (Պոսէջոնի ու Հաղէսի) Ուրարտուի գլխաւոր աստուածների (մեծ երեւակի) անուններն կրելը թելադրում է աւելի ընդունել, թէ յունական առասպելը հանդիսացել է արձագանքը արեւմուտքում Ուրարտուի կատարած նուաճումների՝ ստանալով դիցարանական բնոյք:

Եթէ պիտի մտածել, թէ յունական առասպելն է բուն աղբիրը, ապա, պէտք է միաժամանակ ընդունել, որ նրա մեջ պատմուած դեպքերը Արամին վերագրողին պիտի յայտնի լիներ թէ յունական առասպելի հերոսները եղել են Ուրարտուի մեծ աստուածները, այլապէս ինչո՞ւ պիտի դրանք վերագրուէին Արամին (հայոց նահապետին կամ Ուրարտուի պետութեան հիմնադրին):

Ուրարտական աստուածների մեծ երեւակի (*Խալդիի, Թէյշեռայի եւ Ծիփինիի*) եւ Զեւսի ու նրա եղբայրների (*Պոսէջոնի ու Հաղէսի*) մասին իմ արած համեմատական քննութիւնը աւարտելուց յետոյ, ինձ (ուրախութեամբ) յայտնի դարձաւ, թէ Յ. Մարկուարտն եւս, իր օրին, նշմարել է Արեւմուտքում Կապադովկիայի հրաբխային Արգէսս լեռան (Մաժակ-Կեսարիայի) շրջանում Տիտանների դէմ Արամի կատարած սխրագործութիւնների պատմութեան ունեցած նմանութիւնը Տիտանների դէմ Զեւսի ու նրա եղբայրների տարած յաղբանակի մասին խօսող յունական առասպելի հետ:

Սակայն Մարկուարտը, դեռ (իր օրերին) գտնուելով «արմէնների զաղթի» սխալ վարկածի ազդեցութեան տակ՝ յունական առասպելի՝ Արամի հետ կապուելը վերագրել է արիմների (արմէնների) «Ուրարտու հասնելուց առաջ դեռ Կապադովկիայում գտնուած լինելու հանգամանքին»: Իբր թէ «Այդ կողմներում ապրած արիմներն այդ առասպելը կապել են իրենց նախնու Արիմ անուան հետ, իբրև Արիմի կողիը Տիտանների կամ Գիգանտների դէմ: (Եւ իբր թէ) յետագայում Արիմ անունը դարձել է Արամ, թե՛րեւս ուրարտացոց վերեւում յիշուած Արամէ քազարի անուան

*յիշողութեամբ կամ, հաւանօրէն, ազդեցութեամբ Աստուածաշնչի մէջ յիշուած «Արամ» անուան, որ է՝ արամէացոց-Ասորիքի եւ Միջազգեստրի բնակիչների-նախնին»<sup>1</sup>:*

Պարզ է, թէ Մարկուարտի կողմից հարցին տրուած այս մեկնութիւնը յենուում է իր ժամանակներում տիրող «արմէնների գաղթի» վարկածի վրայ: Ի հարկէ նա չէր իմանում, թէ Տիտանների դէմ կռուած հերոսները կրում են ուրարտական աստուածների գլխաւոր երրեակի անունները: Դրա համար էլ նա չէր կարող յունական առասպեկի դէպքերը կապել ուրարտական արքաների՝ արեւմուտքում կատարած ռազմական արշաւանքների հետ:

Օրինակ՝ մեզ յայտնի է, թէ Մենուան, Արգիշտի Ա-ը եւ Սարդուրի Բ-ը ռազմական արշաւանքներ են կատարել դէպի արեւմուտք ու յաղթական պատերազմներ են մղել այդ շրջանների պետութիւնների դէմ: Կեսարիան պէտք է որ գտնուած լինի նուաճուած շրջանների մէջ: Անհաւանական չէ անգամ, որ Արամէն, ինքը, արեւմուտքում կատարած լինի յաղթական արշաւանքներ, որոնք իր օրին դեռ չին արձանագրուում ու մնում էին անյայտ: Արդէն Մենուան, Վանում մի քարի վրայ գրած արձանագրութեամբ, կոնկրետ տուեալներ է բողել մեզ, թէ նա արշաւել է (արեւելքում) Մանայի դէմ եւ (հարաւում) Կումենու քաղաքից այն կողմ հասել է մինչեւ Ասորեստան. անգամ նրա ուղարկած զօրքերը (արեւմուտքում) յաղթական պատերազմներ են մղել ու գրաւել են Առորիշիլինի, Թարխիզաման-նի եւ այլ քաղաքներ ու նուաճումներ կատարել Խարի-նա եւ Աղջ-նի երկրներում<sup>2</sup>:

Ի հարկէ Արգիշտի Ա-ն էլ պիտի նուաճած լինի այդ շրջանները, քանի որ իր արձանագրութիւններից մեզ յայտնի է, թէ նա 6600 մարտիկներ է բերել Խարէ եւ Ծուպանի երկրներից ու հաստատել իր կառուցած Էրեբունի բերդաքաղաքում:

Մարկուարտը Արամի պատմութեանը («արմէնների գաղթ»-ի տեսանկիւնից) բերած մեկնութիւնները զարգացնելիս՝ բնաւ կարեւորութիւն չի տուել Խորենացու՝ Արամի մասին (քաղդէական իին, ոչ հայ, աղբիւրից) քաղած պատմութեան այն արժեքաւոր ու այս

<sup>1</sup>ՀՀԳ.Պ, 24-25:

<sup>2</sup>YKH, 151:

հարցի համար կարեւոր տուեալներին, թէ Արամը ոչ թէ Կապաղովկիայի շրջանի հայերի առաջնորդն է, այլ նա Հայաստանից (Ուրարտուից) է արշաւում դէպի արեւմուտք, եւ դա էլ՝ արեւելքում մեղացիների (Նիւքար Մաղեսի) դէմ եւ հարաւում ասորեստանցիների դէմ մղած յաղթական պատերազմներից յետոյ:

Սիա Խորենացու գրանցած խօսքերը կրճատումներով. «Այս Արամը Նինոսի Ասորեստանին եւ Նինուէին տիրելուց քիչ տարիներ առաջ, ... պատահում է հայոց սահմաններին մօս մերացոց երիտասարդներին, որոնց առաջնորդում էր մի ոմն Նիւքար Մաղես....: Արամը յանկարծորէն նրա վրայ յարձակուելով արեւը ծագելուց առաջ՝ կոտորեց նրա բազմաթիւ ամբոխը եւ իրեն՝ Նիւքարին էլ, որ Մաղես էր կոչուում, ձերքակալ անելով քերեց Արմակիր....: Նոյն այս Արամը արեւելցիների հետ ճակատամարտը վերջացնելուց յետոյ, նոյն գօրութեամբ շարժուում է Ասորեստանի կողմերը. այնտեղ եւս գտնում է մի ուրիշ ապականիչ իր երկրի, Բարշամ անունով, հակաների ցեղից, չորս քիոր սպառագէն հետեւակներով եւ իհնգ հազար հեծեալներով. նա խիստ հարկերով սաստիկ նեղելով անապատ էր դարձրել բոլոր շրջակայքը: Արամը պատերազմով նրան ընդհարուելով՝ հալածում է նրան Կորդուքի միջով մինչեւ Ասորեստանի դաշտը, շատերին կոտորելով. Բարշամն էլ նրա զինակիրների առաջը պատահելով սպանուում է ....: Իսկ ինչ քաջութեան գործ որ սա կատարեց արեւմտեան կողմը Տիտանեանների հետ, մենք դեռ պէտք է պատմենք: Սա դէպի արեւմուտք շարժուելով, առաջինի վրայ չորս քիոր հետեւակ եւ երկու հազար հեծեալ (աւելացնելով), հասնում է կապաղովկացոց կողմերը, մի տեղ, որ այժմ Կեսարիա է կոչուում ....: Այստեղ նրան պատերազմով հանդիպում է Տիտանեան Պայապիս Քաաղեան, որ բոնացել գրաւել էր տարածութիւնը երկու մեծ ծովերի միջեւ, այսինքն Պոնտոսի եւ Ովկիանոսի: (Արամը) նրան ընդհարուելով վանում եւ փախցնում է մի կղզի ասիական ծովում»<sup>1</sup>:

Ինչպէս շատ յստակ ու պարզ երեւում է, այստեղ Արամը ոչ թէ ինչ-որ երեւակայական-առասպելական դէմք է, այլ Ուրարտուի

<sup>1</sup> Խորենացի, Ա-ժգ, Ժդ: (Աշխարհաբար քարգմանութիւնը՝ Մալխասեանի):

արքայ Արամէն (որ կռուել է Ասորեստանի դէմ), թէեւ նրա անուան շուրջ (որպէս պետութեան ու հարստութեան հիմնադիր, որով որպէս հայերի նահապէտ) խտացուել է ուրարտական հզօր արքաների սխրագործութիւնները ընդհանրապէս: Միանգամայն պարզ է, թէ սխալ է՝ «գառքի» սխալ վարկածի դիրքից ելնելով՝ Արամին համարել միակողմանիօրէն, Կապադովկիայում ապրած արիմների առաջնորդի (նախնու) անունը, կամ Աստուածաշնչի մէջ յիշուած արամէացիների «նախնու» անունից ազդուած անուն:

Ալ աւելին՝ Արամի մասին Խորենացու գրանցած այս դէպքերը, ըստ քաղդէական այդ աղքիւրի, տեղի են ունեցել (ժամանակագրական հաւասարի ճշդութեամբ) «Նինոյի Ասորեստանին ու Նինուէին տիրելուց քիչ տարիներ առաջ», այսինքն՝ Նինուէի՝ Ասորեստանի մայրաքաղաք լինելուց քիչ տարիներ առաջ: Մեզ յայտնի է, թէ Նինուէն Ասորեստանի բուն մայրաքաղաքը դարձաւ Sennacherib-ի (705-681 մ.թ.ա.) օրերին: Եւ ահա հենց այս ժամանակներից ոչ շատ առաջ են ապրել ու գործել Արամէն, Մենուան (810-786 մ.թ.ա.), Արգիշտի Ա-ը (786-764 մ.թ.ա.) և Սարդուրի Բ-ը (764-735 մ.թ.ա.), որոնք ել կատարել են նշուած արշաւանքները դէպի արեւմուտք:

Այս փաստերը բերում ենք ցոյց տալու, թէ պատահականութիւն չէ, որ յունական առասպելում Տիտանների դէմ կռուած ու յաղթած Զեւսն ու նրա եղբայրները (Հադէսն ու Պոսէյդոնը) կրում են հենց Ուրարտուի զլխաւոր աստուածների երրեակի ամունները, եւ թէ մեր տեսակէտք (յունական առասպելի հերոսների ուրարտական աստուածներ լինելու մասին) չի հիմնուում լոկ անունների նմանութիւնների (կամ նոյնութիւնների) ու Խորենացու պահած յիշողութիւնների վրայ, այլ եւ ունի պատմական իրական ու հաստատում հիմք:

Ի հարկէ այս հարցում պիտի աչքի առաջ ունենալ եւ այն, թէ Մեծ Հայքի (Ուրարտուի) եւ Կեսարիայի միջեւ ընկած տարածութիւնները եղել են հայերի բնակութեան վայրեր: Բազմաթիւ տուեալներ ու փաստեր կան, որոնք ցոյց են տալիս, թէ խեթական պետութեան բուն երկրի եւ Մեծ Հայքի (Ուրարտուի) արանքում գտնուել են հայկական առանձին իշխանութիւններ ու պետութիւն-

ներ՝ ինչպիսին են եղել Հայաստան, Պախստուամ, Սուխամուն, Թեգարամնամ, Խոտուամ, Ազգին, Ծովիքը Եւայլն, որոնք կոչուել են նաև «Մեծ Հայք», «Փոքր Հայք», «Երկրորդ Հայք» Եւայլն, եւ որոնք հանդիսացել են հայ-արմէն ժողովրդի (նախեանների) ծագման օրբանի արեւմտեան շրջանի առանձին հասուածները։ Դրանք հանդիսացել են Հայկական լեռնաշխարհում նախնադարեան համայնական հասարակութեան ընդհանուր (հայ-արմէնական-նախեան) տոհմական տարրերի՝ որպէս ցեղեր բիորեղացման ու որպէս ժողովուրդ միաւորման առանձին շրջաններ։

Արգիշտի Ա-ի Էրեբունի տարած 6600 մարտիկների մէջ Hate կոչուածները պիտի բաղկացած լինեն հենց խեթական իշխանութիւնից ազատազրուած (կամ խեթական դաշնակցութիւնից դուրս եկած) այս շրջանների հայերից, եւ յայտնի է, թէ նրանց մէջ Ծոփքից բերուածները արդէն պիտի հայեր լինեն, այլապէս՝ Արգիշտին չէր վստահի նրանց յանձնել Էրեբունիի նման ռազմագիտական կարեւորութիւն ունեցող մի ամրոց։

Ի հարկէ հնարաւոր է ենթադրել, որ Կեսարիայի մօս Տիտանների դէմ Ուրարտուի կատարած սխրագործութիւնների եւ յաղրանակների ականատես (կամ մասնակից) արիմները նպաստած լինեն յունական այդ առասպելի ստեղծման ու տարածման գործին։ Մի բան, որը կարող էր լինել մի այլ փաստ՝ այդ սխրագործութիւնների հեղինակ եղող ուրարտական արքաների հետ իրենց ունեցած ցեղակցութեան համար։

Մեր նիւթի տեսակէտով շատ հետաքրքրական է հենց Կեսարիայի մօս գտնուող հրաբխային նշանաւոր Արգէոս լեռը, որը պիտի կարեւոր դէր խաղացած լինի մեր առասպելի դիցարանական կազմութեան մէջ։

Այս շրջանի Տիտանների մասին կարեւոր տեղեկութիւն է բերում Ակադ. Մանուկ Աբեղեանը։ Նա գրում է. «Գիշանտների զլիսաւորն է Տիփոն (Տիփոն, Տիփու, Տυրփաս, որ է խւկապէս ծուխ արձակող, ծխող, եւ իբրեւ հասարակ անուն նշանակում է պտուտահողմ, կայծակնացայտ եւ որոտալիր ամպրոպ): Նա հրաբխային լեռների ու կորստարեր փորորիկների սիմվոլն էր. ունէր հարիր զլուխ եւ իր հարիր բերանից բոց էր արձակում։ Զեւսը նրան

դնում է հրարիսային Էտնա սարի ծանրութեան տակ կամ, ըստ ուղաների՝ Սիցերլրական ծովի Իմարիմ կամ Էնարիա հրարիսային կղզու տակ, որտեղից նա շարունակում է քոց արձակեր»<sup>1</sup>:

Ինչպէս ասացի, Կապառվկիայի (Արգէոս լեռան շրջանի) եւ յունական շրջանների մօտ գտնուած հայերը ախտի մասնակցած լինեն ոչ թէ միայն մեր առասպեկի տարածման գործին, այլ անգամ նրան հիմք հանդիսացող դեպքերին, օգնելով Ուրարտուին։ Այդ շրջանում արմէնների առկայութեան մասին մեզ հասել են որոշակի վկայութիւններ. «Հոմերեան Էպոսի ստեղծման շրջանում (մ.թ.ա. X-XI դդ.) նախահայկական ցեղերից մէկը, արմէնների ցեղը, յայտնի էր յոյներին մի շարք վայրերում՝ ... Կիլիկիայում՝ Կալիկադնոս գետի հովտում, որ գտնուում են «Արիմների լեռները», Օրոնտեսի գետաբերանի մօտ՝ Անտիոքի շրջանում եւ վերջապէս, Կապառվկիայի Արգէոս լեռան շրջակայրում, որտեղ տեղադրուում է հայ ազգային աւանդութեան «Պոռտին Արմենիան» - «Առաջին Հայրը»։ Բոլոր այդ վայրերի հետ է կապուում նաև հրաշունչ լեռան եւ Տիփոն հրէշի առասպելը։ Այս առասպելը, որ գոյութիւն ունէր եւ Միսիայի ու Լիդիայի սահմանի մօտ, եւ Կիլիկիայում, եւ Օրոնտեսի գետաբերանի շրջանում, եւ Արգէոս լեռան շրջակայրում, կապուում է, որեմն, արիմների ցեղերի հետ»<sup>2</sup>։

Մեզ յայտնի է, որ Խալդին՝ կրակի-հրարուիսի աստուած էր, իսկ Թէյշեբան՝ ամպրոպի-կայծակի, իսկ Շիհնին՝ արեւի (որով երկնքի) աստուած։ Հետեւարար, ուրարտական ուժերի յաղթութիւնը Կեսարիայի մօտ խեթերի կամ այդ շրջանի ուժերի դէմ՝ հեթանոսական օրերին կարող էր մեկնաբանուել որպէս այդ տեղերի հրարիսային ուժերին ներկայացնող Տիտանների գլխաւորի (Արգէոսի) պարտութիւնը՝ Հայկական լեռնաշխարհի (Ուրարտուի) արեւի, ամպրոպի-կայծակի եւ կրակի-հրարուիսի աստուածների միացեալ ուժերից։ Որի վրայ՝ պարտուած այս Կոռնոս<sup>3</sup> Տիտանը

<sup>1</sup> ՀՀԳ.Պ, 24:

<sup>2</sup> Ս. Երեմեան, ՀԺՊ, 233-234:

<sup>3</sup>Կոռնոսը Խորենացու մօտ նոյնացուել է Բէլի եւ Նեբրովթի հետ (Խոր. Ա-Է): Ունեմն Կոռնոսը (երեւի) նոյնպէս կրակ-հրարուիսի աստուած էր առաջ. այս մա-

(Երեւի հանգած կամ հանգելու վրայ եղած հրաբուխը) գնացել է ծովում մի կղզի ու շարունակել ապրել այդտեղ գործող մի հրաբուխով:

Ի հարկէ՝ մեր նիւթի համար այս բոլորի մէջ կարեւորը այն է, թէ յունական ամենամեծ աստուածներ եղող Հարէս, *Պուէյրմ ու Զես եղայրները* թէ անուններով եւ թէ իրենց բնոյքով ու նկարագրով հանդիսանում են հենց ուրարտական դիցարանի գլխաւոր ու *հզօր երրեակը՝ Խալդին, Թէյշերան ու Շիփինին*:

Սա արդէն, անկախ մի շարք այլ երեւոյթներից, պիտի շօշափելի ապացոյց համարել, թէ ուրարտական քաղաքակրթութիւնը հզօր ազդեցութիւն է ունեցել ոչ թէ միայն արեւելքում՝ Իրանի, այլ եւ արեւմուտքում Փոքր Ասիայի ժողովուրդների մշակոյթների վրայ, եւ կարեւոր դեր է խաղացել անգամ յունական դիցարանութեան նշանակալի մասի կազմաւրման գործում: Միաժամանակ՝ եթէ յունական աստուածները (Ուրարտուի հզօր երրեակը) հնդեւրոպական են, ապա դա կը լինի յաւելեալ կարեւոր փաստ՝ Ուրարտուի իշխող ժողովրդի հնդեւրոպական եռթեան համար: Արդէն լաւ է յայտնի, թէ Խալդին բնաւ չի եղել խուրրիական:

## 5. ՀԱՅԵՐԻ ՀՆԱԳՈՅՆ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

### Ա. ՀԱՅԿ

Լայնալիճ աղեղով հսկայ աստուածութիւն *Հայկը* գալիս է հայ ժողովրդի կեանքի շատ հիմ՝ նախնադարեան համայնական հասարակութեան որտրդական ժամանակաշրջանից: Նա եղել է հայ ժողովուրդը կազմած նաիրեան կարեւորագոյն (կենտրոնական) ցեղախմբի ազգային գլխաւոր ու բնիկ աստուածութիւնը:

---

սին տե՛ս աւելի ետք՝ Վահագն-ի տակ, ուր խօսք կը լինի Նեբրովթ-Նեմրութ հրաբուխի մասին:

Գիտենք, թէ Հայկը Խալդին է<sup>1</sup>: *Խալդի-Հայկը Հայկական լեռնաշխարհի հրարիսային բնոյթից ծմած կրակի աստուածութիւն է*: Ինչպէս գիտենք, Խորենացին Մար-Աբայից քաղելով՝ Հայկի համար պահել է «Յապետոսքեանն Հայկ»<sup>2</sup> բնորոշիչ արտայայտութիւնը: Մեզ արդէն յայտնի է, թէ Յապետոս-Հեփետոսը կրակի աստուածութիւն է, մի բնորոշում, որը երեւի Հայկին տրուել է Հայաստանի հելլենիստական (Արտաշէսեանների) ժամանակաշրջանում, երբ դեռ գիտեին Հայկի հրեղէն բնոյթը: Դրա համար էլ նա, որպէս հայերի անուանադիր նախնի, անձնաւորուելով՝ կոչուել է «քաջազանգուրճ ու խայտակճ»<sup>3</sup>, մի բնորոշում, որ վերաբերում էր կրակին, ինչպէս Վահագնի համար է ասուել «Նա հոր հեր ունէր ... եւ աչկունքն էին արեգակունք»:

Խորենացու մօտ պահպանուած իին ծննդաբանական ցուցակում Հայկը համարուում է Թորգոնի որդին: Թորգոն անուան ծագումը կապուում է խեթական եւ ուրարտական արձանագրութիւնների մէջ յիշուած *Տարկումա* (*Կամ Թարխիզամա*) քաղաք-երկրի անուան հետ<sup>4</sup>: Այսուհաներձ, այսի չմոռանալ, որ Հայկը դիցանուն է, որով նա պիտի համարուած լինի այս *Տարկումա* (*Թարխիզամա*) տեղանուան հիմքում եղած *Տարքու*՝ հայերի *Տորք* աստուածութեան որդին: Տորքի գլխաւոր տաճարը գտնուում էր Աղձնիքում՝ Արմէ-Շուրբիայում՝ հայերի համար շատ նուիրական եղած Անգեղ-Տուն (Ինգալաւա ?) կոչուած բերդաքաղաքում (այժմ՝

<sup>1</sup> Վերեւում տեսանք, թէ Հայէսը Խալդին է: Խալդի > Հադ(-էս) անցումը կատարուել է Ուրարտուի անկումից շատ առաջ: Անհաւանական չէ, որ յետազայում կատարուած լինի նաև հետեւեալ անցումը: Խալդի > Haid-es > Հադ-էս = (հայկական ձեռով) Հադ-ակ (Հայր-ակ) > Հայկ՝ երկու ձայնաւորմերի միջեւ դ-ն (>ս) փոխուելով յ-ի, ինչպէս mater > մայր, կամ՝ Haid-ak > Haik:

<sup>2</sup> Խորենացի, Ա-թ:

<sup>3</sup> Նոյն, Ա-ժ եւ ժա:

<sup>4</sup> Ոմանք այս քաղաքը տեղադրում են Հայաստայում: Բայց կարծես աւելի ճիշդ են նրանք, որոնք այն դնում են Հայկական լեռնաշխարհի հարաւ-արեւմտեան շրջանում (ՆՀ, տե՛ս *Տարկումա*): Արմէ-Շուրբիայում, Սիրիայից հիւսիս (YKH, տե՛ս *Tarhigamani*): Այս կապակցութեամբ, կարելի է մատնանշել Անգեղ-Տունից ներքեւ՝ Խարուրի ակնաղբիւրների շրջանում, Մարդինից 40 կմ արեւմուտք գտնուած Derik գիւղը: Ինչպէս տեսանք, Աղադ-Նիրարի Բ-ը այս շրջանը կոչում է Հարք (Harki), որը գտնուում էր Նարամ-Ախնի յիշած Արմանիի մէջ:

Էզիլ): Հայերի մօս *Տորքը կոչուել է նաև Տորք-Անգեղ*, Խորենացու մօս՝ *Տորք Անգեղեայ*. այսինքն՝ *Տորքը եղել է Անգեղի սերնդից*: Աստուածաշնչի հայերէն հին թարգմանութեան մէջ սեմական (բնագրի) *անդրերկրեայ Ներգալ* աստծու անունը թարգմանուած է Անգեղ (որը հաւանաբար համապատասխանում է նաև սումերական ընդերկրեայ անդունդի աստուած *Engur-ին*): Այսպիսով՝ կարծես հասկանալի է դառնում թէ ինչու հրաբուխի-կրակի աստուած *Հայկը կոչուել է Թորգումի որդի, այսինքն՝ Անգեղեայ (անդրերկրեայ) Տորքի որդի*, քանի որ հրաբուխն ու հրաբուխի աստուածութիւնը ծնունդն են անդրերկրեայ ուժերի:

Բէլի դէմ Հայկի պատերազմի դիցազնավեպը պիտի կարեւոր փաստ համարել, որ Հայկն ու նրա ժողովուրդը գոյութիւն են ունեցել Հարք կոչուած երկրում (հայկական-նախրեան լեռնաշխարհի սրտում) Բէլի աշխարհակալութեան՝ ասուրա-բարելական հզօր կայսրութիւնների ծաւալումների ժամանակաշրջանում: Այս կարեւոր ու վճռորոշ փաստը անտեսուել է հայերի՝ Բալկաններից գաղթի վարկածը կրողների կողմից: Հենց Խալդի-Հայկի ժողովուրդն է եղել, որ, իբրեւ բնիկն իր լեռնաշխարհի, արիւնալի երկար պայքար է մղել այն պաշտպանելու համար՝ ինչպէս հիւսիսի կովկասեան հորդաների եւ արեւելքի սկիւթա-իրանական ու միջինասիական ասպատակողների դէմ, այնպէս էլ արեւմուտքի խեթական ու փոքրասիական հզօր ուժերի եւ հարակի սեմական աշխարհի՝ ասուրա-բարելական ու արամէական ոտնձգութիւնների դէմ, խանգարելով նրանց իւրացնել իրենց լեռնաշխարհը: Հենց Բէլի դէմ կանգնած Հայկի ժողովուրդն է եղել, որ պատուար է հանդիսացել հարաւի սեմական անզուսապ հեղեղի դէմ՝ կանգնեցնելով նրա առաջընթացը հենց իր լեռնաշխարհի ստորոտներում:

Այսուհանդերձ, Հայկական լեռնաշխարհը, գտնուած լինելով տարբեր ցամաքամասերի եւ տարբեր քաղաքակրթութիւնների հանդիպման խաչմերուկում, յետազայում, օտար աստուածութիւնների ներքափանցումներով, երկրի բնիկ Հայկ աստուածը բարձրացուել է երկինք ու դարձել մի աստղ՝ նոյնացուելով Օրիոնի ու նրա համաստեղութեան հետ:

## Բ. ԱՐՍ

*Արան նոյնպէս եղել է հայերի ազգային հնագոյն աստուածը:*

Նա նոյնպէս եղել է հայ ժողովուրդը կազմած նախրեան ցեղերի քնիկ եւ ազգային անուանադիր աստուածութիւնը, որի մասին արդէն խօսել ենք վերեւում՝ 2-րդ («Արայի երկիրն ու ժողովուրդը») գլխում: Արայի անունով է կոչուել հայ ժողովրդի երկրի *Ար-մե-ճի* (Ար-մա-ճի) անունը: *Արա* (կամ *Ար*) անունով են կազմուած Հայկական լեռնաշխարհի կենտրոնում ու շրջաններում նախրեան բազմաթիւ ցեղերի, երկրանասերի, քաղաքների, գետերի ու լեռների անուններ (ինչպէս՝ *Արածանի, Արիս, Առերանի, Արագած, Արայի Լեռ, Այրարատ Եւայլն*):

Արան, լինելով Հայկական լեռնաշխարհի կանխագոյն քնիկ աստուածութիւններից մեկը, նախապէս եղել է հողագործութեան ու բուսականութեան՝ մեռնող ու յարութիւն առնող քնութեան աստուածութիւն: Ապա, նախրեան ցեղերի աճով ու որպէս ժողովուրդ միաւորմանը, նոյնացուել է նա արեւի հետ, ճիշդ այնպէս, ինչպէս *Աշուրը* նախապէս (երբ ասորեստանցինները զրադուում էին խաղաղ հողագործութեամբ) եղել է բուսականութեան աստուածութիւն. նրա խորհրդանիշը եղել է կենաց ծառը, բայց յետոյ, Ասորեստանի հօրացումով, դարձել է ռազմի աստուածութիւն ու նոյնացուել արեւի հետ<sup>1</sup>:

Աշուրը, զարգացնելով արիւնարբու նկարագիր, չի սիրուել այլ ժողովուրդների կողմից ու չի տարածուել: Մինչդեռ Արան, որպէս կենսաստեղծ ու կենսատու աստուածութիւն, զարգացրել է մարդկային ու սիրուած նկարագիր, եւ ունենալով Հայկական լեռնաշխարհն ու Փոքր Ասիայի հարեւան շրջանները (այլ խօսքով՝ հնդեւրոպական հայրենիքը) որպէս ծագման օրրան՝ տարածուել է չորս կողմ եւ իրացուել է շատ ժողովուրդների կողմից:

Ի հարկէ դժուար է ճիշդ որոշել Արայի եւ (ինչպէս ճիշդ բնորշեց Ակադ. Գ. Ղափանցեանը) *արայիզմի* տարածման ուղիներն ու շրջանները եւ նրա նկարագրի զարգացման ժամանակագրու-

---

<sup>1</sup> AT, 191:

թիւնը: Այսուհանդերձ, մեր ունեցած որոշ (սույ) տուեալներով իսկ, կարող ենք նշել նրա տարածման հետևեալ շրջանները: Իր կենտրոնում՝ Հայկական լեռնաշխարհում *Ար-ը* կոչուել է նաեւ *Արա<sup>1</sup>*, Ուրարտուի ժամանակ նաեւ Ardi: Արեւմուտրում, խեթերի մօս, նա կոչուում էր նոյնական Ara<sup>2</sup>, Պամփիլիայում՝ Էր, Թրակիայում, Սպարտայում եւ Յունաստանում՝ Ares, Մակեդոնիայում՝ Aras, Գերմանիայում՝ Ertag<sup>3</sup>, Իոլանդայում՝ Ir, Հիսիս Արեւելքում՝ Վրաստանում նա կոչուում էր Arali<sup>4</sup>, Հիսիսի պատճեական ընդարձակ տարածութիւններում (Ուսաստան-Ուկրաինա-Բելոռուսիայում) կոչուում էր Եար, Եարիլո<sup>5</sup>: Հարաւում՝ Ասորիքի Խառան քաղաքում՝ Aru<sup>6</sup>, Բարելնում՝ Aria, իսկ Եգիպտոսում՝ Ra:

Այդ վաղ ժամանակներում, այսպիսի խոր ու լայն (չորս կողմ) ճառագայթումը կարելի է բացատրել միայն ճառագայթող աղքիւրի ոի ուժգնութեամբ եւ մարդահած բնոյթով եւ ճառագայթման կենտրոնի՝ տարածութեան մէջ ունեցած աշխարհազրականօրէն նպաստաւոր (կենտրոնական-խաչմերուկային) դիրքով, ինչպիսին եղել է Հայկական լեռնաշխարհը:

Ար (Արա) աստուածութիւնն իր տարածման այս բոլոր շրջանները չի հասել իր բովանդակութեան ու նկարագրի բոլոր գծերով, կամ եթէ հասել է իր ամբողջ բովանդակութեամբ, ապա, տեղական պայմանների ազդեցութիւնների տակ, պահել է իր բովանդակութեան այն մասը, որ թելաղրել են տուեալ երկրի ժողովրդի հոգեկան պահանջմունքները: Օրինակ՝ Թրակիայում, Սպարտայում եւ Յունաստանում՝ Ares-ը արեւի եւ ռազմի աս-

<sup>1</sup> Հնդեւրպական արի (կամ արիացիներ) եզրո դժուար է ուղրակի կապէլ Ար կամ Արա աստուածութեան հետ: Այդ արի եզրը չի ցուցաբերում դիցական արժեք: Հնագոյն յուշարձաններում, հնդիրանցինները իրենց նուածած ժողովուրդների նկատմամբ իրենք իրենց կոչել են արի, որը նշանակում է «զիիրաւ մարդիկ», հաւանաբար «ազատներ» իմաստով: Հայերէնում էլ կայ արի «քաջ» բառը, որ կապուած է աւելի այր (արու մարդ) բառի հետ:

<sup>2</sup> Ա.Պ., 77-88:

<sup>3</sup> Ա.Պ., 326:

<sup>4</sup> Ա.Պ., 81:

<sup>5</sup> Նոյն, 77, 81, 82:

<sup>6</sup> Ա.Պ., 183:

տուած է: Նոյնը պիտի ասել Մակեդոնիայի Aras-ի համար: Խեթական Ara-ն եղել է բուսական, Վրաստանի Arali-ն եւ պատճական Եսար-Եսարիլո՞՛ երկրագործական, իսկ եզիպտական Ra-ն՝ արեւի աստուածութիւն:

Ուրարտուի ժամանակ, ինչպէս ասել ենք, *Արան* յայտնի էր նաեւ որպէս *Արդի* (ածանցուած ձեւով՝ Ար-դի), որով կոչուում էր (Սարգոն Բ-ի նշած) *Ուր-արդի* (= Ուր-արտու) անունը, որ նշանակում էր «Վայր Արդիի», այսինքն՝ «Երկիր Արայի»: Ինչպէս վերեւում արդէն ցոյց ենք տուել, *Այրարատ* անունը (որին կապում են *Ուրարտու* անուան հետ), ըստ Խորենացու գրանցած տուեալների, նշանակում էր «Դաշտն Արայի»<sup>1</sup>: Սա արդէն ճշգրտէն պահել է Ուր-արդի (Ուրարտու) անուան ներքին («Երկիր Արայի») իմաստը եւ համազօր է *Ար-մէ-նի* («Ար-որդի-ների Երկիր») եզրին:

Ի հարկէ՝ Ար (Արա) անունը, որպէս արմատական անուանածեւ, շատ աւելի հին է, քան թէ նրա ածանցուած Արդի (Ար-դի) ձեւը, որը պատկանում է աւելի ուշ (երեւի Ուրուատրիի-Ուրարտուի) ժամանակաշրջանին:

Արա-Ծամիրամ առասպելում, Արան արդէն արեւի աստուածութիւն է, իսկ Ծամիրամը հանդիսացել է լուսնի աստուածութիւն, որը սիրում է Հայաստանի արեւ Արային եւ տոփանքով ցանկանում է նրան ունենալ որպէս սիրելան կամ ամուսին: Բայց Արան նախընտրում է լուսնի հարազատ դիցուիի (եւ իր կին) Նուարդին եւ մերժում է օստար Ծամիրամին: Դրա վրայ, լուսնի դիցուիի Ծամիրամը իր զինուորներով (աստղերով) արշաւում է Հայաստանի Արայի վրայ, բայց, երբ յայտնուում են Ծամիրամն ու նրա զինուորները (լուսինն ու աստղերը), մեռնում է (մայր է մտնում) արեւ Արան եւ լուսին Ծամիրամին չի յաջողուում հանդիպել նրա հետ, նրա կենդանութեան (երկնքում գտնուած) ժամանակ:

Ի հարկէ այս առասպելը արտացոլում է սեմական Սիջագետքի ազահ եւ տիրապետական ցանկութիւնները հիւսիսի հարուստ լեռնաշխարհի (Արայի երկրի) նկատմամբ, եւ Արայի ժո-

<sup>1</sup> Խորենացի, Ա-ժե: Նա զբել է. «Գայ (Ծամիրամ) հասանէ տագնապաւ ի Դաշտն Արայի, որ եւ յանուն նորա անուանեալ Այրարատ» (փութով [Ծամիրամը] զալիս հասնում է Արայի Դաշտը, որ նրա անունով կոչուեց Այրարատ):

ղովրդի ազատասիրութիւնը եւ օտարի տիրապետութեան չհանդուրժելով՝ պայքարի դիմելը:

Մենք հաւանական ենք համարում, որ հայ ժողովրդի անուանադիր Հայկ եւ Արա դիցանունները եղած լինեն նոյն աստուածութեան տարբեր անուանաձեւերը. մէկը (Հայկը) ներկայացրած լինի նոյն աստուածութեան հրեղէն բնոյթը, իսկ միւսը (Արան) նրա բուսական եւ արեւային բնոյթը: Եւ քանի որ, ինչպէս գիտենք, Խալդին Հայկն է, իսկ Արդին էլ Արան, ապա պիտի նոյնապէս ենթադրել, թէ կրակի աստուած Խալդի (Հայկ) եւ արեւի աստուած Արդի (Արա) դիցանունները եղել են նոյն անուան տարբերակներ: Դրա համար կարելի է փաստ համարել այն իրողութիւնը, թէ Մուսասիրը, ուր գտնուում էր Խալդիի տաճարը, Խալդինի կոչուելու տեղ՝ կոչուել է Արդի-Ահ: Հետեւաբար, այդտեղ էլ Խալդի եւ Արդի անունները նոյնական են:

Արդէն ուրարտական արձանագրութիւններում Խալդին մերք նշուել է Արդի ձեռով, որը երեւի (լ/ր լծորդութեամբ) Արդի անուան տարբերակն է: (Հմտ. Արարատ > Ալարոտ, Արագած > Ալագեազ, Ալգինինի > Արզիաննենէ եւայլն): Թէեւ Խալդի-Արդին է գիշաւորում Ուրարտուի դիցարանը, իբրեւ պետութեան գերազոյն աստուածը, բայց Արդի ձեւն էլ պահպանուել է մի կողմից Արդինի տեղանուան մէջ եւ միւս կողմից էլ դիցարանում որպէս Ուրարտուի կազմի մէջ գտնուած նախրեան ցեղերից մէկի աստուածութիւնը:

Այսպիսով, տեսնում ենք, թէ Արան (Արդին), որպէս հայ ժողովրդի ու նրա երկրի անուանադիր աստուածութիւն, եղել է Հայկական լեռնաշխարհի ու նախրեան ցեղերի բնիկ ու հարազատ աստուածութիւնը:

#### Գ. ԱՍՏՈՒԱԾ

Աստուածը նոյնապէս եղել է հայերի հնագոյն աստուածութիւններից մէկը: Հայերի Աստուած դիցանունը այնքան հին է, որ յետագայում, տարբեր հանգամանքների բերումով (Հայաստանում օտար աստուածների ընդունման հետեւանքով) դադարել է յատուկ անուն լինելուց եւ, փոխանակ մոռացուելու եւ անյայտանա-

լու, պահպանուել է որպէս հայերէնի հասարակ անուններից մէկը: Սա, ի հարկէ, վիաստում է նրա հնութիւնն ու ազգային հարազատութիւնը:

Անցած դարաշրջանին, Եւրոպային հնդեւրոպական մայր լեզուի հայրենիք համարող թիւր Վարկածի ազդեցութեամբ, արմէնների գաղթի տեսաբանները հայերին կապում էին բրակա-փոխիգների հետ (ի հարկէ տարուելով նաև մշակութային որոշ նմանութիւններից, որոնք պիտի գոյութիւն ունեցած լինեն Փոքր Ասիայի արեւելքում նրանց եւ Հայասա-Թարխիգամայի հայերի միջեւ եղած հարեւանութեան պատճառով): Գաղթի այս մտքից տարուելով (եւ յենուելով որոշ հին աղբիւրների՝ նոյն վարկածի հետ յարմարեցուած մեկնարանութիւնների վրայ)՝ հայերի *Աստուած* անունը ծագեցնում էին փոխիգիական Savazios դիցանունից:

Բայց այս մտքին հակասող մի շարք տուեալները մի կողմ դրած, դժուար է անգամ հնչինայնօրէն Savazios-ից հանել Աստուած (Astuaš) բառը: Մանաւանդ՝ անհիմն կամայականութիւն կը լինի առաջինի նախահունչ Sa ձայնից ծագեցնել երկրորդի առ ձայնը: Մենք կարծում ենք (ինչպէս նշեցինք), թէ Savaz(ios) դիցանունը, ինչպէս յունական Zeus-ը նոյնպէս կապուած է Sibiš (Šiwini)- Շաբաš<sup>1</sup> դիցանուան հետ, իսկ հայերի *Աստուած*-ը գալիս է շատ խոր հնութիւնից, եւ անուամբ (ինչպէս ցոյց կը տանք վարը, Aštuaš-ի կապակցութեամբ) բնաւ կապ չունի Savaz(ios)-ի հետ:

Հայերի *Աստուածը* եղել է կրակի աստուածութիւն: Այս (Astuaš) դիցանունը նախրեան բառ է եւ անհաւանական չէ, որ խոր անցեալում ունեցած լինի կապ ասուրա-քարելական իշաւ («կրակ») բառի հետ: *Աստուածը*, որպէս հայերի ազգային գլխաւոր աստուածութիւն (Հայկ-Խալդի), եղել է աստուածների մեծագոյնը եւ որպէս բոլորի հայրը՝ բարձրացել է երկինք: Աքեմենեանների ժամանակ Հայաստան եկաւ *Ահուրա-Մազդան* եւ, հայկական դիցարանում Աստուածի տեղը բռնելով (բայց *Ահուրան* փոխելով ազգային *Արա* դիցանունի), կոչուեց *Արա-մազդ* (Արամազդ) ու հայացաւ: Իսկ բուն իրանական Ահուրամազդային հայերը կո-

<sup>1</sup> Ինչպէս ասացինք վերեւում, Ուգարիտի արձանագրութիւններում, Երլայական Sipiš (կամ Sibiš)-ի տեղ գտնում ենք Շաբաš (կամ Շաբաš):

չեցին *Որսիզդ*՝ հետեւելով պահլաւական *Հորսիզդ* եւ *Օրսիզդ* ձեւելին:

Հայաստանում, Արտաշեանների կիրառած հելլենիզմի ժամանակ *Աստուած-ը* նոյնացուեց «աստուածների հայր, երկնի ու երկրի արարիչ Դիու-Զեւսի» հետ, իսկ քրիստոնեութեան ժամանակ էլ՝ *Եհովայի* հետ, որպէս ամէն ինչի ստեղծիչ երկնային հայր աստուածութիւն:

Ի հարկէ, հենց այս օրերին, երբ Ուրարտուից յետոյ Հայաստանում Աստուածի տեղն էր բռնում Արամազդը եւ ապա Դիու-Զեւսն ու յետոյ էլ Եհովան՝ *Աստուած* անունը պիտի սկսած լինի դադարել յատուկ անուն լինելուց ու պահպանուել է հայերէնում որպէս հասարակ անուն:

*Աստուած* (*Աստու-ած*) անունը, որպէս կրակի բնիկ աստուածութիւն, կապուած է աստու (կրակ) բարի հետ, որ բաղադրիչ մասն է կազմում *Ուր-աշտու* (= Ուր-Արտու) երկրանուան եւ (Հայաստանում հեթանոսական կրօնի՝ կրակապաշտութեան մեծագոյն կենտրոն) *Աշտի-շատ* քաղաքանուան: Նոյն (*Աստու-ած*) անունը գտնում ենք նաև Հայասայի Ունագ-աշտուաշ եւ սուբարիների *Աշտուայինու* (*Աշտուայինու*) դիցանունների մէջ: Հետեւաբար, միանգամայն պարզ է, թէ հայերի *Աստուած* դիցանունը փոխված կանոնական *Savazios* անունից ծագեցնելը (արմէնների գաղթի վարկածի հետ) պիտի համարել իր դարն ապրած թիրիմացութիւն:

*Աստու-ած* (կամ *Աշտու-ած*) անուան աստու բաղադրիչը *Ուր-արտու* անուան արտու բաղադրիչի բարբառային տարբերակն է՝ *Ուր > Հ* տարբերութեամբ: Ուստի միանգամայն պարզ է, թէ *Աստուած* հենց *Խալդի-Ալդի* կամ *Արդի* (*Արտու > Աշտու*) անուան տարբերակ էր՝ համազօր ու համանիշ եզր:

*Արտու* (*Ուր-արտու*) անուան *աշտու* (*Ուր-աշտու*) տարբերակը անսովոր երեւոյթ չէ հայերէնի համար: Հայերէնի մի քանի բարբառներում, ատամնային պայքականներից առաջ բ-ի տեղ երեւում է շ: Օրինակ՝ Համշէնի բարբառում *մարդիկ* բառը հնչուում է *մաշդիկ*, կերպան > զեշտոն, Հաճընի բարբառում՝ կ'երթայի > զաշդի, Նախիջեւանի բարբառում՝ մարդ > մաշթ, մորթի > մօշթի եւայլն: Հետեւաբար, Ուր-արտու անուան տեղ Ուր-աշտու գրելը

Դարեհի Բեկիստունի արձանագրութեան գրագրի սխալ գրչութեան արդիմքը չէ, այլ՝ դա գոյութիւն է ունեցել ժողովրդի մօս: Դրա համար վկայ է Ուրաշտու (=Ուրարտու) անուան յիշատակը պահպանող Ռշտու-նի (Ըռշտու-նի) անունը: Հետեւարար, բացայայտ է, թէ Ուր-աշտու անուան մէջ նստած է Աստու (ած) դիցանունը:

Արդէն վերեւում տարբեր առիթներով ցոյց ենք տուել, թէ արդի (*«արեւ»*) բառը կամ աստուածութիւնը ունեցել է *արտի* (կամ արտու) տարբերակը, որը «կրակ» իմաստով ուներ յատկապէս իր (*րտ > տր դրավոխութեամբ*) *ատր* ձեւը: Սրա համար պիտի փաստ համարել հայերէնում *ատր*<sup>1</sup> (*«կրակ»*) բառով կազմուած ատրաշէկ (*ատր-ա-շէկ*) եւ ատրաշիկանալ (*ատր-ա-շիկանալ*) բառաձեւերի հետ արտաշէկ (*արտ-ա-շէկ*) եւ արտաշիկանալ (*արտ-ա-շիկանալ*) ձեւերի գոյութիւնը:

*Ատրի* տեղ *արտ* ձեւը սխալ գրչութիւն չէ, բանի որ, ինչպէս յայտնի է, իրականում Ուրու-*ատրի* անունը ունեցել է իր Ուր-*արտի* (կամ Ուր-*արտու*) ձեւը: Իսկ *ատր* կամ *արտու* բառի *աշտու* (*«կրակ»*) ձեւը պիտի համեմատել ո՛չ թէ պահլաւական ատր (*զենդ-ātarš*) բառի հետ, այլ, ինչպէս նշել ենք, աքքաղական իշաւ (*«կրակ»*) բառի հետ:

Հայաստանը Ասորեստանի եւ Ուրարտուի ժամանակներին գործող հրաբուխների երկիր էր: Այդ ժամանակներին (պարբերաբար) գործում էին Վանայ լճի շրջապատում գտնուող *Ուրուատրիի* (Չուղի լեռան) գագաթը, *Նեմրութը*, *Վարազը*, *Արտոսը*, *Թոնդութեզը* եւ այլ լեռնագագաթներ: Նեմրութի նշանաւոր խառնարանը գործել է մինչեւ 1440 թուականները, իսկ Թոնդութեզը դեռ լրիվ չի

<sup>1</sup> Հիրշմանը (ՀԱԲ, տե՛ս *ատր*) ասում է թէ հայերէնի *ատր* (*«կրակ»*) բառը զալիս է պահլաւական ձեւ (*«կրակ»*) բառից: Ի հարկէ պահճ ունեն կապ: Բայց աւելի հաւանական է որ երկուսը ծագած լինեն մի ընդհանուր մայր աղբիրից: Պահլաւական է իր հայերէնի միջեւ լեզուական փոխառութիւնները կատարուած պիտի լինեն Ուրարտուից յետոյ: Մինչդեռ Հայկական լեռնաշխարհում արդէն դրանից առաջ կային Ուրուատրի և Ուրարտու անունները, մի բան՝ որը անգամ կարող է թելադրել, որ պահլաւականը զալիս է հայկականից, ինչպէս Խալդիի կին *Վարսա-նի* անունից եկած հայ պառաւ բառն է, որ հաւանաբար եղել է աղբիր պահլաւական բարավ հոմանիշին, ոչ թէ հակառակը:

հանգելու ծխում է մինչեւ հիմա<sup>1</sup>: Այնպէս որ, Վանայ լճի շրջապատը՝ գործող հրաբուխների (կրակի) երկիր էր: Հենց դրա համար էլ Սոռթեստանի արքաները այդ երկիրը կոչել են *Ուրուատրի* (յետոյ Ուրարտո), որ նշանակում է «կայր կրակի»:

*Աշոռու* - իշատ կապը աւելի հասկանալի կը լինի, եթէ աչքի առաջ ունենանք այն հանգամանքը, թէ *Ուրուատրի*, *Ուրարդի-Ուրարտու* եւ *Ուրաշոռու* անուանաձեւերը հարաւի սեմական (ասուրաբեկական) արքաների կողմից Արմենիային տրուած անուանումներ էին, որովհետեւ գործող հրաբուխների այդ երկիրը նրանց համար նշանակում էր «կրակի երկիր», դրա համար էլ Բեհիստունի աքքաղական տեքստում *Ուրարտու* ձեւից աւելի, հասկանալի էր *Ուր-աշտու* ձեւը: Իսկ երկրի բուն անունը կապուած էր (յատկապէս) Ար (Արա) անուան հետ եւ կոչուում էր Արմանի կամ Արմենի, որ, ինչպէս ցոյց տուեցինք, նշանակում էր «Ար-որդի-ներ» կամ «Արայի որդիների երկիր»: Դարեկի Բեհիստունի արձանագրութեան աքքաղական տեքստում նշուած *Ուրաշոռու* անունը բերուել է որպէս բարգմանութիւնը բուն պարսկական բնագրում նշուած *Արմինա* (Արմենիա) անուան: Արմենի եւ *Ուրարտու* անունների հմաստային տարբերութիւնը այն էր, թէ մէկում (*Ար-մե-նի*) երկիրը նշուում էր որպէս երկրի աստծու որդիների՝ «Ար-որդի-ների» երկիր, իսկ միւսում՝ (*Ուրուատրի-Ուրարտու*)՝ ուղղակի որպէս տեղի աստծու երկիր՝ «կրակի երկիր»:

Անփոփելով հայերի *Աստուած* դիցանուան մասին վերեւում ասուածները, պիտի պարզ համարել, թէ այդ դիցանունը չէր կարող ծագած լինել փոփոխական Savazios անունից, թէ Savaz-ios-ը կապուած է աւելի Zeus > Sibiš (Siwi-ni) անուան հետ: *Աստու-ած* (Astu-aş) անունը երեւում է արդէն *Ուր-աշտու* (*Ուր-արտու*) երկրանուան եւ Հայասայի Unag-aštuaš եւ սուրարիների Aštū-piñu դիցանունների մէջ: Եթ քանի որ սեմական աշխարհը պահել է նոյնանիշ եւ նոյնահնչին իշատ («կրակ») բառաձեւը, ապա հաւանաբար բոլորի աղբիւրը պիտի փնտրել Սուրարտու երկրում, որի Աշտուրին աստծու մասին արդէն խօսել ենք վերեւում:

---

<sup>1</sup> ՀՊԱ, 10-11:

Որպէս եզրակացութիւն՝ *Հայկ* (= Խալդի), *Արա* (= Արդի) եւ *Սստուած* (= Աշտած) դիցանունների մասին վերեւում ասուածների՝ պիտի ասել, թէ հայերի ազգային *Հայկ* աստուածութիւնը խոր անցեալում ի սկզբանէ ունեցած լինելով կենդանական (որսորդական) եւ բուսական (երկրագործական) հանգամանք՝ զարգացրել է արեւային-հրեղէն ու ռազմի բնաւորութիւն։ Նրա բուսական ու յետոյ արեւային զծի ներկայացուցիչն է եղել *Արան*, իսկ կենդանական ու հրեղէն զծինը՝ *Սստուածը*։ Արանը (Արան ու Սստուածը) միացել են Խալդիի մէջ, որը Ուրարտուի ժամանակ, *Շիհնիի* առկայութեամբ, պահել է լոկ իր հրեղէն (հրաբխային) եւ բուսական (բարդիի) բնոյքը։

Հետեւաբար, պիտի նկատի առնել հետեւեալ բանաձեւն ու հաւասարութիւնները։

1. Քանի որ *Արդի-նիի* (Մուսասիրի) տաճարը *Խալդիի* տաճար է, ապա՝ *Խալդի* (*Արդի*) = *Արդի*,

2. Քանի որ *Նու-արդ* դիցուիին (*Արդի Նու-ն*) կինն է *Արայի*, ապա՝ *Արդ* (*Արդի*) = *Արա*,

3. Քանի որ *Ուր-արդի* = *Ուր-արտու* = *Ուր-աշտու*, ապա՝ *Արա* = *Արդի* (*Արտու*) = *Աշտու* (*Սստու-ած*):

Ուստի Արմանի (Արմենի), *Հայք* (*Հայաստան*) եւ Ուրարտու անունների փոխյարաբերութիւնների մասին խօսելիս՝ պիտի աշքի առաջ ունենալ աստուածների հետեւեալ բանաձեւը։

$$\text{Խալդի} = \left\{ \begin{array}{l} \text{Արդի-Արա (բոյսի եւ արեւի)} \\ \text{Սստուած (կրակի)} \end{array} \right\} = \text{Հայկ}$$

## Դ. ՆՈՒԱՐԴ - ԱՆԱՀԻՏ

*Արատուա-երեք* դիցազնավէպից գիտենք, թէ Արատուայի դիցուիին էր *Ինաննան*, որը եղել է նաև Սումերի Երեք (Ուրուկ) քաղաքի դիցուիին։ Ինաննա աստուածութիւնը Բարելոնում յայտ-

նի էր Իշտար անունով: Սումերում Ինաննայի (Բարելոնում Իշտարի) ամուսինն էր Դոմուզի-ն (Թամմուզը), որին, իր նկարագրից ելնելով, հայագէտները նոյնացնում են Արայի հետ<sup>1</sup>: Իսկ մենք արդէն գիտենք թէ Արայի կինը կոչուում էր Նուարդ: Հետեւարար, պարզ է, որ Ինաննա դիցուիին Հայաստանում պահպանուել է Նուարդ անուան մէջ:

Նու-արդ անունը, ինչպէս ցոյց ենք տուել, բարդ բառ է եւ կազմուած է Նու եւ արդ բաղադրիչներով: Նու անունը, իր այս կրծատ ձեւով ներկայացնում է Ինաննա-Անահիտ (կամ եւ Նանէ) դիցանունը: Իսկ արդ բաղադրիչը (արեւի Արդի աստուածութիւնը) Ար-ն (Արա-ն) է՝ իր ածանցուած Ար-դի ձեւով: Հայերէնում նու բառը պահպանուել է «հարս» իմաստով, որով Նու-արդ նշանակում է «Նու-ն Արդ-ի», այսինքն՝ «հարսը՝ կինը Արդի-Արայի»: Արդէն Խորենացու գրանցած տեղեկութիւններից գիտենք, թէ Նուարդը կինն էր Արայի:

Նու-արդ բարդ անուան կազմութիւնը կարելի է համեմատել ուրարտական լուսնի դիցուի Տըլարդի (Selardi կամ Sielardi) անուան հետ, որի մասին Ն. Աղբանը գրում է. «Գայթակղեցուցիչ է ածանցել այդ բառը šiela («կին կամ քոյր») եւ ardi («արեւ») բառերից: Արեւելքում հին ժամանակներից մինչեւ մեր օրերը լուսինը նկատուում է որպէս արեւի քոյրը»<sup>2</sup>, կամ, որոշ շրջաններում, որպէս կինը: Տըլ-ը (կամ Siel-ը) յիշեցնում է լուսնի յայտնի դիցուի Մելենեից եւ ուրարտական դիցուի Տիլի-ին, որով Նու-արդ անուան Նու բաղադրիչը համապատասխանում է Տըլ-արդի անուանաձեւի Տըլ բաղադրիչն, իսկ արդ-ը՝ ardi-ին, որը արդէն արեւի աստուածութիւն է:

Մենք գիտենք թէ Խալդին եղել է կրակի աստուածութիւն եւ, որպէս Ալդի-Արդի, նոյնացուել է նաեւ արեւի հետ: Երեւի, ինչպէս նշեցինք Վերեւում, Ուրարտուի ժամանակ, դիցարանում որպէս արեւի աստուածութիւն Շիլինի առկայութեամք՝ Խալդին պահպանել է լոկ իր կրակային-հրարխային բնոյթը: Իսկ Արդի ձեւն էլ պահպանուել է Մուսասիրի Արդի-նի անուան մէջ եւ ուրարտական

<sup>1</sup> ԱԳ-Պ, 41-47:

<sup>2</sup> ՀԱ, 226 (ՀՊ, 228):

ցեղերից մէկի մօս որպէս մի լուսատու աստղ (ինչպէս յետազայտմ Հայլը՝ որպէս Օրիոն):

Նու-արդ, Ծել-արդի անուանաձեւերի կազմութիւնն ունի նաև Shinuiardi (Şinui-ardı) անունը, որը երեւի նախրեան մի այլ ցեղի (Şinibirni-ի) ռիցուիին էր:

Ինչպէս նշել ենք, խոր անցեալում *Արա* անունը Հայկական լեռնաշխարհից տարածուել է (հաւանաբար որոշ տեղեր արմէնների հետ) նաև դէպի արեւմուտք: Յայտնի է, թէ Ares-ը *Արան* է: Ն. Աղոնցը բերում է (Նու-արդ անուանաձեւի կազմութիւնը հաստատող) հետեւեալ շատ կարեւոր տեղեկութիւնը. «Հոմերոսի մօս Արէսի մերձաւորը կոչուում է Ենիո...: Արէսի կապը Ենիոյի հետ հիմ յիշողութիւն է եւ կարեւոր: Թուում է որ Ենիո կանացի դէմքը ոչ այլ որ է, եթէ ոչ Ափրոդիտէի անխորդը: Պելազգական Ափրոդիտէն գրաւել է Թրակացի Ենիոյի դիրքը Արէսի նկատմամբ ...: Ենիոյի եւ Արէսի մտերմութիւնը չէր մոռացուած դեռեւս Դ դարում. Թրակիայում սովորութիւն կար գերիներ զոհել Արէսին ու Ենիոյին...: Կարծում ենք, որ Ենիոյի անունն իսկ Enn, Enuo ուրիշ բան չէ, եթէ ոչ Nana, Nina անուան մի այլ ձեւը ...»<sup>1</sup>:

Աղոնցի բերած այս տեղեկութեան վրայ աւելացնում ենք նաև հետեւեալը. «Պտղոմէոս Փիլադելֆոսը, դեռեւս կենդանութեան ժամանակ, աստուածներ յայտարարեց իրեն եւ իր կնոջը՝ Արսինոյէին...: Ստեղծուեց Ափրոդիտէ-Արսինոյէի, այսինքն՝ Ափրոդիտէ դիցուիու հետ նոյնացուած Արսինոյէի պաշտամունքը»<sup>2</sup>:

Եւ ահա գտնում եմ, որ Նու-արդ անուանաձեւի կազմութիւնն ունի *Արս-ինոյէ* անունը, որը նշանակում է «Արէսի Ենիոն», ուր Արէսը համապատասխանում է մեր Նու-արդ անուան Արդ (= Արա) բաղադրիչին, իսկ Ենիոն մեր Նու-ին: Հետեւարար պիտի ընդունել, թէ Նու-արդ անունը ունի ճիշդ *Sel-ardı*, *Şinui-ardı*, *Արս-ինոյէ* անունների կազմութիւնը եւ նշանակում է «Նու-ն Արդ-ի», այսինքն՝ «հարսը (կինը) Արդի (Արայի)»:

<sup>1</sup> Ն. Աղոնց, «Հին Հայոց Աշխարհայեացքը», Հայրենիք Ամսագիր, 1926, թի 12,

էջ 75:

<sup>2</sup> ՀՀԽ, 26:

Ինչպէս ասացինք, Արայի կին *Նու-արդ* անուան մէջ նստած է Դմուզի-ի կին *Իմաննան*, որ Հայաստանում յայտնի էր Անոնիտ-*Անահիտ* անունով:

*Անահիտը* եղել է հայերի ազգային ամենաշատ սիրուած ու յարգուած աստուածուին: Նա Հայաստանում, մեզ աւելի յայտնի ժամանակներում, ունէր բոլոր աստուածների մէջ առաջնակարգ դիրք: Նրան էին վստահում հայոց աշխարհի խնամակալութիւնը: Նա մայրն էր ամենայն զգաստութեանց, բարի էր ու բարերար: Հայերի աստուածների մէջ միայն նա ունէր լրի ոսկեձոյլ արձան: Հեթանոսութեան աւելի ուշ շրջանում Անահիտը նոյնացուել է լուսնի հետ:

Անահիտի նշանաւոր տաճարներից մէկը (Արտաշէսեանների ժամանակ) գտնուում էր Երեզ (Էրզինջան) քաղաքում: Նա մեհեաններ ունէր Հայաստանի տարրեր շրջաններում: Նրա կարեւոր ու յայտնի մեհեաններից մէկն էլ գտնուում էր Մուշի շրջանի Աշտիշատ քաղաքում, որը որոշ ժամանակ հանդիսացել է հայերի հեթանոսական կրօնի գլխաւոր կենտրոնը: Նա մեհեան ունէր Արարատեան դաշտի Արտաշատ քաղաքում: Նրա հնագոյն մեհեաններից մէկը պիտի գտնուած լինի *Մեծամօր* գետի վրայ:

Ոմանք ասում են թէ Անահիտ անունը Հայաստան է եկել Իրանից. բայց դժուար է ընդունել այդ: Իրանը չի հանդուրժել կանանց իշխանութեանը: Ընդհանրապէս, Իրանի դիցարանում աչքի չեն զարնում դիցուիհները: Իսկ Անահիտն էլ կարծես այդուել պատահական ներկայութիւն է, որին չի տրուել այն մեծ պատիւն ու յարգանքը, որ վայելում էր Հայաստանում: Սիջազգային դիցարանութեան մասնագէտ Solomon Reinach-ը ասում է, թէ Անահիտը Իրանում օտար ներկայութիւն է: Նա գրում է. «The goddess Anâhita (the Lydian Anahîtis) was of foreign origin. The Iranian pantheon is, as a rule, deficient in goddesses: woman was always suspect, and the religious law aggravated the miseries of their sex ...»<sup>1</sup>:

Ուստի դժուար է ընդունել, որ հայերը իրենց այդքան սիրած ու առաջնակարգ տեղ դրած ազգային մեծ դիցուիհ Անահիտին

---

<sup>1</sup> OHR, 69:

փոխառած լինեն Իրանից, ուր նա ինքը օտար էր: Միանգամայն պարզ է, թէ Անահիտը Հայկական լեռնաշխարհի խոր անցեալից եկող բնիկ (Inanna-Anunit) դիցուիին էր, ինչ Արատտայի նշանաւոր դիցուիին, որը այդքան մեծ կարեւորութիւն ունէր անգամ III հազարամեակի սկզբներին մ.թ.ա.: Նա էր, որ Մեծամօրում պաշտամունքի առարկայ էր հաւանաբար որպէս Սիրիոս աստղ, 2800 թուականին, մ.թ.ա., երբ Իրանում պարսիկների գոյութեան մասին դեռ խօսք չկար: Ուստի պիտի ընդունել, թէ Անահիտը եղել է Հայկական լեռնաշխարհի բնիկ ու հարազատ աստուածուիին: Իսկ իրանցիները (եթէ նրանց մօտ հին է Անահիտը) այն իրենց հետ տարած պիտի լինեն, երբ հեռացան Հայկական լեռնաշխարհի շրջաններից:

## Ե. ԱՍՏՎԻԿ

*Աստղիկը* եղել է սիրոյ ու գեղեցկութեան, ջրի եւ արգասատրութեան դիցուիի: Նա եղել է Վահագնի սիրուիին կամ կինը:

Հետաքրքրական է նաև *Աստղիկ* անունը: Ոմանք *Աստղիկին* բերում են սեմական *Իշտարից*, ոմանք էլ յունացեալ *Աստարտէից*: Սակայն *Աստղիկ* անունը այլ բան է թելադրում:

Որեւէ պատճառ չենք տեսնում, թէ ինչո՞ւ հայ *Աստղիկ* բառը պիտի չկապել հայ *աստղ* բառի հետ: Յայտնի է, թէ հայերէնի *աստղ* բառը բնիկ հայ բառ է եւ հնդեւրոպական: Ըստ Աճառեանի, հնդեւրոպական արմատն է stēr: Հնդեւրոպական միւս ժառանգներից են նաև սամսկրիտ եւ զենդերէն star, պահլաւերէն stār, պասկերէն sitāra, աֆղաներէն stōrai, լատիներէն եւ իտալերէն stella, ֆրանսերէն astre, սպաներէն astro, գերմաներէն stern, անգլերէն star եւայլն: *Աստղ* բառի (եւ *Աստղիկ* անուան) դայնը համապատասխանում է աւելի l-ի, քան թէ r-ի: Հետեւաբար հայ *աստղ* բառը կարծես կապուած է աւելի լատին stella-ի շրջանակի, քան թէ սեմական Ištar-ի հետ: Ուստի, կարելի է ընդունել, թէ *Աստղիկը* կապուում է աւելի հնդեւրոպական (տեղական բնիկ), քան թէ սեմական շրջանակի հետ:

Ի հարկէ, ահհաւանական չէ, որ սեմական՝ ասուրաբելական Ištar, էրլայական Ester, երրայական Esther, փիւնիկեան Astoreth եւայլն դիցանունները եւ հնդեւրոպական stēr բառարմատն ու նրա ժառանգները խոր անցեալում ծագած լինեն մի մայր աղքիւնից: Այսուհանդերձ նկատելի է թէ սեմականները յատուկ անունները (դիցանուններ) են, իսկ հնդեւրոպական stēr եւ նրա ժառանգները՝ լեզուի հասարակ անուններ, որոնց դիմաց սեմականները ունեն (ասուրաբելական) kakkašu (արաք. kawkašun): Ուստի պիտի ընդունել, թէ հնդեւրոպական բառարմատը (որ վաղուց կորցրել է իր դիցական արժեքը՝ եթէ ուներ) շատ աւելի հին է, քան սեմական դիցանունները: Մանուանդ որ՝ հնդեւրոպական մայր արմատը պիտի մայր լեզուում գտնուած լինի III հազարամեակից առաջ, երբ արդէն մեզ ոչինչ յայտնի չէ սեմական *Իշտարի* գոյութիւն ունեցած լինելու մասին:

Այսուհանդերձ, հաւանական է, որ հայկական բնիկ ասսող բառը յետագայում ասուրաբելական *Իշտարի* կամ, աւելի ճիշդ, սուբարի-միտանեան *Իշտարի* ազդեցութեամբ, ածանցուած *Աստղիկ* ձեւերով, վերստացաւ իր դիցական արժեքը՝ մ.թ.ա. II հազարամեակի կէսերին: (Միտաննի-եզիպտական թղթակցութիւններից արդէն գիտենք, թէ միտաննացիները յարգում էին *Իշտարին*, որին մեկ երկու անգամ ուղարկել էին Եզիպտոս՝ իրենց փեսայ փարաւնին բուժելու համար):

Ես կարծում եմ, թէ խոր անցեալի Inanna-Նանէ դիցուիու բնաւորութեան նայրական ու սիրոյ գծերը յետագայում երկփեղկուելով՝ *Անահիտի* մէջ պահուել են մայրութեան ու երկրի հովանաւորութեան, բարութեան ու բարերարութեան դերերը, իսկ *Աստղիկին* են անցել սիրոյ ու գեղեցկութեան, ջրի ու արգասաւորութեան գծերը:

## Զ. ՄԻՀՐ ԿԱՍՄԱՀԵՐ

Ինչպէս արդէն զիտենք, արեւի-կրակի աստուածութիւնը եղել է հայերի հնագոյն ազգային զիխաւոր աստուածութիւնը: Այս մեծ աստուածութիւնը նոյնպէս, ինչպէս նրա զուգակից Ինաննա-Անահիտ դիցուիին, երկփեղկուել է՝ նրա հրեղէն ու արեւային զծերը ներկայացել են առանձին-առանձին եւ տարբեր անուանաձեւերով: Ուրարտուի ժամանակ, հրեղէն զիծը ներկայանում էր Խալքի անուան տակ, իսկ արեւային զիծը՝ *Շիշինի* անունով:

Հայաստանում, ուրարտական հարստութեան անկումից յետոյ, արեւի-կրակի այս մեծ աստուածութեանը տրուում էր նաև *Միհր* անունը: Ակադ. Բ. Առաքելեանը ասում է, թէ «*Միհրի պաշտամունքը իրանական միջավայրից տարածուեց դէսի արեւմուտք՝ ընդգրկելով նաեւ հոռմէական պետութեան սահմանները: Հայաստանում նաև համարուում էր ... Արեգակի եւ կրակի աստուածք»<sup>1</sup>:*

Այսուհանդերձ, անգամ *Միհր* անուան օգտագործման ժամանակներին, հայերը ուրարտական ժամանակների պէս, այս մեծ աստծու արեւային ու հրեղէն յատկանշները պատկերացրել են երկփեղկուած ձեւով: Դրա համար էլ «*Սասունցի Դաւիթ*» դիցագնավէպում, ինչպէս յայտնի է, կրակի աստուածութիւնը կոչուել է *Մեծ Միհր*, իսկ Փոքր Միհրը համարուել է արեւի աստուածութիւն: Ուրեմն, կրակի աստուածութիւնը հայերի մօս նախապատի էր կամ աւելի մեծ, քան արեւի աստուածութիւնը, ճիշդ այնպէս, ինչպէս կրակի աստուած *Հայկը* գերադաս էր կամ աւելի մեծ, քան արեւի աստուած *Արամ*: Նոյնպէս, Ուրարտուի ժամանակ, կրակի աստուած *Խալդին* աւելի մեծ ու կարեւոր էր, քան արեւի աստուած *Շիշինին*:

Մենք կարծում ենք, թէ *Միհր* անունը, *Միհրա* կամ մի այլ (գուցէ հենց *Միհր*) անուանաձեւով, յայտնի պիտի լիներ աքեմենեաններից շատ առաջ, Միտաննիի ժամանակներից եւ պիտի պահպանուած լիներ ժողովրդի մէջ, յատկապէս Միտաննիի կամ

---

<sup>1</sup> ՀԺՊ, 902:

Արմանի-Սուրարիի (եւ յետոյ Արմէ-Շուբրիայի) շրջանում, ուր գտնուում էր Սասունը: Դրա համար էլ Սիեր անունը աքեմենեան-ների ժամանակ կամ յետոյ հեշտութեամբ է ընդունուել:

Պարզ է, որ Մեծ Սիերը ներկայացրել է Խալդիին: Դրա համար՝ պիսի ցուցմունք համարել այն թէ նա կոչուել է «առիւծածեւ Սիեր», այնպէս ինչպէս ուրարտական որմնանկարներում առիւծի վրայ է երեւում Խալդին: Ալ աւելին՝ Մեծ Սիերի կինը կոչուել է Արմաղան, որ կարծես աղաւարուած ձեւն է Խալդի կնոջ Արուրան(ի) անուան:

Յայտնի է, թէ ազուալը եղել է արեւի-կրակի խորհրդանիշը. դրա համար էլ «Արա փետուրները արեւից-կրակից խանձուել են ու սեւացել»: Փոքր Սիերն էլ ժառանգել է Մեծ Սիերի տեղը, հետեւաբար, նա, իր հերթին, բռնել է ուրարտական մեծ աստուածութեան տեղը կամ պահում է ուրարտական մեծ աստուածների յիշատակը: Եւ ահա, ըստ մի աւանդութեան, «Վանայ Ազուաքար» կոչուած ժայռի մէջ փակուած է աշխարհի անարդարութիւնից խոռված Սիերը»<sup>1</sup>: Մենք արդէն զիտենք թէ Վանայ ժայռի «Սիերի Դուռ» կոչուած տեղում Իշպուինին ու Մենուան, իրենց մի մեծ արձանագրութեամբ, ցուցակագրել են Ուրարտուի բոլոր աստուածների անունները: Հետեւաբար, հայկական այդ աւանդութիւնը, երբ այդ արձանագրութիւնների գրութիւն լինելն անգամ մոռացուել էր, Սիերի մէջ (յատկապէս «Վանայ Ազուաքար» խօսքում) պահել է Ուրարտուի աստուածների յիշատակը:

«Մի զրոյցի համաձայն՝ ամէն տարի, Համբարձման ու Վարդավառի զիշերը, երբ երկինքն ու երկիրը համրուրուում են, Սիերն իր իրեղէն նժոյզով դուրս է զայխ, շրջում է երկնքում ու երկրում, բայց համոզուելով, որ դեռ «զետինը չի կարող դիմանալ իր ծանրութեանը», նորից վերադառնում է իր տեղը: Ապազայում իրը Սիերը դուրս է զայռու այնտեղից՝ ազատելու «հայու աշխարհը» չար ուժերից եւ հիմնելու երջանիկ քազարութիւն»<sup>2</sup>:

«Սասունցի Դալիք» դիցազնավեպում, Սպայ Սելիքի մահից յետոյ, նրա «զահել ու խորոսիկ» այրի Իսմիլ Խաթունը մարդ է ու-

<sup>1</sup> ՀԱՀ, 7, էջ 645, տես «Սիերի Դուռ»:

<sup>2</sup> Նոյն:

*դարկում Սասուն, Սեծ Սիերի մօտ, որ զայ եւ դառնայ իր ամուսինը եւ տէր դառնայ Սնրայ, թէեւ Սիերը ունի հարազատ կիմ՝ Արմաղանը:*

Այս գրոյցը յիշեցնում է Արայ-Շամիրամ առասպելը, ուր, Նինոսի մասից յետոյ, նրա ջահել ու այրի Շամիրամը մարդ է ուղարկում Հայաստան, Արայի մօտ, որ զայ ու դառնայ իր ամուսինը եւ տէրը դառնայ Նինուի ու բոլորի, թէեւ Արան ունի հարազատ կիմ՝ Նուարդը:

Սենք նմանութիւն ենք տեսնում ոչ թէ միայն Իսմիլ Խաթունի՝ Սիերի նկատմամբ ունեցած ցանկութեան ու արած առաջարկի եւ Շամիրամի՝ Արայի նկատմամբ ունեցած ցանկութեան ու արած առաջարկի միջեւ, այլ ինչ-որ նմանութիւն ենք տեսնում Իսմիլ եւ Շամիր(ամ) անունների եւ Սիերի կնոջ Արմաղան<sup>1</sup> եւ Խալդիի կնոջ Արուրանի(ի) անունների միջեւ: Վերեւում, «Աստուած» դիցանուան մասին խօսած բաժնում, արդէն ցոյց ենք տուել Արա = Արդի = Ալդի (Խալդի) հաւասարութիւնները եւ ներկայ հատուածում ել Սիեր-Խալդի դիցարանական կապակցութիւնը:

## Է. ՎԱՀԱԳՆ

*Հահազնը* նոյնպէս եղել է հայերի հնագոյն աստուածներից մէկը: Ուրարտուի ժամանակ, խորրիխական մի յետնորդ բարբառով գրուած ուրարտական սեպագիր արձանագրութիւնների մէջ, նրա տեղ երեւում է Թէյշերան, իսկ Արտաշէսեանների հելլենիզմի ժամանակ էլ՝ Հերակլէս անունը: Պարզ է, թէ Թէշոր-Թէյշերան ու Հերակլէսը ունեցել են նման բնաւրութիւն. միաժամանակ՝ Հերակլէսի կինը կոչուում էր Հեծե, եւ Թէյշերայի կինը՝ Հսեա: Յայտնի է, որ Հսեա-ն եղել է սիրոյ դիցուիի (մենք հաւանական ենք համարում, թէ արաբերնի հս («սէր») բառը պահում է այս դիցուին անուան յիշատակը եւ ցոյց է տալիս, թէ այդ անուան բուն ձեւը Հսեա

<sup>1</sup> Արմաղան-ին վերագրում են իրանական ծագում՝ իբր «հեռու տեղից եկած ընծայ», տե՛ս Մալխանեանի բառարանը: Եթէ ճիշդ է սա, ապա պիտի անցած լինի հաւանաբար Ուրարտուից:

Եր եւ ոչ թէ Անամ Անամ: Այսպէս էլ՝ Վահագնի կինն էր (կամ սիրուիին) Աստղիկը, որ նոյնպէս սիրոյ դիցուիի էր՝ ունենալով սեմական Իշտար զուգահեռը:

Վահագնը նախապէս եղել է հրաբուխի աստուածութիւն, որից էլ ծագել է նրա հրեղէն (կրակի աստուած լինելու) քնոյթը: Նրա այդ հանգամանքի պատճառով է որ նա նոյնպէս համարուել է հայերի նախնին<sup>1</sup>, ինչպէս հրաբուխի ու կրակի Աստուած Հայկ-Խալիին:

Ինչպէս (արմէնների գաղթի թիւր վարկածի կրողները) հայերի Աստուած դիցանունը թիւրիմացութեամբ կապում էին փոխազների Savazios-ի հետ, այնպէս էլ հայկական հոգեւոր մշակոյթի (խոր անցեալի մթութեամբ քողարկուած) դժուարալոյծ երեւյթների աղքիւրը ուրիշ տեղ եւ յատկապէս Իրանում վինտրողները Վահագնին սխալմամբ ծագեցնում էին իրանական Վերեթրանա (կամ Վերեթրագնա) անունից, որից հնչինայնօրէն Վահագն հանելու համար, չգիտես ինչպէս կարելի է Վահագնի հ-ն ծագեցնել Վերեթրագնայի-րերը- ձայնախմբից: Ի հարկէ՝ Վահագնը, իր քնոյթի յետագայ որոշ գծերով, կարելի էր զուցէ կապել Վերեթրանայի քնոյթի հետ, ինչպէս կապուել է Հերակլէսի հետ, բայց դժուար է անուններով էլ կապել իրար հետ:

Վահագնը, իր նախնական հրաբխային-կրակային բովանդակութեամբ, ծնուել է Հայկական լեռնաշխարհի սրտում՝ Վանայ լճի շրջապատում ու եղել է քնիկ աստուածութիւն: Նա զալիս է խոր անցեալից:

Վահագնի անուան ծագումն ու նրա նախնական քնոյթը ճշդորէն պատկերացնելու եւ ընկալելու համար, անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ Հայկական լեռնաշխարհում Վանայ լճի շրջապատի աշխարհագրա-ֆիզիկական պատկերը եւ այդ խոր անցեալում հայերի՝ սումերների հետ ունեցած լեզուամշակութային փոխարարերութիւնները:

Կարծում եմ անհրաժեշտութիւն չկայ այստեղ երկար խօսել սումերահայ լեզուամշակութային հին յարաբերութիւնների մասին:

---

<sup>1</sup> SS, 37:

Այդ հարցի շուրջ մանրամասնօրէն խօսել ենք մեր նախորդ աշխատութիւններում: Վերեւում էլ, արդէն խօսեցինք III հազարամետկի սկզբներին Արատտայի եւ Երեքի միջեւ գոյութիւն ունեցած նիրական ու հոգեւոր մշակոյթի սերտ կապերի մասին:

Հայերի եւ սումերների միջեւ լեզուամշակութային կապերի այնպիսի հետքեր են երեւան գալիս, որ նրանց արժեքը դժուար է գնահատել առանց ընդունելու երկու ժողովուրդների սերտ փոխարքերութիւնները խոր անցեալում: Անգամ նշաններ կան, թէ այդ փոխարքարքութիւնները գոյութիւն են ունեցել հնդեւրոպական մայր լեզուի հետ՝ նախ քան հայերէնի բաժանուելը, ինչպէս եւ բաժանումից քիչ ժամանակ յետոյ: Իմ «Հայ Ժողովրդի Ծագումը» աշխատութեան մէջ քերել եմ հարիրից աւելի սումեր բառեր ու բառակապակցութիւններ եւ նրանց հետ համընկնող հայերէն բառեր, որոնց մօտ կէսը հնդեւրոպական են: Մեզ յայտնի են 200-ից աւելի սումեր ու հայ բառերի զուգահեռներ ու համընկնումներ:

Վահագն անուան կազմութիւնը ընկալելու համար պիտի աշքի առաջ ունենալ՝ այդ իին օրերում սումերահայ լեզուամշակութային կապերի հետ եւ Վանայ լճի շրջապատի լեռների հրաբխային գործունեութիւնները, որոնց պատճառով, ինչպէս ցոյց տուեցինք, այդ երկիրը կոչուել է «կրակի երկիր»:

Կրակի պաշտամունքի ժամանակներին, հեթանոսական խոր անցեալում, մարդիկ որպէս զահ օգտագործում էին եղէզը՝ ծայրին ամրացուած վառելանիթը: Այս իրողութիւնը լաւ է պատկերացնում սումեր giizilal («զահ») եզրը, որ բարդ բառ է եւ կազմուած է երեք բառարմատներից (gi-izi-lal)<sup>1</sup>, որոնց ց բաղադրիչը նշանակում է «եղէզ», izi-ն՝ «կրակ», իսկ lal-ը՝ «կրել»: Ուրեմն gi-izi-lal բարդ բառը նշանակում է «կրակ կրող եղէզ», որով արտայայտել են «զահ» զաղափարը: Այս միջոցառումը, ի հարկէ՝ յետագային աւելի զարգանալով՝ հեթանոսական աւելի ուշ շրջանին եւ քրիստոնեութեան մուտքից յետոյ էլ երեւում է աշտանակների ձեւով:

Այս պատճառով, եղէզը կապուել է կրակի պաշտամունքի հետ: Հաւանաբար եղէզը կրակի զաղափարի կամ նրա պաշտա-

<sup>1</sup> ŠAG, gi-ի տեսկ տես՝ gi-izi-lal «Fackel = զահ» եւ «Raucherrohr ? = ծխացող եղէզ»: AGS, 47, տես՝ gi-izi-lal = «roseau + feu + porter» = «torche»:

մունքի հետ ունեցած այս համակցութեամբ է, որ ստացել է դիցաբանական (երեւի) տոտեմային իմաստ: Մանաւանդ որ՝ սրբազան կրակը սնում էին յաճախ այրելով եղեգ: Դրա համար փաստ են Սեծամօրի սրբարանի կրակարանի մոխիրների մէջ գտնուած եղեգի հետքերը<sup>1</sup>:

Հեթանոսական օրերին, մարդիկ պաշտել են կրակին, եւ պաշտուող կրակը մերթ պահել են բարձր եղեգի ծայրին: Հնում, Հայաստանի մէջ, Վահագնի մասին երգուած յայտնի բանաստեղծութիւնը ունի սա տողերը. –

*Հնդ եղեգան փող ծուխ ելանէր.  
Հնդ եղեգան փող բոց ելանէր.  
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատամեկիլ.  
Նա հոր հեր ունէր ...»:*

Ինչպէս տեսնում ենք՝ Վահագնի ծնունդը պատկերուած է եղեգից բարձրացող բոցով: Եւ ահա Վահագն (*Վահ/ա/զն*) անունը հենց կրակի աստծուն նշող սումեր Bil-gin («բոցավառ եղեգ») եզրն է: Սումերերէնում «կրակ» եւ «ջահ» է նշանակում gibil եզրը, որ բառացի (gi+bil) նշանակում էր «եղեգ բոցավառ»: <sup>d</sup>gibil եզրը, ներկայացնելով կրակի աստծուն, գրուում էր BIL-GI<sup>2</sup> (հսկականը BIL-GIN)<sup>3</sup> եւ բառացի նշանակում էր «բոցավառ եղեգ»: Սումերերէնում bil նշանակում է «բոցավառել» կամ «բոցավառ», իսկ gi կամ (իրականում) gin նշանակում է եղեգ: Որով՝ Bil-gin նշանակում էր «բոցավառ եղեգ» ու ներկայացնում էր կրակի աստծուն:

Bil-gin բառի շեշտը առաջին վանկի վրայ է: Շեշտուած bil վանկը՝ (սեպազիրը հնչուում է նաև bel, որից հաւանաբար բարե-

<sup>1</sup> Սեծամօր, 110:

<sup>2</sup> SGC, 215:

<sup>3</sup> Նոյն, 27. gi («եղեգ») բառը իրականում gin («եղեգ») բառի կրծատ ձեւն է: Կրծատել են օգտագործելու համար որպէս վանկանիշ: Gi-ի gin լինելուն համար փաստ է նրա աքքաղական փոխառութիւնն եղող կառ հոմանիշը: Հետաքրքրական է նաև անգլերէն cane («եղեգ») բառը. կայ նաև հայ գանձ բառը, որը առանձին չի գործածուում, բայց պահուել է գանձարել, գանձակուել բառաձեւերում, որոնք երեւի նշանակում էին «եղեգնեայ գաւազանով ծեծել»:

լոնական թէլ աստուածը)  $b > \psi$  եւ  $I > \eta > h$  ձայնափոխութեամբ՝ տուել է վիդ (*վեր*)  $> \psi\eta > \psi\eta^1$ , իսկ *gin-ը* (որպէս երկրորդ-վերջին անշեշտ վաճկ՝ ի-ն սղուելով կամ փոխուելով չգրուող ը-ի) տուել է զն (*զրժ*). այնպէս որ *Bilgin-ը* դարձել է Վահ(ա)զն<sup>2</sup>: Այս իրողութեան համար, վարը կը բերենք այլ փաստեր. այստեղ արժէ նաև խապէս նշել հետեւեալը:

Կոմմագենեում, հայկական Երուանդունի տոհմից եղող քառարուները Վահազնին կոչել են *Արտազնէս* [*Արտ-ա-զն(էս)*]: Ուրեմն այդ ժամանակներում դեռ գիտէին, թէ *Վահ-ա-զն* անուան *Վահ* բաղադրիչը նշանակում է «քրոցավառ, բոց, կրակ», որով այն փոխարինել են իրենց ժամանակներում աւելի գործածական *արտ* «կրակ» բառով եւ *Վահազնին* կոչել են *Արտազն(էս)*:

Վերեւում արդէն ցոյց են տուել, *Ասոռու-ած* անուան ստուգաբանութեան առթի, թէ *արտ* (արտու  $>$  աշտու) նշանակում է «կրակ», որը գտնուում է նաեւ *Ուր-արտու* (*Ուր-աշտու*) «վայր կրակի» տեղանուան մէջ: Հաւանաբար «կրակ» իմաստը կայ նաեւ ուրարտական արձանագրութիւնների առ-աստ «այրել» բառաձեւում: Այստեղ պիտի նշել եւ այն, թէ *Աշտիշատ* (*Աշտի-շատ*) քաղաքի անունը, ուր գտնուում էր կրակի աստուած *Վահազնի* մեհեանը, նշանակում էր «կրակի բաղաք», որի *աշտ* (*աշտի*) բաղադրիչը նշանակում է «կրակ»: Այս բառը գտնում ենք նաեւ *աշտանակ* (աշտ-անակ) «չամ-դան» բառաձեւում, որը նշանակում էր «կրակը կրող»<sup>3</sup> (հնմտ. ժամ-անակ, ճօճ-անակ, շրջ-անակ եւայլն), իսկ

<sup>1</sup> Հ. Աճառեան, Լ.ՉՀ,  $I > h$  (կամ  $I > \eta > \psi > h$ ) փոփոխութիւնների համար տե՛ս էջ 745:

<sup>2</sup> Ծիշդ է, թէ հնդեւրոպական նախալեզուի ց-ն հայերէնում համապատասխանում է կ-ի, բայց *Bilgin-ը* հնդեւրոպական չէ, եւ սումեր ց-ն պահպանուել է հայերէնում եւ երեւում է որպէս գ. օրինակ՝ *gurun = զարուն*, *agar = ազար(ակ)*, *naggag = անագ*, *gašan = զազան* եւայլն:

<sup>3</sup> *Աշտ* բառարմատի «կրակ» իմաստը, *հոր* եւ *կրակ* բառերի հետ ունեցած մրցակցութեամբ մոռացուել է: Որով՝ Աճառեանի մօս (*ՀԱԲ*) *աշտանակ* բառը մի կերպ բացատրուել է «ցցուի, ցատկել» իմաստով, թէեւ բոցն ու կայծն էլ ցցուում ու ցատկում են: Ես հաւանական են համարում, որ հայ աշտանակ բառակազմութեան զաղափարը եկած լինի սումեր *gi-izi-lal* («եղէգ + կրակ + կրեր» = «զահ») բառաձեւից:

*շատ* վերջաւորութիւնը ունի «քաղաք» իմաստը (հմմտ. Արտաշատ, Երուանդաշատ, Զարիշատ եւայլն): Հետեւարար պարզ է, թէ Աշտիշատ նշանակում էր «կրակի քաղաք», որովհետեւ այդտեղ էր գտնուում կրակի աստուած Վահագնի մեհեանը (ինչպէս Մուսասիրը՝ Խալդիի անունով կոչուում էր Արդինի):

Հենց Վահագն անուան վահ բաղադրիչի «քոցավառ» իմաստի համար է որ Աշտիշատի մեհեանում սրբազն կրակը վառ պահող քրմերին կոչել են Վահումիք: Սա քրմական մի կարեւոր պաշտօն ու կոչում էր, որը եղել է ժառանգական եւ դրա համար էլ այդ տոհմը կոչուել է Վահումիք, իսկ տաճարն էլ՝ Վահէվահեան:

Վահ-ա-զմ (Bil-gin) անուան վահ բաղադրիչի «քոցավառ» իմաստի հետ կապ ունի նաև Վանում, հարսանիքի օրերին, պսակին յաջորդող առաւտեան, հարսի ու փեսայի հետ տան կտորը բարձրացած հարսնեւորների՝ ծագելիք արեւին (այզին) ուղղած երգի «Վահէ՝, վահէ՝» խօսքերը.

*Եզ բարեւ, այ եզ բարեւ,  
Եզմ արեւուն տաճը բարեւ,  
Տայ թագաւորին շատ արեւ,  
Վահէ՝, վահէ՝.  
Եզ բարեւ, այ եզ բարեւ,  
Եզմ արեւուն տաճը բարեւ,  
Տայ թագուհուն շատ արեւ  
Վահէ՝, վահէ՝<sup>1</sup>:*

Ի հարկէ ծագելու վրայ եղող արեւին ուղղուած վահէ՝, վահէ՝ խօսքերը նշանակում էին «քոցավառէ, ծագիք, բոցավառուէ»: Մեծ հաւանականութեամբ՝ յետազայ դարերին ժողովուրդը մոռացած կը լինէր վահէ, վահէ բառերի բուն իմաստը եւ աւանդական սովորութեամբ էր կրկնում դրանք, ինչպէս մեր եկեղեցու արարողութիւնների ժամանակ հնչուած Ովսաննա, ամէն եւ նման բառերը, որոնց իմաստը վաղուց անհասկանալի են դարձել ժողովրդի մօտ:

<sup>1</sup> ԱԴՊ, 27: Կամ տես «Ազգագրական Հանդէս», գիրք 20-րդ, Թիֆլիս, 1910, էջ 158:

Վահագնի հրեղէն քնոյթը զալիս է նրանից, որ նախապէս եւ ի սկզբանէ եղել է նա հրաբուխի աստուածութիւն (այս իդուութիւնը դեռ ցոյց կը տամ ներքեւում):

Վահագնը յորջորջուել է *Վիշապաքաղ*: Այս մակդիրը միանգամայն լուսաբանում ու բացայայտում է Վահագնի նախնական քնոյթը՝ կապուած՝ զործող հրաբուխի (լեռան խառնարանից ժայթքող կրակի) պաշտամունքի հետ: Մինչեւ հիմա *վիշապաքաղ* եզրի քաղ բաղադրիչը սիսալմամբ կապելով քաղել բայի հետ՝ վիշապաքաղ եզրն էլ հասկանում էին «վիշապ քաղող, վիշապ սպանող»: Մինչդեռ քաղ բաղը ինքնին ներկայացնում էր երախից կրակ ժայթքող մի հրէց: Ուստի *վիշապաքաղ* եզրն էլ պատկերացնում էր հենց խոր անցեալում պաշտուող հրաբուխը որպէս խառնարանից (երախից) հուր արձակող բոցալեզու մի ահեղ վիշապահրէց: *Քաղ* բարի այս իմաստը ճշգորէն բացատրուած է Մ. Արենեանի կողմից, Արամի առասպելի մեկնաբանութեան առթիւ, բայց այն վրիպել է վիշապաքաղ Վահագնի քնոյթն հետազօտողների աչքից:


Արամի պատմութեան մէջ Խորենացու յիշած «Պայապիս քաղեայ Տիտանեան»-ի մասին Մ. Արենեանը գրում է հետեւեալը. «Այս հսկայի անուան մէջ տեսնում են «Պապայոս Խիմայրագենէս»-Պապայոս Խիմայրածին ( քիմայրածին ), որ հայերէն լինում է քաղի զարմ, քաղեայ: ... «Գիգանտների գիշատրն է Տիփոն (Տիֆոն, Տիֆոն, Տυρփաս, որ է իսկապէս ծուխ արձակող, ծխող...) »: ... Տիփոնի զաւակն է Զիմայրա, որ նշանակում է քաղ, մի հրէց, որի երախից կրակ է դուրս հոսում: Նա խորհրդանիշն է Լիկիայի մի հրաբխային լեռան»<sup>1</sup>: *Քաղ*-ը համեմատել նաեւ սումեր gal = storm demon<sup>2</sup> («փոքրիկի դեւ») բարի հետ:

Իմանալով քաղ բարի այս իսկական իմաստը՝ միանգամից հասկանալի է դառնում կրակի աստուած Վահագնի «Վիշապաքաղ» մակդիրի նշանակութիւնը որպէս երախից բոց արձակող մի

<sup>1</sup>ՀՀԳ.Պ, 24:

<sup>2</sup>SGC, 269: Տես նաև ŠAG, gal =Dämon, Südstorm:

հսկայ վիշապահրէց, որը խորհրդանշում է գործող ահաւոր հրաբուխը:



Նեմրութի խորագիրիկ կլոր խառնարանը:

Սրանով բացայատուում է, թէ Աշտիշատի մեհեանը կրակապաշտութեան մի նշանաւոր կենտրոն էր՝ նախապէս կապուած լինելով մի գործող հրաբուխի պաշտամունքի հետ: Ի հարկէ՝ պաշտամունքի այդ վայրը չէր կարող գտնուած լինել գործող հրաբուխի ճիշդ վայրում: Հուր-բոց արձակող խառնարանը պէտք է գտնուած լինէր պաշտամունքի վայրից (այս դէպքում Աշտիշատի տաճարի վայրից) տեսանելի հեռաւորութեան վրայ: Որով անկանած, այս Աշտիշատից եւ Մշոյ շրջանից տեսանելի՝ Վանայ լճի արեւմտեան ափին գտնուող Նեմրութ լեռան (ներկայումս հանգած) նշանաւոր խառնարանն էր, որի հրաբուխը «գործել է ընդհուպ մինչեւ 1440 թուականը եւ նոյնիսկ դրանից յետոյ»<sup>1</sup>: Նեմրութ լե-

<sup>1</sup> ՀՊԱ, 10-11:

ոան գագաթը բարձր է (ծովից) 3050 մետր, Վանայ լճից՝ 1330 մետրը: Ուստի, նրա խառնարանը, իր վեհութեամբ, իշխում է ոչ թէ միայն Տարօնի, այլեւ ամբողջ Վանայ լճի ու շրջապատի վրայ: Միանգամայն պարզ է, թէ այդ խառնարանը, որպէս բացուած մի հսկայ երախ, իր որոտագին ու ֆշացող ժայթռումներով՝ հերանոսական օրերի ժողովրդի աչքին պիտի ներկայանար որպէս տիտանեան մի ահաւոր բոցալեզու վիշապ-հրեշ եւ, որպէս կրակի աստուած, պիտի դառնար պաշտամունքի առարկայ: Հ. Լինչի «Armenia» գրքից բերուած այս քարտէսում պարզ երեւում է Նեմրութի խորագրեցիկ կլոր խառնարանը Վանայ լճի արեւմտեան ափին:

Սենք կարծում ենք, թէ այդ հին օրերին, լճի մէջ (ափի մօտ) մի կղզի էր Նեմրութի խառնարանը, որի յետազայ հզօր ժայթռումներից արտավիժող լաւայի յորդումներով՝ կղզի-խառնարանը միացած պիտի լինի ցամաքի հետ: Այս իրողութիւնը պարզ զգալի է անգամ ներկայ քարտէսում, ուր երեւում են լաւայի չորս կողմ հոսքի քարացած ալիքները:

Հետեւաբար, դժուար չէ պատկերացնել լճի մակերեսից 1330 մետր բարձր կանգնած խառնարանից մի քանի հարիւր մետր էլ աւելի բարձրութեան հասնող այդ հրաբխային բոցարձակման ու լուսարձակման ահեղ բայց եւ բովիչ տեսարանը, որ դիտուում էր, մանաւանդ գիշեր ժամանակ, ինչպէս Աշտիշատից ու Մշոյ դաշտից, այնպէս էլ Վանայ լճի ափերից ու նրա շրջապատից: Հեթանոսական անցեալում, բոցալեզու այդ վիշապաքաղ Վահագնի (յատկապէս գիշեր ժամանակ) ամբողջ ծովը (լիճը) շիկագոյն ու ծիրանեգոյն դարձնող բոցարձակումները՝ երկնքն ու երկիրը դրդացնող այդ որոտագին ժայթռումները դժուար չեր ընդունել (ու պատկերացնել) որպէս Վահագնին ծնող՝ երկրի, երկնքի ու ծովի երկունք: Ուստի բնական է, որ պիտի երգին:

*Երկնէր երկին, երկնէր երկիր,  
Երկնէր եւ ծովն ծիրանի,  
Երկն ի ծովուն ունէր եւ զկարմրիկն եղեզնիկ,  
Հնդ եղեզան փող ծուխ ելանէր,  
Հնդ եղեզան փող բոց ելանէր,  
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատամելիկ,*

### **Նա հոր հեր ունէր... :**

Ինչպէս պարզ տեսնում ենք, դէաի երկինք ժայթքող բոցաշէկ հրաբուխից (Վահագնի ծննդից) ծիրանեղոյնն է դարձել երկունքին մասնակցող ծովը: Այս երեւյթը պիտի նոյնպէս կարեւոր ու շօշափելի փաստ ու տուեալ համարել, թէ ինչպէս այս բանաստեղծութիւնը, այնպէս էլ Վահագնը կապուած էր նշանաւոր Նեմրութի հրաբուխի հետ (մինչեւ հիմա անհասկանալի էր մնացել «ծովն ծիրանի» խօսքը):

Վահագնը, որպէս կրակի ու հրաբուխի աստուածութիւն, Նեմրութ լեռան հրաբուխի հետ (անգամ Նեմրութ անուան հետ որպէս կրակի-հրաբուխի աստուածութիւն) ունեցած կապի համար պիտի կարեւոր ապացոյց համարել նաև Կոմմազենէի Նեմրութ լեռան վրայ Երուանդունի հայ արքայ Ալեքսանդրի կողմից կանգնեցուած Վահագնի հսկայ արձանի գոյութիւնը<sup>1</sup>:

Մենք գտնում ենք թէ Վահագն անուան ծննունդ տուող նոյն սումեր Բիլցին եզրի հետ պիտի կապուած լինի նաև հոռմէական դիցարանութեան մէջ կրակի աստուած համարուող Vulcan եզրը, որ երոպական լեզուներում (լատ. vulcan, իտալ. եւ անգլ. volcano, ֆրանս. volcan, ռուս. вулкан եւայլն) պահում էր իր «հրաբուխ» իմաստը: Պիտի նոյն ծագումն ունեցած լինի արաք. burkān «հրաբուխ» բառը:

Պիտի հաւանական համարել, որ Վանայ լճի շրջապատում (կամ այլուր) հրաբխային գործունէութիւն ունեցած լեռներից ոմանք նոյնպէս ստացած լինեն Վահագն-ի նման (Bil-gin եզրից ծագած) անուն, եւ նրանց խառնարաններից կամ զագաթներից ոչ շատ հեռու կառուցուած լինեն կրակի մեհեաններ: Այդպիսիներից մէկը պիտի լինի Վարագ կոչուած լեռը, որի լանջին նոյնպէս կար Վահագնին նուիրուած մեհեան: Վահ-ագն ու Վար-ագ(ն) անունների վահ եւ վար բաղադրիչների ձայնային ( $l > h/r$ ) տարրերութիւնը պիտի վերագրել այդ տարրեր վայրերում (Աշտիշատ ու Վարագ) ապրած նաիրեան ցեղերի խօսուածքների բարբառային տարրերութիւններին: Նոյնպիսի երեւյթ նկատուում է նաև արա-

<sup>1</sup> Այս արձանի համար տե՛ս ՀԺՊ, 680:

թերէնում: Եթէ Վահագնը յետագայում նոյնացուել է արեւի հետ, ապա երեւի արարական (կամ սեմական) մի այլ ցեղի մօտ էլ Bil-gin աստուածութիւնը պահուել է falak(un) ձեւով ու բարձրացել երկինք (որպէս երկնային շրջան): Հնչինային տեսակէտով, արարական falak(un) ձեւին բարական մօտ են հայ Վահագն (եւ Վարագ) ձեւերը. երկուսի մէջ էլ Bil (կամ bel) բաղադրիչի ի-ն (կամ ե-ն) դարձել է ա, իսկ երոպական vulcan ձեւը մօտ է աւելի արար. երկան ձեւին, որի ասիական ր-ին համապատասխան է հայ Վարագ ձեւի ր-ն: Պատկերը աւելի պարզ է հետեւեալ ցուցակով.

Սումեր. BIL-GI[N]	(= <sup>d</sup> Gi-bil՝ կրակի աստուած)
Արար. fal-a-k(un)	(«երկինք, օրբիտ»)
Հայ. Վահ-ս-զն	(հրարուխի-կրակի > արեւի աստուած)
Հայ. Վար-ազ(ն)	(լեռ եւ Վահագնի մեհեան)
Արար. bur-kān	(«հրարուխ»)
Հոռմ. Vul-can	(կրակի աստուած)
Երոպակ. vol-can(o)	(«հրարուխ»)

Կարծում եմ թէ այս բոլորից յետոյ, պիտի պարզ լինի թէ Վահագնը եղել է հրարուխի-կրակի աստուածութիւն եւ Կոմմագենէում էլ Վահագն անունը սխալ չեն թարգմանել Արտագն(էս) ձեւի, ուր արտ նշանակում է «կրակ»: Հետեւարար միանգամայն պարզ է նաև թէ Վահագն անունը ոչ մի կապ չունի իրանական-հնդկական Վերեքրագնաւ անուան հետ, որը «հնդկական ամպրոպային աստուած Ինդրայի մակդիրն է՝Վրտրահան, թոյլ ձեւով ծայնաւորից առաջ՝ Վրտրագինա, որ նշանակում է «վրտրասպան՝ վիշապասպան» (տե՛ս ՀՀԳ-Պ, 32): Մենք արդէն ցոյց ենք սուել նաև թէ Վահագնի վիշապաքաղ մակդիրն էլ չի նշանակում «վիշապասպան», այլ «վիշապահրէշ»:

Հայաստանում, հելլենիզմի ժամանակ, Վահագնը նոյնացուել է Հերակլէսի հետ, որի խորհրդանիշն էր (կրակի ներկայացուցիչ) առիւծը: Հերակլէսը, ըստ մի աւանդութեան, ազատել է Կովկաս լեռան վրայ շղթայուած տիտան Պրոմեթէոսին, որը

մարդկութեան համար յափշտակել էր աստուածային կրակը Մոսքու լեռան խորքում գտնուած՝ իր ընկեր Հեփեստոսի հնոցից<sup>1</sup>:

Վերեւում ասացինք թէ Վահազն անուան ծնունդ տուող եւ կրակի աստուածութիւն ներկայացնող BIL-GIN (‘gi-bil) եզրի եւ բաղադրիչը հնչուել է նաև ՅԵ: Այս (Bel) անունվ ծանօթ էր Բաբելոնի կրակի աստուած ԲԵԼ, որի դէմ կոռուել ու յաղել է հայոց ազգային կրակի աստուած «Յապետոսթեանն Հայկ»-ը: Խորենացին ասում է թէ ԲԵԼ Ներրովքն է. նա գրում է. «Եւ բազում ի ժամանակազրաց զՆերրովք, որ է ԲԵԼ ...»<sup>2</sup>: Ահա թէ ինչու Bel (Bil-gin) եղող Վահազնի լեռ-խառնարանը կոչուել է Ներրովք > Ներրութ > Նեմրութ: Սրա համար կայ մի փաստ եւս. Գ. Սրվանձտեանցը Նեմրութի շրջանում ապրած հայերից քաղել է ԲԵԼի մասին աւանդական մի գրոյց, ուր ասուում է, թէ «Հայոց բազաւորը Աստուծոյ ծեռքով սպաններ է զԲԵԼ եւ հաներ Նեմրութայ գլոխ, այնուեղ բռնիր շիներ, մէջը կախեր վառեր է»<sup>3</sup>: Ինչպէս պարզ երեւում է, Նեմրութի բռնիր խօսքը վերաբերում է նրա խառնարանի հրաբխային գործունեութեան. անգամ թոնիր անունը (այսպիսի դէպքերում) տրուել է դեռ շիանգչած հրաբուխին: Արդէն մեզ յայտնի է Թոնդուրակ լեռը, որի խառնարանը դեռ ծխում է մինչեւ հիմա: Նեմրութի թոնիր մեջ ԲԵԼի վառուելը արձագանգում է հենց այդ խառնարանի հետ կրակ Bel-ի (Bilgin-Վահազնի) ունեցած կապի իմաստը: Հետեւաբար, պիտի հաստատ համարել, թէ Նեմրութի (մինչեւ 1440թ. գործած) խառնարան-հրաբուխն էր, որ կոչուել է Վահազն, եւ «Երկներ երկին, երկներ երկիր, երկներ եւ ծիրանի ծով...» բանաստեղծութիւնն էլ յօրինուել է հենց այդ խառնարանի գործած ժամանակներին:

<sup>1</sup>ՀՅԼԱ, 123:

<sup>2</sup>Խորենացի, Ա-ե:

<sup>3</sup>Գ. Սրվանձտեանց, «Գլոց ու Բլոց», 31-32:

## 6. ԹԻԱՅՆԱ (BIAINA)

---

Մի քանի առիթներով ցոյց եմ տուել թէ *Ուրուստրի* (*Ուրուստրի*) կամ *Ուր-արտու* (>*Ուր-աշտո*) անուան *ատրի* (կամ *արտու*>*աշտո*) բաղադրիչը նշանակում է «կրակ», եւ *Ուրարտու* երկրանունն էլ՝ «վայր կրակի»: Ուրարտական արձանագրութիւնների մէջ Ուրարտու (*Նահրի*) անուան տեղ յետագայում ընդհանրապէս բերուել է *Բիայնա* (մերք *Բիայնիլի*) եզրը, որ բարգմանութիւնն է (կամ հոմանիշն է) *Ուրարտու* անուան եւ նոյնպէս նշանակում է «կրակի վայր»: Որով *Bia*-ina անուան եա եւ *Ուրարտու* անուան *արտու* (*Ուրու-ատրի* եւ *Ki-ardu*>Կարդու անունների *ատրի* եւ *ardu*) բաղադրիչները նշանակում են «կրակ»:

Սումերերէնում եիլ («քոցավառել, քոցավառ») բառը ունի իր պարզ բի ձեւը, որ նոյնպէս նշուում է եիլ բառի **ՇՃՇ** սեպախմբով եւ նոյնպէս նշանակում է «վառել, քոցավառուել», որով եա ձեւն էլ նշանակում է «կրակ»<sup>1</sup>: Խսկ *Bia*-ina անուան -ina (կամ -na) վերջատրութիւնն էլ տեղանուանական վերջածանց է «վայր» իմաստով (հմմտ. *Armeni-Armina*, *Wassukani-Wassukana* եւլն): *Biaina* նշանակում է «կրակի վայր» եւ հոմանիշ է *Ուր-արտու* («վայր կրակի») անուանը:

Այս իրողութեան համար փաստ է նաեւ հետեւեալը: *Տեսանք*, թէ *Վահ-ազճ* անունը համապատասխանում է սումեր *Bil-gin* եզրին, որը *Bil*-ին համապատասխանում է *վահ* բաղադրիչը: *Տեսանք* նաեւ, թէ Կոմմազենէում *Վահ-ազճ* (*Bil-gin*) անուան տեղ բերուած *Արտ-ազճ* (էս) եզրի մէջ՝ եիլ>վահ («քոցավառ») բաղադրիչի տեղ դրուել է *արտ* («կրակ») բաղադրիչը, ճիշդ այնպէս, ինչպէս Ուրարտու («վայր կրակի») անուան համապատասխանող *Bia*-ina եզ-

<sup>1</sup> Ինչպէս տեսնում ենք, սումերերէնով են բացատրուում հայ-ուրարտական շատ մութ հարցեր: Սրանք պատահական երեւոյթներ չեն: Սրանք, սումերահայ յարաբերութիւնների տեսակէտով, ոչ թէ միայն լեզրուական, այլ եւ հոգեւոր մշակոյթի բնագաւառի կապերի մի մեծ սառցալերան՝ ջրի երեսում դեռ երեւացող փոքր մասն են լոկ՝ այդ էլ բաւական ժամանակ հալչելուց յետոյ:

որի մէջ bia-ն բերուել է արտո («կրակ») բաղադրիչի տեղ, որով հաստատ է, թէ Bia-ina նոյնապէս նշանակում է «կրակի վայր»:

Մեզ յայտնի է, թէ Biaina (Bia-in) անունից է զալիս **Վաս** (**Վա-Ա**) քաղաքանունը. որով bia-ն սուել է վա («կրակ»), այնպէս ինչպէս Bilgin (**Վահ-ա-զն**) անուան ել բաղադրիչը սուել է **վահ** (**«բոցավառել»**), որի հ-ն, ինչպէս ցոյց սուեցինք, զալիս է լ-ից: Սրանից միանգամայն պարզ է, թէ **Վահ-ա-զն** (Bil-gin) անուան **վահ** (bil) եւ **Վա-ն** (Bia-in) անուան **վա** (bia) բաղադրիչները ունեն նոյն (սումերական) ծագումը<sup>1</sup>, եւ ինչպէս կը տեսնենք ներքեւում, դիցարանական իմաստով էլ կապուած են իրար հետ:

Քիայնա անուան «կրակի վայր» իմաստի այս բացայայտումը ունի շատ կարեւոր նշանակութիւն **Քիայնայի** ընկերային-կրօնական էութիւնը հասկանալու համար: **Քիայնա** եզրը, որ նշանակում է «կրակի վայր», իրենից ներկայացնում է **կրակարան**, այսինքն՝ կրակի մեհեան, որի շուրջ աճել էր բնակավայր կամ քաղաք իր հողատարածութիւններով:

<sup>1</sup> Կարելի է սումերների եւ հայերի միջև հոգեւոր մշակոյքի սերտ կապերի երեւոյթներից մեկը տեսնել սումեր dagal ~~➤➤➤~~ բառի մէջ, որին տալիս են «ապահով, լայն» իմաստը: Այս բառի սեպազիրը, ինչպէս պարզ երեւում է, կազմուած է ~~➤➤➤~~ ga «տուն» եւ մէջը դրուած ~~➤➤➤~~ «աստուած» սեպախմբերով: Բնականաբար աստուած պարունակող տունը պիտի լինի տաճար: Որով մենք փորձում ենք այս սումեր dagal բառի մէջ տեսնել հայերէնում պահպանուած տաճար բառը, որին Հիւրշմանը կապում է պարսիկ տաշար («ապարանք, ձմեռանց») բառի հետ, որը չի տալիս տաճարի իմաստը: Dagal > տաճար միտքը ուժեղանում է այն փաստով, թէ սումեր dagal բառը ունի նոյն (տաճ մէջ աստուած) սեպախմբերով նշուած **հե-gal** հոմանիշը, որի հետ, մեր կարծիքով, պիտի կապ ունեցած լինի արար. heykal բառը, որ նոյնապէս նշանակում է տաճար: Այսուհանդերձ, սումեր dagal բառի հետ հնչումով նոյնութիւն ունի աւելի հայ դազաղ բառը, եւ կարելի է ընդունել այս կապը, եթէ սրանք (dagal ու դազաղ) նախապէս ունեցած լինեն «դամբարան-մեհեան» իմաստը (ինչպէս մատուռ բառը), որը կարող էր ներկայացնել «ապահով» իմաստը (աստուածացած մեռեալին դամբարանի մէջ դնելով՝ ապահովութեան մէջ դրած լինելու գաղափարը): Համեմատել հայ շիրիմներ (երեւի ազգակից) անզ. shrine «մատունքի տուփի», «սրբի դամբարան» եւ միաժմանակ՝ «խորան, սրբատեղի-տաճար»: Սիամամանակ հայ դամբարան (դամբ-արան) բառի հիմնական դասմք բաղադրիչը գուցէ կապ ունեցած լինի սումեր dam-ab-ba («ոռբասաց կնոջ կոծ») եզրի հետ, որով դամբ-արան կը նշանակէր «լաց ու կոծի վայր», այսինքն «գերեզման» կամ «գերեզմանատուն»:

Հայերէնում պահպանուել է մի այլ տուեալ, որ նոյնպէս պիտի կարեւոր ցուցմունք համարել *Քիայնա* եզրի «կրակի վայր» կամ, կրօնական առումով, «կրակի մեհեան» իմաստի համար: Այդ տուեալը վանք բառն է: Ինչպէս արդէն զիտենք, Biaina անունից է զախս Վանք քաղաքանունը, իսկ հայերէնի վանք բառի մէջ պիտի հասկանալ կրակի պաշտամունքի վայր կամ տաճար՝ իր քրմապետ-ցեղապետի (կամ քրմապետ-արքայի) պալատավարչական եւ տնտեսական շենքերով, որոնց շուրջ սովորաբար աճած է լինում այդ տաճարին պատկանող կամ ենթակայ ժողովրդի բնակավայրը իր շրջակայ հողամասերով, վանքապատկան հողերով: Վանք եզրի ք վերջաւորութիւնը, լինելով յոգնակերտ մասնիկ, միաժամանակ տեղանուանական ածանց է, որը կարող է վերաբերել նաեւ տաճարի շուրջ եղած շենքերին ու հողերին, այնպէս ինչպէս Հայք նշանակում է «հայեր» եւ միաժամանակ՝ «հայերի վայր՝ հայերի երկիր»: Իսկ տաճարը առանձին կոչուել է վան (ոչ թէ վանք), որին գտնում ենք վան-երեց, վան-ա-հայր, վան-ա-տուն, վան-ական եւ նման բարդութիւններում: Ուստի, միանգամայն պարզ է, թէ հայերէնի պահած վանք բառը համապատասխանում է (ծնունդն է) նախկին Biaina անուան, որը նշանակում է «կրակի տաճար»՝ իր շուրջը եղած բնակավայրով ու հողերով, այլ խօսքով՝ կրակ պաշտող ցեղի կենտրոն:

Ի հարկէ բնական է, թէ կրակի (հրաբուխների) այս երկրի նախրեան բնիկ ցեղերի պաշտամունքի զիսաւոր առարկան պիտի լինէր կրակը, որի համար նախրեան իրաքանչիր (կարեւոր) ցեղ պիտի իր բնակավայրի կենտրոնում հաստատած լինէր պաշտամունքի մեհեան՝ որը նուիրուած էր կրակի աստուածութեան (կամ Վահագնին): Հետեւարար, Ուրարտուի բուն կենտրոնական շրջանը, ուր համախմբուած նախրեան ցեղերը ունեին իրենց (բնակավայրերի կենտրոններում) կրակի մեհեաններ, կոչուում էր <sup>KUR</sup>Biaini ու «Երկիր-Քիայնաների» (որի -և վերջաւորութիւնը յոգնակերտ մասնիկ է, ինչպէս վանք-ի ք-ն):

Հենց Նեմրութի, Միփանի, Թոնդուրեկի, Վարազի, Արտոսի (արտ=կրակ) եւ այլ հրաբխային լեռնագագաքները, որոնք շրջապատում էին Վանայ լիճը, պիտի շրջագծած լինեն Ուրարտուի

կենտրոնը: Այս շրջագծի մէջ էին գտնուում Արամէի արքունի քաղաք Արօասկուն, Ռուսայի հօրենական քաղաք Արբուն (լճի արեւելեան ափին), մայրաքաղաք Վանը (լճի հարաւ-արեւելեան ափին) եւ նման ուրիշներ, ուր պիտի գտնուած լինեն կրակի կարեւոր մեհեաններ (կրակի ասսուած Խալդի տաճարներ): Եւ ահա Ռուբարուի հենց այս կենտրոնը՝ իրաքխային լեռների եւ կրակի նշանաւոր տաճարների կենտրոնն էր, որ կոչուում էր <sup>KUR</sup>Biainili «Երկիր Բիայնանների»<sup>1</sup>:

Ինչպէս ասացինք՝ ուրարտական պետութեան կազմի մէջ մտած եւ արեւ-կրակ պաշտած իրաքանչիւր նախրեան ցեղի (յատկապէս կենտրոնական) երկիր, իր տաճարային ու պալատական կորիզով, իր համար մի բիայնա էր: Այդպիսին էր կենտրոնական Բիայնան իր Տուշպա կոչուած մայրաքաղաքի տաճարային ու պալատական կորիզով, ուր գտնուում էր ի հարկէ՝ կրակի աստուած Խալդի կրակի մեհեանը: Ահա թէ ինչու Տուշպա մայրաքաղաքը (եւ ոչ թէ գաւառը) մեզ հասել է Վան (Բիայնա) անուամբ. որովհետեւ Տուշպայի երկիրը իր Բիայնա կոչումը ստացել էր հենց Տուշպայում գտնուած կրակի մեհեանի գոյութեամբ, իսկ Բիայնիլի անունը տրուել էր ամբողջ երկրի կենտրոնական շրջանին, ուր գտնուում էին այդպիսի մի շարք բիայնաններ:

Բիայնաններ էին այն կրակի տաճարները, որոնք նախապէս կառուցուած էին պաշտուող իրաբուխի վերոյիշեալ խառնարան-գագարներից ոչ շատ հեռու վայրերում՝ Վանա լճի շրջապատում: Բայց իրաբուխների հանգումնով եւ քրիստոնէութեան էլ մուտքով՝ մոռացուեց վանքերի (բիայնանների) ուրարտական ժամանակների իսկական իմաստն ու բովանդակութիւնը, եւ վանք կոչումն էլ պահպանուեց կրօնական այլ նման հաստատութիւնների ու միաւրների վրայ:

<sup>1</sup> Հնում երկրի մայրաքաղաքն ու նրա գլխաւոր աստծու տաճարը, կամ երկիրն ու նրա տաճարները, համազօր հասկացութիւններ էին: Օրինակ՝ ահա Ասորեստանի արքայի գործակալներից (Ուրարտուի Ռուսայի շարժումներին հետևող) Սենաքերիից՝ իր արքային ուղարկած տեղեկագրից մի հատուած. «Ամէն ինչ լաւ է Ասորեստանի համար, ամէն ինչ լաւ է տաճարների համար...» (տե՛ս ՀՊ, 115):

Հետեւաբար, պիտի ընդունել, թէ Հայաստանի հնագոյն գլխաւոր վանքերից հերանոսական ժամանակներից մնացած-ժառանգուածները (աւերուած-վերակառուցուած կամ նորոգուած) եղել են Ուրարտուն կազմած նախրեան-հայկական ցեղերի բիայնաներ, որոնք արշակունիների եւ քրիստոնէութեան սկզբի դարերին համարուել են այս կամ այն նախարարական տան պատկանող վանք. այն նախարարական տների, որոնք ժառանգութիւնն էին Ուրարտուն կազմած նախսկին նախրեան առանձին կարեւոր ցեղերի: Ի հարկէ նախրեան իրաքանչիւր ցեղ-երկիր, իր ժամանակին, ուներ իր զինուած ուժերը, որոնք պատերազմի դէպքում հաւաքուում էին ուրարտական արքայի դրօշի տակ, ու պատերազմի աւարից ու գերիներից բաժին էր հանուում բիայնաներին:

Ուրարտական հարստութեան անկումից յետոյ Արտաշէսեանների ու Արշակունիների ժամանակներին էլ այդ դրուածքը մնացել է նոյնը: Նախրեան ցեղերի ժառանգ հանդիսացած հայկական նախարարութիւնները ունեին իրենց վանքերը եւ իրենց առանձին զինուած ուժերը, որոնք պատերազմի դէպքում հաւաքուում էին Հայաստանի արքայի դրօշի տակ ու պատերազմի աւարից ստանում էին իրենց բաժինը:

Բիայնա անուան իմաստի այս բացայայտումը պարզում է, թէ այն մի յատուկ ցեղի անուն չէր, եւ ցոյց է տալիս, թէ ինչպէս իշխողները, այնպէս էլ երկրի ու պետութեան հիմնական կորիզը կազմած նախրեան ցեղերը հենց կրակի աստուած Խալդի-Հայկին (ինչպէս եւ Վահագնին) իրենց նախնին համարող հայերն էին, նախրեան այն ցեղերը, որոնց երկրի հարաւային շրջանները հնում, ասուրաբելական շրջանակում, յայտնի էին Սուրարտու անուան տակ:

## **ԳԼՈՒԽ 6**

---

**ԱՄՓՈՓՈՒՄ ՈՒ ԿԱՊԱԿՑՈՒՄՆԵՐ**

384

## 1. ՀՆԴԵՒՐՈՊԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՒ ՄԻՏԱՆԱՒՆ

Ինչպէ՞ս բացատրել Հայկական լեռնաշխարհի եւ Սիջագետքի հին ժողովուրդների, յատկապէս հայերի ու սումերների միջեւ եղած այս լեզուական, կրօնական ու մշակութային սերտ կապերը: Ինչպէ՞ս բացատրել նաև հնդեւրոպական ժողովուրդների եւ Սիջագետքի հին ժողովուրդների (մանաւանդ հնդեւրոպական մայր լեզուի ու սումերերէնի) միջեւ նշմարուող դիցարանական ու լեզուական ընդհանրութիւնները:

Տեսանք թէ անգամ Huba (Հեբա)-ի պէս մի դիցանուն, որին համարում էին խորրի, ծագումով (ստուգարանականօրէն) կապուած է նրան խորհրդանշող-ներկայացնող կենդանու՝ հայկական կով (անգլ. cow) անուան հետ, որը բնիկ հնդեւրոպական է: Կան սումերերէն ու հայերէն բառերի բազմաթիւ համընկնումներ, որոնց մօտ 50 տոկոսը հնդեւրոպական են: Այսուել ներկայացնուած ցուցակում, որպէս նմոյշ<sup>1</sup>, թերում եմ այդպիսի միայն 20 բառեր, որոնց կէսը հնդեւրոպական է:

Դժուար է բացատրել սումերահայ այսպիսի լեզուական բազմաթիւ կապերն ու փոխազդեցութեան այլ երեւյթներ, եթէ չընդունենք, թէ հնդեւրոպական մայր լեզուն կրողները (յատկապէս հայերը), III հազարամեակից առաջ գտնուել են Սիջագետքի հետ անմիջական շփման մէջ գտնուող Հայկական լեռնաշխարհում ու հարեւան Փոքր Ասիայում եւ լեզուական, կրօնական ու մշակութային փոխանակութիւններ կատարել Սիջագետքի հին ժողովուրդների հետ<sup>2</sup>:

<sup>1</sup> Իմ «Հայ Ժողովուրդի Ծագումը» գրքում բերել եմ հայերէնի հետ համընկնող այդպիսի 100 սումեր. բառեր. իսկ այդպիսիներից ինձ յայտնի են 200-ից աւելին:

<sup>2</sup> Աքքադերէնից հայերէնին անցած լեզուական տարրերի մասին՝ կարելի է ուշադրութիւն հրաւիրել Ակադ. Գ. Զահուկեանի «Akkadian Loan Words in Armenian» յօդուածի վրայ (տե՛ս AAL, volume 3, 1982, pp. 1-12):

ՀԱՅԵՐԵՆԻ ԲՆԻԿ (ՀՆԴԵՒՐՈՊԱԿԱՆ) ԲԱՌԵՐԻ ՀԵՏ

ՀԱՄԵՄԱՏՈՒՈՂ ՍՈՒՄԵՐ ԲԱՌԵՐ

	սումեր բառեր	սումեր բառերի իմաստը Deimel-ից՝ գերմաներէն	հայ բառեր	հայ բառի իմաստը	հնքա- դրուղ հնդեւ- արմատ
1	bi, be	sprechen	բա	բալ («խօսիլ»)	bhā
2	du	gehen	ուս		pod
3	ellu	wehgeschrei, Geschrei	լալ		pla
4	gurun	Frucht	գարուն		vēsr (> vēr)
5	liš	Bissen, Brocken	լես	«մանրել, փշրել»	qlek
6	lu	Schaf	ուլ	«այծի, եղթիկի ձագ»	polo
7	mul	aufleuchten	մուլ	«առկայծող, ծուխ»	smōl
8	tu	gebären, erzeugen	ձու	«հաւկիր»	oujom
9	tur	eintreten	դուռ		dhur
10	ussu	acht	ուրը		oktō

Մանաւանդ դժուար է անտեսել այն երեւյրը, թէ *Խարուր* ու *Եփրաստ* (Buranun) գետերի անունները հայերէնում եւ հնդեւրոպական մի քանի լեզուններում պահպանուել են (ախրուր, ֆրեաս Brunnan) «աղբիւր» իմաստով. մի տուեալ, որը գնում է խոր անցեալ եւ ցնյց է տալիս, թէ այդ լեզունները կրողնները հնում ապրել են Խարուրի ու Եփրաստ գետերի ակնաղբիւրնների շրջաններում: Դժուար է անցնել նաև Bilgin-Վահազի-Vulcan եւ նման այլ յատկանշական կապակցութիւնների կողըքով. ել չենք խօսում միջազետքեան Anunit (Anait), Tešop (Teišeba), Sibiš (Sipiš), Istar եւ այլ անունների ու

## ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ՍՈՒՄԵՐ ԲԱՌԵՐ

	սումեր բառեր	սումեր բառի իմաստը Deimel-ից՝ գերմաներէն	հայ բառեր	հայ բառի իմաստը
1	ab, ap	Meer	ափ	«ջրի եզեր»
2	agar	Feld	ագար(ակ)	«արտ»
3	gin	gehen	գն(ալ)	
4	ezinu	Getreideart	աշուն	
5	hus	zerschneiden	խուզ	«փրցնել, կտրել»
6	illulu	Bogen	աղեղ	
7	ka-izi	brennen, Feuer	կայծ	
8	ki-mah	Grab	կմախ	
9	ku-babbar	Silber	կապար	
10	kulla	Überzug, Hülle	քուղ	«ոլորած դերձան, վուշեթել»

Անցած Diana, Poseid(on), Zeus, star եւ այլ գուգահեռութիւնների ու նման երեւոյթների մասին, որոնք գուցէ պատկանում են աւելի ուշ շրջանին: Այս բոլորը այսի համարել միայն ջրի երեսում երեւացող փոքր ու չնշին մասը սառցալեռան, որի ընդյանակեայ մեծութիւնը դեռ մնում է քողարկուած՝ հետազօտութիւնների անբաւարարութեան կամ որդեգրուած սխալ ուղղութիւնների պատճառով:


Միայն Aratta-Erech յարաբերութիւնների մասին խօսող սումերական դիցազնավեպերը բաւական են ընդունելու, թէ՝ մ.թ.ա. 3-րդ հազարամեակի սկզբներում, Հայկական լեռնաշխարհի ու Սումերի միջեւ գոյութիւն են ունեցել կրօնական ու մշակութային արտակարգօրէն սերտ կապեր:

Հայկական լեռնաշխարհը հետաքրքրական է ոչ թէ միայն այն բանի համար, որ աշխարհագույնականորեն գտնուում է հնդեւրոպական ժողովուրդների տարածման կենտրոնական շրջանակում, այլ յատկապէս այն պատճառով, որ այն գտնուում է տարբեր ցանաքանական (Ասիայի, Աֆրիկայի ու Եվրոպայի) հաղորդակցութեան ուղիների խաչմերուկում ու տարբեր քաղաքակրթութիւնների հանդիպման կիզակէտում: Ահա թէ ինչու այն հանդիսացել է սումեր-աքաղական, հնդեւրոպական, կովկասեան եւ միջինասիական (Ուրալ-Ալթայական) մշակոյթների փոխազդեցութիւնների կենտրոն ու շատ դէպքերում՝ աղքիւ:

Անկախ սեպագրական փաստաթղթերի պահած տուեալներից ու Սերձաւոր Արեւելքում յայտնաբերուած հնագիտական նիւթերից՝ Եփրատ ու Տիգրիս գետերը, որոնք Հայկական լեռնաշխարհ կապում են Միջազգետքի հետ (հիսիսից մինչեւ հարաւ), եղել են հաղորդակցութեան այն մեծ, բնական ու անօնչելի ուղիները, որոնց գոյութեան պայմաններում անիրապաշտութիւն կը լինէր չընդունել մարդկային քաղաքակրթութեան արշալոյսից ի վեր Հայկական լեռնաշխարհի ու Միջազգետքի միջեւ՝ ինչպէս մշակութային փորձի փոխանակումների, այնպէս էլ մարդկային որոշ խմբերի ու առանձին բախտախնդիրների տեղաշարժերի անխուսափելիութիւնը՝ մասնաւորապէս վերեւից (գետերի հոսանքով) դէպի վար, ցուրտ լեռներից դէպի աւելի բարեխառն կլիմայ ունեցող բերքի դաշտերը: Հայկական լեռնաշխարհի, յատկապէս Արեւմտեան Հայատանի նախառարտական հին ժամանակաշրջանը մուր է տակաւին՝ մնացած լինելով հնագիտական հետազոտութիւնների ուշադրութեան կենտրոնից դուրս:

Եթէ աչք նետենք Եվրոպայի ու Ասիայի ընդհանուր քարտեսում (տե՛ս համար 7) հնդեւրոպական ժողովուրդների տարածման շրջանների վրայ (Եվրոպա, Փոքր-Ասիա, Հայկական լեռնաշխարհ, Իրան, Աֆղանստան ու Հնդկաստան), ապա կը տեսնենք, թէ Հայկական լեռնաշխարհը գտնուում է այս ամբողջի կենտրոնական շրջանում: Գիտութեանը յայտնի տուեալները Իրանում ու Հնդկաստանում հնդեւրոպախոս ժողովուրդների կանխագոյն առկայութիւնը տանում են մ.թ.ա. II հազարամեակ (Իրանում II հա-

զարամեակի սկզբները, իսկ Հնդկաստանում՝ կեսերը): Մեզ յայտնի է, թէ՝ այս ժամանակներում, հնդեւրոպականները առկայ էին նաև Փոքր-Ասիայում ու Եվրոպայում: Հետեւաբար, անառարկայական կը լիներ մտածել, որ այդ նոյն ժամանակներում՝ հնդեւրոպականների տարածման այս երկու մեծ թերի (Չրջանների) արանքում ու կենտրոնում գտնուող Հայկական լեռնաշխարհը հնդեւրոպականութեան համար հանդիսացած լինի դատարկ տարածութիւն: Մի՞՞թէ կարելի է ընդունել թէ նշուած ժամանակաշրջանում հնդեւրոպականների համար ինչ որ անանցանելի պատ էր քաշուած Հայկական լեռնաշխարհի թէ արեւելքում (Իրանի կողմում) եւ թէ արեւմուտքում (Փոքր-Ասիայի կողմում):



Քարտէս 7: Հնդեւրոպականների տարածման շրջաններ

Հայկական Բարձրաւանդակի լեռնաշղթաները ձգուած են լնդհանրապէս արեւելք-արեւմուտք ուղղութեամբ: Բացի Վասպու-

բական-Զագրոս լեռնաշղթայից (որ ձգուած է հիւսիս-հարաւ ուղղութեամբ), Հայկական Պարզ, Ծաղկանց եւ Բիւրակնեան լեռնաշղթաները, Հայկական Տաւրոսը, հայկական միս լեռնաշղթաները, անգամ Պոնտականն ու Կաշխարին, որոշ տեղեր փոքր թեքումներով հանդերձ, ձգուում են արեւելք-արեւմուտք ուղղութեամբ: Գրեք նոյն ուղղութիւնը ունեն Արաքսը, Վերին Եփրատը, Արածանին եւ այլ գետեր: Այս դրուածքը նպաստել է Կասպից ծովի շրջանների եւ Փոքր-Ասիայի միջեւ երկվողմանի անցումներին Հայկական լեռնաշխարհի վրայով: Հետեւարար, դժուար է ընդունել թէ հայկական այս կենտրոնում եղել է հնդեւրոպականների խզում՝ հնդիրանական ու Փոքր-Ասիական թեւերի միջեւ:

Հայկական լեռնաշխարհի հին տեղանուններից շատերը դեռ պահում են հայ ժողովոյի կազմի մէջ եղած հնդեւրոպականների հին առկայութեան հետքերը: Օրինակ՝ Հայաստ-Ազգին, հնդեւրոպական-հայկական հին ցեղերից եղող մուշկերից մնացած Մուշը, հայկական հզոր բալերից մնացած Բաղր գաւառանունը, Բաղէշը (Բիթլիս), Բաղանովիտը, Բալուն, Աշտիշատը (Աշտու-Աստուածի քաղաքը) եւ նոյնանիշ Աշտուխնին, Ուլուրի-Էրիունին, Արամալի-Արմարիին, Առերանին, Արածանին, Էրիախնին, Արագածը եւ հայկական Ար (Արա) արմատով բաղադրուած բազմաթիւ այլ տեղանուններն ու ցեղանունները աներկայելիօրէն խօսում են տեղաբնիկ հնդեւրոպական հայերի հին առկայութեան մասին:

Մի շարք այլ երեւյթներ ցոյց են տալիս, թէ Հայկական լեռնաշխարհը խոր անցեալում եղել է հնդեւրոպախօս ժողովուրդների բնակավայր: Այլապէս, մի կողմ թողած բազմաթիւ երեւյթներ ու հարցեր, սումերահայ լեզուամշակութային կապերը կը դառնային առեղծուած: Մանաւանդ, անկախ այդ բոլորից, անխուսափելիօրեն պիտի ընդունել, թէ հնդեւրոպականները գոյութիւն են ունեցել Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. III հազարամեակին, քանի որ այն եղել է անցուղի կամ (նրա արեւելեան մասը) մեկնակէտ հնդիրանականների համար, որոնց՝ Իրանի սարահարթի վրայ յայտնուելը դնում են II հազարամեակի սկզբներին:

Կրօնա-մշակութային եւ լեզուական որոշ տուեալներ ցոյց են տալիս, թէ հնդեւրոպական մայր լեզուի տրոհման ու բաժանման նախորդող կամ սկզբի օրերի դրութեամբ, հայերի (որպէս լեզուաշխարհագրական ամենամօս հարեւաններ) հարաւ-արեւմուտքում գտնուել են յունականները, իսկ արեւելքում կամ հարաւ-արեւելքում՝ հնդիրանականները:

Հայկական լեռնաշխարհը, հնդիրանականների համար, որպէս հարեւան կամ մեկնակէտ, դուրս է մնացել գիտական մտքերից՝ այն պատճառով, որ նախապէս հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքը տեղադրում էին Սիցին Ասիայում ու յետոյ էլ Սեւ Ծովի հիւսիսային ափերում (Ուկրաինայում): Որով՝ գիտական գրականութեան մէջ մտցրել էին այն վարկածը, թէ հնդիրանականները պիտի իրանական սարահարթ անցած լինեն Սիցին Ասիայից կամ Կովկասից: Այս վարկածն էլ գիտական մտածելակերպում դարձել էր նախապաշարմունք, ու չի փոխուում անգամ երբ հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքը տարան Հիւսիսային Երոպա ու յետոյ իջեցրին Բալկաններ, եւ նոյնիսկ հիմա, երբ այն վերջապէս դրուում է իր ճիշդ տեղում՝ Փոքր-Ասիայում ու Հայկական լեռնաշխարհում:

Ինչպէս պարզ երեւում է աշխարհագրական իրական պատկերից, Հայկական լեռնաշխարհը գտնուում է հնդեւրոպականների տարածման շրջանների կենտրոնում, իսկ հնդեւրոպական այս աշխարհն իր այս հայկական կենտրոնից (անգամ հնդեւրոպական մայր լեզուի տրոհումից առաջ) Տիգրիս ու Եփրատ գետերի միջոցով՝ հեշտութեամբ է կապուել Սիցագետքի հին ժողովուրդների (նրանց թուում եւ սումերականների) հետ: Քանի որ այդ խոր անցեալում, հաղորդակցութիւնների նախնական (պրիմիտիվ) պայմաններում (երբ ժողովուրդների միջեւ շփումները սահմանափակուում էին գրեթէ միայն կիմայի կամ եղանակների հետ կապուած քոչուրական շարժումներով), ծովերն ու հզօր լեռնաշղթանները յարաբերաբար հանդիսանում էին դժուարանց պատուար:

Ահա աշխարհագրական այս դրուածքի եւ ժողովուրդների տեղաբաշխման այս պատկերի ֆոնի վրայ պիտի դիտել հայ-սուբարի-սումեր յարաբերութիւնները: Այս ֆոնի վրայ պիտի դիտել

նաեւ հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքի տեղադրման ու Սի-  
ջազգեստի հին ժողովուրդների հետ կատարուած լեզուա-մշակու-  
թային փոխյարաբերութիւնների ու փոխազդեցութիւնների հարցը:

Հնդեւրոպականների տարածման այս պատկերի վրայ, Սի-  
տաճնին մի կողիացած ու անբացատրելի երեւոյք չէ: Սակայն Սի-  
տաճնին, իր հնդեւրոպական (ասում են հնդիրանական) յատկա-  
նիշներով, գրութիւնների համար խուրրի լեզուի տիրապետութեան  
պայմաններում, զիտնականների համար դարձել է առեղծուած,  
դա էլ հենց խուրրիններն են իրենց ոչ-հնդեւրոպական, ոչ-սեմական  
եւ ոչ-սումներական լեզուով:

Դժուար է ընդունել որ հիւսիսի լեռնային-հնդեւրոպական եւ  
հարաւի դաշտային-սեմական աշխարհների արանքում կարող էր  
ի ծնէ գոյացած լինի ոչ-հնդեւրոպական եւ ոչ-սեմական մի խուր-  
րիական բնիկ նեղ շերտ: Հենց այս էլ կարելի է փաստ համարել թէ  
սուբարինները խուրրի չեն, քանի որ բնիկ են համարուում:

Սիտաճնիի արքանները կրել են հնդեւրոպական (ասում են  
հնդիրանական) անուններ: Սիտաճնիում պաշտամոնքի առար-  
կայ են եղել, այլ աստուածների կարգին, հնդիրանական համա-  
րուող *Միթրա, Ինդրա, Վարունա, Նասաստեա* եւ այլ աստուածներ:  
Սիտաճնիում յայտնի էին նաեւ իրենց ռազմակառքերով նշանա-  
տոր մարդիաննա կոչուած ազնուական ասպետները, որոնց գուգա-  
հեռները, նոյն անունով, գտնում ենք նաեւ Հնդկաստանի վետայա-  
կան հնագոյն U. Գրրում (մօտ 1500-1000 մ.թ.ա.):

Այս երեւոյքներից պէտք չէ ստանալ այն տպաւորութիւնը, թէ  
մ.թ.ա. II հազարամետակի առաջին կէսին՝ Իրանից գալով հնդեւրո-  
պականներից դատարկ տարածութիւն են մտել հնդիրանական  
մշակոյթը կրողներ ու հաստատուել Սիտաճնիի գահի վրայ: Սի-  
տաճնիի բուն հողերը, իրենց Վաշշուկաննի, Taida (Մարդինի  
մօտ), Նիսիրին եւ այլ կենտրոններով հանդերձ, հանդիսացել են  
հարաւային մասը Հայկական (հնդեւրոպական) լեռնաշխարհի:  
Եթէ հնդեւրոպականների շարժում է եղել, ապա դա եղել է ոչ թէ Ի-  
րանից դէպի Հայկական լեռնաշխարհ ու Սիջագետք, այլ, ընդհա-  
կառակը, այստեղերից դէպի Իրան:

Հին աղբիւրներում հանդիպում ենք նշումների, թէ Հայկական լեռնաշխարհում, Հիսխային Սիրիայում ու Միջազգեստում եւ Փոքր-Ասիայում եղել են Ari եզրով բաղադրուած տեղանուններ եւ անձնանուններ, որոնք վերաբերում են մ.թ.ա. III եւ II հազարամետակներին: Երէ կարելի լինի կաա տեսմել այս Ari եւ հնդիրանական arya (Aria) եւ Iran անունների միջեւ, ապա դա կը լինի շօշափելի փաստերից մին, թէ որ կողմից են գաղթել այդ հնդեւրոպականները դէաի Իրան ու Հնդկաստան:

Միտաննիի հարցերի յայտնի գիտակ R. O'Callaghan-ը, որը թէեւ գտնուելով հնդեւրոպական մայր լեզուի հայրենիքի տեղի մասին հին վարկածների ազդեցութեան տակ՝ չի կարողանում վերջնականօրէն ճշդորշել հնդիրանականների գաղթի բուն ուղին, գտնում է, թէ հնդիրանական կոչուած տարրեր հնդիրանական բուն շարժումից առաջ էլ գտնուել են Միջազգետորում: Ասա թէ ինչ է զրում այդ մասին. «In connection with the time of this Indo-Aryan irruption it would appear desirable to treat also of the geographical route these invaders followed into Mesopotamia. Since, however, this problem may be said to hang together with the much larger one of the original home of the Indo-Europeans, about which there is still so much uncertainty, we shall not try to decide here whether it was via the Hellespont, the Caucasus, Turkestan or by any other path that these people came into the Fertile Crescent. Yet, within the scope of our study, it is important to emphasize that these personal names show there was an early wave of Indo-Aryans migrating into Mesopotamia several centuries in advance of an Iranian movement proper. This is a conclusion of great value which must be taken into account in any new investigation of those problems of more amply scope which are referred to here»<sup>1</sup>:

Ոմանք խնդիրը մերք այնպէս են ձեւակերպում՝ կարծես հնդիրանական մշակոյթը հնդեւրոպական ընդհանրութիւնից բոլորովին անկախ երեւոյք էր, եւ այն ինչ հնդիրանական է՝ ոչ մի կապ չունի հնդեւրոպականի հետ: Ծիշդ է, թէ հնդեւրոպական մայր լե-

---

<sup>1</sup> AN, 69:

զուի տրոհումից բաւական ժամանակ յետոյ իրարից բաժանուած ու աշխարհագրականօրէն հեռացած ճիւղերը իրենց որդեգրած նոր երկրներում, տեղի պայմաններից ազդուելով ու տեղի քնիկներից օգսուելով, կարող էին զարգացնել մշակութային իրայատուկ նորութիւններ, սակայն Հայկական լեռնաշխարհը ուղղակի հարեւան է Հիսխսային Իրանին, ուր նախապէս պիտի գտնուած լինեն եւ իին հնդկերէնի կրողները՝ Հնդկաստան զաղթելուց առաջ: Մանաւանդ որ՝ սա դեռ այն ժամանակներն էին, երբ հնդիրանականները նոր էին հեռացել Հայկական լեռնաշխարհից: Անբնական կը լինէր, ուրեմն, եթէ այդ հարեւան ու ազգակից աշխարհների միջեւ դեռ պահպանուած չլինէին մշակութային ընդիհանրութիւններ: Հետեւարար, Միտաննիի հնդիրանական կոչուած երեւյթները պիտի դիտել հնդեւրոպական ընդիհանուր շրջանակի մէջ: Հնդիրանական կոչուած աստուածները յայտնի էին նաև հնդեւրոպական այլ ժողովուրդների մօս՝ Փոքր-Ասիայում: Խեթական հնագոյն արձանագրութիւններում նշմարելի են անգամ հնդիրանական կոչուած անձնանուններ<sup>1</sup>: Նոյն դրութիւնը պիտի գոյութիւն ունեցած լինի նաև Հայկական լեռնաշխարհում: Բայց եթէ այդ մասին ուղղակի տեղեկութիւններ չունենք, պատճառը այն է, թէ Հայկական լեռնաշխարհը դեռ դուրս է մնում հնագիտութեան հետաքրքրութեան բուն շրջանակից:

R. O'Callaghan-ը հաւասարում է. «The winged sun-disk, which is most typical of Mitannian glyptic, and the ‘nh symbol came by way of Syria from Egypt and the supporting «pillar of heaven» was an Indo-European legacy»<sup>2</sup>:

*Մարիաննաս*<sup>3</sup> կոչուած ձիաւոր ասպետները չեն ծագել Հնդկաստանում, ոչ էլ ձին ու կառքը եկել են Հնդկաստանից: Հայաստանում՝ մ.թ.ա. III հազարամետակին վերաբերող մի քանի վաղ

<sup>1</sup> Նոյն:

<sup>2</sup> Նոյն, 72:

<sup>3</sup> Այստեղ հետաքրքրական է նշել, թէ անգլերէնում՝ էգ ձին կոչուում է mare (անգլապատճերէն mere): Գերմ. Mahre եւ խալանտերէն marr նշանակում է «ձի»: Անհաւանական չէ, որ սրանց հետ կապ ունեցած լինի նաև հայ մարագ (զաւառականներից՝ մարաք, մարա) «յարդանց» բառը:

բրոնզեղարեան (Շենգավիթ, Գառնի, Էլար Եւայլն) հնավայրերում յայտնաբերուել են ձիու ոսկորներ եւ քարէ արձաններ<sup>1</sup>: Սկավառակածեւ անհիների ու սայլերի քարէ եւ կատէ մողելներ են յայտնաբերուել Շենգավիթի, Ծրեշ-բլուրի, Գառնիի եւ հնագիտական այլ վայրերի՝ III հազարամետակին (վաղ բրոնզէ դարին) պատկանող շերտերում<sup>2</sup>: Միրիայում յայտնաբերուել է սայլի բրոնզէ մողել (գտնուում է Ստոկհոլմում), որը թուագրուում է 2000թ. մ.թ.ա.<sup>3</sup>: Անգամ Մարիի եւ Զագար-բազարի նիթերը ցոյց են տալիս թէ ձիակառքը ծանօթ էր այդ վայրերում 18-րդ դարում մ.թ.ա.<sup>4</sup>:



Անիսի կատէ մողել. Ծրեշ-բլուր:

Մարիաննա կոչուած ձիաւոր ասպետներին գուցէ պիտի կապել աւելի սուրարիների հետ: Այս կապակցութեամբ նշեմ, թէ ա-

<sup>1</sup> ՀԼՄ, 40-42:

<sup>2</sup> Նոյն, 39:

<sup>3</sup> Նոյն:

<sup>4</sup> AN, 69:

բարերէնում ու պարսկերէնում պահպանուել է suwāri («հեծեալ հեծելազօր») բառը, որը հաւանաբար պահում է Subari (>suwari) անուան յիշատակը:

Պիտի ասել թէ՝ Սիտաննական պետութեան ժամանակներում, նրա երկրի ժողովուրդը (էքնիկապէս) միատարր չէր: Սիջագետքում, Սիրիայում եւ Փոքր-Ասիայում յայտնաբերուած սումերական, ասուրաբարելական, խուրրիական ու խեթական արձանագրութիւնների տուեալները ցոյց են տախս, թէ Սիտաննիում կային հնդեւրոպական, խուրրիական, աքքաղա-սեմական եւ (հաւանաբար թիշ քուով) սումերական կամ սումերախոս ժողովուրդներ:

Մի շարք տուեալներ ու երեսյքներ թելարրում են ընդունել (գիտութեան մէջ էլ արդէն ընդունուած է), թէ խուրրինները տեղաբնիկ չեն, այլ՝ եկուորներ: Նոյնը պիտի ասել Հիւսիսային Սիջագետքի աքքաղական տարրերի մասին: Հետեւաբար, որպէս տեղածին բնիկներ մնում են իշխող հնդեւրոպական-սուրարի-նախեանները:

Այս հարցին կարելի է նայել նաև հետեւեալ կողմից. Սիտաննիի մայր երկիրը գտնուում էր քուն Սուրարի երկրի հիւսիսային ու հիւսիս-արեւմտեան շրջանում: Ինչպէս տեսանք, մի շարք ականատոր գիտնականներ գտնում են, թէ խուրրիններն ու սուրարինները տարրեր ժողովուրդներ են, եւ քանի որ խուրրինները եկուոր են, ապա սուրարինները (որ անյիշելի ժամանակներից առկայ են) տեղաբնիկ նախեաններ են:

Սիտաննիի իշխանութիւնն էլ պիտի գտնուած լինի հենց այս բնիկ տարրի՝ սուրարի-նախեանների վերնախափ ձեռքում, թէեւ երկրում մեծ չափերի էր հասել խուրրի բնակչութիւնը:

## 2. ՀՆԴԵՒՐՈՊԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ԽՈՒՐՐԻՆՆԵՐԸ

Սուրարտուն, Մերձաւոր Արեւելքում գրաւելով ուազմագիտական կարեւոր դիրք, լինելով հարավի ու հիւսիսի (Սիջագետքի ու Փոքր-Ասիայի) ուազմական ու մշակութային շփումների անցուղի՝


II հազարամեակից առաջ (մ.թ.ա.), որպէս հաղորդակցութիւնների գրաւոր լեզու, օգտագործած պիտի լինի սումերերէնն ու աքքարէնը: Սակայն Միտաննական մեծ պետութեան կազմաւորումից առաջ եւ յատկապէս նրա ժամանակ, որպէս գրաւոր լեզու գործածութեան մէջ է մտել նաև խուրրիերէնը՝ Սերձաւոր Արեւելքում եւ յատկապէս այդ շրջաններում խուրրիական եկուոր մեծ բնակչութեան գոյացման պայմաններում:

Հնդեւրոպական մայր լեզուի տրոհման անմիջապէս նախորդող կամ սկզբի ժամանակաշրջանում, Սերձաւոր Արեւելքում ժողովուրդների տեղաբաշխումը պիտի ներկայացրած լինի մօտաւորապէս հետեւեալ պատկերը. հիսկանում՝ Փոքր Ասիայի կենտրոնական ու արեւելեան շրջաններում, Հայկական լեռնաշխարհում, Իրանի հիւսիս-արեւմտեան ծայրամասում եւ սրանց կից հարաւում՝ Հիւսիսային Միջազգետքում ու Հիւսիսային Միրիայում գտնուում էին սեմիտները. նշուած հիւսիսային լեռնաշխարհի հարաւային շրջաններում՝ Եփրատի ու Զագրոսի միջեւ՝ Սուրարտուն: (Կարելի է ասել թէ հիւսիսային լեռնաշխարհի՝ սեմական հարաւի հետ շփման շրջանները կոչուել են Սուրարտո): Զագրոսից (Ուրմիոյ լիճ-Սանանդաջ գծից) անմիջապէս արեւելք գտնուում էին խուրրիները. Պարսից ծոցի ու Բարելոնի միջեւ ընկած Միջազգետքեան տարածութիւնում՝ սումերները, իսկ սրանցից արեւելք՝ Էլամացիները (տե՛ս քարտէս 8):

Որոշ փոքր խուրրի տոհմեր կամ բախտախնդիրներ, մ.թ.ա. III հազարամեակին, սկսել են թափանցել Զագրոսից արեւմուտք եւ քիշ-քիշ հաստատուել Զագրոսի ու Տիգրիսի միջեւ՝ Դիյալայի եւ Արեւելեան Խարուրի արանքում<sup>1</sup>: Այս շրջաններից, առանձին խուրրի անհատներ կամ փոքր խմբեր, վաճառականական կամ այլ խաղաղ գործունեութիւններով ու մերք որպէս վարձկան զինուորներ, III հազարամեակի կեսերից, թափանցել են դէպի արեւ-

<sup>1</sup> R. O'Callaghan-ը գրում է. «...gradual infiltration of Hurrians in the Old Accadian period between the Tigris river and the Zagros Mountains» (AN, 44):

մուտք (Հիսկասային Սիջագետք եւ Հիսկասային Սիրիա) եւ դէպի հարաւ (Բարելոնիա՝ Երեւնալով անգամ Ամուրիական տարածութիւններում՝ Եփրատի ու Սիջերկրականի միջեւ:



Քարտես 8: Սիջին Արեւելքը մ.թ.ա. IV հազարամետկի վերջերին:

Իսկ հիւսիսում, հնդեւրոպական մայր լեզուի տրոհման ժամանակներին, հնդեւրոպական որոշ խմբեր սկսել են շարժուել Հայկական լեռնաշխարհի հիւսիսային շրջաններից՝ Կովկասով դեպի վեր, իսկ արեւելեան ծայրամասերից դեպի հարավ՝ դեպի Իրանի հիւսիս-արեւմտեան շրջանները:

Այսուհենդերձ, հնդեւրոպականների զանգուածային շարժումները Հայկական լեռնաշխարհի արեւելեան շրջաններից եւ Իրանի հիւսիս-արեւմտեան ծայրամասից դեպի Իրանական Սարահարք (յետոյ էլ դեպի Հնդկաստան) սկսել է մ.թ.ա. II հազարամեակի սկզբներին՝ այդ շրջաններում նրանց կուտակումների պատճառով։

Այս ժամանակներում է, որ խուրրիական մեծ խմբեր, զանգուածային կերպով քշուել-շարժուել են Զագրոսից դեպի արեւմուտք, Ասորեստանեան շրջանները, Զագրոս լեռնաշղթայի ու Տիգրիսի միջեւ ընկած տարածութիւնները։ Երեւի Զագրոսի վրայով դեպի արեւմուտք խուրրիական այս մեծ հոսանքի առաջ է, որ կասսիտները քշուել-շարժուել են դեպի Բարելոն։ Եւ ահա այս շրջաններից է որ խուրրիները, Համմուրաբիի ժամանակներում եւ յատկապէս նրանից ու Շամսի-Աղադ Ա-ից յետոյ, II հազարամեակի II քառորդի ընթացքում, զանգուածային զաղթականութիւններով ողողել են Հիւսիսային Սիջագետքը, Հիւսիսային Սիրիան եւ Սիցերկրականի ափամերձ շրջանները՝ Ալալախի եւ Ուգարիտի կողմերում։

Խուրրիական զաղթերի այս մեծ ալիքները Հիւսիսային Սիցագետքից քափանցել են նաև Հայկական լեռնաշխարհի հարաւային՝ սուբարիական շրջանները (Մուսասիր-Կորդոր-Կաղմուխի) եւ որոշ քանակով էլ աւելի հիւսիս՝ դեպի Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջաններն ու խորքերը<sup>1</sup>։ Իսկ Հիւսիսային

<sup>1</sup> Սեւանայ լճից արեւելք գտնուած Արիա շրջանի անունը (տե՛ս ՅԿՀ, 420) գուցէ պահում է իրանական Արեա անուան յիշատակը (տե՛ս եւ մեր քարտեսը, համար 4):

Վանայ լճից հիւսիս-արեւմուտք գտնուում էին Խոռխոռունիները։ Խոռ-խոռ(ունի) անունը կրկնաւոր բառ է։ Արմատի կրկնութիւնը հին յոզնակի ձեւ էր. որով

Միրիայից թափանցել են դէպի Անատոլիական տարածութիւններ, յատկապէս Kizwatna (Կիլիկիա)<sup>1</sup>: Իսկ հարաւում նրանց ներկայութիւնը զգացուել է Բարելոնական եւ Ամուրիական շրջաններում եւ անգամ՝ Եգիպտոսում:

Պատմագրութեանը յայտնի է, թէ Ծամսի-Աղադ Ա-ից (1748-1716) յետոյ Ասորեստանը միանգամից լռում է, եւ այդ լռութիւնը տեսում է 200 տարի: Այս ժամանակաշրջանից մեզ չի հասել ասորեստանեան որեւէ յիշատակելի արձանագրութիւն: Սա ցոյց է տալիս, թէ այս ժամանակաշրջանում տեղի են ունեցել անսովոր իրադարձութիւններ, որ խանգարել են երկրի սովորական կեանքը:

Արդէն յայտնի է թէ Ա հազարամեակի կէսին (մ.թ.ա.) Ասորեստանը գտնուում էր Միտաննական պետութեան գերիշխանութեան տակ: Անգամ Աշսուր-Uballit I-ը (1362-1327 մ.թ.ա.) խօսում է իր նախորդի (իր հօր) վրայ տիրութիւն անողի մասին՝ նրան կոչելով «Հանիզալբատի արքայ»: Սա ցոյց է տալիս, թէ Ասորեստանը դեռ իր հօր ժամանակ գտնուած է եղել Հանիզալբատի (Խուրրի-Միտաննիի) գերիշխանութեան տակ:

Այս բոլորը մտածել են տալիս թէ խուրրիների խանգարիչ ու աւերիչ ալիքի թափը ազդել ու յետոյ էլ մարել է Ասորեստանի վրայ: Այնուհետեւ նրանք դարձել են խաղաղ ներթափանցողների գաղթականութիւն ու մտել հնդեւրոպականների ծառայութեան տակ կամ միացել են նրանց հետ որպէս դաշնակիցներ:

Նրանք, Հիւսիսային Միջազգետքում աճելով, աստիճանաբար ընդգրկուել են երկրի ընկերային-տնտեսական կեանքում եւ դարձել մասնակիցներ:

Ովքե՞ր էին խուրրիները - ներկայ պայմաններում դժուար է այս հարցին տալ ճշգրիտ պատասխան: Ինչպէս յայտնի է, ոմանք սուրարիներին համարում են խուրրի: Ոմանք էլ, առանց փաստական հաստատում հիմքի, տիրող անորոշութիւնից դուրս գալու միտումով ու ենթադրութիւնները համարելով ապացոյց, խուրրիերէնին եւ ուրարտերէնին վերագրում են կովկասեան ազգակցութիւն:

Խոռոխո՛ նշանակում է «խոռեր»: Ըստ երեւյթին, այս անուան մէջ պահուած է խուրրի անունը:

<sup>1</sup> HS, 68:

Անգամ հակառակ այն իրողութեան թէ նախախեթական խաթերենի հնչինաբանութիւնը դեռ անյայտ է, ուզում են կապ տեսնել նրա ու կովկասեան լեզուների միջեւ: Այսպիսով, III եւ II հազարամեակներին (մ.թ.ա.), Սիցագետքում, Հիւսիսային Սիրիայում, Հայկական լեռնաշխարհում, Կենտրոնական, Հիւսիսային ու Արեւելեան Անատոլիայում ամէն տեղ ու մեծ մասամբ կովկասեաններ տեսնելու պատրանքին մեջ են ընկնում: Պատճառաբանութիւնները հիմնուում են լեզուական-քերականական այնպիսի նմանութիւնների վրայ, որոնց տեսակները կարելի է գտնել իրարից տարբեր ու օտար որեւէ երկու լեզուների միջեւ: Խուրրիները ազգակցական կապ չունեն կովկասեանների հետ:

Հաւաստի (կոնկրետ) տուեալների բացակայութեան պատճառով, դժուար է նաև հաստատ բան ասել խուրրի անուան իմաստի կամ ծագման մասին:

Ըստ A. Ungnad-ի՝ խուրրի նշանակել է «միութիւն» կամ «դաշնակիցներ» կամ նման մի բան<sup>1</sup>: Եթէ ճիշդ լինէր այս վարկածը, որոշ չափով կը յարմարուէր խեթերի Սուպափլուկումա եւ Սիտաննիի Մատտիուազա արքաների միջեւ կնքուած յայտնի դաշնագրում Սուպափլուկումայի «... եւ դուք, խուրրի մարդիկ...» խօսքերին, որոնք նշանակած կը լինէին «... եւ դուք՝ (Մատտիուազայի) դաշնակիցներ...»: Սակայն, այլ եւ առանձին տեղեր այս իմաստը չի յարմարուում, ինչպէս երբ առհասարակ ասուում է «խուրրի բառ» կամ «խուրրի մարդ» եւ կամ երբ խեթերը ասում են «խուրլիլ» («խուրրի լեզու») եւլն.: Այսուհանդերձ Ungnad-ը, իր այդ մեկնաբանութեամբ, ընդունած է լինում թէ, խուրրի եզրը չունէր ցեղագրական արժեք:

Սա արդէն ուժեղացնում է իմ այն կասկածը, թէ խուրրիները՝ իրենց տրուած այս խուրրի անունը կարող է բերած չինէն իրենց հետ, այլ, կարծես, որդեգրած լինեն՝ դատնալով Սիցագետքի հիւսիսում բարձրացող Ուրուատրի-Hurum երկրի բնակիչները: Որովհետեւ, նախ, այդ երկիրը, ինչպէս զիտենք, մ.թ.ա. III հազարամեակի սկզբներին արդէն (Aratta-Erech դիցազնավէպում) կո-

---

<sup>1</sup> AN, 39:

շուտում էր Hurum, երբ խորրիները դեռ չին եկել այդ երկիրը իրենց անունով կոչելու չափով ու գործօնութեամբ. երկրորդ՝ Hurum անունը կարող է եղած լինել հոմանիշ եզր՝ *Ուրուասորի* անուան, որ լինելով աշխարհագրական եզր՝ շունի էթնիկ արժեք:

Իմ նախորդ (ՀԺԾ, 57-58) եւ այս աշխատութեան մեջ մի քանի տարբեր առիթներով ցոյց եմ տուել, թէ Ուրուատրի (Կորդուր) լեռներկիրը՝ իր հրաբխային գործունեութեան պատճառով է որ կոշուել է Ուրու-ատրի («վայր կրակի»): Այս իրողութեան համար այստեղ կը բերեմ միայն հետեւեալ փաստը: Ասորի պատմագիր-մատենագիր Մար-Աքայի մատենանում (տե՛ս Խորենացի Ա-Ժ) *Ուրուատրի* անունը երեւում է *Արարադ*<sup>1</sup> ձեւով: Իսկ Աստուածաշնչի Հին Կտակարանի հայերէն («Եթօանասնից») թարգմանութեան մեջ գրուած *Արարադ* անուան տեղ՝ ասորական հնագոյն («Պեշիտո») թարգմանութեան մեջ գրուած է *Կարդու*: *Կ-արդու* եզրը գալիս է Ki-ardu («վայր կրակի») ձեւից, որը հայ մատենագրութեան մեջ նշուում է Կորդուր անուամբ: Պարզ է, թէ Ki-ardu եզրը համընկնում է Urus-atri > Ur-ardu («վայր կրակի») անուան հետ, որի սր (կամ ur) բաղադրիչը համապատասխանում է սումեր ki («վայր») բառին, ardu-ն էլ սումեր ar-du բառաձեւին, իսկ atri/ardu/artu եզրի աշտ ձեւը (հմնտ. Ur-artu = Ur-aštū) համապատասխանում է արդէն արքադերէն išatu («կրակ») բառին: (Արդէն *Ուրարտու* անուան *Ուրաշտու* ձեւը երեւում է Բեհիստունի արձանագրութեան աքքաղական օրինակում): Ki-ardu > Կ-արդու անցուում համեմատել սումեր ki-mah > հայ կ-մախ (կմախ) անցման հետ, ուր ki-mah նշանակում է «վայր մահացածի» (= աքքաղերէն kuburu = արաք. kabrun («զերեզման»)):

Մուսասիրը նոյնպէս, իր հրաբուխի-կրակի աստուած Խալդիի (Ալդիի) տաճարով, կոչուում է Ardi-ni, որով կազմուած է Ki-ardu (Կարդու) կամ *Ուրու-ատրի* անունը: Ուստի, այս Ուրուատրի լեռնաշղթան երկարում է Կորդուրից մինչեւ Մուսասիր: Պարզ է ուրեմն, թէ այս երկու շրջանները, որոնց բաժանում է լոկ Սեծ Զաքը, հանդիսանում են մի լեռնաշխարհային ընդհանրութիւն, եւ հենց

---

<sup>1</sup> Այս Արարադ-ը պէտք չէ շփոթել Վերեւում Արաքս գետի մօս եղած Մասիսի հետ, որը կոչուում է Արարատ (առաջինը դ-ով, երկրորդը՝ տ-ով):

այս լեռներկիրն է, որ կոչուել է Hurum: Ինչպէս պարզ երեւում է, Hur-um անունը, ներկայացնելով այս Uru-adri (Ki-ardu «վայր կրակի») երկիրը՝ կարող է լինել նրան հոմանիշ եզր՝ նոյնպէս «կրակի վայր» իմաստով: Հետեւարար, անհաւանական չէ, որ այս անուան մէջ նատած լինի բնիկ հայ հոյր («կրակ») բառը:

Hurum (*<ուր-ուս*) եզրի մէջ հայերէն հոյր («կրակ») բառը տեսնելու դէմ կարող է լինել այն առարկութիւնը, թէ հնդեւրոպականները հայ հոյր բառը (ենթադրաբար) ծագած են համարում հնդեւրոպական ruro- ձեւից. բայց, անգամ եթէ դա ճիշդ է, յայտնի չէ թէ ե՞րբ է տեղի ունեցել ruro- > հոյր անցումը: Ծատ հաւանական է որ դա կատարուած լինի III հազարամեակից առաջ<sup>1</sup>: Այնպէս՝ ինչպէս եթէ ճիշդ են հնդեւրոպական ver > հայ. *զարուն*, *րլա* > *լալ*, *րօն* > *ոս* եւ այլ անցումները, ապա դրանք պիտի տեղի ունեցած լինեն III հազարամեակից առաջ (մ.թ.ա.), բանի որ սումերերէնը պահել է գարուն = *gurun*, *լալ* = *ellu*, *ոս* = *du* եւլն. բառերը գրեթէ նոյնուրեամբ:

Մանաւանդ որ, թէեւ Hurum անունը յիշող սումերական (Aratta-Erech) դիցազնավէպի բովանդակութիւնը վերաբերում է մ.թ.ա. III հազարամեակի սկզբներին, սակայն նրա տեքստը, հիմնուած լինելով աւանդութեան վրայ, գրուած է մ.թ.ա. II հազարամեակի կէսին<sup>2</sup>, երբ ruro- > հոյր անցումը կարող էր արդէն կատարուած լինել վաղուց, եւ այդ կրակի երկիրն էլ կարող էր արդէն վաղուց կոչուած լինել Hurum եւ այս անունով մտնել դիցազնավէպում:

Այսուհանդերձ, մեզ յայտնի է, թէ Թիգլաֆ-Պալասար Ա-ը այս Hurum երկիրը կոչել է Haria (միաժամանակ պիտի նշել թէ hur-ի աքքարդական սեպախումը ունի նաեւ *har-ի* արժէք): Հետեւարար այս կրակի երկրի Hurum/Haria անուան մէջ հոյր-ի հետ կարող է նատած լինել հայերէնի բնիկ խոյր («այրել, տաղել», որից խորովել) բառը (տե՛ս նաեւ սրա տարբերակ՝ խաղը, որից՝ խառոյկ): Սրանք նոյնպէս մաքուր հնդեւրոպական բառեր են եւ գալիս

<sup>1</sup> G. Pettinato-ն Էրլայի արձանագրութիւնների (մ.թ.ա. 2500) մէջ յիշուած hurmu բառը բարգմանել է «կրակներ» իմաստով, այսինքն՝ hur նշանակել է «կրակ» (տե՛ս AE, 150):

<sup>2</sup> SP, 111:

Են հնդեւրոպական qer-, qor-, qr- («այրել») արմատից, որի ժառանգներից են լատիներէն cremo («այրել»), carbo (< car-dho «ածուխ»), իին խլանդերէն hyrr («կրակ»), անգլոսաքսոներէն heord, հոլանդերէն haard («վառարան, օճախ»), գոթերէն hauri «ածուխ» եւլն.<sup>1</sup>: Հետեւաբար, անհաւանական չէ որ Uru-adri / Ki-ardu (Կարդու) եւ Ardi-ni («կրակի վայր») կոչուած երկրի Har-ia եւ Hur-um անուանումները բնիկ հնդեւրոպական կոչումներ եղած լինեն՝ զալրվ խոր անցեալից: Որով՝ անհաւանական չէ նաև, որ յետագայում խուրրի կոչուած եկուորները իրենց այս խուրրի անունը ստացած լինեն մ.թ.ա. II հազարամեակի կէսերին, կարեւոր ու գործունեայ բնակիչները դառնալով այս լեռներկրի:

Եթէ իմ այս բացատրութիւնը ճիշդ է, ապա Hurri անունը կապուած է այս հրաբխային լեռներկրի «կրակի երկիր» կամ «կրակեան երկիր» կոչուած լինելու հետ, եւ հիմնականում չուներ էթնիկական (լեզուացեղային) արժեք:

Արդէն Միտաննիի Tušratta արքան իր գրութեան մէջ խուրրի եզրը չի գործածել որպէս երկրանուն, այլ միայն որպէս իր երկրի բնոյքը նշող ածական հսրոհե եւ հսրոհե («հուրեան»)<sup>2</sup> ձեւով: Նա իր երկիրը կոչել է «հսրոհե երկիր» (=«կրակեան երկիր»)՝ անկախ նրա ցեղային բովանդակութիւնից կամ բաղադրիչ ցեղային տարրերից:

Բայց որովհետեւ Միտաննի պետութիւնը իր պաշտօնական գրութիւնների համար որդեգրել էր խուրրի կոչուող լեզուն (որ օգտագործուում էր նաև տեղ-տեղ Փոքր-Ասիայում), ապա խեթերը այդ լեզուն կոչեցին հurlili («խուրրի լեզու») եւ երկիրն էլ՝ հurla երկիր («կրակեան երկիր»), առանց հաշուի առնելու այդ երկրի էթնիկ բովանդակութիւնը կամ նրա բաղադրիչ ցեղային տարրերը:

<sup>1</sup> ՀԱԲ, տե՛ս խար եւ խոր (հմմտ. Խոռ եւ Խոռխոռունի անունները):

<sup>2</sup> IH, 2:

Այնպէս է բուում, թէ հսրոհե (< հսրոհե) բառաձեւի հսրո- բաղադրիչ -wo-ն մասնիկ կամ ածան է: Եթէ սա ճիշդ է, ապա հսրո- ձեւը կը յիշեցնի հայերէն խորով («կրակի վրայ այրել») բառը: (Հմմտ. նաև ուկրայներէն kurevo («կրակը հրահրել»)):

Այստեղ կարելի է նշել թէ պայման չէր, որ խուրրի ցեղերը ունեցած լինեին մի ընդհանուր անուն այդ հին օրերին:

Այսպիսով, ժամանակի ընթացքին, խուրրի եզրը ստացաւ գրեթէ էրնիկ արժեք՝ ներկայացնելով որոշ դէպքերում այդ լեզուն խօսողներին ու որոշ դէպքերում էլ այդ երկիրն ու պետութիւնը (նրան կոչելով Խուրրի կամ Խուրրի-Միտաննի), առանց հաշուի առնելու նրա էրնիկ կազմը: Իսկ երկիրն ու իշխանութիւնը պատկանում էին բնիկ հնդեւրոպականներին:

Միաժամանակ պիտի ասել, թէ Միտաննիի բոլոր կարեւոր կենտրոններում, Ուրմիոյ լճից մինչեւ Եփրատ, գլխաւոր տաճարները պիտի լինեին առաւելաբար կրակին (եւ կրակի հետ առնչուող հրաբուխին եւ անգամ արեւին) նուիրուած տաճարներ, ինչպէս Արդի-Շի (Մուսասիր) քաղաքի Խաղղեամ տաճարը: Արդէն Hurra (Hurra) եզրը միաժամանակ ներկայացնում էր մի (ցուլակերպ) աստուածութիւն<sup>1</sup>, մեծ հաւանականութեամբ, հրաբուխի (>ամպրոպի) -կրակի: Հետեւաբար, դիցարանական առումով, երկիրը ոչ թէ միայն «կրակեան երկիր» էր, այլ եւ կրակի տաճարների երկիր:

Յետագայում, Միտաննիի անկումից յետոյ, Ուրարտուում, երբ «խուրրիները» (Միտաննիի արձանագրութիւնների լեզուն կրողները) ձուլուել էին իին բնիկների հետ, երկրի կրակին նուիրուած ամէն մի տաճարային կարեւոր կենտրոն (ու նրան պատկանող երկիր) կոչուեց Biaina > Վան («կրակի վրայ» կամ «կրակի մեհեան»), (հմնտ. վան-ա-հայր, վան-երէց եւլն., իսկ այդպիսի տաճարների կենտրոններն էլ՝ Biaini-li («վան-եր»), մի կոչում՝ որ քրիստոնութեան ժամանակ մեզ հասել է արդէն վաճը ձեւով):

Միտաննիի ընկերային-ցեղային պատկերը աւելի ճիշդ ընկալելու համար պիտի աչքի առաջ ունենալ այն, թէ երկրի բնակչութիւնը միատարր չէր, այլ, ինչպէս արդէն նշել եմ, մի խառնուրդ էր, աւելի ճիշդը՝ մի հաւաքոյթ (symbiosis)<sup>2</sup> հնդեւրոպական, խուրրիական ու փոքր չափերով էլ աքքաղա-սեմական ու սումերախօս տարրերի: Միաժամանակ պիտի նշել, թէ խուրրիների զանգուածային ներգաղթները ծանրացրել էին խուրրի (կոչուած) տարրի կշիռը, յատկապէս նախրեան երկրների հարաւային շրջաններում:

<sup>1</sup> Սա յիշուել է Սուպպիլուկումա եւ Մատտիուազա արքաների դաշնագրում (տե՛ս HS, 51):

Միտաննի պետութեան բուն երկիրը գտնուում էր Ուրմիոյ լճի ու Եփրասի միջեւ: Միտաննի անկումից յետոյ, նրա ազգային բուն տարածութիւնների վրայ կազմուել էին աւելի մանր իշխանութիւններ, որոնք համընկնում են հենց *Սուրարտու երկրում* կազմաւրուած առանձին թագաւորութիւնների հետ, որոնց յիշել է Թուկուլքի-Նինուրտա Ա-ը (1243-1221 մ. թ.ա.) հետեւեալ ձեւով. «Այդ ժամանակ, Բարխին, Կուղմուխին, Բուշշին, Սումսին, Ազին, Սադանին, Նիխանին, Ալախան, Տերուրզին, Բուրուկովին՝ ամբողջ ընդարձակ Շուրարի երկիրը այրեցի կրակով ...»: Կասկած չկայ, թէ Սուրարի երկրի մէջ կազմուած այս թագաւորութիւնները ժառանգ-յետնորդներն էին մեծ Միտաննի թէ երկրի ու թէ ժողովրդի:

Սուրարի-Միտաննի տարածութիւնները ունեցան զլխաւորաբար երեք բաժանում. հարաւ-արեւելեան շրջանում՝ Ասորեստանը, հիւսիս-արեւելեան շրջանում՝ Ուրուատրին (որպէս կենտրոն՝ Մուսափի-Կուղմուխին), իսկ արեւմուտքում՝ Ալզի-Աղձնիքը (ԱրմեՇուրբիան): Մուսափի-Ուրուատրի-Կուղմուխի թեւը երկար շղիմացաւ հզօրացող Ասորեստանի յարատեն ճնշման տակ: Որով նահրեան ցեղերի ուազմաքաղաքական միութեան այս կենտրոնը (ոչ թէ ժողովուրդը) նահանջեց աւելի հիւսիս՝ Վանայ լճի շուրջ կազմելով Ուրարտական հզօր պետութիւնը<sup>1</sup>, որի արքաները իրենց կոչել են «Արքայ Նահրի երկրների»:

Իսկ ԱրմեՇուրբիան, ենթարկուելով Ասորեստանի եւ յաճախ էլ խեթերի ճնշումներին, մերք ենթակայ, մերք անկախ, շարունակեց իր գոյութիւնը որպէս պետական առանձին միաւոր, որին իր կազմի մէջ ընդգրկելու համար որոշ ճիգեր էր թափում Ուրարտուն՝ Ասորեստանի խանգարիչ ազդեցութեան պայմաններում: Այսու-

<sup>1</sup> Այս դեպքերը երեւի իրենց արձագանքն են ունեցել Խորենացու պատմութեան մէջ: Այդտեղ Մար-Աբայի մատեանից քաղուած հայկական դիցազնավէպում ասուում է, թէ Հայկը հարաւային շրջաններից (Ս. Գրքում նշուած աշտարակաշինութեան առասպելի ազդեցութեամբ՝ Բարելոնից) իր աղխով չուեց գնաց Արարադի (< Ուրուատրի) երկիրը, որ գտնուում էր (Բարելոնի նկատմամբ) հիւսիսային կողմերում: Հայկը այստեղ, լեռան ստորոտում, շինում է տուն (վարչական կենտրոն): Յետոյ, այս ժառանգ թողնելով Արամանեակի որդի Կաղմոսին (< Կաղմուխիին), շարժուում է դէպի հիւսիս-արեւմուտք եւ գալիս է մի բարձրաւանդակ դաշտ, որին կոչում է (կամ որը կոչուում էր) Հարք:

հանդերձ, Արմէ-Շուրբիան յետազայում վերամիաւորուեց կործանուած Ուրարտուի յետնորդ Մեծ Հայրի Արտաշէսեան պետութեան մէջ:

Պէտք չէ մոռանալ, թէ Նախրի բառը աշխարհագրական եզրէ: Ի սկզբանէ անտի նրա բնակչութիւնը եղել է հնդեւրոպական, բայց, ինչպէս նշել ենք, խուրբիական զանգուածային ներգաղթները փոխել են նրա միատարրութիւնը<sup>1</sup>: Կարծում եմ, թէ Միտաննիի հզօրութեան օրերին, երբ պաշտօնական գրութիւնների լեզուն խուրբիերէնն էր, երկրում տիրում էր երկլեզուանիութիւն (հնդեւրոպական եւ խուրբիական լեզուներ), հաւանաբար տեղ-տեղ էլ երրլեզուանիութիւն ասուրաբարելականի կամ սումերականի հետ միասին: Այսուհանդերձ՝ յետազայ դրութիւնը ցոյց է տալիս, թէ Վերջ ի վերջոյ յաղթանակել է բնիկների՝ իշխող նախրեանների հնդեւրոպական լեզուն:

### 3. ՀԱՅԵՐԵՆԸ ՄՆՈՒՄԵ ԱՆՊԱՐՏԵԼԻ

Հայտնի է արդէն, թէ հայ ժողովրդի կազմի մէջ հիմնականում գտնուում են նախրեան երկրների ժողովուրդները, որոնք բաղկա-

<sup>1</sup> Հետեւաբար, կարելի է ընդունել, թէ հայ ժողովուրդը կազմուած է հնդեւրոպական եւ խուրբիական տարրերի խառնուրդով: Ուստի, եթէ հաստատուի, թէ խուրբիները իրենց խուրբի անոնը ստացան լատինալով բնակիչները Հայկական լեռնաշխարհի հարաւային շրջանների, եւ, միաժամանակ, եթէ ընդունուի, թէ Hurum եւ հուրբի անոնների մէջ նստած է հուր («կրակ») իմաստը, ապա կարելի է անհաւանական չհամարել, որ հար (> հայ ?) եւ Հարք (> Հայր ?) եզրերը կապ ունեցած լինեն Haria եւ Hurri եզրերի հետ: Հար (խար) եւ հուր (խուր) ձեւերի տարրերութեան համար համեմատել Արմէ եւ Ուրմէ ձեւերը, եւ խար (որից՝ խարոյկ «կրակ») եւ (նոյն արմատի) խոր (որից՝ խորովել) ձեւերը: Այսպիսի դէպում, կարելի է հաւանական համարել, որ հայ ժողովրդի արմեն եւ հայ անոնները (արմատականօրէն ունենալով հանդերձ դիցաբանական նոյն հիմքը) ներկայացրած լինեն հայ ժողովրդի կազմի մէջ եղած այդ երկու հիմնական (հնդեւրոպական եւ խուրբի) տարրերը:

ցած էին, ճնշիչ մեծամասնութեամբ, հնդեւրոպական ու խորրիական ցեղերից:

Թէեւ հայ ժողովրդի կազմում մեծ ու կարեւոր տեղ է գրաւել խորրի տարրը, քայց այն չի ունեցել հայութիւնը լեզուականօրէն խորրիացնելու չափ քաղաքական գործօնութիւն եւ ինքնուրոյն, կենսունակ ու վճռորոշ մշակոյք: Խորրիների նկատմամբ՝ տեղաբնիկ հնդեւրոպական նախեանների թիւն ու կշիռը եւ նրանց հնդեւրոպականութիւնը աւելի է ծանրացել ու ամրացել հնդեւրոպական մայր լեզուի տրոհումից երկար ժամանակ յետոյ, մ.թ.ա. II եւ I հազարամեակներին, Հայկական լեռնաշխարհ վերադարձած կամ թափանցած մուշկերից (Փոխիզիացիներից), մոկսիաններից, լուվիացիներից, խեթերից, պալայացիներից եւ յետոյ էլ զիմմերներից, սկիւրներից ու հնդեւրոպախոս այլ տարրերից ստացած ուժով, որոնք պիտի աւելի շուտ իւրացրած լինեն դեռ որոշ չափով իրենց համար հասկանալի հայերէնը, քան թէ խորրիներէնը, եւ այդպիտի պիտի նպաստած լինեն, որ հայերէնը մնայ կենսունակ: Մի բան, որ խրանել է, Սիտաննիի օրերին, Հայկական լեռնաշխարհ թափանցած խորրիների յետագայ արագ ձուլումը: Եւ ինչպէս տեսանք, Մեծ Հայքի հայկական նախարարութիւններից շատերը (կարեւորագոյնները), լինելով նախեան ցեղերի յետնորդ-ժառանգները, արդէն խօսում էին հնդեւրոպական ընտանիքի հայկական լեզուախսմբի առանձին բարբառներով:

Ահա թէ ինչու, երբ Մեսրոպի կողմից Արարատեան բարբառը գրականացուեց, այն արդէն միանգամից երեւաց որպէս բարձրօրէն յղկուած ու մշակուած լեզու, որ ճոխացել էր այս քոյր տարրերից եւ յատկապէս խորրիներից ստացած նպաստներով: Այսուհանդերձ, հայերէնը իր իհմքով, որպէս հնդեւրոպական ընտանիքի կենտրոնական անդամ, բարբառների իր խմբով, պիտի աւանդականօրէն պահպանած լինի հնդեւրոպական մայր լեզուի ձեւերից շատ բան: Այլ խօսքով՝ հայերէնը հնդեւրոպական լեզուարնտանիքի այն կենդանի միակ անդամն է, որը պահպանուել ու մնացել է հնդեւրոպական մայր լեզուն ծնած աշխարհագրական պայմանների օրբանի սրտում: Ուրեմն, այն հանդիսանում է ուղղակի սերունդը կամ շարունակութիւնը մայր լեզուի: Սրա համար պիտի ա-

պացոյց համարել այն, թէ կան հնդեւրոպական մայր լեզուից սու-  
մերերէնին անցած ու սեպագրութեամբ պահպանուած քառեր, ո-  
րոնք հիմա էլ հայերէնում մնում են մօտաւորապէս նոյնութեամբ,  
երբ հնդեւրոպական այլ ճիշերում ենթարկուել են զգալի փոփո-  
խութիւնների<sup>1</sup>:

Այս այսպէս լինելով, արդեօք ինչպէ՞ս է պատահել, որ նահ-  
րեան այս ցեղերի կազմած ուրարտական պետութեան գրութիւն-  
ների լեզուն չի եղել քնիկ հնդեւրոպական հայերէնը (ի հարկէ նոյն  
այս հարցը կարելի է տալ աքեմենեան պարսիկների վերաբեր-  
մամբ, որոնք իրենց գրութիւնների համար օգտագործել են արամե-  
րէնը):

Նախ պիտի ասել, թէ նաիրեանները, կազմակերպելով ու-  
րարտական հզօր պետութիւնը, պիտի ի հարկէ դիւնագիտական  
կապերի մէջ մտնէին հարեւան հզօր Ասորեստանի եւ այլ կենտ-  
րոնների հետ: Ուստի, ստացուած սեպագիր գրութիւնները կարդա-  
լու եւ պատասխան գրելու համար, Սարդուրի Ա-ը պիտի հրաւի-  
րած-վարձած լինի մի ասսուրագէտ գրագիր, որը բնականաբար  
նրա արձանագրութիւններն ել պիտի գրել (եւ գրել է) ասսուրերէ-  
նով: Սակայն, յետագայում, զգիտես ինչ է պատահել, երեւի այս  
գրագրի մահով, կամ Ասորեստանի հետ թշնամական յարաբերու-  
թիւնների սրումից ազդուած, Իշպուինին պիտի հրաւիրած լինի մի  
այլ գրագիր, այս անգամ ոչ թէ ասորեստանեան կենտրոններից,  
այլ մի այլ շրջանակից, ուր (եւ ընդհանրապէս Սիջագետքեան  
շրջանակում) կարող էր լինել, ասուրա-քարելական լեզուից դուրս,  
գլխաւոր լեզուներից սումերերէնը կամ Սիտաննիի ժամանակնե-  
րից մնացած տաճարային կենտրոններից մէկում (օրինակ՝ Մու-  
սասիրի տաճարի նման մի տաճարում) դեռ պահպանուած խուր-  
րի տիպի մի քարբառ, որպէս արարողութիւնների լեզու: Անհաւա-  
նական չէ եւ այն, որ այդ փոփոխութիւնը կատարողը եղած լինի  
հենց ինքը՝ Իշպուինին<sup>2</sup>, որը եղել է նաև զիտնական քուրմ: Ի

<sup>1</sup> ՀԺԾ, տե՛ս «հայերէնի հետ համեմատուող կամ կապուող սումեր քառեր», 10-  
27:

<sup>2</sup> Արդէն իմ նախորդ գործերում (ԱՀԾՈՒ, 236-237, եւ ՀԺԾ, 112-114) ցոյց եմ  
սումեր, թէ Išbu-ini նշանակում է «պատգամախոս քուրմ». սումեր իշի (=աքքաղ.

հարկէ, այնուհետեւ այդ գիտութիւնը փոխանցած կը լինեն յաջորդ սերնդի աշակերտներին:

Սերձաւոր Արեւելքում, սումերերէնից ու աքքադերէնից օատ, խուրրիերէնն էլ, II հազարամեակի կէսերին ու յետոյ, որոշ շրջաններում, որոշ չափով հանդիսացել էր հաղորդակցութիւնների լեզու. եւ դա եղել է ոչ թէ միայն Սիտաննիի խուրրի բնակչութեան միջոցով, այլ եւ ամբողջ Սերձաւոր Արեւելքում ցրուած խուրրիների գործառնութիւններով, թէեւ Սիտաննին եղել է զիսաւոր պետական ազդակը: Սիտաննիի անկումից ու կազմալուծումից յետոյ, ի հարկէ, պիտի խանգարուէր խուրրի լեզուի լայն օգտագործումը Սերձաւոր Արեւելքում, թէեւ այն կարող էր դեռ ընթացքի մէջ մնացած լինել տաճարային կենտրոններում:

Ուրարտուի ժամանակ էլ, արդէն, ուրարտական արձանագրութիւնների լեզուն նախրեանների բուն խօսակցականը չէր: Թէեւ, ինչպէս նշեցի, մ.թ.ա. II հազարամեակին կարող էր տիրած լինել երկլեզուանիութեան դրութիւն՝ խուրրիերէնի հետ միասին, սակայն յետազայ դէպքերը ցոյց են տալիս որ դժուար թէ այդ դրութիւնը պահպանուած լինի երկար՝ մինչեւ Ուրարտուի ժամանակները: Դրա ապացոյցներից մէկը պիտի համարել այն, թէ՝ ուրարտական արքաններին վերաբերող պետական պաշտօնական արձանագրութիւններից դուրս, մեզ չեն հասել հասարակ ժողովրդի կողմից այդ սեպագրերով ու լեզուով գրուած գրութիւններ, մինչդեռ Սիտաննիում ու Սերձաւոր Արեւելքում, մ.թ.ա. II հազարամեակին, շատ են եղել այդպիսինները եւ դրանք էլ ոչ Ուրարտուում (Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջաններում ու խորքերում):

Ուրարտուում կատ տախտակների վրայ յայտնուած՝ պալատական մի խոհարարի, առեւանգուած մի աղջկայ, պալատական մի պաշտօնեայի աղջկան ամուսնացնելու եւ նման հարցերի մա-

---

աշիր) նշանակում է «կախարդ», քովչութեան մոզ, պատգամախօս քուրմ», (ՏԱԳ, տես իշի): Հմմտ. արար. *աճիր* («զարմանալի») եւ հայ աճպարար: Հետաքրքրական է նաև անգլ. bishop, յն. episcop(ος) («եպիսկոպոս»): Որով հշապուին նաև մի նշանաւոր քուրմ էր, քանի որ նի յատուկ այլ անուն չի տրուում նրան: Հմմտ. Ur քաղաքի Išbi-Sin եւ Իսին քաղաքի Išbi-Urra քուրմ-արքանների անունները:

սին հրամանագրերն էլ նոյնպէս եղել են պաշտօնական գրութիւն-ներ:

Փաստ է նաև այն թէ Ուրարտուի Արամեան հարստութեան անկումից անմիջապէս յետոյ եկած Երուանդունիների օրերից էլ մեզ չի հասել այդպիսի սեպագրերով ու լեզուվ գրուած որեւէ գրութիւն: Մինչդեռ, յայտնի է, թէ ուրարտական այդ հարստութեան անկումից մինչեւ Երուանդունի առաջին թագաւորը անցած 1-2 տասնամեակի ընթացքում, Ուրարտուի (Արմինայի) ժողովուրդը չէր փոխուել՝ երկրի լեզուն փոխելու պատճառ դառնալու շափով ու հանգամանքներով օտար եկողների հեղեղ կամ ներգաղք չի եղել. ուստի այդ գրութիւնները կը շարունակուէին ժողովրդի կողմից, եթէ նրանց լեզուն լինէր իրենց խօսակցականը: Եթէ Ուրարտուի անկումից յետոյ, կարծ ժամանակում, երկրի լեզուն փոխուած լինէր, ապա այդ լեզուն պէտք է որ լինէր նոր զերիշխողների՝ մեղացիների կամ պարսիկների լեզուն, մինչդեռ հայերէնը ոչ մեղացիների եւ ոչ էլ աքեմենեանների լեզուն էր: Հետեւաբար, պիտի ընդունել, թէ պահպանուել էր բնիկների լեզուն՝ հայերէնը:

Արդէն զիտենք, թէ իրենց անկախութեան համար Դարեհի դէմ ապստամբողները եղել են Ուրաշտու-Արմինայի արմինները: Եթէ իշխող ուրարտացիները հայերից (արմէններից) տարբեր ժողովուրդ լինէին, ապա բնական կը լինէր, որ «նրանք» լինէին իրենց անկախութեան համար Աստիագէսի եւ յետոյ Դարեհի դէմ ապստամբողները, մինչդեռ յայտնի է, թէ ապստամբողները եղել են արմինները:

Արդէն, ինչպէս ցոյց տուեցի, Երուանդունիները Ուրարտուի համար չեն եղել օտարներ, չեն եղել նոր եւ տարբեր ցեղային տարրի պատկանողներ: Երուանդունիների եւ նրանց ազգակից (Երուանդական) Արտաշէսեանների պետութիւնները եղել են շարունակութիւնը Ուրարտուի: Խսկ Ստրաբոնի վկայութիւնից զիտեինք, թէ մ. թ. ա. II դարի սկզբին, Արտաշէսեաններից առաջ, Հայաստանի բնակչութիւնը եղել է հայերէն խօսող միալեզու ժողովուրդ:

Եթէ Ուրարտուի Արամեան հարստութեան ժամանակ չեն գրել հայերէն (այսպէս ենք ասում, քանի որ ուրարտական արձանա-

գրութիւնների լեզուն չի համարուում հնդեւրոպական), ապա պիտի ասել, թէ (ըստ մինչեւ այժմ մեր ունեցած տուեալների) Երուանդունիներն ել չեն գրել հայերէն: Նրանք էլ իրենց ներքին ու արտաքին գրութիւնների համար պիտի օգտագործած լինեն արամերէնը, որ լնբացքի մէջ էր Պարսկաստանում (եւ Միջագետրում) այդ օրերին, թէեւ այդտեղ (Պարսկաստանում) օգտագործուել է նաեւ սեապագրութիւնը՝ արձանագրութիւնների համար: Ի հարկէ, սա նոյնական չի նշանակում, թէ Հայաստանի ժողովուրդը չէր խօսում հայերէն, ոչ էլ փաստ է թէ խօսում էր արամերէն:

Անգամ Արտաշէսեաններից չի հասել մեզ որեւէ նշանագրով գրուած հայերէն գրութիւն: Նրանք էլ, հելլենիզմի ժամանակ, արամերէնի հետ օգտագործել են յունարէնը: Հայաստանում, որոշ ժամանակ, մինչեւ Մեսրոպ Մաշտոցը, օգտագործուել են նաեւ պահլաւերէնն ու ասորերէնը, որ արամերէնի մի յետնորդ բարբառն էր: Պիտի ասել, թէ ոչ թէ միայն հայերէնով, այլ այս նշուած լեզուներով էլ գրուած գրութիւններ չեն հասել մեզ հերանոսական շրջանից (բացի մի քանի քարի վրայ մնացած մի քանի արամերէն եւ յունարէն բառերից):

Ի հարկէ՝ դեռ չենք կարող հաստատապէս ասել, թէ նախամեսրոպեան ժամանակներում հայերը քնար չեն գրել հայերէն: Ընդհանրապէս հեշտ է ցոյց տալ կամ փաստել այն ինչ գոյ է ու տեսանելի. իսկ դժուար է, մերք անկարելի է, ցոյց տալ այն, ինչ չի երեւում, եւ միաժամանակ փաստել թէ չի եղել: Պարզապէս, մեզ դեռ չի հասել Մեսրոպից առաջ որեւէ նշանագրով գրուած հայերէն գրութիւն: Եթէ այդպիսիներ եղել են, ապա հաւանաբար գրուել են անկայուն նիւթերի՝ մագաղաքի, թղթի կամ մի այլ ոչ տոկուն նիւթերի վրայ: Արդէն մեզ հասել են քրիստոնեութեան՝ Հայաստան մուտքի օրերին վերաբերող մատենագրական մեսրոպատառ հաւաստի վկայութիւններ թէ Հայաստանի բոլոր հերանոսական մեհեանները կործանուել էին (ի հարկէ իրենց արխիմետրով միասին), քրիստոնեութեան մուտքի ժամանակ, Գրիգոր «Լուսաւորիչի» մոլեռանդ առաջնորդութեամբ:

Եթէ Մեսրոպից առաջ հայերէն գրութիւն չի եղել, ապա պատճառը կարող է լինել նախ այն, թէ հեշտ ու նպատակայարմար էր

օգտագործել ընթացքի մէջ եղող կամ միջազգային դարձած մի գրաւոր լեզու եւ գրութիւն: Երկրորդ՝ կային հայերէն տարբեր բարբառներ, եւ դժուար էր նրանցից որեւէ մէկը գրականացնել՝ ընթացքի մէջ եղող նշանագրերով, որոնք չին կարող լրիւ արտայայտել հայերէնի հնչինային համակարգը, հնչպէս ասուում է Դանիէլեան նշանագրերի համար: Եւ ինչպէս նշել եմ, հայերը (ժողովուրդը) ունեցել են մեհենական կոչուած հիէրոզիֆային ինքնուրոյն ու պարզ նշանագրեր, որոնցով բաւարարութել են իրենց մասը գործառնութիւնների համար:

Եւ ահա, Մեսրոպի ժամանակ, ժողովրդի խօսակցականով (հայերէնով) գրելու եւ հայերէնի համար էլ յարմար նշանագրեր ստեղծելու անհրաժեշտութիւն է ծագել հայ ժողովրդի ազգային ինքնուրիւնն ու գոյուրիւնը վտանգած այն հակամարտութիւնների պայմաններում, որոնք տիրում էին Հայաստանը իրենց մէջ բաժանած արեւելքի եւ արեւմուտքի (Պարսկաստանի ու Հռոմի) միջեւ: Եւ ահա Մեսրոպեանները գրեցին հայերէնի մի սքանչելի բարբառով, որը հազարաւոր տարիներով մշակուել ու յոկուել էր հանճարեղ գուսանների (ինչպիսին էին գողքան երգիչները) եւ վարպետ վիպասանների ու դերասանների (եւ ապահովաբար նաև ժողովրդի) կողմից եւ որը իր ճնշութեամբ ու մակարդակով չէր զիջում դասական դարձած յունարէնին, ասորերէնին ու լատիններէնին, մի երեւոյթ, որ ենթադրում է պետական ու քաղաքակիրք կեանքի երկար անցեալ:

#### **4. ԲՈՒՆ ՍՈՒԲԱՐՏՈՒՆ ՀՆԴԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ**

Հայկական լեռնաշխարհի հարաւային մասում եւ Միջագետքի հիւսիսային շրջաններում էր գտնուում սումեր-աքքաղներին յայտնի բուն Սուբարտուն: «Արգաւանդ մահիկ»-ի կարեւոր մասը մտնում էր Սուբարտուի մէջ, այլ խօսքով՝ հարաւայների տեսանկիւնից՝ Սուբարտուն հանդիսանում էր հիւսիսային լեռնաշխարհի (հնդեւրոպական հայրենիք) հարաւային մասը, որ անմիջական

շվման մէջ էր սեմիտների, սումերների եւ էլամացիների հետ: Մենք ընդունում ենք որոշ գիտնականների առաջ քաշած այն միտքը, թէ Սիրիական անապատը, որպէս Արաբական թերակղզու հողերի շարունակութիւնը, նոյնպէս եղել է սեմական ցեղերի օրիան-հայրենիքը: Այնպէս որ՝ բուն Սուրարտուն գտնուում էր սեմական աշխարհից անմիջապէս հիւսիս:

Այս երկու (հնդեւրոպական ու սեմական) աշխարհների լեզուները, իրենց կառուցուածքով, թերական են: Անգամ առաջ է քաշուում հիմնաւորուած տեսութիւն նրանց անցեալ հին ազգակցութեան մասին, որ պայմանաւորուած պիտի լինի (վերեւում մեր ցոյց տուած) նրանց աշխարհագրական հարեւանութեամբ: Հետեւարար, անհնարին ենք համարում, որ այս երկու տեղաբնիկ ու հարեւան լեզուալբնտանիքների արանքում, մի նեղ շերտում, ի ծնէ գոյացած լինի այդ երկու լեզուալբնտանիքների հետ հակադրուող եւ մի այլ խմբի պատկանող օտար լեզու: Մենք արդէն գիտենք, թէ խուրրիները եկուոր են:

Ուստի, եթէ սուրարիները բնիկ են, ինչպէս երեւում է նրանց շատ հին (պատմական շրջանի սկզբից ի վեր) առկայութեամբ, ապա դա փաստ է թէ նրանք խուրրիախօսներ չեն, եւ նրանց լեզուն պիտի պատկանած լինի կամ հնդեւրոպական եւ կամ սեմական ընտանիքին: Գիտութեան մէջ ընդունուած է, թէ նրանք սեմական չեն: Հետեւարար, պիտի ընդունել այն հաւանականութիւնը, որ նրանք (լեզուականօրէն) պատկանած լինեն հնդեւրոպական խմբին<sup>1</sup>:

Ինձ յայտնի չէ սուրարիների լեզուով որեւէ գրութիւն: Landsberger-ի կողմից նախատումերական բնակիչներին վերագրուող բառերի քննութիւնով էլ դժուար կը լինի հասնել այս հարցի համար

<sup>1</sup> I. Gelb-ը Եբլայի սեմական լեզուում՝ հնդեւրոպականի հետ սեմական հին լեզուների կապ է տեսնում: Նա գրում է. «This very old feature of Iblaic furnishes an important piece of evidence linking early Semitic languages with Indo-European» (տե՛ս TA1, 27): Ի հարկէ, այդ կապի երեւոյթը կարող է լինել հետք՝ խոր անցեալում սեմական ու հնդեւրոպական լեզուների հին ազգակցութեան: Այսուհանդերձ, անհնար չէ, որ այդ կապը առաջացած լինի Եբլայում (ինչպէս եւ Աքքանում) սուրարիների հին առկայութեամբ, որի մասին արդէն խօսել եմ վերեւում:

կարեւոր ու ծանրակշիռ հետեւութիւնների, քանի որ յայտնի չէ, թէ դրանք պատկանու՞ն են սուբարիներին, թէ ոչ:

Այսուհանդերձ, յայտնի է, թէ սուբարիներին վերագրուող անձնանունները սեմական չեն: Բայց այդ անունների հնդեւրոպական յատկանշները ցուցաբերած լինելու մասին էլ խօսք չի լինում: Ի հարկէ, սուբարիներն էլ, մինչեւ սեպագրերի սկզբնաւրումը, կարող էին արդէն որդեգրած լինել այլ ծագումով որոշ անձնանուններ՝ ինչպէս հիմա հայերի որոշ մասը: Այսուհանդերձ, I. Gelb-ը սուբարիական անձնանունները զատել ու առանձնացրել է խորիականներից: Իսկ աքքաղների համար, իրենց երկրի համեմատութեամբ՝ աշխարհի չորս կողմերի մասին պահպանուած աւանդական մի հին զմբոնման համաձայն, «իհիսիսը Սուբարին է, հարաւը՝ Սումեր, արեւելքը՝ Էլամ, իսկ արեւմուտքը՝ Ամուրրու»<sup>1</sup>: Ուստի, պիտի ընդունել այն հաւանականութիւնը, որ սուբարիները պատկանած լինեն իհիսիսի (հնդեւրոպական) լեռնաշխարհին: Արդէն, ինչպէս տեսանք, նրանց բուն Մու-քիր ազգանուան ստուգաբանութիւնը նրանց կապում է հնդեւրոպական -քիր բաղադրիչն ունեցող ցեղանունների ու տեղանունների շրջանակի հետ: Եւ ինչպէս նշել եմ, Գելքը Նուզիում յիշուած Շաւար-Հեբա անուան Շաւարի մասին գրում է. «մեծ հաւանականութեամբ հնդեւրոպական է», եւ անհաւանական չէ, որ այն լինի անուան մի բարառային ձեւը:

Սուբարտու անունը, աւելի ուշ ժամանակաշրջանում, դարձել է աշխարհագրական եզր, որովհետեւ, հարաւում եղած սուբարիները յետագայում խառնուել ու ձուլուել են սումերների, սեմականների եւ էլամացիների հետ՝ որդեգրելով նրանց լեզուները: Իսկ նրանց իհիսիսային բուն հասուածները պատմագէտների համար մնացին քողարկուած՝ իրենց գրութիւնների համար ընդունած լինելով խուրրիների լեզուն, որոնք բաղաքականապէս ու մշակոյթով միացել էին իրենց հետ: Այսուհանդերձ՝ Մեսրոպ Մաշտոցից յետոյ յանկարծ երեւացին որպէս հնդեւրոպական բարբառներով խօսող նաիրեաններ:

---

<sup>1</sup> ANE, 23:

## 5. ՍՈՒՄԵՐԱԿԱՆ ԱՌԵԴՈՒԱԾԸ

---

Պիտի չմոռանալ, թէ հին Միջազետքին վերաբերող մի շարք մութ հարցերի լուծման գործում՝ թնձուկի թելի երկու ծայրերից մեկը գտնուում է Սումերում: Որովհետեւ, սումերական խնդրի լուծմամբ՝ կը լուսաբանուեն շատ մութ հարցեր: Այդ խնդիրը, անցեալ դարաշրջանում, սումերների գոյութիւն ունեցած լինելու մասին առաջին նշանների յայտնաբերումից ի վեր, եղել է, ու այժմ էլ մնում է, չլուծուած հարց: Թէեւ այդ օրերից յետոյ կատարուել են հնագիտական նոր ու մեծ յայտնագործութիւններ, եւ նրանց մասին սումերական ու աքքաղական հարիւր հազարաւոր արձանագրութիւնների յայտնաբերմանը՝ սումերական լեզուի, մշակոյթի ու ընկերային-քաղաքական կեանքի մասին կուտակուել է հարուստ նիւր, եւ առաջացել է գիտահետազօտական մեծածաւալ գրականութիւն, սակայն, թէ ովքե՞՞ր են եղել սումերները, թնի՞կ են եղել Սումերում, թէ եկուոր, եւ եթէ եղել են եկուոր, ապա ո՞րտեղից, ե՞րբ եւ ի՞նչ ճանապարհով են եկել - այս հարցերը եղել են եւ մնում են նոյնքան մութ ու վիճելի խնդիրներ:

Այս խնդիրների լուծման գործում, գիտնականների տարբեր եւ մերք հակասական դիրքաւորումներն ել, հանգոյցը քանդելու տեղ, կարծես, աւելի են խճճել-քարդացրել ու դարձրել թնձուկ: Մինչեւ հիմա, գիտնականները սումերական խնդրի լուծման գործում, հարցին մօտեցել են գլխաւորաբար երկու կողմից՝ լեզուաբանական ու հնագիտական դիրքերից, եւ իրենց պատճառաբանութիւններն ու մեկնարանութիւններն ել հիմնել են այս երկու բնագաւառներից եկող տուեալների վրայ՝ իրենց ժամանակների գիտութեան ընձեռած մակարդակով: Ի հարկէ՝ սրանք չեն եղել բաւարար եւ չեն ունեցել անհրաժեշտ կշիռ՝ հանդիսանալու համար որոշիչ հիմք՝ բոլորի կողմից ընդունելի մի պատասխանի համար:

Ինչպէս յայտնի է, Landsberger-ը, Speiser-ը, Oppenheim-ը, Woolley-ն, S. Lloyd-ը, Kramer-ը, Gelb-ը, T. B. Jones-ը եւ մի շարք այլ հեղինակութիւններ, հիմնուելով հնագիտական ու յատկապէս լեզուական նիւթերի վրայ, եզրակացրել են, թէ սումերները չեն եղել

Հարաւային Սիջագետքի տեղաբնիկները, չեն եղել Սումերի առաջին բնակչները, այլ՝ նրանցից առաջ եղել են ուրիշներ: Թէեւ ուղղակի ոչինչ չեն ասում նախասումերական այդ բնակչների ինքնութեան մասին, սակայն նրանց ձեւակերպումներում եղած որոշ ակնարկութիւնները՝ ընթերցողի ուշադրութիւնը ուրբում են ուղղված իհի հիւսիս՝ անուղղակիօրէն յիշեցնելով սուբարիններին:

Կան նաև նոյնքան անուանի գիտնականներ (E. Meyer, H. Frankford, J. Oates, G. Roux, R. O' Callaghan եւ ուրիշներ), որոնք հակուած են ընդունել, թէ սումերները եղել են Սումերի տեղաբնիկները:

Մեր կարծիքով՝ սումերների ճանաչման գործում եղած այս բոլոր դժուարութիւնները ծագում են զիսաւորաբար այն բանից, թէ լեզուաբանութիւնը, իր ներկայ մակարդակում, դեռ չի կարողանում սումերերէնը տեղատրել լեզուական յայտնի որեւէ ընտանիքի մէջ: Իսկ դժուար է ընդունել թէ սումերերէնը եղել է աշխարհի մնացած մասից կտրուած, առանձին եւ եզակի երեւյթ: Մանաւանդ՝ եթէ քնիկ է, Սումերն ել իր շրջապատի աշխարհից կտրուած կղզի չէ: Ուրեմն, այն երեւյթը որ դեռ չեն կարողանում այդ լեզուն տեղատրել յայտնի որեւէ լեզուական ընտանիքի մէջ, պարզապէս ցոյց է տալիս, թէ այդ լեզուի ճանաչման գործում, նրա մասին եղած զիտելիքներում, դեռ կան շատ թերի ու անյայտ բաններ: Մենք կարծում ենք, թէ դժուարութիւնը զալիս է առաւելաբար այդ լեզուի հնչիւնային կողմի մասին ծանօթութիւնների անբաւարարութիւնից եւ անճշդութիւններից: Արդէն այդ լեզուն դեռ լրի չէ վերծանուած: Գուցէ Oppenheim-ը ճիշդ էր, երբ գրում էր, թէ սեպազրական համակարգը բաւարար չափով չի յարմարուում սումերերէնին, այսինքն՝ չի կարող արտայայտել սումերերէնի բոլոր հնչիւնները, այլ խօսքով՝ այն չի ստեղծուել սումերերէնի համար: Ի հարկէ՝ այս մտքի համար կարող է փաստ լինել սեպախմբերին բազմահնչիւնային յատկութիւններ վերագրուելլ: Եթէ Oppenheim-ը ճիշդ է, ապա կամ սումերները չեն եղել գրի ստեղծողները եւ կամ ել նրանց սեպազրերի հնչիւնային արժեքների մասին եղած զիտելիքները թերի են տակաւին:

Միաժամանակ պիտի ասել, թէ այս հարցում խարուսիկ է յենուել լեզուի կցական յատկութիւնների վրայ, որին պետք չէ համարել այս կարեւոր կէտում որոշիչ յատկանիշ, քանի որ թեքական ու կցական յատկութիւնները ժամանակի հետ կապուած զարգացման երեւոյթներ են, եւ այսօր թեքական ընտաճիքին պատկանող խմբի մէջ էլ կան (լինում են) կցական յատկանիշներ զարգացնողներ, ինչպէս, օրինակ՝ կելտական (հնդեւրոպական ) լեզուներից ոմանք: Նոյնիսկ՝ երբ մեր գրաբարը բոլորովին թեքական է, արեւմտահայերէնը զարգացնում է կցական յատկանիշներ:

Հետեւաբար, սեպազրութեան շուրջ մեր ունեցած գիտելիքների ներկայ փուլում, երեւի, պիտի հնարաւոր չլինի սումերական հարցին տալ վերջնական լուծում՝ սումերերէնի մասին այժմ եղած լեզուական թերի գիտելիքներով, որոնք թէեւ բաւական մեծ առաջընթաց են արձանագրած, բայց դեռ գտնուում են իրենց ճշդման ու կատարելազործման փուլում:

Միաժամանակ Landsberger-ի հաւաքած ու նախասումներական բնակչութեան վերագրած մի շարք բառերի մասին արուած դատողութիւններն էլ չունեն այս հարցերին յստակ պատասխան թերելու կշիռ ու բնոյթ: Մանաւանդ որ՝ եթէ անգամ ճիշդ լինեն, թէ դրանք պատկանում են Հարաւային Միջագետքի կանխագոյն բնակիչներին, միեւնոյն է, դժուար է այդ սահմանափակ (նախադատութիւն էլ չեղող) բառերի լեզուի ինքնութեան մասին վերջնական կամ գոնէ համոզիչ բան ասել: Սումերական շիամարուող տեղանունների (քաղաքանունների) բննութիւնն էլ կարող է լինել մոլորեցուցիչ, քանի որ՝ նրանք կարող են լինել աւելի ուշ եկողների կողմից կատարուած փոխանակումներ, ինչպէս, օրինակ՝ Անատոլիայի ու Հայաստանի շատ հին տեղանունների տեղ այժմ գտնում ենք յետագայում կպցուած թրքական անուններ:

Ուստի, պիտի ընդունել, թէ մեզ յայտնի տուեալների ներկայ փուլում, դժուար է սումերական այս ծանրակշիռ խնդրին պատասխան գտնել լեզուարանական ճանապարհով, որքան ժամանակ որ հնարաւոր չէ սումերերէնը տեղաւորել լեզուական յայտնի ընտաճիքներից մէկում: (Եթէ մի օր լրի պարզուի սումերերէնի հնչինային կողմը եւ հաստատապէս յայտնի դառնայ, թէ այդ լեզուն չի

պատկանում Մերձաւոր Արեւելքում յայտնի լեզուական ընտանիք-ներից որևէ մեկին, ապա կարելի կը լինի վերջնականապէս ընդունել, թէ սումերները եկուոր են եւ ոչ տեղացի): Լեզուարանական ներկայ տուեալները, լաւագոյն դէպքում, կարող են լինել լոկ օժանդակ ցուցմունքներ՝ այլ բնագաւառներից գալիք փաստերի համար:

Նյոնը պիտի ասել մեզ ծանօթ հնագիտական տուեալների մասին: Ինչպէս յայտնի է, մի ժամանակ Ուրէյդեան մշակոյթը ժամանակագրականորէն համարուում էր հնագոյնը, եւ նրա ու յետագայ (սումերական եղող) Ուրուքեան նատուածքներում նշմարուում էին զգալի տարրերութիւններ: Այս տարրերութիւնները ուժ էին տալիս այն տեսութեան, թէ սումերները չեն եղել Սումերի առաջին բնակիչները:

Համաշխարհային II պատերազմից յետոյ, Երիդուի մէջ իրաքցիների կատարած նոր պեղումները սկզբում ի յայտ բերեցին Ուրէյդեան ժամանակաշրջանին ու մշակոյթին պատկանած ճարտարապետութեան, խեցեղէնի եւ այլ բնագաւառի նիւթեր, որոնք մշակութապէս Ուրուքեանի նկատմամբ ցոյց էին տալիս շարունականութիւն, ոչ թէ խզում: Այս երեւոյթի վրայ յենուելով՝ ոմանց մէջ զօրացաւ այն միտքը, թէ սումերները եկուոր չեն, եւ Ուրէյդն էլ պատկանում է նրանց: Սակայն, ավելի յետոյ յայտնաբերուած նախսա-Երիդու-ական կոչուած նիւթերը ի յայտ բերեցին Ուրէյդեան նատուածքներին նախորդած աւելի հին մշակոյթ, որը ունէր Ուրէյդեանի համեմատութեամբ զգալի տարրերութիւններ եւ մանաւանդ՝ ընդհատում: Մի երեւոյթ՝ որը իր հերթին նոր ուժ տուեց նախսաւումերական բնակչութեան գոյութեան մասին եղած տեսութեան:

Ինչպէս երեւում է, նոյնպէս դժուար է՝ հնագիտութեան մինչեւ հիմա ձեռք բերած նիւթերի ու նրանց յեղյեղուկ տուեալների վրայ յենուելով՝ սումերական ծանրակշիռ խնդրին տալ հաստատ ու վերջնական լուծում, քանի որ գիտական աշխարհում (ռազմական ջղագարութեան ներկայ առկայութեան պայմաններում) հնագիտութեանը տրուում են երկրորդական-երրորդական տեղ ու նիւթա-

կան փոքր յատկացումներ. ուստի այն չունի այժմ մեծ ծառալ: Ուստի, այս բնագաւառում էլ միշտ ապասելի են անակնկալներ:

Սումերների կամ սումերական մշակոյթի օրրանը որոնելիս՝ ոմանց աչքերը ուղղուում են դեպի Իրան (Fars, Marv Dasht եւայլն) եւ անգամ Ինդրսի հովիտը (Armi եւայլն), որոնք չունեն սումերականների հետ կոնկրետ նմանութիւն ու կապ եւ պատկանում են աւելի ուշ ժամանակաշրջանին, ուստի չեն կարող ցուցմունք լինել սումերական մշակոյթի կամ սումերների եկած ուղու կամ օրրանի համար: Դրանք, առաւելագոյնը, կարող են մտնել Սերծաւոր Արեւելքի տուեալ ժամանակների մշակութային ընդհանրութիւնների լայն շրջանակի մէջ: Ոմանք աչքի առաջ են բերում Սումերի եւ Էլամի միջեւ եղած կապերը, բայց Իրան ասելով, պիտի հասկանալ իրականում այն սարահարը, որ գտնուում է Զագրոս լեռնաշղթայից այն կողմ, իսկ Էլամը գտնուում էր Սումերի մօտ, որի հետ Սումերի կապը դժուար չէր, եւ էլամերէնն էլ չի կապուում սումերերէնի հետ:

Միա թէ ինչո՞ւ՝ ճրանք, որոնք խարուսիկ նմանութիւններ են տեսնում Հարաւային Միջազգետքի եւ Ինդուս հովտի, Իրանի, Անդրկովկասի, Անատոլիայի եւ այլ վայրերի հնագիտական օրինակների միջեւ՝ միշտ էլ ենթակայ են շտապ ու ենթակայական հետեւութիւններ հանելու փորձութեան: Մինչդեռ այդպիսի նմանութիւնները, շատ դէպքերում, արդիւնք են լինում ոչ թէ ժողովուրդների տեղաշարժերի, այլ մշակութային նիւթերի ու նուաճումների այս կամ այն միջոցներով տարածման ու ընդհանրացման՝ մերք հանդիսանալով ժամանակավրեալ ներկայութիւններ: Ուստի, դրանք կարելի է ընդունել, առաւելագոյնը, լոկ իբրեւ օժանդակ տուեալներ՝ ուրիշ եւ անելի հաստատուն բնագաւառներից եկող կամ գալիք փաստերի համար:

Սակայն կայ մի բնագաւառ, որը կայում է եւ անփոփոխ, նոյնատեն անկախ՝ յետագայ լեզուարանական ու հնագիտական հետազոտութիւնների յեղեղուկ արդիւնքներից: Դա աշխարհագրական հաստատուն բնագաւառն է, որի մասին ուզում ենք այստեղ բերել մեր նկատառումները:

Նախքան այդ, ասենք, թէ մենք ճիշդ ու տրամաբանական չենք համարում երկրաբանական այն միտքը, թէ Հարաւային Սիցագետքի ցամաքը ունի նոր կազմաւորում, եւ իբր թէ Սումերի առաջին բնակիչները յայտնուել են մ.թ.ա. 4-րդ հազարամեակի սկզբին եւ ամենականուիլը՝ 5-րդ հազարամեակի կէսերին, երբ «Նոր էր Պարսից ծոցը նահանջել» Սումեր կոչուած շրջանակներից: Եթէ գետերի բերած տիղմի պատճառով ցամաքը երկարում է դէպի ծով, ու Պարսից ծոցը նահանջում է, ապա այն չի կատարուում կարծ ժամանակում, կամ այնպիսի արագութեամբ, ինչպէս որ ենթադրում է հարցը այդպէս դնողների տեսակէտը: Տրամաբանութիւնը պահանջում է ընդունել, թէ ամէն մի մետր ցամաքի կազմաւորումը կը տեսէր զոնէ դարեր, եւ Ծոցի ամէն մի կիլոմետր նահանջի համար էլ պէտք կը լինէր հազարամեակներ: Այլապէս, անցած միլիոննաւոր տարիների ընթացքում, այդպիսի արագ տեղատութեամբ, մինչեւ հիմա Պարսից ծոցը վերացած կը լինէր: Անգամ պատահում է, որ ցամաքն է նահանջում եւ ոչ թէ ծով:

Սումերի հնագոյն քաղաքը, ըստ սումերների, *Էրիդուն* է, որը գտնուում է Սումերի բնակավայրային շրջանի հարաւային ծայրում, ամենամօտը Ծոցի ճահճային շրջանին, եւ ոչ թէ Սումերի հիւսիսային սահմաններում: Սումեր երկրի ցամաքի կազմութիւնը՝ Ծոցի (վերջերս պատահած) նահանջի երեւոյթի վրայ յենող տեսութեան տրամաբանութիւնը կը պահանջէր, որ Սումերի ամենահին քաղաքը գտնուած լինէր Սումերի ամենահիսիսային սահմանում, եւ յետագայ քաղաքների կառուցումներն էլ աստիճանաբար հետեւած լինէին ծովի նահանջի փուլերին: Մինչդեռ, իրական պատկերը հակառակն է ցոյց տալիս: Այլ դէպքում էլ, եթէ ընդունենք այն միտքը, թէ *Էրիդուի* առաջին բնակիչները եղել են սումերները եւ նրանք էլ եկել են ծովով ու իրենց առաջին քաղաքը (*Էրիդուն*) հաստատել են Ծոցի (այդ ժամանակուայ) ափին, եւ միւս քաղաքներն էլ աստիճանաբար կառուցել են գետերի հոսանքն ի վեր, ապա, նոյնպէս բնական կը լինէր, որ Սումերի յետագայ քաղաքներից զոնէ մի քանի հատը շինուած լինէին *Էրիդուից* վար՝ Ծոցի նահանջի ուղղութեամբ:

Միաժամանակ, եթէ ընդունենք, թէ Երիդում հիմնադրուել է ծովափին, եւ այդ հիմնադրութիւնը կատարուել է (ասենք) 5-րդ հազարամեակի վերջում, ապա Երիդուից մինչեւ ներկայ ծովափը եղած մոտ 200 կիլոմետր ցամաքային տարածութիւնը (չհաշուած ճահճուտները) պիտի ծովը նահանջած լինի 6000 տարիների ընթացքում. այսինքն՝ ծովը ամէն մի կիլոմետրը միջին հաշուով պիտի նահանջած լինի միայն 30 տարուան ընթացքում: Եթէ ընդունենք այս վարկածը, ապա Ծոցի ներկայ ափին գտնուող արաբական փոքր քաղաքների վայրերը 60 տարի առաջ պիտի գտնուած լինեին ջրի տակ, ու Պարսից ծոցն էլ, շատ չանցած կը վերանայ: Խսկ ինչո՞ւ այս վերջին բանը չի կատարուել անցած մի քանի հարիր հազարամեակների ընթացքում:

Ինչպէս տեսնում ենք, Ծոցի նահանջի վրայ յենուած վարկածը տրամաբանականօրէն խախուտ է: Արդէն G. M. Lees-ի, I. N. L. Falcon-ի երկրաբանական (աւելի ուշ կատարուած) հետազոտութիւնները<sup>1</sup> հաստատում են թէ Պարսից ծոցից վեր սումերական ցամաքի կազմութիւնը ունի շատ հին անցեալ: Անզամ նշաններ կան, որ ցամաքը իջնում է, եւ ծովի ջուրը բարձրանում է այդ շրջանում եւ ոչ թէ քաշուում: Պարսից ծոցի ու Երիդուի միջեւ եղած ճահճուտներն էլ կարող են յետագայ գոյացութիւններ լինել, որոնք գուցէ ծածկել են շատ աւելի հին բնակութեան հետքերը:

Հետեւաբար միանզամայն ճիշդ կը լինի ընդունել, թէ յետագայում Սումեր կոչուած երկիրը արդէն ցամաք էր առնուազն Նեռլիթի սկզբներից ի վեր (եթէ ոչ շատ աւելի կանուխից). հետեւաբար դեռ այն ժամանակներից, երբ աշխարհի բնակչութիւնը շատ քիչ էր ու ցանցառ, երբ, հաւանաբար, հնդեւրոպական ու սեմական լեզուների տարբերութիւնները դեռ չէին մեծացել՝ նրանց առանձին ընտանիքներ համարելու աստիճան: Ուստի հասարակութեան նախնադարեան համայնական փուլում գտնուած այդ բնակչութեան տոհմական փոքր միաւորների համար մասսայաբար ծովեր ու լեռնաշղթաներ անցնելու եւ նոր երկրներ որոնելու գիտակցական մղումներն ու միջոցները դեռ չէին կարող հասունացած լինել:

<sup>1</sup> GHMP, 24-29: Տե՛ս նաև SP, 125, 130:

Մարդկանց տեղաշարժերը այդ ժամանակներում սահմանափակուում էին լոկ (սնունդ որոննելիս) հասարչութեան ու որսորդութեան համար կատարուած եղանակային պարբերական տեղական փոքր շարժումներից: Եթե լինում էին աստիճանական տեղաշարժեր դէալի անյայտ երկրներ, որոնք էլ տեսում էին հազարամեակներ, որոնք աւելի հեշտութեամբ կատարուում էին գետերի ափերով:

Ի մտի ունենալով ահա այս դրութիւնը, աչքի առաջ ենք բերում Սերձաւոր Արեւելքի քարտէսը՝ տեսնելու համար, թէ այդ խոր անցեալում ի՞նչ ձեւերով կարող էր Հարաւային Սիջագետքը (յետագայում Սումեր կոչուած երկիրը) կապուած լինել շրջակայ երկրների ու տարածութիւնների հետ: Կամ ո՞ր ուղիներն ու պատճառները կարող էին հարեւան ու դրսի աշխարհի մարդկանց հեշտութեամբ ու բնականօրէն տանել դէալի Սումեր:

Սումերի եւ առհասարակ Հարաւային Սիջագետքի աշխարհագրական դրուածքի համար աչքի զարնող ամենաքնորոշ երեւոյթներն են հարաւում ծովը, հիւսիսում երկու նշանաւոր, լայնահուն ու կենսատու գետերը, որոնք Սումերը կապում են հիւսիսի հնդեւրոպական (հայկական) լեռնաշխարհի հետ, արեւմուտքում սեմական լայնատարած անապատը, իսկ արեւելքում էլամական փոքր տարածութիւններից յետոյ Զագրոսեան մեծ լեռնաշղթան, որը որպէս հզօր պատուար Սումերը բաժանում է յետազայում իրանական կոչուած սարահարքից:

Այստեղ ուզում ենք նկատի առնել ոչ թէ միայն մ.թ.ա. 5-րդ հազարամեակը, այլ մի քանի հազարամեակ էլ աւելի կանուխ ժամանակները, երբ Սիջագետքում սկիզբ էր առնում գիւղական կեանքը, երբ, ինչպէս ասացինք, Հարաւային Սիջագետքը արդէն ցամաք էր:

Արդէօր կարո՞ղ էր այդ կանուխ ժամանակներում այս բերրի եւ բարեխառն կիմայ ունեցող երկիրը եղած լինել մարդկային բնակչութիւնից դատարկ տարածութիւն:

Յայտնի է, թէ իին անցեալում գետերը հանդիսացել են մարդկանց երեւեկութիւնների ու տեղաշարժերի ամենաքնական ու ամենահեշտ ուղին: Սեր ներկայացրած համար 8 քարտէսում պարզ

երեւում է, թէ Wadi al Batin-ը, որ առաջ եղել է հոսուն գետ, Հարաւային Սիջագետք է զալիս Արաբական Թերակղու խորքերից: Karün, Karkheh եւ Tib գետերը Սումեր են իշնում Զագրոսից: Իսկ նշանաւոր Տիգրիսն ու Եփրատը Սումերը կապում են Վերին Սիջագետքի ու Հայկական լեռնաշխարհի հետ (նկատի չենք առնուն ծովի կողմը, որովհետեւ նախնական այդ օրերի մարդկանց համար այդքան հեշտ ուղի չէր ծովը):

Եթէ այդ խոր անցեալում Զագրոսը, սեմական տարածութիւններն ու Հայկական լեռնաշխարհը ունեին մարդկային բնակչութիւն (փաստեր կան, որ հիւսիսային լեռնաշխարհը ունէր), ապա մի՞թէ ճիշդ կը լինի, այս գետերի առկայութեամբ, մտածել, թէ Սումերը նշուած ժամանակներում եղել է անքնակ տարածութիւն: Ի հարկէ ոչ: Հետեւարար Հարաւային Սիջագետքը պէտք է, որ բնակեցուած լինի առնուազն Նեռլիթի սկզբներից ի վեր. եւ եթէ Սումերում մարդկային նէռլիթեան հետքեր չեն յայտնաբերուել, դա դեռ փաստ չէ, թէ չեն եղել: Այս հարցում պիտի աչքի առաջ ունենալ որոշ ընդմիջումներով տեղի ունեցած՝ գետերի (յատկապէս Տիգրիսի ու Եփրատի) մեծ հեղեղումների՝ լայնատարած ջրհեղեղների բերած տիղմային եւ յետոյ էլ աւազային ծածկոյթները. Էլ չենք խօսում ներկայ ճահճուտների նոր գոյացութիւններ լինելու հաւանականութեան մասին: Ուստի, պէտք է որ այստեղ լինեին մարդիկ առնուազն գիւղական կեանքի կազմաւրման սկզբներից ի վեր, որը պիտի տանել մ.թ.ա. 8-ից 10-րդ հազարամեակ:

Ուստի պիտի անխուսափելիօրէն ընդունել, թէ Հարաւային Սիջագետքի առաջին ու կանխազոյն բնակիչները կարող էին եկած լինել կամ Զագրոսի շրջանից, կամ Արաբական Թերակղու կողմից եւ կամ էլ Հայկական լեռնաշխարհից. Եւ անհաւանական չէ, որ նրանք եղած լինեն այս բոլոր կողմերից եկածների խառնուրդ: Այս է աշխարհագրական դրուածքից բխող անխուսափելի ու բնական հետեւութիւնը:

Այս այսպէս լինելով՝ միաժամանակ պիտի յատկապէս նկատի առնել հետեւեալ պատկերը. Սումերի համար աջում կար Զագրոս լեռնաշղթայի պատուարը, ձախում սիրիական չոր անապատը, իսկ առջեւում հրաշալի ու կենսատու Եփրատն ու Տիգրի-

սը: Այս պատկերի առաջ ո՞ր ուղին էր աւելի հեշտ ու քնական այդ նախնական օրուայ մարդու համար. միանգամայն պարզ է, թէ հիւսիսային ուղին էր բոլորից աւելի բացն ու հեշտը:

Մենք մեր նախորդ աշխատութիւններում խօսել ենք սումեր-ների՝ հիւսիսային կողմերից Եփրատ ու Տիգրիս գետերով աստի-ճանաբար ներքեւ իջած լինելու հաւանականութեան մասին, որ դեռ չենք համարում վերացած: Այս մտքին ուժ էին տալիս սումե-րահայ լեզուական ու հոգեւոր մշակոյթի որոշ ընդհանրութիւնները, ինչպէս սումերական մշակոյթի հետ որոշ կապակցութիւն ցոյց տուող (արեւմուտքից դեպի արեւելք ձգուած) հնավայրերը՝ Հաջի-լարը, Չարթալ-Հոյուկը, Մերսինը, Թէլ-Հալաֆը, Չագար-Բազարը եւայլն, ինչպէս եւ (հիւսիսից դեպի հարաւ իջնող) Շենգալիքը, Կղզեակ-Բլուրը, Շամիրամ-Ալթին, Հասունան, Կալա-ատ-ջար-մոն, Սամարրան եւ այլ նեղիքեան բնակավայրերը:

Ի հարկէ սրանցից ոմանք պատկանում են Նեղիքի աւելի ուշ շրջանին, երբ, ըստ մեզ, Սումերում պէտք է որ գտնուած լինէր բնակչութիւն: Հետեւարար մշակութային շարժումը կարող էր որոշ դեպքերում տեղի ունեցած լինել ներքեւից վեր: Ինչպէս ասացինք, մենք աւելի յենուում ենք աշխարհագրական հաստատուն իրավի-ճակի (Եփրատի ու Տիգրիսի դեպի վար հոսող գործօնի) վրայ՝ երկրորդական տեղ տալով հնագիտական, մերք խարուսիկ, նիւթե-րին: Մանաւանդ որ այնպիսի նիւթեր, ինչպիսին են կնիքները (թէ տափակ եւ թէ գլանաձեւ), անիրը, ձին, մետաղը, ճարտարապե-տական հաստատուն կառոյցներն ու նրանց ձեւերը եւայլն պատ-կանում են ուշ ժամանակաշրջանին, երբ արդէն վաղուց սկսել էր գիւղական կեանքը: Նոյնիսկ դժուար է հաստատապէս յենուել խե-ցեղէնի ու նրա տեսակների վրայ. թէեւ սա սկիզբ է առնում շատ ա-ւելի կանուխ ժամանակներից, սակայն այն էլ արդիւնք է նստա-կեաց կեանքի եւ կարող է իր օրրանում քիչ արտադրուած ու ան-յայտացած լինել, իսկ օտար վայրում կարող է մի որեւէ միջոցով (առեւտուրով, որպէս աւար ու տուրք) ստացուելուց յետոյ ընօրի-նակուելով շատ արտադրուել ու տարածուել: Մերք էլ կարիքը ստիպում է, որ նոյն բանը անկախարար ստեղծուի տարբեր վայ-րերում եւ տարբեր ժամանակներում: Ահա թէ ինչո՞ւ մենք աւելի յե-

նուում ենք աշխարհագրական կայուն դրուածքի վրայ, յատկապէս հաշուի ենք առնում Եփրատ ու Տիգրիս գետերի հիւսիսից դեպի հարավ հոսքի գործօնը:

Հետեւաբար, որտեղից էլ որ եկած լինեն սումերները, միեւնոյնն է, նրանց ժամանակ եւ (քանի որ չեն կապում հնությունական աշխարհի հետ) նրանցից էլ առաջ պէտք է որ Սումերում եղած լինեն հիւսիսից՝ Եփրատի ու Տիգրիսի ակնաղբիւրների լեռնաշխարհից իջած մարդիկ:



Աշխարհի բարելոնական քարտէսը, ուր ցոյց է տրուած աշխարհը շրջապատող ովկիանոսը, եւ որպէս նրա կենտրոն՝ նշանակուած է Բաբելոնը Եփրատի վրայ: Ցոյց է տրուած նաև լեռները գետի ակնաղբիւրների շրջանում, Ասորեստանը, Բît-Իակինս-ն եւ ճահիճները Եփրատի գետաբերանին: (British Museum, The Babylonian Legends of the Creation, p. 3, London, 1931).

British Muzeum № 92687

Anton Moortgat-ը իրաւացիօրէն գտնում է, թէ «early Sumerian culture ultimately takes its source more easily from North Mesopotamia than from Iran, inasmuch as temple structure, the representations of the bull motif and the Mother-Goddess, which reflect Halafian practice, and the affinities of a Jemdet Nasr goddess with the middle chalcolithic period, all point to this conclusion»<sup>1</sup>:

Հայկական լեռնաշխարհում մարդկային բնակչութիւնը գոյութիւն է ունեցել կենդանական աշխարհից մարդու անջատման ժամանակներից ի վեր: Հայաստանում յայտնաբերուել է Հին քարէ դարի (Paleolith-ի), Միջին քարէ դարի (Mesolith-ի), Նոր քարէ դարի (Neolith-ի) եւ Պղմճաքարային (Eneolith-ի) դարաշրջանների հին բնակավայրեր<sup>2</sup>: Սումերի կանխազոյն բնակչութիւն մասին ամէն մի հետազօտող պիտի մտքից չհանի Եփրատի ու Տիգրիսի պէս մեծ գետերի վերին ծայրում (ու վերին աւազանում) Հայկական լեռնաշխարհի այս հին բնակչութեան գոյութիւն ունեցած լինելը: Անգամ, այս երկու մեծ ու նաև արկերկելի գետերի առկայութեամբ, գարմանալի ու անքնական կը լինէր, եթէ քաղաքակրթութեան արշալոյսից ի վեր մարդկային փոքր խմբեր ու քախտախնդիրներ հջած չլինեն դէպի հարաւ ու հաստատուած չլինեն քարեխառն կիմայ ունեցող Հարաւային Միջագետքի բերքի դաշտում:

Առասպելները չեն ստեղծուում առանց հիմքի ու դրդապատճանի: Ս. Գրքում աշխարհի ստեղծագործութեան առասպելում մարդկութեան ծննդների (Աղամի եւ Եւայի) օրբանը պատկերացուել է Տիգրիս ու Եփրատ գետերի ակնաղբիւրների շրջանում: Ի հարկէ տարրեր շրջաններում կամ ցամաքամասերում, անգամ տարրեր ժողովուրդների մօտ կարող է այս օրբանը («դրախտը») պատկերացուել կամ տեղադրուած լինել այլ վայրերում, բայց այս առասպելը ծնունդ է առել Սերձաւոր Արեւելքում, յատկապէս Միջագետքում: Ինձ յայտնի չէ սեպագրական որեւէ վկայութիւն այդ օրբանը Տիգրիս ու Եփրատ գետերի վերին աւազանում տեղադրուած լինելու մասին, բայց դա չի նշանակում, թէ այս առասպելը

<sup>1</sup> ESH: Տե՛ս նաև AN, 12:

<sup>2</sup> ՆՀՀ, 9, 93:

չի ստեղծուել Սիցագետքում խոր անցեալում: Մանաւանդ որ այս առասպելում մարդը կերսուել է ոչ թէ քարից, որը բնորոշ է Հայկական լեռնաշխարհին, այլ՝ կալից, որը միշտ աչքի առաջ է գտնուում Սիցագետքում<sup>1</sup>: Իսկ ինչո՞ւ մարդկութեան ծնողների օրիանը տարել են Հայաստան եւ ոչ թէ մի այլ տեղ Սիցագետքում: Սիանգամայն պարզ է, թէ այդ մտքին պիտի յանգած լինեն Տիգրիս եւ Եփրատ գետերի առկայութեամբ: Ուստի նրանց ակնադրիւրների շրջանից է որ պիտի մարդկային սերունդները իջած լինեն ներքեւ հոսանքնիվար:

Այս առասպելը կարող էր պատահական մի եզակի երեւոյք բուալ, ասկայն, միայն այն չէ, որ մարդկութեան օրրանը դնում է Տիգրիսի ու Եփրատի ակնադրիւրների շրջաններում, այլ ջրհեղեղի առասպելում էլ՝ տապանը կանգնում է Արարատ (աւելի ճիշդը՝ Արարադ) լեռան վրայ եւ Նոյի սերունդները նոյնպէս Հայկական լեռնաշխարհից են, որ տարածուում են չորս կողմն աշխարհի:

Խորենացու բերածում՝ Արարադը գտնուում է «Կաղմոսի տաճ մօս» (Կաղմուխի մօս), այսինքն՝ *Ուրուսադրիոս*: Արդէն ըստ Բերոսսի (Berossus)` դա Կորդուաց լեռներն են՝ Վանայ լճից ներքեւ. սա Նոյին էլ կոչում է Xisuthros<sup>2</sup>: Խորենացին քաղելով Բերոսսից եւ Արիւնանուից (Abydenus) նշում է Քսիսութրոսին: Ասորական եւ արարական աւանդութիւնները նոյնպէս Կորդուաց աշխարհի Արարադ լեռն են համարում տապանի կանգնած վայրը: Ամենայն դէպս, այս առասպելի պատումների բոլոր փոփոխակներում<sup>3</sup> էլ մարդկութիւնը (Նոյի կամ Քսիսութրոսի սերունդները)

<sup>1</sup> Գիլգամեշի դիցագնավեպում Aruru դիցուին Enkidu-ին ստեղծում է կալից (տե՛ս GE, 19):

<sup>2</sup> GE, 250:

<sup>3</sup> Սումերական աւանդութեան մէջ Նոյը կոչուում է Ziusudra, որին Berossus-ը բերում է Xisuthros ձեւով: Իսկ Գիլգամեշի դիցագնավեպում նա կոչուում է Ստորարիշտիմ, իսկ տապանի կանգնած լեռը՝ Nisir (որի տեղը յայտնի չէ, ոմանք դնում են Սիցագետքում): Գիլգամեշի դիցագնավեպում յիշուում է նաև Մաշ լեռնաշղթան եւ մի ծով, որոնց Գիլգամեշը անցնում է հասնելու համար Ստորարիշտիմից: Այս ծովը, որին մի նաւակով միւս կողմն են հասնում, ոմանք համարում են Սիցերկրականը, բայց այն պէտք է լինի Վանայ լիճը:

դարձեալ հիւսիսային լեռնաշխարհից է որ տարածուում են աշխարհի չորս կողմերը:

Արդեօք այս առասպելները չե՞ն պահպանում հնդեւրոպական ժողովուրդների՝ հիւսիսային լեռնաշխարհից չորս կողմ տարածուած լինելու եւ որոշ խմբերի էլ զոյգ գետերի հոսանքով Միջագետք ու Սումեր իջած լինելու ժողովրդական հին յիշողութիւնները: Գուցէ սուրարիները որոշ դեր են ունեցել այս առասպելների յօրինման մէջ:

Ինչպէս ասացինք, այս առասպելների կազմութեան գլխաւոր գործօնը եղել են Տիգրիսն ու Եփրատը, որոնք միաժամանակ պաշտամունքի առարկայ են եղել Սումերուու: Սումերները իրենց ջրի Էա աստծուն (որի՝ Eridu-ի մէջ գտնուած բուն տաճարի կառուցման գործում հիմնական դեր է Վերագրուում Aratta-ի ժողովրդին) պատկերացնում էին ծեռքում ջրի երկու շիրեր՝ որպէս խորհրդանիշերը Միջագետքի կենսատու զոյգ գետերի:

Ի հարկէ բնական էր, որ Միջագետքի ժողովուրդների համար կեանքի աղքիւր եղող այդ զոյգ գետերի մասին հիւսուած լինէին տարբեր առասպելներ ու պահպանուած լինէին ժողովրդական հին աւանդութիւններ այդ գետերի ակնաղքիւրների շրջանում եղած մայր աշխարհի հետ իրենց ունեցած սերտ կապերի մասին: Արդէն այդ սերտ կապերի աւանդական հին արձագանգն են հանդիսանում նաև Aratta-Erech դիցազնավէպերում պահպանուած ժողովրդական յիշողութիւնները:

---

Խորենացին բերելով Քսիսութրոսի դէպի Հայաստան նաւարկութեան շուրջ Յունաստանում տարածուած աւանդութեան մասին (ըստ Դաւիթ Անյաղրի) Ոլիմպիոտորոսի պատմածը՝ յիշում է տապանի՝ ցամաքի հանդիպած վայրի հիւսիս-արեւմուտքում գտնուած Սիմ լերան անունը, որին մօտենում է Նոյի որդին (Խորենացի, Ա-զ): Միաժամանակ յայտնի է, թէ Արարատ լեռը (ուր, ըստ Ս. Գրքի կանգնել է տապանը) եւ Հայաստանի որոշ լեռներ (Միփան, Կաշիարի եղն.) հնում նոյնպէս կոչուած են եղել Մասիս (յոյներից, հոռմէացիներից՝ Masius/Masion): Եթէ այս Sim եւ Mas(is)/Mas(ius) անունները գալիս են խոր անցեալից որպէս Հայկական լեռնաշխարհի լեռնանուններ, ապա անհաւանական չեն, որ դրանցում պահպանուած լինի Nis(ir) եւ Մաս լեռների յիշատակը:

